

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ
ԵՎ ԱՌԵՎՏՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԼՐԱՏՎՈՒԹՅԱՆ
ԵՎ ՏԵԽՆԻԿԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ
(ՀայԳՏԼԳՀԻ)

ԱՎԱՆԴԱԴՐՎԱԾ ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

ԵՌԱՄՍՅԱ ՍԵՂՄԱԳՐԱՅԻՆ ԺՈՂՈՎԱԾՈՒ
թիվ 1

ԵՐԵՎԱՆ 1995

УДК 016:001.891.004.4

ББК 91.9:72
016
Ա - 77

ԿԱԶՄՈՂՆԵՐԻՑ

Ավանդադրումը գիտական ձեռագիր աշխատանքների հրատարակման միջոց է: Այն նպատակ ունի մասնագետներին ծանոթացնելու նեղ մասնագիտական բնույթի գիտական, ինչպես նաև լայն բնույթի մասնագիտական աշխատանքներին, որոնց առաջնությունը հաստատելու համար անհրաժեշտ է հրատապ լրատվություն:

ՀայԳՏԼԳՀԻ-ն իրականացնում է հասարակական, բնա-կան, ճշգրիտ, տեխնիկական եւ կիրառական գիտությունների, էկոնոմիկայի ճյուղերի, բժշկագիտության բնագավառի ձեռագիր աշխատանքների ավանդադրում գիտական, գիտահետազոտական, նախագծա-կոնստրուկտորական կազմակերպություններին, բարձրագույն եւ միջին մասնագիտական ուսումնական հաստատություններին, ձեռնարկություններին, գիտնականներին եւ մասնագետներին ծանոթացնելու այն հոդվածների, տեսությունների, մենագրությունների, գիտական աշխատանքների ժողովածուների, կոնֆերանսների, համագումարների, խորհրդակցությունների եւ գիտաժողովների նյութերի ձեռագրերի հետ, որոնց հրատարակումը նպատակահարմար չէ սովորական եղա-նակով:

Ավանդադրված ձեռագրերի հեղինակները պահպանում են օրենսդրությունից բխող հեղինակային իրավունքը: Ավանդա-

ISBN 99930-3-009-0

© “Լրատու” 2000

դրված ձեռագրերն ունեն նույն իրավական ուժը, ինչ տպագիր հրատարակությունները:

Ավանդադրումն իրագործվում է ԱՊՀ տարածքում գործող “Բնական, տեխնիկական եւ հասարակական գիտությունների

բնագավառում ձեռագիր աշխատանքների ավանդադրման կարգի մասին հրահանգ"- ի համաձայն:

Հեղինակը պահպանում է նշված աշխատությունների նյութի-րի հրատարակման իրավունքը գիտական և գիտատեխնիկական հրատարակություններում, սակայն այդ դեպքում նա պարտավոր է տեղեկացնել հրատարակող կազմակերպությանը (հրատարակչություն, հանդեսի խմբագրություն և այլն) այն մասին, որ ձեռագիրն ավանդադրված է կամ էլ հիշատակել այդ փաստը հրատարակման առաջարկվող աշխատության մեջ:

Ավանդադրված գիտական աշխատանքների սեղմագրերը համակարգված են ըստ ՎԴԿ-ի:

ՀայԳՏԼԳՀԻ-ում ավանդադրված աշխատանքների հետ կարելի է ծանոթանալ ՀԳՏԳ-ի տեղեկատու-լրատվական ֆոնդում:

Ավանդադրված աշխատանքի պատճենը (քսերոպատճենը, միկրոֆիշը, դիսկետը) ստանալու համար պահանջագրում անհրաժեշտ է նշել. հեղինակի ազգանունը և անվան, հայրանվան սկզբնատառերը, ձեռագրի անվանումը և նրա գրանցման թիվը:

Պատճեններն առաքվում են նախնական վճարումից հետո: Պատճենների պատրաստման վերաբերյալ պահանջագրերը հարկավոր է ուղարկել հետևյալ հասցեով.

375051, Երևան-51, Կոմիտասի պող. 49/3:

Տեղեկություններ կարելի է ստանալ հետևյալ հեռախոսներով. 23-67-69, 23-14-85:

Ներկա ժողովածուն պարունակում է գիտական այն աշխատանքների սեղմագրերը, որոնք ավանդադրված են ՀայԳՏԼԳՀԻ-ում 2000 թ. ապրիլ - 2000 թ. հունիս ամիսներին՝ թիվ 32 – Ap00 - թիվ 45 – Ap00 համարներով:

Կազմողներ. Հ. Ե. Ադամյան, Լ. Գ. Կոլչայան,

Ռ. Վ. Հարությունյան, Հ. Խ. Ավետիսյան

ԱՎԱՆԴԱԴՐՄԱՆ ՀԱՄԱՐ ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ

ՁԵՌԱԳՐԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ՀայԳՏԼԳՀԻ-ն ավանդադրման համար ընդունում է հոդվածների մինչև 2 հեղ. մամուլ ծավալով, իսկ տեսությունների, մեխանիկայությունների, կոնֆերանսների, համագումարների նյութերի՝ ոչ ավելի, քան 10 հեղ. մամուլ ծավալի ձեռագրեր:

Աշխատանքների ավանդադրման համար անհրաժեշտ է ներկայացնել հետևյալ փաստաթղթերը.

- ձեռագիրը, մեքենագրված 2 միջակայքով՝ 1 օր.;
- ձեռագրի գրախոսականը, վավերացված կադրերի բաժնում՝ 1 օր.;
- քաղվածք հիմնարկի գիտական, գիտատեխնիկական /տեխնիկական/, խմբագրահրատարակչական խորհրդի որոշումից ձեռագիրը ավանդադրման հանձնելու մասին, հաստատված ղեկավարի ստորագրությամբ և կլոր կնիքով՝ 1 օր.;
- առանձին թերթ գիտական խորհրդի անվանումով, նրա նիստի անցկացման թվականով և արձանագրության թվով;
- հոդվածի սեղմագիրը հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով՝ մեկական օր.;
- կից նամակը;
- մատենագիտական քարտ՝ ձեռագրի նկարագրությունով՝ 2 օր.:

Ժողովածուի ավանդադրման համար պահանջվում է ընդհանուր և յուրաքանչյուր հոդվածի համար առանձին սեղմագիր հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզվով՝ մեկական օր.:

Ձեռագրի տիտղոսաթերթի և սեղմագրի ձեռագրման մուշնները բերված են հավելվածներում:

Տեղեկություններ ավանդադրման պայմանների վերաբերյալ կարելի է ստանալ հետևյալ հեռախոսներով.

23-14-85, 23-67-69:

Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ

Ժողովածուի հրատարակությունը երեք լեզուներով /հայերեն, ռուսերեն, անգլերեն/ ամբողջովին իրականացվում է ՀայԳՏԼԳՀԻ-ի պաշարների հաշվին և չի ֆինանսավորվում պետությունից: 2000 թվականին ժողովածուն պետք է հրատարակվի, նկատի առնելով հնդկականների ֆինանսական ներդրումը յուրաքանչյուր ձեռագիր գիտական աշխատանքի համար 7000 դրամի չափով: Ընդ որում գումարի մի մասը օգտագործվում է ՀՀ-ում հավատարմագրված բոլոր ներկայա-ցուցչություններ, ինչպես նաև ՌԴ, ԱՊՀ և Մերձբալթիկայի երկրների ԳՏԼ կենտրոններ ժողովածուների առաքման նպատակով փոստային ծախսերը ծածկելու համար:

ՄԺԿ 159.9

ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Լեւոն Ծանթը Եւ ազգային դաստիարակության պրոբլեմը /Թոփուզյան Ա. Օ. Բոյուսովի անվ. օտ. լեզ. ին-տ. Երևան, 1995. -12 էջ, Մատենագր.: 8 ան. -Հայ. -Ավանդ, 27.03.95, □ 3-Յր.95

2, Լեւոն Ծանթը անձնավորությունը ձևավորող գործոնների մասին /Թոփուզյան Ա Օ. Բոյուսովի անվ. օտ. լեզ. ին-տ.- Երևան, 1995. -17 էջ. Մատենագր.: 6 ան. -Հայ.- Ավանդ. 27.03.95, □4-Յր.95

ՄԺԿ 51

ՄԱԹԵՄԱՏԻԿԱ

3. Կշռային L^p տարածություններում մի քանի ինտեգրալ օպերատորների մասին /Զաքարյան Մ. Ա. Երևանի պետ. համալսարան ԵՊՀ. Երևան, 1994.- Մատենագր.: 7ան. -Ռուս. - Ավանդ. 20.03.95. □2-Յր.95

4. Ամբողջ առանցքի վրա հանրագումարելի գործակիցներով կամայական կարգի դիֆերենցիալ օպերատորի համար ցրման հակադարձ խնդրի մասին-I /Ղազարյան Ա. Ռ. Խաչատրյան Ի. Գ. Երևանի, պետ. համալսարան, (ԵՊՀ)- Երևան, 1995,- 32 էջ - Մատենագր.: 9 ան. -Ռուս. - Ավանդ. 03.04.95, □5-Յր.95

5. Ամբողջ առանցքի վրա հանրագումարելի գործակիցներով կամայական կարգի դիֆերենցիալ օպերատորի համար ցրման հակադարձ խնդրի մասին-Ուլազարյան Ա. Ռ., Խաչատրյան Ի. Գ. Երևանի պետ. համալսարան. (ԵՊՀ) Երևան, 1995.- 29 էջ- Մատենագր.: 5 ան. -Երևան. -Ավանդ. 03.04.95, □6-Տր.95

ՄԺԿ 57

ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

6. Լ-արգինինի կենսասինթեզի համար միջավայրի բաղադրակազմի օպտիմացումը /ՄԵույան Գ. Գ. Զուրաբյան Ա. Ս, Մարջանյան Գ. Գ, երևի «Բիոտեխնոլոգիա» գիտահետ.ին-տ.-Երևան, 1995. - 9 էջ. նկ.1 աղ. 4.-Մատենագր.: 3 ան.-Ռուս. - Ավանդ. 03.04.95,□6-Տր.95

7. Մանրէաբանական եղանակով Լ արգինինի կենսասինթեզի նյութաէներգետիկական հաշվեկշիռը /ԱԵույան Գ. Գ, Զուրաբյան Ա. Ս., Երևի «Բիոտեխնոլոգիա» գիտահետ.ին-տ.- Երևան, 1995.- 8 էջ, նկ. աղ. 2.-Մատենագր.: 8 ան. -Ռուս. -Ավանդ. 03.04.95, □8-Տր.95

ՄԺԿ 159.9

ԷԼԵԿՏՐՈՒԷՆԵՐԳԵՏԻԿԱ

8. Արտադրական օբյեկտների նւ նրանց խմբերի էներգաօգտագործման արդյունավետության ինտեգրալ ցուցիչի որոշման լրատվական-ծրագրային համակարգ /Առաքելյան Ա, Մ.,Սահակով Վ Ի., էներգետիկայի գիտահետազոտական ին-տ

(ՀայէներգաԳՀԻ):- Երևան, 1994.- 3 էջ. -Ռուս. -Ավանդ. 05.04.95., □9- Տր.95

9. Էլեկտրական համակարգի ռեժիմների որոշումը նրա էլեկտրական շրջանների ռեժիմներով /Շարաբխանյան Ի. Ի. էներգետիկայի գիտահետազոտական ին-տ (ՀայէներգաԳՀԻ)- Երևան, 1994.- 6 էջ.- Աատենագր.: 3 ան. -Ռուս, -Ավանդ. 05.04.95, □10-Տր.95

10. Կարճ միակցված շտաբով ասինքրոն էլեկտրաշարժիչների ինքնագործարկման ժամանակի հաշվարկի գծագրավերլուծական մեթոդ /Սահակով Վ Ի., Գամբուրյան Կ. Ա., էներգետիկայի գիտահետազոտական ին-տ (ՀայէներգաԳՀԻ)- Երևան, 1994.- 5 էջ.- Մատենագր.: 3 ան. -Ռուս. -Ավանդ. 05.04.95, □11-Տր.95

11. էներգախնայողությունը էներգիայի ազգային աղբյուր /Եղիազարյան Լ Վ, էներգետիկայի գիտահետազոտական ին-տ (ՀայէներգաԳՀԻ).- ԵՐԵՎԱՍ 1994.- 6 էջ.- Աատենագր.: 3 ան. - Հայ. - Ավանդ 05.04.95, ⊕12-Տր.95

12. Ջերմամատակարարման համակարգի արդյունավետության բարձրացումը գազատուրբինային տեղակայանքների օգտագործմամբ /Պապիկյան Ս. Ռ.. էներգետիկայի գիտահետազոտական ին-տ (ՀայէներգաԳՀԻ) - Երևան. 1995.- 7 էջ.- Մատենագր.: 3 ան. - Հայ. -Ավանդ. 05.04.95,□13-Տր.95

ՄԺԿ 159.9

ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

13. ԱԿՀ-Ի օպերատորի աշխատանքային տեղի մեքենայական կոմպոնովկայի բիոլիննմատիկ հիմունքները /Գրիգորյան Վ. Ա.,

Երևանի ավտոմատ կառավարման համակարգերի գիտ. հետ. ին-տ (ԵրԱԿՀԳՀԻ) Երևան, 1995.- 38 էջ. իլ. 25- Մատենագր.: 9 ան. -Ուու. -Ավանդ 20.03.95, 1-Ար.95

ՄԸԿ 002,6.681.3

ԻՆՖՈՐՄԱՏԻԿԱ

1. Բաշխված ինֆորմացիոն-հաշվողական համակարգերի գնահատման մեթոդի մշակումը /Թարխանյան Ա.Գ.; Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ին-տ. -Երևան, 1995. -38 էջ, աղ. 11- Մատենագր.: 11ան. -Ուու. -Ավանդ. 05.06.95, 23 -Ար95

Հոդվածում քննարկված է բաշխված ինֆորմացիոն-հաշվողական համակարգերի (ԲԻՀՀ) դասավորությունների ամբողջական գնահատման խնդիրը: Մշակված են ԲԻՀՀ-ի ձևականացված մոդելներ զանգվածային սպասարկման տեսության ավանդական ապարատի օգտագործմամբ: Ընդհանրացված մոդելը նկարագրված է որպես զանգվածային սպասարկման ցանց: Կատարված են մոդելի բնութագրերի հետազոտություններ, ստացված են ԲԻՀՀ-ում խնդիրների լուծման ժամանակը բնութագրող արտահայտություններ: Նկարագրված են նաև մշակված այգորիթմները Եւ համապատասխան նմանակված ծրագրերը Պասկալի լեզվով: Բերվում են ստեղծված ծրագրերի հիմնական բնութագրերը:

Բացահայտվում է մշակված մեթոդիկայի էությունը, բերվում են նրա հիմնական քայլերը: Մեթոդիկան կողմնորոշված է ԲԻՀՀ-ի նախագծման գործընթացի ավտոմատացմանը:

ՄԸԿ 159.9

<ՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ

2. /Անձի կարգավիճակի և հավակնությունների նեգատիվ դրսևորումները և դրանք ծնող պատճառները /Հարությունյան Հ. Ս.; Խ. Աբովյանի անվ. Հայկ. պետ. մանկ. ին-տ. -Երևան, 1995. -26 էջ -Մատենագր.: 7ան. -<այ. -Ավանդ. 05.06.95, 21 -Ար95

Աշխատանքում պարզաբանվում է անձի հավակնությունների և կարգավիճակի միջև եղած կապը, նկարագրվում են այն նեգատիվ և ախտաբանական երևույթները, որոնք հետևանք են բարձր հավակնությունների և համապատասխանաբար ցածր կարգավիճակի. ինչպես նաև բացահայտված են դրանց պատճառները:

3. Օժտված երեխաների միջանձնային հարաբերությունները որպես հոգեբանական ուսումնասիրության հիմնադիր /Հարությունյան Հ. Ս.; Խ. Աբովյանի անվ. Հայկ. պետ. մանկ. ին-տ. -Երևան, 1995. -13 էջ -Մատենագր.: 5ան. -Հայ. -Ավանդ. 05.06.95, 22 -Ար95

Աշխատանքում հիմնավորվում է օժտված երեխաների դասարանների և կրթօջախների ստեղծման անհրաժեշտությունը, խոսվում նրանց փոխհարաբերությունների ուսումնասիրման կարևորության մասին:

ՄԸԿ 33

ԷԿՈՆՈՄԻԿԱ

4. Դրամավարկային քաղաքականության տեսական հիմնահարցերը /Տնականյան Ս. Մ.; Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի

ՏՊԳՀԻ. -Երևան, 1995. -12 էջ -Մատենագր.: 5ան. -Հայ. -Ավանդ, 05.06.95, 24 -Ap95

Հոդվածում վերլուծվում են դրամավարկային հարաբերությունների երեք հիմնադրական տեսություններ, բացահայտվում են դրամավարկային քաղաքականության գործառնությունները շուկայական էկոնոմիկայի պայմաններում, եւ հիմնավորվում է տեսական հիմքի ընտրությունը ՀՀ-ում համապատասխան քաղաքականության համար:

5. Սոցիալական ոլորտի ներկա վիճակն ու զարգացման հեռանկարները /Մարտիրոսյան Ն. Ա., Տիտիկյան Ն. Վ.; Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարությանն առընթեր ՏՊԳՀԻ. -Երևան, 1995. -25 էջ, աղ.1 -Մատենագր.: 13ան. -Հայ. -Ավանդ, 06.06.95, 26 -Ap95

Հոդվածն անդրադառնում է առողջապահության, կրթության, սոցիալական ապահովության եւ աշխատուժի շուկայի հետ առնչվող հիմնահարցերի քննարկման եւ զարգացման հեռանկարներին:

Բյուջետային ռեսուրսների անբավարարության եւ բնակչության կենսամակարդակի անկման հետևանքով 1990թ-ից սկսած առողջապահության եւ կրթության ցուցանիշները սկսեցին ընկնել: Դպրոցական շենքերի, հիվանդանոցների մեծ մասն անբարեկարգ վիճակում է եւ վերանորոգման խիստ կարիք ունի: Որոշ շենքերում էլ բացակայում է եւ հուսարի էներգամատակարարումը, ջերմամատակարարումը եւ ջրամատակարարումը: Նման պարագաներում, երբ խիստ սահմանափակ են բյուջետային ռեսուրսները, անհրաժեշտ է, համակարգի աշխատանքի ծանրության մի մասը »զցել« բնակչության վրա, միաժամանակ ապահովելով սոցիալական արդարության սկզբունքները:

Տնտեսության անկման հետևանքով, զգալիորեն մեծացավ գործազրկության մակարդակը Հանրապետությունում: 1994 թվականին այն կազմեց 112 հազ. մարդ, որից գործազրկության նպաստ էր ստանում միայն 26000-ը: 1992 եւ 1993թթ. գործազուրկների թիվը համապատասխանաբար կազմում էր 12.000 եւ 87.000 մարդ: Հոդվածը կանգ է առնում տնտեսության համար կարևորագույն այս խնդրի լուծման ուղիների որոնման վրա, առաջարկելով բարեփոխումների ուղղված միջոցառումներ:

ՄԺԿ 37

ՄԱՆԿԱՎԱՐԹՈՒԹՅՈՒՆ

6. Համադրական /առանց թարգմանության/ ընթերցանության ուսուցումը դպրոցի 4-6-րդ դասարանների աշակերտներին /Ժամհարյան Վ. Ռ.; Բյուրսովի անվ. օտար լեզուների պետ. ին-տ. -Երևան, 1995. -19 էջ -Մատենագր.: 10ան. -Ռուս. -Ավանդ, 05.06.95, 24 -Ap95

Հոդվածը նվիրված է արդի մեթոդիկայի հրատապ հիմնահարցերից մեկին՝ միջին դասարանների աշակերտների ուսուցմանը ժուսաց լեզվով ինքնուրույն առանց թարգմանության ընթերցանությանը՝ ընթերցվածի բովանդակության անմիջական ըմբռնումով (այսպես կոչված համադրական ընթերցանությանը) որպես նախադրյալ ընթերցանության բոլոր տեսակների հմտությունների զարգացմանը առաջ քաշված փուլում:

Որպես օրինակ առաջարկվում է նախատեսարան, տեքստային եւ հետտեքստային վարժությունների համակարգ, որը կարող է նպաստել համադրական ընթերցանության հիմնական գործոնների զարգացմանը՝ ժուսաց լեզվի բառական համակարգի յուրացմանը, լեզվական կռահման զարգացմանը, սահուն ընթերցանության ձևավորմանը:

Վարժությունների առաջարկվող համակարգը հիմնված է Հայաստանի մի շարք դպրոցներում անցկացված փորձարարական տվյալների արդյունքների վրա:

7. Խոսքային անամենցի հավաքումը բիլինգվների մոտ աֆազիայի դեպքում /Պայլոզյան Ժ. Ա.; Աղետների նյարդաբանության գիտահետազոտական կենտրոն. -Երևան, 1995. -2 էջ -Մատենագր.: 2ան. -Ռուս. -Ավանդ, 29.05.95, 16 -Ap95

Խոսքային անամենցի հավաքումը դիտարկվում է որպես երկու լեզվով խոսողների մոտ խոսքի բարեհաջող վերականգնման կարևոր գործոններից մեկը: Բերվում են կոնկրետ, գործնական, բիլինգվների

խոսքի արդյունավետ վերականգնումն ապահովող հանձնարարականներ խոսքային անամնեզի հավաքման վերաբերյալ:

8. Բիլինգվների մոտ աֆազիայի դեպքում խոսքի վերականգման մասին /Պայլոզյան ժ. Ա.; Ադնտների նյարդաբանության գիտահետազոտական կենտրոն. -Երևան, 1995. -2 էջ -Մատենագր.: 7ան. -Ռուս. -Ավանդ. 29.05.95, 17 -Ap95

Շարադրված են բիլինգվների մոտ աֆազիայի դրսևորման առանձնահատկությունները: Նշվում է, որ բիլինգվների մոտ խոսքի վերականգնման աֆազիան եւ դինամիկան աչքի են ընկնում որակական յուրահատկությամբ: Ներկայացված են այն հիմնական ուղղությունները, որոնց համապատասխան անհրաժեշտ է իրականացնել խոսքի վերականգնումը բիլինգվների մոտ աֆազիայի դեպքում:

9. Խոսքային միջավայրը որպես բիլինգվների մոտ աֆազիաների լոգոթերապիայի գործոն /Պայլոզյան ժ. Ա.; Ադնտների նյարդաբանության գիտահետազոտական կենտրոն. -Երևան, 1995. -2 էջ -Մատենագր.: 4ան. -Ռուս. -Ավանդ. 29.05.95, 18 -Ap95

Նշվում է, որ խոսքային միջավայրի կազմակերպումը բիլինգվների մոտ աֆազիայի լոգոթերապիայի դեպքում այն հիմնական գործոններից մեկն է, որն ապահովում է խոսքի վերականգնման արդյունավետությունը, ինչպես նաև հիվանդների ընդհանուր վերականգնումը:

УДК 502

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ

10. Մթնոլորտային տեղումների քիմիական կազմի ուսումնասիրությունը Հայաստանում /Անանյան Վ. Լ.,

Արարատյան Լ. Ա., Մեծունց Բ.Խ. եւ ուրիշներ; Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի էկոլոգա-նոսոֆերային հետազոտությունների կենտրոն. -Երևան, 1995. -59 էջ, նկ. 10, աղ. 20 -Մատենագր.: 15ան. -Ռուս. -Ավանդ. 15.06.95, 32 -Ap95

Աշխատանքում բերված են 1989-1991 թթ. Հայաստանի տարածքում կատարված մթնոլորտային տեղումների /անձրևի եւ ձյան/ քիմիական կազմի ուսումնասիրությունների հիմնական արդյունքները: Հետազոտվել են քիմիական նյութերի մակրո եւ միկրոբադադրիչների խտությունները տեղումների հեղուկ ֆազում եւ կախություն /փոշի/ առանձին-առանձին:

Տարիների ընթացքում դիտվել է մթնոլորտային տեղումներում քիմիական նյութերի խտության բարձրացման միտում, հատկապես սուլֆատ իոնի եւ քլորի համար: Միկրոբադադրիչները /միկրոտարրերը/ կազմում են նյութերի ընդհանուր քանակության 3.3 տոկոսը, որոնք հիմնականում հանդիպում են տեղումների կարծր ֆազում: Միկրոտարրերի շարքում առաջին տեղում է գտնվում Fe-ը, այնահետո՝ Mn-ը եւ Ti-ը:

1991թ. ձմեռային շրջանում Երևան քաղաքը, ընդհանրացման տվյալներով, ձյան աղտոտվածության ցուցանիշներով դասվել է միջին կատեգորիային:

Մթնոլորտային տեղումների քիմիական կազմի եւ բաշխման վերաբերյալ ստացված փաստական տվյալներն ունեն կարևոր նշանակություն միջավայրի աղտոտվածության հիմնախնդրի հետազոտ ուսումնասիրության տեսանկյունից /մոնիթորինգ/:

Մենագրությունը նախատեսվում է էկոլոգների, կենսաերկրաքիմիկոսների եւ օդերևութաբանական ծառայության աշխատողների համար:

11. Էկոլոգիայի եւ շրջակա միջավայրի պահպանության հարցեր: Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի էկոլոգա-նոսոֆերային հետազոտությունների կենտրոնի աշխատությունների ժողովածու, հատ. 1 -Երևան, 1995. -80 էջ, նկ. 3, աղ. 27 -Ռուս. -Ավանդ. 15.06.95, 33 -Ap95

Ժողովածուն պարունակում է 12 հոդվածներ, որոնք արժարժում են Էկոկենտրոնում մշակվող բազմազան հիմնախնդիրներ եւ հարցեր: Հիմնախնդիրների մեծ խայտաբղետությունը արտացոլում է շրջակա միջավայրի ներկայիս վիճակի տարբեր կողմեր եւ նրա պաշտպանության հարցերը: Ներկայացված աշխատանքները նվիրված են մեթոդաբանական բնույթի հարցերին, ռադիոէկոլոգիական մոնիթորինգի հիմնախնդիրին, բուսազանգվածում ծանր մետաղների պարունակության եւ տարաշարժի, կենսաէներգիայի կուտակման առանձնահատկություններին, Դիլիջանի արգելոցի հողերում ալկալիական մետաղների բաշխման, Սուանի ավազանի հողազրուտների քիմիահանքաբանական բնութագրման եւ այլ հարցերին: Բերված են առաջարկություններ նաեւ սողանքների կանխարգելման վերաբերյալ:

Ժողովածուն նախատեսված է էկոլոգների, կենսակրթաբանների եւ շրջակա միջավայրի պահպանության բնագավառի աշխատողների համար:

Ժողովածուի բովանդակությունը.

12. Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի էկոլոգա-նոոսֆերային հետազոտություններ ի կենտրոնի ուսումնասիրությունների հիմնական ուղղությունները /Մաղաթեյան Ա. Կ., Ռեւազյան Ռ. Հ.; էջ 1-5:-

13. Բնական աղետների հետևանքների ռիսկի գնահատման մի քանի չափանիշներ /Մաղաթեյան Ա. Կ., Կուկույան Մ.Ա., Հակոբյան Հ. Ա.; էջ 6-12:

14. Երջակա միջավայրի պահպանման մեթոդաբանական հարցերի մասին /Ռեւազյան Ռ. Հ., Մաղաթեյան Ա. Կ.; էջ 13-18:

15. 90_Տ եւ 137_Շ-ի բաշխման առանձնահատկությունները լեռնային մարգագետինների հողերում ու բույսերում եւ պարարտանյութերի ազդեցությունը /Անանյան Վ. Լ.; էջ 19-23:

16. Հայաստանի հողերի ռադիոակտիվությունը Չեռնոբիլյան ատոմակայանի վթարից հետո /Անանյան Վ. Լ.; էջ 24-33:

17. Սուանի ավազանի հողազրուտների քիմիահանքաբանական բնութագիրը /Մաղաթեյան Ա. Կ., Ռեւազյան Ռ. Հ.; էջ 34-42:

18. Մարգագետնային ֆիտոցենոզներում մի շարք ծանր մետաղների վարքի համեմատական վերլուծության մասին /Մաֆրազեյան Է. Ա., Արարատյան Լ. Ա., Ռեւազյան Ռ. Հ., Մեծունց Բ. Խ.; էջ 43-50:

19. Չոր տափաստանային գոտու ֆիտոցենոզների արդյունավետության մասին: Հաղ. 1. -Բուսազանգվածի կուտակման սեզոնային դինամիկան /Մեծունց Բ. Խ., Ռեւազյան Ռ. Հ.; Արարատյան Լ. Ա., Հայրապետյան Է. Հ.; էջ 51-57:

20. Չոր տափաստանային գոտու ֆիտոցենոզների արդյունավետության մասին: Հաղ. 2. -Բուսազանգվածի կենսաէներգիայի սեզոնային փոփոխությունները /Մեծունց Բ. Խ., Ռեւազյան Ռ. Հ., Արարատյան Լ. Ա., Հայրապետյան Է. Հ.; էջ 58-64:

21. Դիլիջան քաղաքի տարածքում սողանքային գործընթացների կանխարգելման վերաբերյալ հիմնական առաջարկները /Առաքելյան Դ. Գ., Յաղոյան Ռ. Բ.; էջ 65-67:

22. Ռեբինիա կեղծակացիայի տերմիններում մի շարք քիմիական տարրերի պարունակության մասին /Հովհաննիսյան Ա. Ա., Մուրադյան Ա. Ա., Իոհաննեսյան Ն. Յ., Սափադյան Ա. Յ.; էջ 68-72:

23. Դիլիջանի արգելոցի հողերում ալկալիական տարրերի /K,Na,Rb,Li/ պարունակությունը /Արարատյան Լ. Ա.; էջ 73-80:

ՎՃԿ 53

ՖԻԶԻԿԱ

24. Փոխազդեցության հաստատունի մեծությունը Էլեկտրա-մագնիսադինամիկայում /Արեշյան Գ. Լ.; Հայ. պետ. ճարտարագիտ. համալս. -Երևան, 1995. -6 էջ -Մատենագր.: 3ան. -Ռուս. -Ավանդ. 15.06.95,□27 -Ap95

Որպես կանխադրույթ ընդունվում է, որ փոխազդեցության հաստատունը հավասար է էլեկտրոնների զույգի փոխազդեցության կուլոնյան ուժի հարաբերությանը տարրական լիցքերի զույգի փոխազդեցության ուժին այլ հավասար պայմանների դեպքում: Օգտագործելով այդ կանխադրույթը եւ Ա. Ղ. Իոսիֆյանի կանխադրույթը տարրական էլեկտրական եւ մագնիսական լիցքերի արտադրյալին հավասար գործողության քվանտի մասին, ստացված է վերլուծական արտահայտություն փոխազդեցության հաստատունի համար տեսական ֆիզիկայի հիմնարար հաստատունների միջոցով: Պարզվում է, որ

փոխազդեցության հաստատունը հավասար է նուրբ կառուցվածքի քառակուսուն $n=\alpha^2$ եւ $n=5,325 \cdot 10^{-5}$:

ՄԴԿ 61

ԲԺՇԿԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

25. Լիպիդների ազատ-ռադիկալ օքսիդացման ռեակցիաների ընթացքի ինտենսիվության ուժեղացումը որպես շագանակազնդձի աղննումայի զարգացման ախտածնական գործոններից մեկը /Էդիլյան Մ. Մ.; ՀՀ ԳԱԱ-ի վիրաբուժության ին-տ, ՀՀ ԳԱԱ-ի մոլեկուլյար կենսաբանության ին-տ, -Երևան, 1995. -8 էջ, ադ.1, նկ.1 -Մատենագր.: 15ան. -Ռուս. -Ավանդ. 15.06.95, □46 -Ap95

հաշվի առնելով աճող հետաքրքրությունը մի շարք հիվանդությունների ախտածնության մեջ նյութերի տրանսթադանյային փոխանցման դերի ուսումնասիրության նկատմամբ, մենք հետազոտել ենք արյան պլազմայում լիպիդների գերօքսիդային օքսիդացման (ԼԳՕ) որոշ ցուցանիշների որակական փոփոխությունները, հակաօքսիդանտային համակարգի(ՎՕՎ), ինչպես նաև ֆոսֆոլիպիդների (ՖԼ) մակարդակի փոփոխությունների դինամիկան էրիտրոցիտների թաղանթներում (ԷԹ-ներ) հիվանդների մոտ տրանսմիգուլային բացահայտումից (ՏՄԲ) առաջ եւ հետո:

Հսկողության տակ էին գտնվում շագանակազնդձի աղննումայի (ԾԳԱ-ի) ախտորոշումով ՀՀ ԱՆ Ա.Լ. Միքայելյանի անվ. վիրաբուժության ինստիտուտի միզաբանական բաժանմունք ընդունված 50 հիվանդներ: Բոլոր հիվանդները բաժանվել էին երեք խմբի. 1-ին խումբ՝ ԾԳԱ-յով հիվանդներ

55-65 տարեկան, 2-րդ խումբ՝ ԾԳԱ-յով հիվանդներ 65-80 տարեկան, 3-րդ խումբ՝ ԾԳԱ-յով եւ քրոնիկական երիկամային անբավարարությամբ (ՔԵԱ) հիվանդներ անկախ տարիքից: Ստուգիչ խումբը կազմված էր գործնականում առողջ 55-70 տարեկան 20 տղամարդկանցից: ԾԳԱ-ի դեպքում հայտնաբերվել է ԼԳՕ գործընթացների ակտիվացում, եւ նվազում է α -տոկոֆերոլի (α -Տ) մակարդակն արյան պլազմայում, հասկապես հիվանդների 3-բո խմբում:

ԼՖՆ-ների եւ ՍՖՄ-ների պարունակության ավելացում եւ ՖՆ-ների, ՖՍ-ների եւ ՖԷ-ների նվազում ԷԹ-ներում դիտվում է բոլոր խմբերում, որը վկայում է բջջային թաղանթների քայքայման գործընթացների մասին:

Վիրահատումից հետո վերը նշված ցուցանիշները 3-րդ խմբում զգալիորեն բարձր են մնում ստուգիչ մակարդակից այն դեպքում, երբ 1-ին եւ 2-րդ խմբերում թվերը մոտ են առողջ մարդկանց մոտ դիտվող ցուցանիշներին:

ՄԴԿ 621.3

ԷԼԵԿՏՐՍԵՆՆԻԿԱ

26. Գծային սինքրոն շարժիչների կողային կայունությունը /Արևշյան Գ. Լ., Մայիլյան Ա. Լ.; Հայ, պետ. ճարտարագիտ. համալս. -Երևան, 1995. -35 էջ, նկ. 3 -Մատենագր.: 10ան. -Ռուս. -Ավանդ. 15.06.95, □29 -Ap95

Օպերատորային տեսքով փոփոխականների աճի համար գրանցված գծայնացված գծային հավասարումների հիման վրա դիտարկված են ստատորի փաթույթների աջակողմյան եւ ձախակողմյան սեկցիաների միացման երկու հնարավոր սխեմաներ, միացման հաջորդական սխեմա եւ միացման զուգահեռ սխեմա: Իր հերթին, յուրաքանչյուր դեպքում հետազոտվում է դինամիկ կայունությունը, ինչպես հաշվի առնելով խարսխի ռեակցիան, այնպես էլ առանց այդ հաշվի առնելու: Վերջին պարզեցնող ենթադրությունը հիմնավորվում է գծային սինքրոն շարժիչների համար, որոնց մոտ բացակայում են մագնիսամիջուկի պողպատյա մասերը: Դինամիկ կայունության ապահովման համար անհրաժեշտ եւ բավարար պայմանները որոշվում են Գուրվիցի չափանիշի հիման վրա, որի որոշիչները ներկայացված են վերլուծականորեն, ելնելով համապատասխան բնութագրային հավասարումներից: Յուր Է տրված, որ կողային կայունության անհրաժեշտ եւ բավարար պայման են հանդիսանում միայն շարժիչի ապամագնիսացնող երկայնական հոսանքի առկայությամբ ռեժիմները:

Գծայնացված դիֆիհավասարումների լրիվ համակարգերը հնարավորություն են ընձեռում կառուցելու իրենց լուծումները կողային տևդափոխությունների դեպքում գծային սինքրոն շարժիչներում անցումային գործընթացների ուսումնասիրության համար:

27. Գծային սինքրոն ինդուկտորային մեքենաների ինքնինդուկտիվություններն ու փոխինդուկտիվությունները /Արևշյան Գ. Լ., Մուխայնյան Ա. Ս.; Հայ. պետ. ճարտարագիտ. համալս. -Երևան, 1995. -13 էջ, նկ. 3 Մատենագր.: 2աճ. -Ռուս. -Ավանդ. 15.06.95, 30 -Ap95

Դիտարկված են գծային սինքրոն ինդուկտորային մեքենայի ինքնինդուկտիվությունների և փոխինդուկտիվությունների վերլուծական հաշվարկի մեթոդները: Ցույց է տրված, որ մեքենայի ինդուկտորի կարճ երկարության պատճառով եռաֆազ փաթույթի ֆազերի միջև եղած փոխինդուկտիվությունները տարբեր են նույնիսկ իդեալական դեպքում, երբ օդային բացակի հաղորդականությունը տրված է միայն հաստատուն և առաջին ներդաշնակության տեսքով: Ցույց է տրված, որ ինդուկտորի, բենեռային բաժանումների զույգ թվին հավասար երկարության դեպքում, գրգռման փաթույթի ինքնինդուկտիվությունը հաստատուն մեծություն է: Ստացված են այն մեքենայի ինքնինդուկտիվությունների և փոխինդուկտիվությունների արտահայտությունները, որը պարունակում է երկուական հաջորդաբար միացված կոճեր ֆազերում և մեկ գրգռման կոճ խարսխի երկարությանը կից:

28. Գծային սինքրոն ինդուկտորային շարժիչի տարբերակային հավասարումները /Արևշյան Գ. Լ., Մայիլյան Ա. Լ., Մուխայնյան Ա. Ս.; Հայ. պետ. ճարտարագիտ. համալս. -Երևան, 1995. -20 էջ, նկ. 4 -Մատենագր.: 2աճ. -Ռուս.-Ավանդ. 15.06.95, 31 -Ap95

Քննարկվում են գծային ինդուկտորային մեքենաների աշխատանքի քվազիմնայուն ռեժիմները տարբերակային հավասարումների ստացված համակարգի հիման վրա: Տարբերակային հավասարումներն ստացված են գծային ինդուկտորային մեքենայի դիֆերենցիալ հավասարումների վերափոխման ճանապարհով, հաշվի առնելով եզրային էֆեկտները Գորնի-Պարկի տարածության մեջ:

Տրված են հանձնարարականներ տարբերակային հավասարումների անվերջ համակարգի լուծման մեթոդի վերաբերյալ:

29. Ասինքրոն շարժիչի սևիական հաճախությունների վերլուծությունը /Արևշյան Գ. Լ., Մուխայնյան Ա. ժ.; Հայ. պետ. ճարտարագիտ. համալս. -Երևան, 1995. -11 էջ, նկ. 5 -Մատենագր.: 3աճ. -Ռուս. -Ավանդ, 15.06.95, 28 -Ap95

Ելման դիֆիհավասարումները սինքրոն առանցքներում գծայնացումից հետո գրանցվում են օպերատորային տեսքով համալիր հոսքահարակցումների և սահման միջոցով: Հավասարումների այդ գծայնացված համակարգի հիման վրա, ամրագրված սահման պայմանի դեպքում, կազմված է բնութագծային հավասարում: Որոշված են չորս համալիր արմատներ, որոնք պայմանավորում են անցումային էլեկտրամագնիսական գործընթացները շարժիչի չորս փաթույթներում: Կառուցված են այդ համալիր հաճախությունների (արմատների) հոդորաֆները սահման ամբողջ դիսպոզիցիոն համար $\infty < S < \infty$: Կատարված է մարման դեկրեմենտների (արմատի իրական մաս) և սևիական հաճախությունների (արմատի կեղծ մաս) վերլուծություն:

УДК 621.398

<ՄԵՎՈՂԱԿԱՆ ՏԵԽՆԻԿԱ

30. Առաջին հայրենական ԷՏՄ-ների կառավարման վահանների ձևազոյացման միտումները /Գրիգորյան Վ. Ա., Մելքումյան Ս. Գ.; -Երևանի կառավարման ավտոմատ համակարգերի գիտ. հետ. ին-տ (ԵրԿԱՀԳՀԻ). -Երևան, 1995. -31 էջ, նկ. 22 -Մատենագր.: 3աճ. -Ռուս. -Ավանդ. 22,05.95, 15 -Ap95

ԷՏՄ-ների ձևազոյացման և ճարտարապետության հիմնահարցերը, դրանց ոճական միասնությունը կախված են յուրաքանչյուր սերնդի միտումից, որոնց զարգացման ու կատա- ռելիզգործման հետ գնալով ավելի ու ավելի դժվար է դառնում դրանց համեմատումը և ինչ-որ մեկ, ընդհանուր որոշիչ չափանիշով մոտեցումը: Դա, հիմնականում,

արտահայտվում է ոչ միայն դրանց հիմնական բնութագրերի (արագագործություն, հիշողության ծավալ, տարրային բազա և այլն) միջոցով, այլ նաև կոնստրուկտիվ պարամետրերով, ԷՀՄ-ների տեխնիկական միջոցների արտաքին տեսքի գունային լուծումներով:

Սյդ տնակետից կոնստրուկտորների համար հետազոտության ամենահետաքրքիր օբյեկտներ են համարվում կառավարման վահանները, որոնց միջոցով իրականացվում է հիմնական փոխգործողությունը մարդ-օպերատորի և ԷՀՄ-ի միջև: Բերվում է «Արագած», «Արաքս», «Մասիս», «Դ-վին», «Մարշրուտ», «Հրազդան» և «Նախրի» ընտանիքների ԷՀՄ-ների վահանների նախագծման և նկարագարման փորձը:

YDK 63

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

31. Խմբային դիմացկունությամբ օժտված խաղողի նոր սորտերի ֆոտոսինթեզի ինտենսիվությունը և քլորոֆիլի պարունակությունը տերևներում /Եղիագարյան Հ. Ն.; Խաղողագործության, գինեգործության և պտղաբուծության հայկական գիտահետազոտական ին-տ. -Երևան, 1995. -9 էջ Մատենագր.: 2ան. -Ռուս. -Ավանդ. 05.06.95,□19 -Ap95

Բնարկված են թմբային դիմացկունությամբ օժտված խաղողի նոր սորտերի ֆոտոսինթեզի գործունեության հարցերը:

Սահմանված են խաղողի ողկույզի ֆոտոսինթեզի գործունեության և տերևներում քլորոֆիլի պարունակության ցուցանիշների առանձնահատկությունները ինչպես սորտային կտրվածքում, այնպես էլ վեգետացման տարբեր ժամանակահատվածներում:

Բացահայտված է դրական համահարաբերակցական կապ CO₂-ի ասիմիլացման և խաղողի ողկույզի տերևներում կանաչ պիգմենտների պարունակության միջև:

Ստացված տվյալները հնարավորություն են ընձեռում հիմնավոր կերպով հասնձնարարել թմբային դիմացկունությամբ օժտված երկու նոր

սորտեր ներդնելու արտադրության մեջ: Հայաստանի խաղողագործության հյուսիս-արևելյան գոտում:

32. Գյուղատնտեսության ենթակառուցվածքը և արտադրության արդյունավետությունը /Եսայան Լ. Պ.; Հայկ. գյուղ, ակադեմիա. -Երևան, 1995. -16 էջ -Հայ. -Ավանդ. 05.06.95,□25 -Ap95

Հանրապետությունում հողի, գյուղատնտեսական արտադրության միջոցների և տրանսպորտային միջոցների սեփականաշնորհման հետևանքով յուզվեց կապը գյուղատնտեսական արտադրության Ե վերամշակող ճյուղերի միջև, որի հետևանքով նրանք սկսեցին աշխատել թերբեռնված:

Առաջացան դժվարություններ գյուղատնտեսական արդյունքների փոխադրման և իրացման բնագավառներում:

Բանի որ գյուղատնտեսական արտադրության մեջ գերիշխող դարձան գյուղացիական տնտեսությունները, նրանք զրկվեցին նյութատեխնիկական մատակարարումների, ինֆորմացիոն և ֆինանսավորման համակարգերից: Նշված հակասությունների մեղմացման և հետագայում վերացման համար աշխատանքում տրված են տնտեսական կապերի վերականգման և ուժեղացման, նյութատեխնիկական մատակարարման, ֆինանսավարկային և այլ համակարգերի կատարելագործման ուղիներ, որոնք կնպաստեն նաև գյուղատնտեսության օպտիմալ կառուցվածքային տեղաշարժերին:

YDK 658

ԱՃՆԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ ԵՒ ՂԵԿԱՎԱՐՈՒՄ

33. Մոդուլների վերադասավորման ալգորիթմների ընդհանրացումը՝ կիրառված ԿԱՀ-ի օպերատորների աշխատանքային տեղերի վահանների նախագծումներում /Համբարյան Ս. Լ., Գրիգորյան Վ. Ա.; Երևանի կառավարման ավտոմատ համակարգերի գիտահետազոտական ին-տ

**(ԵրկԱՀԳՀԻ). -Երևան, 1995. -15 էջ, նկ. 7 -Մատենագր.: 5ան.
-Ռուս. -Ավանդ. 01.05.95, 14 -Ap95**

Քննարկվում է կառավարման մարմինների (կոճակային փոխարկիչների) տեղաբաշխման խնդիրը ԿԱՀ-երի օպերատորների աշխատանքային տեղերի (ԱՏ) վահանների վրա: Սպասարկման երթուղու գումարային երկարությունների նվազարկման եւ կոնկրետ տարրի համար լավագույն դիրքի որոշման նպատակով օգտագործվում է Կոդրեսի (գումարային երկարության փոփոխության որոշմամբ տարրերի հաջորդական վերադասավորման կիրառման) մեթոդը: Յանկագած սկզբնական տեղաբաշխումից հետո նախատեսված է տարրերի վերադասավորման հնարավորություն, հաշվի առնելով դրանց օգտագործման կարևորությունը, հաճախությունը եւ հաջորդականությունը:

YDK 33

ԷԿՈՆՈՄԻԿԱ

1. Համատեղ ձեռնարկատիրության զարգացման եւ օտարերկրյա կապիտալի ներգրավման հիմնահարցերը /Խալաթյան Դ. Յու; ՀՀ ԷՆ առընթեր տնտեսագիտ. պրոբլեմների ԳՀԻ (ՏՊԳՀԻ). -Երևան, 1995. -10 էջ-Մատենագր. 4ան.-Հայ.- Ավանդ. 01.08.95, թիվ 48-Ap 95

Հոդվածում վերլուծվում են համատեղ ձեռնարկությունների ստեղծման եւ զարգացման առանձնահատկությունները որպես տնտեսական համագործակցության արդյունավետ ձևեր: Այդ նպատակով քննարկվում են օտարերկրյա կապիտալի ներգրավման եւ դրա նպատակապայց օգտագործման հիմնահարցերը:

2. Արտերկրների հետ Հայաստանի Հանրապետության տնտեսական համագործակցության մեթոդաբանական եւ մեթոդական մոտեցումները /Խալաթյան Դ. Յու; ՀՀ ԷՆ առընթեր տնտեսագիտ. պրոբլեմների ԳՀԻ (ՏՊԳՀԻ). -Երևան, 1995. -11 էջ.- Մատենագր. 7 ան.- Հայ.- Ավանդ. 01.08.95, թիվ 49- Ap 95

Հոդվածում վերլուծվում են արտերկրների հետ Հայաստանի Հանրապետության տնտեսական համագործակցության գործընթացի կազմակերպման հիմնահարցերը շուկայական հարաբերություններին անցման պայմաններում, քննարկվում են այդ ուղղությամբ աշխատանքների իրականացման մեթոդաբանական եւ մեթոդական մոտեցումների մշակման խնդիրները:

YDK 502

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ

3. 1988թ. Սպիտակի Երկրաշարժի գոտում փրկարար եւ վերականգնողական աշխատանքների ընթացքում քայքայված հողերի գոկոմպլեքսների ձեւավորման մասին/Սարկիսով Ռ. Ն. Բալաշյան Մ. Յու, Ջաքարյան Վ. Ա, Մկրտչյան Լ. Պ, Առաքելյան Գ. Ռ, Խաչատրյան Հ. Գ, Սուքիասյան Ս. Ռ, Թադևոսյան Բ. Թ; »Հայաստանի կենսաբանական հանդեսի« խմբ., (Կենդանաբանության ին-տ).- Երևան, 1995. -7էջ, 2ադ.- Մատենագր. 6ան.-Ռուս.- Ավանդ. 22.08.95, թիվ 67- Ap 95

Աշխատանքը նվիրված է 1988թ. Սպիտակի Երկրաշարժի գոտում փրկարար եւ վերականգնողական աշխատանքների ընթացքում քայքայված հողերի անողնաշարավոր կենդանիների կոմպլեքսների ձեւավորման վաղ փուլերի հետազոտությանը: Ուսումնասիրված են բնահողի ֆաունայի հիմնական ցուցանիշները խախտված եւ չխախտված հողերի համեմատության ժամանակ: Համեմատվող գոկոմպլեքսների միջև վեր են հանված քանակական եւ որակական զգալի տարբերություններ:

YDK 51

ՄԱԹԵՄԱՏԻԿԱ

4. Տրված բազմությունից գործակիցներով քվազիբազմանդամներով հավասարաչափ մոտարկումների մասին /Հարությունյան Գ. Վ.; Եր.

պնտ. համալս.- Երևան, 1995. -22 էջ, - Մատենագր.- 8 ան.- Ռուս.- Ավանդ. 18.08.95, թիվ 53- Ար 95

Աշխատանքում ուսումնասիրվում է $[0, + \infty)$ կիսաառանցքի կոմպակտ

$$P_n \in \{\pm ak\}^{\infty}_1$$

բազմությունների վրա հավասարաչափ հնարավորությունը

գործակիցներով

$$\sum_{n=0}^m P_n X^{\lambda n}$$

տնայի քվադրատային համարում: Այստեղ դրական թվերի

$$\{\lambda n\}^{\infty}_1$$

և

$$\{ak\}^{\infty}_1$$

հաջորդականությունները խիստ մոնոտոն աճող են, ընդ որում

$$\lim_{n \rightarrow \infty} a_n = \infty, a_{n+1} - a_n \leq M,$$

որտեղ $M > 0$ կամայական հաստատուն է: Ստացված արդյունքներն ընդհանրացնում են ամբողջ գործակիցներով քվադրատային համարում մոտարկման մասին արդեն հայտնիները: Մասնավորաբար, դիտարկվում է մոտարկում $[0, + \infty)$ կիսաառանցքի կամայական նրկարության հատվածի վրա:

УДК 57/59

**ԿԵՆՍԱԲԱՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԲՈՒՄԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ, ԿԵՆԴԱՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ**

5. Ծանր մետաղներով աղտոտված ոռոգվող հողերի ախտորոշումը ըստ ինվերտացայի և ֆոսֆատացայի ակտիվության /Գրիգորյան Կ. Վ., Կարաքնշիչյան Գ. Մ./» Հայաստանի կենսաբանական հանդեսի» խմբ., (Եր. պնտ. համալս.- Երևան, 1995. -10 էջ, 3 աղ.- Մատենագր.10 ան.- Ռուս.- Ավանդ, 18.08.95, թիվ 54-Ար95

Ռուսումնասիրվել է ծանր մետաղների ազդեցությունը անտառային դարչնագույն տափաստանացված և գետահովտամարգագետնային հողերի ինվերտացայի և ֆոսֆատացայի ֆերմենտների ակտիվության վրա: Բացահայտվել են հողի ֆերմենտների ակտիվության վրա ծանր մետաղների ունեցած ազդեցության օրինաչափությունները: Ինվերտացայի և ֆոսֆատացայի ֆերմենտների ակտիվության հիման վրա մշակվել են աղտոտված հողերի ախտորոշման սանդղակներ:

6. Որոշ նեյրոակտիվ պնտադրների ճնշումը սինապտոսոմների ազդեցության տակ /Հովհաննիսյան Ա. Ի., Հակոբյան Ա. Թ., Արզումանյան Ա. Մ./; » Հայաստանի կենսաբանական հանդեսի» խմբ., (Մոլեկուլյար կենսաբանության ին-տ).- Երևան, 1995. -10 էջ, 2 աղ. Մատենագր. 8ան.- Ռուս.- Ավանդ. 18.08.95, թիվ 55- Ար 95

Հաստատված է, որ հիպոթալամուսից անջատված ինտակտ սինապտոսոմներն ընդունակ են ճնշելու նյութ P-ն, լյուլիբերինը, տիրոլիբերինը, նեյրոտենզինը, բրադիկինինը, բայց չեն ճնշում օքսիտոցինը և վազոպրեսինը: Նյութ P-ի դեգրադացիան տեղի է ունենում սինապտոսոմների պլազմատիկ թաղանթների մակարդակի վրա:

7. Նատրիում սուլֆիդատի ազդեցությունը սառեցված եւ հալեցրած էրիթրոցիտների թաղանթների բաղադրամասերի վրա /Ղազարյան Պ. Ա, Մարգարյան Մ. Ա, Իսրայելյան Կ. Ի, Մահարյան Տ. Վ, Անտոնյան Ա. Վ.; «Հայաստանի կենսաբանական հանդեսի» խմբ., (Հանրապետ. հեռատու լոգիական կենտրոն).-Երևան, 1995. -5 էջ.- Մատենագր. 10ան.- Ռուս.- Ավանդ. 18.08.95, թիվ 56- Ap 95

Հետազոտվել է նատրիումի սուլֆիդատի ազդեցությունը հեմոլիզի արագության, էրիթրոցիտներում 2,3-դիֆոսֆոգլիցերատի պարունակության, թաղանթային ֆոսֆոլիպիդների մակարդակի եւ լիպիդային գերօքսիդացման արագության վրա: Առաջարկվում է նատրիումի սուլֆիդատը օգտագործել որպես հալեցված եւ լվացված էրիթրոցիտների վերակախույթային լուծույթի նոր բաղադրամաս նրանց պահպանման ժամկետը 4°C-ում մինչեւ 3 օր երկարացնելու նպատակով:

8. Հիդրոպոնիկայի պայմաններում տարբեր սննդարար լուծույթների ազդեցությունը ճավայան թնյի ֆիտոֆոտոմետրիկ բնութագրերի վրա /Հովհաննիսյան Լ. Է., Մկրտչյան Ն. Պ., Բաբախանյան Մ. Ա.; «Հայաստանի կենսաբանական հանդեսի» խմբ., (Ազոթիմիական պրոբլեմների եւ հիդրոպոնիկայի ին-տ).-Երևան, 1995. -8 էջ, 2 աղ.- Մատենագր. 12ան.-Ռուս.- Ավանդ. 18.08.95, թիվ 57- Ap 95

Ճավայան թնյի հիդրոպոնիկ խիտ գեներացների ֆիտոֆոտոմետրիկ բնութագրերի հիման վրա ցույց է տրված բույսերի ներուժային արդյունավետության գնահատման հնարավորությունը տարբեր սննդարար լուծույթների օգտագործման պայմաններում:

9. 1-ֆորմիլ-5, 5-դիմեթիլ պիրազոլոդոն-3-ի սինթեզը եւ նրա ազդեցությունը ցորենի, եգիպտացորենի աճի եւ զարգացման վրա /Ավետիսյան Ա. Ա, Հախնազարյան Ա. Ա., Մելիքյան Գ. Ս, Սողոմոնյան Ս. Ա, Արզումանյան Ա. Գ, «Հայաստանի կենսաբանական հանդեսի» խմբ., (Եր. պետ. համալս.)-Երևան,

1995. -6 էջ.- Մատենագր. 4ան.-Ռուս.- Ավանդ. 18.08.95, թիվ 58- Ap 95

Որոշված է 1 ֆորմիլ-5,5-դիմեթիլ պիրազոլոդոն-3-ի խթանիչ ազդեցությունը ծլունակության, բողբոջման էներգիայի, ցորենի եւ եգիպտացորենի արմատիկների մերիսմատիկ բջիջների բաժանման եւ բերքատվության վրա: Որոշված են ուսումնասիրված միացությունների լուծույթների օպտիմալ կոնցենտրացիաները:

10. Նոր նյութեր Հայաստանի բրիոֆլորայից /Մանակյան Վ. Ա.; «Հայաստանի կենսաբանական հանդեսի» խմբ., (Բուսաբանության ին-տ).-Երևան, 1995. -5 էջ-Մատենագր. 3ան.-Ռուս.- Ավանդ. 18.08.95, թիվ 59- Ap 95

Հոդվածում բերվում են նոր տվյալներ Հայաստանի մամուռների մասին հեղինակի եւ չեխ բուսաբան Վ. Վաշակի հավաքած նյութերից: Պարզվել է, որ 14 տեսակից Schistidium trichodon եւ Rhodobryum ontariense տեսակները՝ նորություն են կովկասի, իսկ Didymodon acutus եւ Encalypta spatulata տեսակները՝ Հայաստանի համար: Մնացած 8 տեսակների համար բերվում են նոր տեղավայրեր Հայաստանում:

11. Տերատոլոգիական երիւյթ արևածաղկի ծաղկաբույլի մոտ (*Helianthus annuus L.*) /Թովմայան Վ. Ս, Ծարոյան Ա. Հ.; «Հայաստանի կենսաբանական հանդեսի» խմբ. (Հայկ. պետ. մանկավարժ, ին-տ).- Երևան, 1995. -4 էջ.- Մատենագր. 7 ան.- Ռուս.- Ավանդ. 18.08.95, թիվ 60- Ap 95

Մեր կողմից 1988թ. հայտնաբերված Է արևածաղկի / *Helianthus annuus L.* / այնպիսի ծաղկաբույլ, որի պարուրակի որոշ տերևիկների գագաթային մասում զարգացել են մեկական փոքրիկ զամբյուղ ծաղկաբույլեր: Սա հետաքրքիր է ծաղկի ծագման, մասնավորապես բարդածաղկազգիների /*Asteraceae* / ծաղկաբույլի, պարուրակի տերևիկի ծագման տեսությունների համար:

12. Որոշ ծառաթփային տեսակների ֆիտոնցիդային ակտիվությունը /Բարսեղյան Հ. Խ.; «Հայաստանի կենսաբանական հանդեսի» խմբ., (Բուսաբանության ին-տ). Երևան, 1995. -8 էջ.

1 աղ.- Մատենագր. 18 ան.- Ռուս.- Ավանդ. 22.08.95, թիվ 61- Ap 95

Հետազոտությունները հայտնաբերեցին կանաչապատման մեջ օգտագործվող որոշ ծառայփային տեսակների տերունների ֆիտոնցիդների ֆունգիցիդային, ֆունգիստատիկ և դրդիչ ազդեցությունները *Fusarium oxysporum* ֆիտոպաթոգեն սնկի տեսա-մշակաբույսի վրա: Հոդվածում բերվում է աղյուսակ, որտեղ նշված է փորձարկված բույսերի ֆիտոնցիդային ակտիվությունը, տրվում է ճնշման գոտու չափերը ըստ տարվա եղանակների:

13. Սրտի իշեմիկ հիվանդության ընթացքում Էրիթրոցիտների հեմոլիզի կենսաֆիզիկական ուսումնասիրումը /Հովհաննիսյան Ա. Ս., Հովհաննիսյան Ս. Ա., Ներսիսյան Ս. Գ.; «Հայաստանի կենսաբանական հանդեսի» խմբ. (Սրտաբանության ին-տ), Երևան, 1995, -6 էջ.- Մատենագր. 15 ան.-Ռուս.- Ավանդ. 22.08.95, թիվ 62- Ap 95

Էրիթրոցիտների թաղանթի քայքայման կինետիկական չափանիշների փուլային վերլուծման օգնությամբ պարզվել է, որ սրտի իշեմիկ հիվանդությունը զգալիորեն ազդում է նրանց վրա, ըստ որում սրտամկանի ինֆարկտի ներկայությունը կամ բացակայությունը որոշիչ գործոն չէ: Չի հայտնաբերվել կապ էրիթրոցիտների հեմոլիզի արագության և արյան մեջ քոլեստերինի քանակի հետ:

14. Նուկլինաթթուների նյութափոխանակությունը էլեկտրաստատիկ դաշտի ազդեցության պայմաններում /Արծրունի Գ. Գ, Արմենյան Ա. Գ.; «Հայաստանի կենսաբանական հանդեսի» խմբ.:(Եր. պետ. բժշկ. համալս.)-Երևան, 1995. -7 էջ.- Մատենագր, 13 ան.- Ռուս.- Ավանդ. 22.08.95, թիվ 63- Ap 95

Հետազոտվել է էլեկտրաստատիկ դաշտի (ԷՄԴ) ազդեցությունը (³H թիմիդինի ԴՆԹ և (³H) ուրիդինի ՌՆԹ ներգրավման արդյունավետության վրա առնետների լյարդի բջիջներում: Հայտնաբերվել է, որ ռադիոակտիվ նուկլեոտիդների ներգրավման ինտենսիվությունը նվազում է: Նվազման աստիճանը պայմանավորված

է ԷՄԴ-ի գործողության ժամկետի և գործողության ընդհատումից հետո ընկած ժամանակի հատվածով:

15. Սովորական սրնգենու տնկանյութի ստացումը բացօթյա հիդրոպոնիկայի պայմաններում /Հովսեփյան Ա. Հ.; «Հայաստանի կենսաբանական հանդեսի» խմբ., (Ագրոքիմիական պրոբլեմների և հիդրոպոնիկայի ին-տ).- Երևան, 1995. -5 էջ.- Մատենագր. 5 ան.- Հայ.- Ավանդ. 22.08.95,

թիվ 64- Ap 95

Սովորական սրնգենին (*Ligustrum vulgare* L.) պատկանում է ձիթազգիների ընտանիքին, խտատերև ճիպոտանման թփուտ է: Ծնորիվ այն բանի, որ սրնգենին հեշտությամբ ենթարկվում է ձմեռափորման, այն հաջողությամբ օգտագործում են քաղաքաշինության մեջ՝ եզրագարդեր, ցանկապատեր, ծառուղիներ ստեղծելիս: Սրնգենու և ընդհանրապես թփուտների տնկանյութի հողային մշակումը խիստ աշխատատար է, իսկ տնկիների ելանքը միավոր մակերեսից՝ շատ ցածր: Հաշվի առնելով սրնգենու տնկանյութի սովորական հողային եղանակով արտադրության դժվարությունները, ինչպես նաև նրա նկատմամբ եղած բարձր պահանջարկը, սկսած 1982թ. ՀՀ ԳԱԱ ագրոքիմիական պրոբլեմների և հիդրոպոնիկայի ինստիտուտի Էջմիածնի գիտաարդյունաբերական հիդրոպոնիկական բազայում մշակվում է սրնգենու անհող արտադրության կենսատեխնոլոգիան: Փորձարկվել են հետևյալ լցանյութերը, գլաքար, գլաքար-հրաբխային խարամ, հրաբխային խարամ և հող-սաուզիչ: Նշված լցանյութերի վրա տնկարկը կատարվել է 80, 100, 120 կտրոն 1քառ. մետրին սխեմայով: Լավագույն կաչողականություն է ապահովել հրաբխային խարամ տարբերակը (90-95%): Գլաքարը, կլանելով քիչ ջուր և շատ տաք- նայով, կաչողականության ցածր տոկոս է ապահովում (75-82%), թեև նպաստում է տնկիների ինտենսիվ աճին: Լուծույթը տրվել է գարնանը և ամռանը օրական 1-2, իսկ աշնանը՝ մեկ անգամ: Փորձարկված լցանյութերից սրնգենու արմատակալման համար օպտիմալ են գլաքարի խառնուրդը հրաբխային խարամի հետ և հրաբխային խարամը, որոնք, 1քառ. մետրին 120 կտրոնի տնկարկման դեպքում, մեկ հեկտարի հաշվարկով ապահովում են 900 հազարից մինչև մեկ միլիոն լիարժեք արմատակալներ, հողային՝ 210 հազարի դիմաց: Աճի ինտենսիվությամբ և ցուցանիշներով անհող մշակույթը 8-12 անգամ գերազանցում է

ստուգիչին: Առավել ինտենսիվ աճի շնորհիվ հիդրոպոնիկ արմատակալից կարելի է ստանալ 4-6 լիարժեք կտրոն հետագա բազմացման համար:

16. Ազատ ընտրության պայմաններում եռաճառագայթային շառավիղ-սիմետրիկ լաբիրինթոսում առնետների պաշտպանական վարքագիծը /Սարգիսով Գ. Թ., Ղազարյան Գ. Մ.: «Հայաստանի կենսաբանական հանդեսի» խմբ., (Կենդանաբանության ին-տ).-Երևան, 1995. - 5 էջ.- Մատենագր. 4 ան.- Ռուս. Ավանդ. 22.08.95. թիվ 65- Ap 95

Նետագոտվել է առնետների պաշտպանական վարքագիծը Եռաճառագայթային շառավիղ-սիմետրիկ լաբիրինթոսում „ինքնուսուցման., ռեժիմով (ազատ ընտրությունը նպատակային օբյեկտի տարածության մեջ՝ պայմանավորված ցավով կամ վախով): Յույց է տրված, որ նման իրավիճակում առնետների մոտ գերիշխում է հետադարձ ռազմավարությունը թույլ արտահայտված տարածական-շարժիչ ասիմետրիայի ֆոնի վրա:

УДК 612. 741. 1

17. Յուցասարքի օպերատորների կենտրոնական շրջանի (C3) նյարդաֆիզիոլոգիական ցուցանիշների հետազոտությունը միալար աշխատանքի ժամանակ /Գրիգորյան Վ. Հ. Աղաբաբյան Հ. Ռ. Թարոյան Ն. Ա.: «Հայաստանի կենսաբանական հանդեսի» խմբ., (Եր. պետ. համալս.) -Երևան, 1995. -7 էջ.- Մատենագր. 10 ան.- Ռուս.- Ավանդ. 22.08.95, թիվ 66- Ap 95

Ուսումնասիրվել է ցուցասարքի օպերատորի գլխուղեղի կեղևի կենտրոնական հրահրված կենսահոսանքների (ՆԿ) փոփոխության դինամիկան 4-ժամյա միալար աշխատանք կատարելիս: Ստացված արդյունքների վերլուծությունը հիմնված է փորձարկվողների նրկու խմբերի բաժանման սկզբունքի վրա (կենսահոսանքների բարձր եւ ցածր ամպլիտուդ ունեցողների), կախված α -ռիթմի արտահայտվածության աստիճանից եւ . հրահրված կենսահոսանքների ամպլիտուդի մեծությունից: Բացահայտվել է, որ ինչպես բարձր, այնպես էլ ցածր ամպլիտուդ ունեցող փորձարկվողների խմբում մեծամասնության մոտ

փորձի վերջում աշխատանքի արդյունավետությունը բարձրանում է կամ մնում սկզբնական մակարդակում: Ենթադրվում է, որ խնդրի կատարման հաջողությունը իրագործվում է ուղեղի տարբեր մեխանիզմների միջոցով կախված կեղևի էլեկտրական ակտիվության տեսակից: Այսպես, բարձր ամպլիտուդ ունեցող փորձարկվողների խմբում օպտիմալ գործունեությունը իրականացվում է ինքնակարգավորման մեխանիզմների միջոցով, իսկ ցածր ամպլիտուդ ունեցող փորձարկվողների խմբում՝ կամային լարվածության օգնությամբ, վերջինս ակտիվացնում է այն ենթակեղևային կառուցվածքները, որոնք պատասխանատու են ուշադրության համար: Բացահայտվել է, որ ՆԿ բարձր ամպլիտուդ ունեցողները դիմացկուն են ցուցասարքի վրա միալար աշխատանք կատարելիս: Ստացված տվյալները վկայում են այն մասին, որ ցուցասարքից օգտվողների աշխատունակությունը եւ կենտրոնական նյարդային համակարգի ֆունկցիոնալ վիճակը կախված են անհատական ամպլիտուդային բնութագրիչներից, ինչպես նաեւ կեղևի էլեկտրական ակտիվությունից:

18. Նուկլեոտիդների եւ անօրգանական թթուների ազդեցությունը պրոլինի կենսասինթեզի վրա լոբու ընդակերի *Acanthoscelides obtectus say* օնթոգենետում /Աղաջանյան Ա. Խ., Ղուկասյան Ղ. Գ., Մարտիրոսյան Մ. Ս., Աղաջանյան Ա.Ա.: «Հայաստանի կենսաբանական հանդեսի» խմբ., (Եր. պետ. համալս.) -Երևան, 1995. -10 էջ, 2 աղ.-Մատենագր. 13 ան.- Ռուս.- Ավանդ. 22.08.95. թիվ 68- Ap 95

Սահմանվել է, որ լոբու ընդակերի թրթուրներում պիրոլին 5-կարբօքսիլատ ռեդուկտազայի համար կոֆակտոր է հանդիսանում ՆԱԴՖՄ-ը, իսկ բզնզների եւ հարսնյակների համար՝ ՆԱԴԱ-ը: Լոբու ընդակերի կերպարանափոխության տարբեր փուլերում ամբողջական համոզեմատի մակարդակով հայտնաբերվել է պրոլինի կենսասինթեզի ֆերմենտների բարձր ակտիվություն՝ օքսիդացած նուկլեոտիդների առկայությամբ (հատկապես ՆԱԴՖ⁺): Այս գործընթացը զգալիորեն խթանվում է իզոցիտրատով, մալաոնով, ցիտրատով: Յիտրատի ազդեցությունն առավել արտահայտվում է միջատի թրթուրային փուլում:

19. Պաշտպանական պայմանական ռեֆլեքսների ուսումնասիրությունը կարմիր կորիզի վնասման դեպքում /Մադաթովա Ի. Ռ., Ղազարյան Լ. Գ., Բոյախյան Օ. Ա., Տալանյան Ա. Կ.; «Հայաստանի կենսաբանական հանդեսի» խմբ., (Կենսաբանության ին-տ).-Երևան, 1995. -5 էջ.-Մատեն ազր. 4 ան.- Ռուս.- Ավանդ. 22.08.95, թիվ 69- Ap 95

Յույց է տրված, որ կարմիր կորիզի միակողմանի վնասումը կենդանիների մոտ առաջացնում է վարքագծային անհամաչափություն, այսինքն տարածական կողմնորոշման խանգարումներ: Ստացված խանգարումների բնույթը նույնն է, ինչ որ հայտնաբերվել էր նախկինում ջրային դրոպատոմառների վրա հիմնված փորձերի ժամանակ: Ենթադրվում է, որ դրոպատոմառների բնույթը դեր չի խաղում տարածական կողմնորոշման գործընթացների խանգարման մեջ:

20. ԷՄԴ-ի ազդեցությունը առնետների լյարդի սպիտակուցների փոխանակության վրա /Արծրունի Գ. Գ., Արմենյան Ա. Գ.; «Հայաստանի կենսաբանական հանդեսի» խմբ., (Եր. պետ. բժշկ. համալս.)- Երևան, 1995. -7էջ.- Մատենագր. 7ան.- Ռուս.- Ավանդ. 22.08.95, թիվ 70- Ap 95

In vivo փորձերում հետազոտվել է տարբեր ժամկետների ԷՄԴ-ի ազդեցությունը սպիտակուցների փոխանակության ինտենսիվության վրա: Հայտնաբերվել է, որ այն փոխվում է, կախված դաշտի ազդեցության երկարատևությունից:

21. Սինթետիկ կաուչուկի արտադրության որոշ արդյունաբերական աղտաջրերի զեննտիկական ակտիվությունը /Պողոսյան Վ. Ս., Աթոյանց Ա. Լ., Աղաջանյան Է. Ա., Կասպարովա Ի. Պ., Ջանփոլադյան Ն Ա.; «Հայաստանի կենսաբանական հանդեսի» խմբ.,(Եր. պետ. համալս.)- Երևան, 1995. -9 էջ.- Մատենագր. 11 ան.- Ռուս.- Ավանդ. 24.08.95, թիվ 71- Ap 95

Ռեսուլտատները Է. Ն.Սահիրտ., գիտա-արտադրական միավորման արդյունաբերական աղտաջրերի ազդեցությունը տրադեսկանցիայի Օ2 կլոնի առէջաթելերի բջիջների սոմատիկ մուտացիաների հաճախականության վրա: Բացահայտվել է, որ քիմիական արտադրության գործունեության ժամանակ բանվորական արտադրամասերի հոսքաջրերում բարձրանում է սոմատիկ մուտացիաների հաճախականությունը, ընդ որում ռեցեսիվ մուտացիաների տոկոսը գերազանցում է ստուգիչին 3-5.5 անգամ, իսկ զեննտիկոնեն անորոշների՝ 6-11.3 անգամ: Հետազոտված արտադրամասերում աշխատանքի ժամանակավոր դադարեցումը բերում է սոմատիկ մուտացիաների հաճախականության իջեցմանը, հասցնելով այն նորմայի սահմաններին :Մման օրինաչափություն դիտվում է նաև ձեռքբանական փոփոխությունների հետազոտման դեպքում: Ստացված օրինաչափությունները համընկնում են փորձարկվող ջրերի քիմիական անալիզի տվյալների հետ, որոնց կազմը արտադրամասերի աշխատանքի ժամանակ լրիվ տարբերվում է նորմայից:

22. Ծառուսականների տերեւնեոի ռեակցիայի հարցի շուրջ՝ բարձր լեռնային պայմաններում նրանց ինտրոդուկցման դեպքում /Ղազարյան Վ. Վ., Հովհաննիսյան Լ. Ն.; «Հայաստանի կենսաբանական հանդեսի» խմբ., (Բուսաբանության ին-տ). - Երևան, 1995. -8 էջ, 2 աղ. - Մատենագր. 15 ան. - Ռուս. - Ավանդ. 24.08.95, թիվ 72- Ap 95

Ռեսուլտատները Է Սևանի բուսաբանական այգու պայմաններում ծառային տարբեր հասակի ինտրոդուկցնտների հարմարողականության ռեակցիան: Պարզվել է, որ հարմարողականության հատկանիշներից մեկը համարվում է բարձր լեռնային պայմաններում տերեւներում քլորոֆիլի քանակության ավելացումը օնթոզենեզի ընթացքում, ի հակադրություն քլորոֆիլի, տեղի է ունենում ամոնիակի քանակության նվազում, եւ դրանով կարգավորվում է բույսերի սպիտակուցային փոխանակումը:

23. Արևային ճառագայթաճարման պայմաններում հիբրիդային ռչխարների օրգանիզմի ջերմակարգավորման

ցուցանիշների և արյան շնչառական ֆունկցիայի առանձնահատկությունները /Անտոնյան Ա. Շ., Հարությունյան Ռ. Ա., Կյուչիկյանց Մ. Ա., Քոչարյան Ռ. Գ., Ասատուրյան Լ. Ա.; «Հայաստանի կենսաբանական հանդեսի» խմբ., (Կենդանաբանության ին-ա, Ֆիզիոլոգիայի ին-տ).- Երևան, 1995. -6 էջ, 3 աղ.- Մատենագր. 9 ան.- Ռուս.-Ավանդ. 24.08.95, թիվ 73-Ք95

Պարզված է, որ արևու-ջերմային գործոնի համատեղ ազդեցության դեպքում հիբրիդային ծագում ունեցող ոչխարների մոտ՝ ջերմային հեմոստազում, շնչառական և սիրտ-անոթային գործունեությունում, ինչպես նաև արյան շնչառական ֆունկցիայում ավելի զգալի և հավաստի տեղաշարժեր են տեղի ունենում, քան նույն պայմաններում գտնվող կորիդել ոչխարների մոտ:

24. Կոլալիզինի ազդեցությունը ճագարների վնասված տեսողական նյարդի գործառույթի և կառուցվածքի վերականգնման դինամիկայի վրա /Միրզոյան Վ. Ս., Մատինյան Լ. Ա., Նահապետյան Խ. Հ., Անտոնյան Մ. Վ., Գրիգորյան Գ. Լ.; «Հայաստանի կենսաբանական հանդեսի» խմբ., (Ֆիզիոլոգիայի ին-տ, Աչքի հիվանդությունների հանրա- պետ. կլինիկա).- Երևան, 1995.- 3 էջ.- Ռուս.- Ավանդ. 24.08.95, թիվ 74- Ք95

Ուսումնասիրվել է մանրէնա ծագում ունեցող պրոտոզոոների ֆերմենտի կոլալիզինի ազդեցությունը ճագարի վնասված տեսողական նյարդի գործառույթային և կառուցվածքային վերականգնման ընթացքի վրա: Գրառվել են գլխուղեղի տեսողական կեղևի հրահրված կենսահոսանքները մինչև տեսողական նյարդի վնասումը և դրանից հետո: Ստացված տվյալները վկայում են կոլալիզինի դրական ազդեցության մասին վնասված գործառույթի ու կառուցվածքի վերականգնման գործում:

25. Որոշ միկրոտարրերի հաշվեկշիռը հիդրոպոնիկայի պայմաններում /Բաբախանյան Մ. Ա., Ղալայյան Լ. Մ., Հովհաննիսյան Լ. Է., Աստվածատրյան Ն. Ջ., Դադայանովա Մ. Դ. «Հայաստանի կենսաբանական հանդեսի» խմբ., (Ագրոքիմիական

պրոբլեմների և հիդրոպոնիկայի ին-ա),- Երևան, 1995. -8 էջ, 2 աղ.- Մատենագր. 8 ան.- Ռուս.- Ավանդ. 24.08.95. թիվ 75- Ք95

Ուսումնասիրվել է որոշ միկրոտարրերի / Fe, Mn, B, Cu, Mo / հաշվեկշիռը լուիկի և տաքդեղի հիդրոպոնիկական մշակությամբ: Բացահայտվել է միկրոտարրերի բացասական հաշվեկշիռը իջեցրել է բույսերի արդյունավետությունը: Մենդարար լուծույթի համար առաջարկվում է միկրոտարրերի հավասարակշռված քանակություն:

26. Երևան քաղաքի սահմանագծում Հրազդան գետի հիդրոմիկրոբիոտի վիճակի անալիզը, կապված տեխնածին աղտոտման հետ /Հակոբյան Լ. Ա., Կյուրեղյան Տ. Ն.; «Հայաստանի կենսաբանական հանդեսի» խմբ., (Էկոլոգոն-տոֆերային հետազոտությունների կենտրոն, Եր. պետ. հիւ-մալս).-Երևան, 1995.- 4 էջ.- Մատենագր. 5ան.- Ռուս.- Ավանդ . 24.08.95, թիվ 76- Ք95

Ներկայացված աշխատանքն արտացոլում է Երևան քաղաքի սահմանագծում Հրազդան գետի հիդրոքիմիական և հիդրոմիկրոբիոլոգիական հետազոտության տվյալների հարաբերության արդյունքները: Գետը կարևոր դեր է կատարում հանրապետության համար և նշաբարկված է Երկարամյա բազմագործոն աղտոտման: Բազմակողմանի ստացիոնար հիդրոքիմիական հետազոտումը հնարավորություն տվեց հայտնաբերել սահմանափակող գործոնի բնույթը, որը բացատրում է միկրոբիոտայի կայուն ճնշվածությունը և բնութագրվում է տոքսիկ մետաղների պարունակության ծայրահեղ գերազանցումով: Նշված տեխնածին աղտոտման ճնշումը խոր փոփոխություններ է առաջացնում ջրային միկրոօրգանիզմների համակեցությունների կառուցվածքում, խախտում ինքնուսմարման և ջրի որակի գոյացման գործընթացները սահմանող գործառույթային հանգույցները: Հիմնավորված է Հրազդան գետի հետագա աղտոտման և, մասնավորապես, տոքսիկ մետաղներով նրա կոնտամինացման կանխման նպատակահարմարությանը:

27. Ֆունկցիոնալ տեղակայված պիրազոլիդոն-3-ները որպես նեոպատոգենների աճի խթանիչ /Ավետիսյան Ա. Ա., Հախնազարյան

Ա. Ա., Մելիքյան Գ. Ս., Սողոմոնյան Ս. Ա.; «Հայաստանի կենսաբանական հանդես» խմբ., (Եր. պետ. համալս.)- Երևան, 1995. -8 էջ, 2 աղ.- Մատենագր. 5 ան.- Ռուս.- Ավանդ. 24.08.95, թիվ 77- Ap 95

Ֆենիլքսուցալսաթթվի հիդրոլիզը ալդեհիդների հետ առաջացնում է համապատասխան պիրազոլիդոններ: Ստացված միացությունները օժտված են աճի յաթանման հատկությունով եզիպտացորենի նկատմամբ:

28. Penicillium roqueforti-ի շտամներում եւ «Ռոքֆոր» պանրում որոշ արկալոիդների եւ միկոտոքսինների հետազոտությունը /Ռեշիտիլովա Տ. Ա., Գրիգորյան Կ. Մ., Կոզլովսկի Ա. Գ.; «Հայաստանի կենսաբանական հանդես» խմբ., (Ֆիզոլոգիայի ին-տ, Եր. պետ. համալս.)- Երևան, 1995,- 13 էջ, 4 աղ.- Մատենագր. 12 ան.- Ռուս.- Ավանդ 24.08.95, թիվ 78- Ap 95

«Ռոքֆոր» պանրի արտադրության մեջ օգտագործման համար նախատեսված *Penicillium roqueforti* սնկի շտամների հնարավոր տոքսիկոլոգիայի բացահայտման նպատակով իրականացվել է նշված սնկի 17 շտամների կողմից միկոտոքսինների առաջացման հետազոտություն՝ աճի տարբեր պայմաններում եւ ժամկետներում: Բացի այդ, հետազոտվել են հասունացման տարբեր ժամկետներում գտնվող պանիրների նմուշները: *P. roqueforti*-ի բոլոր հետազոտված շտամները սինթեզում են ռոքֆորտին. 3.12- դիհիդրոռոքֆորային. կլավինային արկալոիդներ էւ միկոֆենոլաթթու: Այս նույն միացությունները տարբեր քանակություններով հայտնաբերված են նաեւ նշված սունկը պարունակող պանիրներում: Հաշվի առնելով կենդանի օրգանիզմների վրա ունեցած ռոքֆորտինի սուր տոքսիկ. նեյրոտրոպ եւ անտիբիոտիկ ազդեցությունը, պետք է իրականացնել ռոքֆորտինի սննդամթերքների մշտական վերահսկողություն՝ կապված *P. roqueforti* սնկի օգտագործման կամ նրանով լսողությունների հետ:

29. Մագնիսական դաշտի ազդեցությունը ³H- թիմիդինի կապվածության վրա առնույն փայծախի բջիջներում /Ավետիսյան Թ. Հ., Ղարիբովա Լ. Ս., Ավանեսյան Ա. Ս., Հայրապետյան Ս.Ն.;

(Կենսաֆիզիկայի կենտրոն, Ստեփանակերտի համալս.)- Երևան, 1995. -4 էջ.- Մատենագր. 6 ան.- Ռուս.- Ավանդ. 24.08.95, թիվ 79- Ap 95

Ցույց է տրված, որ ³H-ը ուժեղացնում է ³H-թիմիդինի միացումը առնույնների Փայծախի բջիջներում: Հաստատված է, որ մագնիսական դաշտի ազդեցությունը իրականացվում է հիմնականում ջրի ֆիզիկա-քիմիական հատկությունների փոփոխման միջոցով:

30. Արյան նրկարատնւ պահպանման եւ թաղանթների ֆոսֆոլիպազ A2-ով ձեւափոխելու հետնանքով առաջացած մարդու էրիթրոցիտների թաղանթային սպիտակուցների վիճակի հետազոտումը /Մնացականյան Գ. Ա., Կալայան Ա. Ս., Աբրահամյան Ա. Շ., Հարությունյան Ա. Ա.; «Հայաստանի կենսաբանական հանդես» խմբ., (Մոլեկուլյար կենսաբանության ին-տ)-Երևան, 1995. -6 էջ.- Մատենագր. 7 ան.- Ռուս. Ավանդ. 24.08.95, թիվ 80- Ap 95

Երկկողորդինատային լուծազատման մեթոդով կազմվել են մարդու էրիթրոցիտների թաղանթային սպիտակուցների նրկկողորդինատ վիճակային դիագրամներ: Բացահայտվել է, որ սպիտակուցների դիագրամների վրա կիսանլիքի գծի փոփոխությունները արյան նրկարատնւ պահպանման եւ թաղանթների ֆոսֆոլիպազA₂ -ով ձեւա փոխելու դեպքում ունեն նույնանման բնութագիր:

31. Դիպտերոտային սնկերի նոր նումնկատության կոմբինացիաներ /Թալախյան Մ. Գ., Նանագյուլյան Ս. Գ.; -»Հայաստանի կենսաբանական հանդես« խմբ., (Եր. պետ. համալս.)- Երևան, 1995. -3 էջ.-Մատենագր. 3 ան.- Ռուս.- Ավանդ. 25.08.95, թիվ 81- Ap 95

Հոդվածում առաջարկվում են պայուսակավոր սնկերի 2 տեսակների նոր կոմբինացիաներ, որոնք նախկինում հրատարակված էին *Diaporthe gisii* կազմում: Այդ տեսակներն են 1. *Clypeoporthe arctii* (Lasch) Tasl. et Nanag., comb. nov., 2. *Clypeoporthe salviicola* (Cke et Ell.).

Tasl. et Nanag., comb. nov.

32. Մագնիսացված ֆիզիոլոգիական լուծույթի ազդեցությունը $^{45}\text{Ca}^{2+}$ -իոնների մուտքի վրա առնետների ուղեղի եւ փայծախի բջիջներում /Ավետիսյան Թ. Հ., Ղարիբովա Լ. Ս., Ավաննեսյան Ա. Ս., Հայրապետյան Ս. Ն.; «Հայաստանի կենսաբանական հանդեսի» խմբ., (Կենսաֆիզիկայի կենտրոն, Ստեփանակերտի համալս.)- Երևան, 1995.- 4 էջ.- Մատենագր. 2 ան.- Ռուս.- Ավանդ. 25.08.95, թիվ 82- Ap 95

Յույց է տրված, որ մագնիսական դաշտում պահված ֆիզիոլոգիական լուծույթը ուժեղացնում է

$^{45}\text{Ca}^{2+}$ -ի մուտքը ուղեղային հյուսվածքներ, իսկ փայծախի բջիջներ, ընդհակառակը, ճնշում է:

33. Կենսաբանական ակտիվ պրեպարատների գենետիկական էֆեկտի ուսումնասիրությունը եզրագծերի մեյոզիկ համակարգում /Երվանդյան Ա. Ս. Գ., Գալուկյան Մ. Հ., Հարությունյան Ռ. Մ.; «Հայաստանի կենսաբանական հանդեսի» խմբ., (Եր. պետ. համալս.)-Երևան, 1995. -10 էջ, 2 աղ.- Մատենագր. 13 ան.- Ռուս.- Ավանդ. 25.08.95, թիվ 83- Ap 95

Ներկայացված են եզրագծերի բույսերի միկրոսպորոցիտների վրա Երկու պենտիցիդների՝ ֆենտիուրամի (Ֆ), տետրամեթիլթիուրամի (ՏՄԹ) եւ հումինային թթուների ֆիզիոլոգիական ակտիվ նատրիումական աղի հումատ նատրիումի (Ն) ազդեցության վերաբերյալ տվյալները: Նկատվել է խախտումների լայն սպեկտր, որոնց տոկոսը համեմատաբար բարձր է տետրաղի փուլում, Ն եւ պենտիցի ու Ն-ի համատեղ տարբերակում: Հաստատվել է, որ տետ- րաղային վերլուծությունը կարելի է համարել մոնիթորինգի ինդիկատորային թեստերից մեկը: Խախտումների համեմատաբար ցածր տոկոսը վկայում է փորձարկվող նյութերի թույլ գենետիկական ակտիվության մասին:

34. Որոշ քլոր պարունակող մակերևութային ակտիվ չորրորդային ամոնիումային միացությունների հակամանրեային ակտիվության համեմատական գնահատականը կախված քիմիական կառուցվածքից /Բաբախանյան Ա. Վ., Բաբախանյան Ժ. Ռ.; «Հայաստանի կենսաբանական հանդեսի» խմբ., (Համաճարակաբանության, վիրուսաբանության եւ բժշկական

պարագիտաբանության գիտահետազոտ. ին-տ, Հայկ. պետ. մանկավարժ, ին-տ) -Երևան, 1995. -6 էջ.- Մատենագր. 7 ան. Ռուս.- Ավանդ. 25.08.95, թիվ 84- Ap 95

Սինթեզվել եւ ուսումնասիրվել է 18 նոր մակերեսային ակտիվ չորրորդային ամոնիումային միացություններ (ՉԱՄ), որոնք ակտիվորակարենիլմեթիլային ռադիկալի հետ մեկտեղ պարունակում են 4-ֆենիլ-օրսի-2-քլոր-2-բութենիլային (ՉԱՄ- 1), 4-ն-տոլիլօրսի-2-քլոր-2-բութենիլային (ՉԱՄ-11) եւ 4-ֆե- սիլօրսի-2,3-դիքլոր-2-բութենիլային (ՉԱՄ-111) խմբեր: Տրվել է ՉԱՄ-1+ՉԱՄ-111-ի հակամանրեային ակտիվության համեմատական գնահատականը, կախված քիմիական կառուցվածքից, Եւ սահմանվել է դրանց միջև օրինաչափ կապ:

Հակամանրեային ակտիվությունից Ելնելով, հետազոտված միացությունները կարելի է անդակայել շարքում հետևյալ հաջորդականությամբ՝ ՉԱՄ-111 > ՉԱՄ-11 > ՉԱՄ-1:

35. Ֆունկցիոնալ տեղակալված S—լաքտոնների ստացումը եւ կենսաբանական ակտիվությունը /Ավետիսյան Ա. Ա., Գյոզալյան Ռ. Ի., Մելիքյան Գ. Ս., Մուղնեցյան Է. Գ., Սողոմոնյան Տ.Ա.; «Հայաստանի կենսաբանական հանդեսի» խմբ., (Եր. պետ. համալս.)-Երևան, 1995. -6 էջ, 2 աղ.- Մատենագր. 13 ան.- Ռուս.- Ավանդ. 25.08.95, թիվ 85- Ap 95

Տվյալ աշխատանքի նպատակն է նոր S-լաքտոնների ստացումը եւ կենսաբանական փորձարկումները: Եզրագծերի սերմերի մշակումը ցույց է տվել որ ստացված լաքտոնները հա դիսանում են աճի խթանիչ եւ միաժամանակ օժտված են նաեւ մոտազեն ակտիվությամբ:

36. Լաքտատոր կենդանիների սրտամկանի միկրոանոթային համակարգի հունի հայանաբերումը ամոնիակ-ԱՏՖ- ային մեթոդով /Մարգարյան Ն. Վ., Չիլինգարյան Հ. Մ.; « Հայաստանի կենսաբանական հանդեսի» խմբ., (Ֆիզիոլոգիայի ին-տ)-Երևան, 1995. -4 էջ.- Մատենագր. 7 ան.- Ռուս.- Ավանդ. 28.08.95, թիվ 86- Ap 95

Կատարվել են հետազոտություններ ճագարների և ծովախոզուկների սրտի միկրո անոթային համակարգի հայտնաբերման ուղղությամբ Չիլիեգարյանի ամոնիակ-ԱՏՖ-ային ոչ ներաբերումային հիստո-անգրոլոգիական մեթոդով: Կատարված հետազոտությունները հնարավորություն տվեցին ընտրելու օպտիմալ պայմաններ, որոնց օգնությամբ կարելի է կատարել սրտի միկրո անոթային համակարգի ցայտուն հայտնաբերումը: Ստացված տվյալները ցույց են տալիս, որ այս եղանակով հայտնաբերվում են զարկերակային և երակային անոթները և մազանոթային հունը: Ներկված կարվածքների վրա հնարավոր է տարբերել զարկերակները Երակներից:

37. Ծովախոզուկի միզածորանի ինքնաբուխ ակտիվության ձևավորման որոշ առանձնահատկությունների մասին /Ղազարյան Զ. Վ., Տիրայան Ա. Ս., Հակոբյան Ռ. Ռ.; **»Հայաստանի կենսաբանական հանդեսի« խմբ., (Եր. պետ. համալս.)-Երևան, 1995. -8 էջ.- Մատենագր. 14 ան.- Ռուս.- Ավանդ. 28.08.95« թիվ 87- Ap 95**

Ռ-խումբն ասիիվել է ծովախոզուկի մեկուսացված միզածորանի տարբեր հատվածների ինքնաբուխ ակտիվությունը **»շաքարային կամրջակի«** պայմաններում: Միզածորանի միջին հատվածից գրանցված գործողության ներուժի ամպլիտուդը և ձևը տարբերվում են Երկու ծայրամասերից գրանցված ներուժերից: Արտաքին միջավայրում K^+ - իոնների պարունակության բարձրացումը (5,9-ից մինչև 20 միլիմոլ) բերում է գործողության ներուժի ինչպես արագ, այնպես էլ դանդաղ բաղադրիչների միապաղաղ փոքրացմանը համապատասխանաբար բոլոր հատվածներում: K^+ -իոնների նշված փոփոխություններն ուղեկցվում են բջջային թաղանթի ապառնուեռացման ավելաց- մամո: համեմատելով ստացված տվյալները ամեն մի հատվածի համար, կարելի է եզրակացնել, որ միզածորանի երկու ծայրամասերի թաղանթի ներուժը ավելի է ապսբելու- սացված, քան միջին հատվածում, և հետո է կալիումական հավասարակշռման ներուժից: Ստացված տվյալներից կարելի է Եզրակացնել, որ միզածորանի տարբեր հատվածներից գրանցված գործողության ներուժի ան համասեռությունը կապված է ինչպես հանգստի ներուժի տարբեր մակարդակի, այնպես և բջջային թաղանթի էլեկտրաքիմիական հատկությունների տարբերակման հետ:

38. ՀՄՂ-ի ազդեցությունը $^{45}Ca^{++}$ իոնների բջջաթաղանթային մուտքի և $h\theta\Omega$ գծային մկների փայծալի T-լիմֆոցիտների ֆոսֆոլիպիդային կազմի վրա /Ղարիբովա Լ. Ս., Ավետիսյան Թ. Հ., Ավանեսյան Ա. Ա., Հայրապետյան Ս. Ն.; **»Հայաստանի կենսաբանական հանդեսի« խմբ., (Կենսաֆիզիկայի կենտրոն, Ստեփանակերտի համալս.)- Երևան, 1995. -5 էջ.- Մատենագր. 11 ան.- Ռուս.- Ավանդ. 28.08.95, թիվ 88- Ap 95**

Ցույց է տրված, որ ՀՄՂ-ը մկների փայծալի T-լիմֆոցիտներում $^{45}Ca^{++}$ -ի մուտքի վրա ունի երկփուլ ազդեցություն՝ սկզբնական փոքրացում և հետագա մեծացում: Նկատվել է նաև փայծալի բջիջների ֆոսֆոլիպիդային կազմի առանձին ֆրակցիաների քանակական փոփոխություն:

39. Կեղևի մարմնագոյակն գոտու գրգռման ազդեցությունը կողմնային անդաստա կային կորիզի նեյրոնների ակտիվության վրա թրթռման ազդեցությունից հետո /Մինասյան Ս. Մ., Սահակյան Ս. Գ., Ադամյան Յ. Ի., Մանուկյան Ն. Կ., Ղուլյան Վ. Ս.; **»Հ այ սատան ի կենսաբանական հանդեսի« խմբ., (Եր. պետ. համալս.)- Երևան, 1995. -7 էջ. 1 աղ.- Մատենագր. 14 ան.- Ռուս.- Ավանդ. 28.08.95, թիվ 89- Ap 95**

Սուր փորձի պայմաններում ուսումնասիրվել է ճագարների կեղևի մար մնա գոյակն շրջանի գրգռման ազդեցությունը կողմնային անդաստակային ակտիվության վրա թրթռումից առաջ և հետո: Թրթռումից (5Հց. 1 մմ. 30 րոպե) հետո դիտվել է անդաստակային կորիզի նեյրոնների հաճախության տեղաշարժ դեպի բարձր ակտիվության միավորները: Պարզվել է, որ թրթռումը թուլացնում է դրող և ուժեղացնում արգելակող վայրիջակ ազդեցությունը անդաստակային կորիզի իմպուլսային ակտիվության վրա:

40. Խնորասնկային քրոմատինի անջատումը և համեմատական ուսումնասիրումը /Նավասարդյան Լ. Հ., Մարության Ս. Վ., Դավթյան Մ. Ա.; **»Հայաստանի կենսաբանական հանդեսի« խմբ. (Եր. պետ. համալս.)- Երևան, 1995.- Ռուս.- Ավանդ. 28.08.95, թիվ 90- Ap 95**

Կատարվել են *Candida guilliermondii* ծկ-4 կերային խմորասնկերից կորիզների անջատման, այնուհետև՝ քրոմատինի առանձնացման մեթոդի մշակման աշխատանքներ: Իրականացվել են նաև քրոմատինի բաղադրամասերի քանակական փոխհարաբերության որոշման և հիստոնային սպիտակուցների ֆլյոտրենսցենային պարամետրերի ուսումնասիրություններ:

41. ABL-ի դերի ուսումնասիրումը արյան մակարդման գործընթացի կարգավորման գործում /Ամիրյան Ս. Վ., Նադիրյան Ս. Վ.; «Հայաստանի կենսաբանական հանդեսի» խմբ., (Եր. պետ. համալս.)- Երևան, 1995. -10 էջ, 2 աղ.- Մատենագր. 13 ան.- Ռուս.- Ավանդ. 28.08.95, թիվ 91- Ap 95

Ռիստմասախոսվել է նշածնի համալիրի հիմնակողւնային կորիզախմբի էլեկտրական խթանման ազդեցությունը արյան մակարդման կենսաքիմիական ցուցանիշների փոփոխության վրա հետին Ենթատեսաթմբի կառուցվածքների էլեկտրական քայքայման պայմաններում: Յույց է տրված, որ ինչպես ցածր (5Տգ), այնպես էլ բարձր (100 Տգ) հաճախակառությամբ նշված կորիզախմբի էլեկտրախթանումը առաջացնում է արյան մակարդման հիպերկոագուլյացիոն փոփոխություններ: Սուսցված ավալները վկայում են այն մասին, որ նշածնի համալիրի հիմնակողւնային կորիզախումբը մասնակցում է օրգանիզմի սիսպատիկ լարվածության կարգավորմանը:

42. Հայաստանում առաջին անգամ հայտնաբերված պայուսակավոր Եր բազիդիալ մակրոմիցետների տեսակները /Մանագյուլյան Ս. Գ., Թասլախյան Ս. Գ., Կիրակոսյան Ն. Ջ.; «Հայաստանի կենսաբանական հանդեսի» խմբ., (Եր. պետ. համալս.)-Երևան, 1995. -6 էջ.- Մատենագր. 15 ան. -Ռուս.- Ավանդ. 28.08.95, թիվ 92- Ap 95

Մակրոմիցետների բիոտայի ուսումնասիրության ընթացքում հայտնաբերվել են Հայաստանի համար նոր 40 սնկերի տեսակներ և 23 ցեղեր, որոնք պատկանում են Ascomycotina և Basidiomycotina ենթաբաժրնների *Discomycetes*, *Hymenomycetes*, *Gasteromycetes*

դասերին: Ամեն տեսակի հասար նշված է լատիներեն անվանումը, գրականությունը, տարածումը ըստ ֆլորիստիկական շրջանների, բուսականության տիպը, սուբստրատը, էկոլոգիական խումբը և հավաքի ժամկետը:

43. Երիկամների ջրաարտազատական գործառնայի վիճակը նոր աղրենալիների ներամիզդալային ներարկման դեպքում /Հովհաննիսյան Հ. Հ., Հակոբյան Ս. Ա.; «Հայաստանի կենսաբանական հանդեսի» խմբ., (Եր. պետ. համալս.)- Երևան, 1995. -7 էջ,աղ. 2- Մատենագր. 9 ան.- Ռուս.- Ավանդ. 28.08.95, թիվ 93- Ap 95

Նշահամալիրի հիմնակողւնային կորիզի մեջ նորադրենալիների ներարկումն ուժեղացնում է երիկամների ջրաարտազատական գործառնայթը, իսկ նույնանման ներարկումը կենտրոնական կորիզի մեջ՝ հանգեցնում ընկճման: Ջրարտազատական ոչ միանման ռեակցիան, հավանաբար, պայմանավորված է նշված կառուցվածքների ներդրնային գոյացությունների տարբեր գոյացությամբ:

ՄԺԿ621.31.

ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐՔԵՏԻԿԱ

44. Ըներգախնայողական միջոցառման արդյունավետության համապարփակ ցուցանիշ (էներգախնայողական միջոցառումների ներդրում) /Առաքելյան Ա. Մ., Եզիզաբյան Լ. Վ.; Ըներգետիկայի հայկ. գիտահետազոտ, ին-տ.- Երևան, 1995. -10 էջ.- Մատենագր. 1 ան.- Ռուս.- Ավանդ. 15.08.95, թիվ 50- Ap 95

Սուսցված է Ըներգախնայողական միջոցառման արդյունավետության ցուցանիշի հաշվման բանաճն (միջոցառման ինքնագնման ժամկետը), հաշվի առնելով արժեզրկման գործոնը, ներդրման ժամկետը, միջոցառմանը տրամադրվող վարկի մեծությունը, նրա տոկոսադրույթը, որոնք լրացուցիչ ծախսեր են առաջացնում միջոցառման ներդրման ընթացքում և ներդրումից հետո:

45. Համասնու էլեկտրական ցանցում հզորության կորուստների աճի որոշումը, սպառիչի մուտքի պարամետրների միջոցով /Առաքելյան Ա Մ., Եղիազարյան Լ. Վ.:/ Էներգետիկայի հայկ. գիտահետազոտ. ին-տ.- Երևան, 1995. -7 էջ, 2 նկ. Մատենագր. 2 ան.-Ռուս.- Ավանդ. 15.08.95, թիվ

51- Ap 95

Առաջարկվում է մինչև 10 կվ համասնու էլեկտրացանցում առանձին սպառիչի (ընդունիչի) հոսանքի փոփոխման հետևանքով առաջացած ակախիվ հզորության կորուստի աճի որոշման բանաձևի նրա հոսանքների և լարումների արժեքների միջոցով: Վերջիններս չափվում են էլեկտրաչափիչի արցանների կամ այլ պարզագույն սարքերի միջոցով: Վերջիններս չափվում են էլեկտրաչափիչ արցանների կամ այլ պարզագույն սարքերի միջոցով: Բանաձևերը կիրառելի է ցանկացած պատճառով սպառիչի (ընդունիչի) հոսանքի փոփոխման դեպքում: Էներգալսնայողական միջոցառումների արդյունավետության իրականացման համար էլեկտրացանցերի ծառայություններին հնարավորություն է տրվում պարզագույն ճանապարհով առանձնացնելու և գնահատելու կորուստների աղբյուրները:

46. Գազատուրբինային տեղակայանքների օգտագործման արդի վիճակը արտասահմանյան երկրներում /Պապիկյան Ս. Ռ.:/ Էներգետիկայի հայկ. գիտահետազոտ. ին-տ.- Երևան, 1995.- Մատենագր. 14 ան.- Տայ.- Ավանդ. 15.08.95, թիվ 52- Ap 95

Աշխատանքում առաջին փորձն է արվել համալսմբելու աշխարհում գոյություն ունեցող ողջ տեղեկատվությունը գազատուրբինային տեղակայանքների վերաբերյալ: Բերված են արտասահմանյան երկրներում արտադրվող գազատուրբինային տեղակայանքների հիմնական ցուցանիշները, արտադրող ֆիրման, գինը: Կատարված է մանրակրկիտ վերլուծություն ՀՀ էներգահամակարգում նմանատիպ տեղակայանքների առավել արդյունավետ օգտագործման տնասկետից: Արված է առաջարկություն <բազդանի ՊՇԷԿ-ում փոքր հզորության գազատուրբինային տեղակայանքներ օգտագործելու մասին, որը հնարավորություն կտա բարձրացնելու վառելիքի օգտագործման արդյունավետության աստիճանը:

ՄԴԿ 63

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

47. Խնձորենու աճը, բերքատվությունը և այգու աղտոտվածությունը հերքիցիդների Երկամյա կիրառման դեպքում /Ավեախյան Մ. ժ., Զալանթարով Ա. Ա., Գաբրիելյան ժ. Պ.:/ Խաղողագործության, զինեղործության և պտղաբուծության հայկ. գիտահետազոտ. ին-տ.-Երևան, 1995. -5 էջ, 4 աղ.- Ռուս.- Ավանդ. 01.08.95, թիվ 47- Ap 95

Աշտարակի շրջանի Կարբի սովխոզում խնձորենու ինտենսիվ այգիներում հետազոտվել է միջծիլային եղանակով մոլախոտերի դեմ արված վիկոզինի, լասո-ատրազինի 10 և 15 կգ (I) /հա հերքիցիդների տարրեր դոզաներ և հակահացահատիկային 8 ու 10 լ/հա նաբու հերքիցիդ աճող մոլախոտերի դեմ՝ շիվերի ընդհանուր աճի, խնձորենու բերքատվության բարձրացման և այգու աղտոտվածության նվազեցման նպատակով: Հետազոտված հերքիցիդները բացասաբար չեն ազդել միամյա շիվերի աճի և նրանց ընդհանուր աճման վրա: Շիվերի ընդհանուր աճը կազմել է համեմատաբար 58,8, 59,1, 63,4 մ և գերազանցել ստուգումը 20,5 %-ով, 18-19%-ով և 10-18,3%-ով: Պարզված է, որ 15 կգ (I)/հա դոզայով վիկոզինը Եւ լասո-աաբազինը բարձր արդյունավետության պատրաստուկներ են միամյա միաշաքիլավոր Եւ երկշաքիլավոր մոլախոտերի դեմ: Նաբուն, լինելով հակահացուհատիկային, ոչնչացնում է միայն մոլախոտերը: Պատրաստուկների տեխնիկական արդյունավետությունը կազմում է համապատասխանաբար 95 տոկոս, 92,7 տոկոս և 94 տոկոս:

ՄԴԿ 51

ՄԱԹԵՄԱՏԻԿԱ

1.Կրկնակի Ուոլշի համակարգի U(S) բազմությունների դասակարգումը /Նավասարդյան Կ. Ա., (Եր. պետ. համալս.)-

Երևան, 1995.-14 էջ.- Մատենագր. 11 ան.-Ռուս.-Ավանդ. 20.09.95, թիվ 140-ՅԲ95

Աշխատանքում ապացուցված է հետևյալ թեորեմը.

Թեորեմ: Դիցուք

$S^{(1)} = \{\delta_{mn}^{(1)}\}$ և $S^{(2)} = \{\delta_{mn}^{(2)}\}$ կրկնակի հաջորդականությունները

բավարարում են հետևյալ պայմաններին՝

$$0 < \delta_{m+1,n}^{(i)} \leq \delta_{mn}^{(i)} \leq \delta_{m,n-1}^{(i)}, \sup_{m,n} \frac{\delta_{m,n}^{(i)}}{\delta_{2m,n}^{(i)}} < 2, \sup_{m,n} \frac{\delta_{mn}^{(2)}}{\delta_{m,2n}^{(2)}} < 2,$$

$$i=1,2, \delta_{mn}^{(1)} \geq \delta_{m_0}^{(1)} \cdot \delta_n^{(1)} \text{ և } \lim_{m,n \rightarrow \infty} \frac{\delta_{mn}^{(2)}}{\delta_{mn}^{(1)}} = +\infty$$

Այդ դեպքում կամայական $\varepsilon > 0$ թվի համար գոյություն ունի $E \subset [0,1]^2$ բազմություն, $\mu E > 1 - \varepsilon$, որը կրկնակի Ուոլշի համակարգի համար հանդիսանում է $U(S^{(1)})$ բազմություն, բայց չի հանդիսանում $U(S^{(2)})$ բազմություն:

2. Ըստ Ուոլշի բազմապատիկ համակարգի արագ նվազող գործակիցներով ունիվերսալ շարքեր /Նավասարդյան Կ. Ա.;(Եր. պետ. համալս.) - Երևան, 1995, - 25 էջ.- Մատենագր. 10 ան. - Ռուս.- Ավանդ. 20.09.95, թիվ 141- ՅԲ95

Աշխատանքում ապացուցված է հետևյալ թեորեմը.

Թեորեմ: Դիցուք $\{\mathcal{E}_n^-\} = \{\mathcal{E}_{n_1, n_2, \dots, n_k}^-\}$ հաջորդականությունը

բավարարում է հետևյալ պայմաններին՝ $0 < \mathcal{E}_m^- \leq \mathcal{E}_n^-$, եթե $\bar{m} \geq \bar{n}$ և ցանկացած M -ի համար

$$\sum_{n_1=M}^{\infty} \sum_{n_2=M}^{\infty} \dots \sum_{n_k=M}^{\infty} \mathcal{E}_n^2 = +\infty: \text{ Այդ դեպքում գոյություն}$$

ունի $f(x) \in \cap L_p[0,1]^K$, որի Ֆուրիեի գործակիցները բավարարում են

$$P < 2$$

հետևյալ անհավասարությանը $|C_n^-(f)| \leq \mathcal{E}_n^-$,

$$(C_n^-(f) = \int_{[0,1]^K} f(x) W_{n_1}(x_1) W_{n_2}(x_2) \dots W_{n_k}(x_k) dx,)$$

Ֆուրիեի շարքը ունիվերսալ է նշանների նկատմամբ համարյա ամենուրեք վերջավոր գործառնությունների դասում, իսկ նշանների որոշակի $\{\gamma_n^-\}$ համախմբության համար $\gamma_n^- = \pm 1$

$$\sum_{n=0}^{\infty} \gamma_n^- C_n^-(f) W_n^-(x) \text{ շարքը հանդիսանում է ունիվերսալ՝}$$

ենթաշարքերի նկատմամբ համարյա ամենուրեք վերջավոր գործառնությունների դասում:

ՄԺԿ 57/59

ԿԵՆՍԱԲԱՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

3. Վարրոա տզի կարիտիպի ուսումնասիրությունը /Հարությունյան Գ. Ա.; » Հայաստանի կենսաբանական հանդեսի« խմբ., (Կենդանաբանության ին-տ).- Երևան, 1995. -9 էջ, 2 ադ. - 2 նկ.- Մատենագր. 14 ան.- Ռուս.- Ավանդ.- 07.09.95, թիվ 99-ՅԲ95

Ուսումնասիրվել է մեղվի մակաբույժ Varroa jacobsoni Oud., 1904 տզի կարիտիպը: Հաստատվել է, որ էգ տզերն ունեն քրոմոսոմների դիպլոիդ (2n=14) հավաք, իսկ արունները՝ հապլոիդ (n=7): Կատարվել է V. jacobsoni տզի քրոմոսոմների ձևաչափաբանական վերլուծություն: Յույց է տրվել,

որ տզերի հապլոիդ հավաքում քրոմոսոմներից չորսը ակրոցենտրիկ են, մնկր՝ մետացենտրիկ, երկուսը՝ սուբմետացենտրիկ: Արունների եւ էգերի հապլոիդ հավաքի քրոմոսոմների ձեւաչափաբանական արդյունքները համանման են:

4. Գամմա ճառագայթների ազդեցությունը A. fallacis տզի վերարատարողական ընդունակության վրա /Հարությունյան Գ. Ա., Դիլբարյան Լ. Պ.: «Հայաստանի կենսաբանական հանդեսի» խմբ., (Կենդանաբանության ին-տ).-Երևան, 1995.- 9 էջ.- Մատենագր. 12 ան.- Ռուս.- Ավանդ. 07.09.95, թիվ 100 - Ap95

Ուսումնասիրվել են գամմազոդի տզի Amblyseius fallacis Garman 1948 պտղատվությունը գամմա ճառագայթումից հետո եւ նրա սերունդների վերարատարողական ընդունակությունը: Հայտնաբերվել է, որ 15-25 Գր ճառագայթման դոզան ամլացնում է էգերին: Ամլացումը պահպանվում էր հաջորդ երկու սերունդներում: Ճառագայթված տզի ամլացման աստիճանը կազմում է 79-96%, մեկ սերնդում՝ 82-86%, իսկ երկուսում՝ 35-59%:

5. Նոր մրջյուններ (Hymenoptera, Formicidae) Հայաստանի եւ Անդրկովկասի ֆաունայի համար /Առաքելյան Գ. Ռ.: «Հայաստանի կենսաբանական հանդեսի» խմբ., (Կենդանաբանության ին-տ).- Երևան, 1995.- 9 էջ.- Մատենագր. 7 ան. - Ռուս.- Ավանդ. 11.09.95, թիվ 101- Ap95

Աշխատանքում բերված են տեղեկություններ Հայաստանի եւ Անդրկովկասի ֆաունայի համար 45 նոր տեսակ մրջյունների ընդհանուր տարածվածության, հանրապետությունում նրանց կենսավայրերի եւ հայտնաբերման կետերի մասին:

6. Արարատյան որդան կարմիրը (Porphyrphora hamelii brandt) որպես մրջյունների (hymenoptera formicidae) սննդի աղբյուր /Առաքելյան Գ. Ռ.: «Հայաստանի կենսաբանական հանդեսի» խմբ., (Կենդանաբանության ին-տ).- Երևան, 1995.- 6 էջ.- 2 աղ.- Մատենագր. 6 ան.- Ռուս.- Ավանդ. 11.09.95, թիվ 102 - Ap95

Պարզաբանվել է արարատյան որդան կարմիր (Porphyrphora hamelii) բնական թշնամիների՝ մրջյունների տեսակային կազմը եւ Ջրառատ գյուղի (Էջմիածնի շրջան) մոտակայքի ստացիոնարի տարածքում հասցրած վնասը: Հաշվարկվել է, որ մրջյունները P. hamelii-ի հողի մակերես դուրս գալու ամբողջ ժամանակահատվածում 1 հա տարածքից իրենց բներն են տանում որդան կարմիր 345164 էգ եւ 34680 արու, որոնց քաշը կազմում է համապատասխանաբար 9086 եւ 69 գր: Լաբորատոր պայմաններում կատարված փորձերը ցույց են տվել, որ P. hamelii-ի կարմիրը մրջյունների դեմ որևէ պաշտպանիչ հատկություններ չունի:

7. Արաքս գետի հովտի արհեստական ջրամբարների պայմաններում ապրող մի քանի առափնյա թռչունների կերակրման մասին /Մելիքյան Լ. Ա., Հովհաննիսյան Վ. Ս.: «Հայաստանի կենսաբանական հանդեսի» խմբ., (Կենդանաբանության ին-տ).- Երևան, 1995.- 7 էջ.- Մատենագր. 10 ան.- Ռուս.- Ավանդ. 11.09.95, թիվ 103-Ap95

Աշխատանքում շարադրված է արյունածուծ երկթևանի ճանճերի եւ այլ միջատների ոչնչագման գործում թռչունների դերի հետազոտությունների արդյունքները:

Ապացուցված է, որ մորակցարի, ոտնագուպիկի եւ դեղին տառնդի կերաբաժնում մեծ տեղ են զբաղեցնում միջատները, այդ թվում եւ արյունածուծ երկթևանիները, եւ կարող են կարգավորել վերջիններիս քանակությունը արհեստական ձկնաբուծարանների տարածքներում:

8. Արաքս գետի հովտի արհեստական ձկնաբուծական ջրամբարներում սպիտակազլուխ բադի Oxyura leucocephala (Scopoli, 1976) բնադրման մասին /Մելիքյան Լ. Ա.: «Հայաստանի կենսաբանական հանդեսի» խմբ., (Կենդանաբանության ին-տ).- Երևան, 1995.- 6 էջ, 3 աղ.- Մատենագր. 7 ան.- Ռուս.- Ավանդ. 11.09.95, թիվ 104 - Ap95

Հոդվածում շարադրված են որոշ պատմական տեղեկություններ տվյալ տեսակի բնակման վերաբերյալ Սեւանա լճի ավազանում եւ նրա բնադրումը Արաքս գետի հովտի արհեստական ձկնաբուծական

ջրամբարներում, որը տնդի է ունեցել այս թռչունի անհետացումից հետո Սևուհա լճի ավազանում կապված լճի մակարդակի իջեցման և նրա շրջակա միջավայրի էկոլոգիական հավասարակշռության խախտման հետ:

Բերված են սպիտակագլուխ բադի և նրա բների, ձվերի նկարագիրն ու չափագրումները, ինչպես նաև տվյալներ վարքագծի և քանակության մասին:

Արաքս գետի հովտի արհեստական ձկնաբուծական լճակները ներկայումս համարվում են սպիտակագլուխ բադի միակ բնադրման վայրը Հայաստանում: Որպես հազվագյուտ և քիչ ուսումնասիրված տեսակ, առաջարկվում է ձեռնարկել բնապահպանական միջոցառումներ՝ տեսակը իսպառ ոչնչացումից փրկելու համար:

9. Ազատ ընտրության պայմաններում եռաճառագայթային շառավիղ-սիմետրիկ լաբիրինթոսում առնետների ծարավի վարքագիծը /Մարգիտով Գ. Թ., Կոպալ Ի. Ն., Թումանյան Վ. Հ., Ղազարյան

Գ. Մ.; **»Հայաստանի կենսաբանական հանդեսի« խմբ., (Կենդանաբանության ին-տ).- Երևան, 1995.- 9 էջ.- Մատենագր. 5 ան.- Ռուս.- Ավանդ. 11.09.95, թիվ 105 - Ap95**

Հետազոտվել է առնետների ծարավի վարքագիծը եռաճառագայթային շառավիղ-սիմետրիկ լաբիրինթոսում **»ինքնուսուցման«** ռեժիմով (տարածքային ազատ ընտրությունը՝ պայմանավորված ծարավով):

Ցույց է տրված, որ տվյալ իրավիճակում առնետների մոտ գերիշխում է տեղափոխման ռազմավարությունը:

Հաշվի առնելով նախկինում նշված տվյալները, ենթադրվում է, որ կենդանիների նպատակի որոշման որևէ ռազմավարության ընտրությունը որոշվում է առավելապես դրդապատճառի գործոնով:

10. Արմաշի ձկնաբուծական տնտեսության ձկնակեր թռչունների հեղինակությունն /Չուբարյան Ֆ. Հ., Դանիլովա Կ. Ա., Մելիքյան Կ. Ա.; **»Հայաստանի կենսաբանական հանդեսի« խմբ., (Կենդանաբանության ին-տ).- Երևան, 1995.- 5 էջ.- Մատենագր. 4 ան.- Ռուս.- Ավանդ. 11.09.95, թիվ 106 - Ap95**

Ուսումնասիրված է ձկնակեր թռչունների հեղինակությունն Արմաշի ձկնաբուծական տնտեսությունում (Արարատյան հարթավայր,

կիսաանապատային գոտի): Հայտնաբերված է 14 տեսակի հելմինթներ, որոնցից 11-ը՝ տրեմատոդ, 2-ը՝ ցեստոդ և 2-ը՝ նեմատոդ: Հայտնաբերված տեսակներից 3-ը (*D. spathaceum*, *D. helvetium*, *Ligula intestinalis*) ախտածին են և առաջացնում են դիպլոստոմատոզ և լիզալյոզ հիվանդություններ:

Ստացված տվյալները թույլ են տալիս ենթադրելու, որ նշված հիվանդությունների տարածման գործում հիմնական դերը պատկանում է որորներին և ջրագռավներին:

11. Triticum boeoticotauschium gandil միջտեսակային ամֆիդիպլոդի գենետիկական առանձնահատկությունը /Ղանդիլյան Պ. Ա., Ծաքարյան Ժ. Հ.; **»Հայաստանի կենսաբանական հանդեսի« խմբ., (Հայաստանի գյուղատնտես, գիտությունների ակադեմիա).- Երևան, 1995. - 6 էջ, 2 աղ.- Մատենագր. 5 ան.- Ռուս.- Ավանդ, 11.09.95, թիվ 107- Ap95**

Ամֆիդիպլոդի սինթեզված է 1983 թ. և ուսումնասիրված է մինչև յոթերորդ սերունդը (F1-F7): Տվյալ ամֆիդիպլոդի և *T. tauschourarticum* (*T. erebuni*) ամֆիդիպլոդի համեմատական ձևա-բջջագենետիկական վերլուծության արդյունքներից պարզվել է, որ *T. boeoticotauschicum*-ն աճում է ավելի փարթամորեն և չի տուժում **»կարմիր քլորոզ«**-ից, ինչպես *T. erebuni*-ն: Մեր կողմից ստացված երկու ամֆիդիպլոդիների հասկերը նման են *T. aestivum* հեքսապլոդի գորենին, ըստ որում *T. erebuni*-ն՝ առավել շատ: Հետևաբար, *T. aestivum* հազաթխման գործնի համար ավելի հարմար դոնոր է համարվում *T. urartu*-ն, չնայած *t. boeoticotauschicum*-ն ավելի շատ հակում ունի ինքնաբեր հիբրիդացման և բաց ծաղկման:

12. Teucrium hyrenicum-ի ֆլավանոլի Էքստրակտի ազդեցությունը առնետների արյան մակարդակիության վրա /Բունիաթյան Ժ. Մ., Ստեփանյան Ն. Օ., Հովհաննիսյան Գ. Բ., Մնացականյան Վ. Ա.; **»Հայաստանի կենսաբանական հանդեսի« խմբ., (Նուրբ օրգանական քիմիայի ին-տ).- Երևան, 1995.- 5 էջ, 1 աղ.- Մատենագր. 6 ան.- Ռուս.- Ավանդ. 11.09.95, թիվ 108-Ap95**

Ուսումնասիրված է ֆլավանոիդ էքստրակտի ազդեցությունը արյան մակարդեղիության փոփոխումների վրա:

Հաստատված է, որ ուսումնասիրված էքստրակտը իր ակտիվությամբ գերազանցում է քվերցետինը և չի զիջում դիցինոնին:

13. Էրլիխի ասցիտային բջիջներում ու in vitro պայմաններում նուկլեինաթթուների աճման կանխարգելումը որպես կենսաբանական ակտիվ կանցնրոստատիկ ազդեցություն ունեցող միացությունների առաջնային ընտրության մոդել /Դանիելյան Ի. Ս., Ղարիբյան Ջ. Վ., Ղարիբջանյան Բ. Տ.; **»Հայաստանի կենսաբանական հանդեսի« խմբ., (Սուրբ օրգանական քիմիայի ին-տ).- Երևան, 1995.- 8 էջ, 1 աղ. - Մատենագր. 7 ան.- Ռուս.- Ավանդ. 11.09.95, թիվ 109- Ap95**

Հետազոտվել է մի շարք նյութերի հակաուռուցքային ակտիվությունը in vitro մեթոդով, որտեղ չի խախտվել պատրաստուկի, օրգանիզմի և ուռուցքի միջև եղած բարդ կապը: Մեթոդը հիմնված է Էրլիխի ասցիտային կարցինոմայի բջիջներում նուկլեինաթթուների աճման կանխարգելման վրա: Բացահայտված է in vitro և in vivo պայմաններում հակաուռուցքային ակտիվության տվյալների համընկնում, համապատասխանաբար 70% -ով: Ստացված տվյալները թույլ են տալիս գալ այն եզրակացության, որ առաջարկված մեթոդը նպատակահարմար է կիրառել հակաուռուցքային միացությունների ընտրության համար:

14. Պիրիդինիումային շարքի յոդիդների սինթեզը և նրանց ազդեցությունը կանաչ ջրիմուռների քլորոֆիլների սինթեզի և աճի վրա /Ավետիսյան Ա. Ա., Մելիքյան Գ. Ս., Կրավովա Կ.; **»Հայաստանի կենսաբանական հանդեսի« խմբ., (Եր. պետ. համալս., Բրատիսլավայի համալս.)- Երևան, 1995.- 6 էջ.- Մատենագր. 6ան.- Ռուս.- Ավանդ., 1 1.09.95, թիվ 110 - Ap95**

Իրականացված է Կինգի ռեակցիան մի շարք ալկիլիդեն-ցիանքացալաթթվային էթերների համար: Ապացուցված է ստացված միացությունների կառուցվածքը: Որոշված են պիրիդինիումային աղերի

բարձր ինհիբիցնող հատկությունները կանաչ ջրիմուռների քլորոֆիլների աճի վրա:

15. Ադրենալնկալիչների դերը օրգանիզմի ջերմային հովտաստազի սոմատոթրոպինային կարգավորման մեջ /Հարությունյան Զ. Ռ., Հարությունյան Ռ. Ա., Սահակովա Լ.Ա.; **»Հայաստանի կենսաբանական հանդեսի« խմբ., (Ֆիզիոլոգիայի ին-տ).- Երևան, 1995. - 6 էջ, 2 աղ.- Մատենագր. 12 ան.- Ռուս.- Ավանդ. 12.09.95, թիվ 111 - Ap95**

Ապացուցված է, որ օրգանիզմի բնտադրենալնկալիչների շրջափակման ֆոնի վրա սոմատոթրոպինի ներերակային ներարկումը հարուցում է հիպոթերմիկ արդյունք և իջեցնում շրջանաձև աղու ջերմությունը միջինը 0.82⁰, կմախքային մկաններից՝ 0.89⁰ :

Սոմատոթրոպինի ներարկումը օրգանիզմ, վերջինիս ալֆաադրենալնկալիչների շրջափակման դեպքում, հարուցում է հիպոթերմիկ արդյունք և աղիքային ու մկանային ջերմաստիճանը բարձրացնում միջինը 1.8⁰ :

Եզրակացվում է, որ սոմատոթրոպինը մասնակցում է օրգանիզմի ջերմային հովտաստազի կարգավորմանը, որն իրացվում է նորադրեներգիկ համակարգի միջոցով:

16. Ամինազինի տեղական ապլիկացիայի ազդեցությունը կատվիկների տրանսկալոզալ պատասխանների վրա հետոննդյան օնթոզինզում /Գասպարյան Լ. Ա., Ոսկանյան Ռ. Մ., Մատինյան Լ. Ա., Նահապետյան Խ. Հ., Նուրբենյան Լ. Վ.; **»Հայաստանի կենսաբանական հանդեսի« խմբ., (Ֆիզիոլոգիայի ին-տ).- Երևան, 1995.- 5 էջ.- Մատենագր. 7 ան.-Ռուս.- Ավանդ. 12.09.95, թիվ 112- Ap95**

Պարզված է, որ ամինազինը երեք օրական կատվիկների մոտ տրանսկալոզալ պատասխանների (ՏՊԿ) կողմից որևէ փոփոխություն չի առաջացնում, այն դեպքում, երբ 7 օրականների մոտ առաջացնում է դրական և վաղ բացասական բաղադրիչների ճնշում, ու թացասական ալիքի լրիվ անհայտացումով: 15-30 օրական կատվիկների մոտ ամինազինն առաջ է բերում ՏՊԿ-ի դրական բաղադրամասի խորացում

տնտեսության արևելագոյնում էլ և ինչպես վաղ, այնպես էլ ուշ բացասական բաղադրամասերի լրիվ ճնշում: 15 օրական կատվիկների մոտ, ուղեղի կեղևի ամինազինային ապիկացիայից 40 թույն անց, նկատվում է ՏՊԼ-ի բաղադրամասերի ամպլիադաների մեծության և ժամանակային պարամետրերի լրիվ վերականգնում, իսկ 30 օրականների մոտ, սկսած ազդեցության 5-րդ թույնից, դրական ալիքի ամպլիտուդի աճ և բացասականի ճեղքում, որոնց լրիվ վերականգնումը մինչև բնականոնի, տեղի է ունենում 60 թույն անց:

Ստացված տվյալները վկայում են, որ կատվիկների մոտ տրանսկալոգալ կապերի ձևավորումը սկսվում է հետմեծության օնթոգենեզի վաղ շրջանում: Ամինազինի կողմից ՏՊԼ-ի բացասական բաղադրամասերի վրա արգելակող ազդեցության բացակայությունը վաղ օնթոգենեզում, հավանաբար, կապված է ադրեներգիկ բնույթի հասուն արքուն-դենդրիալի սինապսների բացակայության հետ: 7-30 օրական կատվիկների մոտ ՏՊԼ-ի ուշ բաղադրամասերի լրիվ ճնշումը, հավանաբար, կարելի է բացատրել ամինազինի կողմից ադրեներգիկ և դոֆամիներգիկ ընկալիչների շրջափակումով: Մակերեսային-դրական ներուժի խորացումը, հավանաբար, կարելի է բացատրել խորքային բացասական արքուն-սոմատիկ ներուժի մեծացմամբ, որը կապված է արգելակող արքուն-սոմատիկ սինապսների ամինազինային շրջափակման հետ:

17. Հավերի էպիֆիզի գործառնության կազմաբանությունը սթրեսային փնտրափորման պայմաններում /Պետրոսյան Ա. Ս, Նազարյան Մ. Բ., Մարտիրոսյան Ս. Շ.; «Հայաստանի կենսաբանական հանդեսի» խմբ., (Ֆիզիոլոգիայի ին-տ).- Երևան, 1995.- 8 էջ, 2 աղ.- Մատենագր. 8 ան.- Ռուս. - Ավանդ. 12.09.95, թիվ 113 - Ap95

Բազմազան գործառնության մեխանիզմների կարգավորման ժամանակակից պատկերացումները թույլ են տալիս էպիֆիզը մտցնել նյարդահումորալ գործոնների ընդհանուր համակարգի մեջ, որոնք նպաստում են նորմալ սեռական հասունացմանը և վերարտադրողական գործառնության գարգացմանը:

Պոչունների մոտ հոնադային գործառնության կարգավորումը իրագործվում է արտաքին գործոնների անմիջական մասնակցությամբ,

որոնցում գլխավոր դերը պատկանում է լուսապարբերականությանը: Այդ կապակցությամբ տրամաբանական է պատկերացնել, որ թռչունների էպիֆիզը պետք է որոշակի կազմաբանական գործառնության տեղաշարժեր ցուցաբերի փնտրափոխ ման ընթացքում և հատկապես արհեստական, քանի որ այն իրագործվում է սննդային և լույսային ռեժիմի կտրուկ փոփոխությամբ, որը ուղեկցվում է վերարտադրողական գործառնության լրիվ դադարմամբ, հետագա վերականգնումով, իսկ փնտրափոխման ավարտից հետո նաև ձվադրման ցուցանիշի զգալի բարձրացմամբ:

Մերկա աշխատանքի նպատակն է եղել ուսումնասիրել թռչունների էպիֆիզի ռեակցիայի բնույթը արհեստական փնտրափոխման (ԱՓ) և հոնադային գործառնության վերականգնման ընթացքում: Այդ նպատակով հիստոլոգիական, հիստոքիմիական և կարիոմետրիկ հետազոտման մեթոդներով ուսումնասիրվել են ստուգիչ և հոնադային գործառնության տարբեր փուլերում (4, 13, 23, 30, 45 և 75 օրերի ընթացքում) գտնվող արհեստական փնտրափոխվող հավերի էպիֆիզները:

ԱՓ ընթացքում ցույց է տրված, որ էպիֆիզում տեղի են ունեցել կառուցվածքային գործառնության կազմավորման օրինաչափ փոփոխություններ, որոնք ընթացել են վերարտադրողական օրգանների ֆիզիոլոգիական տեղաշարժերին համաչափ:

Պարզվել է, որ էպիֆիզը նյարդահումորալ գործոնների ընդհանուր շղթայում հանդիսանում է ակտիվ օղակ, մասնակցելով սթրեսային վիճակում հայտնված օրգանիզմի կենսագործունեությանը: Հետևաբար, ԱՓ մեխանիզմների ուսումնասիրման ժամանակ անհրաժեշտ է նկատի ունենալ էպիֆիզի դերը այդ պայմաններում:

18. Հայկական մուֆլոնի և կորրիդել տիպի ոչխարներից ստացված խառնածինների մարմնի ջերմատնդադրության փոփոխությունները ջերմային գործոնի մինչ և հետազդեցության դեպքում /Հարությունյան Ռ. Ա., Անտոնյան Ա. Շ., Զյուլիկյանց Մ. Ա., Քոչարյան Ռ. Գ., Սատուրյան Լ. Ա.; «Հայաստանի կենսաբանական հանդեսի» խմբ., (Ֆիզիոլոգիայի ին-տ.- կենդանաբանության ին-տ).- Երևան, 1995.- 5 էջ, 1 աղ. - Մատենագր. 3 ան.- Ռուս.- Ավանդ. 12.09.95, թիվ 114 - Ap95

Ապացուցված է, որ ոչխարների տարբեր արյունայնության խառնածինների մոտ միջավայրի միտոնոյն ջերմաստիճանի պայմաններում, ինչպես մինչ, այնպես էլ հետջերմային ազդեցության դեպքում, նրանց ճակատի, ականջի կենտրոնական զարկերակի, վերջույթների, ինչպես նաև թոքային շնչառությունում եւ սիրտ-անոթային համակարգում նկատվում են ջերմաստիճանի ավելի զգալի տեղաշարժեր, քան կորրիդել տիպի ոչխարների մոտ:

19. Կատվի միոկարդի մագանոթների միկրոշրջանի վիճակի անալիզը ադրենալինի ազդեցության ներքո /Մեյքոնյան Ն. Ն., Չիլինգարյան Ա. Մ., Ղազարյան Կ. Վ.:/ «Հայաստանի կենսաբանական հանդեսի» խմբ., (Ֆիզիոլոգիայի ին-տ).- Երևան, 1995.- 5 էջ.- Մատենագր. 5 ան.- Ռուս. - Ավանդ. 15.09.95, թիվ 115 - Ap95

Ներօրգանային մագանոթային հունի վրա ադրենալինի ազդեցության ուսումնասիրման ժամանակ բացի մագանոթների տրամագծի միջին ցուցանիշից, կատարվել է մագանոթների շարժողականության համեմատություն տարրեր միկրոշրջաններում: Հաջողվեց հաստատել մագանոթների շարժողականության զգալի տարբերություններ սարքեր միկրոշրջաններում: Մագանոթի միջին տրամագիծը ցուցանիշ է համարվում օրգանի մագանոթային հունի ընդհանուր գործառնության դրության մասին: Դրանից ելնելով միկրոցիրկուլյատոր հունի վրա ադրենալինի ազդեցության ուսումնասիրման ժամանակ հարկավոր է հաշվի առնել մագանոթների գործառնության վիճակը տարբեր միկրոշրջաններում:

20. ԱՏՖազային ռեակցիայի կարգավորումը ճտի գարգացման ընթացքում թերջերմության պայմաններում /Միմոնյան Ա. Ա., Բաղայան Ռ. Բ., Միմոնյան Ռ. Ա./ «Հայաստանի կենսաբանական հանդեսի» խմբ., (Կենսաքիմիայի ին-տ).- Երևան, 1995.- 6 էջ, 2 աղ.- Մատենագր. 11 ան.- Ռուս.-Ավանդ. 15.09.95, թիվ 116 - Ap95

Ինկուբացվող ձվերի պարբերական պաղեցումները փեղկում են օքսիդացիոն ֆոսֆորիլացումը եւ խթանում Mg^{2+} -կախյալ, Na^+ , K^+

-ակտիվացվող ԱՏՖազայի ակտիվությունը մկանային եւ լյարդի հյուսվածքից մեկուսացված միտոքոնդրիաներում:

21. Որոշ կաթնամթերքներից անջատված Aspergillus flavus-ի շտամների տոքսիկոլոգիական գնահատականը /Օսիպյան Լ.Լ., Գրիգորյան Կ.Մ.:/ «Հայաստանի կենսաբանական հանդեսի» խմբ., (Եր. պետ. համալս.) Երևան, 1995. - 11 էջ, 3 աղ.- Մատենագր. 19 ան.- Ռուս.- Ավանդ. 15.09.95. թիվ 117 - Ap95

A. flavus տեսակը դասվում է կաթնամթերքների (կաթ, կարագ եւ այլն) հաճախ հանդիպող աղտոտողների շարքը: A. flavus -ի որոշ տոքսիկ շտամների դիասպորները դրսևտրում են բարձր ջերմունակություն, որը նպաստում է կաթնամթերքների արտադրության ընթացքում հումքի տեխնոլոգիական վերամշակումից հետո նրանց կենսունակության պահպանմանը:

Կենսաբանական թեստավորման մեթոդներով ապացուցված է հետազոտված 47 շտամներից 22-ի տարբեր աստիճանի տոքսիկությունը: Ծտամների ստուգումը B, G, M խմբերի աֆլատոքսիններ աղտոտելու ուղղությամբ տվել է բացասական արդյունքներ, բացառությամբ 2 սուրտոքսիկ շտամների, որոնցում հայտնաբերված են աֆլատոքսին B₁-ի հետքային քանակներ: Geotrichum Aspergillus flavus - Pericillium, Geotrichum, Cladosporium սնկերի տեսակների համակցություններում աղտոտված կարագների 20 նմուշների քիմիական փորձաքննությունը հաստատեց հետազոտված նմուշներում աֆլատոքսինների բացակայությունը:

22. Մակերևութային ակտիվ Ա-660 չորրորդային ամոնիումային միացության պրոտիստասպան հատկությունը /Հովնանյան Կ. Օ., Թոռջյան Ի. Խ., Տիկարիձև Ա. Մ., Բաբայան Ժ. Ռ., Բաբախանյան Ա. Վ.:/ «Հայաստանի կենսաբանական հանդեսի» խմբ., (Համաճարակաբանության, վիրուսաբանության եւ բժշկական պարագիտաբանության գիտահետազոտ. ին-տ).- Երևան, 1995.- 5 էջ.- Մատենագր. 2 ան.- Ռուս. - Ավանդ. 15.09.95, թիվ 118 - Ap95

Ուսումնասիրված է տնդական հուսքից սինթեզված Ա-660 մակերեսային ակտիվ չորրորդային ամոնիումային միացության պրոտիստասպան հատկությունը Էնտամոբաների կուլտուրայի վրա:

Պարզված է, որ ուսումնասիրված միացությունն ունի Entamoeba moshkovskii վնգնատիվ նւ ցիստային ձևերի պրոտիստասպան ակտիվություն:

Ա-660 միացությունն առաջարկվում է օգտագործել աղիքային վարակիչ հիվանդությունների օջախներում տարբեր օբյեկտների վարակազերծման համար:

23. Հայաստանի արմավենիների միկոբիոտայի ուսումնասիրության շուրջ /Մամիկոնյան Ս. Օ., Ղուկասյան Գ. Ա.; «Հայաստանի կենսաբանական հանդեսի» խմբ., (Բուսաբանության ին-տ).- Երևան. 1995.- 4 էջ.- Մատենագր. 7 ան. - Ռուս.- Ավանդ. 15.09.95, թիվ 119 - Ap95

Ուսումնասիրվել է տարբեր տեսակի արմավենիների վրա սնկերի տեսակային կազմը, որը թվով 11-ն է: Ch.humilis -ի վրա հայտնաբերվել են արմատային փտախտ նւ թառամում առաջացնող 2 ախտածին սնկեր՝ Fusarium moniliforme var.lactis նւ Verticillium dahliae Kleban , որոնք Հայաստանի պայմաններում արմավենիների համար համարվում են նոր տեսակներ: Տրված է այդ սնկերի հարուցիչների ձևաբանական նկարագրությունը նւ հայտնաբերված հիվանդության նշանները:

24. Խաղողի բույսի լիպոքսիզենոզայի ակտիվությունը նւ իզոֆերմենտային կազմը /Հովհաննիսյան Ն. Ա.; «Հայաստանի կենսաբանական հանդեսի» խմբ., (Մոլեկուլյար կենսաբանության ին-տ). Երևան, 1995.- 4 էջ.- Մատենագր. 7 ան.- Ռուս.- Ավանդ. 15.09.95, թիվ 120 - Ap95

Առաջին անգամ ուսումնասիրված են խաղողի բույսի լիպոքսիզենոզայի ակտիվությունը նւ նրա լիզոֆերմենտային բաղադրությունը: Ի հայտ են եկել խաղողի սերմերի համար բնորոշ լիպոքսիզենոզայի 2 իզոֆերմենտ (RF = 0,15-0,16 նւ RF =0,21-0,23), իսկ տերմիններում միայն 1 իզոֆերմենտ (RF = 0,21-0,23): Հայտնաբերված է կապ լիպոքսիզենոզայի ակտիվության, իզոֆերմենտային կազմի նւ բույսի աճի արագության միջև:

Խաղողի լիպոքսիզենոզան, ի տարբերություն լոբազոնների նույն ֆերմենտի, չի պարունակում այնպիսի իզոֆերմենտներ, որոնք հանդես են գալիս որպես կարոտինոիդների օքսիդացման գործընթացի կատալիզատոր:

Ուսումնասիրված են նաև խաղողի լիպոքսիզենոզայի որոշ կինետիկական բնութագրեր:

25. Նիտրոգոգունիդինով մակածված մուտագեննեզի միջոցով lactobacillus sp. 2501-ի մոտ հակաբիոտիկի նկատմամբ կայուն մուտանտների ստացումը /Հարսաջյան Ա. Հ., Բարեղամյան Ի. Ն., Բարսեղյան Ա. Հ.; «Հայաստանի կենսաբանական հանդեսի» խմբ., «Ազրոկենսատեխ» համատեղ գիտաարտադրական միավորում).- Երևան, 1995.- 8 էջ, 3 աղ.- Մատենագր. 8 ան.- Ռուս.- Ավանդ. 15.09.95, թիվ 121 - Ap95

Ուսումնասիրված է ստրեպտոմիցինի նւ ռիֆամպիցինի նկատմամբ կայուն մուտանտների ստացման հնարավորությունը lactobacillus sp . 2501-ի մոտ: Որոշված են հակաբիոտիկների ճնշիչ կոնցենտրացիաները, մուտագեննեզի օպտիմալ կոնցենտրացիաները, ինչպես նաև պլանավորված ուսումնասիրություններ կատարելու պայմանները: Նիտրոգոգունիդինի 100 մկգ/մլ կոնցենտրացիան հաստատված է ամենաօպտիմալը 1-2 ժամվա ընթացքում մուտագեննեզի իրականացման համար: Հաստատված է նաև որ նիտրոգոգունիդինով մակածված մուտագեննեզը առաջ է բերում հակաբիոտիկի նկատմամբ կայունության հաճախականության մեկից ավելի աստիճանով բարձրացմանը:

Ստացված տվյալների հիման վրա կարելի է եզրակացնել, որ , ըստ ներկայիս, նիտրոգոգունիդինով մակածված մուտագեննեզի մշակման մեթոդը արդյունավետ է lactobacillus sp. 2501-ի մոտ հակաբիոտիկի նկատմամբ կայուն մուտացիաներ մակածելիս:

26. Հայաստանի ֆաունայի Sphaeridium Fabricius սնդի ներկայացուցիչների վերանայում (Coleoptera, Hydrophilidae, Sphaeridiinae) /Մարջանյան Մ. Ա.; «Հայաստանի կենսաբանական հանդեսի» խմբ., (կենդանաբանության ին-տ).-

Երևան, 1995.- 8 էջ, 1 նկ. - Մատենագր. 3 ան.- Ռուս.- Ավանդ. 15.09.95, թիվ 122 - Ap95

Հոդվածում ուսումնասիրված եւ ճշտված է Sphaeridium Fabr. սեռի տեսակային կազմը Հայաստանի ֆաունայի համար: Տրված են որոշիչ աղյուսակ, տվյալներ գենիտալների ու փորիկի վերջին սեզմենտների ձևաբանության վերաբերյալ, նաև մինչ այժմ չուսումնասիրված որոշ կառուցվածքների նկարագրությունը:

27. Սևանա լճի ավազանի սուբֆոսիլ խոզերի գանգաբանության վերաբերյալ /Մանասերյան Ն. Հ.; «Հայաստանի կենսաբանական հանդեսի» խմբ., (Կենդանաբանության ին-տ).- Երևան, 1995.- 8 էջ.- Մատենագր. 3 ան.- Ռուս.- Ավանդ. 15.09.95, թիվ 123 - Ap95

Առաջին անգամ բերված են Հայաստանի տարածքում բրոնզե դարաշրջանի դամբարաններից հայտնաբերված խոզերի գանգերի ձևաչափական տվյալները: Հետազոտված են ճակատային եւ ուղեղային բաժինների տարբեր վնասվածքներ ունեցող 7 գանգ եւ գանգերի 17 բեկոր: Նկարագրված գանգերն իրենց ընդհանուր ուրվապատկերներով նմանվում են «արեւոտյան» տեսակի վայրի վարազներին եւ ունեն նաև ընտանի խոզերին համապատասխանող հատկանիշներ:

28. Կատնիսումիներնի քանակների փոփոխությունների դինամիկան եւ գլյուկոզա-6-ֆոսֆատդեհիդրոգենազայի ակտիվության տեղաշարժերը առնետների մակերիկամներում լիմֆոցիտար մեդիատորների ներարկման պայմաններում /Մուջյան Յ. Մ., Ստեփանյան Լ. Հ., Մինասյանց Ռ. Թ., Գրիգորյան Ա. Յ.; (Եր. պետ. բժշկ. համալս.)- Երևան, 1995.- 6 էջ, 2 աղ.- Մատենագր. 11 ան.- Ռուս.- Ավանդ. 19.09.95, թիվ 124 - Ap95

Հաստատված է, որ ինտակտ առնետների մակերիկամներում ադրենալինի պարունակության բարձրացումն առաջանում է լիմֆոցիտների կենսագործունեության արգասիքների ներմուծումից 6 եւ 24 ժամ հետո, իսկ լիմֆոցիտներինը՝ արդեն 10 րոպեից հետո: Լիմֆոցիտների ազդեցության տակ զգալիորեն բարձրանում է նաև

ֆերմենտի ակտիվությունը: Բննարկվում է լիմֆոցիտար մեդիատորների մասնակցությունը մակերիկամներում՝ հնարավոր մետաբոլիկ մեխանիզմներում:

29. Էլեկտրաստատիկ դաշտի ներգործությունը հորթի թիմուսի ԴՆԹ-ի ջերմային բնափոխման վրա /Օհանովա Ա. Գ., Արծրունի Գ. Գ.; «Հայաստանի կենսաբանական հանդեսի» խմբ., (Եր. պետ. բժշկ. համալս.)- Երևան, 1995.- 5 էջ, 2 աղ. - Մատենագր. 7 ան.- Ռուս.- Ավանդ, 19.09.95, թիվ 125 - Ap95

Սպեկտրալուսաչափական մեթոդով ուսումնասիրված է արտաքին էլեկտրաստատիկ դաշտի ներգործությունը հորթի թիմուսի ԴՆԹ-ի լուծույթների ջերմաբնափոխման վրա 0-ից մինչև 2000 վ/սմ միջակայքում, ֆոսֆատային բուֆերում $P_{H-(Na^+)}=3,3 \cdot 10^{-3}$ Մ եւ $(Na^+) 6,7 \cdot 10^{-3}$ Մ, ԴՆԹ-ի խտությունը՝ 25 մկգ/մմ:

Յույց է տրված, որ կատարված փորձերի պայմաններում էլեկտրաստատիկ դաշտը ԴՆԹ-ի վրա գործում է աննշան կայունացնող ազդեցություն:

Արտաքին էլեկտրաստատիկ դաշտի վերադրումը ԴՆԹ-ը լուծույթների կլանման սպեկտրի գրանցման ժամանակ առաջացնում է ազդանշանի ինվերսիա եւ զգալի չափով ֆլուկտուացիա ալիքի Հ-200 նմ երկարության եւ ազդանշանի փոքր ֆլուկտուացիա ալիքի Հ-260 նմ երկարության դեպքում, որոնք ուժեղանում են ԴՆԹ-ի բնափոխման չափին համապատասխան: Արդյունքի մեծությունը կախված է դաշտի լարումից՝ վերջինիս ավելացմամբ ֆլուկտուացիաներն ուժեղանում են, իսկ արտաքին դաշտի վերացումը լիովին վերականգնում է լարման սպեկտրները:

30. Արարատյան գոգավորության ֆիտոտրոֆ միկրոմիցետների տեր-բույսերը /Միսոնյան Ս. Ա., Մամիկոնյան Թ. Հ.; «Հայաստանի կենսաբանական հանդեսի» խմբ., (Բուսաբանության ին-տ).- Երևան, 1995.- 4 էջ, 3 աղ.- Մատենագր. 3 ան.- Ռուս.- Ավանդ. 19.09.95, թիվ 126 - Ap95

Անց է կացվել Արարատյան գոգավորության ֆիտոտրոֆ միկրոմիցետների հետազոտություններ: Նրանց համար սուբստրատ են հանդիսացել 1100 տեսակներ, որոնք պատկանում են 104 ընտանիքի, 442

ցնդի: Առաջատար ընտանիքները 15-ն են, որոնց մեջ ընդգրկվում են 20-167 տեսակի տեր-բույսեր:

Կատարվել է միկրոմիցենների տեր-բույսերի ընտանիքների սպեկտրի համեմատություն Արարատյան գոգավորության բույսերի ընտանիքների սպեկտրի հետ (Երևանի ֆլորիստիկական շրջան):

Տեր-բույսերի ընտանիքների դասավորումը սպեկտրում բնորոշ է միջերկրածովյան հնագույն ֆլորայի համար բորնալ տարրերի ազդեցությամբ:

31. Շքանարգիզագիների ընտանիքի մի քանի ներկայացուցիչների ստորին թեփուկների ձևաբանա-անատոմիական բնութագիրը /Ասատրյան Մ. Յ., Թորոսյան Ս. Խ.; «Հայաստանի կենսաբանական հանդեսի» խմբ., (Բուսաբանության ին-տ).- Երևան, 1995.- 8 էջ.- Մատենագր. 3 ան.- Ռուս. - Ավանդ. 19.09.95, թիվ 127 - Ap95

Շքանարգիզագիների ընտանիքի տեսակների մեծ մասի մոտ հասուն բույսի սոխուկում, որպես օրենք, ծաղկեթողբոջի հետ միաժամանակ միշտ հիմնադրվում է եւ ստորին թեփուկ.

որին վերագրվում են պաշտպանական եւ պահեստային գործառնություններ: Բերվում է Հարավ-աֆրիկյան 6 ցնդի..14 տեսակների ստորին թեփուկների ձևաբանա-անատոմիական բնութագիրը: Ուսումնասիրությունների արդյունքները վկայում են սոխուկի թեփուկանման օրգանների կառուցվածքի եւ համապատասխանաբար նրանց գործառնությունների փոփոխության մասին. թեփուկների ակտիվ մասնակցությունը գազա- եւ ջրափոխանակությանը եւ պաշարային նյութերի տեղափոխությանը:

32. Haemanthus albiflos Jacq. (Amaryllidaceae) -ի ստորին թեփուկների մասին /Ասատրյան Մ. Յ.; «Հայաստանի կենսաբանական հանդեսի» խմբ., (Բուսաբանության ին-տ).- Երևան. 1995.- 8 էջ.- Մատենագր. 8 ան.- Ռուս.- Ավանդ. 19.09.95, թիվ 128 - Ap95

Ուսումնասիրվել է *H. albiflos*-ի ստորին թեփուկների կազմությունը եւ զարգացումը: Ստացված տվյալների հիման վրա ենթադրվում է, որ

ստորին թեփուկների հիմնական գործառնությունը կապված է վերականգնողական օրգանների պաշտպանության եւ արագ աճի ապահովման հետ: Նրանք կարող են մասնակցել նյութերի պահեստավորմանը եւ տեղափոխությանը: Բացի այդ, լույսային պայմաններում կարող են յուրացնել ածխաթթու: Բոլոր վերը նշված փաստերը խոսում են ստորին թեփուկների տերեւային ծագման օգտին:

33. Հայաստանի ֆլորայի "Apiaceae" ընտանիքի ուսումնասիրմանն ուղղված նյութեր /Մելքումյան Ի. Ս., Հովհաննիսյան Լ. Լ.; «Հայաստանի կենսաբանական հանդեսի» խմբ., (Բուսաբանության ին-տ).- Երևան, 1995.- 3 էջ. - Մատենագր. 3 ան.- Ռուս.- Ավանդ. 19.09.95, թիվ 129 - Ap95

Հայաստանի ֆլորայի Apiaceae ընտանիքի տեսակների հետ աշխատելիս կուտակվել են բավականաչափ նյութեր, որոնք հավաքվել են գիտարշավների ժամանակ հանրապետության տարբեր շրջաններից: Հոդվածում բերվում են տվյալներ Apiaceae ընտ. տեսակների տարածաշրջանների վերաբերյալ, բացի այդ, հազվագյուտ եւ այլ տեսակների համար նշվում են նոր տարածման վայրեր:

Տեսակների ցուցակը կազմված է ըստ հանրապետության ֆլորիստիկական շրջանների, հերթաբերումային նմուշները ստուգված են Ի. Պ. Մանդենովայի կողմից եւ պահպանվում են ԳԱՍ. Բուսաբանության ինստիտուտի Հերբարիումում (ERE):

34. Լրացումներ Հայաստանի ֆլորայի (ցնդ *Gypsophila* L.) Թորոսյան Ս. Խ.; «Հայաստանի կենսաբանական հանդեսի» խմբ., (Բուսաբանության ին-տ).- Երևան, 1995.- 5 էջ. - Մատենագր. 8 ան.- Ռուս.- Ավանդ. 20.09.95, թիվ 130 - Ap95

Հոդվածում տրված են լրացուցիչ տվյալներ *Gypsophila* ցնդի տեսակային կազմի մասին Հայաստանի ֆլորիստիկական շրջաններում: Ութ ֆլորիստիկական շրջանների համար առաջին անգամ բերվում են հետևյալ հինգ տեսակները.

1. *G. bicolor*/Freyn et Sint./Grossh. - Շիրակի, Լոռու, Իջևանի, Ապարանի, Սևանի, Դարալագյազի ֆլորիստիկական շրջանների համար:

2. *G. heteropoda* Freyn et Sint. - Մեղրիի շրջանի համար:

3. *G. nabeleki Schischk./= G. lipskyi Schischk./* Դարալագյազի շրջանի համար:

4. *G. szovitsii Fisch. et Mey* - Արագածի շրջանի համար:

5. *G. tenuifolia Bieb.* - Իջևանի շրջանի համար:

Gypsophila գեղը ավելի ընդարձակ է ներկայացված Երևանի՝ 8 տնասկ. Դարալագյազի՝ 5 Զանգեզուրի՝ 5 և Գեղամյա ու Վերին Ախուրյանի ֆլորիստիկական շրջաններում:

35. Հիբբերելլինային թթվի ազդեցությունը ծխախոտի բույսերի աճման և բերքատվության վրա /Դավթյան Վ. Ա, Միքայելյան Գ. Վ.; »Հայաստանի կենսաբանական հանդեսի« խմբ., (Բուսաբանության ին-տ).- Երևան, 1995.- 6 էջ, 3 աղ.- Մատենագր. 15 ան.- Ռուս.- Ավանդ. 20.09.95, թիվ 131- Ap95

Ծխախոտի Մամսուն-47 սորտի բույսերի տերևները մեկ ամսվա ընթացքում 5 օրը մեկ սրսկվել են հիբբերելլինաթթվի 10 մգ/լ խտության լուծույթով:

Հետազոտության արդյունքները ցույց են ավել, որ հիբբերելլինային թթուն լսթանում է բույսերի ցողունների և ասիմիլացիոն մակերևսի աճը, դրանով իսկ նպաստելով տերևների բերքատվության բարձրացմանը:

36. Ֆիսապլանկտոնի սեզոնային դինամիկան Սևանա լճում /Միքայելյան Հ. Լ., Հովհաննիսյան Ռ. Հ., Վարդանյան Մ. Կ., Դավիդյանց Ա. Գ.; »Հայաստանի կենսաբանական հանդեսի« խմբ., (Հիդրոէկոլոգիայի և ձկնաբանության ին-տ).- Երևան, 1995.- 8 էջ, 1 աղ.- Մատենագր. 8 ան. - Ռուս.- Ավանդ. 20.09.95, թիվ 132 - Ap95

Ուսումնասիրվել է ֆիտոպլանկտոնի և բլ. <ա> սեզոնային դինամիկան Սևանա լճում: Որոշվել են տարվա տարբեր ժամանակաշրջաններում ջրիմուռների գերիշխող համալիրները, նրանց փոփոխման օրինաչափությունները: Մասնավորապես, նկատվում է ֆիտոպլանկտոնի զարգացման երեք մաքսիմում: Ամռան, գարնան ամիսներին գերիշխում են կանաչ ջրիմուռները (*Binuclearia lauterbornii*, *Crucigenia quadrata*), աշնան ամիսներին՝ դիատոմայինները (*Stephanodiscus astrae*, *Cyclotella sp.*, *Asterionella formoza*):

Բացահայտվել են որոշ քանակական օրինաչափություններ, որոնք ի հայտ են բերում ֆիտոպլանկտոնի հակազդեցությունը միջավայրի պայմանների փոփոխությանը:

37. Թթվածնաքաղցի պայմաններում բուլբար շնչառական կենտրոնի նեյրոնների ինաուլսային ակտիվության կարգավորման գործում լիմբիկ կեղևի և ամիգդալայի նշանակությունը /Սարգսյան Ն. Վ., Հակոբյան Ն. Ս., Բակլավաջյան Հ.Գ.; »Հայաստանի կենսաբանական հանդեսի« խմբ., (Եր. պնտ. համալս.),- Երևան, 1995.- 9 էջ.- Մատենագր. 13 ան. - Ռուս.- Ավանդ. 20.09.95, թիվ 133- Ap95

Թթվածնաքաղցի ազդեցության դինամիկայում ուսումնասիրված է ամիգդալայի և լիմբիկ կեղևի գրգռման ազդեցությունը շնչառության և երկարավուն ուղեղի շնչառական նեյրոնների ինաուլսային ակտիվության վրա: Ամիգդալայի գրգռումը մեծ մասամբ դրդող ազդեցություն է ունեցել ինչպես նորմայի, այնպես էլ թթվածնաքաղցի պայմաններում, երբ նույն ժամանակ, նման պայմաններում, լիմբիկ կեղևի գրգռումը ունեցել է հիմնականում արգելակող ազդեցություն: Զննարկվում են ստացված տվյալների արդյունքները:

38. Նշահամալիրի տարբեր կառուցվածքների քիմիական լսթանման ազդեցությունը արյան մակարդման գործընթացի վրա /Ամիրջյան Ս. Վ., Նադիրյան Մ. Վ.; »Հայաստանի կենսաբանական հանդեսի« խմբ., (Եր. պնտ. համալս.),- Երևան, 1995.- 5 էջ, 1 աղ.- Մատենագր. 7 ան.- Ռուս. - Ավանդ. 20.09.95, թիվ 134 - Ap95

Ուսասնասիրվել է նշահամալիրի տարբեր կորիզախմբերի քիմիական լսթանման ազդեցությունը արյունամակարդման կենսաքիմիական գործոնների վրա: Հաստատված է, որ դրդող ամինաթթուներից մեկի՝ Լ-գլուտամատի միկրոներարկումը նշահամալիրի տարբեր կորիզախմբեր բերում է արյունամակարդման գործընթացի հավաստի արագացմանը, որն արտահայտվում է ուսումնասիրվող բոլոր գործոնների գերմակարդիչ փոփոխությամբ:

Տվյալ փորձերում ստացված արդյունքները մեկ անգամ եւս հաստատում են հեղինակների կողմից նախկինում արտահայտած այն ենթադրությանը, որ նշահամալիրը մասնակցում է օրգանիզմի սիմպատիկ լարվածության կարգավորմանը:

39. Դեյտերսի անդաստակային կորիզի գրգռման ազդեցությունը նշահամալիրի տարբեր նեյրոնների ակտիվության վրա /Գրիգորյան Ս. Ս., Գետրոյան Է. Ս.; »Հայաստանի կենսաբանական հանդեսի« խմբ., (Եր. պետ. համալս.)- Երևան, 1995.- 6 էջ, 1 նկ.- Մատենագր. 11 ան.- Հայ. - Ավանդ. 20.09.95, թիվ 135 - Ap95

Ուսումնասիրվել է Դեյտերսի անդաստակային կորիզի տարբեր հաճախության գրգռման ազդեցությունը նշահամալիրի տարբեր կորիզների նեյրոնների իմպուլսային ակտիվության եւ հրահրված կենսահոսանքների վրա:

Պարզվել է, որ նշածնի համալիրի տարբեր կառուցվածքների եւ Դեյտերսի կորիզի միջնի գոյություն ունի մոնոսինապսային կապ, որի ապացույցն է հրահրված կենսահոսանքների կարճ գաղտնի շրջանները եւ այդ նեյրոնների բարձր հաճախության գրգիռների վերարտադրումը:

40. Կնդնի ակնակապճա-ճակատային շրջանի գրգռման ազդեցությունը Դեյտերսի անդաստակային կորիզի նեյրոնային ակտիվության վրա թրթռման ազդեցության պայմաններում /Ադամյան Ծ. Ի., Մինայան Ս. Մ, Սարգսյան Ս. Հ., Մահակյան Ս. Գ, Բաղդասյան Լ. Ա.; »Հայաստանի կենսաբանական հանդեսի« խմբ., (Եր. պետ. համալս.)- Երևան, 1995. 8 էջ, 1 աղ.- Մատենագր. 9 ան.- Հայ.- Ավանդ. 20.09.95, թիվ 136 - Ap95

Կնդնի ակնակապճա-ճակատային շրջանի տարբեր հաճախությամբ էլեկտրական խթանումը բնականոն ճագարների Դեյտերսի կորիզի նեյրոնների ակտիվության վրա թողնում է դրդող եւ արգելակող ազդեցություն վերջինիս գերակշռմամբ: Ցածր հաճախությամբ (5 Հց) թրթռումն ուժեղացնում է կնդնի արգելակող եւ թուլացնում դրդող ազդեցությունը:

41. Կենսաբանական օբյեկտների վրա ցիկլիկ թիանամիդների ազդեցության ուսումնասիրումը /Ջաբարյան Ա. Ե., Ղուկասյան Գ. Բ, Նազարյան Ռ. Գ., Ավետիսյան Ա. Ա., Փանոսյան Գ. Ա.; »Հայաստանի կենսաբանական հանդեսի« խմբ., (Եր. պետ. համալս.)- Երևան, 1995.- 5 էջ.- Մատենագր. 11 ան.- Ռուս.- Ավանդ. 20.09.95, թիվ 137- Ap95

Հետազոտվել է նոր սինթեզված միացությունների՝ թիոպիտոլիդնի (ԹՊ) եւ թիոկապրոլակտամի (ԹԿԼ) ազդեցությունը կենսասուբստրատների վրա: Պարզաբանվել է, որ երկու միացություններն էլ քիչ թունավոր են կենդանիների համար (թունավորության 4-րդ դաս): Ուսումնասիրվել է ԹԿԼ-ի եւ ԹՊ-ի ազդեցությունը բույսերի աճի վրա: Յուրյ է տրված, որ »Բեզոստայա-1« ցորենի սերմերի մշակումը այդ միացություններով հանգեցնում է բույսերի աճի ուժեղ ճնշմանը առաջին շաբաթվա ընթացքում, սակայն 10-12-րդ օրը ծիլերը գործնականում չեն տարբերվում ստուգիչ ծիլերից: Հետազոտվել է այդ ծիլերի, նրանց ցողունիկների եւ ցողունիկների ինքնաբերական քնմիյումիներացնիան: Արդյունքները վկայում են ուսումնասիրվող միացությունների հակաօքսիդիչ բնույթի մասին: Յուրյ է տրված, որ ԹՊ-ով մշակված սերմերի ծիլերի լուսարձակման մակարդակը համարյա 55% -ով ցածր է ստուգիչի լուսարձակման մակարդակից: Նման արդյունքներ են ստացվել նաեւ ցողունիկների եւ հոմոգենատների համար: Այդ վարձերի ընդհանրագրված արդյունքները վկայում են ուսումնասիրվող նմուշների վրա ԹՊ-ի համեմատությամբ ԹԿԼ-ի համեմատաբար թույլ ազդեցության մասին: Կարելի է եզրակացնել, որ ԹՊ-ն օժտված է առավել արտահայտված հակաօքսիդիչ ազդեցությամբ, քան ԹԿԼ-ը:

42. Ծաքարի ճակնդնդի մելասի ամինաթթվային բաղադրությունը /Հարությունյան Տ.Գ., Կարա-պետյան Ս. Ա., Լուսատրյան Ս. Ա.; »Հայաստանի կենսաբանական հանդեսի« խմբ., (Եր. պետ. համալս.)- Երևան, 1995.- 9 էջ, 4 աղ. - Մատենագր. 6 ան.- Ռուս.- Ավանդ. 20.09.95, թիվ 138 - Ap95

Հետազոտված է Սպիտակի շաքարի գործարանի հումքի՝ ճակնդնդի մելասի ազատ եւ կառուցվածքային ամինաթթուների բաղադրությունը:

Ազատ ամինաթթուների բաղադրության հետազոտման նպատակով բացահայտվեցին դրանց լուծազատման լավագույն պայմանները: Դրա համար կիրառվել են սպիրտաջրային լուծույթներ (50⁰-, 60⁰-, 70⁰-, 80⁰-ի էթիլային սպիրտ) 10 եւ 20 հիդրոմոդուլների դեպքում: Լուծազատումը կատարել են տարբեր ժամկետներում՝ 1-ից մինչև 45 ժամ:

Ամինաթթուների լավագույն ելքը դիտվում է 50⁰-ի ջրասպիրտային լուծույթում, 10 հիդրոմոդուլի դեպքում, լուծազատման երեք ժամ տևողությամբ: Բամբակյա քրոմատագրության մեթոդով մելասի նստվածքում նույնացվել են քանակորեն որոշվել են հիստիդին, արգինին, ասպարագինային թթու, սերին, գլիցին, գլյուտամինային թթու, տրենսին, ալանին, տրինտոֆան, վալին+մեթիոնին, ֆենիլալանին, լեյցին: Յիստեինը եւ լիզինը հայտնաբերվել են հետքերի ձևով:

Մելասի սպիտակուցների հիդրոլիզն իրականացվել է աղաթթվի 6 լուծույթի առկայությամբ, 105⁰ ջերմության դեպքում, 6, 12, 24, 48, 72 ժամվա ընթացքում, մելասի թթվին 1:3, 1:5, 1:10 հարաբերությամբ: Ամինաթթուների ամենամեծ ելքը դիտվել է 48-ժամյա հիդրոլիզի դեպքում: Շաքարի ճակնդեղի մելասի սպիտակուցների հիդրոլիզատում գերակշռում են գլյուտամինային եւ ասպարագինային թթուներ, ալանին, լեյցին, վալին+մեթիոնին: Փոքր քանակությամբ պարունակվում են ցիստեին, լիզին, հիստիդին, արգինին, սերին, գլիցին, տրենսին, տիրոզին: Ֆենիլալանին չի հայտնաբերված:

43. Թիմուսի լիմֆոցիտների կենսագործունեության արգասիքների ազդեցությունը արյան հիստամինի պարունակության վրա ինտակտ առնետների մոտ եւ սթրեսի պայմաններում /Մտնփանյան Լ. Հ., Սուջյան Յ. Մ., Ավագյան Ա. Ռ.; (Եր. պետ. համալս.)- Երևան, 1995. 4 էջ. Մատենագր. 8 ան.- Ռուս.- Ավանդ. 20.09.95, թիվ 139 - Ap95

Թիմուսի լիմֆոցիտների կենսագործունեության արգասիքների ինտրապերիտոնեալ ներարկումը չի ազդում արյան հիստամինի պարունակության վրա: 24 ժամվա խիստ իմոբիլիզացիայից հետո նշվում է առնետների արյան հիստամինի պարունակության իջեցում, որը բնորոշ է իմբոլիզացիոն սթրեսի համար: Լիմֆոցիտների կենսագործունեության արգասիքների նախնական ներարկումը բարձրացնում է արյան հիստամինի քանակը սթրեսի համեմատությամբ, եւ հիստամինի

պարունակությունը համապատասխանում է ստուգիչ տվյալներին: Այդ վկայում է լիմֆոցիտների կենսագործունեության արգասիքների հարմարվողական ազդեցության մասին:

44. Մնուցող բջիջների զարգացումը Արարատյան որդան կարմրի (Homoptera, Coccoidea, Margarodidae) պոլիտրոֆ ձվարաններում /Խաչատրյան Մ. Գ., Խաչատրյան Հ. Թ., Ղարազեբակյան Գ. Գ.; «Հայաստանի կենսաբանական հանդեսի» խմբ., (Մոլեկուլային կենսաբանության ին-տ).- Երևան. 1995.- 5 էջ, 2 աղ.- Մատենագր. 9 ան.- Ռուս.- Ավանդ. 20.09.95, թիվ 145 - Ap95

Կատարվել են Արարատյան որդան կարմրի մերոհստիկ-պոլիտրոֆ ձվարանների սնուցող բջիջների (տրոցիտների) ձեւաչափական եւ բջջաքիմիական հետազոտություններ նախադեղնուցային եւ դեղնուցակուտակման ժամանակահատվածներում: Յույց է տրվել, որ հետազոտված ժամանակահատվածի սկզբնական փուլերում ձվաբջջին մոտ տեղավորված եւ կամքիալ շերտի (միտոզների գոտու) հետ շփվող սնուցող բջիջներն իրենց ակտիվության բարձրագույն կետին ավելի շատ են հասնում, իսկ քայքայման գործընթացներն այդ բջիջներում սկսվում են համապատասխանաբար ավելի վաղ, քան սնուցող խցիկի այլ բջիջներում: Բննարկվում է ինչպես այս, այնպես էլ նախկինում կատարված հետազոտությունների ժամանակ դիտարկված օրինաչափություններում միջբջջային փոխհարաբերությունների նշանակությունը: Կարծիք է հայտնվում, որ բջջային նյութափոխանակության ակտիվությունը կախված է ձվաբջիջ-օժանդակ բջիջներ համակարգում նրա տարրերի շփման մակերեսից:

45. In situ մասնակի դեկոնդենսացված քրոմատինը պարունակում է պանկրեատիկ դեզօքսիռիբոնուկլեազայի կտրատման տարասեռ սայտեր I. ԴՆԹ-ի կիսաբուկլեոսոմային կրկնանկարի ձեւավորման կինետիկան առնետի քրոմատինի վրա ԴՆԹ-ազայի ազդեցության ընթացքում /Խաչատրյան Հ. Թ., Խաչատրյան Մ. Գ., Ղարազեբակյան Գ. Գ.; «Հայաստանի կենսաբանական հանդեսի» խմբ., (Մոլեկուլային

կենսաբանության ին-տ).- Երևան, 1995.- 21 էջ, 1 աղ.- Մատենագր. 29 ան.- Անզլ.- Ավանդ. 20.09.95, թիվ 146 - Ap95

Հետազոտվել է ԴՆԹ-ի կիսանուկլեոտամային կրկնաձևերի ձևավորման կինետիկական առնետի մի շարք բջիջների քրոմատինի in situ աստիճանական դեկոնդենսացման պայմաններում: Հայտնաբերվել է, որ ԴՆԹ-ի էլեկտրոֆորեզի արդյունքում դիտվող «կիսանուկլեոտամային» պիկերը՝ 1.5n-ը, 2.5n-ը և 3.5n-ը (n-ով նշանակվում է նուկլեոտամային ԴՆԹ-ի երկարությունը), ի հայտ են գալիս այն դեպքում, երբ առկա է քրոմատինի դեկոնդենսացման և ԴՆԹ-ազայով մարսման որոշակի խորություն: Այս երկու գործոնները որոշ չափով փոխադարձաբար միմյանց լրացնում են: Դեկոնդենսացման ընթացքում առաջին ի հայտ է գալիս 1.5n պիկը, հետո, գրեթե միաժամանակ՝ 2.5n-ը և 3.5n-ը: Դրա հետ մեկտեղ ապացույց է ներկայացված, որ հիշյալ երկու պիկերը ձևավորվում են միմյանցից անկախ: Ի տարբերություն 1.5n և 2.5n պիկերի, 3.5n-ը ոչ թե «աճում» է «նուկլեոտամային» պիկերի միջև, այլ գոյանում է որպես արդյունք կոնդենսացված քրոմատինի 4n պիկի «ճեղքման» ի հետևանք քրոմատինի դեկոնդենսացման: Այսպիսով, այս երեք պիկերը միմյանց հետ կապված չեն «նախորդ - արգասիք» փոխհարաբերություններով, այլ ակնհայտորեն ծագում են միմյանցից տարբեր դեզօքսիդեզնուկլեոպրոտեինային կազմավորումներից, որոնք ունեն ԴՆԹ-ազայի զանազան զգայունության սայտեր: 2.5n պիկի առաջացման գործընթացին բնորոշ է բջջային յուրահատկություն:

46. In situ մասնակի դեկոնդենսացված քրոմատինը պարունակում է պանկրեատիկ-դեզօքսիդեզնուկլազայի կտրատման տարատեսակ սայտեր II. ԴՆԹ-ազայով մարսման հետևանքով առնետի լյարդի կորիզներից դուրս ելած քրոմատինային մասնիկների հետազոտություն /Ղարազև Գ. Գ., Խաչատրյան Մ. Գ., Խաչատրյան Հ. Թ.:/ «Հայաստանի կենսաբանական հանդեսի» խմբ., (Մոլեկուլային կենսաբանության ին-տ).- Երևան, 1995.- 9 էջ.- Մատենագր. 10 ան.- Անզլ.- Ավանդ. 20.09.95, թիվ 147 - Ap95

Էլեկտրոֆորեզի միջոցով հետազոտվել են առնետի լյարդի բջջակորիզներից պանկրեատիկ ԴՆԹ-ազայով մարսման արդյունքում

դուրս ելած քրոմատինի մասնիկները: Վերլուծման առարկա է դարձել այն մասնիկների ԴՆԹ-ն, որոնց էլեկտրոֆորեզիկ շարժունակությունը համընկնում է սովորական մոնո-, դի- և արինուկլեոտամային շարժունակության հետ (այդ մասնիկները մեր կողմից անվանվել են, համապատասխանաբար, Դ-մոնոսոմեր, Դ-դիսոմեր և Դ-տրիսոմեր): Այս մասնիկներից ոչ մեկը չի պարունակում ԴՆԹ-ի «կիսանուկլեոտամային» հատվածներ, ինչը հիմք է տալիս ենթադրելու, որ նման հատվածներն առաջանում են ավելի երկար պոլիմերային շղթաների կտրատումից: Հայտնաբերվել է, որ Դ-տրիսոմերի ԴՆԹ-ում կա ԴՆԹ-ազայի երկու ներքին սայտ, որոնցից մեկը սովորական սայտերից տարբերվում է մատչելի հատվածի անսովոր մեծ երկարությամբ: Նման ասիմետրիկ կառուցվածքը թույլ է տալիս ենթադրել, որ Դ-դիսոմեր չի կարող լինել Դ-տրիսոմերի քայքայման արգասիք և, հետևաբար, այս երկու մասնիկներն առաջանում են միմյանցից անկախ, զանազան նախորդներից: Սույն աշխատանքի և կիսանուկլեոտամային ԴՆԹ-ի հատվածների գոյացման կինետիկայի արդյունքների համադրումը թույլ է տալիս ենթադրել, որ մասնակիորեն դեկոնդենսացված քրոմատինում գոյություն ունի ԴՆԹ-ազա 1-ի սայտերի առնվազն վեց տարատեսակ:

47. Մելխակի մերիկլոնալ բազմացման փորձ /Հովհաննիսյան Ռ. Գ., Հովհաննիսյան Մ. Գ., Հարությունյան Ա. Գ.:/ «Հայաստանի կենսաբանական հանդեսի» խմբ., («Ազրոկենսատեսիս» համառոտ գիտաարտադրական միավորում).- Երևան, 1995.- 5 էջ, 2 աղ.- Մատենագր. 6 ան.- Ռուս.- Ավանդ. 2009.95, թիվ 148 - Ap95

Մշակված է յոթ տեսակի ռեմոնտանտ մելխակի մերիստեմային կուլտիվացման և ռեգեներատների միկրոբազմացման տեխնոլոգիա:

Ցույց է տրված, որ տեսակային տարբերությունները in vitro պայմաններում ազդում են մելխակի ռեգեներացման և բազմացման վրա:

48. Kalanchoe pinnata ռեգեներացումը ստատիկ էմիբրիոգենեզի միջոցով in vitro կուլտուրայում /Հարությունյան Ա. Գ., Հովհաննիսյան Ռ. Գ., Հովհաննիսյան Մ. Գ.:/ «Հայաստանի կենսաբանական հանդեսի» խմբ., («Ազրոկենսատեսիս» համառոտ

գիտաարտադրական միավորում).- Երևան, 1995. - 3 էջ.- Մատենագր. 7 ան.- Ռուս.- Ավանդ. 20.09.95, թիվ 149 - Ap95

Մշակված է սոմատիկ էմբրիոգենեզի միջոցով *Kalanchoe pinnata* ռեդենսաբատների արդյունավետ ստացման տեխնոլոգիան *in vitro* կուլտուրայի պայմաններում:

Յույց է տրված, որ կալլուսի ակտիվ ձեւավորումը ընթանում է միջավայրում 0,1 մգ/լ, 2,4 և 1 մգ/լ 6 ԲԱՊ, իսկ ռեգեներատների առավելագույն առաջացումը 0,2 մգ/լ, ԿԲԹ և 2 մգ/լ 6 ԲԱՊ հորմոնների ներկայությամբ:

In vitro պայմաններում աճեցված կալանխտի տերեւների օգտագործումը որպես առաջնային էքսպլանտ, կրճատում է ռեգեներատների ստացման գործընթացը 1,5 անգամ:

49. Վարդագույն կատարանտուսի ծաղկման կենսաբանությունը բացօթյա հիդրոպոնիկայի և հողի պայմաններում / Հարությունյան Ա. Գ.; «Հայաստանի կենսաբանական հանդեսի» խմբ., (Ագրոքիմիական պրոբլեմների և հիդրոպոնիկայի ին-տ).- Երևան, 1995.- 3 էջ.- Մատենագր. 9 ան.- Ռուս.- Ավանդ, 20.09.95, թիվ 150 - Ap95

Յույց է տրված, որ բացօթյա հիդրոպոնիկայում տեղի է ունենում վեգետացման տնտղության կրճատում բույսերի նախածաղկային և պտղի հասունացման ժամանակաշրջանների կրճատման հաշվին: Միաժամանակ երկարում է առանձին ծաղկման տնտղությունը:

50. Առնետների ուղեղիկի ֆաստիզիալ նեյրոնների իմպուլսային ակտիվության փոփոխությունը երկնագույն խալի և կամրջի կարի միջուկի համատեղ կոագուլումից հետո /Մարգարյան Ռ. Շ., Խանթաբյան Մ. Վ., Մուշեղյան Գ. Խ.; «Հայաստանի կենսաբանական հանդեսի» խմբ., (Հայկ. պետ. մանկ. ին-տ).- Երևան, 1995.- 7 էջ.- Մատենագր. 8 ան. - Ռուս.- Ավանդ. 20.09.95, թիվ 153 - Ap95

Յույց է տրված, որ երկնագույն խալի (Եև) և կամրջի կարի միջուկի (ԿԿՄ) միաժամանակյա կոագուլումից հետո ուղեղիկի ֆաստիզիալ միջուկում զգալիորեն աճում է իմպուլսային ակտիվության անկանոն

բնույթով օժտված նեյրոնների քանակը: Ըապես փոխվում է իմպուլսային հոսքերի (ԻՀ) ընթացքի դինամիկան, մասնավորապես, կտրուկ աճում է այն նեյրոնների քանակը, որոնց մոտ հաջորդական միջիմպուլսային ինտերվալների (ՄԻ) արժեքները ձեւավորվում են պատահական կերպով: Եև-ի և ԿԿՄ-ի քայքայումը հանգեցնում է ֆաստիզիալ միջուկի նեյրոնների պարամետրի միջին հաճախության կրկնակի նվազեցմանը:

ՄԺԿ 61

ԲԺՇԿԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

51, Լիպիդային գերօքսիդացման փոփոխությունները համալիր լազերաբուժության կիրառման ժամանակ բրոնխային ասթմայով և քրոնիկական ոչ յուրահատուկ թոքերի հիվանդություններով հիվանդների մոտ /Մազարեյան Է. Յ., Մարտիրոսյան Տ. Վ., Գասպարյան Ա. Յ., Հակոբյան Ա. Ս., Ահարոնյան Ժ. Պ.; (Եր. պետ. բժշկ. համալս.)- Երևան, 1995.- 5 էջ.- Մատենագր, 12 ան.- Ռուս.- Ավանդ. 07.09.95, թիվ 94 - Ap95

Կատարված կլինիկական հետազոտությունները վկայում են լազերաբուժության բարձր արդյունավետության մասին բրոնխային ասթմայի և քրոնիկական ոչ յուրահատուկ թոքերի հիվանդությունների բուժման մեջ: Բացի լազերաբուժության կուրսից, հիվանդներին նշանակված էին պատրաստուկներ, որոնք օժտված էին հակաօքսիդանտային ակտիվությամբ: Ինֆրակարմիր ճառագայթները (0,89 մկմ ալիքի երկարությամբ), որոնք արձակում էին »Էլատ« և »Սպեկտր« լազերային սարքերը, ևս ցուցաբերում էին հակաօքսիդանտային հատկություններ: Հետազոտված 46 հիվանդներից (30 տղամարդ և 16 կին՝ 38-ից մինչև 69 տարեկան հասակում) 18-ի մոտ, որոնք տառապում էին աստղիկ բրոնխային ասթմայով, լազերաբուժության արդյունքները լավագույնն էին:

Ապացուցվեց, որ աստղիկ բրոնխային ասթմայի ժամանակ որոշ դեղերի համալիր կիրառումը ավելի է բարձրացնում հակաօքսիդանտային պաշտպանության մակարդակը: Այդ դեղերի

շարքին են պատկանում Seldane-D-ն, Procardia-ն և նատրիումի թիոսուլֆատի լուծույթը:

Համեմատական վերլուծությունը հայտնաբերեց, որ հիվանդների հիմնական խմբում համալիր լազերաբուժության արդյունքում էական լավացում դիտվում էր ավելի կարճ ժամկետում, քան ստուգիչ խմբում (23 հիվանդ): Հիմնական խմբում նաև նվազեցված էին դեղաչափերը, հիվանդների լավացումը տեղի էր ունենում ավելի կարճ ժամանակամիջոցում:

52. Պարբերական հիվանդության կրծքային ձևով և ատոպիկ բրոնխային ասթմայով հիվանդների մոտ արյան հիստամինի մակարդակի համեմատական ցուցանիշները հիվանդության սրացման փուլում, նոպայի ժամանակ և նոպայից դուրս /Նազարեթյան Է. Ե., Եդոյան Ս. Կ., Մարտիրոսյան Տ.Վ., Ահարոնյան Ժ. Պ.; (Եր. պետ. բժշկ. համալս.)- Երևան, 1995.- 6 էջ.- Մատենագր. 6 ան.- Հայ. - Ավանդ. 07.09.95, թիվ 95 - Ap95

Հոգվածի հեղինակներն ուսումնասիրել են ավերակ բորբոքման կարևորագույն մեդիատորներից մեկի՝ ատոպիկ բրոնխային ասթմայով և պարբերական հիվանդության կրծքային ձևով հիվանդների մոտ հիստամինի մակարդակի փոփոխությունները: Կլինիկական հետազոտությունը կատարված է ատոպիկ բրոնխային ասթմայով 10 և պարբերական հիվանդությամբ 15 հիվանդների մոտ, ստուգիչ խումբը կազմել է 16 առողջ մարդ:

Յուրեք տրված հիվանդիստամինեմիայի նույնությունը ասթմայով և պարբերական հիվանդությամբ հիվանդների մոտ սրման փուլում: Մինչև նույն ժամանակ ատոպիկ բրոնխային ասթմայով հիվանդների մոտ արյան հիստամինի մակարդակը շնչահեղձության նոպայի ընթացքում եղել է ստույգ ավելի բարձր պարբերական հիվանդության կրծքային ձևով հիվանդների արյան մեջ հիստամինի խտությունից: Վերջին հանգամանքը, հավանաբար, պայմանավորված է պարարտ-բջջային (YgE - կալայա) մեխանիզմի գերակայությամբ ատոպիկ բրոնխային ասթմայի ախտաճնության մեջ:

53. Իմունիտետի որոշ ցուցանիշները խթանող քաղցկեղով հիվանդների մոտ /Հակոբյան Ա. Ա., Աղավնյան Ա. Մ.,

Կարդանյան Գ. Ս., Աղաբալյան Ա. Ս.; »Հայաստանի կենսաբանական հանդեսի« խմբ., (Պրոկտոլոգիայի գիտահետազոտ ին-տ).- Երևան, 1995.- 4 էջ, 2 աղ.- Մատենագր. 3 ան.- Ռուս.- Ավանդ. 07.09.95, թիվ 96 - Ap95

Խթանող քաղցկեղով տառապող հիվանդների մոտ T₃-T₄ փուլերում էվակուատոր գործառնության երկարատև խանգարումը, հաստ աղու միկրոֆլորայի ուղեկցող դիսբակտերիոզի զարգացումը կարող են հանդիսանալ իմունիտետային համակարգի ճնշման լրացուցիչ գործոններ:

Հետազոտության բորբոքային բարդությունների զարգացման հավանականությունը որոշակիորեն բարձրացնող իմունոդեֆիցիտային վիճակի ախտորոշման ամենատեղեկատու ցուցանիշներն են հիվանդի արյան նեյտրոֆիլների ֆագոցիտար ակտիվությունը և T - լիմֆոցիտների քանակը:

54. Խթանող հարօջախային բորբոքման համակցված հակաբակտերիալ բուժման արդյունավետությունը /Հակոբյան Ա. Ս., Աղավնյան Ա. Մ.; »Հայաստանի կենսաբանական հանդեսի« խմբ., (Պրոկտոլոգիայի գիտահետազոտ. ին-տ). - Երևան, 1995.- 3 էջ.- Մատենագր. 5 ան.- Ռուս.- Ավանդ. 07.09.95, թիվ 97- Ap 95

Հարօջախային բորբոքումով բարդացած խթանող քաղցկեղի դեպքում կատարվել է լապարասկոպիա: Բորբոքման արտահայտվածության աստիճանը գնահատելուց հետո ուռուցքի շրջան է դրվում հատուկ դրենավորման խողովակ, որի միջոցով ներարկվում են հակաբակտերիալ դեղամիջոցներ: Արդյունավետ նախապատրաստման շնորհիվ արմատական վիրահատություն է կատարվել 44 (89.7 տոկոս) հիվանդի մոտ:

55. Լյարդի նյութափոխանակային գործառնությունների և լիպիդների գերօքսիդացման ուսումնասիրությունը թոքերի քրոնիկական ոչ յուրահատուկ հիվանդությունների ժամանակ՝ կախված ծանրության աստիճանից /Նազարեթյան Է. Ե., Կարդանյան Ա. Հ., Գասպարյան Ա. Յու; (Եր. պետ. բժշկ.

համալս.)- Երևան, 1995.- 9 էջ, 2 աղ.- Մատենագր. 7 ան.- Ռուս.- Ավանդ. 20.09.95, թիվ 142 - Ap95

Նկատագրով և նախապես նյութափոխանակային գործառնությունները և լիպիդների գերօքսիդացումը թոքերի քրոնիկական ոչ յուրահատուկ հիվանդությունների ժամանակ (88 հիվանդ): Ստացված տվյալները վկայում են, որ բոլոր հիվանդների մոտ նկատվում է լյարդին յուրահատուկ ֆերմենտների բարձր ակտիվություն արյան շիճուկում, լյարդի սպիտազոյացնող գործառնության ընկճում և գերօքսիդացման բարձր մակարդակ:

Նշված ախտաբանական փոփոխությունների արտահայտվածության աստիճանը կախված է հիվանդության ձևից (քրոնիկական բրոնխիտ, բրոնխային ասթմա, քրոնիկական թոքաբորբ), շրջանից (սրագում, ախտադադար) և ծանրության աստիճանից:

Հաստատված է, որ լյարդի գործառնությունների ընկճումը նշված հիվանդությունների ժամանակ ունի որոշակի ախտածին նշանակություն շնչառական անբավարարության զարգացման գործում:

56. Պտղի ներարգանդային ախտահարումը գրիպի, պարազրիպի վիրուսներով, ադենովիրուսով նորմալ և բարդացած ընթացքով հղիության ժամանակ /Մինայանց Վ. Մ.; (Եր. պետ. թժշկ. համալս.)- Երևան, 1995.- 4 էջ.- Մատենագր. 10 ան.- Ռուս.- Ավանդ. 20.09.95, թիվ 143 - Ap95

Կատարված հետազոտությունները ցույց են տալիս, որ վերոհիշյալ վիրուսներով ներարգանդային ախտահարումը բավականին բարձր հաճախականություն ունի: Ի տարբերություն այլ վարակներով ախտահարման՝ այս լսմբի վիրուսներով պտղի ախտահարման շիճուկը աննշան է, և ելքը նորածինների համար՝ բարենպաստ:

57. Լուսնի փուլերի ազդեցությունը հիվանդության (ՊՀ ընթացքի վրա /Սագարեթյան Է. Ե., Մարտիրոսյան Տ. Վ., Հակոբյան Գ. Ս.; (Եր. պետ. թժշկ. համալս.)- Երևան, 1995.- 2 էջ.- Հայ.- Ավանդ. 20.09.95, թիվ 144 - Ap95

Վերջին տարիներին մեծ տեղ է հատկացվում տարբեր կենսաքիմիական և ֆիզիոլոգիական գործընթացների վրա լուսնի

ազդեցությանը, երբ այդ գործընթացներն ընթանում են օրգանիզմի մեջ և բերում քրոնիկական հիվանդությունների սրացման: Լուսնի փուլերի ազդեցությունը ՊՀ ընթացքի վրա հետազոտելու նպատակով մենք ուսումնասիրել ենք 196 հիվանդների պատմությունը, որոնք բուժվել են 1988-92 թթ. Երևանի թիվ 1 և թիվ 8 կլինիկական հիվանդանոցներում:

Արդյունքները ցույց են տալիս, որ ՊՀ հիվանդների մոտ նկատվում է որոշակի կապ նոպաների և լուսնի փուլերի միջև: Նոպաները ավելի հաճախակի են նորալուսնից առաջ և հետո, ընդ որում, տղամարդկանց մոտ այդ միտումը վիճակագրորեն հավաստի է:

58. Մակրոֆագ բջիջների կոնտակտները լիմֆոիդ օրգաններում անտիգենային պայմաններում /Ազնաուրյան Ա. Վ., Բախչինյան Մ. Չ., Կասպարովա Ի. Ս.; (Եր. պետ. թժշկ. համալս.)- Երևան, 1995.- 7 էջ.- Մատենագր. 10 ան.- Ռուս. - Ավանդ. 20.09.95, թիվ 151- Ap95

Ուսումնասիրված են մակրոֆագ բջիջների կոնտակտները լիմֆոիդ օրգաններում անտիգենային ազդակի պայմաններում: Ձևաբանական և ձևաչափական հետազոտությունների հետևանքով հայտնաբերված են նկարագրված են մակրոֆագերի և լիմֆոիդ բջիջների սերտ կապերը, Ռ-ՆԹ սինթեզի ուժեղացումը պլազմատիկ բջիջներում: Նշվածը վկայում է մակրոֆագ բջիջների կարևոր դերի մասին օրգանիզմի իմունային պատասխանի ժամանակ:

59. Ավշային հանգույցի մակրոֆագների ձևագործառնության բնութագրությունը անտիգենային ազդեցության պայմաններում /Ազնաուրյան Ա. Վ., Բախչինյան Մ. Չ., Կասպարովա Ի. Ս.; (Եր. պետ. թժշկ. համալս.)- Երևան, 1995.- 6 էջ.- Մատենագր. 4 ան.- Ռուս.- Ավանդ. 20.09.95, թիվ 152 - Ap95

Ուսումնասիրված են ավշային հանգույցների մակրոֆագ բջիջները անտիգենային լսթանման պայմաններում ձևաբանական և ձևաչափական եղանակներով:

Հայտնաբերված է մակրոֆագ բջիջների կառուցվածքային և գործառնության հատկությունների զգալի ակտիվացում:

ՄԺԿ 63

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

60. **Խաղողի սնդանի սորտերի գեներատիվ սելեկցիա Հայաստանում /Այվազյան Գ, Պ.;** »Հայաստանի կենսաբանական հանդեսի« խմբ., (Հայաստանի գյուղատնտես. գիտությունների ակադեմիա).- Երևան, 1995.- 13 էջ, 2 աղ. - Մատենագր. 3 ան.- Ռուս.- Ավանդ. 07.09.95, թիվ 98 - Ap95

Բացահայտված է արևմտանվրոպական, Սև ծովի ավազանի եւ արևելյան էկոլոգա-աշխարհագրական խմբի սնդանի փոփոխականների տնտեսական արժեքավոր հատկանիշների ու հատկությունների փոփոխականության եւ ժառանգման բնույթը 20 հիբրիդային զուգակցությունների 3231 սերմնաբույսերում: Հայտնաբերված է սկզբնափոփոխականների առանձին հատկանիշների եւ հատկությունների հետերոզիգոտային եւ հոմոզիգոտային բնույթը՝ ըստ սերմնային սերնդի:

Խաղողի սնդանի արժեքավոր փոփոխականների գեներատիվ սելեկցիայի համար հայտնաբերված են հիբրիդային զուգակցությունների լավագույն զույգերը: Ստեղծված եւ պետփորձարկման են հանձնված սնդանի 13 փոփոխականներ, որոնցից 8-ը շրջանագված են՝ ներ են դրվում արտադրության մեջ:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ
ԵՎ ԱՌԵՎՏՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԼՐԱՏՎՈՒԹՅԱՆ
ԵՎ ՏԵԽՆԻԿԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ
(ՀայԳՏԼԳՀ)**

**ԱՎԱՆԴԱԴՐՎԱԾ ԳԻՏԱԿԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ**

**ԵՌԱՄՍՅԱ ՍԵՂՄԱԳՐԱՅԻՆ ԺՈՂՈՎԱԾՈՒ
Թիվ 1**

ԵՐԵՎԱՆ 1996

ՄԺԿ 151.9

ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Կոստանդյան Ն.Ս. Ուսանող - դասախոս հարաբերությունների ուսումնասիրությունը որպես բուհական հոգեբանության հիմնախնդիր / Վանաձորի պետ. մանկ. ին-տ: - Վանաջոր, 1995. -35 էջ. - Մատենագր. 75 ան. -Հայ. -Ավանդ. էՀայԳՏԼԳՀԻ-ում 30.11.95, թիվ 12-Ձ96

Աշխատանքը նվիրված է բուհական հոգեբանությանը վերաբերող այն ուսումնասիրությունների և հիմնադրույթների վերլուծությանը, որոնք բացահայտում են ուսանողի և դասախոսի միջև առաջացող փոխհարաբերությունների ստեղծումն ու ձևավորումը, դրանց կարգավորման և կառավարման հոգեբանական մեխանիզմները:

2. Կոստանդյան Ն.Ս. Ուսանող-դասախոս հարաբերությունների դինամիկայի հոգեբանական բազմաբնույթ դրսևորումները / Վանաձորի պետ. մանկ. ին-տ: - Վանաջոր, 1995. -19 էջ. - Մատենագր. 11 ան. -Հայ. -Ավանդ. էՀայԳՏԼԳՀԻ-ում 30.11.95, թիվ 13-Ձ96

Բացահայտվում են այն բոլոր օբյեկտիվ և սուբյեկտիվ հոգեբանական, սոցիալ-հոգեբանական և մանկավարժական գործոնները, որոնք ընկած են ուսանող-դասախոս հարաբերությունների հիմքում: Նկարագրված են այդ հարաբերությունների դինամիկայի հոգեբանական առանձնահատկությունները և դրանց զարգացման փուլերը:

ՄԺԿ 33

ԷԿՈՆՈՄԻԿԱ

3. Հովակիմյան Ի.Ռ. Ապրանքի գնի ձևավորման դրսևորումներն ազատ շուկայի պայմաններում / Հայ. պետ.

ճարտարագ. համալս.: Երևան, 1995. -5 էջ. - Մատենագր. 11 ան. - Հայ. -Ավանդ. է ՀայԳՏԼԳՀԻ-ում 03.11.95, թիվ 2-Ձ96

Հոդվածում դիտարկվում են ապրանքի գնագոյացման հարցերը միջազգային առևտրում որպես ոչ կայուն մեծության և նրա ազդեցությունը բազմաթիվ գործոնների վրա: Ապրանքի հաջողությունը արտաքին շուկայում պայմանավորված է գնի մարքեթինգյան ճիշտ քաղաքականության անցկացմամբ:

Աշխատանքում շոշափվում են նաև գների և գեղչերի տարբեր տեսակների օգտագործման հարցեր՝ կախված առք ու վաճառքի առանձնահատկություններից, նոր ապրանքի մրցունակության և նրա վաճառքի գնի գործոններից: Դիտարկված են միջոցառումներ, որոնք կիրառվում են ապրանքների վաճառքի ակտիվացման և սպառողական հատկանիշների բարելավման համար:

4. Հովակիմյան Ի.Ռ. Արտադրանքի մրցունակության ապահովումը գործողության արժեքային վերլուծության մեթոդով / Հայ. պետ. ճարտարագ. համալս.: Երևան, 1995. -6 էջ. - Մատենագր. 2 ան. -Հայ. -Ավանդ. էՀայԳՏԼԳՀԻ-ում 03.11.95, թիվ 3-Ձ96

Հոդվածում դիտարկվում են արտադրանքի մրցունակության ապահովման հիմնական գործոնները՝ կիրառելով գործառնությանից արժեքային վերլուծությունը, հատկապես գիտահետազոտական և փորձա-կոնստրուկտորական աշխատանքների փուլերում, որոնց ժամանակ ձևավորվում է արտադրանքի որակը, բարելավվում նրա շահագործողատեխնիկական և տնտեսական ցուցանիշները:

Տրված է նոր արտադրանքի գների սահմանման առավել տարածված մեթոդների վերլուծությունը, մարքեթինգի հիմունքների կիրառմամբ, արտադրատեսակների մրցունակությաբարձրացման համար, քննարկվում են արտադրողի և սպառողի միջև կապի ապահովման սկզբունքները:

5. Բերբերյան Ա.Գ. Արտադրական ծախսերի նախագծումը ֆիրմայում շուկայական պայմաններում / փորձնական մոդելներ / Հայ. պետ. ճարտարագ. համալս.: Երևան, 1995. -17 էջ. - Մատենագր. 11 ան. -Հայ. -Ավանդ. էՀայԳՏԼԳՀԻ-ում 03.11.95, թիվ 4-Ձ96

նագր. 2 ան. -Ռուս. -Ավանդ. է ՀայԳՏԼԳՀԻ-ում 25.12.95, թիվ 24-Յր96

Շուկայական տնտեսական կառուցվածքներին անցման փուլում ֆիրմաների գործունեության գլխավոր կողմնորոշիչների դերում հանդես են գալիս այնպիսի ցուցանիշներ, ինչպիսիք են արտադրանքի ինքնարժեքը, վաճառքի գները, շահույթը: այդ կապակցությամբ փորձ է տրվել բազմագործոնային արտադրական մենեջմենտի ամբողջ համակարգը թվարկված ցուցանիշներից մեկի՝ արտադրանքի ինքնարժեքի հետ կապելու ողորդմամբ, որի գլխավոր ցուցանիշի դերում ընտրության նպատակահարմարությանը հետագա հաշվարկների համար պայմանավորված է դարձել զանազան գործոնների բազմության աստիճանավորման արդյունքով: Ինքնարժեքի գործառույթի կառուցվածքի վրա ազդող բազմաթիվ փաստարկների և պարամետրերի վերլուծումը հնարավորություն է տվել ստանալու համապիտանի վերլուծական արտահայտություն, որը արտացոլում է նրա առանձին բաղադրիչների միջև գոյություն ունեցող զանազան հարաբերակցական կապերը: Այդ կապերը հաշվի առնելը, թաստարկների և պարամետրերի նախապես սահմանված սահմանափակումների ցանկացած տիրույթներում, նախադրյալ է ստեղծում ոչ միայն ինքնարժեքի արագ և ճշգրիտ հաշվարկի, այլ նաև նրա նվազագույն արժեքի որոշման ու նրան նպաստող լավագույն պարամետրերի համույթի բացահայտման համար:

6. Կարապետյան Դ.Լ. Հայաստանում առաջին ինվեստիցիոն հիմնադրամների ձևավորմանն ողոված քայլերը/ ՀՀ ԷՆ տնտեսագիտ. հետազոտ. ին-տ.: - Երևան, 1995. -8 էջ-Մատենագր. 8 ան. -Հայ. -Ավանդ. էՀայԳՏԼԳՀԻ-ում 25.12.95, թիվ 26-Յր96

Նորվածում վեր են լուծվում Հայաստանում ինվեստիցիոն հիմնադրամների ձևավորմանն ողոված քայլերը, տրվում են հիմնադրամի արտոնագրմանը, գրանցմանը և գործունեության մեկնարկին ողոված միջոցառումների հաջորդականությունը, ինչպես նաև դրա համար անհրաժեշտ նախապայմանները:

7. Կարապետյան Դ.Լ. Հայաստանում առաջին ինվեստիցիոն հիմնադրամ խնդիրներ, լուծումներ / ՀՀ ԷՆ տնտեսագիտ.

հետազոտ. ին-տ.: Երևան, 1995. - 6 էջ. - Մատենագր. 5 ան. -Հայ. -Ավանդ. էՀայԳՏԼԳՀԻ-ում 25.12.95, թիվ 27-Յր96

Նորվածում վեր են լուծվում Հայաստանում առաջին ինվեստիցիոն հիմնադրամի ստեղծմանն ողոված քայլերը նշվում են հիմնադրամի գործունեության մեկնարկի հետ կապված տեղական և կիրառական խնդիրները, ինչպես նաև դրանց հաղթահարման ճանապարհները:

8. Դարբինյան Ա.Ի., Կարապետյան Դ.Լ. Ինվեստիցիոն հիմնադրամների մուտքը կապիտալի շուկա՝ հարաբերություններ ներդրողների հետ / ՀՀ ԷՆ տնտեսագիտ. հետազոտ. ին-տ.: Երևան, 1995. - 6 էջ. - Մատենագր. 5 ան. -Հայ. -Ավանդ. է Հայ-ԳՏԼԳՀԻ-ում 25.12.95, թիվ 28-Յր96

Նորվածում վեր են լուծվում արժեթղթերի շուկայում և սեփականաշնորհման գործընթացում ինվեստիցիոն հիմնադրամների հետ կապված խնդիրները, տրվում է ինվեստիցիոն հիմնադրամի բնութագրերը որպես կապիտալի շուկան և մասնավոր ներդրողներին կապող օղակ:

9. Դարբինյան Ա.Ի., Կարապետյան Դ.Լ. Ինվեստիցիոն հիմնադրամի կառավարման յուրահատկությունները / ՀՀ ԷՆ տնտեսագիտ. հետազոտ. ին-տ.: Երևան, 1995. - 8 էջ. - Մատենագր. 5 ան. -Հայ. -Ավանդ. էՀայԳՏԼԳՀԻ-ում 25.12.95, թիվ 29-Յր96

Նորվածում վեր են լուծվում ինվեստիցիոն հիմնադրամի կառավարման, որպես հիմնադրամի արդյունավետ գործունեության հիմքի, յուրահատկությունները, դիտարկվում են կառավարիչ ընկերության կառուցվածքային կազմակերպման հարցերը և իրավասության ոլորտը:

ՄԴԿ 51

ՄԱԹԵՄԱՏԻԿԱ

10. Սողոմոնյան Կ.Ն., Այվազյան Կ.Բ. Հարթության նրկու գծերի դեկարտյան արտադրյալով վերարտադրվող մակերևույթի մաթեմատիկական մոդելը / Հայ. պետ. ճարտարագ. համալս.: Երևան, 1995. -8 էջ. - Մատենագր. 3 ան. -Ռուս. -Ավանդ. է Հայ-ԳՏԼԳՀԻ-ում 20.11.95, թիվ 7-Ձ96

Առաջարկվում է եռաչափ տարածության մակերևույթի մաթեմատիկական մոդելի ստացման մեթոդ: Մակերևույթի կոնստրուկտիվորման օգտագործվում է նրա կերպարը, որը քառաչափ տարածության 2- մակերևույթ է: Մակերևույթի կոնստրուկտիվորման ժամանակ տրվում է նրա կերպարի հարթ մոդելի կառուցման ալգորիթմը: Քառաչափ տարածության մակերևույթների բազմազանությունից ընտրված է 2- մակերևույթների այդ դասը, որոնք մոդելավորվում են P^2 հարթության նրկու $/9_1, 9_2/$ գծերի դեկարտյան առտադրյալով:

Դիտարկված են մոդելի որոշ հնարավորություններ ևր հատկություններ: Կառուցված մոդելը լրիվ փոխարինվում է մակերևույթի հավասարմանը: Անալիտիկ վերլուծության նպատակով դուրս է բերված որոնելի մակերևույթի պարամետրական հավասարումը:

11. Սողոմոնյան Կ.Ն., Այվազյան Կ.Բ. Երեք կոռոդինատների համակարգը և նրա հետ կապված եռաչափ տարածության կոնական մակերևույթների բազմության արտապատկերումը հարթության վրա / Հայ. պետ. ճարտարագ. համալս.: Երևան, 1995. -8 էջ. 6 նկ. - Մատենագր. 8 ան. -Ռուս. -Ավանդ. է Հայ-ԳՏԼԳՀԻ-ում 20.11.95, թիվ 8-Ձ96

Հոդվածում առաջարկվում է եռաչափ տարածության կոնական մակերևույթների բազմության մոդելավորման մեթոդ: Մոդելավորումը իրականացվում է հարթության երեք կոռոդինատների համակարգի միջոցով: Կառուցված մոդելի հատկությունները հնարավորություն են ընձեռնում մոդելավորել ոչ միայն կոնական մակերևույթը, այլ նաև նրա

կետերի բազմությունը: Մոնոմոդելի կառուցման ալգորիթմը հեշտուցյալը ձևափոխվում է նրա մեքենայական վերարտադրման ծրագրերի: Երեք կոռոդինատների համակարգի սևեռցած տարրերի դեպքում P^2 հարթության կետերի երկչափ բազմությունը արտապատկերում է եռաչափ տարածության կոնական մակերևույթների բազմությունը: Հարթության երեք կոռոդինատների համակարգերի բազմությունը արտապատկերվում է կոնական մակերևույթների բազմությունը՝ ընդգրկելով եռաչափ տարածության կետերի բազմությունը:

12. Սարգսյան Օ.Ն. Ֆրանկլինի շարքերի զուգամիտության և Գիբսի երևույթի մասին / Մաթեմատ. ին-տ.: Երևան, 1995. - 30 էջ. - Մատենագր. 10 ան. -Ռուս. -Ավանդ. է Հայ-ԳՏԼԳՀԻ-ում 5.12.95, թիվ 10-Ձ96

Աշխատանքում ապացուցված են կետում զուգամիտության մասին թեորեմներ Ֆրանկլինի միապատիկ շարքերի համար, ինչպես նաև դիտարկվում է λ - զուգամիտության և հավասարաչափ λ - զուգամիտության կետում Ֆրանկլինի կրկնակի շարքերի համար: Օգտագործվում է Գիբսի երևույթը Ֆրանկլինի համակարգի համար:

ՄԴԿ 54

ՔԻՄԻԱ

13. Խաչատրյան Ա.Ս., Գրիգորյան Զ.Դ., Հարությունյան Ռ.Ս., Բեյբերյան Ն.Ս. Լակտոնների ազդեցության մեխանիզմը ստիրոլի էմուլսիոն պոլիմերացման վրա: Հարուցիչ՝ ազոդիդրա-գաթթվի դինիտրիլ/ Եր. պետ. համալս.: Երևան, 1995. -6 էջ. 2 աղ., 2 նկ - Մատենագր. 6 ան. -Ռուս. -Ավանդ. է Հայ-ԳՏԼԳՀԻ-ում 25.12.95, թիվ 23-Ձ96

Ուսումնասիրված է 3-ցիան-4,5,5- երեքմետիլ- Δ^3 -բութենոլիդի /ՑԼ/ և 2-ալիլ-2-կարբեթթթի -4- բութենոլիդի /ԱԼ/ ազդեցությունը ստիրոլի էմուլսիոն պոլիմերացման /ԷՊ/ կինետիկայի վրա: Ցույց է տրված, որ

լակտոնի կոնցենտրացիայի աճմամբ ԷՊ արագության և պոլիստիրոլի միջին մոլեկուլային զանգվածի փոփոխման կորերի ընթացքը համամասնաբար են: Ընդ որում երկու մեծությունները լակտոնի 2-3 % կոնցենտրացիայի դեպքում ընդունում են առավելագույն արժեքներ: Հաստատված է, որ լակտոնները փոքրացնում են ստիրոլ/ջրային լուծույթ ֆազերի բաժանման սահմանում միջֆազային լարվածությունը և համակարգի կայունությունը: Այս երկու հակառակ ազդող գործոնների ազդեցության արդյունքում լակտոնի պարունակությամբ աճմամբ պոլիմերամոնոմերային մասնիկների չափերը ընդունում են նվազագույն արժեքներ /ՅԼ-ի 2-3% պարունակության դեպքում/: Դրանով են բացատրվում լակտոնի ներկայությամբ ստիրոլի ԷՊ ժամանակ ստացված կինետիկական օրինաչափությունները:

ՄԺԿ 55

ԵՐԿՐԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

14. Ղազարյան Գ.Հ. Կենսաէներգետիկական և երկրաշարժերի կանխագուշակման հիմնախնդիրներ / Երկրաֆիզիկայի և ինժեներային սեյսմոլոգիայի ին-տ.: Երևան, 1995. - 344 էջ, 54 նկ., 8 աղ. -Մատենագր. 42 ան. -Ռուս. -Ավանդ. է Հայ-ԳՏԼԳՀ-ում 02.11.95, թիվ 1-Ձ96

Մենագրությունը վերաբերվում է ենթադրվող երկրաշարժի օջախի տեղադիրքի հայտնաբերման ոչ ավանդական եղանակին:

Աշխատանքում ներկայացված է կենսաէներգետիկայի ժամանակակից վիճակի և կենսատեղորոշման մեթոդի տեսությունը, հիմնավորված է երկրաախտածին գոտիների որոնման մեթոդիկական և տրրված են նրանց ակտիվության որոշման ձևերը: Առաջարկված է ենթադրվող երկրաշարժի օջախի տեղադիրքի հայտնաբերման եղանակը կենսատեղորոշման մեթոդով:

Դիտարկվում է երկրաշարժի կանխագուշակման օբյեկտիվ քանական մեթոդի վերաբերող հարցը:

Աշխատությունը օգտակար է երկրաշարժերի կանխագուշակման հիմնախնդրով զբաղվող մասնագետների համար:

ՄԺԿ 5759

ԿԵՆՍԱԲԱՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

15. Ղանդիլյան Պ.Ա., Մաթևոսյան Հ.Հ. Հայաստանի աշորայի հատիկի կենսաքիմիական կազմը / Հայ. գյուղատնտ. ակադեմիա. -Երևան, 1995. - 9 էջ, -Մատենագր. 15 ան. -Ավանդ. է Հայ-ԳՏԼԳՀ-ում 16.11.95, թիվ 4-Ձ96

Ուսումնասիրված է Հայաստանի Հանրապետության տարածքում աճող դաշտամուխտային աշորայի մի քանի էկոտիպերի, միամյա և բազամյա վայրի տեսակների, աշորայի Վյատկա 2, ցորենի Բեզոստայա 1 և տրիբեկալեի Սիս 1 սորտերի ամինաթթվային կազմը: Հայտնաբերված են սպիտակուցի և լիզինի բարձր պարունակությամբ աշորայի գծեր, որ կարող է կարևոր նշանակություն ունենալ աշնանային աշորայի ստեղծման գործում:

16. Ղանդիլյան Ա.Պ. Դիպոլիդ միաատիկներից սինթեզված ալոտնոտրապոլիդ ցորենների ձևագոյացման գործնականները / »Հայաստանի կենսաբան. հանդեսի« խմբ. (Հայկ. գյուղատնտ. ակադ.) - Երևան 1995. -7 էջ, 2 աղ. -Մատենագր. 8 ան.

-Ռուս. -Ավանդ. է Հայ-ԳՏԼԳՀ-ում 29.11.95, թիվ 11-Ձ96

Ռուսումնասիրվել է կոլիսիցինի օգնությամբ փորձարարական պոլիպոլիդացման եղանակով սինթեզված 3 ալոտնոտրապոլիդների ձևագոյացման գործնականները. T. Xsinskobocoticum Candil., T. Xsinskourarticum Candil. և T. Xboeoticourarticum Candil. տնտրապոլիդների 1 հասկում եղած հատիկների կշիռը դիպոլիդ ծնողական ձևերի հետ համեմատած գերակշռել է: Առաջին 2 տնտրապոլիդներից ընտրվել են համեմատաբար արդյունավետ, հասկը ինքնուրույն չկորտրվող ձևեր: Կարծիք է հայտնվում, որ հետագա ընտրությամբ կարելի է ստանալ ձևեր, որպես ձավարային մշակաբույս օգտագործելու համար:

17. Մեսրոպյան Ն.Պ., Թաթյան Մ.Վ., Ղազարյան Կ.Ա., Աղաջանյան Ի.Ա. իմունային համակարգի առանձին օղակների գործառնության կարգավիճակի գնահատականը ցեղակիցների

բռնի մահից հետո կենդանի մնացած փորձարարական կենդանիների մոտ /» Հայաստանի կենսաբան. հանդեսի« խմբ. (Մոլեկուլյար կենսաբան. ին-տ): -Երևան 1995. -4 էջ, 2 աղ. - Մատենագր. 8 ան. -Ռուս. -Ավանդ. է ՀայԳՏԼԳՀԻ-ում 11.12.95, թիվ 14-Ձ96

Յույց է տրված, որ բռնի մահը կենդանի մնացածների մոտ փորձի 15-րդ օրում առաջացնում է հումորալ իմունային պատասխանի խիստ ընկրճում, որը վերականգնվում է 1 ամիս անց:

18. Պիպոյան Ա.Խ., Վարդանյան Լ.Կ., Մայիլյան Ռ.Ա. Սևանա լճի արծաթափայլ լճածածանի (*Carassius auratus gibelio* Bloch) կենսաբանության մասին /» Հայաստանի կենսաբան. հանդեսի« խմբ. (Հայ. պետ. մանկ. ին-տ, Եր. պետ. համալս.): -Երևան 1995. - 11 էջ, 4 աղ. -Մատենագր. 22 ան. -Ռուս. -Ավանդ. է ՀայԳՏԼԳՀԻ-ում 19.12.95, թիվ 16-Ձ96

Ուսումնասիրվել են Սևանա լճի արծաթափայլ լճածածանի (*Carassius auratus gibelio*) ձևաբանական հատկանիշների տարիքային փոփոխականության և կենսաբանական առանձնահատկությունները: Սևանա լճում լճածածանը աչքի ընկրնում գնային և քաշային աճի լավ տեմպերով: Այստեղ նա սեռահասունության է հասնում կյանքի չորրորդ (3+), երբեմն երկրորդ (1+) կամ երրորդ (2+) տարում: Բազմացման շրջանը տևում է ապրիլից մինչև սեպտեմբեր: Սևանա լճի լճածածանների մեծ մասը էգեր են. իսկ արուները փոքրաթիվ են և կազմում են ընդհանուր գլխաբանակի 4.5 %-ը:

Սևանում լճածածանները սնվում են դետրիտով, ջրային բույսերով, բենթոսով, պլանկտոնային օրգանիզմներով: Այստեղ նրանց 47.8 %-ը վարակված է *Diplostomum spathaceum* տրեմատոդի մետացերկարիաներով, որոնք մակաբուծում են ձկան ուսպնակում:

19. Պիպոյան Ա. Խ., Մայիլյան Ռ. Ա., Ծախբազյան Է. Ջ., Գրիգորյան Ա. Ֆ. Արարատյան հարթավայրի ջրամբարների արծաթափայլ լճածածանի բնորոշությունը / »Հայաստանի կենսաբան. հանդեսի« խմբ., (Հայկ. պետ. մանկ. ին-տ, Եր. պետ. համալս.): - Երևան, 1995. - 9 էջ, 4 աղ.

-Մատենագր. 10 ան. - Ռուս. - Ավանդ. է ՀայԳՏԼԳՀԻ-ում 19.12.95, թիվ 17-Ձ96

Արարատյան հարթավայրի տարբեր ջրամբարներում ուսումնասիրվել են արծաթափայլ լճածածանի բացարձակ և հարաբերական բնորոշությունները, որոնք ձկան մարմնի երկարության, քաշի և տարիքի աճին զուգնթաց աճում են: Այդ մասին են վկայում հարաբերակցության գործակիցների բարձր ցուցանիշները: Արարատյան հարթավայրի պայմաններում լճածածանը բազմանում է մարտից մինչև օգոստոս, երբ յուրաքանչյուր էգ 3-5 անգամ դնում է, ընդհանուր առմամբ, 560-ից մինչև 255300 ձկնկիթ:

20. Ադամյան Ծ.Ի., Մինասյան Ս.Մ., Սահակյան Ս.Գ., գևորգյան Է.Ս. Լիմբիկ կեղևի գրգռման ազդեցությունը Դեյթերսի անդաստակային կորիզի նեյրոնների ակտիվության վրա թրթռումից առաջ և հետո / Եր. պետ. համալս.: - Երևան, 1995. - 8 էջ, 1 աղ. - Մատենագր. 18 ան. - Ռուս. - Ավանդ. է ՀայԳՏԼԳՀԻ-ում 25.12.95, թիվ 25-Ձ95

Սուր փորձի պայմաններում արտաբջջային գրանցման մեթոդով ուսումնասիրվել է ձագարների լիմբիկ կեղևի ազդեցության բնույթը անդաստակային նեյրոնների ակտիվության վրա ցանրահաճախ թրթռումից առաջ և հետո (5 Հգ, 30 ր): Քննարկվում են անդաստակային նեյրոնների ակտիվության և ռեակտիվության փոփոխությունների հիմքում ընկած մեխանիզմները լիմբիկ կեղևի էլեկտրոնական խթանման (5 և 60 Հգ) դեպքում թրթռման ազդեցության պայմաններում:

ՄԺԿ 61

ԲԺՇԿԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

21. Նազարեթյան Է.Ե., Մարտիրոսյան Ա.Վ., Սաքանյան Հ.Հ., Գասպարյան Ա.Յու. Ասթմային վիճակի համալիր լազերաբուժությունը բրոնխային ասթմայով հիվանդների մոտ/ Եր. պետ. բժշկ. համալս.: - Երևան, 1995. - 6 էջ, 2 աղ. -

Մատենագր. 9 ան. - Ռուս. - Ավանդ. է ՀայԳՏԼԳՀԻ-ում 25.11.95, թիվ 9-ՅԲ96

Ուսումնասիրվել է բրոնխային ասթմայով 52 հիվանդների բուժման արդյունավետությունը: Հիվանդները ընդունման պահին գտնվում էին ասթմային վիճակի առաջին աստիճանում: Կախված ստացած հնտենսիլ բուժումից հիվանդները բաժանվել էին 3 խմբի. 1-ին՝ հիվանդները ստանում էին պրենոնիդոլոն և ավանդական հնտենսիլ բուժում, 2-րդ՝ պրենոնիդոլոն, ավանդական հնտենսիլ բուժում և միանգամյա լազերաբուժություն «Էլատ» և «Սպելտր» թերապևտիկ լազերային սարթերով (ալիքի նրկարությունը կազմում էր 0.89 մկմ), 3-րդ՝ նույնը, ինչ որ 2-րդ խումբը, բայց լազերային ճառագայթումը 3 ժամը մեկ՝ մինչև ասթմային վիճակից հիվանդների դուրս բերումը:

Յույց է տրված, որ բազմակի լազերային ճառագայթումը, համակցված ավանդական հնտենսիլ բուժման հետ, ցուցաբերում է ամենաբարձր արդյունավետությունը. բուժման ժամկետը նվազում է մինչև 7-12 ժամ, 480±45 մգ, առավելագույնս կարգավորվում է լիպիդների գերօթախիտացումը:

22. Ավետիսյան Է.Ա., Բակլավաջյան Հ.Գ., Միքանյան Ռ.Ն. Նշածև համալիրի բազո-լաթերալ կորիզների խմբի ներդրումների ընդհանրությունը Էլեկտրաֆիզիոլոգիական վերլուծությունը թափառող, ընդերային, նստային նյարդերի և ուղեղի կեղևի գրգռման պայմաններում / «Հայաստանի կենսաբան. հանդեսի» խմբ. (Ֆիզիոլոգիայի ին-տ.): - Մատենագր. 25 ան. - Ռուս. - Ավանդ. է ՀայԳՏԼԳՀԻ-ում 11.12.95, թիվ 15-ՅԲ96

Նմաբուտալով թմրեցված և դիտլիինով անշարժացված կատուների մոտ ուսումնասիրվել է նշածև համալիրի բազո-լաթարալ կորիզների խմբի ներդրումների ակտիվությունը և վերջիններիս ընկալիչությունը թափառող, ընդերային, նստային նյարդերի և ուղեղի կեղևի նրկարող շարժող- գագողական շրջանի գրգռման պայմաններում:

Բացահայտված է, որ ինքնաբուխ ակտիվություն ունեցող ներդրումները հիմնականում բնութագրվում են 2-10 հերց հաճախականությամբ մեկական անկանոն պարպումներով: Առանձին դեպքերում գրգռանցվել է նաև խմբային ակտիվություն:

Յույց է տրվել ուսումնասիրվող ներդրումների միանման զգայնության ինչպես ծայրամասային նյարդերի, այնպես էլ կեղևի գրգռման նկատմամբ:

Վերը նշված գրգռիչների նկատմամբ ներդրումների ճնշող մեծամասնությունը պատասխանում է նույնատիպ տոնիկ բնույթի ընկալիչներով: Տարբեր տիպի պատասխաններ գրանցվել են միայն ծայրամասային և կենտրոնական դրոնիչների նկատմամբ: 1-20 հերց հաճախականությամբ գրգռումը նպաստում է ներդրումների ընկալիչության փոփոխմանը, որն արտահայտվում է ֆոնային իմպուլսացման տոնիկ զարգացմամբ կամ դանդաղեցմամբ: Յույց է տրված ուսումնասիրվող ներդրումների զուգամիտության բարձր աստիճան (80,2%):

Բացահայտվել է, որ «Վիսցերալ» ներդրումների 71%-ը գտնվում է կեղևիագղեցության տակ:

23. Հովհաննիսյան Ն.Ռ., Գյաղունովա Գ.Պ., Կազան Է.Զ., Խոջոյան Վ.Ա. Պոլիմեկսին Մ սուլֆատի հակաբակտերիալ քսուլի որակի կատարել-լագործումը / Եր. պետ. Բժշկ. համալս.: - Երևան, 1995. - 8 էջ, 5 աղ. - Մատենագր. 7 ան. - Ռուս. - Ավանդ. է ՀայԳՏԼԳՀԻ-ում 21.12.95, թիվ 18-ՅԲ96

Հնասագոտությունների թեման լուծում է դեղագործական արդյունաբերության կողմից արտադրվող պոլիմեկսին Մ սուլֆատի 2% քսուլի որակի բարձրացման խնդիրը: Աշխատանքի նպատակն է եղել պոլիմեկսին Մ սուլֆատի նոր բաղադրություն և տեխնոլոգիա մշակելը, որպեսզի երկարացվի նրա պիտանելիության ժամկետը՝ պահպանելով առանձնահատուկ հակաբակտերիալ ակտիվությունը: Ուսումնասիրվել է պոլիմեկսին Մ սուլֆատի

քսուլի պատրաստման հնարավորությունը՝ ջրալուծ և էմուլսիոն պոլիէթիլենօքսիդային հիմքերի վրա: Մշակված կոմպոզիցիաների հակաբակտերիալ և վերքապաքինող ազդեցության հետազոտումը անց է կացվել վարակված վերքերի մոդելների վրա: Կենդանիների վրա կատարված փորձերով հաստատվել է ջրալուծ պոլիէթիլենօքսիդային հիմքով քսուլում 2 անգամ հակաբիոտիկ կոնցենտրացիայի փոքրացման հնարավորությունը՝ առանց փոփոխելու նրա յուրահատուկ հակաբակտերիալ ակտիվությունը: Քսուլների ազդեցության ժամկետը երկարացվել է մինչև երկու տարի:

24. Կուռայան Մ.Ռ., Ալավերդյան Ա.Ա., Համբարձումյան Գ.Վ. Աչքի ծիածանաթաղանթի հենքի և պիզմենտացման փոփոխությունները 12-մատյա աղու խոցային հիվանդության դեպքում / Եր. պետ. Բժշկ. համալս.: (»Մալաթիա« բժշկ. կենտ.): - Երևան, 1995. - 10 էջ, 3 նկ. - Մատենագր. 14 ան. - Ռուս. - Ավանդ. է ՀայԳՏԼԳՀԻ-ում 21.12.95, թիվ 19-Մ96

Իրիդոսկոպիայի և իրիդոգրաֆիայի միջոցով ուսումնասիրվել է 12-մատնյա աղու խոցային հիվանդության ժամանակ հիվանդի աչքի ծիածանաթաղանթի հենքային և պիզմենտացման փոփոխությունները: Բացատրվել է, որ 12-մատնյա աղու խոցային հիվանդության ժամանակ հիվանդի ինչպես աջ, այնպես էլ ձախ աչքի ծիածանաթաղանթում վերոհիշյալ օրգանի պրոնկցիալ դաշտում (5^{00} - 7^{30} հատված) դիտարկում են լակունաներ (ռոմբաձև, լանցետաձև, ճեղկաձև): Խոցային հիվանդության ժամանակ աչքերի ծիածանաթաղանթներում գոյանում են հիվանդությանը բնորոշ պիզմենտներ, որոնք գտնվում են նույն ժամանակային գոտում, ինչ որ լակունաները:

25. Ալավերդյան Ա.Ա., Կուռայան Մ.Ռ. Աչքի ծիածանաթաղանթի ինքնավար օղագոտու փոփոխությունը 12-մատնյա աղու խոցային հիվանդության դեպքում/ Եր. պետ. Բժշկ. համալս.: (»Մալաթիա« բժշկ. կենտ.): - Երևան, 1995. - 10 էջ, 3 նկ. - Մատենագր. 14 ան. - Ռուս. - Ավանդ. է ՀայԳՏԼԳՀԻ-ում 21.12.95, թիվ 20-Մ96

12-մատնյա աղու խոցային հիվանդությանը հիվանդների մոտ իրիդոսկոպիայի մեծագույն օգնությամբ ուսումնասիրվել են աչքերի ծիածանաթաղանթները: Բացահայտված է որ 12-մատնյա աղու խոցային գործընթացի ախտաբանական նրշաններից մեկը համարվում է աչքի ծիածանաթաղանթի ինքնավար օղագոտու ձևփոխումը, որն արտահայտվում է ծիածանաթաղանթի ներփքվածությամբ և երկարաձգվածությամբ 5^{00} - 7^{30} հատվածում (ըստ ժամատախտակի): Միաժամանակ այդ մեծագույն բացահայտվել են 12-մատնյա աղու խոցային հիվանդությանը զուգացվող մի շարք քրոնիկական հիվանդություններ և տրվել է այդ հիվանդությունների տոկոսային հարաբերակցությունը:

6. Մամիկոնյան Ռ.Ս., Մինասյան Ա.Մ., Հակոբյան Ա.Վ. Ռենին-անգիոտենզին-ալդոստերոնային համակարգի վիճակը պարբերական հիվանդության ժամանակ /Եր. պետ. Բժշկ. համալս.: - Երևան, 1995. - 4 էջ, 1 աղ. - Մատենագր. 6 ան. - Ռուս. - Ավանդ. է ՀայԳՏԼԳՀԻ-ում 21.12.95, թիվ 21-Մ96

Ներկայացված են պարբերական հիվանդության ժամանակ ռենին-անգիոտենզին-ալդոստերոնային համակարգի ուսումնասիրությունների արդյունքները, ելնելով արյան մեջ եղած ալդոստերոնի մակարդակից և պլազմայում եղած ռենինի ակտիվությունից: Ստացված տվյալները վկայում են, որ պարբերական հիվանդության նոպայի, ինչպես նաև բարդության՝ երիկամների կեղևի միներալակորտիկոիդային գործառույթի ակտիվությունը: Բարձրանում է նաև պլազմայի մեջ եղած ռենինի ակտիվությունը այն դեպքում, երբ ռեմիսիան ընթանում է ալդոստերոնի քանակի և ռենինի ակտիվության իջեցումով:

27. Մամիկոնյան Ռ.Ս., Մինասյան Ա.Մ., Հակոբյան Ա.Վ. Արյան մեջ ալդոստերոնի մակարդակի և պլազմայում ռենինի ակտիվության փոփոխությունները պարբերական հիվանդության ժամանակ համալիր բուժման ընթացքում/ Եր. պետ. Բժշկ. համալս.: - Երևան, 1995. - 4 էջ, 1 աղ. - Մատենագր. 6 ան. - Ռուս. - Ավանդ. է ՀայԳՏԼԳՀԻ-ում 21.12.95, թիվ 22-Մ96

Ուսումնասիրված են պարբերական հիվանդության ժամանակ կոլլսիցինաբուժման ազդեցության արդյունքները ռենին-անգիոտենզին-ալդոստերոնային համակարգի տարբեր օղակների վրա: Պարզաբանված է արյան մեջ ալդոստերոնի մակարդակի իջեցում կոլլսիցինաբուժումից հետո ինչպես պարբերական հիվանդության, այնպես էլ նրա երիկամների ամիոլիդներով բարդացած դեպքերում: Պլազմայում եղած ռենինի ակտիվությունը որոշակի փոփոխությունների ընթացքով:

28. Մելիքյան Ա.Ռ., Զիլֆյան Ա.Վ. Լիմֆոկինների դերը վնասվածքային ինֆեկցիոն գորընթացների ախտածնության մեջ և թերապիայում/Եր. պետ. Բժշկ. համալս.: (»Մալաթիա« բժշկ.

կենս.): - Երևան, 1995. - 111 էջ, 12 աղ. - Մատենագր. 218 առ. - Ռ-ուս. - Ավանդ. է ՀայԳՏԼԳՀԻ-ում 21.12.95, թիվ 30-Ձ96

Անրոբ և անանրոբ վնասվածքներում թարախա-բորբոքային գործընթացների զարգացման սկզբնական փուլերում լիմֆոցիտար մեդիատորներն ունեն արտահայտված մանրէապան ազդեցություն: Առաջին անգամ ցույց է տրցած, որ in vitro պայմաններում Staphylococcus aureus-ի աճի վրա լիմֆոցիտների կենսազորությունության արգասիքների լիպիդային և սպիտակուցային չափամասերը ունեն արտահայտված բակտերիոստատիկ ներգործություն: In vitro և in vivo պայմաններում ցույց է տրված լիմֆոցիտար մեդիատորների բակտերիոստատիկ և թերապևտիկ ներգործությունը, նրանց մատչելիությունը, աշխատանքային պարունակություններում թունավորության բացակայությունը, որոնք կանխորոշում են փորձահավանության արժանացած մեդիատորների գործնական կիրառման նպատակահարմարությունը որպես թարախային վերքերի համալիր բուժման մեջ այստեղին թերապիայի միջոց:

ՄԸԿ 62-50

ԱՎՏՈՄԱՏԻԿԱ

29. Բուակել Ջ.Խ. Սխեմատելսնիկական նախագծման հիմնահարցային կողմնորոշումը / Հայ. պետ. ճարտարագ. համալս.: -Երևան, 1995. - 15 էջ, 1 նկ. - Մատենագր. 7 առ. - Ռ-ուս. - Ավանդ. է ՀայԳՏԼԳՀԻ-ում 20.11.95, թիվ 5-Ձ96

Դիտարկված են էլեկտրոնային սխեմաների սխեմատելսնիկական մոդելավորման ալգորիթմներ, որոնք ունեն կոնկրետ հաշվողական իրավիճակին հարմարվելու հատկություն: Կատարված է այդ ալգորիթմների հատկությունների վերլուծություն: Տրված է դեֆինիցիալ հավասարումների համակարգերի կողմնորոշվող լուծումների մշակված մեթոդների նկարագրությունը:

30. Մելիքյան Վ.Շ., Բուակել Ջ.Խ. Թվային տարրի տրամաբանական մոդելի փոքր ազդանշանների համար / Հայ. պետ. ճարտարագ. համալս.: -Երևան, 1995. - 10 էջ, 2 նկ. - Մատենագր. 7 առ. - Ռ-ուս. - Ավանդ. է ՀայԳՏԼԳՀԻ-ում 20.11.95, թիվ 6-Ձ96

Դիտարկված է երկարժեք ասինքրոն տրամաբանական մոդել, որը ճշգրտորեն վերարտադրում է թվային տարրերի վարքը ինչպես ստանդարտ մուտքային ազդանշանների, այնպես էլ փոքր տեվոդությանը և ամպլիտուդայով ազդանշանների դեպքում: Նկարագրված է մոդելի վարքը տարբեր իրավիճակներում: Գնահատված է վերլուծության արդյունքների ճշգրտությունը: Բերված են տրամաբանական մոդելավորման ԷԼԱԻՄ համակարգի բնութագրերը:

ՄԸԿ 002.5

ԻՆՖԱՍՄԱՏԻԿԱ

1. Մարտիրոսյան Ջ.Գ. Տվյալների փոխանակման համակարգում (ՄՓՀ) ինֆորմացիոն սպասարկման արդյունավետության փորձարարական հետազոտությունը / Գիտ-տեխն. լրատվ. գիտա-հետազոտական ին-տ: -Երևան, 1996. - 6 էջ, - Ռ-ուս. - Ավանդ. է ՀայԳՏԼԳՀԻ-ում 21.02.96, թիվ 40-Ձ96

Բերված է ՄՓՀ-ի տեղեկատվական ինֆորմացիոն գործունեության վերլուծությունը և հետազոտությունը, ելնելով փաստաթղթերի և հարցումների տարեկան ստացված վիճակագրական տվյալներից: Այդ վերլուծությունը հիմնված է ժամանակավոր կախվածությամբ բազմանդամային մոդելի վրա: Ամենափոքր քառակուսային մեթոդի բազայի հիման վրա որոշված են մոդելի պարամետրերը, ընդ որում ապրոկսիմացված ֆունկցիան ըստ պարամետրերի մնում է գծային:

Վիճակագրական տվյալները մշակվել են ԱԷՀՄ-ի վրա ստանդարտ ծրագրին համապատասխան, որի հիման վրա որոշվել են քառակուսիների գործակիցները բազմանդամի աստիճանի փոփոխության դեպքում:

2. Մարտիրոսյան Զ.Գ. Տվյալների փոխանակման համակարգի (ՏՓՀ) գործունեությունը գնահատելու մեթոդ / Գիտ-տեխն. լրատվ. գիտա-հետազոտական ին-տ: -Երևան, 1996. - 11 էջ, - Ռուս. - Ավանդ. է ՀայԳՏԼԳՀ-ում 21.02.96, թիվ 41-Մ96

Ուսումնասիրվում է տվյալների փոխանակման համակարգի (ՏՓՀ) կազմակերպական ֆունկցիոնալ կառուցվածքը որպես դեակրիպտիվ մոդել, որի տարրերն են ինֆորմացիոն և նյութական հոսքերը, կազմակերպական կառուցվածքն ու միջոցները: Տվյալների փոխանակման ինֆորմացիոն տեխնոլոգիայի վերլուծության հիման վրա կառուցված են ներք մոդելներ, որոնք հիմնվում են ՏՓՀ-ի գործունեության և նրա ֆորմալ մոդելի առաջին փուլի վրա:

Մշակված մոդելների հիման վրա ստացվել է տարբեր տիպի չափանիշներ, օրինակ՝ ինֆորմացիայի օգտագործման աստիճանի ռափանիշը:

3. Մարտիրոսյան Զ.Գ. Տվյալների փոխանակման համակարգի (ՏՓՀ) հավանական մաթեմատիկական մոդելը / Գիտ-տեխն. լրատվ. գիտա-հետազոտական ին-տ: -Երևան, 1996. - 5 էջ, - Ռուս. - Ավանդ. է ՀայԳՏԼԳՀ-ում 21.02.96, թիվ 42-Մ96

Վերագոտվում է տվյալների փոխանակման համակարգը (ՏՓՀ) որպես ինֆորմացիայի վերամշակման ավտոմատացված համակարգի հիմնական հանգույցներից մեկը: Այդպիսի համակարգերի մաթեմատիկական մոդելի նախագծման և կառուցման համար առանձնացվում են համակարգի ներկու հիմնական տեսակետ՝ նրբ ՏՓՀ-ն հանդես է գալիս վերահաղորդիչ ինֆորմացիայի ստացման ու փոխանցման համար և նրբ տվյալների բազաները որոշ ձևափոխություններից հետո հանձնվում են համակարգից օգտվողներին:

Ինֆորմացիայի մշակումը ՏՓՀ-ի շրջանակներում ներկայացվում է ծառի տեսքով, որի բաղկացուցիչ մասերն են բազաների և փաստաթղթերի հետ կատարվող գործողությունները: Իսկ տվյալների մանիպուլյացիայի միջոցները պետք է արտահայտեն տվյալ համակարգի հատկանիշները:

ՄԺԿ 37

ՄԱՆԿԱՎԱՐԹՈՒԹՅՈՒՆ

4. Երիցյան Ա.Յու. Երկխոսության դերը ժամանակակից դպրոցում տնքստին հենվող թուսական խոսքի ուսուցման հաղորդակցական համակարգում / Հայկ. պետ. մանկ. ին-տ. - Երևան, 1996. - 30 էջ, Մատենագր. 48 ան. - Ռուս. - Ավանդ. է ՀայԳՏԼԳՀ-ում 9.01.96, թիվ 33-Մ96

Ժամանակակից հասարակության մեջ լեզվի դասավանդման հինախնդիրն է աշակերտներին սովորեցնել լեզուների լիարժեք օգտագործումը: Գործնական ուսուցման բազան պետք է լինի դպրոցը, որը, սակայն, միշտ չէ, որ հաղթահարում է այդ խնդիրները: Դպրոցի ամենօրյա գործունեության մեջ տակավին ուժեղ է լեզվի կողմնորոշման հնացած միտումը, այլ ոչ թե խոսքը: Ճիշտ են գրտնում Գ.Ս. Աղաբաբյանը և Բ.Մ. Եսանջանյանը, որ ուսուցման գործում գլխավոր ոչ թե »լեզվի մասին տվյալներ հաղորդելն է, այլ լեզվի հնարավորությունների և ունակությունների ձևավորումը«: Յուրաքանչյուր լեզվական նրևոյթ դրսնվորում է ոչ թե առանձին պարապմունքներում, այլ տնքստում, նախադասության մեջ: Հատկապես տնքստին է պատկանում ուսումնական նյութի կազմակերպական ձևերի առաջատար դերը: Հայկական դպրոցում հայ աշակերտներին թուսներնի դասավանդման կարևոր նպատակներից է երկխոսության ուսուցումը: Եթե նայենք գործնական տեսանկյունից և ելնենք այն խնդրից, որ աշակերտին պետք է տալ գործնական խոսքային ունակություններ, ապա մեր կարծիքով օտար լեզվի ուսուցման հիմքում պետք է ընկած լինի երկխոսությունը:

5. Կունդրատս Լ.Ա. Կրսսներ տարիքի աշակերտներին ներորդ լեզվի ուսուցմանում / Հայկ. պետ. մանկ. ին-տ. -Երևան, 1996. - 13 էջ, Մատենագր. 3 ան. - Ռուս. - Ավանդ. է ՀայԳՏԼԳՀ-ում 22.02.96, թիվ 43-Մ96

Հայաշակերտներին թուսներն լեզվի, ինչպես հաղորդակցման միջոցի ուսուցման գործընթացը իրենից ներկայացնում է գործուն հայեցողության, աքստրակտ մտածողության և պրակտիկայի միա-

անության: Հնտևաբար, ժուսերեն լեզվի ժամանակակից դասընթացի տարբերիչ հատկանիշը հայկական լսարանում հաղորդակցման միջոցն է:

Ուսուցման լեզվի, որպես օտար լեզվի, ուսուցման եղանակներից մեկը, որը ապահովում է դասի ընթացքում հաղորդակցման իրադրությունը, խաղն է:

Խաղը խթանում է մտավոր աշխատանքը, ակտիվացնում հուզական ազդեցությունը: Ուսուցման այդ տարբերակը զարգացնում է մտածողական բոլոր գործընթացները՝ վերլուծությունը, համեմատությունը, ընդհանրացումը: Խաղը վերացվում է ոչ մայրենի լեզվով հաղորդակցվելու վախը: Աշակերտը, լիովին կենտրոնացած հաղորդակցման իրադրության շուրջը / քանի որ նպատակային ուղղվածությունը համապատասխանում է իր հետաքրքրություններին/, տարվում է իր անձնական դերով այդ խաղում և մոռանում վախը:

Խաղով ուսուցման պրակտիկայում թաթերական տարրերի օգտագործումը սրում է լեզվաբանական ընտրության զգացումը: դարձնում է ճկուն այլալեզու բանավոր շփումը: Ավելի անուր է յուրացվում լեզվա-խոսակցական նյութը, քանի որ այն օգտագործվում է հաղորդակցման անհրաժեշտությամբ: Յուրացվող լեզուն ինքնանպատակից վերափոխվում է հաղորդակցման միջոցի:

Խաղա-իրավիճակային ուսուցման եղանակի նպատակալաց կիրառումը, որպես ուսուցման հաղորդակցական մեթոդի իրականացում, բերում է ուսուցման գործընթացի ինտենսիվության բարձրացման, որոշ չափով փոխհատուցվում է լեզվային միջավայրի բացակայությունը, ձևավորումը, քիչինչ վիզուալ:

Հոդվածում բերված են տարբեր լեզվական խաղեր, որոշ թաթերական տարրեր, որոնք աշխուժացնում են դասընթացը և հեշտանում է օրար լեզվի յուրացումը:

ՄԴԿ 51

ՄԱԹԵՄԱՏԻԿԱ

6. Վիրաբյան Գ.Վ. Մատրիցային պարամետրով օպերատորային փնջերի սպեկտրալ հատկությունների մասին /

Եր. պետ հաճախ. - Երևան, 1995. - 7 էջ, Մատենագր. 5 ան. - Ռուս. - Ավանդ. է ՀայԳՏԼԳՀԻ-ում 29.12.95, թիվ 34-Ձ96

Աշխատանքում առաջարկվում է շատ պարամետրերից կախված օպերատորային փնջերի ուսումնասիրության նոր մոտեցում, դիտարկվում են օպերատորային փնջեր, որտեղ որպես սպեկտրալ պարամետր հանդես է գալիս ոչ թե սկալյար, այլ մատրից: Մոտեցած է մատրիցային սեփական արժեքի /մ.ս.ա./ գաղափարը և ուսումնասիրված է նրանց որոշ ընդհանուր հատկություններ /պար. 1/, պար. 2-ում դիտարկվում են որոշ կիրառություններ սպեկտրալ եզրային խնդիրների համար:

Դիտարկվով եզրային խնդիրների համար մասնավորապես ստացված են անհրաժեշտ և բավարար պայմաններ /թեորեմա 2-4/, որպեսզի մատրիցային պարամետրը լինի մատրիցային սեփական արժեք:

ՄԴԿ 63

ԳՅՈՒՂԱՏՆՆԵՍՈՒԹՅՈՒՆ

7. Մամիկոնյան Հ.Մ., Եղիազարյան Բ.Հ. Հայաստանի գյուղատնտեսությունում կառուցվածքային տեղաշարժերի նպատակահարմար ուղղությունների հիմնավորումը և իրականացման մեխանիզմը /Տնտեսագիտ. հետազոտ. ին-տ. - Երևան, 1996. - 76 էջ, 13 աղ. - Հայ. - Ավանդ. է ՀայԳՏԼԳՀԻ-ում 9.01.96, թիվ 31-Ձ96

Հանրապետությունում ինքնուրույն պետականությունը, պլանային համակարգում հաստատված, հաճախ ստիպողական, տնտեսական կապերի խզումը, արդեն կատարված և սպասվող հիմնարար բարեփոխումները, այդ թվում հողի, անասնազրկաբանակի և տեխնիկայի սեփականաշնորհումը, անհրաժեշտաբար բերում են գյուղատնտեսական արտադրության նայսկինում ձևավորված բնութագրերի յուրջ փոփոխությունների, օրինակ մասնագիտացման ողորդությունների, միջարտադրական կապերի, շուկային հարմարվելու

մելխանիզմների վերանայման ու վերակառուցման: Այս գործընթացը պետք է ունենա ոչ թե տարերային, փորձ ու սխալմունքի միջոցով, այլ նախօրոք մղշակված ճանապարհով: Առաջարկվող աշխատանքում ներկայացված են նշված գործընթացի նպատակահարմար կայունացմանը ուղղված մի շարք մշակումներ ր առաջարկություններ, մասնավորապես քննարկված են Հայաստանի գյուղատնտեսությունում արտադրված սննդամթերքով ապահովելու և վերամշակող արդյունաբերությունը սնփական հումքով մատակարարելու , չուկայում արտադրանքը իրացնելու և այլ հարցեր: Հանրապետության գյուղատնտեսության զարգացման հեռանկարները աշխատանքում դիտարկված են չորս տարբերակներով, հաշվարկներն ու համեմատական վերլուծությունները կատարված են մայթեմատիկական մեթոդների ու համակարգիչների օգտագործումով: Աշխատանքը նախատեսված է գյուղատնտեսության բնագավառում գիտական ու գործնական գործունեությամբ զբաղվող մասնագետների համար:

ՄԺԿ 69

ՇԵՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

8. Բաբայան Հ.Տ., Վանգկեումանի Ս. Նախապես լուծված տարրերի լարումների հաղորդման գոտում ճոսանային ամրանի համատեղ աշխատանքը բնտոնի հետ /Եր. ճարտ.-շին. ին-տ. -Երև-վան, 1995. - 21 էջ, 1 աղ., 4 նկ. - Մատենագր. 4 ան. - Ռուս. - Ավանդ. է ՀայԳՏԼԳՀ-ում 20.02.96, թիվ 37-Յ96

Աշխատանքում քննարկված է առանց խարիսխների ճոսանային ամրանով նախապես լարված երկաթբետոնե տարրերի վերջամասերի լարվածա-դեֆորմացիոն վիճակը:

Առաջարկվում է լարումների հաղորդման գոտում ՇԽկ 2.03.01-ում ընդունված ամրանի լարումների ողղված բաշխումը անհրաժեշտ դեպքերում փոխարինել կորագծով ամրանի և բետոնի շաղկապման եռանկյուն էպյուրի համապատասխան, տարրի ճակատում շաղկապված լարման մեծությունը ընդունելով հավասար $\tau_{h\delta,max}=2\tau_{h\delta,m}$:

$\tau_{sp,x}$ լարումների առաջարկվող բաշխումը բերում է վերջամասերի ամրության և ճաքակայունության բարձրացման:

Լարումների առաջարկված բաշխման հիման վրա ստացված է բանաձև՝ ամրանը հենակներից ազատելուց հետո բետոնի նկատմամբ այդ ամրանի տեղափոխությունները որոշելու համար:

9. Բաբայան Հ.Տ., Վանգկեումանի Ս. Առանց խարիսխների ճոսանային ամրանով նախապես լարված տարրերի վերջամասերում երկայնական ճաքերի առաջացման ուսումնասիրություն (»Սպանկրիտ« սալերի օրինակով)/ Եր. ճարտ.-շին. ին-տ. -Երևան, 1996. - 15 էջ, 2 աղ., 3 նկ. - Մատենագր. 5 ան. - Ռուս. - Ավանդ. է ՀայԳՏԼԳՀ-ում 20.02.96, թիվ 38-Յ96

Նախապես լարված երկաթբետոնի տարրերում ամրանի և բետոնի հուսալի համատեղ աշխատանքի երաշխիքներից մեկը տարրի վերջամասերում երկայնական ճաքերի բացակայությունն է:

Աշխատանքում քննարկված է առանց խարիսխների ճոսանային ամրանով տարրերի վերջամասերում ամրանի երկայնքով ճաքերի առաջացման հարցը:

Տեսական ճանապարհով ստացված են բանաձևեր, որոնցով առաջին մոտավորությամբ կարելի է նշված տարրերը հաշվարկել ըստ երկայնական ճաքերի առաջացման:

Ենդիքը լուծելիս որպես հաշվարկային մոդել ընդունված σ_x է ներքին ճնշման տակ աշխատող հաստապատ խողովակը:

10. Վանգկեումանի Ս. Առանց խարիսխների ճոսանային ամրանով նախապես լարված տարրերի աշխատանքի վերլուծություն՝ հաշվի առնելով ազդեցությունը(»Սպանկրիտ« սալերի օրինակով)/ Եր. ճարտ.-շին. ին-տ. -Երևան, 1996. - 32 էջ, 13 աղ., 3 նկ. - Մատենագր. 12 ան. - Ռուս. - Ավանդ. է ՀայԳՏԼԳՀ-ում 20.20.96, թիվ 39-Յ96

Աշխատանքում »Սպանկրիտ« սալերի օրինակով կատարված է առանց խարիսխների ճոսանային ամրանով նախապես լարված երկաթբետոնե տարրերի աշխարանքի (ամրության, ճաքակայունության

և դեֆորմացիաների) վերլուծություն՝ բեռնվածքների հիմնական և հատուկ գուգակցումից՝ հաշվի առնելով ուղղաձիգ սեյսմիկ ազդեցությունը:

Յույց է տրված, որ ՀՀ սեյսմակայուն շինարարության նախագծման նորմերով սեյսմիկ շրջաններում, առանց հատուկ խարխիսների ճապանային ամրանով նախապես լարված երկաթբետոնե տարրերի կիրառության, հախտն արգելքը անհիմն է:

Ի հայտ են բերված այն հաշվարկային պայմանները, որոնք բավարարման դեպքում K-7 դասի ճոպանային ամրանով տարրերը անարգել կարելի է կիրառել սեյսմիկ շրջանների շինարարությունում:

ՄԻԿ 79

ՄՊԱԲՏ

11. Մանույան Խ.Ա. Մարմնի ընդհանուր խանրության կենտրոնի առանձին մասերի տատանումները թիավարության ընթացքում և նրանց ազդեցությունը մակույկի արագացության վրա

/ Հայ. պետ. ճարտարագիտ. համալս. - Երևան, 1996. - 27 էջ, 5 նկ. - Մատենագր. 32 ան. - Ռուս. - Ավանդ. է ՀայԳՏԼԳՀ-ում 9.01.96, թիվ 32-Ար96

Աշխատանքի խնդիրն է ուսումնասիրել մարդու /թիավարելի/ ընդհանուր ծանրության կենտրոնի ու մարմնի առանձին մասերի տատանումները թիավորման ընթացքում և դրանց ազդեցությունը մակույկի տեղաշարժման արագության վրա: Դրա հիման վրա կարելի է բարելավել թիավարողի տեխնիկան, ի հայտ բերել տեխնիկական պատրաստականության և կատարելագործման արդյունավետ միջոցներ:

ՄԻԿ 82

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

12. Ավետիսյան Ս.Հ., Ակսել Բակունց և Մ. Գալշոյան /Գրականության ին-տ. -Երևան, 1996. - 15 էջ, - Մատենագր. 6 ան. - Հայ. - Ավանդ. է ՀայԳՏԼԳՀ-ում 20.06.96, թիվ 35-Ար96

Ա. Բակունցի արձակի պոետիկական համակարգի անմիջական ժառանգորդներից մեկը արդի հայ արձակում մուշեղ Գալշոյանն էր, որ նոր հունի մեջ դրեց Ա. Բակունցի գեղագիտական սկզբունքները, սեփական հյուրի և թեմայի մեջ զարգացրեց դրանք: Հուշը, տնսիլը, պատրանքը գերիշխող հնարանքներն են թե Բակունցի, քե Գալշոյանի արձակում, ինքը պայմանավորված է հերոսների կենսագրությամբ, ճակատագրի դրամատիկ ընթացքով: Հերոսների ինքնամոտի կեցությունը համատարած է Ա.Բակունցի և Մ. Գալշոյանի արձակում. այն հեղինակային և գեղարվեստական իրականության տարրերից է, մյուս կողմից՝ երևույթը հետևանք է հերոսների դժվարին կեցության: Թե Ա. Բակունցի, թե Մ. Գալշոյանի հերոսների կյանքը ավարտում է այնպիսի շրջանում, երբ հոգևոր և ֆիզիկական ներաշնակ կեցությունը խախտվում է, երբ կործանվում են հերոսի երազներն ու տենչերը, և մահը դառնում է ապրած կյանքի հոգևոր բարձրակետը, որով իմաստավորվում է հերոսի անցած ուղին: Հերոսը սովորաբար մեռնում է այն կենսական տարածքում, որն ամբողջացնում էր հոգու կարոտները: Ա. Բակունցի և Մ. Գալշոյանի արջակը միավորում է նրանց հերոսների աշխարհընկալում բանաստեղծական-ռոմանտիկական կերպը, երևույթների խորհրդանշական ընկալումը: Նրանք ապրում են մարդկային նախնական, բնական արժեքներով, ինչն էլ նրանց կտրում է միջավայրից: Իրենց հոգևոր սնուցումը չստանալով իրականությունից՝ նրանք ամփոփվում են իրենց հոգում և ապրում հուշի և տնսիլի ոլորտներում:

13. Ավետիսյան Ս.Հ. Համատեղ և Ակսել Բակունց /Գրականության ին-տ. -Երևան, 1996. - 11 էջ, - Մատենագր. 7 ան. - Հայ. - Ավանդ. է ՀայԳՏԼԳՀ-ում 20.02.96, թիվ 36-Ար96

Մարդ-բնություն առնչության գեղագիտական ընկալումը հարազատացնում է հայ արձակի երկու տաղանդավոր դեմքերի՝ Համաստեղին և Ա. Բակունցին: Թեև Ա.բակունցն համեմատաբար ուշ է գրել իր պատմվածքները, այնուամենայնիվ դրանց և Համաստեղի արձակի հարազատությունը ոչ թե ուղղակի ազդեցության, այլ հոգևոր կերտվածքի, աշխարհընկալման »Եղբայրակցության« հետնվանքն է:

Համաստեղի և ա. Բակունցի հերոսներին միավորում են նրանց բնապաշտական մտքումները, բնության տարրերի հետ հոգևոր այնպիսի առնչությունները, ուր մարդն ու կենդանին ձուլվում են՝ որպես մեծ բնության հավերժական օրենքներով ապրող գյուղեր: հերոսների / Փիլիկի, Պետու, Մարգարի, Բադու և մյուսների/ հոգևոր աճն ու հասունացումը ներդաշնակ են բնությանը: Չափազանց մեծ է հերոսի և բնության որոշակի ոլորտի /տվյալ դեպքում՝ կենդանական աշխարհի/ կապը: Հերոսը լիարժեք է միայն այդ ոլորտում, դա նրա գոյության լավագույն ձևն է:

Թեև Համաստեղը, թեև Ա. Բակունցը գրականություն բերեցին ճշմարիտ, կենդանի, բնական գոյություններ՝ հրաշալի գիտակցելով, որ մարդ արարածը նախ և առաջ կենսաբանական երևույթ է, մի փոքրիկ բնություն է, ուր գործում են նույն օրենքները, ինչ մյուս տեսակների մեջ, և որքան էլ նա վերածվի հասարակական գոյի և սոցիալականանա, հիմքը բնականն է, և ցանկացած շեղում դրանից ցավ է, ողբերգություն ու կործանում:

YDK 33

ԷԿՈՆՈՄԻԿԱ

1. արշակյան Ա.Հ., Արշակյան Մ.Ա., Ճաղարյան Ա.Գ. Քիմիա-տեխնոլոգիական համակարգերի (ՔՏՀ) ստեղծման և գործարկման կապիտալ ծախսերի հաշվարկման նեթոդիկա, Եր. Ժող. տնտես. ին-տ. -Երևան, 1996. - 20 էջ, 10 աղ., 1 նկ. - Մատենագր. 3 ան.: - Ռուս. - Ավանդ. է ՀայԳՏԼԳՀ-ում 19.03.96, թիվ 50-Ար96

Հողվածում դիտարկվում է քիմիա-տեխնոլոգիական համակարգերի (ՔՏՀ) ստեղծման և գործարկման ընդհանուր կապիտալ ծախսերի հաշվարկման նոր մոտեցում: Տարատեսակ ՔՏՀ-երի ստեղծման համար կատարվող կապիտալ ներդրումների վերլուծությունը թույլ է տալիս որոշել կապիտալ ծախսերի առանձին բաղադրիչների փոփոխման տիրույթը, որն իր հերթին հնարավորություն է տալիս որոշել ընդհանուր կապիտալ ծախսերի մեծությունը յուրաքանչյուր բաղադրիչի փոփոխման հայտնի տիրույթի դեպքում: Յույց է տրված, որ քիմիա-տեխնոլոգիական տարբեր տեսակի սարքավորումների արժեքների առկայության դեպքում կարելի է մեծ ճշտությամբ որոշել ՔՏՀ-ի ստեղծման համար ընդհանուր կապիտալ ներդրումների չափը: Վերլուծված է կոնկրետ տիպային ՔՏՀ-երի կապիտալ ներդրումների ձևավորման գործընթացը և որոշված են այն հիմնական գործոնները, որոնք ազդում են նրանց մեծության վրա: Հիմնավորված է, որ նշված գործոնները անուշադրության մատնելը կարող է բերել իրական մեծություններից կապիտալ ներդրումների մեծ շեղումների:

YDK 57/59

ԿԵՆՍԱԸԱՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2. Զորաբյան Ա.Ս., Տիրունի Ֆ.Ն., Խաչատրյան Ս.Վ. Հանքային աղերի ազդեցությունը սերինի սինթեզի վրա *Brevibacterium flavum* C-2 մանրէների մոտ /Եր. »Կենսատեխնոլոգիա« ԳՀԻ: -Երևան, 1996. - 8 էջ, 1 աղ., 1 նկ. - Մատենագր. 14 ան. - Ռուս. - Ավանդ. է ՀայԳՏԼԳՀ-ում 26.03.96, թիվ 51-Ար96

Ուսումնասիրված է սննդատու միջավայրում որոշ հանքային աղերի ազդեցությունը սերինի կենսասինթեզի ժամանակ: Յույց է տրված, որ K^+Na^+ իոններ պարունակող աղերը փոփոխում են ամինոթթուների քանակը: առաջույց է տրված, որ այդ դիտարկվող տարբերությունը պայմանավորված է բջիջներից ամինաթթուների դուրս բերման տրանսպորտային բնութագրերով:

3. Տիրունի Ֆ.Ն., Կարաբեկով Բ.Պ., Ջուրաբյան Ա.Մ., Բուլոյան Ա.Ա., Բալաբեկյան Ծ.Ռ., Ավետիսյան Գ.Ե. Օրգանական թթուների ազդեցությունը ամինաթթուների կենսասինտեզի վրա *Brevibacterium flavum* մանրթննրով /Եր. «Կենսատեխնոլոգիա» ԳՀԻ: -Երևան, 1996. - 11 էջ, 4 աղ.; - Մատենագր. 10 ան. - Ռուս. - Ավանդ. է ՀայԳՏԼԳՀԻ-ում 26.03.96, թիվ 52-Մ96

Յոլյց է տրված, որ 0,5 % կաթնաթթուն, քաղցրաթթուն, կիտրանաթթուն յուրացվում են պրոլին, վալին, հիստիդին, սերին արտադրող մանրէներով: Սակայն նրանց առկայությունը սը-ննդամիջավայրում կենսասինթեզի ժամանակ ճնշվում է վալինի սինթեզը, ավելացնում պրոլինի քանակը, չի ազդում հիստիդին սինթեզի վրա: Կաթնաթթուն (0,5%) ավելացնում է պրոլինի քանակը 40%, փոփոխում ուղեկցող թթուների քանակը:

4. Խուդավերդյան Ա.Յու. Անտիկ շրջանի Բենիամինի դամբարանադաշտի հնէամարդաբանությունը //»Հայաստանի կենսաբան. հանդեսի« խմբ., (Հնագիտ. և ազգագր. ին-տ) -Երևան, 1996. - 22 էջ, 6 աղ. 2 նկ.: - Մատենագր. 2 ան. - Ռուս. - Ավանդ. է ՀայԳՏԼԳՀԻ-ում 15.04.96, թիվ 68-Մ96

Բենիամինի դամբարանադաշտի հնէամարդաբանական նյութի մանրակիրտ վերլուծությունը թույլ է տվել բացահայտել Ծիրակի սարահարթի անտիկ շրջանի բնակչության բարդ մարդաբանական կազմը՝ էթնիկական անհամասեռությունը: Հնէամարդաբանական ինֆորմատիվությունը և վերջնական տվյալների հավաստիությունը պայ-մանավորված են վերջինի ժամանակակից հնէամարդաբանության պահանջներին համապատասխանող համակողմնակի վերլուծությամբ: Գանգաբանական, ձևաբանական ուսումնասիրությունը ի հայտ է բերել գանգերի երկու խումբ: Երկու դեպքում էլ ներկայացված է եղել դոլիխոկեֆալ տիպը: Առաջին խմբի սղամարդկանց գանգերը ախտորոշ-վել են որպես դասական եվրոպոիդ ինտրանի: Երկրորդը նույնպես եվրոպոիդ է, հարթադեմքության որշ տարրերով: Նման պատկեր է ստացվել նաև կանաչի գանգերը ախտորոշելիս, որը հնարավորություն է

տալիս ենթադրել բնակչության կազմում եղած ոչ տեղաբնիկների առկայությունը:

5. Պապոյան Ա.Ս., Մարտիրոսյան Մ.Ե., Խաչատրյան Կ.Ա., Մարտիրոսյան Գ.Օ. Հիպոկինեզիայի ազդեցությունը կենդանիների պայմանական ռեֆլեկտոր գործունեության վրա / »Հայաստանի կենսաբան. հանդեսի« Խմբ. -Երևան, 1996. - 4 էջ, - Մատենագր. 4 ան. - Ռուս. - Ավանդ. է ՀայԳՏԼԳՀԻ-ում 30.04.96, թիվ 71-Մ96

Պայմանական ռեֆլեքսի մեթոդով ցույց է տրված, որ երչկարատև հիպոկինեզիան բերում է ինչպես ընդհանուր, այնպես էլ ռեֆլեկսա-պայմանական վարքագծի կտրուկ փոփոխություններ, առաջացնելով կայուն ախտաբանություն, որը բնորոշված է արտահայտված էմոցիոնալ և մոտիվացիայի լաբզարումներով, սոմատա-վեգետատիվ դիսֆունկ-ցիաներով:

ՄԺԿ 61

ԲԺՇԿԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

6. Մելիքյան Ա.Ռ. Լապարասկոպիկ խոլեցիստեկտոմիայի կիրառումը սուր խոլեցիստիտի ժամանակ / »Մալաթիա« բժշկական կենտրոն: -Երևան, 1996. - 99 էջ, 9 աղ., 4 նկ. - Մատենագր. 230 ան. - Ռուս. - Ավանդ. է ՀայԳՏԼԳՀԻ-ում 13.03.96, թիվ -Մ96

Մենագրության մեջ բերված են հեղինակի կլինիկական և պարակլինիկական հետազոտությունները, որոնց մեջ մեծ համոզվածությամբ հիմնավորում է լապարասկոպիկ մեթոդի կիրառման նպատակահարմարությունը սուր խոլեցիստիտով հիվանդների վիրահատության ժամանակ: Մշակվել են փաստարկներ և բացահայտվել է սուր խոլեցիստիտով հիվանդների մի խումբ, որոնց նպատակահարմար է կատարել լապարասկոպիկ խոլեցիստեկտոմիա: Բերվում են նկատառումներ կլինիկական պրակտիկայի մեջ ներդրելու և

կատարելագործելու լապարասկոպիկ խոլեցիստէկտոմիայի տեխնիկան սուր խոլեցիստիտի ժամանակ:

7. Մելիքյան Ա.Ռ. Յուդայիրոնի դերը պերիտոնիտների համալիր բուժման ժամանակ / »Մալաթիա« բժշկական կենտրոն: -Երևան, 1996. - 98 էջ, 8 աղ. - Մատենագր. 210 ան. - Ռուս. - Ավանդ. է ՀայԳՏԼԳՀԻ-ում 13.03.96, թիվ 49Ap96

Մենագրության մեջ բերված են հեղինակի անձնական հետազոտությունները պերիտոնիտի ժամանակ յոդայիրոնի տեղային թերապևրիկ ազդեցության վերաբերյալ: Համալիր հետազոտությունների օգնությամբ ցույց է տրված, որ տեղային բորբոքային գործընթացների վրա յոդայիրոնը թողնում է տեղային ազդեցություն: Մեծ քակարկոթյամբ կլինիկական տվյալների և թործարարական հետազոտությունների շնորհիվ առաջին անգամ ցույց է տրված և ախտաբանորեն հիմնավորված է յոդայիրոնի բուժական արդյունավետությունը: Դա հիմնականում պայմանավորված է յոդայիրոնի բակտերիոցիդ հատկությամբ, ռեցեպտորային գործընթացների ակտիվացմամբ, յուրահատուկ և ոչ յուրահատուկ իմունաբանական գործընթացների կայունությամբ:

8. գրիգորյան Ա.Յու. Լիմֆոցիտար մեդիատորների մասնակցությունը սիմպատա-ադրենալային համակարգի ֆունկցիայի կարգավորման գործում սուր ստրենսի պայմաններում / Եր. պետ. բժշկ. համալս. -Երևան, 1996. - 5 էջ, - Մատենագր. 12 ան. - Ավանդ. է ՀայԳՏԼԳՀԻ-ում 10.04.96, թիվ 59-Ap96

Ուսումնասիրված է լիմֆոցիտար մեդիատորների դերը սիմպատա-ադրենալային համակարգի կարգավորման գործում օկզանիզմի էքստրենալ պայմաններում: հաստատված է, որ առնետների 24 ժամյա իմունոբիոլոգացումն առաջացնում է ադրենալինի (Ա) պարունակության իջեցում մակերիկամներում, արյան կատեխոլամինների քանակի բարձրացում, Ա-ի ավելավում միոկարդում: Ստրենսից առաջ լիմֆոցիտների կենսագորգունեության արգասիքների (ԼԿԱ) նախապես ներարկումը կանխում է արյան մեջ կատեխոլամինների քանակի ստրենսի ժամանակ դիստոլ բարձրացումը և նորմալացում դրանց քանակը միոկարդում: Լիմֆոցիտար մեդիատորների նախապես ներարկումը

ստրենսից առաջ լարդում և մակերիկամներում կանխում է ստրենսի համար բնորոշ գլյուկոզա-6-ֆոսֆատդիհիդրոգենազայի ակտիվության ախտաբանական բարձրացումը: Լիմֆոցիտար մեդիատորները պետք է դիտել որպես նյութեր, որոնք էքստրենալ պայմաններում կարգավորում են սիմպատա-ադրենալային ախտաբանական համակարգի ֆունկցիան:

9. Միսակյան Ա.Հ., Թադևոսյան Վ.Բ., Խարոյան Վ.Ի. պրոտոզոոզների ժամանակ իմունոգենեզի մի քանի առանձնահատկությունները /Եր. պետ. բժշկ. համալս. -Երևան, 1996. - 7 էջ, 2 աղ. - Մատենագր. 18 ան. - Ավանդ. է ՀայԳՏԼԳՀԻ-ում 10.04.96, թիվ 60-Ap96

Բերվում է առնետների տրիպանոսոմայի, հիստոլիստիկ ամեոբայի, ադիթային բալանտիդոմի և նրանց օբլիգատ տերների ընդհանուր հակածինային բաղադրիչների փորձարարական հետազոտությունների տվյալները: Թվարկված կենդանիների հակածինների օգնությամբ ճագարներին ենթարկելով պարէնթերալ իմունացման, ստացվել են բարձր ակտիվության հակաշիժոններ: Կոմպլոմինտի կապման խաչաձև ռեակցիաների միջոցով հայտնաբերվել է մակաբույծների և տերների հակածինային ընդհանրություն այն դեպքում, երբ այդպիսին բացակայում է ազաս ապրող ձևերի մոտ: Հակածինային ընդհանրության առկայությունը, որը բացատրվում է մակաբույծի և տիրոջ փոխադարձ հարմարվողականությամբ, միաժամանակ կարող է պատճառ հանդիսանալ այն իմունաբանական առանձնահատկությունների համար, որոնք դիտվում են պրոտոզոոզների ընթացքում:

10. Միսակյան Ա.Հ., Մաթևոսյան Հ.Շ., Թուրոյան Ա.Տ. Ադրենալինի վնասարար ազդեցությունը սրտամկանի վրա և նրա դեղաբանական շտկումը /Եր. պետ. բժշկ. համալս. -Երևան, 1996. - 5 էջ, 2 աղ. - Մատենագր. 10 ան. -Ռուս. - Ավանդ. է ՀայԳՏԼԳՀԻ-ում 10.04.96, թիվ 61-Ap96

Թվով 70 սպիտակ առնետների վրա ուսումնասիրվել է ճարպերի պերոքսիդային օքսիդացումը, մագնոթային համակարգի վիճակը և կրնատինկինազայի պարունակությունը արյան պլազմայում ադրենալինի տոքսիկ դեղաչափի ներարկման պայմաններում:

Մօտամանակ օգտագործվել է ինը ալ դեղանյութ կանխելու համար ադրենալինի տոքսիկ, վնասարար ազդեցությունը սրտամկանի վրա: Հաստատված է, որ ադրենալինի տոքսիկ դեղաչափի ներարկումը օրգանիզմ առաջացնում է արյան մազանոթային շրջանառության խիստ խանգարում, որը կրում է օջախային բնույթ: Դրա հետ միաժամանակ սրտամկանում դալիորեն ուժեղանում է ճարպերի պերօքսիդային օքսիդացումը և արյան պլազմայում կրեատինկինազայի բաղադրությունը՝ համապատասխանաբար 425 % և 104 %: Այդ պայմաններում ինտալի նախապես և հետագա ներարկումը զգալիորեն լավացնում է մազանոթային արյան շրջանառությունը գործող մազանոթների հաշվին: այդ բոլորն ուղեկցվում է ճարպերի պերօքսիդային օքսիդացման նվազմամբ և արյան պլազմայում կրեատինկինազայի պակասեցմամբ: Ենթադրվում է, որ ինը ալ այդպիսի ազդեցությունը միկրոշրջանառության վրա իրականացվում է ճարպերի պերօքսիդային օքսիդացման սահմանափակմամբ, ինչպես նաև պարարտ բջիջների մեմբրանի վրա կայունացնող հատկությամբ:

11. Հայրապետյան Թ.Վ., Քոչարյան Ա.Պ. Ռենին-անգիոթենզին-ալդոստերոնային համակարգի, կորտիզոլի և համաձիզողային հորմոնի կենսաբանական ժամանակային երկամների արտադատական ֆունկցիայի շուրջօրյա ռիթմիկության ձևավորման գործում /Եր. պետ. բժշկ. համալս. - Երևան, 1996. - 5 էջ, 1 աղ. - Ռուս.- Ավանդ. է ՀայԳՏԼԳՀ-ում 10.04.96, թիվ 62-Ձ96

Ուսումնասիրված է արյան ֆիզիկա-քիմիական ցուցանիշների և հորմոնների շուրջօրյա տատանումների նշանակությունը երկամների արտադատական ֆունկցիայի ռիթմիկության վրա առողջ մարդկանց մոտ: Հետազոտության արդյունքները հաստատում են, որ առողջ մարդկանց մոտ էլեկտրոլիտների (Na, K, Cl) կոնցենտրացիան արյան մեջ և դրանց հեռացումը մեզով, պլազմայում ռենինի, կորտիզոլի, ալդոստերոնի կոնցենտրացիան, ինչպես նաև կծիկային ֆիլտրացման արագության և երկամների պարթիալ ֆունկցիաները կրում են շուրջօրյա բնութագրեր: Ընդ որում երկամների արտադատական ֆունկցիաների շուրջօրյա ռիթմերը կախված չեն էլեկտրոլիտների կոնցենտրացիայի շուրջօրյա ռիթմերից: Այդ ռիթմերի ձևավորման

գործում մեծ դեր են խաղում կծիկային ֆիլտրացման արագության շուրջօրյա տատանումները և նեֆրոնների դիստալ հատվածի բջիջների ֆունկցիոնալ վիճակը, որը կախված է ռենին-անգիոթենզին-ալդոստերոնային համակարգի և կորտիզոլի շուրջօրյա տատանումներից:

Այսպիսով, երկամների արտադատական ֆունկցիայի շուրջօրյա տատանումների հիմքում ընկած է երկամների կծիկային և խողովակային ապարատի ֆունկցիոնալ վիճակի շուրջօրյա տատանումների ժամանակային համաձայնեցվածությունը, որը պայմանավորված է ռենին-անգիոթենզին-ալդոստերոնային համակարգի և կորտիզոլի տատանումներով:

12. Հայրապետյան Թ.Վ., Քոչարյան Ա.Պ. Քրոնիկ գլոմերուլոնեֆրիտով առնց երկամային անբավարարության և երկամային անբավարարությամբ հիվանդների մոտ կծիկային ֆիլտրացման արագության, արտադատական և պարթիալ ֆունկցիաների շուրջօրյա տատանումները /Եր. պետ. բժշկ. համալս. - Երևան, 1996. - 8 էջ, 2 աղ. - Ռուս.- Ավանդ. է ՀայԳՏԼԳՀ-ում 10.04.96, թիվ 63-Ձ96

Կլինիկական կենսառիթմաբանական հետազոտությունները հիմնովին հաստատում են, որ օրգանիզմի ֆիզիոլոգիական ֆունկցիաների կենսաբանական ժամանակային կառուցվածքների շեղումները ախտաբանական երևույթների վաղաժամ արտահայտություններ են և մեծ դեր կարող են խաղալ հիվանդությունների առաջացման մեխանիզմների և ախտածան բացահայտման մեջ: Առանց երկամային անբավարարության գլոմերուլոնեֆրիտով հիվանդների մոտ պահպանված են էլեկտրոլիտների և միզանյութի հեռացման կենսառիթմերի 24-ժամյա պարբերականություն, ինչպես նաև այդ ռիթմերի ակրոֆագների սինքրոնացում: Սակայն այդ ռիթմերի ակրոֆագները տեղաշարժվում են դեպի գիշերային ժամերը: Քրոնիկ երկամային անբավարարությամբ հիվանդների մոտ հանգարված են ինչպես հաճախականության սպեկտրը, այնպես էլ վերը նշված ռիթմերի ակրոֆագները: Քրոնիկ երկամային անբավարարության առաջին աստիճանի հիվանդների մոտ դրսևկորվում են երկամների արտադատական ֆունկցիայի

մինչօրյա (ուլտրադիան) ռիթմեր 12-ժամյա պարբերությամբ և ակրոֆազները գիշերվա ժամերին են: Անբավարարության նրկորդ աստիճանի հիվանդների մոտ ռիթմերի հաճախականության ապասինքրոնացում է նկատվում՝ դրսևվորվում են ռիթմեր նրկու հարմունիկ բաղադրիչներով.

ա) Na-ի և Cl-ի արտազատման ռիթմերը կրում են մինչօրյա (ուլտրադիան) և շուրջօրյա (ցիրկադիան) բնութագրեր;

բ) Ջրի հեռացման ռիթմերը՝ մինչօրյա (12 ժամյա) և ինֆրադիան (30 ժամյա) բնութագրեր:

13. Բոռյան Ռ.Ղ., բաղդասարյան Մ.Գ. Actobiol-liver պատրաստուկի հնպատոտրոպ ազդեցության ուսումնասիրությունը քրոնիկ ակտիվ B հպատիտով տառապող հիվանդների մոտ /Եր. պետ. բժշկ. համալս. -Երևան, 1996. - 9 էջ, 3 աղ. - Հայ.- Ավանդ. է ՀայԳՏԼԳՀԻ-ում 10.04.96, թիվ 64-Ձ96

Տրված են քրոնիկ ակտիվ B հնպատիտով տառապող 14 հիվանդների մոտ Actobiol-liver-ի ազդեցողության ուսումնասիրության արդյունքները շուրջ 3 տարիների ընթացքում (1992-1994): Ուսումնասիրությունները տարվել են կրկնակի կույր եղանակով: Ուսումնասիրության ընթացքում հիվանդների մի խումբ Actobiol, իսկ մյուս խմբը՝ placebo, 100 կաթիլ՝ օրը 4 անգամ, 3 շաբաթ տևողությամբ: Մինչև բուժումը սկսելը և բուժման ընթացքում պարպերաբար՝ 1, 2 շաբաթ անց, 3, 6 ամիս անց, արյան շիճուկում որոշվել է ամինոտրանսֆերազների (ALT և AST) ակտիվությունը, ընդհանուր սպիտի պարունակությամբ, ալբումինային և գլոբուլինային ֆրակցիաները, ընդհանուր բիլիռուբինը, կատարվել են շճաբանական քննություններ (HBsAg, HBeAg, HBeAb), լյարդի ուլտրաճայնային հետազոտություն: Ինչպես ցույց են տրվել արդյունքները, Actobiol-liver-ի նրկարտու (3 շաբաթվա ընթացքում) օգտագործումը քրոնիկ ակտիվ B հնպատիտով տառապող հիվանդների մոտ բերել է լյարդի ֆունկցիայի վերականգման, որը դրսևորել է ALT և AST ակտիվության նբազումով, գլոբուլինների քանակության իջեցումով արյան մեջ, լյարդի չափերի կանոնավորումով և սուբյեկտիվ վիճակի բարելավումով: Պետք է նշել, որ Actobiol-liver-ի օգտագործումը ոչ մի հիվանդիչ մոտ չի ուղեկցվել կողմնակի որևէ ազդեցությամբ:

14. Ուսագովա Լ.Վ., Չիչոյան Ն.Բ., Մելիքյան Ե.Ա. Բուսալսեմերը հայ միջնադարյան բժշկության մեջ և դրանց կիրառման արդի ուղիները /Եր. պետ. համալս. -Երևան, 1996. - 3 էջ, -Մատենագր. 7 ան. - Ռուս.- Ավանդ. է ՀայԳՏԼԳՀԻ-ում 10.04.96, թիվ 65-Ձ96

Տրված են բուսալսեմերի կիրառման համեմատական վերլուխության տվյալները միջնադարյան հայ և արաբական բժշկության, իչպես նաև արդի բժշկադեղագործական բնագավառում մեր նրկրում և արտասահմանում (ըստ ֆրանսիական տեղեկատուների): ներկայացված են հայաստանում առկա բուսալսեմերի պաշարների օգտագործման հնարավորությունների վերաբերյալ հեղինակների նախնական հետազոտությունների արդյունքները:

15. Բաղայան Ա.Գ., Ղազարյան Ա.Բ., Գրիգորյան Ն.Ֆ. Կենտրոնական հեմոդինամիկայի վիճակը ոչ կայուն ստենոկարդիայով հիվանդների մոտ՝ համակցված զարկերակային հիպերտենզիայով և հետինֆարկտային կարդիոսկլերոզով /Եր. պետ. բժշկ. համալս. -Երևան, 1996. - 5 էջ, - Մատենագր. 5 ան. - Ռուս.- Ավանդ. է ՀայԳՏԼԳՀԻ-ում 10.04.96, թիվ 32-Ձ96

ԱՐԾ-ի մակարդակի նվազման նկատմամբ ԸԽԱԴ-ի անհամարափ պատասխանի վերաբերյալ ստացվախ տվյալները վկայում են հիվանդների այդ խմբում կենտրոնական և ծայրամասային հեմոդինամիկայի միջև հարաբերությունների խանգարման մասին:

16. Թառայան Ա.Ա. Ախտորոշման տևսության գաղափարի քննադատական դիտողությունները /Եր. պետ. բժշկ. համալս. - Երևան, 1996. - 4 էջ, Մատենագր. 4 ան. - Ռուս.- Ավանդ. է Հայ-ԳՏԼԳՀԻ-ում 10.04.96, թիվ 67-Ձ96

Ախտորոշման տևսության գաղափարի բնույթի ուսումնասիրությունը հայտնաբերել է, որ այն կատարյալ չէ նրկու հիմնական պատճառով.

1. տվյալ տևսությունը կազմող հասկացությունների համակարգը իրենց կապերի լիակատարությամբ պարզորոշ և ամբողջական չի

հայտնաբերված, չի գտնվել հիմնադրող առաջնային սկզբունքը, որից սկսում է զարգանալ տնտեսության գաղափարը,

2. ալիստորոշման տնտեսության կառուցման մեթոդը կատարյալ չէ: Այն հայտնաբերվում է տնտեսության իդեալականացված օբյեկտի կառուցման սկզբունքով, ալիստորոշման մասին գիտելիքի հե-տագա աճի մեթոդաբանական ֆունկցիայի և ալիստորոշման տնտեսության պրակտիկ իրացման կլինիկական իմացության մեջ: Երկրորդ պատճառը գերտ կապված է առաջինի հետ, որովհետև միայն տնտեսության սկզբունքների և օրենքների համակարգի ամբողջականությունն է ապահովում մեթոդաբանական ֆունկցիայի գաղափարի համար:

Զգալի է ալիստորոշման տնտեսության կառուցման տրամաբանամեթոդական սկզբունքների և կլինիկական պրակտիկայում նրա գործելու հետազոտման վերաբերյալ գիտական հրապարակումների պակասը:

Ալիստորոշման տնտեսության գաղափարի թերությունները արդյունք են նրա բովանդակալից վերլուծության թերաթմբության:

ՄԺԿ 62-50

ԱՎՏՈՄԱՏԻԿԱ

17. Մաթևոսյան Պ.Ա., Մնացականյան Մ.Ն., Մարգարյան Ս.Գ., Սահակյան Ն.Է. Արևգակի ուլտրամանուշակագույն ճառագայթման և մթնոլորտում օզոնի ընդհանուր պարունակության չափումը / հայ. պետ. ճարտարագիտ. համալս. -Երևան, 1996. - 7 էջ, 1 նկ. -Մատենագր. 5 ան.- Ռուս.- Ավանդ. է ՀայԳՏԼԳՀ-ում 12.03.96, թիվ 44-Մ96

Ծարադրվում են Արևգակի ուլտրամանուշակագույն ճառագայթման և մթնոլորտի օզոնի ընդհանուր չափման սկզբունքներ, մեթոդներ, ինչպես նաև նախատեսված սարքերի գործառնության սխեմաների այլընտրական տարբերակներ:

18. Մաթևոսյան Պ.Ա., Մելքոնյան Դ.Օ., Մնացականյան Մ.Ն., Սահակյան Ն.Է. Բարելավված դինամիկ բնութագրերով

համակարգի հետազոտում / Հայ. պետ. ճարտարագիտ. համալս. - Երևան, 1996. - 9 էջ, 2 նկ. -Մատենագր. 5 ան.- Ռուս.- Ավանդ. է ՀայԳՏԼԳՀ-ում 14.03.96, թիվ 45-Մ96

Ծարադրվում են սպեկտրափական սարքավորումները դեպի Արևգակը ավտոմատ կերպով ողղելու և հետևելու համար հետևող համակարգի ստեղծման հիմնական նախապայմանները, պահանջները և սկզբունքները: Հետևող համակարգը նախատեսված է տեղադրել տարբեր փոխադրամիջոցների, մասնավորապես գիտահետազոտական նավերի վրա, հաշվի առնելով ծովաճոճման պայմանները:

Բերվում է հետևող համակարգի մաթեմատիկական մոդելը, որի իրականացումը ԷՏՄ-ի վրա թույլ է տալիս որշել կոմպլեքսատորի անհրաժեշտ պարամետրերը, որոնք ապահովում են համակարգի կայուն աշխատանքը և հետևելու պահանջվող որկարը:

ՄԺԿ 621.31

ԷԼԵԿՏՐՈՆԵՆԵՐԳԵՏԻԿԱ

19. Պապոյան Է.Ն. Էկրանով ասինքրոն շարժիչի հաշվարքը / Էլեկտրոնիքենա ԳՀԻ. -Երևան, 1996. - 9 էջ, 3 նկ. -Մատենագր. 5 ան.- Ռուս.- Ավանդ. է ՀայԳՏԼԳՀ-ում 13.03.96, թիվ 46-Մ96

Հոդվածում բերված են էկրանով նրաֆագ սինքրոն շարժիչների հաշվարքը արդյունքները: Էկրանով շարժիչները /դիէլեկտրոնիկ և հաղորդիչ հեղուկներով օդային բացակում/ որոնք հերմետիկ պոմպային ազդեցատի շարժաբեր, նախատեսված են թռչող սարքերում /ինքնաթիռ, հրթիռ և այլն/ օգտագործման համար: Հետազոտված են լարման, հաշվառականության, մագնիսահանգույցի տրամագծի, կոնստրուկտիվ գործակցի և սահքի ազդեցությունները էներգետիկ ցուցանիշների վրա: Հաշվարկը կատարված է աշխատանքային երեք ջերմաստիճանների համար՝ 293Կ, 573Կ, 773Կ:

20. Պապոյան Է.Ն. Էկրանով ասինքրոն շարժիչի փորձնական նմուշի փորձարկումը և արդյունքների վերլուծությունը /

Էլեկտրոսնքննա ԳՀԻ. -Երևան, 1996. - 7 էջ, 3 նկ. -Մատենագր. 1 ան.- Ռուս.- Ավանդ. է ՀայԳՏԼԳՀԻ-ում 13.03.96, թիվ 47-Ձ96

Հոդվածում բերված են, որպես հերմետիկ պոմպային ագրեգատի շարժաբեր նախատեսված, էկրանով ասիքրոն շարժիչի փորձակման արդյունքները: շարժիչի ստատորը նախագ փայթուցով պաշտպանված է մետաղից պատրաստված հերմետիկ պարկուճով: Ռոտորը ունի մետաղյա էկրան՝ շփման կորուստները պակասեցնելու համար: Օգտակար գործողության գործակցի վրա՝ առանձին-առանձին յուրանքանչյուր էկրանի և դիէլեկտրիկ հեղուկի ազդեցությունը պարզելու համար, փորձարկումները կատարված են հաջորդաբար՝ առանց էկրանների, ստատոր էկրանով, ստատորը և ռոտորը էկրաններով՝ առանց հեղուկի, սիլիկոնային յուղով՝ օդային բացակում:

21. Հակոբյան Ռ.Ե. հիդրոգեներատորների աշխատանքային ռեժիմների ընթացակարգի տեխնիկական ախտորոշման ալգորիթմացքումը / Հայ. պետ. ճարտարագիտ. համալս. -Երևան, 1996. - 11 էջ, 1 նկ. -Մատենագր. 1 ան.- Ռուս.- Ավանդ. է ՀայԳՏԼԳՀԻ-ում 4.04.96, թիվ 54-Ձ96

Նետագոտվել է ավտոմացված բլոկ տվյալների մշակման հնարավորությունը (ՏԱԲ) հզոր հիդրոգեներատորների համար, մշակվել է պահանջները, առաջարկությունները կենտրոնացված և ավտոմատացված տեխնիկական հսկման համակարգի համար: Հիմնավորված է ԿԱՀ-ի և ՏԱԲ-ի ստեղծման անհրաժեշտությունը, մշակված է ՏԱԲ-ի տեխնիկական սխեման:

22. Հակոբյան Ռ.Ն. Հիդրոգեներատորների շահագործման վիճակների տեխնիկական ախտորոշման մի քանի հիմնահարցեր / Հայ. պետ. ճարտարագիտ. համալս. -Երևան, 1996. - 7 էջ, 6 աղ.- Ռուս.- Ավանդ. է ՀայԳՏԼԳՀԻ-ում 04.04.96, թիվ 55-Ձ96

Հիմնավորված է հիդրոգեներատորի տեխնիկական վիճակի հսկման մեթոդների և միջոցների կիրառման հրատապությունը շահագործման ընթացքում. բերված են տեխնիկական ախտորոշման համակարգերին ներկայացվող պահանջները, դիտարկված են գոյություն ունեցող տեխնիկական ախտորոշման համակարգերի թերությունները և նշված են

տեխնիկական ախտորոշման համակարգերի զարգացման հեռանկարները:

23. Հակոբյան Ռ.Ե. Հիդրոգեներատորի ատամնային տարածքի ջերմաստիճանային դաշտի հաշվարքը թվային մեթոդով / Հայ. պետ. ճարտարագիտ. համալս. -Երևան, 1996. - 9 էջ, 1 նկ. -Մատենագր. 4 ան.- Ռուս.- Ավանդ. է ՀայԳՏԼԳՀԻ-ում 4.04.96, թիվ 56-Ձ96

Հիմնավորված է թվային մաթեմատիկական մեթոդի մշակման հրատապությունը, որը հնարավորություն է տալիս կատարել ջերմաստիճանային դաշտի մանրամասն վերլուծություն հիդրոգեներատորի ջերմային վիճակի խնդրի հաջորդ լուծման համար:

Ջերմային դաշտի հաշվարկման համար օգտագործված է հաշվեկշիռի մեթոդը, բերված է ալգորիթմական հավասարման համակարգը:

24. Հակոբյան Ռ.Ե. Հիդրոգեներատորների ստատորի փայտիթի էլեկտրամագնիսական ճառագայթման փորձնական հետազոտումը / Հայ. պետ. ճարտարագիտ. համալս. -Երևան, 1996. - 7 էջ, -Մատենագր. 5 ան.- Ռուս.- Ավանդ. է ՀայԳՏԼԳՀԻ-ում 4.04.96, թիվ 57-Ձ96

Բերված է թիֆոնագիտ-չափիչ համակարգի ԻՉՀ-ՌԳ-Ձ-ի մշակագ տեխնիկական պարամետրերը և բնութագիւղը, որը նախատեսված է ինչ-պես հիդրո-, այնպես էլ տուրբեզեներատորների ապարատի փայտիթների էլեկտրամագնիսական հսկման համար:

Հիմնավորված է այդ համակարգի ունիվերսալությունը, ուսումնասիրված է համակարգի մոնտաժը հիդրոգեներատորի վրա և բերված է փորձարար-արտադրական փորձակումների ծրագիրը Սա-րատովի ՀԷԿ-ի հիդրոհեներատորի վրա: փորձերը հաստատեցին համակարգի աշխատունակությունը և նրա հնարավորությունը գրանցել ոչ միայն փորուկների լիցքերը, այլ նաև ներքին լիցքերը մեկուսացման մեջ:

25. Հակոբյան Ռ.Ե. Հիդրոգեներատորի ջերմային հսկման համակարգի տեխնիկական արժեքի գնահատումը / Հայ. պետ. ճարտարագիտ. համալս. -Երևան, 1996. - 7 էջ, 2 նկ. -Մատենագր. 3 ան.- Ռուս.- Ավանդ. է ՀայԳՏԼԳՀ-ում 4.04.96, թիվ 58-Ձ96

Դիտարկված է ջերմային հսկման համակարգը (ՋՀՀ), որը իրականացնում է հիդրոգեներատորի ստատորի ակտիվ մասերի ջերմության հսկումը, ինչպես նաև այդ համակարգին հատուկ թերությունները: Անց է կացվել փորուկի հատակին տեղադրված թերմադիմադրության ջերմային զգայության գնահատումը: Խնդիրը լուծվել է կոնվեկտիվ ջերմափոխանակման պայմանների համար նրկչափանի դրվածքով օդային բացակի և ստատորի իրանի կողմից:

Ստացված հաշվարկների արդյունքները ցույց տվեցին, որ ՋՀՀ-ը չի տալիս գերտաքացման տևողի որոշման հնարավորությունը, այսինքն այն կարգավորում է միայն գեներատորի ընդհանուր ջերմաստիճանի մակարդակը: Առաջարկված է գոյություն ունեցող ՋՀՀ-ի փոխարեն օգտագործել ավելի առաջավոր անկոնտակտ մեթոդ՝ ինֆրակարմիր թերմատելեկտրական ճառագայթման ընդունիչների կիրառմամբ:

ՄԺԿ 681.5

ՀԱՇՎՈՂԱԿԱՆ ՏԵԽՆԻԿԱ

26. Մկրտչյան Ա.Հ., Նավասարդյան Ա.Հ., Լազարյան Ա.Ֆ. Արհեստական ինտելլեկտի ստեղծման հիմնահարցի շուրջ/ Հայ. պետ. ճարտարագիտ. համալս. -Երևան, 1996. - 4 էջ, -Մատենագր. 2 ան.- Ռուս.- Ավանդ. է ՀայԳՏԼԳՀ-ում 27.03.96, թիվ 53-Ձ96

Աշխատանքը նվիրված է արհեստական ինտելլեկտի ապարատային իրականացման համար անհրաժեշտ տրամաբանական ելունների ֆորմալ ներդրման մեքենայական սինթեզման խնդրին ճ>4 թվով արգումենտների դեպքում: Բերված են խնդրի լուծման օրինակներ:

27. Մկրտչյան Ա.Հ., Նավասարդյան Ա.Հ. Քիչ հուսալի ներդրումներից հուսալի կառուցվածքով ներդրային ցանցերի սինթեզի հիմնահարցը / Հայ. պետ. ճարտարագիտ. համալս. - Երևան, 1996. - 9 էջ, 1 նկ. 1 վարժություն: -Մատենագր. 2 ան.- Ռուս.- Ավանդ. է ՀայԳՏԼԳՀ-ում 18.04.96, թիվ 69-Ձ96

Հոդվածը նվիրված է փոքր հուսալիության տարրերով առավել հուսալի սարքերի պատրաստման հիմնահարցին: Որպես տարր դիտարկված է ֆորմալ ներդրում, որը ինժեներական իմաստով բազմաֆունկցիոնալ տրամաբանական տարր է, իսկ որպես տրամաբանական սարք դիտարկված է բազմառանգ տրամաբանական ցանցը: Խնդիրը լուծված է ցանցում շանգերի թվի ավելացման ուղիով: Բերված է խնդրի լուծման մեքենայական ավտոթիվը և լուծման օրինակներ:

ՄԺԿ 82

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

28. Բախչինյան Ա.Հ. Վահան Տերյանի «Մթնշաղի անուրջների» ստեղծագործական պատմությունից /Գրականության ին-տ: -Երևան, 1996. - 16 էջ, -Մատենագր. 15 ան.- Հայ.- Ավանդ. է ՀայԳՏԼԳՀ-ում 30.04.96, թիվ 70-Ձ96

Հոդվածը նվիրված է հայ քնարերգության մեծագույն դեմքերից մեկի՝ Վահան Տերյանի (1885-1920) բանաստեղծական առաջին ժողովածուի՝ «Մթնշաղի անուրջների» (Թիֆլիս, 1908) ստեղծագործության պատմության մի քանի հարցերին: Քննվում են այն 25 բանաստեղծություններից օրինակներ, որոնք Տերյանը հրատարակել է մամուլում մինչև գրքի լույս ընծայումը: Բնագրային բազմաթիվ տարբերությունների ուսումնասիրությունը վրկայում է տերյանի քերթողական ճաշակի և վարպետության թռչաքաղ գարգացումը: Մեկ առ մեկ քննվում են առավել բնորոշ օրինակները՝ բանաստեղծի կատարած առանձին տների և տողերի ամբողջական վերափոխության դեպքերը, պատկերային փոփոխություններն ու վերակառուցումները, իմաստային

ճշտումները, բարենհյուստության նպատակով իրականացված մի շարք հղկումներ և շտկումներ, իչպես նաև լեզվադճական, տաղաչափական, վերնագրային և այլ կարգի փոփոխություններ, որոնց շնորհիվ «Մթնշաղի անուրծներում» տեղ գտած բանաստեղծությունները սերունդներին ներկայացնում են իրենց կատարելությամբ, արտակարգ հղկվածությամբ և բանաստեղծական անթերջի լեզվով ու կառուցվածքով:

ԿԸԿ 1

ՓԻԼԻՍՈՓՍՅՈՒԹՅՈՒՆ

1. Մկոյան Ա.Ա. Գիտական աշխարհայացքի ձևավորման մեթոդաբանական հիմունքները /Գյումրիի մանկավարժ. ին-տ: Գյումրի, 1996. - 22 էջ, -Մատենագր. 23 ան.- Ռուս.- Ավանդ. է ՀայԳՏԼԳՀ-ում 30.07.96, թիվ 121-Ձ96

Հոդվածում, տեսական վերլուծության հիման վրա, քննարկվում են գիտական աշխարհայացքի ձևավորման մեթոդաբանական հիմունքներին առնչվող հարցեր: Բնութագրվում են դեֆերանցման (տարբերակման) և ինտեգրացման երևույթները գիտության զարգացման մեջ արդի պայմաններում, դիտարկվում են գիտական իմացության առանձնահատկությունները, ինչպես նաև աշխարհի տեսանկյունից, ամբողջական գիտական և ֆիզիկական պատկերի վերաբերյալ պատկերացումներն ու միջգիտական կապերի ստեղծման առանձնահատկությունները: Յուրյց է տրվում քննարկվող հիմնախնդրին առնչվող մեթոդաբանական հարցերի ուսումնասիրության անհրաժեշտությունը, որը նպաստում է գիտական աշխարհայացքի ձևավորման գործընթացի կատարելագործմանը:

2. Մկոյան Ա.Ա. Գիտական աշխարհայացքի գործառնությունները /Գյումրիի մանկավարժ. ին-տ: Գյումրի, 1996. - 22 էջ, -Մատենագր. 23 ան.- Ռուս.- Ավանդ. է ՀայԳՏԼԳՀ-ում 30.07.96, թիվ 121-Ձ96

Աշխատանքում, համալիր մոտեցման հիման վրա, բացահայտվում և քննարկվում է գիտական աշխարհայացքի մի շարք գործառնություններ՝ իմացական, գնահատման, կողմնորոշ, կոմունիկատիվ, դաստիարակչական, մեթոդաբանական, կարգավորող և այլն: ցույց է տրված աշխարհայացքի դերը մարդու և հասարակության կենսագործունեության մեջ: առանձնապես կատարվում են գիտական աշխարհայացքի այն գործառնությունները, որոնք բավարարվում են անձի բազմազան պահանջմունքները օբյեկտիվ աշխարհի իմացության գործընթացում, օգնում անձին կողմնորոշվելու սոցիալական իրականության մեջ, ընտրելու նրան իր վարքի սոցիալապես արժեքավոր գիծը: Վերլուծվում է անձի հոգևոր աշխարհի ինտեգրացման գործառնությունը, բնութագրվում նրա գիտական աշխարհայացքին ներկայացվող պահանջները:

ԿԸԿ 37

ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ

3. Հակոբյան Ե.Է. Սոլյանիսկին և համագործակցության մանկավարժությունը /Հայ. պետ. մանկ. ին-տ: -Երևան, 1996. - 7 էջ, -Մատենագր. 4 ան.- Հայ.- Ավանդ. է ՀայԳՏԼԳՀ-ում 12.08.96, թիվ 132-Ձ96

Վեր են հանված հագործակցության մանկավարժության հիմնական գաղափարները մեր ժամանակաի խոշորագույն մանկավարժ Վ.Ա. Սոլյանիսկու մանկագարժական ժառանգությունը դրրանց համահնչունության տեսանկյունից: Նորարար-մանկավարժներ Ծ.Ամոնոշվիլու, Ե. Իլյինի, Ս. Լիսենկովի, Վ. Շատալովի և մյուսների ուսումնա-դաստիարակչական համակարգի նպատակն է լուծել այսօրվա դպրոցի առջև կանգնած բարդագույն խնդիրը, երբ համընդհանուր ուսուցման պայմաններում անհրաժեշտ է և սովորոցներ, և դաստիարակել բոլորին անկախ ունակություններից և ցանկություններից: Նորարարների առաջ քաշաց նոր մեթոդիկաները և տեխնոլոգիաները հիմնվում են ուսումնական գործընթացի հումանացման, դեմոկրատացման, անձնային մոտեցման արև սկզբունքների վրա, որոնք ընկած են Վ.Ա. Սոլյանիսկու դպրոցի

հիմքում: Ինչպես և Սուլստմլինսկին, նրանք դիտարկվում են աշակերտին որպես ուսումնական գործունեության սուբյեկտ, վերջինիս լիիրավ մասնակից ուսուցչի հետ միասին, որի դերը կայանում է հետևյալում՝ ապահովել բերկրանքի զգացում իմացության գործընթացից, վստահության ներշնչել իր ուժերի, հաջողության նկատմամբ, ինչպես նաև զարգացնել աշակերտների անհատական ստեղծագործական ունակությունները, ապահովել ուսուցչի և աշակերտների բազմակողմանի հոգեկան շփումը:

4. Հակոբյան Ե.Է. մանկավարժական կրթության հայնցակարգի մշակման գիտատնտեսական հիմունքները /Հայ. պետ. մանկ. ին-տ: -Երևան, 1996. - 12 էջ, -Մատենագր. 7 ան.- Հայ.- Ավանդ. է ՀայԳՏԼԳՀԻ-ում 12.08.96, թիվ 132-Ձ96

Դիտարկվում են մանկավարժական կրթության հայնցակարգի մշակման գիտատնտեսական հիմունքները, բացահայտվում այն գաղափարները, որոնց վրա պետք է խարսխվի այդ հայնցակարգը, ի հայտ են բերվում դրա իրացման պայմանները: Հոդվածն անդրադառնում է ուսուցիչ-դաստիարակի պրոֆեսիոգրամի մշակմանը, մանկավարժի մոդելի ստեղծմանը, հոգեբանա-մանկավարժական և մեթոդական ցիկլի առարկաների ըստ ամբողջական բովանդակության ուսուցմանը: Հոդվածը քննարկում է մանկավարժական գիտության բնագավառի ճգնաժամային վիճակը, անդրադառնում է մանկավարժական գիտության և պրակտիկայի միջև առաջացած խզվածության հաղթահարման հիմնահարցերին: Ճշգրտվում է »կրթության« հասկացության էությունը, տրվում է նախկին ԽՍՀՄ-ում ձևավորված կրթական համակարգի գնահատականը, կրթության զարգացման վերաբերյալ եղած արտասահմանյան տեսությունների հանգամայից և օբյեկտիվ վերլուծությունը:

ՄԴԿ 502

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ

5. Էկոլոգիայի և բնության պահպանության հարցեր: Էկոլոգիանոսֆերային հետադոստությունների կենտրոնի գիտական աշխատությունների ժողովածու, հատ. 2 /Էկոլոգիանոսֆերային հետազոտ. կենտրոն: -Երևան, 1996. - 87 էջ, 28 աղ.: -Մատենագր. 80 ան.- Ռուս.- Ավանդ. է ՀայԳՏԼԳՀԻ-ում 01.05.96, թիվ 77-Ձ96

Սույն հատորում ամփոփված են տեխնածին- անումալ հողերում ծանր մետաղների շարժման ձևերի միգրացիայի և ձևափոխության հիմնահարցի, շրջակա միջավայրի աղտոտվածության կենսա-ինդիկացիայի և մոնիթորինգի վերաբերյալ հետազոտությունների արդյունքները: Ժողովածուի մեջ արտացոլված են Հայաստանի հանքային շրջաններում տարրերի երկրակենսաքիմիական ասոցիացիաների վերաբերյալ հարցերը, իչպես նաև բուսական մնացորդների քայքայման, տներներում ֆոտոսինտեզի պիգմենտների պարունակության, բուսազանգվածի տեսակարար կալորիականության, տրանսպիրացիայի հարցերը՝ կապված էկոլոգիական տարբեր պայմանների հետ:

Աշխատություններում տեղ է գտել նաև անումալ երևույթների (տելեկինեզ, պրոսկոպիա և այլն) ուսումնասիրման անհրաժեշտությանը նվիրված օրիգինալ մեծ հոդված:

6. Սաղաթնյան Ա.Կ. Հայաստանի հանքային շրջանների տարրերի հիպերգեն երկրաքիմիական ասոցիացիաները (Ժողովածու, հ. 2, էջ 4-9): -Մատենագր. 8 ան.- Ռուս.- Ավանդ. է ՀայԳՏԼԳՀԻ-ում 01.05.96, թիվ 78-Ձ96

Դիտարկված են Հայաստանի տարբեր կառուցվածքա-մետաղածնական գոտիների հիպերգեն բնական երկրաքիմիական ասոցիացիաների կազմի առանձնահատկությունները:

Հանրապետության հանքային շրջանների մեծամասնության համար տիպոմորֆ են մոլիբդենը, կապարը, համեմատաբար սակավ՝ ցինկը:

Առանձին շրջաններում, մագնածին համալիրների մետաղածնական և նրկրաքիմիական մասնագիտացման հետ սերտ կապի մեջ, ասոցիացիաներում երևան են գալիս մկնդեղը, սնդիկը, բորը, բարիումը:

Հայտնաբերված է նրկրաքիմիական ասոցիացիաների բնական շարքերում տարրերի սպեկտրի լայնության կախվածությունը մագնածին-հանքային համակարգերի պետրոքիմիական և նրկրաքիմիական տիպից:

Յույց է տրված հանրապետության տարածքում կենսանրկրաքիմիական մարզերի տարածման խճանկարայնությունը, ինչը պայմանավորված է բնական նրկրաքիմիական ասոցիացիաների կազմում բաղադրիչների փոփոխակումներով և դրանցում առանձնահատուկ տարրերի բարձր խտությունների հաճախակի ներկայությամբ:

Տվյալ պարագան անհրաժեշտ է հաշվի առնել ազգաբնակչության բժշկա-կենսաբանական ռեակցիաների վերլուծման և դեմոգրաֆիկ նախագծման ժամանակ:

7. Ուկազյան Ռ.Հ., Սաղաթելյան Ա.Կ., Արարատյան Լ.Ա., Մեծունց Բ.Խ. Տեխնածին-անոմալ ագրոէկոհամակարգում ծանկ մետաղների վարքի մասին (Ժողովածու, հ. 2, էջ 10-16): -Մատենագր. 4 ան.- Ռուս.- Ավանդ. է ՀայԳՏԼԳՀ-ում 01.05.96, թիվ 79-Յր96

Բացահայտվել է, որ ագրոհամակարգի վրա տեխնածին ազդեցության մեծացմանը զուգընթաց բույսերում տեղի ունենում նրկայթի ու մանգանի, մկնդեղի ու մոլիբդենի անհամամասնության (դիսպրոպորցիա) կտրուկ աճ: Յույց է տրվել, որ տեխնածին-անոմալ հողերում մկնդեղի միգրացիոն ձեւերի փոփոխությունը համապատասխանում է փոխանակային և ոչ փոխանակային ձևերի հարաբերության փոփոխմանը: Ընդ որում բնական սորբենտների կիրառումը նպաստում է շարժուն ձևերի ավելի ակտիվ ձևափոխմանը ոչ փոխանակային և ամուր կապված ձևերի:

8. Սաղաթելյան Ա.Կ., Հովհաննիսյան Հ.Ա., Մուրադյան Ա.Հ., Արևշատյան Ս.Հ. Ծառատեսակների օգնությամբ Երևան քաղաքի կապարով և ստրոնցիումով աղտոտման մոնիթորինգը (Ժողո-

վածու, հ. 2, էջ 17-20): -Մատենագր. 9 ան.- Ռուս.- Ավանդ. է ՀայԳՏԼԳՀ-ում 01.05.96, թիվ 80-Յր96

Կատարված է Երևան քաղաքի կապարով և ստրոնցիումով աղտոտման մոնիթորինգ բարդի Բոլմ, սովորական հացենի և ռոբինիա կեղծակացիա ծառատեսակների օգնությամբ: Յուրաքանչյուր տարրի և ծառատեսակի համար կազմվել են աղտոտման քարտեզներ և որոշվել են Երևան քաղաքի տարածքի հայտնաբերված կարգաշեղումների հիմնական ցուցանիշները: Բացահայտված է, որ ուսումնասիրված տարրերի ֆոնային պարունակությունները գտնվում են նորմայի սահմաններում: Ստրոնցիումով առավել աղտոտված են համարվել քաղաքի հարավային և հարավ-արևելյան մասերը, իսկ կապարով նաև կենտրոնը: Ուսումնասիրված երեք ծառատեսակներից կապարով աղտոտման բացահայտման համար ավելի արդյունավետ է օգտագործվել բարդի Բոլմ, իսկ ստրոնցիումի համար՝ սովորական հացենին:

9. Անանյան Վ.Լ., Ուկազյան Ռ.Հ., Արարատյան Լ.Ա., Մեծունց Բ.Խ., Սաֆրազբեկյան Է.Ա. Ազատ և Վեդի գետերի ջրերի քիմիական կազմի մասին (Ժողովածու, հ. 2, էջ 21-27): -Մատենագր. 13 ան.- Ռուս.- Ավանդ. է ՀայԳՏԼԳՀ-ում 01.05.96, թիվ 81-Յր96

Ազատ և Վեդի գետերը հոսում են Գեղամա լեռնաշղթայի արևմտյան լանջով և թափվում Արաքս գետը: Հետադոտություններով հաստատվել է, որ առկա է ջրերի հանքայնացման ուղղաձիգ կախվածություն: Գետերի ցածրադիր մասերում էռոզիայի, իչպես նաև տեխնածին պատճառով քիմիական նյութերի պարունակությունը մեծանում է: Բերված տվյալները կարող են հիմք ծառայել հետազայում գետերի ջրերում ծանր մետաղների պարունակության մոնիթորինգի իրականացման համար:

10. Սաղաթելյան Ա.Կ., Առաքելյան Ս.Ա., Միմոնյան Տ.Շ. Կաօարային աղտոտման բաշխման առանձնահատկությունները Երևան քաղաքի տարածքում (Ժողովածու, հ. 2, էջ 28-33): - Ռուս.- Ավանդ. է ՀայԳՏԼԳՀ-ում 01.05.96, թիվ 82-Յր96

Բարձրագված են Երևան քաղաքի տարածքում կապարի պարունակությունների, ինչպես նաև քաղաքային լանդշաֆտների առանձնահատկություններով պայմանավորված կապարային աղտոտման տևաբաշխման հետազոտություններին նվիրված հարցերը:

Հետազոտությունները ցույց են տվել, որ.

- Երևան քաղաքում կապարի միջին ֆոնային պարունակությունը նրկու անգամ գերազանցում է Ս.Թ.Խ-ը.

- Հայտնաբերված և սահմանագծվում են 19 կապարային կարգաշեղումներ, որոնց էպիկենտրոնները տարածականորեն կից են գործարանների առանձին արտադրամասերին, տպարաններին, ինչպես նաև ծանրաբեռված աղտոտայրուղիներին և խաչմերուկներին.

- Փողոց-գբոսայգի հարաբերակցությունում տեղի ունենում աղտոտման խտությունների նվազում փողոցից դեպի գբոսայգի միջին հաշվով 5 անգամ

- Փողոց-բակ հարաբերակցությունում հաստատված է կապարի պարունակության նվազում միջին հաշվով 6,2 անգամ.

- Հաստատված է գբոսայգիների գոտիների և շինությունների ճակատային մասերի արգելապատնեշային դերը: Աղտոտման ներթափանցման աստիճանը կախված է շինությունների ճակատային մասերի ձգվածությունից և կանաչ տնկարկների խտությունից:

11. Ռևազյան Ռ.Տ., Բաբայան Գ.Բ., Մեծունց Բ.Խ., Սաֆրազբեկյան Է.Ա. Բուսական մնացորդների և արմատների քայքայման առանձնահատկությունները տարբեր էկոլոգիական պայմաններում (Ժողովածու, հ. 2, էջ 34-37): -Մատենագր. 6 ան.- Ռուս.- Ավանդ. է ՀայԳՏԼԳՀ-ում 01.05.96, թիվ 83-Վր96

Բուսական մնացորդների և արմատների քայքայման արագության բննարկումը վկայում է, որ առավել բարենպաստ ջրաջերմային ռեժիմի պայմաններում (կիսաանապատային գոտի, ոռոգվող) այն ավելի ինտենսիվ է ընթանում, քան լեռնատափաստանային գոտում: Անթրոպոգեն աղտոտվածության նկատմամբ հողերի երկրաքիմիական կայունության չափանիշներից մեկը կարելի է համարել բուսական մնացորդների և արմատների քայքայման արագությունը, քանի որ նրա օգնությամբ հողում տեղի ունենում օրգանական նյութերի կուտակում:

12. Սաղաթելյան Ա.Կ., Կյուրեղյան Ս.Ն., Առաքելյան Ս.Ա., Սիմոնյան Ս.Շ. Ջյան ծածկոցի աղտոտման դինամիկան Երևան քաղաքի տարածքում (Ժողովածու, հ. 2, էջ 39-41): -Մատենագր. 3 ան.- Ռուս.- Ավանդ. է ՀայԳՏԼԳՀ-ում 01.05.96, թիվ 84-Վր96

Վերլուծված են Երևան քաղաքի տարածքի ձյան ծածկոցի աղտոտման տվյալները, ստացված 1989, 91 և 95 թթ., որոնք հնարավորություն են տվել կատարել ձյան մեջ ծանր մետաղների կուտակման քանակական և որակական առանձնահատկությունների համեմատական բնութագիրը:

Քաղաքի աղտոտման իրազեկիչներից մեկը էլ փյան ծածկոցի փոշեման կարծր նստվածքն է: Արդյունաբերական ձեռնարկություններից ավտոտրանսպորտից վնասակար նյութերի մթնոլորտ արտանետումների նվազման արդյունքում Երևան քաղաքի ձյան ծածկոցում աղտոտման գումարային ցուցանիշը 1995թ. պակասել է 3,5 անգամ 1989թ. համեմատ:

Ելնելով ձյունաքիմիական հետազոտությունների բարձր տեղեկատու լինելու հանգամանքից, առաջարկում է քաղաքի տարածքում անցկացնել փյան ծածկոցի ռեժիմային դիտարկումներ:

13. Մեծունց Բ.Խ. Ռևազյան Ռ.Տ., Հայրապետյան Է.Տ. Լեռնային լանդշաֆտների պայմաններում խտաբոխերի տրանսպիրացիայի մասին (Ժողովածու, հ. 2, էջ 42-48): -Մատենագր. 3 ան.- Ռուս.- Ավանդ. է ՀայԳՏԼԳՀ-ում 01.05.96, թիվ 85-Վր96

Հետազոտությունները տարվել են Գեղամա լեռնաշղթայի տարբեր բարձրության գոտիներում (ծովի մակերևույթից 1350-3300 մ բարձրության վրա) միևնույն բույսերի վրա: Ուղղաձիգ գոտիականությունը էականորեն անդրադարձել է տրանսպիրացիայի ինտենսիվության վրա. չոր տափաստանային գոտում այն բույսերի վեգետացիայի ընթացքում տատանվել է 8-61, մարգագետնատափաստանային գոտում՝ 12-73, իսկ ալպիական գոտում՝ 4-51 մգ/սմ² ժամ սահմաններում:

14. Մեծունց Բ.Խ., Ռևազյան Ռ.Ն., Հայրապետյան Է.Ն. Ուղղաձիգ գոտիականության ազդեցությունը բույսերի արդյունավետության մի շարք պարամետրերի վրա (Ժողովածու, հ. 2, էջ 49-58): -Մատենագր. 5 ան.- Ռուս.- Ավանդ. է ՀայԳՏԼԳ-ՀԻ-ում 01.05.96, թիվ 86-Ձ96

Ամփոփված են բազամյա հետազոտությունների արդյունքները՝ բույսերի չոր կենսազանգվածի կուտակման և ըստ վերերկրյա ու ստորգնդային օրգանների բաշխման, ասիմիլյացիոն մակերևութի, ֆոտոսինթեզի մաքուր արդյունավետության, տերևներում ֆոտոսինթետիկ պիգմենտների կուտակման և բուսազանգվածի տեսակարար կալորիականության վրա Գեղամա լեռնաշղթայի ուղղաձիգ գոտիների էկոլոգիական պայմանների ազդեցության վերաբերյալ:

15. Արարատյան Լ.Ա., Անանյան վ.Լ., Զաքարյան Ս.Ա. պարարտանյութերի և ցողման ազդեցությունը աշնանացան ցորենում միկրոտարրերի կուտակման վրա (Ժողովածու, հ. 2, էջ 56-64): -Մատենագր. 5 ան.- Ռուս.- Ավանդ. է ՀայԳՏԼԳ-ՀԻ-ում 01.05.96, թիվ 87-Ձ96

Ազոտի դոզայի ավելցուկը PK ֆոնի վրա բարձրացել է աշնանային ցորենի բերքատվությունը: Միկրոտարրերի պարունակությունը, բացառությամբ մանգանի, ավելի բարձր ծղոտում, քան հատիկի մեջ: ցորենի և ծղոտի մեջ միկրոտարրերի կուտակման վրա պարարաբանության ազդեցության ստույգ պատկեր չի նկատվում: Ցողունը հերթիցիտներով պրակտիկ ազդեցություն չի թողել աշնանացան ցորենի բերքատվության և դրա մեջ միկրոտարրերի պարունակության վրա:

16. Արարտյան Լ.Ա. Անոմալ երևույթների ուսումնասիրման համար սկզբունքորեն նոր հայեցակարգերի անհրաժեշտության մասին (Ժողովածու, հ. 2, էջ 65-75): -Մատենագր. 2 ան.- Ռուս.- Ավանդ. է ՀայԳՏԼԳ-ՀԻ-ում 01.05.96, թիվ 88-Ձ96

Աշխարհում կատարված բազմաթիվ փաստերը վկայում են շատ անոմալ երևույթների իրողության մասին (պալիճառատեսություն, տելելինեզ, պոլտերգեյստ, կանխագուշակություն և այլն): այդ երևույթների տեսական հիմունքները հաճախ չեն տեղավորվում մեզ շրճապատող աշխարհի մասին ներկա պատկերացումների շրճանակներում, որի պատճառով էլ հասունացել է դրանց վերանայման և սկզբունքորեն նոր հայեցակարգերի, նոր պարադիգմայի մշակման անհրաժեշտությունը: Անոմալ երևույթների ուսումնասիրությունը, մասնավորապես կենսալոկացիան և կենսաէներգետիկան, մեծ օգուտ կարող են տալ շատ ասպարեզներում՝ ռազմական գործում, էկոլոգիայում, տնտեսության, բժշկության, երկրաբանության մեջ և այլն:

17. Առաքելյան Ս.Ա. Հանք առաջացնող բաղադրամասերի ու խառնուրդ տարրերի բաշխումը և կորելացիոն կախվածությունները Արմանիսի ոսկի-բազմամետաղային հանքավայրի գլխավոր հանք առաջացնող սուլֆիդներում (Ժողովածու, հ. 2, էջ 76-83): -Մատենագր. 8 ան.- Ռուս.- Ավանդ. է ՀայԳՏԼԳ-ՀԻ-ում 01.05.96, թիվ 89-Ձ96

Հողվածը նվիրված է հանքավայրի առավել տարածված միներալներում (պիրիտ, խալկոպիրիտ, գալենիտ, սֆալերիտ) հանք առաջացնող և խառնուրդ տարրերի կազմին, քանակին ու փոխհարաբերություններին:

Դիտարկվող միներալներում կապի պարզաբանման համար կիրառվել է կարգային կորելացիա, իսկ պարագենետիկ ասոցիացիաների համար՝ կլաստերային անալիզ:

- Հետազոտությունների արդյունքները պարզել են՝
- Ոսկին հիմնականում կենտրոնացված է խալկոպիրիտներում և ավելի քիչ քանակությամբ՝ պիրիտներում:
 - Արծաթի հիմնական կուտակիչն է գալենիտը, որտեղ արծաթը պարագենետիկական կապի մեջ է կապարի, ծարիրի և քիսմոթի հետ:
 - Արծաթի և ուլու փոխհարաբերության մեծությունը համապատասխանում է միձին ջերմաստիճանային և մերձմակերևութային առաջացման պայմաններին:

- Հարկ է նշել պղնձի, ցինկի, կապարի, ինչպես նաև ոսկու և արծաթի պարունակությունները պիրիտներում, որոնք ներկայացված են ցրված մանր ներփակումներով մետասոմատիտների մեջ:

18. Արևշատյան Ա.Ն. Երևան քաղաքի հյուսիսային մասի տեխնածին աղտոտման լիսենտիզիացիան (Ժողովածու, հ. 2, էջ 84-87): -Մատենագր. 14 ան.- Ռուս.- Ավանդ. է ՀայԳՏԼԳՀ-ում 01.05.96, թիվ 90-Ձ96

Սպորավոր բույսերի, մասնավորապես քարաքոսների, յուրահատկությունը պայմանավորվում է իրենց թալումներում մթնոլորտային պոլյուտանտների անմիջական, ինչպես նաև ընտրողական աղտոթցիա: Դա թույլ է տալիս ընտրել արդյունավետ կենսահնդիկատորներ առանձին աղտոտիչների նկատմամբ:

Մեր հետազոտությունները ցույց են տվել Երևան քաղաքի հյուսիսի ուրբանիզացված լանդշաֆտների տեխնածին զնահատման համար *P.saxatilis* քարաքոսի կիրառման արդյունավետությունը: Առանձնապես աղտոտված են համարվել ԿԱՆԱԶ-ի բուսաբանական այգու տարածքը:

19. Աբրահամյան Ժ.Ի., Մխիթարյան Ա.Կ., Թռռյան Մ.Գ., Թահմազյան Կ.Ե. Տեխնիկական ջրի որակը և նրա լավացման ուղիները /Հայ. պետ. ճարտարագ. համալս.: -Երևան, 1996. - 5 էջ, 1 աղ.: -Մատենագր. 5 ան.- Հայ.- Ավանդ. է ՀայԳՏԼԳՀ-ում 15.07.96, թիվ 105-Ձ96

Տեխնիկական ջուրը, որը բերվում է Կապույտ լճից, օգտագործվում է մի շարք արդյունաբերական ձեռնարկությունների տեխնիկական և շրջանառու ջրամատակարարման համակարգերում, ինչպես նաև կանաչապատ տարածությունների ոռոգման համար: Մոտ 10 տարի է մեր կողմից ուսումնասիրվում է Կապույտ լճի վիճակը և ջրի որակը: Տարեցտարի ջրի պահանջարկի մեծացումը բերել է Կապույտ լճի ջրային հաշվեկշռի խախտմանը և ջրի որակի աստիճանաբար վատացմանը: Կապույտ լճի ջրի որակի լավացման համար անհրաժեշտ է նախատեսել առաջին հերթին կախված մասնիկների հեռացում և կոշտության փոքրացում: Մեր ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ Կապույտ լճի ջուրը ոռոգման և տեխնիկական ջրամատակարարման համակարգերում պիտանի դարձնելու համար նպատակահարմար է

կիրառել կոագուլացիոն եղանակը, որպես մակարդիչ օգտագործել ալյումինի օքսիքլորիդը, որը ստացել ենք ալյումինի նրբաթիթեղի և աղաթթվի թափոնների փոխազդեցությամբ: Ալյումինի օքսիքլորիդ կիրառելիս, ջրի մաքրման աստիճանը կազմում է 87%, միաժամանակ փոքրանում է կոշտությունը 14-ից մինչև 9 մգէկ/լ: 1լ ջրի պարզեցման համար անհրաժեշտ է 50մգ ալյումինի օքսիքլորիդ:

ՄԺԿ 51

ՄԱԹԵՄԱՏԻԿԱ

20. Շարաբխանյան Ի.Ի. Գծային հավասարումների համակարգի մասերով լուծման վերաբերյալ /էներգետիկայի ՀԳՀ ին-տ: -Երևան, 1996. - 7 էջ: -Մատենագր. 4 ան.- Ռուս.- Ավանդ. է ՀայԳՏԼԳՀ-ում 1.05.96, թիվ 74-Ձ96

Մշակված է բարդ համակարգերի մասերով ուսումնասիրման մեթոդ, որոնց մաթեմատիկական նկարագիրը իրագործվում է բոլային կառուցվածքով նոսր գործակիցների համակարգի տեսքով: Տարաբնույթ խնդիրների ներկայացման և ձևավորման եղանակների, մասերի հավասարման կազմման և լուծման թվային մեթոդների և նրանց լուծումների միավորման նմանությունը հիմք է տալիս ենթադրելու, որ մշակված մեթոդը լայն կիրառություն կգտնի բարդ համակարգերի հերազոտման դեպքում:

21. Սողոմոնյան Կ.Ս., Մկրտչյան Լ.Ա. Եռաչափ տարածականության մոդելը քառաչափ տարածականության պրոնկցիայի տեսքով /Հայ. պետ. ճարտարագիտ. համալս.: - Երևան, 1996. -6 էջ, 1 նկ. -Մատենագր. 3 ան.- Ռուս.- Ավանդ. է ՀայԳՏԼԳՀ-ում 6.06.96, թիվ 96-Ձ96

Աշխատության նպատակը երկրաչափական մոդելների (տիպերի) ոչ գծային բարդ ձևերի, ինչպես նաև դրանց մաթեմատիկական մոդելի ստեղծման գործընթացի պարզեցումն է: Առաջարկվում է եռաչափ տարածականության հարթ մոդելի կառուցման սկզբունքորեն նոր

մեթոդ: Առաջարկվող մեթոդի հիմնական գաղաթարը ամփոփվում է նախապես տարածականության ընդլայնման մեջ, որով մենք իրականացնում ենք գործընթացների մոդելավորումը և նախագծումը: Որպես գործունեության միջավայր ընդունել ենք քառաչափ տարածականությունը:

22. Գրիգորյան Յու.Գ. Բուլյան ֆունկցիաների ինվարիանտները /Էներգիտիկայի ՀԳՀ ին-տ: -Երևան, 1996. - 7 էջ: - Ռուս.- Ավանդ. է ՀայԳՏԼԳՀ-ում 8.07.96, թիվ 99-Ձ96

Աշխատանքում կառուցված են ինվարիանտներ, որոնք ըստ Շենոնի դասերի և Պոլյարովի տիպերի լուծում են բուլյան ֆունկցիաների ինդետի-ֆիկացման խնդիրներ: Աշխատանքի գաղափարը, որ ի տարբերություն դասական նդանակների, բուլյան ֆունկցիաների ներկայացման ժամանակ նրանց գրոյական ինֆորմացիայի էական օգտագործման մեջ է, հեղինակի կողմից հրապարակվել են կանոնական և փնջային բուլյան ֆունկցիաների հասկացողություններ, կառուցվել են միավոր խորանարդի վրա հատուկ համարժեքության հարաբերություններ և այլն, որոնք բուլյան ֆունկցիաների տեսության մեծ հետազոտման նոր ուղղության հիմք են ստեղծում: Մտածված արդյունքները ցուցադրելու նպատակով բերված են օրինակներ:

ՄԻԿ 61

ԲԺՇԿԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

23. Նադարեթյան Է.Ե., Ջնդոյան Ջ.Տ., Մաքանյան Գ.Վ. Լյարդի և ենթաստամոքսային գեղձի գործառնական փոփոխությունները և մարդկային պլազմայի սպիտակընթացման մզվածքի արդյունավետությունը խոցային հիվանդության և ախտանիշային խոցերի ժամանակ /Եր. պետ. բժշկ. համալս.: -Երևան, 1996. - 7 էջ, 2 աղ.: - Մատենագր 8 ան.- Ռուս.- Ավանդ. է ՀայԳՏԼԳՀ-ում 16.07.96, թիվ 109-Ձ96

Հոդվածը նվիրված լյարդի և ենթաստամոքսային գեղձի գործառնական փոփոխությունների ուսումնասիրմանը խոցային հիվանդության և ախտանիշային խոցերի ժամանակ: Ներկայացրել ենք որոշ կենսաքիմիական ցուցանիշների (տրիպսին, հիստիդազա, ուրոկինազա, ամիլազա, տրանսամինազներ, քիլոբրոբին և այլն) ուսումնասիրման տրվյալները հիվանդների կլինիկա ընդունման և խոցերի սպիտակման ժամանակ: այդ հիվանդները ստացել էին բուժում մարդկային պլազմայի սպիտակընթացման մզվածքով և ավանդական դեղորայքային պատրաստուկներով: Յույց է տրված, որ սրտի իշեմիկ հիվանդության, շաքարախտի, պարբերական հիվանդության և սուր ստրեսային վիճակների ժամանակաառաջացած ստամոքսի ախտանշանային խոցերի դեպքում նկատվում են լյարդի և ենթաստամոքսային գեղձի գործառնական շեղումներ, որոնք համեմատած մյուս դեպքերի հետ՝ զգալիորեն արտահայտված են: Սպիտակընթացման մզվածքի արդյունավետությունը արտահայտված էր ստամոքսի ախտանիշային խոցերով տառապող հիվանդների մոտ: այդ դեպքում արդյունավետության մասին էին վկայում կենսաքիմիական ցուցանիշների բնականոնացումը և խոցերի սպիտակման ժամկետների կրճատումը մինչև 21 օր:

24. Նազարբեկյան Է.Ե. Ջնդոյան Ջ.Տ., Գասպարյան Ա.Յու. Լազերային թերապիայի և հակաօքսիդանտների համակցված օգտագործումը ախտանիշային խոցերի և շաքարախտային անոթախտությունների բուժման ժամանակ /Եր. պետ. բժշկ. համալս.: -Երևան, 1996. - 7 էջ, 2 աղ.: -Մատենագր 8 ան.- Ռուս.- Ավանդ. է ՀայԳՏԼԳՀ-ում 16.07.96, թիվ 109-Ձ96

Բերված են տվյալներ հետինֆարկտային կարդիոսկլերոզի, շաքարախտի, պարբերական հիվանդության ժամանակ զարգացած ախտանիշային խոցերով (16 հիվանդ 48-69 տարեկան հասակում) և շաքարախտային անոթախտություններով (22 հիվանդ, 40-66 տարեկան) տառապող անձանց ախտածագումնորեն հիմնավորված բուժման կիրառման մասին: Երկու դեպքում էլ անցկացրել ենք համակցված բուժում ցածր ինտենսիվության լազերային ճառագայթմամբ և տոկոֆերոլով ու ասկորբինաթթվով: Նշված բուժման և ավանդական դեղաբուժության միջև համեմատությունը ցույց է տվել, որ առաջինի

դնպքում բուժման ժամկետը կրճատվել է մոտ 2 շաբաթով, նվազել են դեղորայքի թիվն ու դեղաչափերը, հիվանդների վիճակի կլինիկական լավացումը ավելի ցայտուն է արտահայտվել:

25. Նազարբեկյան Է.Ե., Սարգսյան Գ.Գ., Ջնդյան Ջ.Տ. Լազերային թերապիայի ազդեցությունը Campylobacter pylori-ի վրա խոցային հիվանդությանը, ախտանիշային խոցերով և խրոնիկական ստամոքսաբորբով հիվանդների մոտ /Եր. պետ. բժշկ. համալս.: -Երևան, 1996. - 5 էջ, -Մատենագր 19 ան.- Ռուս.- Ավանդ. է ՀայԳՏԼԳՀ-ում 12.08.96, թիվ 130-Ձ96

Ներկայացված են խոցային հիվանդությանը, ախտանիշային խոցերով և խրոնիկական ստամոքսաբորբով տառապող անձանց կուրսային համալիր լազերաբուժության տվյալները: Լազերաբուժությունը անցկացրել ենք »Սպեկտր« սարքով 34 հիվանդից բաղկացած հիմնական խմբում: Ապացուցված է լազերային ճարագայթման բարձր արդյունավետությունը, ինչը որոշ չափով պայմանավորված է խոցային դեֆեկտի որոկյալ էպիթելիզացիոյով, հակաբորբոքային ազդեցությամբ և կամպիլաբակտերիանների աչի ընկճմամբ: Լազերաբուժության արդյունավետության մասին են վկայում բուժման ժամկետի կրճատումը, նշանակվող դեղորայքի քանակի նվազումը և հիվանդների մեծամասնության մոտ հիվանդության սրացումների բացակայությունը մեկ տարվա ընթացքում: Վերջինը պայմանավորված է լազերաբուժության բակտերիոստատիկ ազդեցությամբ կամպիլաբակտերիանների նկատմամբ:

УДК 619

ԱՆԱՄՆԱԲՈՒԺՈՒԹՅՈՒՆ

26. Նազարյան Հ.Ջ., Գիլոյան Ա.Ա. Գաստրոէնտերիտով հիվանդ շների օրգանիզմում առաջացող որոշ արյունաբանական և կենսաբանական փոփոխությունները /Հայկ. անասնաբուժության

ԳՀԻ: -Երևան, 1996. - 3 էջ, -Մատենագր 3 ան.- Հայ.- Ավանդ. է ՀայԳՏԼԳՀ-ում 7.08.96, թիվ 129-Ձ96

Ուսումնասիրվել է շների մատղաշների ամենատարածված հիվանդություններից մեկը՝ գաստրոէնտերիտը և ապացուցվել, որ գաստրոէնտերիտի պատճառ հանդիսանում են կլոր որդերի դասին պատկանող թոքազկարոզ հիվանդության հարուցիչները: Փորձերը կատարվել են շան 2-4 ամսական ձագերի վրա: Արյունաբանական ցուցանիշներից ուսումնասիրվել են էրիտրոցիտների, լեյկոցիտների և հեմոգլոբինի քանակները և էրիտրոցիտների նըստեցման արագությունը: Կենսաքիմիական ցուցանիշներից ուսումնասիրվել են ընդհանուր սպիտակուցների և սպիտակուցային ֆրակցիանների քանակները և հիմնային ֆոսֆատազ ֆերմենտների ակտիվությունը: Հետազոտությունները կատարվել են դիֆուզիայում մինչև կենդանիների բուժումը, բուժումից 2 օր անց և բուժման ավարտին:

Ստացված փոփոխարանական արդյունքները վկայում են, որ շների սուր գաստրոէնտերիտի ժամանակ արյան մեջ կտրուկ նվազում են էրիտրոցիտների և հեմոգլոբինի քաքնակները, որը սակավարյունության նշան է. որպես հետևանք նկատվել է լեյկոցիտների աճ և էրիտրոցիտների նստեցման ռեակցիայի արագացում, ֆոսֆատազ ֆերմենտի ակտիվության բարձրացում, ընդհանուր սպիտակուցի, ալբումինի և գամմա-գլոբուլինների քանակի աճ:

Այսպիսով, շների գաստրոէնտերիտի ժամանակ օրգանիզմում տեղի են ունենում խորը արյունաբանական և կենսաքիմիական փոփոխություններ, որոնց նորմալացումը պահանջում է ավելի երկար ժամանակ, քան հիվանդության կլինիկական նշանների անհետացումը:

УДК 620.9

ԷՆԵՐԳԵՏԻԿԱ

27. Լիզազարյան Լ.Վ., Շամանյան Ռ.Ե., Խարազյան Ռ.Ս. »Ավանդ« և »Մասիս« ջերմամատակարարման համակարգերի աշխատանքի արդյունավետության մասին /Էներգետիկայի ԳՀ

**ին-տ: -Երևան, 1996. - 6 էջ, 2 աղ., 2 նկ.: Մատենագր. 5 ան.: -
Հայ.- Ավանդ. է ՀայԳՏԼԳՀԻ-ում 1.05.96, թիվ 73-Յր96**

Կատարված է Հայաստանի ջերմամատակարարման երկու համակարգերի աշխատանքի հետազոտում: Ընտրված են Երևանի Ավան թաղամասի և Մասիս քաղաքատիպ ավանի ջերմամատակարարման համակարգերը: Տեղադրվել են անհրաժեշտ չափիչ սարքավորումների և անմիջական չափումների միջոցով որոշել են համակարգերի ջերմային ռեժիմների պարամետրերը: Կատարված չափումները հնարավորություն են տալիս որոշելու ջերմամատակարարման համար վառելիքի իրական ծախսի, արտադրված ջերմային էներգիայի և ջեռուցման համար նրա օգտագործման իրական մեծությունները: Որոշվել է ջերմամատակարարման համակարգերի աշխատանքի արդյունավետությունը:

28. Եղիազարյան Լ.Վ., Սահակյան Վ.Ի., Սարգսյան Վ.Հ., Մուրադյան Ռ.Ջ., Առաքելյան Ա.Ս., Հայրապետյան Գ.Ա. Հայաստանի մի քանի էներգատար արտադրությունների էներգետիկ արդյունավետության մասին /Էներգետիկայի ՀԳՀ ին-տ: -Երևան, 1996. - 12 էջ, 11 աղ., - Հայ.- Ավանդ. է ՀայԳՏԼԳՀԻ-ում 1.05.96, թիվ 75-Յր96

Տրված են Ջանգեղուրի պղնձամոլիբդենային կոմբինատ, »նաիրիտ« գիտաարտադրական միավորում, Չարենցավանի »Ջուլակենտրոն« գործարան, »Հայէլեկտրամեքենա« բաժնետիրական ընկերության ձեռնարկությունների էներգետիկ տրնտեսություններում էներգախնայողական միջոցառումների մշակման աշխատանքների արդյունքները: Բերված են առաջնահերթ միջոցառումների ներդրման ծախսերի գնահատումները և նոգնման ժամկետները:

29. Մարտիրոսյան Ս.Լ. Էլեկտրաէներգետիկական ցանցի օպտիմալ կառուցվածքի կատարելավորված ընտրության նդանակը վերածված ծախսերի փոփոխական մասով /Հայ. պետ. ճարտարագիտ. համալս.: -Երևան, 1996. - 7 էջ, 2 նկ.: - Մատենագր 12 ան.- Ռուս.- Ավանդ. է ՀայԳՏԼԳՀԻ-ում 6.06.96, թիվ 97-Յր96

Դիտարկվում է էլեկտրացանցերի կառուցվածքի օպտիմալության վիճակի հարցը: Կատարված է կառուցվածքների օպտիմալությանը նպաստող, ներկա ժամանակում օգտագործվող մեթոդների համառոտ ակնարկ, ցուցաբերված է օպտիմալ տարբերակի ընտման բարդությունը, կապված էներգետիկ համակարգի փոփոխականների մեծ քանակի հետ: Տրված է զարգացման նախագծման կարգը և խնդրի դրվածքը:

Մաթեմատիկական մոդելը կառուցված է տրնտեսական արդյունավետության չառանիշով և ներկայացված է պարզեցված ձևով, կախված ճյուղերի հզորության հոսքի մեկ փոփոխականից:

Ներկայացված է ցանցի կառուցվածքի օպտիմալացման կատարելագործված եղանակի համառոտ ակնարկ, վերածված ծախսերի փոփոխական մասով, և տրված է առավելագույն օպտիմալ տարբերակների ընտման ալգորիթմը, որը անհրաժեշտ է կատարելագործված եղանակի սպառման համար: Տվյալ եղանակի տնտեսական նպատակահարմարությունը ցույց է տրված 1989թ. էլեկտրահաղորդմանգծերի օրինակի վրա: Ներկայումս նույն կառուցվածքների արժեքը տարբերվում է միայն գործակցով:

Վերջում կատարված են եզրակացություններ և առաջարկված է կատարելագործված եղանակի վերլուծություն:

30. Քարիմյան Վ.Ս. Էլեկտրաէներգետիկական ցանցի, ըստ կատարված ծախսերի հիմնական մասի, օպտիմալ կառուցվածքի ընտրության կատարելագործված եղանակը /Հայ. պետ. ճարտարագիտ. համալս.: -Երևան, 1996. - 8 էջ, 2 նկ.: -Մատենագր 13 ան.- Ռուս.- Ավանդ. է ՀայԳՏԼԳՀԻ-ում 6.06.96, թիվ 98-Յր96

Դիտարկված է էլեկտրական ցանցերի կառուցվածքի օպտիմալային հարցի դրությունը: Դիտարկված են օպտիմալ էլեկտրական ցանցի ընտրության խնդրի առաջացման պայմանները և նրա բարդությունը: Մշակված է ըստ կատարված ծախսերի հիմնական մասի օպտիմալ ցանցի ընտրության խնդրի դրվածքը և կառուցված է առաջադրված խնդրի մաթեմատիկական մոդելը:

Ներկայացված ցանցի կառուցվածքի կատարելագործված եղանակը ըստ հիմնական մասի օպտիմալացման: Ցույց են տրված նոր մեթոդի բազմազան հնարավորությունները, ինչպես նաև կատարելագործված մեթոդի հնարավորությունները մեծ չափականությամբ օպտիմալացման խնդիրների համար:

31. Առաքելյան Ա.Մ., Եղիազարյան Լ.Վ., Սահակով Վ.Ի., Սաֆարյան Վ.Ս., Ծարաքխանյան Ի.Ի. Էլեկտրական ցանցերում կորուստների գնահատումը ըստ լարման կորուստների /Էներգետիկայի ՀԳՀ ին-տ: -Երևան, 1996. - 10 էջ, Ռուս. - Ավանդ. է ՀայԳՏԼԳՀ-ում 08.07.96, թիվ 100-Ձ96

Տրված է բաշխիչ ցանցերում հզորության կորուստների գնահատման վերլուծությունը ըստ նրանց լարման կորուստների մեծության: Ուսումնասիրված է այդ մեթոդի մեթոդական սխալը: Բերված են մեթոդական սխալի մեծության հաշվարկային արտահայտությունները՝ կախված առանձին գործոններից (էլեկտրամատակարարման սխեմայից, ցանցի և բեռնվածության պարամետրերից): Տրված են սխալների արժեքների աղյուսակները առանձին դեպքերի համար: Արդյունքները կարող են օգտագործվել տվյալ մեթոդի կիրառման սահմանների որոշման համար, հաշվարկի ճշգրտության պահանջից կախված:

32. հայրապետյան Գ.Ա., Գամբուրյան Կ.Հ., Մուրադյան Ռ.Զ., Սարգսյան Վ.Հ. հայկական էներգահամակարգի դինամիկան գործընթացների մոդելավորումը էներգահամակարգի ռեժիմային պարամետրերի և ԱԷԿ-ի, ՋԷԿ-ի ու ՀԷԿ-ի տեխնոլոգիական օղակների գործընթացների փոխազդեցության վերլուծության նպատակով /Էներգետիկայի ՀԳՀ ին-տ: -Երևան, 1996. - 5 էջ, Ռուս.- Ավանդ. է ՀայԳՏԼԳՀ-ում 8.07.96, թիվ 101-Ձ96

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ էներգետիկան ներկայումս և հավանաբար ապագայում պետք է հինվի ատոմակայանների վրա (ԱԷԿ), նրանց անվտանգ շահագործման հարցերը դառնում են առավել հրատապ: ԱԷԿ-ի անվտանգ աշխատանքը կախված է ոչ միայն բուն ԱԷԿ-ի էներգասարքավորումների աշխատանքի հուսալիությունից, այլ նաև ամբողջ էներգահամակարգի հուսալի աշխատանքից:

Ետվթարային կայունացված ռեժիմի պարամետրերի վերականգնման գործընթացի հապադումը բերում է կայանների տեխնոլոգիական օղակների պարամետրերի զգալի փոփոխմանը, որը իր հերթին զգալիորեն անդրադառնում է էներգահամակարգի անցողիկ գործընթացի բնույթի վրա:

Հողվածը նվիրված էներգահամակարգի ռեժիմային պարամետրերի և ԱԷԿ-ի, ՋԷԿ-ի ու ՀԷԿ-ի տեխնոլոգիական օղակների գերծրնթացների փոխազդեցության ուսումնասիրման համար մաթեմատիկական մոդելների և ծրագրային միջոցների նկարագրմանը, մշակված Հայաստանի էներգետիկայի գիտահետազոտական ինստիտուտում:

Մոդելները փորձարկվել են համակարգչի վրա կատարված հաշվարկների արդյունքների և գործընթացների բնութագրերի համեմատական միջոցով Հայկական էներգահամակարգում տեղի ունեցած գրգռումների առկայությամբ:

33. Արսենյան Ռ.Փ., Պապիկյան Ս.Ռ., Ղազարյան Ա.Ա. ԵՌՆԱՆԻ կենտրոնական կաթսատների աշխատանքային ռեժիմների հետազոտումը /Էներգետիկայի ՀԳՀ ին-տ: -Երևան, 1996. - 9 էջ, Ռուս.- Ավանդ. է ՀայԳՏԼԳՀ-ում 8.07.96, թիվ 102-Ձ96

Ջրատաքացողիչ հզոր կաթսաների փաստացի տնտեսական ցուցանիշների որոշման նպատակով Երևան քաղաքի շրջանային կաթսայատներում կատարվել են փորձնական հետազոտություններ: Կաթսայական տեղակայումների համար որոշվել են օդի ավելցուկի գործակիցը, հեռացող ծխազագների ջերմաստիճանը, ջերմային կորուստները:

Մշակվել են առաջարկություններ կաթսատներում ջերմային կորուստները նվազեցնելու համար:

34. Արսենյան Ռ.Փ., Պապիկյան Ս.Ռ., Ղազարյան Ա.Ա. կենտրոնական ջերմամատակարարման համակարգերի աշխատանքի արդյունավետության գնահատումը թորձնական ճանապարհով /Էներգետիկայի ՀԳՀ ին-տ: -Երևան, 1996. - 13 էջ, Ռուս.- Ավանդ. է ՀայԳՏԼԳՀ-ում 8.07.96, թիվ 103-Ձ96

Կենտրոնական ջերմամատակարարման համակարգերում կատարվել են փորձնական հետազոտություններ ռեժիմների ուսումնասիրման նպատակով: Ստացված արդյունքների հիման վրա որոշվել են ջերմամատակարարման համակարգերի առանձին օղակներում ջերմային կորուստների ռաստացի մեծությունները և գնահատվել է համակարգերի արդյունավետությունը:

ՄԴԿ 621.3

ԷԼԵԿՏՐԱՏԵԽՆԻԿԱ

35. Եղիազարյան Լ.Վ., Գամբուրյան Կ.Ն., Սահակով Վ.Ի. Ասինքրոն շարժիչի ռեժիմային պարամետրերի վրա լարման և հաճախության փոփոխման ազդեցության փորձաքննական գնահատումը / Էներգետիկայի ՀԳՀ ին-տ: -Երևան, 1996. - 6 էջ, 3 աղ.: - Մատենագր. 2 ան.: -Ռուս.- Ավանդ. է ՀայԳՏԼԳՀ-ում 1.05.96, թիվ 76-Ձ96

Օգտագործելով գիտափորձի գործոնային պլանավորման մեթոդը, դիտված է ասինքրոն շարժիչի ռեժիմային պարամետրերի վրա տարբեր գործոնների (ցանցի լարման ու հաճախության, բեռնվածության և մեխանիզմների հաղորդակների բնութագրերի) ազդեցությունը: Հաշվարկներով ստացված է ռեգրեսիայի գործակիցների կախվածությունը տարբեր գործոնների դեպքում, որը թույլ է տալիս տվյալ ասինքրոն շարժիչի հիմնական ռեժիմային պարամետրերի վրա դիտարկվող գործոնների ազդեցության աստիճանի քանակական և որակական գնահատում: Տրված է ստացված արդյունքների վերլուծությունը:

36. Իշխանյան Ա.Ռ. Կենտրոնախույս մեխանիզմով միաֆազ ասինքրոն շարժիչի նոր մոդել /Հայ. պետ. ճարտարագիտ. համալս.: -Երևան, 1996. - 9 էջ, 2 նկ.: -Մատենագր 5 ան.- Ռուս.- Ավանդ. է ՀայԳՏԼԳՀ-ում 26.07.96, թիվ 120-Ձ96

Առաջարկվում է կենտրոնախույս մեխանիզմով միաֆազ ասինքրոն շարժիչի նոր մոդել, որը ստացվել է տաք դրոշմման մեթոդի հիման վրա: Յուրյց է տրված, որ այդ մեթոդով ստացված նոր շարժիչը ունի ավելի ցածր ինքնարժեք և ավելի բարձր հուսալիություն ի տարբերություն սովորական մեթոդներով ստացված շարժիչների:

ՄԴԿ 63

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

37. Մելիքյան Ա.Շ. Հայաստանի վայրի բանջարաբույսերով ռեսուրսային /»Հայաստանի կենսաբանական հանդեսի« խմբ. (Հայ. գյուղ. ակադեմիա): -Երևան, 1996. - 3 էջ, 2 նկ.: -Մատենագր 3 ան.- Ռուս.- Ավանդ. է ՀայԳՏԼԳՀ-ում 31.07.96, թիվ 127-Ձ96

Հայերի կողմից վայրի բանջարային բույսերը լայնորեն օգտագործվել են դեռևս մինչև մեր դարաշրջանը: Նախնականորեն Հայաստանի տարածքում ուսումնասիրվել են այդ բույսերից ավելի քան 10 տեսակներ (ավելի քան գանգուր, սիբելս, շուշան պալարակիր, դանդուր, եղինջ, փիփերթ և այլն): Որոշված են դրանց տարածման արևալները, բնական պաշարները, արտատաղրողականությունը, օգտագործման ժամկետները, C, B₁, B₂, E վիտամինները: Պարզված է, որ թվարկված բույսերը ունեն բավականին մեծ տարածվածություն անտառային և սուբալպյան գոտիներում: Նրանք պարունակում են բավականին մեծ քանակությամբ սպիտակուցներ (բացարձակ չոր կշիռի հաշվով) 16-36%, ճարպեր՝ 2,1-6,2%, ինչպես նաև բավարար քանակությամբ ածխաջրեր, վիտամիններ: Առանց աշխատանքային լրացուցիչ ծախսերի բնակչությանը թարմ բանջարեղեն մատակարարելու, դրա սեզոնայնության վերացման համար կարևոր է մեր հանրապետությունում տարածված այդ վայրի բանջարաբույսերի մշակության մեջ ներդնելու հարցերի լուծումը:

38. Մելիքյան Ա.Շ. սիբելսի ցանքի և սածիլման ժամկետները /»Հայաստանի կենսաբանական հանդեսի« խմբ. (Հայ. գյուղ. ակադեմիա): -Երևան, 1996. - 4 էջ, 2 աղ.: -Մատենագր 3 ան.- Ռուս.- Ավանդ. է ՀայԳՏԼԳՀ-ում 31.07.96, թիվ 128-Ձ96

Բնության մեջ տարածված են բազմաթիվ վայրի բանջարային բույսեր, որոնց մշակության մեջ ներդնելը ունի կարևոր նշանակություն ամբողջ տարին բնակչությանը թարմ բանջարեղենով ապահովելու համար: դրանցից սիբելը (Falcaria Vulgaris L.) բավականին կիրառելի է, որով և բացատրվում է նրա՝ արտադրությունում ներդնելու ան-

հրաժեշտությունը: Հայաստանի տարածքում մենք առանձնացրել ենք սիբեյիսի 6 էկոտիպեր: Սկզբնական շրջանում ցանկը փոստարկվել է ջերմոցային արկղերի մեջ, ապա մեկ իսկական տերևի փուլում բույսերը մեծ դաշտ են փոխադրվել: Արդյունքում ստացվել են առողջ, կենսունակ բույսեր:

Այսպիսով, սիբեյիսի բարձր բերք ստանալու համար պետք է այն մշակել սածիլման եղանակով՝ ապրիլի առաջին տասօրյակից մինչև մայիսի կեսերը, սերմեր ստանալու համար՝ ապրիլի առաջին տասնօրյակում:

ՄԴԿ 664

ՄՆՆԴԻ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ

39. արշակյան Ա.Հ., Հովհաննիսյան Թ.Ա. Հայաստանի Հանրապետությունում հացի արտադրությունը և նրա բարելավման ուղիները /Եր. ժող. տնտես. ին-տ: -Երևան, 1996. - 20 էջ, -Մատենագր 2 ան.- Ռուս.- Ավանդ. է ՀայԳՏԼԳՀԻ-ում 15.05.96, թիվ 91-ՅԲ96

Հայաստանի Հանրապետությունում շուկայական էկոնոմիկայի անցման, պերմանենտ շրջափակման և էքստրենալ այլ պայմաններում խիստ կարևոր նշանակություն ունի հացի օպտիմալ առաջարկի և պահանջարկի հիմնահարցի լուծումը: Այդ տնտեսակյունից արդիական է սույն հոդվածը, որտեղ հանգանմանորեն լուսաբերվել է Հայաստանի Հանրապետության հացահատիկի արտադրության, նրա նկատմամբ լիացուցիչ պահանջարկի ապահովման, իչպես նաև հացամթերների արտադրության և բաշխման հիմնահարցերը:

40. բեգլարյան Ռ.Ա., Աղաբաբյան Ա.Ա., Արաքսյանց Ա.Է. Հալած պանիրների արտադրության կազմակերպումը արդի պայմաններում /Հայ. գյուղ. ակադեմիա: -Երևան, 1996. - 7 էջ, 2 նկ.: -Մատենագր 6 ան.- Ռուս.- Ավանդ. է ՀայԳՏԼԳՀԻ-ում 31.07.96, թիվ 125-ՅԲ96

Բերված են ամբիոնի կողմից կատարված վերջին մշակումները, որոնք ուղղված են հալած պանիրների արտադրությունը ճգնաժամից, որը պայմանավորված է հալման համար անհրաժեշտ հումքի բացակայությամբ, դուրս բերմանը: Մանրամասն նկարագրված են հալման ենթակա շուտ հասունացող պանրագանգվածի և սաղայի հիդրոլիզատի արտադրության տեխնոլոգիաները, որոնք բնական պանիրների էժան փոխարինիչներ են: Բերված են նոր, համակցված »Արաքս« հալած պանրի բնութագիրը, որը տարբերվում է բարձր կենսաբանական և սննդային արժեքներով, պահելիս ունի բարձր դիմացկություն և համեմատաբար ցածր ինքնարժեք:

ՄԴԿ 681.5

ԱՎՏՈՄԱՏԻԿԱ, ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԻՐԵՆՆԵՏԻԿԱ

41. գրիգորյան Հու.Գ., Խաչատրյան Գ.Խ. Մեթոդների տեղադրման գրաֆի երկարության և խտրացիոն ալգորիթմի որոշումը / Էներգետիկայի ՀԳՀ ին-տ: -Երևան, 1996. - 9 էջ, 3 նկ. 3 աղ.: - Մատենագր. 5 ան.: -Ռուս.- Ավանդ. է ՀայԳՏԼԳՀԻ-ում 29.04.96, թիվ 72-ՅԲ96

Հիմնվելով թվաբանական գրաֆիների երկրաչափական և վիճակագրական հատկանիշների վրա, մշակվել է մեթոդ, որը տույլ է տալիս վիճակագրական մոդելավորման մեթոդների միջոցով որոշել գրաֆի (սխեմայի) միջին երկարությունը:

Առաջարկված եղանակը թույլ է տալիս այն կիրառել մոդուլները ՏՓՏ-երի (տիպային փոխարինման տարրերի) վրա տեղադրման խմբիներում, որտեղ նմարավոր չէ իրականացնել սխեմատիկայի դրած պահանջները և, հետևաբար, դրանք չեն կարող լուծվել տարբեր մեթոդայական մեթոդներով: Սա կոնստրուկտորներից պահանջում է կիրառել այդ խմբի »ձեռքի« և կիսաավտոմատ լուծման տարբեր եղանակներ: Այդպիսի մոդելավորման դեպքում գրաֆի միջին »երկարությունը« կարող թ ծառայել որպես մշակվող սխեմայի, ըստ հաղորդիչներին վազագույն գումարային երկարություն, օպտիմալության լավ կողմնորոշիչ: Մշակվել են գրաֆի միջին »երկարության« որոշման

ալգորիթմը և համակարգչային ծրագիր, առաջարկվել են այդ եղանակի կիրառման ուղիները իտերացիոն ալգորիթմներում: Բերված են տրված խնդրի մեքենայական իրացման օրինակների կոնկրետ արդյունքները մի քանի գրաֆիկների համար:

42. Կարապետյան Մ.Ռ., Գրիգորյան Մ.Յու. ինտեգրացված կառավարման համակարգերի օբյեկտների դինամիկ մոդելների օպտիմալացում /Հայ. պետ. ճարտարագ. համալս.: -Երևան, 1996. - 3 էջ, 1 նկ.: - Մատենագր. 3 ան.: -Ռուս.- Ավանդ. է ՀայԳՏԼԳՀ-ում 6.06.96, թիվ 95-Ձ96

Առաջարկված է դինամիկ օբյեկտների ադապտիվ մոդելի օպրիմալացման նոր մեթոդ: Դիտարկվող օբյեկտները պատկանում են Հայաստանի կեղտաջրերի մաքրման ինտեգրացված համակարգին: Կառավարման համակարգը, որը կառուցված է այդ մեթոդի համաձայն, նախատեսում է հատուկ միջոցներ, որոնք սահմանափակում են համակարգի դինամիկ բնութագրերը և այդպիսով ապահովում դեկավարման բարձր որակը:

Աշխատանքի արդյունքները արժեքավոր են նրանով, որ կարող են օգտագործվել բոլոր մեծածավալ տեխնոլոգիական գործընթացների դինամիկ օբյեկտների կառավարման համար:

43. Ավագյան Ռ.Մ. Միկրոկոնտրոլների ծրագրային ապահովումը քայլային շարժիչի պահանջվող ազդանշանների ձևավորման համար /Հայ. պետ. ճարտարագ. համալս.: -Երևան, 1996. - 7 էջ, 3 նկ.: - Մատենագր. 9 ան.: -Ռուս.- Ավանդ. է Հայ-ԳՏԼԳՀ-ում 15.07.96, թիվ 106-Ձ96

Հոդվածը նվիրված է ԲԾ-ի կառուցվածքի կառավարման սինթեզի մեթոդիկային՝ հիմնված սխեմային և ծրագրին իրացման ալգորիթմի աշխատանքի վրա: Սխեմայի իրականացման ժամանակ բոլոր գործողությունները կատարվում են մասնագիտացված էլեկտրոնային բլոկներով, որոնց ֆունկցիաները ռիդված են կոնկրետ օպերացիայի կատարմանը: Ծրագրային իրացման կառավարման սարքերը ունեն հաշվողական մեքենային բնորոշ հատկություններ:

44. Գևորգյան Ա.Ս. կտորից պատրաստված օբյեկտների սինթեզը /Հայ. պետ. ճարտարագ. համալս.: -Երևան, 1996. - 6 էջ, 5 նկ.: - Մատենագր. 7 ան.: -Ռուս.- Ավանդ. է ՀայԳՏԼԳՀ-ում 15.07.96, թիվ 107-Ձ96

Նկարագրված տեխնիկան բերում է կտորից ավելի իրական երևացող օբյեկտների ստեղծմանը: Նկարագրված բազմաթիվ մեթոդներից շատերը ներառում են մոտարկման գործընթացը, իսկ ոչ ճշգրիտ հաշվարկները մոտարկման միջոցով բերում են արդյունքների, որոնք թվում են իրական: Տրված է որոշակի կետերից կախված կտորի պատկերի մոդելավորումը:

45. Գևորգյան Ա.Ս. Տեղանքի մոդելների որոշումը և վերարտադրությունը /Հայ. պետ. ճարտարագ. համալս.: -Երևան, 1996. - 4 էջ, 4 նկ.: - Մատենագր. 4 ան.: -Ռուս.- Ավանդ. է ՀայԳՏԼԳՀ-ում 15.07.96, թիվ 108-Ձ96

Տեղանքի մոդելների վերարտադրությունը համակարգչային գրաֆիկայի օգնությամբ շատ կարևոր խնդիր է այն պատճառով, որ կիրառվում է թռիչքների նմանակման համար, անիմացիայում և CAD/CAM համակարգիչներում: Քանի որ տեղանքի վերարտադրության համար անհրաժեշտ է որոշել մեծ քանակությամբ դետալներ, առաջանում է հատուկ խնդիրների լուծման անհրաժեշտություն: Անբավարար մանրամասնություններով նկարագրված պատահական դետալներից գեներացվող բազայի ուժեղացման համար առաջարկվում է նոր ռեկուրսիվ մեթոդը:

46. Ղազանչյան Ա.Հ., Հովհաննիսյան Ա.Ս., Ղազանչյան Վ.Հ. ստատիզմի փոփոխման միջոցներ լարման ավտոմատ կարգավորիչներում /Հայ. պետ. ճարտարագ. համալս.: -Երևան, 1996. - 9 էջ, 2 նկ.: - Մատենագր. 3 ան.: -Ռուս.- Ավանդ. է Հայ-ԳՏԼԳՀ-ում 22.07.96, թիվ 113-Ձ96

Քննարկվել են ստատիզմի փոփոխման միջոցները լարման ավտոմատ կարգավորիչներում: Դիտարկվել է ստատիզմի փոփոխման երկու եղանակ:

ա) փոփոխելով համակարգի փոխանցման գործակցի մեծությունը, հասնում են ստատիզմի առաջադրանքային արժեքին: Այս եղանակը դիտարկվել է կոնկրետ օրինակի համար: Այդ համակարգի կայունության և անցողիկ գործընթացի որակի ցուցանիշների հետազոտությունները կատարվել են ժամանակակից համակարգչային MATLAB ծրագրային փաթեթի օգնությամբ:

բ) ստատիզմի առաջադրանքային արժեքի մեծությանը հասնում են, օգտագործվելով վրոպոդ ազդանշանը, որի շնորհիվ լարման ավտոմատ կարգավորիչի մուտքին տրվում է հոսանքի ազդանշան լարման ազդանշանի հետ մեկտեղ:

47. Հովհաննիսյան Ա.Ս., Ղազանչյան Ա.Հ., Ղազանչյան Վ.Հ. Հնտադարձ մագնիսական ձևափոխիչների կոնստրուկտիվ չառնի հաշվարկ /Հայ. պետ. ճարտարագ. համալս.: -Երևան, 1996. - 7 էջ, 1 նկ.: - Մատենագր. 3 ան.: -Ռուս.- Ավանդ. է ՀայԳՏԼԳՀ-ում 31.07.96, թիվ 123-Ձ96

Քննարկված են հնտադարձ մագնիսական ձևափոխիչների (հոսանք-ուժ) կոնստրուկտիվ չափերի որոշման խնդիրները, ինչպես նաև լայն տարածում գտած մագնիսական ձևափոխիչները:

Դրանց աշխատանքի էությունը հետևյալն է. երբ նրանց փոթայթով անցնում է հաստատուն հոսանք, ապա ռազազացնում է մեխանիկական ուժ, որը տեղափոխվում է փաթայթը:

Ելնելով առաջադրանքային հոսանքի և ստեղծվող ուժի արժեքներից, ինչպես նաև ինդուկցիայի մեծությունից (բխում է մոտք-եյք արժեքների ապահովման պայմաններից), կատարվել է ձևափոխիչի երկրաչափական չափերի հաշվարկ:

48. Ղազանչյան Ա.Հ., Հովհաննիսյան Ա.Ս., դազանչյան Վ.Հ. Գեներատորների խմբակային դեկավարում /Հայ. պետ. ճարտարագ. համալս.: -Երևան, 1996. - 4 էջ, 3 նկ.: - Մատենագր. 3 ան.: -Ռուս.- Ավանդ. է ՀայԳՏԼԳՀ-ում 31.07.96, թիվ 124-Ձ96

Դիտարկված է գեներատորի խմբակային դեկավարումը, որը նախատեսված է էլեկտրակայանների գեներատորների լարման համատեղ կարգավորման համար: Բերված են ըստ հոսանքի կարգավորման երկու տարբերակ՝ բաց և փակ համակարգերի միջոցով: Բաց

համակարգերով խմբակային դեկավարման էությունն այն է, որ բոլոր գեներատորների առաջադրանքային արժեքները միաժամանակ և համաձայնեցված փոփոխվում են: Քանի որ ռեակտիվ բեռը կախված է լարման ավտոմատ կարգավորիչի առաջադրանքային արժեքից, ապա բեռի մեծությունը միաժամանակ կփոփոխվի բոլոր գեներատորներում: Փակ կարգավորման համակարգերի դեպքում լարման կարգավորիչի մուտքին տրվում է ազդաբշան ըստ գեներատորի փաստացի բեռի: Արդյունքում բարձրանում է առաջադրանքի կատարման ճշտությունը:

ՄԺԿ 681.5

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

49. Համբարձումյան Վ.Ա., Աչարիա Ս. Տատանման բարձր ձևերի գումարման մեթոդների հետազոտությունը համընթաց-ոլորման սեյսմիկ տատանումների դեպքում /Եր.Ճարտարա-շին. ին-տ: -Երևան, 1996. - 4 էջ, 1 աղ.: - Մատենագր. 4 ան.: -Ռուս.- Ավանդ. է ՀայԳՏԼԳՀ-ում 6.06.96, թիվ 93-Ձ96

Քննարկվում են տատանման բարձր ձևերի ազդեցությունը հաշվի առնող հաշվային սեյսմիկ ճիզերի որոշման երկու առավել օգտագործվող բանաձևերով ստացված արդյունքները: 9 հարկանի շենքի հաշվան օրինակի օգնությամբ ցույց է տրված, որ Ա. Տեր-կյուրեղյանի (ԱՄՆ) կողմից առաջարկված բանաձևը հատկապես ընդունելի է համընթաց-ոլորման տատանումներ կատարող հատակագծում ոչ սիմետրիկ շենքերի սեյսմիկ հաշվարկների դեպքում:

50. Համբարձումյան Վ.Ա., Աչարիա Ս. Ձգված շենքերի և կառուցվածքների ոլորման տատանումները սեյսմիկ ազդեցությունների դեպքում /Եր. Ճարտարա-շին. ին-տ: -Երևան, 1996. - 8 էջ, 2 աղ.: - Մատենագր. 3 ան.: -Ռուս.- Ավանդ. է ՀայԳՏԼԳՀ-ում 6.06.96, թիվ 94-Ձ96

Դիտարկվում են շենքերի և կառուցվածքների ոլորման սեյսմիկ տատանումները: Առաջարկված է շենքերի անկյունային

արագացումների որոշման մի նոր եղանակ, որի դեպքում օգտագործվում է հիմնատակի հորիզոնական շարժման արսելերոգրամը: Կառուցված են անկյունային արագացումների և հարաբերական դինամիկ արտակենտրոնությունների սեպկորները ուժեղ երկրաշարժերի 2 արսելերոգրամների դեպքում: Արդյունքները համեմատվում են նախագծման նորմաներով բերված նույնատիպ արդյունգների հետ:

51. Մուրադյան Ա.Ա. Մարկետինգը շինարարության ժամանակակից պայմաններում /Եր. Ճարտարա-շին. ին-տ: - Երևան, 1996. - 14 էջ, - Մատենագր. 12 ան.: -Ռուս.- Ավանդ. է ՀայԳՏԼԳՀԻ-ում 16.07.96, թիվ 110-Ձ96

Դիտարկվում է այսպես կոչված »համակարգային« մարկետինգի ֆունկցիաների համար: Դրանց հիման վրա շինարարությունում լուծվում են մարկետինգի երեք խնդիրներ, որոք հիմնվում են սկզբնական ինֆորմացիայի և ելակետային տվյալների վրա: Շինարարության ժամանակակից պայմաններում համակարգային մարկետինգի կոնկրետ բովանդակությունը դիտարկվում է նոր տարածաշրջանային շինարարական համալիրի կազմակերպությունների գործունեության օրինակի վրա, որը հնգափուլ ցիկլ է՝ սկզբնական փուլից մինչև շահագործման փուլ:

Մարկետինգի տարր են շինարարական կազմակերպությունները, իսկ գործոն, որը միացնում է տարբեր կազմակերպությունները տարածաշրջանային շինարարական համալիրում, ներդրողական քաղաքականությունը տվյալ տարածաշրջանում:

52. Նիկոյան Ա.Ն. Քաղաքի պատմականորեն առաջացած կառուցապարման խնդիրները (Երևան քաղաքի կենտրոնական թաղամասերից մեկի օրինակով) /Եր. Ճարտարա-շին. ին-տ: - Երևան, 1996. - 13 էջ, - Մատենագր. 14 ան.: -Հայ.- Ավանդ. է ՀայԳՏԼԳՀԻ-ում 18.07.96, թիվ 111-Ձ96

Դիտարկված են մեծ քաղաքի պատմա-ճարտարապետական համալիրների վերակառուցման խնդիրները՝ Մատուցի պողոտա, Պուլկին, Սարյան, Արամի փողոցների միջև ընկած պամական քաղամասի օրինակով: Տարբեր ժամանակներում թաղամասի կառուցապատումը առաջ է բերել առանձին կառույցների մաստաբային

և ոճական անհամապատասխանություն: Պատմա-ճարտարապետական արժեք ներկայացնող հույարձանների հետ մեկտեղադրված կան բազմաթիվ հին ու նոր անարժեք կառույցներ: Այդ կապակցությամբ կատարված է թաղամասի համալիր ուսումնասիրության (գրական աղբյուրներից՝ հիմնվելով արխիվային հյուսիսի տվյալների վրա, և բնական հետազոտություններ): Ընդհանրացված որոնումների հիման վրա առաջարկված է թաղամասային սկզբունքային վերակառուցման ցյուցնա: Նրանով ներկայացված են առաջարկվող ֆունկցիոնալ և մասշտաբային, անձեռնմխելի և բարեկարգման ենթարկվող գոտիները, ինչպես նաև այլ գոտիներ, տրանսպորտային և հետիոն ժարժման ուղղություններ: այդ թվում առաջարկնաժ է թաղամասի միջին հաստվածի վերակառուցման մանրամասն նախագիծ:

ՄԺԿ 7

ԱՐՎԵՍՏ. ԱՐՎԵՍՏԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

53. Դոլխանյան Լ.Լ., Ռաֆայել Իսրանյան (մենագրություն) /Արվեստի ին-տ: -Երևան, 1996. - 70 էջ, 32 նկ.: - Մատենագր. 71 ան.: -Ռուս.-Ավանդ. է ՀայԳՏԼԳՀԻ-ում 15.07.96, թիվ 104-Ձ96

»Ռաֆայել Իսրանյան« (1908-1973) մենագրությունը բացահայտում է 20-րդ դարի ազգային մշակույթի պայծառ ներկայացուցիչներից մեկի, հիանալի ճարտարապետի ստեղծագործությունը: Իսրանյանի գործերը հայտնի են ոչ միայն Հայաստանում, այլև նրա սահմաններից դուրս: Լինելով բազմաթիվ մեծ գործերից մինչև ճարտարապետական փոքր ձևեր, կառուցվածքների հեղինակ, նա իր ստեղծագործություններում հետևողականորեն իրականացնում էր հայկական պատմական կառուցողական դպրոցի մասնագիտական սկզբունքների իրացման և դարգացման հայեցակարգը: Վարպետի գործերից »Հաղթանակի« հուշարձանը Երևանում, Ապարանի և սարդարապատի հերոսական ճակամարտերի հուշարձանները, Հայաստանի քաղաքներում և գյուղերում կառուցված բազմաթիվ աղբյուր-հուշարձաններ, կոթողներ մտել են արդի հայ ճարտարապետության լավագույն հուշարձանների շարքը:

54. Թալալյան Դ.Վ. Նոր տիպի գինեգործական կառուցվածքների ճարտարապետական ձևավորումը Հայաստանում /Եր. Ճարտարա-շին. ին-տ: -Երևան, 1996. - 7 էջ, 1 նկ.: - Մատենագր. 7 ան.: -Հայ.- Ավանդ. է ՀայԳՏԼԳՀԻ-ում 15.0.96, թիվ 92-Մ96

Դիտարկված են Հայաստանում գինեգործական ձեռնարկությունների հետագա զարգացման ճանապարհները, ապացուցված է գինեգործական նոր արտադրա-շինարարական կառուցվածքների տեղաբաշխման և ձևավորման անհրաժեշտությունը, հաշվի առնելով արտերկրյա գինեգործական ձեռնարկությունների ջլավորման և զարգացման փորձը, ինչպես նաև Հայաստանի յուրահատուկ պայմանները՝ ռելիեֆը, շինարարության համար հատկացվող հողերի տնտեսավարումը, սեյսմիկությունը և այլն: Տրված են կոնկրետ ուղղություններ և մշակված են վեց սկզբունքներ այդ կառուցվածքների տեղաբաշխման և ճարտարապետական ձևավորման համար:

Առաջարկված է նոր տիպի գինեգործարանների ճարտարապետա-շինարարական լուծումների ջլավորման մեթոդիկան, ինչը կաևող է բարձրացնել գինեգործական ձեռնարկությունների և շենքերի տնտեսական արդյունավետությունը Հայաստանի պայմաններում:

55. Մարգարյան Ռ.Ն., Սողոյան Մ.Ն. Բնակարանների օտանջները և նրա իրագործման հնարավորությունները շոգ կլիմայական գոտու քաղաքներում /Եր. Ճարտարա-շին. ին-տ: - Երևան, 1996. - 7 էջ, - Մատենագր. 7 ան.: -Հայ.- Ավանդ. է ՀայԳՏԼԳՀԻ-ում 19.07.96, թիվ 112-Մ96

Ելնելով շոգ կլիմայական գոտում բնակարանների պարտադիր քամահարման գործող նորմերի պահանջից և հաշվի առնելով Երևան քաղաքի տարբեր շրջանների հողմային ռեժիմի խիստ տարբերությունները, ԵրՃՇԻ-ի քաղաքագիտական և արդյունաբերական շենքերի ճարտարապետության ամբիոնում կատարվել են Նորքի

գանգվածի ր քաղաքի կենտրոնի բնակիչների ընտրովի հարցումներ բնակարանների քամահարման վերաբերյալ: Հարցումների արդյունքները բազահայտեցին քաղաքի տարբեր շրջաններում բնակարանների նախագծման տարբեր նորմատիվ պահանջների անհրաժեշտությունը: Հողվածում հիմնավորված է Երևան քաղաքի տարբեր շրջանների բնակարանների քամահարման ճշգրիտ գործիքային հետազոտությունների անհրաժեշտությունը նախագծման դիֆերենցված նորմատիվ պահանջների մշակման համար, որոնք թույլ կտան բարելավել բնակարանների հիգիենիկ պայմանները և իջեցնել բնակելի մակերեսի արժեքը:

56. Առաքելյան Ա.Ն. Բնակելի տների ճարտարապետության տիպաբանական առնձնահատկություններըև զարգացման հենանկարները արդի փուլում (Արագածոտնի մարզի օրինակով) /Եր. Ճարտարա-շին. ին-տ: -Երևան, 1996. - 10 էջ, - Մատենագր. 6 ան.: -Հայ.- Ավանդ. է ՀայԳՏԼԳՀԻ-ում 31.07.96, թիվ 126-Մ96

Դիտարկվում է երկու նպատակ՝ 1) ուսումնասիրել Արագածոտնի մարզի XIX-XX դդ. ժողովրդական բնակարանների ճարտարապետությունը, ցույց տալ նրա օրինաչափ պատմական կապը բնակարանի նախորդ տիպի (գլխատան) հետ; 2) բազահայտել ուսումնասիրող ճարտարապետության կենսունակ կողները, որոնք կարելի է կլինի օգտագործել ժամանակակից բնակարանային շինարարությունում:

Դիտարկվում է բնակելի տան ֆունկցիոնալ տարածական կառուցվածքի կազմակերպման գնահատականը բնակելի միջավայրում: Բազահայտում է Արագածոտն մարզի բնակելի տների ճարտարապետության զարգացման ուղիները, հաշվի առնելով բնակլիմայական առնձնահատկությունները, մարզի սիցիալ-ծողովրդագրական և ազգային ավանդույթները:

57. Միրզոյան Մ.Ս. Բոլշևիկյան համաժողովրդական էությունը և »ռազմական կոմունիզմի« քաղաքականության կիրառումը Հայաստանում /Եր. պետ. համալս.: -Երևան, 1996. - 8 էջ: -Հայ.- Ավանդ. է ՀայԳՏԼԳՀԻ-ում 24.07.96, թիվ 114-Յր96

Կոմունիստները անցնելով իշխանության գլուխ, խաբեցին ժողովրդին և նրանց շնորհիվ կարողացան իշխանությունը պահել իրենց ձեռքին: Դա դրանց հաջողվեց, որովհետև բոլշևիկները կարողացան ժողովրդական սոցիալական պայքարը վերածել քաղաքականի: Նրանց բազմաթիվ խոստումները՝ հողի մասին, ազատ մամուլի, ազատ խոսքի և այլ համարդեպի գաղափարները նպատաներին չհասան:

»Ռազմական կոմունիզմի« քաղաքականությունը, որը համարվում էր առաջին կենտրոնացված ծրագիր, իր ստեղծման օրից մինչև վերջին ժողովրդի անհատական շահագործումից վերածվեց պետական բռնատիրական շահագործման:

»Ռազմական կոմունիզմի« քաղաքականությունը կիրառվել է նաև Հայաստանում: Ոչ հիմնավորված է այն պատմաբանների տեսակետը, ովքեր »ռազմական կոմունիզմը« համարում են միայն պարենմասնատրման քաղաքականություն: այն իրենից ներկայացնում է մի ամբողջ տնտեսական համակարգ, որի ընթացքում կատարվել է բռնագրավումներ հասարակության բոլոր խավերից:

Ցեղասպանություն, թաալն և ավերածություն տեսած ժողովուրդը նույնպես դրվեց »ռազմական կոմունիզմի« բռնագրավումների տակ: Եւ ինչպես Ս. Վրացյանն է գրել, - »Այն, ինչը թալանվել էր թուրքերի կողմից՝ թալանվել էր, մնացել էր ոչինչ, դա էլ բռնագրավեցին ու բռնագրավեցին բոլշևիկները«:

58. միրզոյան Մ.Ս. Դեպքերի և վկայությունների գյուղական խրոնիկա /Եր. պետ. համալս.: -Երևան, 1996. - 7 էջ, - -Հայ.- Ավանդ. է ՀայԳՏԼԳՀԻ-ում 24.07.96, թիվ 115-Յր96

Երբ ուսումնասիրում ես պատմական նյութը և խորանում նրա էության մեջ, հիշատակում ես տվյալ ժամանակշրջանում կատարված իրադարձությունները, ավելի պատկերավոր և ճշմարտացի են դառնում, երբ այն կազմված է կենդանի վկաների թողած հիշատակումներից կամ պատմածներից: այդ եղանակով բացահայտվում է պատմական անճշտություններն ու կեղծիքները, արդարությունն ու ճշմարիտությունը:

Համաշխարհային պատմավեպագրական փորձը ցորց է տալիս, որ արտասահմանյան պատմաբանները իրենց գիտական աշխատանքներում հիշատակումներ են կատարում կենդանի վկաների պատմածներից, ինչը ավելի է ներկայացվում տվյալ ժամանակաշրջանը: Առավել ես ավելի անրաժեշտ է գիտական աշխատությունների մեջ կենդանի վկաների հիշատակումները այնպիսի երկրների համար, ինչպիսիք են Թուրքիան, Ադրբեջանը և նախկին Խորհրդային Միությունը, որտեղ իրականացվել են ցեղասպանություններ, բազմապիսի տեղորոշումներ, անարդարություններ, գաղութային և կիսագաղութային ձևեր, վարչաիրամայական սիստեմներ և այլ տեսակի մարդկային ապրելակերպի համար վտանգավոր միջոցներ:

59. Միրզոյան Մ.Ս. 30-ական թվականների հայ մտավորականների և ռազմաքաղաքական գործիչների ոչնչացումը /Եր. պետ. համալս.: -Երևան, 1996. - 12 էջ: -Հայ.- Ավանդ. է ՀայԳՏԼԳՀԻ-ում 24.07.96, թիվ 116-Յր96

Կոլեկտիվացման ժամանակաշրջանում գյուղատնտեսության հետ միասին բռնարարներ իրականացվեցին նաև հայ մտավորականության և ռազմաքաղաքական գործիչների նկատմամբ: Ամենուր իշխում էր ստալինյան վարչաիրամայական սիստեմը: Այն մտավորականները, ռազմաքաղաքական գործիչները, որոնք ունեին առողջ մտածելակերպ, արդարացի տեսակետ, անհապաղ ոչնչացվում էին: Ստալինյան վարչաիրամայական սիստեմը մարդուց պահանջում էր լինել լռակյաց, լսող և կատարող, անհասող ենթարկվել վերևների բոլոր հրամաններին: Մարդը պետք է կատարեր այն ամենը, իր իրեն մատուցվում էր և, ամենակարևորը, նա չպետք է ունենար սեփական տեսակետ և մտածելակերպ: Ովքեր չցանքացան ըբդունել այս պահանջները, դառնալ մեխանիզացված մեքենա, անմիջապես ենթակվում էին բազմապիսի տանջանքների, արքտրի, ռեպրեսիաների: Հավերժ հիշատակ նրանց,

ովքեր գոհաբերեցին իրենց կյանքը ստալինյան բռնարարքների ժամանակաշրջանում: Թող երբեք չկրկնվի հայ ժողովրդի համար այդ դաժան ժամանակաշրջանը:

60. Միրզոյան Մ.Ս. Հայաստանի գյուղում կատարված փոփոխությունները ՆԷՊ-ի տարիներին /Եր. պետ. համալս.: - Երևան, 1996. - 12 էջ: -Հայ.- Ավանդ. է ՀայԳՏԼԳՀ-ում 24.07.96, թիվ 117-Ձ96

ՆԷՊ-ը որպես գիտանանքներն հիմնավորված քաղաքականություն, նպաստեց անմիջապես արտադրությամբ և գյուղատնտեսությամբ զբաղվողների շահագրգռվածության բարձրացմանը, առանց որի ինչպես ցույց տվեց կյանքը, հնարավոր չէր հետագա առաջընթացը: ՆԷՊ-ի պայմաններում, մինչև կոլեկտիվացման քաղաքականությունը, չնայած այն պայմաններին, որ չկան մեխանիզացված բարդ մեքենաներ, հատկապես գյուղատնտեսությունը համեմատաբար զարգացում ապրեց: Նոր տնտեսական քաղաքականության հարցերը քննվել և գիտական պատշաճ մակարդակով լուսաբանվել են խորհրդային պատմագրության մեջ, սակայն այն բավարար համարել չի կարելի, քանի որ տնտեսական սկզբունքների մեկնաբանությունները դրված են միակարծիք տնտեսականների հիմքի վրա, որի ընթացքում ցույց է տրված բառացիորեն որոշակի դրականը, հակադիր ոչ հիմնավորված ապացույցներով: Դա խորհրդային ժամանակաշրջանին հատուկ ներույթ է, որից պետք է ձերբազատել ընդհանրապես պատմագրությունը. ցույց տալով բառացիորեն այն իրականը, ինչը տեղի ունեցել ՆԷՊ-ի տարիներին:

61. Միրզոյան Մ.Ս. Սոցիալ-քաղաքական իրադրությունը համատարած կոլեկտիվացման նախօրյակին /Եր. պետ. համալս.: -Երևան, 1996. - 11 էջ: -Հայ.- Ավանդ. է ՀայԳՏԼԳՀ-ում 24.07.96, թիվ 118-Ձ96

Առհասարակ , կոլեկտիվացման ընթացքում և նույնիսկ նրանից առաջել էլ, խորհրդային պատմագրության մեջ ճիշտ չի ներկայացվել այն սոցիալ-քաղաքական իրադրությունը, որ տիրում էր Հայաստանում այդ տարիներին: Դրանք են՝ գյուղացիական շերտավորումները, գյուղացիների ստացած եկամուտների և նրանց ապրելակերպին տրված

գնահատականի որակումները, գաղափարական կեղծավոր քաղաքական բլոկների շինծու առկայությունը, »աջ« և »ձախ« և համեմատաբար ինքնաարդարացումները, ինքնաքննադատումները, որը տրվում էր »կոմունիստաբար« հետևություններ անելու համար, աննպատակ շարունակվող քաղաքական բանավեճերը, անօրինական մեղադրանքները, որի սկզբունքն էր »մեղադրիր, որ քեզ չըմեն-դադրեն« հասկացությունը, բանավոր դասակարգի և գյուղացիության դաժինքի ոչ նպատակային իրականությունը, երեխաներին ստիպողաբար ծանր աշխատանքի լծելը և այլ խնդիրներ, առանց որոնց հնարավոր չէ ճճմարտացի մեկնաբանել այդ պատմական ժամանակաշրջանը և որի ընթացքում ծանր փորձությունների էր ենթարկվել հատկապես գյուղացիությունը:

YDK 37©036

ԳԵՂԱՌՎԵՍՏԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Խաչիկյան Ա. Ս. Գեղագիտական պահանջմունքի բնույթի մասին /Հայկ. պետ. մանկ. ին-տ.: Երևան, 1996:- 7 էջ:- Հայ.: Ավանդ. է ՀայԳՏԼԳՀ-ում 07.11.96, թիվ 27 - Ձ97

Գեղագիտական պահանջմունքը բնածին պահանջմունք չէ, մարդը այն ձեռք է բերել պատմական զարգացման ընթացքում. այն ծնվում ու ձևավորվում է միջավայրի ազդեցությամբ, ասանցվում է համապատասխան առարկայից, որի սպառումն էլ »դաստիարակում է« բուն տվյալ պահանջմունքը: Գեղագիտական պահանջմունքը մարդու հետաքրքրությունն է գեղագիտական արժեքների նկատմամբ, գործունեության բազմապիսի ձևերում մարդու կողմից գեղագիտականի ստեղծման եւ յուրացման նախնական պահը: Գեղագիտական պահանջմունքները հոգևտար պահանջմունքների համակարգում արտահայտում են հետևյալ հատկանիշները.

- ա) գեղագիտական պահանջմունքը օգտապաշտական բնույթ չունի,
- բ) գեղագիտական պահանջմունքի գոյության առարկան գեղագիտականն է,

գ) գեղագիտական պահանջմունքի բավարարման ժամանակ առարկան չի կորցնում իր ոչ մի հատկությունը, այն չի ոչնչանում:

2. Խաչիկյան Ա. Ս. Ինչպես ստեղծել գեղարվեստի դպրոց գյուղական վայրերում /Հայկ. պետ. մանկ. ին-տ:- Երևան, 1996:- 6 էջ, 1 նկ.:- Հայ.:- Ավանդ. է ՀայկԳՏԼԳՀ-ում 07.11.96, թիվ 28 - Ap97

Գեղարվեստի դպրոցը պետք է ունենա հետևյալ բաժինները՝
1. կերպարվեստ/գեղանկարչություն, քանդակագործություն/;
2. նրգարվեստ/ազգագրական, ժողովրդական, գուսանական/;
3. ժողովրդական արվեստներ/գորգագործություն, գոթելեն, ասեղնագործություն/։ Գեղարվեստի դպրոցի աշխատանքների ղեկավարումը իրականացնում է դպրոցի խորհուրդը: Գեղարվեստի դպրոցին մանկավարժական մեթոդական օգնություն են ցույց տալիս հանրակրթական և նրաժշտական դպրոցների կոլեկտիվները: Դպրոցում մեծ դեր կունենան նաև զանգվածային միջոցառումները, տարբեր թեմաներով մրցույթները, այդ թվում, ակումբի ստեղծման օրը, հանդիպում հասակակիցների հետ, ցուցահանդեսներ, համերգներ, նրեկույթներ և ցերեկույթներ, օրացուցային տոնակատարություններ:
3. Խաչիկյան Ա. Ս. Արվեստի մանկական ստուդիայի ստեղծման մեր փորձը /Հայկ. պետ. մանկ.

ին-տ:- Երևան, 1996:- 9 էջ:- Հայ.:- Ավանդ. է ՀայկԳՏԼԳՀ-ում 07.11.96, թիվ 29 - Ap97

Մեր մանկավարժական խնդիրն է եղել՝ դպրոցականներին մոտեցնել արվեստին, սեր ներարկել արվեստի ստեղծագործությունների նկատմամբ և ձեռնադրել ըստ »գեղեցիկի օրենքների« ասարելու և գործելու պահանջմունք: Կապ է ստեղծվել կերպարվեստի, տիկնիկային թատրոնի և կիրառական արվեստի միջև: Տարբեր խմբակներում ներխանները զարգացնում են իրենց ստեղծագործական հմտություններն ու ընդունակությունները, աշխարհայացքը, կազմակերպվող ցուցահանդեսներում ներմուծում է նրանց բազմազան ու բազմապիսի աշխատանքի արդյունքները: Մեր արվեստի մանկական ստուդիան իր յուրահատուկ ուղղություններով կատարում է մի շարք դաստիարակչական ֆունկցիաներ:

ՄԴԿ 502

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ

4. Առաքելյան Դ. Գ. »Ջրվեժ« սողանքային մարմնի հետազոտությունը և համակարգչային PC STABL 5M ծրագրի միջոցով լանջի կայունության գործակցի որոշումը /Էկոլոգանոսֆերային հետազոտությունների կենտրոն.- Երևան.- 1996:- 3 էջ, 1 աղ.:- Մատենագր. 3 ան.:- Ռուս.:- Ավանդ. է ՀայկԳՏԼԳՀ-ում 04.11.96, թիվ 26 - Ap97

Բերված են Ջրվեժ-Մասիս ավտոմայրուղու 20-րդ կմ-ի վրա տեղակայված »Ջրվեժ« սողանքային լանջի հետազոտության արդյունքները: Ըստ սողանքային գործընթացի միջանկյալ գարգացման ուսումնասիրվող օբյեկտը պատկանում է սողանքների սահքային տիպին: Գրունտների ուսումնասիրությունը կատարվել է ինչպես սողանքային մարմնի սահմաններում, այնպես էլ նրա սահմաններից դուրս: Լանջի կայունության հաստատման համար կիրառվել է PC STABL 5M ծրագիրը: Մշակման արդյունքները ցույց են տվել, որ լանջի կայունության գործակիցը սողանքի լեզվակային և վերին մասերում համապատասխանաբար հավասար է 0,835 և 0,825, մինչդեռ սողանքային մարմնի սահմաններից դուրս՝ 1,499, այսինքն լանջը կայուն չէ, և այդ պատճառով անհրաժեշտ է անցկացնել նրա ամրացման աշխատանքներ (լցումներ և դրենաժային կառույցներ):

ՄԴԿ 51

ՄԱԹԵՄԱՏԻԿԱ

5. Ղազարյան Գ. Գ. Մեկ դասի նրբորդ կարգի ոչ գծային էվոլյուցիոն հավասարման խմբային դասակարգումը /Եր. պետ. համալս.- Երևան, 1996:- 20 էջ, 1 աղ.:- Մատենագր. 5 ան.:- Ռուս.:- Ավանդ. է ՀայկԳՏԼԳՀ-ում 12.09.96, թիվ 6 - Ap97

Ուսումնասիրվում է հետևյալ երրորդ կարգի ոչ գծային

$$U_t = UU_{xxx} + \alpha U^k U_x^n + \beta U^p U_{xx}^q + \gamma U_x^r U_{xx}^1 + \delta U_x^m + \sigma U^c + \varepsilon U_{xx}^d$$

հավասարումը

կատարվում է այս հավասարման խմբային անալիզ, ցույց է տրվում, որ այն ինվարիանտ է տեղաշարժերի խմբերի նկատմամբ՝ անկախ գործակիցներից և աստիճանային ցուցիչներից և թույլ է տալիս սիմետրիաների այլ խմբեր որոշակի գործակիցների և ցուցիչների դեպքում: Աշխատանքում կառուցվում է նաև ստացված խմբերի Լիի հանրահաշվի բազիսային վեկտորները, դրանց նկատմամբ ինվարիանտ լուծումների դասեր՝ համապատասխան սովորական դիֆերենցիալ հավասարումների լուծումների տեսքով: Երրորդ կարգի ոչ գծային մեկ այլ հավասարումով նկարագրվող տատանումների պարուրիչի համար բազմամասշտաբ վերլուծությունների մեթոդով ստացվում է էվոլյուցիոն հավասարում ոչ գծային հավասարման տեսքով:

YDK 53

ՖԻԶԻԿԱ

6. Գալստյան Վ. Մ., Սարգսյան Ա. Յ., Աբրահամյան Է. Բ., Յայլոյան Ս. Մ. Երկբաղադրիչ խոլեստերիկ հեղուկ բյուրեղային համակարգերի դիէլեկտրիկ բևեռացումը /Ֆիզիկայի կիրառական պրոբլեմ. ին-տ.- Երևան, 1996:- 5 էջ, 3 նկ., 1 աղ:- Մատենագր. 4 ան.- Ռուս.- Ավանդ. է ՀայկԳՏԼԳՏՀ-ում 31.10.96. թիվ 25 - Ap97

Կատարված է ռազմաբաղադրիչ խոլեստերիկ հեղուկ բյուրեղային (ԽՏԲ) խառնուրդների էլեկտրա- ֆիզիկա կան պարամետրերի ($\varepsilon, tg(\delta), \tau$) ջերմաստիճանային կախվածության ուսումնասիրություն: Յույց է տրված, որ կախված ջերմաստիճանից երկբաղադրիչ համակարգերում առկա են խառը փուլեր: ԽՏԲ բազմաբաղադրիչ համակարգերի դիէլեկտրիկ թափանցելիությունը հաշվելիս, լավ արդյունքներ ստացվում են Լորենց-Լորենցի կամ Բետտերի բանաձևերի օգնությամբ:

YDK 54

ՔԻՄԻԱ

7. Գևորգյան Ա. Վ., Եղյան Ե. Ս., Նազարյան Ա. Ա., Ոսկանյան Է. Ս. Նոր ադգեզիվ նյութեր կարբոքսիլ պարունակող քլորապրենի համապոլիմերային լատեքսների հիման վրա /»Նաիրիտ« ՓԲԸ:- Երևան, 1996:- 4 էջ., 2 աղ.- Մատենագր. 7 ան.- Ռուս.- Ավանդ. է ՀայկԳՏԼԳՏՀ-ում

30.10.96, թիվ 24 - Ap97

Ընրված են կարբոքսիլ պարունակող քլորապրեն-ակրիլատային լատեքսների հիման վրա նոր կոմպոզիցիոն նյութերի ստեղծման ուսումնասիրության արդյունքները, որոնք նպատակաուղղված են որպես ադգեզիվ նյութեր արդյունաբերության մի շարք ճյուղերի համար (փայտամշակման և կահույքի, շինարարական տեխնիկայի, թեթև արդյունաբերության և այլն):

Յույց է տրված, որ համատեղելով կարբոքսիլ պարունակող քլորապրենի և մեթիլմեթակրիլատի համապոլիմերային լատեքսները կարբամիդֆորմալդեհիդային լսեթերի և տարբեր նպատակային ավելցուկների հետ, հնարավոր է դառնում զգալիորեն բարձրացնել ադգեզիոն կապի ամրությունը և ջրակայունությունը (պոկման ամրությունը կազմում է 2,7-3,2 ՄՊա, իսկ ֆաներային նմուշները ջրի մեջ 24 ժամ թրջելուց հետո՝ 2,0-2,6 ՄՊա):

Մշակված են նաև սոսնձող մածուկի ստացման բաղադրությունը և տեխնոլոգիան քլորապրենի համապոլիմերային լատեքսի Լ-ՄՄԱ-Մ և զանազան նպատակային ավելցուկների և լցանյութերի հիման վրա, որը նախատեսված է կպցնելու փայտը, ինչպես նաև այն երեսապատելու, փայտը և լինոլեումը սալահատակին կպցնելու, կերամիկական իրերի, թղթի և սովաբայթթի համար, ադգեզիոն հատկություններով զգալիորեն գերազանցելով հանրահայտ նմանակներին՝ »Բուստիլատային« սոսնձին և պոլիվինիլացետատային էմուլսիային:

ՄԴԿ 57/59

ԿԵՆՍԱՍԻՆՅԵԿԻ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

8. Կարաբեկով Բ. Պ., Տլարունի Ֆ. Ն., Ջուրաբյան Ա. Ս., Կաժոյան Ս. Վ., Հովսեփյան Ա. Ս.

»(α-Լիզինի կենսասինթեզը նրա արտադրիչ մանրէների համատեղ աճեցման պայմաններում /»Կենսատեխնոլոգիա« ԳՀԻ:- Երևան, 1996:- 17 էջ, 6 աղ.:- Մատենագր. 18 ան.:- Ռուս.:- Ավանդ. է ՀայկԳՏԼԳՀԻ-ում 22.08.96, թիվ 1 - Ap97

Ուսումնասիրվել են լիզինի կենսասինթեզի առանձնահատկությունները նրա արտադրիչ միկրոօրգանիզմների համատեղ աճեցման պայմաններում: Յույց է տրված, որ բակտերիոֆագների հանդեպ ունեցող վերաբերմունքի եւ սննդային նյութերի պահանջարկներով իրարից տարբերվող հատկություններ ունեցող լիզինի շտամների համատեղ աճեցումը նպաստում է կենսասինթեզի գործընթացի կայունացմանը ֆագոլիզի դեպքում, կանխելով ((-լիզինի կորուստը: Այս երևույթի պատճառով ապահովվում է աճի գործոններ պարունակող հումքի ծախսի կրկնակի իջեցումը, 20%-ով ավելանում է կենսասինթեզի գործընթացի արդյունավետությունը եւ կենսազանգվածի մեկ միավորի արտադրողականության աճը մինչև 2.4 գրամ մեկ լիտրում: Օգտագործված եղանակը եւ նրանից ստացված արդյունքները վկայում են այն մասին, որ մանրէաբանական ճանապարհով առաջացող տարբեր նյութերի ստացման համար հնարավոր է ստեղծել ինքնակարգավորվող նպատակային կենսասինթեզ իրականացնող կայուն աճող համակարգեր, որոնք կազմվում են տարբեր հատկություններ ունեցող, սակայն կենսասինթեզի առումով նույնանման, բակտերիալ շտամների ասոցիացիայից:

9. Տլարունի Ֆ. Ն. **α-Պրովինի սինթեզը օրգանական թթուներ պարունակող միջավայրում Brevibacterium flavum մանրէների մոտ /»Կենսատեխնոլոգիա« ԳՀԻ:- Երևան, 1996:- 10 էջ, 5 աղ., 2 նկ.:- Մատենագր. 15 ան.:- Ռուս.:- Ավանդ. է ՀայկԳՏԼԳՀԻ-ում 22.08.96, թիվ 2 - Ap97**

Ուսումնասիրվել է օրգանական թթուների ազդեցությունը ամինաթթուների կենսասինթեզի վրա Brevibacterium flavum մանրէներով: Յույց է տրված, որ 0.5-1% կաթնաթթուն ավելացնում է պրովինի քանակը 40% -ով, փոփոխում ուղեկցող ամինաթթուների քանակը: Այդ հատկությունները կախված են կաթնաթթվի քանակից, ավելացման ժամանակից: Առաջարկվում է α-պրովինի սինթեզի ժամանակ արտադրության մեջ օգտագործել կաթնաթթուն իբրև սինթեզի գործընթացին նպաստող նյութ:

10. Պիպոյան Ս. Խ., Կիրակոսյան Լ. Հ., Հայաստանի ջրամբարների արծաթափայլ լճածածանի (Carassius auratus gibelio (Bloch) մորֆոֆիզիոլոգիական ինդիկատորները /»Հայաստանի կենսաբան. հանդեսի« խմբ.:- Երևան, 1996:- 13 էջ, 5 աղ.:- Մատենագր. 14 ան.:- Ռուս.:- Ավանդ. է ՀայկԳՏԼԳՀԻ-ում 12.09.96, թիվ 7 - Ap97

Հայաստանի առանձին ջրամբարների (Սեւանա լիճ, Արարատյան հարթավայրի լճակներ, գետեր եւ այլն) արծաթափայլ լճածածանի մորֆոֆիզիոլոգիական ինդիկատորների (սրտի, լյարդի, խոխկների, աղիքների) ուսումնասիրումը եւ նրանց կախվածության հայտնաբերումը գանազան գործոններից՝ տարիքից, սեռական արգասիքների հասունացման ֆիզիոլոգիական առանձնահատկություններից, սննդի բնույթից եւ ձեռք բերման ձևերից, գծային եւ քաշային աճի տարիքային փոփոխականությունից, արտաքին միջավայրի պայմաններից, կենսաձևից եւ այլն, ցույց են տալիս, որ դեռևս շարունակվում է այս ձկնատեսակի հանրապետության ջրամբարների էկոլոգիական համակարգերում որպես նոր տարրի ձևավորման գործընթացը: Մյուս կողմից, մորֆոֆիզիոլոգիական ինդիկատորների ներառությունը տարբերություններն ըստ տարիքային խմբերի մատնանշում են արծաթափայլ լճածածանի արտաքին միջավայրի պայմաններին հարմարվելու բարձր ընդունակությունը, որով եւ բացատրվում է նրա լայն տարածումը եւ մեծ քանակությունը Հայաստանի ջրամբարներում:

11. Վարդյան Ա. Մ. Նոր սկսվող իշեմիկ հիվանդների սիրտ-անոթային համակարգի գնահատականը համալիր ռեֆլեքսաթերապիայից հետո /Մրտաբանության ԳՀԻ: - Երևան, 1996:

8 էջ, 1 աղ., 1 նկ.: Մատենագր. 19 ան.: Տայ.: Ավանդ. է ՀայկԳՏԼԳՀ-ում 12.09.96, թիվ 8 - Ap 97

Ատիպիկ նոր սկսվող սրտի իշեմիկ հիվանդների մոտ նկատվող հեմոդինամիկ, էլեկտրակարդիոգրաֆիկ, մետաբոլիկ փոփոխությունները, որոնք ի վերջո հասցնում են սրտային անբավարարության, համալիր ռեֆլեքսաթերապիայից հետո կարգավորվում են: Ռեֆլեքսաթերապիան օժանդակում է օրգանիզմի ռեգերվային հնարավորությունների մեծացմանը, նորմալ հոմեոսթազի կարգավորմանը, ադապտացիոն պաշտպանական միջոցների զարգացմանը, ախտածին երևույթների ընկճմանը և հիվանդության լավացմանը:

12. Վարոսյան Ա. Մ. Վեգետատիվ դիսհորմոնային կարդիոպատիայով հիվանդների ռեֆլեկտոր բուժման հարցերը /Սրտաբանության ԳՀ:- Երևան, 1996:- 9 էջ, 1 աղ.: Մատենագր. 25 ան.: Տայ.: Ավանդ. է ՀայկԳՏԼԳՀ-ում 12.09.96, թիվ 9 - Ap97

Համալիր ռեֆլեքսաթերապիան, բարձրացնելով օրգանիզմի կոմպենսատոր պահեստային հնարավորությունները, վերականգնում է վեգետատիվ դիսհորմոնային կարդիոպատիայով հիվանդների սիրտ-անոթային համակարգի խախտված հավասարակշռությունը, վերացնելով կրծքահեղձուկի նոպաները, ցավային ռեակցիան, շնչարգելությունը և համարյա բոլոր կլինիկական դրսևորումները, որոնք բնորոշ են այդ հիվանդությանը:

YDK 615©33+615©281

13. Սարգսյան Ֆ. Ա., Քոչարյան Կ. Մ., Հովնյան Գ. Ա., Սաշինյան Հ. Խ., Կարապետյան Ս. Ա. Հակաբիոտիկների կայունացված ջրային լուծույթների հակաբակտերիալ ակտիվության հետազոտությունները /Եր. պետ. բժշկ. համալս.: Երևան, 1996:- 5 էջ.: Մատենագր. 12 ան.: Ռուս.: - Ավանդ. է ՀայկԳՏԼԳՀ-ում 12.09.96, թիվ 10 - Ap 97

Ընդհանուր են հակաբիոտիկների կայունացված ջրային լուծույթների հակաբակտերիալ ակտիվության ուսումնասիրության արդյունքները

ֆիզիկաքիմիական մեթոդներով: Յույց է արված, որ հակաբիոտիկների կայունացված ջրային լուծույթների հակաբակտերիալ ակտիվության պահպանումը պայմանավորված է թաղանթագոյացողների և կայունացուցիչների հետ հակա-բիոտիկների կոմպլեքսագոյացմամբ:

YDK 577.156.6 616.12-007.2

14. Գրիգորյան Դ. Չ., Ջեյթյան Գ. Դ., Գևորգյան Ս. Մ. Սրտի ռեմատիկ արատներով տառապող եղիների կենսաքիմիական որոշ ցուցանիշները /Մոր ու մանկան առողջության պահպանման կենտրոն:- Երևան, 1996:- 5 էջ, 1 աղ.: Մատենագր. 4 ան.: Ռուս.: - Ավանդ. է ՀայկԳՏԼԳՀ-ում 12.09.96, թիվ 11 - Ap97

Հետազոտություններից պարզվել է, որ սրտի ռեմատիկ արատների որոշ ձևերի դեպքում հղիների լյարդի ֆունկցիոնալ կացությունը բնորոշող ցուցանիշները տատանվել են նորմայի սահմաններում: Սակայն նրանք կարիք ունեն կանխարգելիչ թերապիայի կիրառման, որի տևողությունը անհատականացվում է:

15. Գրիգորյան Ս. Ռ. Ամուսինների սոմատոսեքսուալ զարգացման առանձնահատկությունները վիրոզամիայի դեպքում /Պերինատոլոգիայի, մանկաբարձության և գինեկոլոգիայի կենտրոն:- Երևան, 1996:- 2 էջ, Ռուս.: - Ավանդ. է ՀայկԳՏԼԳՀ-ում 08.10.96, թիվ 13 - Ap97

Կուսական ամուսնության մեջ գտնվող 250 ամուսնական զույգերի սոմատոսեքսուալ զարգացման ընթացքի ուսումնասիրությունը ցույց է տվել, որ հետազոտվող ամուսինների մեծամասնության մոտ սեռական զարգացումը եղել է ժամանակին և ներդաշնակ, բայց 103 (41±3%) տղամարդկանց և 122 (49±3%) կանանց մոտ այն եղել է խանգարված, ամենից հաճախ՝ դանդաղացած, ավելի հազվադեպ՝ արագացած: Ուշադրություն է հրավիրում այն հանգամանքը, որ դանդաղացած է եղել պոլեմիտատը վազինիզմով կոիտո-, դեֆլորացիոնֆոբիայով, հոգեծին գենիտալգիաներով և տարբեր սեքսուալ բարդություններով կանանց գերակշռող մասի մոտ (70; 64(4%), ինչպես նաև այն ամուսնական

գույզերի տղամարդկանց մեծամասնության մոտ (36; 61(6%)), որտեղ վիրգոզամիան պայմանավորված է եղել սեռական անհաջողության սպասման ներդրով, կոիտո-, դեֆլորացիո-, օնանոֆոբիայով եւ հոմոսեքսուալ հակումներով:

16. Գրիգորյան Ս. Ռ. Տղամարդկանց սեռական առողջության ստատոզեն խանգարումներով պայմանավորված վիրգոզամիայի շտկումը /Պերինատոլոգիայի, մանկաբարձության եւ գինեկոլոգիայի կենտրոն:- Երևան, 1996:- 3 էջ, Մատենագր.:- Ռուս.:- Ավանդ. է ՀայկԳՏԼԳՀ-ում 08.10.96, թիվ 14 - Ap 97

Նետազոտվել են տղամարդկանց սեռական խանգարումների՝ համր պրոստատովեզիկուլիզմի եւ հարկենտրոնական բլթակի համախտանիշի հետեւանքով կուսական ամուսնության մեջ գանվող ամուսիններ: Վիրգոզամիայի շտկումը տվյալ դեպքերում կատարվել է երկու ուղղություններով՝ տղամարդկանց հիմնական հիվանդության բուժում եւ կուսական ամուսնության ու ամուսնական գույզի սեռական աններդաշնակության շտկում: Հաշվի է առնվել նաեւ տարբեր մակարդակներում՝ հոզեբանական, սոցիալ-հոզեբանական, ամուսինների հարմարվածության աստիճանը, ինչպես նաեւ սեռական կյանքի փսիխոհիզիենայի բնագավառում նրանց գիտելիքների աստիճանը: Վիրգոզամիայի շտկման տվյալ համակարգը թույլ է տվել ոչ միայն վերացնել կուսական ամուսնությունը, այլ հասնել ամուսնական հարաբերություններում առավելագույն ներդաշնակության:

17. Գրիգորյան Ս. Ռ. Համր պրոստատովեզիկուլիզմը որպես վիրգոզամիայի զարգացման պատճառ / Պերինատոլոգիայի, մանկաբարձության եւ գինեկոլոգիայի կենտրոն:- Երևան, 1996.- 3 էջ:- Մատենագր. 6 ան.:- Ռուս.:- Ավանդ. է ՀայկԳՏԼԳՀ-ում 08.10.96, թիվ 15 - Ap 97

Սեռական առողջության համակարգա-կառուցվածքային վերլուծության միջոցով հետազոտվել են վիրգոզամիայի մեջ գտնվող յոթ ամուսնական գույզեր, որոնց մոտ կուսական ամուսնությունը առաջացել է տղամարդկանց մոտ համր պրոստատովեզիկուլիզմի առկայության պատճառով: Վիրգոզամիան նրանց մոտ զարգացել է սեռական առողջության կենսաբանական բաղադրիչի գենիտալ բաղկացուցիչի

առանցքային խանգարման հետեւանքով՝ ամուսնու համր պրոստատովեզիկուլիզմի շնորհիվ: Աններդաշնակության ընթացքը խորացրել են սեռական անհաջողության սպասման ներդրով պայմանավորված հոզեբանական բաղադրիչի վնասումը եւ ամուսինների սոմատոսեքսուալ զարգացման դանդաղումով պայմանավորված կենսաբանական բաղադրիչի նեյրոհումորալ բաղկացուցիչի խանգարումը: Ամուսիններից մի մասի հոզեբանական եւ սոցիալ-հոզեբանական աններդաշնակությունը, ինչպես նաեւ սեռական կյանքի նորմայի եւ շեղումների վերաբերյալ ապատեղեկատվությունը, հանդիսացել են վիրգոզամիայի զարգացման պաթոպլաստիկ ֆոն:

18. Գրիգորյան Ս. Ռ. Սեռական առողջության խանգարումը տղամարդկանց հարկենտրոնական բլթակի համախտանիշի ժամանակ որպես վիրգոզամիայի առաջացման պատճառ /Պերինատոլոգիայի, մանկաբարձության եւ գինեկոլոգիայի կենտրոն.- Երևան, 1996.- 3 էջ:- Մատենագր. 7 ան.:- Ռուս.:- Ավանդ. է ՀայկԳՏԼԳՀ-ում 08.10.96, թիվ 16 - Ap 97

Կուսական ամուսնության մեջ գտնվող ամուսնական գույզերի սեռական առողջության համակարգա-կառուցվածքային վերլուծության արդյունքները թույլ տվեցին պարզել, որ վիրգոզամիայի առաջացման պատճառը նրանց մոտ եղել է կենսաբանական բաղադրիչի նեյրոհումորալ (կեղեւային) բաղկացուցիչի առանցքային խանգարումը ամուսնու հարկենտրոնական բլթակի համախտանիշի հետեւանքով: Օժանդակել են ամուսինների սեռական աններդաշնակության զարգացմանը եւ խորացրել նրա ընթացքը՝ հոզեբանական բաղադրիչի վնասումը ամուսնու մոտ սեռական անհաջողության սպասման ներդրով պատճառով եւ կենսաբանական բաղադրիչի նեյրոհումորալ բաղկացուցիչի թուլացումը պուբերտատի դանդաղեցման պատճառով: Աններդաշնակեցնող ազդակներ են հանդիսացել սոցիալական բաղադրիչի վնասումը տեղեկատվային-գնահատման բաղկացուցիչի հաշվին եւ ամուսինների հոզեբանական աններդաշնակությունը:

19. Միրիջանյան Մ. Մ., Վարդանյան Ա. Ս. Սթրես կրած ստամոքսի եւ 12-մատնյա աղու խոցային հիվանդությամբ տառապողների մոտ էնդոկրին համակարգի վիճակի գնահատումը /Եր. պետ. բժշկ. համալս.-:-

Երևան, 1996:- 4 էջ:- Մատենագր. 4 ան.: - Ռուս.: - Ավանդ. է ՀայկԳՏԼԳՀԻ-ում 08.10.96, թիվ 17 - Ap 97

33 խոցային հիվանդությամբ տառապողների մոտ, որոնք կրել են նրկարատն, բազմա բաղադրիչ սթրես, որոշվել է էնդոկրին համակարգի վիճակը: Արյան մեջ որոշվել են ադրենոկորտիկոտրոպ հորմոնի, կորտիզոլի, ալդոստերոնի, ադրենալինի, նորադրենալինի, մեզուս ադրենալինի, նորադրենալինի, 17-կետոստերոնի քանակները: Բարդացած ձևերի ժամանակ դիտվել է հորմոնների քանակի կտրուկ ավելացում: Ծանր կլինիկական ընթացքը, հաճախակի բարդությունները պայմանավորված են այդ դիսհորմոնալ վիճակով. ՀՀՄՀ-ի խանգարումներով:

20. Միրիջանյան Մ. Մ. Հեմոստազի շեղումները 12-մատնյա աղու խոցային հիվանդության ժամանակ /Եր. պետ. բժշկ. համալս.: - Երևան, 1996:- 4 էջ:- Մատենագր.: - Ռուս.: - Ավանդ. է ՀայկԳՏԼԳՀԻ-ում 08.10.96, թիվ 18 - Ap 97

Ուսումնասիրվել են հեմոստազի տարբեր օղակները, օգտագործելով հետազոտության բազմազան մեթոդները: Հետազոտվել են 87 խոցային հիվանդներ՝ 41-ը՝ խոցային արյունահոսությամբ, 27-ը՝ պենետրացիայով, 19-ը՝ թափածակումով: Հետազոտությունները ցույց են տվել, որ սրացումների, պենետրացիայի ժամանակ լինում է հիպոկոագուլացիա, իսկ թափածակման, արյունահոսությունների դեպքում՝ հիպերկոագուլացիոն համախտանիշ: Հիպոկոագուլացիոն համախտանիշը արտահայտվում է վերքերից արյունահոսությամբ, իսկ հիպերտրագուլացիոնը՝ ներանոթային արյան մակարդմամբ, էրիթրոցիտների ագրեգացիայով:

21. Միրիջանյան Մ. Մ., Մարուխանյան Հ. Վ., Ղազարյան Ս. Ա. Ստամոքսի եւ 12-մատնյա աղու խոցային հիվանդության կլինիկական ընթացքի առանձնահատկությունները սթրես կրած հիվանդների մոտ /Եր. պետ. բժշկ. համալս. :-Երևան, 1996:- 6 էջ:- Մատենագր. 3 ան.: - Ռուս.- Ավանդ. է ՀայկԳՏԼԳՀԻ-ում 08.10.96, թիվ 19 - Ap97

Ուսումնասիրվել է խոցային հիվանդության կլինիկական ընթացքի առանձնահատկությունները սթրես կրած հիվանդների մոտ: Այդ

նպատակով հետազոտվել են խոցային հիվանդությամբ տառապող հիվանդության պատմությունները 1984-88թթ. ժամանակահատվածում, որոնք կազմել են ստուգիչ խումբը՝ սթրես չկրած հիվանդները: Միաժամանակ ուսումնասիրվել են 1990-96թթ. խոցային հիվանդները, որոնք կազմել են հիմնական խումբը՝ սթրես կրած հիվանդները: Եթե ստուգիչ խմբին բնորոշ է եղել կլինիկական դասական ընթացքը, ապա հիմնական խմբին՝ ատիպիկ, լատենտ ընթացքը, հաճախակի հանդիպել են բարդացած ձևերը, նրկարատն, չլվացող, գիգանտ խոցերը:

22. Էդիյան Մ. Մ., Մխիթարյան Լ. Վ. Երիկամի հիպօքսիդ վիճակը եւ լիպիդային գերօքսիդացումը /Եր. պետ. բժշկ. համալս.: - Երևան, 1996:- 5 էջ:- Մատենագր. 48 ան.: - Ռուս.: - Ավանդ. է ՀայկԳՏԼԳՀԻ-ում 10.10.96, թիվ 20 - Ap97

Բերված են այն գրականության աղբյուրները, որոնցում ցույց է տրված երիկամի հիպօքսիդ վիճակների կապը նրա տարբեր հիվանդությունների եւ օրգանիզմի ընդհանուր վիճակի հետ: Բննարկվում է այդ վիճակների հա կա օքսիդիչ ճշտման անհրաժեշտությունը:

23. Մոկացյան Հ. Գ., Մխիթարյան Լ. Վ., Սեմերջյան Լ. Վ., Աղաջանով Մ. Ի. Ազատ շաղկիկային պաթոլոգիան ֆունկցիոնալ հիպերպրոլկտինեմիայի ժամանակ /Եր. պետ. բժշկ. համալս.: - Երևան, 1996:- 12 էջ, 3 աղ.: - Մատենագր. 35 ան.: - Ռուս.: - Ավանդ. է ՀայկԳՏԼԳՀԻ-ում 10.10.96, թիվ 21 - Ap97

Ֆունկցիոնալ հիպերպրոլկտինեմիայով հիվանդների մոտ պլազմային պրոլակտինի 550 մՄԵլ-ից մինչև 2200 մՄԵլ-ից բարձր մակարդակի ժամանակ բացահայտված է ԼԳՕ-ի ինտենսիֆիկացում էրիթրոցիտար թաղանթներում, գերօքսիդացման արգասիքների, ազիլիհիդրոգերօքսիդների, ցիննային կոնյուգատների, մալոնային դիալդեհիդի եւ Շիֆի հիմքերի պարունակության բարձրացում: Հաստատված է հակաօքսիդանտային համակարգի մասնակցության 2 տեսակ ԼԳՕ-ի ադապտացիոն վերափոխության մեջ: Մի դեպքում (α-տոկոֆերոլի քանակի իջեցման հետ միասին տեղի է ունենում հակառադիկալային ֆերմենտների՝ սուպերօքսիդիսմուտազի, գլուտատիոնռեդուկտազի, գլյուկոզա-6-ֆոսֆատեհիդրոզենազի

ակտիվացում: Մյուս դեպքում տնդի է ունենում հակառադիկալային ֆերմենտների ակտիվության արտահայտված անկում՝ դեպոյից

α-տոկոֆերոլի մոբիլիզացման եւ արյան մեջ նրա պարունակության բարձրացման հետ միասին: Երկու դեպքում էլ մետաբոլիկ ադապտացիոն վերակառուցումների թերի լինելը ի հայտ է գալիս ԼԳՕ-ի ռեակցիաներում դիսբալանսով եւ հակաօքսիդանտային անբավարարությամբ: Թաղանթների կառուցվածքա-ֆունկցիոնալ վերափոխումը իրականանում է դրանց թափանցելիության մեծացմամբ, որը ի հայտ է գալիս արյան պլազմայում միջին մոլեկուլների զգալի աճով, գլյուկոզա-6-ֆոսֆատդեհիդրոգենազի, հիստիդազի, ուրոկանինազի ակտիվությամբ: Հակաօքսիդանտային համակարգի եւ ԼԳՕ-ի դիսբալանսը, կենսաթաղանթների կառուցվածքա-ֆունկցիոնալ վերափոխումը իրականանում է ազատ ռադիկալային պայթյունային ձևով, որը ներգրավված է պրոպիլտիինի սեկրեցիայի նեյրոտրանսմիտերային վերահսկման ֆունկցիոնալ խանգարման պայթյունային մեջ: Ստացված արդյունքները հիմնավորում են պլազմային պրոպիլտիինի մակարդակի հակաօքսիդանտային ճշտման հնարավորությունը:

24. Ամատունի Վ. Գ., Ոսկանյան Ս. Հ., Պետրոսյան Մ. Ա. Անձավաբուժության ազդեցությունը բրոնխային ասթմայով տառապող հիվանդների թոքերի վնասիւյացիոն ֆունկցիայի վրա Ավանի աղի հանքի ստորգետնյա հիվանդանոցի պայմաններում /Հանրապետ. կլինիկական անձավաբուժական հիվանդանոց:- Երևան, 1996:- 11 էջ. 2 նկ., 2 աղ.:- Մատենագր.: 15 ան.:- Ռուս.:- Ավանդ, է ՀայկԳՏԼԳՀԻ-ում 18.10.96, թիվ 22 - Ap97

Առաջին անգամ ամփոփվում է անձավաբուժության ազդեցությունը բրոնխային ասթմայով տառապող հիվանդների թոքերի վնասիւյացիոն ֆունկցիայի վրա (ԹՎՖ): Հետադոսովել է 220 հիվանդ: ԹՎՖ-ն ուսումնասիրվել է պնեմոտալյոսմետրիայի եւ սպիրոգրաֆիայի միջոցով: Բուժման կուրսն ընթացել է 6 կամ 12 ժամ տևողությամբ 24 անձավաբուժական պրոցեդուրաներով: Անձավաբուժության արդյունքում աճում է արտաշնչման հզորությունը, 1 վրկ արագացված եւ ուժեղացված արտաշնչած ծավալի եւ թոքերի կենսական տարածության ցուցանիշները, նվազում է բրոնխների դիմադրությունը: Ֆունկցիոնալ

տվյալների առավել ցայտուն դրական փոփոխություններ գրանցվում են ատոպիկ ձևի, ԹՎՖ խանգարումների 1-11 աստիճանների դեպքում:

25. Ամատունի Վ. Գ., Ոսկանյան Ա. Հ., Պետրոսյան Մ. Ա. Բրոնխային ասթմայով տառապող հիվանդների անձավաբուժության արդյունավետությունը Ավանի աղի հանքի ստորգետնյա հիվանդանոցի պայմաններում ըստ կլինիկական տվյալների /Հանրապետ. կլինիկական անձավաբուժական հիվանդանոց:- Երևան, 1996:- 15 էջ, 2 աղ.:- Մատենագր. 14 ան.:- Ռուս.:- Ավանդ, է ՀայկԳՏԼԳՀԻ-ում 18.10.96, թիվ 23 - Ap97

Անձավաբուժության արդյունավետությունը որոշելու նպատակով հետազոտվել է բրոնխային ասթմայով եւ նախաասթմայով տառապող 245 հիվանդ: Բուժման կուրսն ընթանում էր 6 կամ 12 ժամ տևողությամբ 24 անձավաբուժական պրոցեդուրաներով: Ստացված տվյալները հնարավորություն են ընձեռում անձավաբուժությունը դիտարկել որպես անհրաժեշտ փուլ բրոնխային ասթմայի բուժման եւ կանխարգելման ընթացքում, որի արդյունավետությունը կախված է հիվանդության ձևից, փուլից, ծանրության աստիճանից եւ թոքերի վնասիւյացիոն ֆունկցիայի (ԹՎՖ) վիճակից: Անձավաբուժությունը առավել արդյունավետ է ատոպիկ ձևի, հիվանդության թեթև եւ միջին ծանրության, ԹՎՖ ոչ խոր եւ անկայուն փոփոխությունների դեպքում:

ՄԺԿ 63

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

26. Դարբինյան Ն. Է., Հենդտել Դ. Կ. Պամիդորի արմատների խցանման հարուցիչի (Pyrenochaeta lycopersici Schneider et Gerlach) դեմ միկրոկենսաբանական անտագոնիստների լաբորատոր փորձարկումը /Բույսերի պաշտպ. ԳՀԻ:- Մերձավան, 1996:- 7 էջ, 4 աղ.:- Մատենագր. 1 ան.- Ռուս.- Ավանդ, է ՀայկԳՏԼԳՀԻ-ում 07.11.96, թիվ 30 - Ap97

Ուսումնասիրված է *Bacillus subtilis*, *Pseudomonas fluorescens*, *Streptomyces graminofaciens* բակտերիաների անտազոնիստական հատկությունները *Pyrenochaeta lycopersici* դեմ *in vitro* փորձերում: Փորձարկվել են բակտերիաների տարբեր կոնցենտրացիաներ: Հայտնաբերված է, որ սնկի դեմ առավել արդյունավետ են *B.subtilis*-ի $0,5 \cdot 10^8$ cfu/մլ, այնուհետև *S.graminofaciens*-ի $3,1 \cdot 10^5$ cfu /մլ կոնցենտրացիաները:

ՄԺԿ 681.5

ԱՎՏՈՄՍՏԻԿԱ

27. Ծատուրյան Ա. Ռ. Մինգույար թվի օգտագործման մասին՝ ինքնաթիռի կողմնային շարժմամբ կառավարման համակարգի համար նորմալացնող կոմպենսատորի նախագծման ժամանակ /Հայ. պետ. ճարտարագետ. համալս.- Երևան, 1996:- 8 էջ, 4 նկ.:- Մատենագր.- 3 ան.- Ռու.- Ավանդ. է ՀայկԳՏԼԳՀ-ում 04.09.96, թիվ 4 - Ap97

Ծարադրվում են բազմաչափ ավտոմատ կառավարման համակարգերի այսպես կոչված »ուղղվածության« հատկության պատճառով ինքնաթիռի կողմնային շարժմամբ կառավարման մեջ առաջացող հիմնախնդիրները: Բերվում են ինքնաթիռի կողմնային շարժման դինամիկայի բարդության հաճախականային ցուցանիշները և օբյեկտի տրված մատրիցային փոխանցման ֆունկցիայի հարթացումը ապահովող նորմալացնող կոմպենսատորի նախագծման տարբերակը:

ՄԺԿ 7

ԳԵՂԱՐՎԵՍ

28. Դանիլովա Ա. Վ. Մոլիերի կատակերգությունների բնադրությունների պատմությունից /Արվեստի ին-տ:- Երևան,

1996:- 18 էջ:- Մատենագր.- 22 ան.- Ռու.- Ավանդ. է 19.09.96, թիվ 12 - Ap97

Հոդվածը նվիրված է Արշակ Բուրջայանի նորարարական որոնումներին: Հիմնվելով բազմաթիվ գրավոր վկայությունների վրա, հեղինակը բացահայտում է հիմնական ստեղծագործական սկզբունքները, որոնցով ղեկավարվում էր Ա. Բուրջայանը, դիմելով Մոլիերի կատակերգություններին »Երեսակայական հիվանդը«, 1921-1942; »Սկապենի արարքները« 1924): Հետևելով ժամանակակից թատերական ուղղությունների պահանջներին, ռեժիսորը ազատագրել է Մոլիերի պիեսները տվյալ պատմական ժամանակաշրջանի իրական կողմերից: Նա կարողացել է բացահայտել Մոլիերի թատերայնության առանձնահատկությունները, զավեշտական տարրերը, գիտակցաբար ընդգծելով այն, ինչը որ կապում էր Մոլիերի կատակերգությունները ժողովրդական հրապարակային հանդիսությունների հետ:

ՄԺԿ 72

ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

29. Սարգսյան Ա. Հ. Պենզաշենի նռախորան եկեղեցին և նրա տեղը նմանատիպ հուշարձանների շարքում /Եր. ճարտարաշին. ին-տ:- Երևան, 1996:- 9 էջ, 3 նկ.:- Մատենագր. 5 ան.- Հայ.- Ավանդ. է ՀայկԳՏԼԳՀ-ում 03.09.96, թիվ 3- Ap97

Ներկայացվում են Պենզաշենի ճարտարապետական հուշարձանների հատակագծային և ծավալատարածական հորինվածքի առանձնահատկությունները, աստիճանական կառուցապատման ժամանակագրական և հորինվածքային կարգը, ընդհանուր հորինվածքում առանձին բաղադրիչ մասերի կարևորությունը, դրանց պահպանման կամ վերացման մասնագիտական հիմնավորումները: Մանրամասն վերլուծվում է ճարտարապետական դոմինանտի՝ նռախորան գմբեթավոր եկեղեցու հորինվածքային և ժամանակագրական տեղը ինչպես հուշարձաններում, այնպես էլ նույնատիպ եկեղեցիների շարքում:

Պարզված է, որ այն իր աչքի ընկնող տեղադրությամբ եւ հորինվածքային ձեւերով ունեցել է թելադրող նշանակություն հուշարձանախմբի մյուս կառույցների ինչպես տեղադրման, այնպես էլ հորինվածքային խնդիրների լուծման գործում: Այն իր ճարտարապետական հորինվածքով, գեղարվեստական հարդարանքի տարրերով ունի հասուն դրսևվորումներ եւ պատկանում է նույնատիպ հուշարձանների շղթայի ավարտուն եւ կատարելապես ձեւավորված օրինակների թվին: Դրա ամենաակնառու արտահայտությունը արտաքուստ ուղղանկյուն հատակագիծն է՝ չորս անկյուններում եռահարկ խուց-գաղտնարաններով, որով ստեղծվել է հակերկրաշարժային առումով բացառիկ արժեքավոր կոնստրուկտիվ համակարգ: Մանրամասն վերլուծելով հուշարձանախմբի՝ քաղաքաշինական միջավայրը, պահպանվածությունը, հավելումները եւ կրած փոփոխությունները, կոնկրետ առաջարկություններ են արվում շրջապատող միջավայրի բարեկարգման, մասնակի վերակառուցման, պահպանության պայմանների լավացման խնդիրների հետ կապված:

30. Անտոնյան Վ. Ստորգետնյա ուրբանիստիկան եւ պատմական քաղաքային կենտրոնի վերակառուցման խնդիրները /Եր. ճարտարաշին. ին-տ: Երևան, 1996:- 36 էջ:- Մատենագր.

21 ան.:- Հայ.:- Ավանդ. է ՀայկԳՏԼԳՀԻ-ում 04.09.96, թիվ 5 - Ap97

Ժամանակակից ստորգետնյա ուրբանիստիկայի պրակտիկայի եւ նրա զարգացման փորձի ուսումնասիրությունը արտասահմանում եւ Երևանի պայմաններում ցույց է տալիս, որ խոշոր քաղաքների ստորգետնյա տարածքի յուրացումը ամենից առաջ կոչված է լուծելու զգալի կառուցապատման եւ սոցիալ-մշակութային գործունեության կիզակետեր հանդիսացող համաքաղաքային կենտրոնների վերակառուցման եւ զարգացման հիմնախնդիրները: Նշված հիմնախնդիրները պարունակում են մի շարք քաղաքաշինական, ճարտարապետական, հուշարձանների պահպանության եւ վերականգնման, բնապահպան, ինչպես նաեւ ինժեներական ենթահամակարգի զարգացման ինքնուրույն խնդիրներ, որոնց լուծումը կոչված է ժամանակակից քաղաքների միջավայրը հումանիզացնելու մարդուն համաչափ եւ հարմարավետ կենցաղի ծրագրերով: Երևանի վերջին տասնամյակների քաղաքաշինական փորձը ցույց է տալիս, որ

ստորգետնյա տարածքի յուրացումը սկսված է, որի մասին վկայում են քաղաքի կենտրոնական շրջանում նախագծված եւ կառուցված մի շարք ստորգետնյա հետիոտն եւ տրանսպորտային, ինչպես նաեւ հասարակական սպասարկման եւ ինժեներական կառույցները: Այսօր, երբ հանրապետությունը վստահորեն հաղթահարում է ճգնաժամային իրավիճակը, արագ տեմպերով աճում է Երևանի ավտոմոբիլացումը, ակնկալվում են արտասահմանյան ներդրումներ շինարարական ծրագրերի համար, բնականաբար հանրապետության խոշոր քաղաքներում եւ, մասնավորապես, Երևանում, ստորգետնյա կառուցապատման եւ ճարտարապետության ծրագրերը դառնում են հրատապ, իսկ հիմնախնդիրն ընդհանրապես գիտական հետազոտման եւ ամփոփման կարիք ունի:

ՄԺԿ 33

ԷԿՈՆՈՄԻԿԱ

1. Ջրբաշյան Տ. է., Ավագյան Մ. Ս. Հայաստանի պետական արժեթղթերի շուկան /Հայ. պետ. ճարտարագիտ. համալս.: - Երևան, 1996: - 29 էջ, 5 նկ., 4 աղ.: - Մատենագր. 14 ան.: - Ռուս.: - Ավանդ. է ՀայկԳՏԼԳՀԻ-ում 12.11.96, թիվ 32-Ap97

Նդրվածը նվիրված է Հայաստանի պետական պարտատոմսերի շուկայի ձեւավորման հարցերին: Նրանում, որպես ֆինանսական գործիքներից մեկը, վեր են լուծվում պետական բյուջեի դեֆիցիտի ֆինանսավորման մեթոդները եւ պետական պարտատոմսերի շուկայի եւ ֆինանսական ցուցանիշների միջեւ կախվածությունները, արվում են համապատասխան եզրակացություններ:

2. Համազասպյան Ա. Ա. Ինվեստիցիոն հիմնադրամների անհրաժեշտությունը եւ ստեղծման առանձնահատկությունները Հայաստանում /Եր. ճարտարաշին. ին-տ.: - Երևան, 1996: - 18 էջ: - Մատենագր. 16 ան.: - Հայ.: - Ավանդ. է ՀայկԳՏԼԳՀԻ-ում 21.11.96, թիվ 38- Ap97

վերլուծվում և հիմնավորվում է ինվեստիցիոն հիմնադրամների ստեղծման անհրաժեշտությունը Հայաստանում, որը պայմանավորված է շուկայական տնտեսության պայմաններում նոր արդյունավետ ինվեստիցիոն մեխանիզմի ստեղծման անհրաժեշտությամբ: Մանրամասն քննարկվում են Հայաստանում ինվեստիցիոն հիմնադրամների ստեղծումն ու գործունեությունը կարգավորող հիմնական օրենսդրական և ենթաօրենսդրական ակտերի դրույթները, կատարվում առաջարկություններ ինվեստիցիոն հիմնադրամների ստեղծման և գործունեության արդյունավետության բարձրացման համար:

3. Խաչատրյան Ս. Հ. Հարկային իրավախախտումների կազմի համակարգումն ու դրանց բացահայտման վերահսկողական գործողությունների մեթոդաբանությունը /Գավառի պետ. համալս.: - 5 էջ: - Ռուս.: - Ավանդ. է ՀայկԳՏԼԳՀ-ում 09.12.96, թիվ 44 - Ap97

Հոդվածը նվիրված է հարկային իրավախախտումների կազմի համակարգումն ու դրանց բացահայտման վերահսկողական գործողությունների մեթոդաբանության հիմնավորմանը: Արդի պայմաններում հարկային իրավախախտումները համակարգվում են ըստ հետևյալ լսմբերի.

1. ձեռնարկատիրական գործունեության օրենսդրության իրավախախտումներ;
 1. հարկային մարմինների վերահսկողական ֆունկցիայի կատարման դեմ ուղղված իրավախախտումներ;
 3. հարկային հաշվետվությունների ու հաշվապահական հաշվառման վարման կարգի իրավախախտումներ;
 4. հարկային վճարումների պարտավորությունների կատարման դեմ ուղղված իրավախախտումներ:
- Այս համակարգումը հնարավորություն է տվել հիմնավորելու հարկային մարմինների վերահսկողական գործողությունների միջոցով իրավախախտումներ բացահայտելու նոր մեթոդներ, ինչպիսիք են.
- ա. վերլուծությունը;
 - բ. փաստացի վերահսկողությունը;
 - գ. հաշվապահական փորձաքնությունը;
 - դ. օպերատիվ-հետախուզական գործունեությունը:

4. Խաչատրյան Ա. Հ. Հարկերի վճարումներից խուսափելու դրդապատճառները /Գավառի պետ, համալս.: - Գավառ, 1996: - 3 էջ: - Ռուս.: - Ավանդ. է ՀայԳՏԼԳՀ-ում 09.12.96, թիվ 45- Ap97

Իրավական տեսանկյունից բացահայտվել են հարկերի վճարումներից խուսափելու չորս դրդապատճառներ՝ բարոյական, քաղաքական, տնտեսական և տեխնիկական: Բոլոր այս պատճառները առաջ են գալիս հարկային օրենսդրությունում և հարկային մարմինների գործունեությունում տեղ գտած բացթողումներից: Բնության առնելով հարկերի վճարումներից խուսափելու դրդապատճառների վերացման իրավական ներգործությունը, հեղինակը ներհանգել է հետևյալ դրույթներին.

1. կայուն օրենսդրական բազայի ստեղծում ունիֆիկացված տեսքով;
2. հարկային իրավախախտումների գլխավոր պատճառներից մեկը պետք է համարել հարկային օրենսդրության ոչ պարզ, անմատչելի ու անորոշ լինելը;
3. հարկերի վճարումներից խուսափելու դրդապատճառները պետք է սահմանել նրանց վերացման համար համադիր միջոցառումների ձեռնարկումով:

5. Գյուլումյան Ա. Վ. Փողի առաջարկի բանաձևը Հայաստանի համար /Եր. պետ. համալս.: - Երևան, 1996: - 12 էջ: - Հայ.: - Ավանդ. է ՀայկԳՏԼԳՀ-ում 11.12.96, թիվ 46 - Ap97

Ի տարբերություն միաբանկային համակարգի՝ երկաստիճան բանկային համակարգում փողի առաջարկը բնորոշվում է մի շարք առանձնահատկություններով: Այստեղ կարևոր տեղ է զբաղեցնում դրամական բազմապատկիչի հասկացությունը, որի միջոցով էլ արտահայտվում է այդ համակարգի երկու մակարդակների՝ կենտրոնական բանկի և առևտրային բանկերի միջև կապը: Կենտրոնական բանկը, որը փողի առաջարկի կարգավորման հիմնական պատասխանատու հաստատությունն է երկաստիճան բանկային համակարգում, պետք է հստակ տարանջատի այն գործոնները, որոնք ազդում են դրամական բազմապատկիչի վրա և պայմանավորում դրա կոնկրետ մեծությունը: Հեղինակը բերում է բանաձև, որի միջոցով արտահայտվում է փողի առաջարկը Հայաստանում: Բանաձևում հատկապես հաշվի են առնված Հայաստանում կիրառվող պարտադիր

պահուստավորման մեխանիզմը եւ դրամավարկային քաղաքականության նպատակների հիերարխիան:

6. Գյուլումյան Ա. Վ. Ավելցուկային ռեզերվների գնահատումը /Եր. պետ. համալս.: - Երևան, 1996: - 8 էջ, 2 գրաֆ., 1 աղ.: - Հայ.: - Ավանդ. է ՀայկԳՏԼԳՀ-ում 11.12.96, թիվ 47- Ap97

Դրամական բազմապատկիչը պայմանավորող գործոններից յուրահատուկ տեղ են զբաղեցնում բանկերի ավելցուկային ռեզերվները, որոնց գնահատումը կարևորվում է նաև բանկերի վարկային ներուժի բացարձակ գնահատման, ինչպես նաև այն հարցի պարզաբանման առումով, թե բանկերը արտարժույթային պահեստավորման որ մասն են իրականացնում դրամով ռեզերվների հաշվին: Հեղինակն առաջարկում է ավելցուկային ռեզերվների գնահատման մեթոդ, որն առավել համապատասխանում է բազմապատկիչի վերլուծության տեսանկյունից, ինչպես նաև փաստացի տվյալների վրա ներկայացնում է ավելցուկային ռեզերվների համապատասխան գնահատված ցուցանիշները:

7. Նալչաջյան Թ. Ա., Հարությունյան Ա. Ս. Դրամի նկատմամբ պահանջարկի կանխատեսման սկզբունքները /ՀՀ կենտրոնական բանկ: - Երևան, 1996: - 7 էջ: -Մատենագր. 3 ան.: - Հայ.: - Ավանդ. է ՀայկԳՏԼԳՀ-ում 12.12.96, թիվ 48 - Ap97

Կարելի է առանձնացնել երկու հիմնական մեթոդ եւ մոտեցում դրամի նկատմամբ պահանջարկի կանխատեսման համար: Առաջին մոտեցումը ռեզերվսիռն վերլուծության օգնությամբ դրամի նկատմամբ պահանջարկի ֆունկցիայի կառուցման մեջ է: Երկրորդ մոտեցումը հիմնվում է դրամի շրջանառության արագության արենդի ուսումնասիրության վրա: Այս կամ այն մեթոդի ընտրությունը հիմնականում կատարվում է, տնտեսությանը բնորոշ վարքագծերի, ժամանակի ընթացքում կայունության եւ հնարավոր տվյալների առկայությունը հաշվի առնելով: Դրամի նկատմամբ պահանջարկի ֆունկցիայում, որպես բացատրական փոփոխականներ, հիմնականում օգտագործվում են իրական գործարքներին վերաբերվող փոփոխականը (ամենից հաճախ իրական համախառն ներքին արդյունքը), գների մակարդակը եւ փողի տնօրինման ծախսերը, այսինքն տոկոսադրույքը: Դրամի պահանջարկի կանխատեսումը պահանջում է նաև

արտադրության իրական ծավալների գնահատում, որը որոշվում է տնտեսության արտադրական հնարավորություններով: Կարճ ժամանակահատվածում իրական համախառն ներքին արդյունքի աճը կարելի է կանխատեսել նախորդ ամիսների աճի արենդը հետազոտելու միջոցով, որը, սակայն, պետք է ճշտվի նաև այն գործոնների ազդեցությամբ, որոնց հանդես գալու հավանականությունը կանխատեսվող ժամանակահատվածում մեծ է:

8. Հարությունյան Ա. Ս. Ֆինանսական ծրագրավորման անհրաժեշտությունը /ՀՀ կենտրոնական բանկ: - Երևան, 1996: - 7 էջ: - Մատենագր. 3 ան.: - Հայ.: - Ավանդ, է ՀայկԳՏԼԳՀ-ում 12.12.96, թիվ 49 - Ap97

Մարդկային հասարակարգի էվոյուցիայի որոշակի պահերին եւ, հատկապես, առանձին տնտեսությունների անցման փուլերում, զգացվում է տնտեսական կայունացման ծրագրերի ընդունման եւ իրականացման անհրաժեշտություն: Այս առումով տնտեսական կայունացման ծրագրերը տնտեսական չափանիշների եւ գործունեության ձեռքի մի ամբողջություն են,

որն ուղղված է մակրոտնտեսական որոշակի նպատակների ձեռքբերմանը, որոնց թվում են՝ վճարային հաշվեկշռի կարգավորումը, արտադրողական ներուժի օգտագործումը եւ գների կայունության պայմաններում տնտեսական աճի երկարաժամկետ ապահովումը: Այսպիսով, հաշվեկշռվածության խախտումները վերացնելու եւ տնտեսական զարգացումը խթանելու նպատակով կազմվող ծրագրերն, իրենց առջև դնելով գների ցածր եւ կայուն մակարդակ ու տնտեսական աճ ապահովելու խնդիրները, իրականացվում են տնտեսական քաղաքականության երկու հիմնական ուղղություններով, դրամավարկային քաղաքականության կամ պետական ծախսումների կարգավորման միջոցով: Վերջինիս իրագործման համար առաջնային է դառնում ֆիսկալ քաղաքականությունը:

9. Հովակիմյան Ի. Ռ. Ֆունկցիոնալ արժեքային վերլուծությունը (ՖԱՎ) հատուկ տեխնոլոգիական սարքավորումների նախագծման մեջ /»Նեյտրոն« ԳԱՄ: -

Երևան, 1996: -218 էջ, 39 աղ., 16 նկ., 2 հավելվ: - Մատենագր. 256
ան.: -Ռուս.: - Ավանդ. է ՀայկԳՏԼԳՀ-ում 25.12.96, թիվ 50- Ap97

Մենագրությունը նվիրված է ՖԱՎ-ի հրատապ հիմնախնդիրներին և
ուղղված է ՖԱՎ-ի կիրառման մեթոդաբանության ու պրակտիկայի մի
քանի հիմնական հարցերի հետագա մշակմանը՝ էլեկտրոնային և
էլեկտրատեխնիկական արդյունաբերության մի շարք
արտադրատեսակների ֆունկցիայի և կառուցվածքի օպտիմալացման,
դրանց որակի բարձրացման, ինքնարժեքի իջեցման և նշանակալից
տնտեսական էֆեկտի ստացման նպատակով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ
ԵՎ ԱՌԵՎՏՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԼՐԱՏՎՈՒԹՅԱՆ
ԵՎ ՏԵԽՆԻԿԱՏՆՄԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ
(ՀայԳՏԼԳՀ)

ԱՎԱՆԴԱԴՐՎԱԾ ԳԻՏԱԿԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

ԵՌԱՄՍՅԱ ՍԵՂՄԱԳՐԱՅԻՆ ԺՈՂՈՎԱԾՈՒ
թիվ 1

ԵՐԵՎԱՆ 1997

ՄԸԿ 37

ՄԱՆԿԱՎԱՐԹՈՒԹՅՈՒՆ

10. Երիցյան Ա. Յու. Հայկական դպրոցի 4-7-րդ դասարաններում ժուսաց լեզվի ժամերին հաղորդակցման ժուսալեզու միջավայրի ձևավորման մեթոդական մոտեցումներ /Հայկ. պետ. մանկ. ին-տ: - Երևան, 1997: - 16 էջ: -Մատենագր. 12 ան: - Ռուս.: -Ավանդ. է ՀայկԳՏԼԳՀԻ-ում 15.01.97, թիվ 58- Ap97

Ուսումնասիրվում է հայկական դպրոցի 4-7-րդ դասարանների ժուսաց լեզվի ուսուցման մոդելը: Նրա հիմքում ընկած է հաղորդակցության ուսուցման սկզբունքը: Առաջարկվում է աշակերտների լեզվամտածողության ակտիվացման համար ուսուցման ժամանակի նշանակալի մասը հատկացնել առաջադրանքների կատարմանը ժամանակավոր միջին-խմբերում, համատեղ քննարկման ընթացքում, որը կրնա արհեստականորեն ստեղծված ժուսալեզու միջավայրում, ուսումնական տեքստի հիման վրա կազմված թեմատիկ գրույցների ձևով: Բոլորին է հայտնի, որ խոսել սովորելու համար պետք է խոսել: Լեզվին տիրապետելու համար պետք է օգտվել կենդանի հաղորդակցման միջոցներից:

ՄԸԿ 51

ՄԱԹԵՄԱՏԻԿԱ

11. Մելիքյան Վ. Շ., Ավագյան Ա. Ս., Ամիրխանյան Կ. Գ., Մանուչարյան Դ. Վ. Ոչ հստակ բազմությունների տևության հիման վրա թվային սխեմաների տրամաբանական մոդելավորում /Հայ. պետ. ճարտարագիտ. համալս.: - Երևան, 1996: - 10 էջ, 9 նկ., 1 աղ.: - Մատենագր. 36 ան.: - Ռուս.: -Ավանդ. է ՀայկԳՏԼԳՀԻ-ում 12.11.96, թիվ 31- Ap97

Առաջարկված է որոշակի ձևափոխություններից հետո ոչ հստակ բազմությունների տևության տարրերի կիրառմամբ թվային սխեմաների մոդելավորման մեթոդիկա: Դա թույլ է տվել զգալիորեն մեծացնել սխեմայի հանգույցներում ազդանշանների տեսքի վերարտադրման ճշտությունը, պահպանելով ավանդական տրամաբանական մոդելավորման արագությունը: Դիտարկված են սխեմաների վերլուծության մշակված մեթոդիկայի կիրառության հարցերը արտաքին ապակայունացնող գործոնների փոփոխման այն սահմանների որոշման խնդրի համար, որոնց դեպքում մոդելավորվող սխեման պահպանում է իր աշխատունակությունը: Բերված է առաջարկված մեթոդիկայի էությունը և նրա արդյունավետությունը բացահայտող հաշվարկի օրինակ:

ՄԸԿ 53

ՖԻԶԻԿԱ

12. Քոչարյան Լ. Ա., Հարությունյան Է. Մ., Հարությունյան Ս. Ա., Քոչարյան Ա. Լ. Գամմա-ռեզոնանսային սպեկտրոսկոպիայի մեթոդով օպտիկա-ակուստիկական Էֆեկտի դիտումը /Ֆիզիկայի կիրառական պրոբլեմների ին-տ: - Երևան, 1996: - 5 էջ, 1 նկ.: - Մատենագր. 8 ան.: - Ռուս.: - Ավանդ. է ՀայկԳՏԼԳՀԻ-ում 02.12.96, թիվ 42 - Ap97

Ուսումնասիրվել է լազերային ճառագայթի ազդեցությունը գամմա-ռեզոնանսի երևույթի վրա: Ստացված է, որ լազերային ճառագայթի ազդեցության տակ մյուսբաուերյան սպեկտրի տեսքը փոխվում է: Դիտված փոփոխությունը բացատրվում է նմուշում գրգռված ակուստիկ ալիքներով, որոնք առաջացել են օպտիկա-ակուստիկական Էֆեկտի շնորհիվ:

13. Հարությունյան Է. Մ., Քոչարյան Ա. Լ. Ռենտգենյան ճառագայթման դիֆրակցիան մեծ ամպլիտուդով հանդիպակաց մակերևութային ակուստիկ ալիքների վրա /Ֆիզիկայի

կիրառական արոբոլոգիայի ին-տ: - Երևան, 1996: - 6 էջ, 3 նկ.: - **Մատենագր. 4 ան.:** - **Ռուս.:** - **Ավանդ. է ՀայկԳՏԼԳՀԻ-ում** 02.12.96, թիվ 43- **Մ97**

Ուսումնասիրված է ռենտգենյան ճառագայթային դիֆրակցիան քվարցի միաբյուրեղում գրգռված հանդիպակաց մակերևութային ակուստիկ ալիքների (ՄԱԱ) իմպուլսների վրա: Յույց է տրված, որ դիֆրակցված ռենտգենյան ճառագայթային ինտենսիվությունը եւ ձևը ըստ ժամանակի կախված է ՄԱԱ իմպուլսների մեծությունից եւ դրանց իրար ծածկման աստիճանից:

14. Հարությունյան Է. Մ., Քոչարյան Ա. Լ. Յրման մյուսբաուերյան սպեկտրի ձևը կոհերենտ գերձայնի մոդուլման դեպքում /Ֆիզիկայի կիրառական արոբոլոգիայի ին-տ: - Երևան, 1997: - 9 էջ, 3 նկ.: - **Մատենագր. 2 ան.:** - **Ռուս.:** - **Ավանդ. է ՀայկԳՏԼԳՀԻ-ում** 10.01.97, թիվ 55 - **Մ97**

Ուսումնասիրվել է գերձայնային դաշտի կոհերենտության ազդեցությունը ցրման մյուսբաուերյան սպեկտրի ձևի վրա: Փորձում հակադարձ ցրման երկրաչափության դեպքում դիտվել է մոդուլման մյուսբաուերյան սպեկտրի բաղադրիչների ինտենսիվությունների օսցիլյացիայի երևույթը, գամմա - ռեզոնանսային գծի ինտենսիվության գրոյացումը, ինչը համապատասխանում է գերձայնային դաշտի 100 տոկոսանոց կոհերենտությանը:

15. Օվանեսով Գ. Թ., Մաշուրյան Ա. Մ., Գրիգորյան Վ. Ա. Ամորֆ-բյուրեղական պոլիքրոպրենի բյուրեղացման գործընթացի ուսումնասիրությունը ջերմամշակման ժամանակ եւ նրա երկու հավասարակշռված հալման ջերմաստիճանները /Հայ. պետ. ճարտարագիտ. համալս.: - Երևան, 1997: - 15 էջ, 6 նկ.: - **Մատենագր. 9 ան.:** - **Ռուս.:** - **Ավանդ. է ՀայկԳՏԼԳՀԻ-ում** 23.01.97, թիվ 61- **Մ97**

Կինետիկ ուսումնասիրություններով հաստատված են ամորֆ-բյուրեղական քլորոպրենային կաուչուկի ջերմամշակման երկու ջերմաստիճանային տիրույթներ, որոնք տարբերվում են բյուրեղացման

մեխանիզմով: Ապացուցված է երկու հալման ջերմաստիճանների գոյությունը: Դրանցից մեկը աննշան գերազանցում է պոլիքրոպրենի թվացող ջերմաստիճանը, որը բյուրեղացված է հաստատուն արագությամբ հնարավորին չափ բարձր ջերմաստիճանում, իսկ երկրորդը հավասար է հավասարակշռված հալման ջերմաստիճանին: Այդ երկու հալման հավասարակշռված ջերմաստիճանները պայմանավորված են անսահման մեծ բյուրեղների հալումով, որոնք ունեն շղթաների ծավալածքներ բյուրեղի երկու մակերևութների վրա, կազմված միայն կարգավորված ծավալածքներից եւ բյուրեղներից, որոնց մեջ անսահման երկար մոլեկուլները ուղղորդված են:

ՄԻԿ 55

ԵՐԿՐԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

16. Վարդանյան Վ. Պ., Մինայան Ռ. Ս. Կառուցվածքային տրենդի կիրառումը հիդրոերկրաբանական քարտեզների վերլուծության համար /Եր. պետ. համալս.: - Երևան, 1996: - 3 էջ: - **Մատենագր. 3 ան.:** - **Ռուս.:** - **Ավանդ. է 27.12.96, թիվ 52- Մ97**

Խորքային հոսքերի հայտնաբերման ժամանակ հաճախ ռեզիդուալ ֆոնի ազդեցության պատճառով առաջանում են դժվարություններ: Այդ խնդրի լուծումը որոշ չափով պարզեցվում է, եթե կիրառվում է այսպես կոչված կառուցվածքային տրենդ, որը մաթեմատիկորեն բերվում է ռեզիդուալ եւ լոկալ անոմալիաների տարանջատմանը: Մեծ հաջողությամբ քարտեզների տրենդ - վերլուծությունն առաջին անգամ օգտագործված է Սևանա լճի ջրահավաք ավազանի հիդրոերկրաբանական տվյալների մշակման ընթացքում:

17. Վարդանյան Վ. Պ. Ջրամատակարարման նպատակով ստորերկրյա ջրերի հայտնաբերումը Սևանի ջրավազանի բարձր նիշերում /Եր. պետ. համալս.: - Երևան, 1997: - 16 էջ, 1 նկ.: - **Մատենագր. 4 ան.:** - **Ռուս.:** - **Ավանդ. է 29.01.97, թիվ 68- Մ97**

Չնայած կատարված բազմաթիվ գիտաարտադրական աշխատանքներին՝ Սեւանի ավազանում ջրամատակարարման մի շարք հարցեր մնում են չլուծված, այդ թվում հատկապես հիպոսմոտրիկ բարձր նշերում տնդակայված բնակավայրերի խմելու ջրի խնդիրները: Այդ նպատակի համար առաջարկվում է օգտագործել այն ստորերկրյա հոսքը, որն անցնում (գտնվում) է ավելի խորը, քան վերին նիշերում բեռնաթափվող աղբյուրների ջրերը: Առաջարկվում է այդ աշխատանքների կատարման դաշտային ուսումնասիրությունների մեթոդիկա: Առաջարկված է նաև նախատեսվող ջրառների տնդակայման սխեմա:

18. Վարդանյան Վ. Պ., Մինասյան Ռ. Ս. Ստորերկրյա ջրահոսքերի ծախսի գնահատումը հիդրոդինամիկական և ներկրաֆիզիկական տվյալներով /Եր. պետ. համալս.: - Երևան, 1997: - 4 էջ: - Մատենագր. 4 ան.: - Ռուս.: - Ավանդ. է ՀայկԳՏԼԳՀ-ում 29.01.97, թիվ 69- Ap97

Ստորերկրյա ջրահոսքերի ծախսի որոշումը անհրաժեշտ է ջրաբալանային հաշվարկների, հետախուզական-շահագործողական հորատանցքերի տնդադրման համար: Հաշվի առնելով խնդրի գործնական լուծման բարդությունը հիդրոներկրաբանական նյութերի սակավության կամ բացակայության պայմանների դեպքում՝ առաջարկվում է համատեղ օգտագործել հիդրոդինամիկական և ներկրաֆիզիկական մեթոդների տվյալները՝ հիմնվելով ստացված կորելիացիոն կապերի վրա: Որպես օրինակ բերված է Սեւանա լճի ավազանի տարածքում հայտնաբերված մի շարք ստորերկրյա ջրահոսքերի ծախսի հաշվարկի մեթոդիկան և ստացված արդյունքները:

УДК 57-59

ԿԵՆՍԱԸԱՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

19. Մամիկոնյան Թ. Հ., Ղուկասյան Գ. Ս. Նյութեր Հայաստանում ծաղկային և դեկորատիվ մշակաբույսերի ֆուգարիոզների ուսումնասիրության վերաբերյալ

/Բուսաբանության ին-տ: - Երևան, 1996: - 6 էջ, 2 աղ.: - Մատենագր. 4 ան.: - Ռուս.: - Ավանդ. է ՀայկԳՏԼԳՀ-ում 27.01.97, թիվ 63- Ap97

Փակ գրունտի ծաղկային և դեկորատիվ բույսերի միկոբիոտայի ուսումնասիրության ժամանակ հայտնաբերվել են *Fusarium* ցեղի 12 տեսակի և վարիացիաների սնկեր, որոնք պատկանում են 5 բաժանմունքների: Կատարված է տեսակների անալիզ ըստ բաժանմունքների: Գերակշռող տեղ էին գրավում *Elegans* բաժանմունքի ներկայացուցիչները: Երկրորդ տեղը, ըստ տարածվածության, զբաղեցնում էին *Martiella* բաժանմունքի ֆուգարիները, որոնց հաջորդել էին *Discolor*, *Roseum* և *Eupionnotes* բաժանմունքները: Բացահայտված ֆուգարիոզների համար սուբստրատ էին հանդիսացել 19 ընտանիքի պատկանող 40 տեսակի բույսեր: Պարզվել է, որ ավելի շատ ֆուգարիոզային վարակվածության հակված է ռեմոնտանտ մելսակը:

20. Ղազարյան Վ. Վ., Զաքարյան Ս. Հ., Ռուսյան Գ. Վ. Պահեստային նյութերի և քլորոֆիլի պարունակության սեզոնային դինամիկան ծառային ինտրոդուցենտների ընձյուղներում /Բուսաբանության ին-տ: - Երևան, 1996: - 5 էջ, 3 նկ.: - Մատենագր. 10 ան.: - Ռուս.: - Ավանդ. է ՀայկԳՏԼԳՀ-ում 27.01.97, թիվ 64 - Ap97

Ուսումնասիրվել է ազոտային միացությունների, ածխաջրերի և քլորոֆիլի քանակության փոփոխության սեզոնային դինամիկան ծառային ինտրոդուցենտների միամյա ընձյուղներում, որոնք ներմուծված են Երևանի բուսաբանական այգի տարբեր աշխարհագրական մարզերից: Պարզվել է, որ հարավային ծագում ունեցող ինտրոդուցենտները ամբողջ տարվա ընթացքում հանդես են բերում պահեստային նյութերի և քլորոֆիլի քանակության աննշան տատանումներ այն դեպքում, երբ կովկասյան տեսակները բնութագրվում են նյութերի ավելի զգալի ձևափոխմամբ:

21. Ղուկասյան Գ. Ս. Որոշ տվյալներ կակտուսների միկրոմիցենտների վերաբերյալ Հայաստանի Բուսաբանական այգու պայմաններում /Բուսաբանության ին-տ: - Երևան, 1995: 4

էջ: - Մատենագր. 15 ան.: - Հայ.: - Ավանդ. է ՀայկԳՏԼԳՀԻ-ում 27.01.97, թիվ 65- Ap97

Վերջին տարիներին Բուսաբանության ինստիտուտի փակ գրունտի պայմաններում անց են կացվել հատուկ ուսումնասիրություններ կակտուսների միկրոմիցենտների վերաբերյալ: Հետազոտման արդյունքներում առանձնացվել են 21 տեսակի սնկեր, որոնք պատկանում են 1 ենթաբաժնի, 1 դասի, 4 կարգի, 5 ընտանիքի եւ 11 ցեղի: Բերված է միկրոմիցենտների կարգաբանական անալիզը: Բացահայտված սնկերի թվում մեծ վտանգ են ներկայացնում բույսերի արմատային փտախտ եւ թռռումում առաջացնող Fusarium եւ Verticillium ցեղերի սնկերը:

22. Բարսեղյան Հ. Խ. Աղտոտված օդի ազդեցությունը ֆիլոպլանայի միկրոմիցենտների կուլտուր-մորֆոլոգիական հատկությունների վրա /Բուսաբանության ին-տ: - Երևան, 1996: - 6 էջ: - Մատենագր. 12 ան.: - Ռուս.: - Ավանդ. է ՀայկԳՏԼԳՀԻ-ում 27.01.97, թիվ 66- Ap97

Ուսումնասիրվել են գործարանների մոտ, տրանսպորտով ծանրաբեռնված փողոցներում աճող ծառերի ֆիլոպլանայի միկրոմիցենտների որոշ կուլտուր-մորֆոլոգիական հատկությունները: Հայտնաբերված են այն կոնկրետ փոփոխությունները, որոնք տեղի են ունենում միկրոմիցենտների աճման ժամանակ: Դրանց հիման վրա հնարավոր կլինի անցկացնել օդի աղտոտվածության աստիճանի ինդիկացիան:

23. Ղուկասյան Գ. Ա. Դեկորատիվ եւ ծաղկային բույսերի միկոբիոտայի կարգաբանական անալիզ Հայաստանի փակ գրունտի պայմաններում /Բուսաբանության ին-տ: - Երևան, 1996: - 6 էջ, 1 աղ.: - Մատենագր. 8 ան.: - Հայ.: - Ավանդ. է ՀայկԳՏԼԳՀԻ-ում 27.01.97, թիվ 67- Ap97

Փակ գրունտի պայմաններում դեկորատիվ եւ ծաղկային բույսերի սնկաբանական ուսումնասիրության ընթացքում հայտնաբերվել են 83 տեսակի սնկեր 40 ընտանիքի պատկանող 91 տեսակի տեր-բույսերի վրա: Բացահայտված սնկերը պատկանում են 6 դասի, 12 կարգի, 14

ընտանիքի եւ 42 ցեղի: Բերված է միկրոմիցենտների կարգաբանական անալիզը: 10 տեսակի սնկեր հանդիսացան նոր՝ Հայաստանի միկոբիոտայի համար:

ՄԺԿ 61

ԲԺՇԿԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

24. Ավագյան Վ. Վ. Ռեկրեացիայի կոմպլեքսի կիրառումը ՀՀ քաղաքացիական ավիացիայի բժշկական ծառայության պրակտիկայի մեջ /Եր. պետ. բժշկ. համալս.: - Երևան, 1996: - 6 էջ: - Մատենագր. 14 ան.: - Ռուս.: - Ավանդ. է ՀայկԳՏԼԳՀԻ-ում 13.11.96, թիվ 36- Ap97

ԱԱռաջին անգամ ԱՊՀ երկրների քաղաքացիական ավիացիայի բուժ. ծառայության պրակտիկայի մեջ »Հայավիաբուժ«-ի բազայի վրա մշակված եւ ներդրված են կազմակերպության նոր ձևեր, որոնք հիմնված են ռեկրեացիոն եւ վերականգնողական միջոցառումների համաշխարհային կոմպլեքսի կիրառման վրա: Հետազոտվել է նաեւ հատուկ կոնտինգենտ ամառային կազմի եւ բազային ավիացիոն աշխատողների թվից:

25. Ավագյան Վ. Վ. Հայաստանի քաղաքացիական ավիացիայի աշխատողների կոնտինգենտի էպիդեմիոլոգիական հետազոտությունների կազմակերպումը եւ մեթոդիկան /Եր. պետ. բժշկ. համալս.: - Երևան, 1996: - 6 էջ: - Մատենագր. 8 ան.: - Ռուս.: - Ավանդ. է ՀայկԳՏԼԳՀԻ-ում 13.11.96, թիվ 37- Ap97

»Հայավիաբուժ« ավիաբժշկական պետական ձեռնարկության բազայի վրա մշակվել են Հայաստանում քաղաքացիական ավիացիայի աշխատողների կոնտինգենտի էպիդեմիոլոգիական հետազոտությունների նոր ձևեր:

Անց է կացվել Հայաստանի քաղաքացիական ավիացիայի 1990-1995թթ. օդանավերի բոլոր կարգի օդաչուների բժշկական քննության վիճակագրական տվյալների բազմակողմանի վերլուծություն:

ՄԴԿ 620.9

ԷՆԵՐԳԵՏԻԿԱ

26. Հայրապետյան Գ. Ա., Գամբարյան Կ. Հ., Մուրադյան Ռ. Տ., Սարգսյան Վ. Հ. Հայկական ԱԷԷԿ-ի հզորության օգտագործման միջոցառումների մշակումը, հաշվի առնելով նրա ընդարձակումը /Էներգետիկայի ՀԳՀ ին-տ: - Երևան, 1996: - 7 էջ, 1 նկ.: - Մատենագր. 7 ան.: - Ռուս.: Ավանդ. է ՀայկԳՏԼԳՀԻ-ում 12.11.96, թիվ 33 - Ap97

Հայկական ատոմային էլեկտրակայանի (ՀԱԷԿ) հուսալիության եւ անվտանգ աշխատանքի մակարդակի բարձրացման նպատակով, հաշվի առնելով նրա հզորության ընդարձակումը, առաջարկված են միջոցառումներ, կապված Հայկական էներգահամակարգի բերի գրաֆիկի բազիսում ՀԱԷԿ-ի աշխատանքի ապահովման տեխնիկական խնդիրների լուծման, ինչպես նաև վթարային իրավիճակում ռեժիմային պարամետրերի թույլատրելի սահմաններում պահպանման հետ: Տրված են տեխնիկական լուծման հիմնական սկզբունքները եւ դրված են խնդիրներ հետագա հետազոտման համար:

ՄԴԿ 621

ՄԵԶԵՆԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ

27. Պետրոսյան Գ. Լ., Գալոյան Ա. Հ., Մուսայելյան Գ. Վ., Պետրոսյան Վ. Գ. ճաքերի հաշվառման պայմաններում փոշենյութերի ֆիզիկա-մեխանիկական հատկությունների որոշման մեթոդ /Հայ. պետ. ճարտարագիտ. համալս.: -Երևան, 1996: - 6 էջ, 1 նկ.: - Մատենագր. 2 ան.: - Հայ.: - Ավանդ. է ՀայկԳՏԼԳՀԻ-ում 25.12.96, թիվ 51- Ap97

Ճարագրվում են փոշենյութերի ծակոտկենության պարամետրերի ու ճաքերի հաշվառման գործակցի որոշման, ինչպես նաև դրանց

դեֆորմացման գրաֆիկների կառուցման սկզբունքները: Օգտագործվում են ծակոտկեն նյութերի պլաստիկության դեֆորմացիոն եւ հոսունության տեսությունների բանաձևերը: Յուրյց են տրվում տարրեր տեսություններով ստացված ճաքերի հաշվառման գործակցների առանձնահատկությունները:

ՄԴԿ 621.3

ԷԼԵԿՏՐՍԵՆՆԻԿԱ

28. Ծատուրյան Ա. Ի., Կարդաշյան Գ. Ա., Հովհաննիսյան Ժ. Թ. Ծակոտկեն միջավայրում էլեկտրական դաշտի միջոցով ջերմափոխանակության կառավարման սարքի կառուցվածքի եւ ռեժիմի հիմնավորումը /Հայ. պետ. ճարտարագիտ. համալս.: - Երևան, 1996: - 14 էջ, 3 նկ.: - Մատենագր. 6 ան.: - Հայ.: - Ավանդ. է ՀայկԳՏԼԳՀԻ-ում 25.11.96, թիվ 39 - Ap97

Քննարկված եւ հիմնավորված է ծակոտկեն միջավայրում էլեկտրական դաշտի միջոցով ջերմափոխանակության կառավարման սարքի կառուցվածքը եւ ռեժիմը: Կատարված է փորձնական ուսումնասիրություն կոնկրետ ավազակավային նմուշների մոդելներում, որի շնորհիվ ի հայտ են բերված ռեժիմի ինտեգրալ պարամետրերը գդալի ջերմափոխանցման պայմաններում, ինչպես նաև գործընթացի ժամանակային բնութագրերը: Էլեկտրական դաշտի շնորհիվ անընդհատ ջերմափոխանցման երևույթը պահպանելու նպատակով երաշխավորվում է երկու ռեժիմ՝ ջրի անընդհատ մատակարարում եւ մետաղական ցանցի բևեռականության փոխանցատու: Հետազոտություններով հիմնավորված է բևեռականության փոփոխության եւ հեղուկի տեղափոխության անհրաժեշտությունը ջերմափոխանակության ինտենսիվացման համար: Հիմնավորված է, որ ռեժիմի պարամետրերի ճշտումը անհրաժեշտ է իրականացնել կոնկրետ միջավայրի համար: Երաշխավորվում է նմուշի ծավալում հոսանքի 0,1 Ա/մ² խտություն, 15-20 սմ միջէլեկտրոդային հեռավորություն, 8-9 Վ միջէլեկտրոդային լարում եւ բևեռականության փոփոխության 15-16 ժամյա պարբերություն:

29. Վերք Տ., Խոյնցյան Մ. Խ, Բաղայան Ն. Ա., Հարությունովա Մ. Ա. Էլենկարագրգաման ազդեցությունը լուիկի բերքատվության և որակի վրա /Գյուղատնտես. մեքենայացման և էլենկտրիֆիկացման ին-տ: - Երևան, 1996: - 2 էջ, 1 աղ.: - Մատենագր. 1 1 ան.: - Ռուս.: - Ավանդ, է ՀայկԳՏԼԳՀ-ում 14.01.97, թիվ 56 - Ap97

Բազմաթիվ հետազոտողների աշխատանքներում ցույց է արված, որ տարբեր էլենկարաֆիզիկական ներգործությունների օգտագործումը թույլ է տալիս արդյունավետորեն ազդել բույսերի կենսաբանական գործընթացների վրա: Մեր կողմից մշակված է էլենկտրական դաշտում սերմերի նախագանքային մշակման եղանակ, մասնավորապես լուիկի մշակաբույսի: Փորձերն անց են կացվել Հայաստանում »Ռոքսիադիա« Ասոցիացիայի մասնագետների հետ համատեղ: Արդյունքում պարզվել է, որ լուիկի փորձանական սածիլները պիտանի են դառնում սածիլման համար 5-6 օր շուտ մշակում չանցածների համեմատ, շուտ են մտնում ծաղկման փուլ, բերքի ու պտղի քաշը գերազանցում է 22-25 տոկոսով: Լուիկների քիմիական անալիզը ապացուցում է, որ պտուղների մեջ ընդհանուր շաքարը ըստ սորտերի ավելի է 8.8-24 տոկոսով և վիտամին "C"-ն՝ 27-48 տոկոսով: Այսպիսով, սերմերի վրա էլենկտրական դաշտի դրական ազդեցությունը նպաստում է վաղահասությանը, բերքատվության և որակի, ինչպես նաև տնտեսական շահավետության բարձրացմանը:

30. Մելիքյան Ա. Ը. Ծշադդմիկի մշակության ագրոտեխնիկական հարցերը /Հայկ. գյուղ. ակադեմիա: - Երևան, 1997: - 2 էջ: - Մատենագր. 3 ան.: - Հայ.: - Ավանդ, է 23.01.97, թիվ 59- Ap97

Ծշադդմիկը (*Lagenaria vilgaris*) քիչ տարածված բույս է, որը ժողովրդին հայտնի է իր բազմաձև և պտուղներով, որոնցից պատրաստում են տարբեր տեսակի ամաններ, ծխամորճեր, զարդատուփեր: Սակայն

այն հայտնի է նաև որպես բանջարեղեն: Այս ամենի հետ այն նաև գեղեցիկ զարդաբույս է: Մենդարժեր ունի շշադդմիկի գլանաձև տեսակը, որի մաշկը և պտղամիսը նուրբ են և համեղ: Արագածոտնի մարզում մեր կողմից ուսումնասիրություններ են տարվել նրա մի քանի պոպուլացիաների մշակության հետ կապված հարցերը պարզաբանելու ուղղությամբ: Վաղ բերք ստանալու, ինչպես և հասուն սերմեր ունենալու համար այն պետք է մշակել սածիլներով (թաղարներով): Բանի որ շշադդմիկը բարձր փաթաթվող բույս է, այն պետք է մշակել հատով՝ հենարանների վրա: Մենդի մեջ օգտագործելիս պտուղը ամբողջովին չեն պոկում, այլ կտրում են նրա մի մասը, որը հետո շարունակում է աճել: Այն հետագայում կարելի է նորից կտրել: Ծառ կարևոր են ժամանակին կատարվող ծերատումները: Մեկ բույսից կարելի է ստանալ մինչև 30 կգ բերք:

31. Մելիքյան Ա. Ը. Վայրի գազարի (գագրուկի) օգտագործման հեռանկարները և ագրոտեխնիկական հարցերը /Հայկ. գյուղ. ակադեմիա: - Երևան, 1997: - 2 էջ: -Մատենագր. 2 ան.: - Հայ.: - Ավանդ, է ՀայկԳՏԼԳՀ-ում 23.01.97, թիվ 60 - Ap97

Վայրի գազարի (գագրուկի) հայտնի երկու ենթատեսակները (*ssp.orientalis* և *ssp. occidentalis*) ամենուրեք հանդիպում են ՀՀ-ում, որոնք չնայած խիստ տարբերվում են իրենց մորֆոլոգիական հատկանիշներով, սակայն օգտագործման հեռանկարները նույնն են: Տերևային վարդակը վայրի շատ բանջարեղենների հետ խաշած վիճակում օգտագործվում է սննդի մեջ: Չի կարելի անտեսել դրանց սերմերի որպես համեմունք կիրառելը մսի, ձկան պահածոյացման, ինչպես նաև դրանցից ստացվող գերանիոլի և եթերային յուղի անտիսեպտիկ հատկությունը և օգտագործման հնարավորությունը բժշկության մեջ և պարֆյումերիայում: Մեր կողմից փորձարարական ճանապարհով մշակվել է վայրի գազարի ագրոտեխնիկական միջոցառումների համալիր: Այն լավ է մշակել ժապավենաձև, ցանքը կատարել ինչպես աշնանը, այնպես էլ գարնանը, ապահովելով միամյա բանջարային բույսերի մշակության բոլոր նախապայմանները:

32. Արաքսյանց Ա. է. »Արաքս« կոմբինացված հալած պանրի կենսաքիմիական բնութագրերի ուսումնասիրումը /Հայկ. գյուղ. ակադեմիա: - Երևան, 1996: - 19 էջ, 8 աղ.: -Մատենագր. 22 ան.: - Ռուս.: - Ավանդ. է ՀայկԳՏԼԳՀԻ-ում 12.11.96, թիվ 34- Ap97

Դիտարկվում են »Արաքս« նոր կոմբինացված հալած պանրի կենսաքիմիական բնութագրերը, որոնք համեմատվում են ստուգիչ նմուշների նույնատիպ բնութագրերի հետ: Հիմնվելով կենսաքիմիական ցուցանիշների վրա, հաշվարկվել է հալած պանրի սննդային, կենսաբանական և էներգետիկ արժեքները:

33. Արաքսյանց Ա. Է. Մերանների կազմումը և ուսումնասիրումը արագ հասունացող պանիրների արտադրության համար /Հայկ. գյուղ. ակադեմիա: - Երևան, 1996: - 19 էջ, 5 աղ.: - Մատենագր. 26 ան.: - Ռուս.: - Ավանդ. է ՀայկԳՏԼԳՀԻ-ում 12.11.96, թիվ 35 - Ap97

Բերված են կաթնայթթվային մանրէների որոշ շտամների ուսումնասիրության փորձերի արդյունքները արագ հասունացող պանիրների արտադրության համար մերաններ կազմելու նպատակով: Մերանի կազմի մեջ մտցվել էին հետևյալ շտամները՝ Str. paramesenterides 3728, Str. bovis 877, L. plantarum 2204 և Str. Lactis 3905: Ուսումնասիրվել էին կազմված մերանի տեխնոլոգիական և կենսաքիմիական հիմնական հատկությունները, պարզվել էր մերանի չափաքանակը:

34. Տեր-Նիկողոսյան Հ. Ն. Սիրիայի Արաբական Հանրապետության ևի Հայաստանի կրաքարերի ու բազալտների հատկությունների համեմատական վերլուծությունը /Եր. ճարտարա-շին. ին-տ: - Երևան, 1996: - 7 էջ., 2 աղ.: -Մատենագր. - 4 ան.: - Ռուս.: - Ավանդ. է ՀայկԳՏԼԳՀԻ-ում 28.11.96, թիվ 40- Ap97

Բերված են Սիրիայի Արաբական Հանրապետության կրաքարերի և բազալտների համար կատարված ֆիզիկա-քիմիական վերլուծության և ֆիզիկա-մեխանիկական փորձարկումների տվյալները: Ֆիզիկա-քիմիական հետազոտությունները կատարված են վերլուծության քիմիական, պետրոգրաֆիական, ռենտգենաֆազային, դիֆերենցիալ թերմոգրաֆիական եղանակներով, իսկ ֆիզիկա-մեխանիկական հատկությունները՝ համապատասխան ստանդարտներով: Ստացված տվյալները համեմատվել են Հայաստանի համապատասխան ապարների համար եղած վերլուծական տվյալների հետ: Համեմատական վերլուծությունը ցույց է տալիս Սիրիայի Հյուսիս-Արևելքի և Հայաստանի որոշ հանքավայրերի նույնանուն ապարների հատկությունների նմանությունը, որ պայմանավորված է երկրաբանական հասակով և առաջացման պայմաններով:

35. Տեր-Նիկողոսյան Հ. Ն. Սիրիայի Արաբական Հանրապետության բազալտների հանքավայրերի մշակման հնձանկարները /Եր. ճարտարա-շին. ին-տ: - Երևան, 1996: - 5 էջ: - Հայ.: - Ավանդ. է ՀայկԳՏԼԳՀԻ-ում 28.11.96, թիվ 41 - Ap97

Բերված են տվյալներ Սիրիայի Արաբական Հանրապետությունում բազալտների տարածման, նրանց երկրաբանական հասակի, հատկությունների մասին, որոնք, սակայն, տեխնիկական միջոցների անբավարարության պատճառով լիարժեք չեն շահագործվում: Ուսումնասիրելով բազալտների օգտագործման, մշակման և վերամշակման տեխնիկական հնարքները և տեխնոլոգիաները, ցույց է

տրված, որ այդ փորձը եւ տնխնուղոգիաները միանգամայն կիրառելի են սիրիական ապարների համար, եւ առաջարկվում է դրանք իրականացնել Սիրիական Արաբական Հանրապետության հյուսիս-արեւելյան տարածքի հանքավայրերի համար:

36. Մարտիրոսյան Ա. Ս. Պոլիմերային ծածկույթով տաքացնող կաղապարամածի կիրառմամբ բետոնի տաքացման ջերմային ռեժիմները /Եր. ճարտարաշին. ին-տ: - Երևան, 1996: - 12 էջ, 7 նկ.: - Մատենագր. 7 ան.: - Ռուս.: - Ավանդ, է ՀայկԳՏԼԳՀ-ում 27.12.96, թիվ 53- Ap97

Ընրված են կառուցվածքի իզոթերմիկ տաքացման, ջերմաստիճանի բարձրացման եւ սառեցման արագությունից կախված բետոնի տաքացման տարբեր ջերմային ռեժիմների վերլուծության արդյունքները: Որոշված են տարբեր ջերմային ռեժիմների դեպքում բետոնի տաքացման տևողությունը մինչև նրա 70% R28 ձեռքբերումը, ինչպես նաև տնսակարար էլեկտրական հզորությունը: Պարզված է պահանջվող հզորության մեծության կախվածությունը բետոնի տաքացման ջերմաստիճանի բարձրացման արագությունից, կառուցվածքի զանգվածից, կաղապարամածի ջերմահաղորդականության գործակցից եւ շրջակա օդի ջերմաստիճանից: Առաջարկված է բետոնի էլեկտրաջերմամշակման ամենակարճ տևողությունը, որի դեպքում կաղապարամածի շրջապտույտը կազմում է 1.5 օր:

37. Մարտիրոսյան Ա. Ս. Պոլիմերային ծածկույթով տաքացնող կաղապարամածով բետոնի ջերմային մշակման ժամանակ էներգաձախսումների կախվածությունը ջերմային ռեժիմների պարամետրերից /Եր. ճարտարաշին. ին-տ: -Երևան, 1996: - 10 էջ, 5 նկ.: - Մատենագր. 6 ան.: - Ռուս.: - Ավանդ, է ՀայկԳՏԼԳՀ-ում 27.12.96, թիվ 54 - Ap97

Դիտարկված են էներգաձախսումների կախվածությունը պոլիմերային ծածկույթով տաքացնող կաղապարամածի կիրառմամբ միաձույլ կառուցվածքների բետոնացման ժամանակ բետոնի տաքացման ջերմային ռեժիմների պարամետրերից եւ բետոնացման

պայմաններից: Բոլոր ռեժիմները ընդունված են սառեցման վերջում բետոնի 70% R28 ձեռքբերման պայմանով: Որոշված են տարբեր ջերմային ռեժիմներով բետոնի էլեկտրատաքացման ժամանակ էներգաձախսումները, ինչպես նաև պահանջվող հզորության կախվածությունը էներգաձախսումներից: Առաջարկված է ավանդականների համեմատությամբ ջերմաստիճանի բարձրացման, իզոթերմիկ տաքացման եւ սառեցման ամենացածր էներգատարողությամբ ռեժիմ:

38. Հարությունյան է. Պ. Առաջին հայրենադարձությունը եւ նրա անդրադարձը Երևանի քաղաքաշինության վրա (Նոր Արաբկիրի հիմնադրումը) /Եր. ճարտարաշին. ին-տ: -Երևան, 1997: - 8 էջ, 9 նկ.: - Մատենագր. 6 ան.: - Հայ.: -Ավանդ, է ՀայկԳՏԼԳՀ-ում 23.01.97, թիվ 62- Ap97

Հոդվածը վերաբերում է հայրենադարձների անդրանիկ ավանի՝ Նոր Արաբկիրի հիմնադրմանը, որ տեղի է ունեցել 1925թ. նոյեմբերի 29-ին: Դիտարկվում է նրա եւ հայրենադարձների վյուս ավանների քաղաքաշինական անդրադարձը Երևանի ճարտարապետության վրա: Միաժամանակ քննարկվում է Նոր Արաբկիրի գլխավոր հատակագիծը: Ներկայացվում են թեմային վերաբերող գծագրեր եւ լուսանկարներ:

ՄԺԿ 82

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

39. Ալոյան Լ. Ս. »Մշակ« լրագրի հրատարակախոսությունը 1905-1921թթ. /Եր. պետ. համալս.: - Երևան, 1997: - 54 էջ: -Հայ.: - Ավանդ, է ՀայկԳՏԼԳՀ-ում 15.01.97, թիվ 57- Ap97

Աշխատանքում »Մշակ« լրագրի հետարժրունիական 1905 - 1921թթ. ժամանակաշրջանի, նրա պարունակած գաղափարների եւ պատմության հետ է կապվում հայ առաջադիմական մի հոսանքի ազատականության ձեւավորումն ու զարգացումը արեւելահայ իրականության մեջ: Հայ ազատականության գաղափարները, որոնք

կենսունակ են այսօր եւս, գիտական տնտեսական լուրջ հետաքրքրություն են ներկայացնում ոչ միայն դրա անաչառ ուսումնասիրության իմաստով, այլև հայ հասարակական մտքի պատմության մեջ ունեցած նշանակությամբ: Ինչ ուղիով է զարգացել «Մշակը» Գրիգոր Արծրունուց հետո, ինչպիսին է նրա հրապարակախոսական բովանդակությունը՝ լրատվական ինչ արժեք է ունեցել այդ թերթը եւ, վերջապես, ինչպես է նպաստել հասարակական կարծիքի ձևավորմանը: Սրանք հարցեր են, որոնց ուսումնասիրությունն ունի արդիական նշանակություն հայ հասարակական մտքի պատմության նորովի գնահատման, ինչպես եւ հայ մամուլի ու հրապարակախոսության հետազոտության տնտեսական:

YDK 159©9

ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Մատոյան Ջ. Ա. Կակազողների ձեռքի տակտիկ գգայության ասիմետրիայի առանձնահատկությունները / Հայկ. պետ. մանկ. ին-տ.: - Երևան, 1997: - 9 էջ, 1 աղ., 1 նկ.: -Մատենագր. 23 ան.: - Ռուս.: - Ավանդ. է ՀայկԳՏԼԳՀ-ում 15.01.97, թիվ 91 - Ap97

Ուսումնասիրվել է կիսագնդերի ասիմետրիան եւ միջկիսագնդերի փոխազդեցությունները կակազողների մոտ, օգտագործելով ձեռքի մաշկային անալիզատորը, մեր կողմից մշակված 2 եղանակով: Ուսումնասիրությունը վեր է հանել հետևյալը.

1. Կակազողների մոտ բացակայում է կիսագնդերի տակտիկային գգայությունը եւ ասիմետրիան (ինչպես ամբիդեկստրների մոտ);

2. աջիկ կակազողների մոտ նկատվում է կիսագնդերի փոխազդեցության ասիմետրիայի «աջայնություն», այսինքն աջ կիսագնդերի ազդեցությունը ձախի վրա եւ ձախ կիսագնդի ազդեցության բացակայությունը աջի վրա (ինչպես նորմալ խոսքով աջիկների մոտ, բայց առավել արտահայտված):

2. Մատոյան Ջ. Ս., Մալոյան Ջ. Ա. Մանուալ տակտիկ հոգեթերապիայի առանձնահատկությունները /Հայկ. պետ. մանկ.

ին-տ.: - Երևան, 1997: - 7 էջ: - Մատենագր. 20 ան.: -Ռուս.: - Ավանդ. է ՀայկԳՏԼԳՀ-ում 16.04.97, թիվ 92 - Ap97

Նվիրված է հոգեթերապիայի մանուալ-տակտիկային մեթոդի առանձնահատկությունների ուսումնասիրմանը եւ այն գործոններին, որոնք որոշում են նրա բարձր արդյունավետությունը: Մեթոդը մեր կողմից կիրառվել է աղետի գոտու մեծահասակների եւ երեխաների նկատմամբ: 1988թ. Սպիտակի երկրաշարժից հետո: Գրականության մեջ կան տվյալներ, որոնք վկայում են ուժեղ եւ թույլ գրգռչների ազդեցության տարբեր բնույթների եւ էմոցիոնալ-բացասական թույլ, չգիտակցված գրգռչների բարձր սթրեսոզեն լինելու մասին: Հաշվի առնելով այդ տվյալները, մեր ստացած արդյունքների հիման վրա, ենթադրվում է, որ մանուալ-տակտիկային հոգեթերապիայի բարձր արդյունավետությունը պայմանավորված է ուժեղ հակասթրեսային հատկությամբ դրական, էմոցիոնալ-նշանակալից, թեւ եւ չգիտակցված դրական տեղեկատվության հոսքով, որը հասնում է հիվանդի ուղեղին հոգեթերապևտի ձեռքի ազդեցության տակ:

3. Մատոյան Ջ. Ս., Մալոյան Ջ. Ա. Ուսանողի ուսումնական գործունեության դրդապատճառների մասին /Հայկ. պետ. մանկ. ին-տ.: - Երևան, 1997: - 11 էջ, 1 աղ.: - Մատենագր. 6 ան.: -Ռուս.: - Ավանդ. է ՀայկԳՏԼԳՀ-ում 16.04.97, թիվ 93 - Ap97

Հետազոտվել է ուսանողի ուսումնական գործունեությունը կարգավորելիս տարբեր բովանդակության մոտիվացիաների նշանակությունը (եւ նրանց անորոշության մակարդակը) ուսուցման սկզբնական եւ ավարտական շրջաններում: Գործունեության միջին նշանակության մոտիվացիայի եւ տարբեր բովանդակության մոտիվացիաների անորոշության մակարդակը օգտագործվել է որպես ուսումնական գործընթացի թույլ բլոկների լատորոշիչ ցուցանիշ, հաշվի առնելով, որ որքան շատ է անորոշությունը գործունեության մեջ, այնքան շատ է անորոշությունը հոգեբանական համակարգի գործունեության մեջ: Ստացված արդյունքների վերլուծությունից կարելի է ենթադրել, որ ուսանողի ուսումնական գործունեության ամենաթույլ բլոկներ են (անկախ կուրսից). 1. օպերացիոնալ-կատարողական եւ տեղեկատվականը.

2. գործունեության ինքնակազմակերպման եւ ինքնակարգավորման զարգացման բլոկը:

4. Մալոյան Ջ. Ա., Մատոյան Ջ. Ս. Բուհում ուսումնառության տարբեր էտապներում ուսանողների մասնագիտական ուղղվածության ձեւավորման առանձնահատկությունների ուսումնասիրությունը /Հայկ. պետ. մանկ. ին-տ: - Երևան, 1997: - 7 էջ: - Մատենագր. 15 ան.: - Ռուս.: - Ավանդ. է ՀայկԳՏԼԳՀ-ում 16.04.97, թիվ 94 - Ap97

Նվիրված է մանկավարժական բուհի բանասիրական ֆակ-ի 1-4-րդ կուրսերի ուսանողների մասնագիտական ուղղվածության մակարդակների համեմատական ուսումնասիրմանը: Եզրակացությունները. 1. Բանասիրական ֆակ-ի գործունեության առավել թույլ օղակը մասնագիտական ընտրության բլոկն է: Ուսանողների մոտ 30 տոկոսը մանկավարժի մասնագիտության նկատմամբ հակվածության եւ նրա իրականացման պատրաստակամությունը չունեն: 2. Բանասիրական ֆակ-ի ուսումնադաստիարակչական աշխատանքների կազմակերպումը նպաստում է միջին մակարդակի առաջադիմություն ունեցող ուսանողների մասնագիտական ուղղվածության ձեւավորմանը: Ուսումնական բարձր մակարդակ ունեցող ուսանողները հակված են ոչ թե՛ դեպի մանկավարժի մասնագիտությունը, այլ՝ դեպի կենսաբանությունը:

5. Մալոյան Ջ. Ա., Մատոյան Ջ. Ս. Առաջին կուրսեցիների ուսումնական գործունեության դրդապատճառների մասին /Հայկ. պետ. մանկ. ին-տ: - Երևան, 1997: - 7 էջ, 1 աղ.: - Մատենագր.

10 ան.: - Ռուս.: - Ավանդ. է ՀայկԳՏԼԳՀ-ում 16.04.97, թիվ 95 - Ap97

Նվիրված է 5 ֆակուլտետների 1-ին կուրսեցիների ուսումնական գործունեության դրդապատճառների մակարդակի համեմատական ուսումնասիրմանը, ինչպես նաև ուսումնական գործընթացի կազմակերպման եւ ֆակ-ի գործունեության տարբեր կողմերին նրանց վերաբերմունքին: Ստացված տվյալներից ենթադրվում է, որ աշխատանքում բացահայտված գործունեության դրդապատճառների

ցուցանիշների եւ ուսումնական գործընթացի ուժեղ եւ թույլ կողմերին ուսանողներին տված գնահատականների միջև եղած տարբերությունը տարբեր ֆակուլտետներում պայմանավորված է տվյալ ֆակուլտետում մասնագիտության եւ զբաղմունքի տարբեր մակարդակների համաձայնեցվածությամբ եւ նրանց վարկով: Ենթադրվում է, որ որպես ուսումնական գործունեության գիտակցված մոտիվացիայի ակտորոշիչ ցուցանիշ կարելի է օգտագործել տարբեր ֆակուլտետների ուսանողների գործունեության մոտիվացիայի տարբեր պարամետրերի արտահայտման միջև եղած ցրվածության մեծությունը:

6. Մալոյան Ջ. Ա., Մատոյան Ջ. Ս. կոմունիկատիվ եւ կազմակերպչական ընդունակությունները սթրեսի ժամանակ /Հայկ. պետ. մանկ. ին-տ.: - Երևան, 1997: - 7 էջ., 1 աղ.: - Մատենագր. 8 ան.: - Ռուս.: - Ավանդ. է ՀայկԳՏԼԳՀ-ում 16.04.97, թիվ 96 - Ap97

Նվիրված է մանկավարժական ինստիտուտի տարբեր ֆակուլտետների ուսանողների կոմունիկատիվ եւ կազմակերպչական հակումների վրա ունեցած հոգեկան լարվածության ազդեցության ուսումնասիրմանը: Ստացված արդյունքները համոզիչ կերպով ապացուցում են, որ էքստրեմալ պայմաններում, հոգեկան լարվածության մակարդակի բարձրացման հետ տեղի է ունենում ուսանողների ուսումնական առաջադիմության ցուցանիշների իջեցում: Ուսանողների ակտիվության սթրեսային իջեցումը, մեր կարծիքով, աղապատացիոն պաշտպանողական ռեակցիայի արտահայտությունն է՝ յուրօրինակ պրոտեստ երկարատև սոցիալական ճնշման դեմ: Հաշվի առնելով, որ տակտիկայի պասիվությունը սթրեսային գործոնի երկարատև ազդեցության դեպքում առավել նպատակահարմար է, աշխատանքում ստացված օրինաչափությունները թույլ են տալիս դիտել բարձր հարմարվողականությունը որպես ազգային-էթնիկ առանձնահատկություն, որը ապացուցվում է հայ ժողովրդի կենսունակությամբ, եւ վերջին հաշվով կպահպանի գենոֆոնդը:

7. Մալոյան Ջ. Ա., Մատոյան Ջ. Ս. Բուհում ուսանելու ընթացքում ուսանողների ուսումնական գործունեության գործընթացի կայունացման մասին /Հայկ. պետ. մանկ. ին-տ.: -

Երևան, 1997: - 9 էջ.: - Մատենագր. 8 ան.: - Ռուս.: -Ավանդ. է ՀայկԳՏԼԳՀԻ-ում 16.04.97, թիվ 97 - Ap97

Ուսման գործունեության կայունացման ուսումնասիրության համար ուսումնասիրվել են առաջադիմության մակարդակը եւ ուսումնական գործընթացի դրդապատճառների մակարդակը. ֆակուլտետից եւ ուսումնական գործունեությունից ունեցած բավարարվածությունը եւ ուսումնական առաջադիմությանը խանգարող գործոնները: Եզրակացություններ. 1. Ուսումնական գործունեությունը կայունանում է 3-րդ կուրսում: 2. Որպես ստաբիլիզացիայի չափանիշ կարելի է օգտագործել խմբի մոտիվացիայի մինիմալ անորոշության (նրա գիտակցման) պայմաններում ուսումնական պրոցեսի դրդապատճառների միջին մակարդակի առկայությունը: Առաջարկվում է 1-4-րդ կուրսերի մոտիվացիոն ցուցանիշների միջնու եղած տարբերությունների սփռվածության մեծությունը՝ որպես դրդապատճառների անորոշության չափման նոր միջոց:

8. Մատոյան Ջ. Ս., Փիլոսոփայան Ս. Մ. Տեսակի կերպարվածության ազդեցությունը հաշվողական գործողությունների կատարման արդյունավետության վրա /Հայկ. պետ. մանկ. ին-տ.: -Երևան, 1997: - 12 էջ., 3 աղ., 1 նկ.: - Մատենագր. 7 ան - Ավանդ. է ՀայկԳՏԼԳՀԻ-ում 16.04.97, թիվ 98 - Ap97

Ուսումնասիրված է տեսակի կերպարվածության (գումարում-հանում) ազդեցությունը՝ 1 տասնյակի շրջանում կատարվող հաշվողական գործողությունների արդյունավետության վրա: Բացահայտված է, որ 1. գործողության կատարման ժամանակը կախված է գործընթացի նշանից, գումարման գործողությունն ավելի արագ է ընթանում, քան՝ հանմանը: 2. Հանման եւ գումարման կատարման արդյունքների ասիմետրիան ավելի մեծ արտահայտվածություն ունի »արագ« փորձարկվողների մոտ: »Հավասարակշիռների« խմբում այն ավելի քիչ է արտահայտված: 3. Որքան արագ է կատարվում գործընթացը, այնքան միջին ժամանակի տատանումը մեծանում է: 4. Թ՛վի դիրքը գործողության կատարման ժամանակի վրա չի ազդում: 5. Ասիմետրիան ավելի արտահայտված է 6, 7, 8, 9 թվերով կազմված գործողությունների դեպքում:

9. Ալիսյան Է. Ս., Մատոյան Ջ. Ս., Քալանթարյան Է. Ս. Տարբեր առաջադիմությամբ առաջին կուրսեցիների ինքնագնահատման եւ մասնագիտական ուղղվածության մակարդակների համեմատական վերլուծություն /Հայկ. պետ. մանկ. ին-տ: Երևան, 1997: - 10 էջ, 2 աղ.: - Մատենագր. 7 ան.: - Ռուս - Ավանդ. է ՀայկԳՏԼԳՀԻ-ում 16.04.97. թիվ 99 - Ap97

Ուսումնասիրվել է դպրոցական եւ կենսաբանական ֆակուլտետի առաջին կուրսեցիների մասնագիտական ուղղվածության եւ ինքնագնահատականի ձեւավորման մակարդակների կախվածությունը ուսումնական առաջադիմությունից: Ստացված արդյունքները վկայում են

1. մասնագիտական ուղղվածության մակարդակը դպրոցական ֆակուլտետում բարձր է. քան կենսաբանական ֆակուլտետում: Դա պայմանավորված է նրանով որ կենսաբանական ֆակուլտետ ընդունվում են ավելի մեծ հակվածությամբ զբաղմունքի (կենսաբանություն) նկատմամբ, քան թե մասնագիտության (պրո.ֆեսիա): 2. Բացահայտված է ուղղակի կախվածության մասնագիտական ուղղվածության մակարդակի եւ ուսումնական առաջադիմության միջնու դպրոցական ֆակուլտետում եւ ընդհանրապես՝ կենսաբանական ֆակուլտետում: 3. Երկու ֆակուլտետում էլ դրսևորվեց լավ սովորող ուսանողների ինքնագնահատականի աղեկվատության աստիճանը, ոչ համա-պատասխանությունը (բարձրացած) միջին եւ ցածր առաջադիմության ուսանողների հետ: Հավանական է, ինքնագնահատականի բարձրությունը բացատրվում է մոտիվացիայի ցածր մակարդակով եւ ունի պաշտպանական բնույթ:

10. Հարությունյան Լ. Գ. Կրտսեր դպրոցականների ուսումնա- ինացական հետաքրքրությունների առաջացման եւ զարգացման պայմանները /Հայկ. պետ. մանկ. ին-տ: -Երևան, 1997: - 22 էջ: - Ռուս.: - Ավանդ. է ՀայկԳՏԼԳՀԻ-ում 16.04.97, թիվ 100 - Ap97

Ելնելով հայկական դպրոցում ժուներենի ուսուցման նոր հոգեբանա- մանկավարժական դիրքերից, ուսուցման բովանդակությունը եւ սովորողների կողմից գիտելիքների յուրացման առարկայական գործունեությունը տրվում է որպես իմացական հետաքրքրությունների առաջացման եւ զարգացման պայման: Դիտարկվող ուսումնական

հյուրը եղել է ռուսերեն բառային շեշտադրությունը եւ բաղաձայն հնչյունները: Հոդվածը հետազոտվող հյուրի ծավալով ավելի լայն է, քան ուսումնա- իմացական հետաքրքրությունների հիմնախնդիրը եւ այս առումով կարող է հետաքրքրություն ներկայացնել նաեւ ուսուցման եւ զարգացման այլ հարցերի տեսանկյունից:

11. Հարությունյան Կ. Հ. Մանկավարժական հնաստիտուտի տարբեր ֆակուլտետների ուսանողների վերաբերմունքը գործունեության որոշակի տիպերի նկատմամբ /Հայկ. պետ. մանկ. ին-տ: - Երևան, 1997: - 14 էջ, 10 աղ.: - Մատենագր. 8 ան.: Հայ.: - Ավանդ. է ՀայկԳՏԼԳՀԻ-ում 16.04.97, թիվ 101 - Ap97

Մանկավարժական ինստիտուտի տարբեր ֆակուլտետների 1-ին կուրսերում անցկացված գիտափորձերի արդյունքների հիման վրա կատարվում է համեմատական վերլուծություն բացահայտելու համար ուսանողների վերաբերմունքը մարդկային գործունեության հիմնական տիպերի նկատմամբ: Այդ կապակցությամբ հայտնաբերվում են կապեր ընտրած մասնագիտության եւ նախասիրած գործունեության տիպերի միջև: Արդյունքները ցույց են տալիս, որ ուսանողների մոտ բավականին մեծ տոկոս են կազմում »մարդ-մարդ« գործունեության տիպը, որը կարևոր է մանկավարժի մասնագիտության համար եւ մանկավարժական գործունեության ժամանակ արտահայտվում է »մանկավարժ-աշակերտ« հարաբերության ձևով: Շոշափվում է մանկավարժական ընդունակությունների եւ մանկավարժական պրոֆեսիոնալ գրասանայի հարցերը նորովի, ըստ այդմ հոգեբանորեն տարբերակված մոտեցում ցուցաբերելով մանկավարժության համար կարևորագույն հարցերից մեկին: Հոդվածը կարևոր նշանակություն ունի նա եւ ԲՈՒՀ-ում մանկավարժական կադրերի պատրաստման արդյունավետության բարձրացման համար:

12. Մարկիսովա Ի. Մ. Ուսանողների կենսագործունեության ժամանակի կազմակերպման ուսումնասիրումը էքսպերիմենտալ պայմաններում /Հայկ. պետ. մանկ. ին-տ: - Երևան, 1997: - 4 էջ: - Ռուս.: - Ավանդ. է ՀայկԳՏԼԳՀԻ-ում 16.04.97, թիվ 102 - Ap97

Լուսաբանվում է անձնավորության ակտիվության եւ ուսանողի կենսագործունեության ժամանակի կազմակերպման պրոբլեմների

համակցումը: Ուսումնասիրումը կրում է հետազոտական բնույթ: Բացահայտված են մի շարք կորեկցիաներ ուսանողի կենսագործունեության ժամանակի կազմակերպման եւ նրա հոգեկան լարվածության, ակտիվության, ինքնազգացողության, տրամադրության, ուղղվածության («իր վրա», »խնդրի վրա», »փոխազդեցության վրա») վարքի ինքնակարգավորման միջև վեր են հանված լարվածություն, անհանգստություն, սթրես առաջացնող տիպիկ պրոբլեմներ: Առաջարկված է բարձրագույն ուսումնական հաստատություններում կազմակերպել հոգեբանական ծառայություն ուսանողների առջև ծառայած բարդ պրոբլեմների լուծման համար:

13. Պետրոսյան Հ. Գ. Սովորողների անձնային ակտիվության դերը մտածողության եւ ուսուցման խմբային ձևերում /Հայկ. պետ. մանկ. ին-տ: - Երևան, 1997: - 7 էջ: -Մատենագր. 7 ան.: - Ռուս.: - Ավանդ. է ՀայկԳՏԼԳՀԻ-ում 16.04.97, թիվ 103 - Ap97

Հոգեբանության մեջ ակտիվորեն քննարկվում է պրոբլեմային ուսուցման մեջ մտածողության եւ հաղորդակցման խմբային ձևերի արդյունավետության հարցը: Հոդվածում քննարկման է ենթարկվել խմբային լուծման մեջ անհատական ներդրման, ինչպես նաեւ խմբային մտածողական գործունեության արդյունավետության վրա սովորողների անձնային առանձնահատկությունների ազդեցության հարցերը: Արձանագրությունների վերլուծությունը պարզեց, որ խմբային մտածողության մեջ փորձարկողների անհատական ակտիվությունը եւ արդյունավետությունը համարժեք չէ հաշվի առնելով մարդկանց պիտանելիությունը խմբային մտածողական գործունեությանը, նրանց կարելի է համախմբել տարբեր խմբերում ըստ հետևյալ չափանիշների.

1. ինտելլեկտուալ նախաձեռնություն,
2. կազմակերպչական ընդունակություններ,
3. համապատասխան անձնային հատկանիշներ,
4. աշխատելու կոլեկտիվ ոճ:

14. Սանթրոսյան Կ. Տ., Ասլանյան Ս. Ա., Մելիքյան Ս. Ասլանյան Մ. Վ. Դպրոցականների հոգեկան լարվածությունը եւ անձնավորության ձևավորման առանձնահատկությունները երկրաշարժի գոտում /Հայկ. պետ. մանկ. ին-տ: -Երևան, 1997: -

17 էջ, 4 աղ.: - Մատենագր. 15 ան.: - Հայ.: - Ավանդ. է ՀայկԳՏԼԳՀԻ-ում 16.04.97, թիվ 104 - Ap97

Ծարադրված են հոգեբանական սթրեսի ուսումնասիրման հիմնական ելակետային դրույթները. Սպիտակի երկրաշարժից հետո դպրոցականների մոտ առաջացած սթրեսային վիճակի դրսևորման ձևերն ու դրանց կայունության աստիճանը, ինչպես նաև հոգեվիճակի վրա արտաքին (միջավայրի փոփոխության բնույթն ու ուժը) և ներքին (անձնային տիպաբանության առանձնա-հատկությունները) գործոնների և դրանց զուգակցմամբ ստեղծված ավբողջությունների ազդեցության բնույթը: Սպիտակի երկրաշարժը տևեց և սթրեսը է, որը պայմանավորում է ժամանակի մեջ նրա բնույթի փոփոխությունը՝ համալրումը երկրաշարժի արդյունք հանդիսացող, սոցիալական քաղաքականությամբ պայմանավորված նոր գործոններով: Վերջինները ներկայանում են տարբեր խմբերում հիմք են դառնում միայնակից որոշակիորեն զանազանվող անձնային հատկությունների ձևավորման համար:

ՄԺԿ 33

ԷԿՈՆՈՄԻԿԱ

15. Հարությունյան Ս. Ս., Մարգարյան Ա. Ս., Հովակիմյան Ռ. Ռ. Զաղաքային վերգետնյա էլեկտրատրանսպորտի նոր տիպի քարշի ազդեցատների ներդրման տնտեսական հիմնավորումը /Հայկ. պետ. ճարտարագիտ. համալս. - Երևան, 1996: - 3 էջ, 1 նկ.: - Մատենագր, 2 ան.: - Հայ.: - Ավանդ. է ՀայկԳՏԼԳՀԻ-ում 23.04.97, թիվ 114 - Ap97

Վերաբերվում է քաղաքային վերգետնյա էլեկտրատրանսպորտի էներգամատակարարման համակարգին: Նպատակ ունի գնահատել դիտողմային ուղղիչը թիրխստորայինով փոխարինելու

հիմնավորվածությունը: Յույց է տրված թիրխստորայինով ուղղիչի բացարձակ առավելությունը ներկայումս շահագործվող նմանատիպ դիտողայինի նկատմամբ և նոր առաջարկվողի ներդրման հրամայական

անհրաժեշտությունը: Համեմատական հաշվարկը թույլ է տալիս պնդելու, որ լրացուցիչ կապիտալ ներդրումների հետ գնման (ծախսահանման) ժամկետը չի գերազանցի 14 ամիսը: Կիրառված է գոյություն ունեցող և նոր առաջարկվող ուղղիչ ազդեցատների կապիտալ ներդրումների ու շահագործման ծախսերի համեմատական հաշվարկի մեթոդը: Նորաստեղծ թիրխստորային ուղղիչը հնարավորություն կտա բարձրացնել քարշային ազդեցատների հուսալիությունն ու էլեկտրամատակարարման անվտանգությունը, ապահովել էկոլոգիապես ամենաձեռնատու տրանսպորտի անխափան աշխատանքն ու էներգալիստությունը: Նախատեսվում է կիրառել քաղաքային վերգետնյա էլեկտրատրանսպորտի համակարգում:

ՄԺԿ 37

ՄԱՆԿԱՎԱՐԹՈՅՈՒՆ

16. Վանյան Ա. Մ. Էտնոմանկավարժական բառերը հայոց դպրոցի 4-5-րդ դասարանների ժամանակ լեզվի պարապմունքներին /»Անանիա Շիրակացի« հայկական համալս.: - Երևան, 1997: - 9 էջ.: - Ռուս.; - Ավանդ. է ՀայկԳՏԼԳՀԻ-ում 02.04.97, թիվ 84 - Ap97

Ռուսական նյութի հետ մեկտեղ ժամանակ լեզվի դասերին նպատակահարմար է նաև «էտնոմանկավարժական բառերի օգտագործումը, նամանավանդ, որ բառագիտական միավորների, դարձվածքների, բառակապակցությունների, երբեմն պարբերությունների իմաստավորման, տեքստի ընդհանուր բովանդակության որոշման ժամանակ ուսումնասիրվող բարերը ընկալվում են ավելի հեշտ և ակտիվորեն: Էտնոմանկավարժական նյութի օգտագործումը շատ արդյունավետ է օտար տեքստի ընկալման դեպքում՝ դասավանդման առաջին շրջանում, քանի որ խոսքի ընկալումը վարժեցվում է ավելի երկար, քան նրա վերարտադրումը: Առաջարկվում են աշակերտներին ակտիվ խոսակցական գործունեության մեջ ընդգրկելու տարբեր ձևեր, առաջարկություններ ուսումնական կուրսի նպատակներին և խնդիրներին համապատասխան: Հեղինակը դիտում է էտնոմանկավարժական նյութի օգտագործումը որպես հայոց դպրոցի 4-

5-րդ դասարանների աշակերտներին ռուսաց լեզվի դասավանդման կատարելագործման ստեղծագործական հնարավորություն:

ՄԴԿ 51

ՄԱԹԵՄԱՏԻԿԱ

17. Ղազարյան Ս. Ս. Հաստատուն հոսանքի էլեկտրական դաշտի պոտենցիալի ասիմպտոտիկան գլանային շերտավոր միջավայրում /Մաթեմատիկայի ին-տ: - Երևան, 1997: - 17 էջ: - Մատենագր. 4 ան: - Ռուս - Ավանդ. է ՀայկԳՏԼԳՀԻ-ում 17.03.97. թիվ 78 - Ap97

Էլեկտրակարտաժի տեսության մեջ դիտարկվող միջավայրի հիմնական մոդելների համար ստացվել են պոտենցիալի եւ թվացող դիմադրության ասիմպտոտիկ բանաձևերը հաստատուն հոսանքի կետային աղբյուրի ցանկացած տեղադրության դեպքում: Այդ բանաձևերը հնարավորություն են ընձեռում ստանալ տեսական կորեր որոշ երկբաֆիզիկական արդյունքների քանակական գնահատման համար:

18. Հովհաննիսյան Գ. Ռ., Տարոյան Ե. Ա. Արտաքին դաշտում գծային օսցիլատորի ադիաբատիկ ինվարիանտ /Մաթեմատիկայի ին-տ: - Երևան, 1997: - 8 էջ: - Մատենագր. 7 ան: - Ռուս.: - Ավանդ. է ՀայկԳՏԼԳՀԻ-ում 27.03.97, թիվ 81 - Ap97

Ինչպես հայտնի է, դանդաղ փոփոխվող հաճախությամբ գծային օսցիլատորի ադիաբատիկ ինվարիանտ է հանդիսանում էներգիայի եւ հաճախության հարաբերությունը: Հոդվածում դիտարկված է համիլտոնյան համակարգ, որը ներկայացնում է գծային օսցիլատոր փոփոխական արտաքին դաշտում: Համիլտոնյանը ունի հետևյալ տեսքը.

$$H = \frac{p^2}{2m} + \frac{m\omega_1(\varepsilon t)^2 q^2}{2} - m q \cos \omega_2(\varepsilon_s) d_s$$

որտեղ ω_1 , ω_2 հաճախությունները տարբեր են: Գտնված է այդ համակարգի ադիաբատիկ ինվարիանտ, որի հայտարարում առկա է հաճախությունների տարբերություն: Ապացուցված է այդ ինվարիանտի լրիվ փոփոխության էքսպոնենցիալ նվազումը, նրբ հաճախությունները բավարարում են որոշ պայմանների:

19. Մելիքյան Վ. Շ., Հակոբյան Մ. Մ. Թվային սխեմաների գնի փոքրացում տարրերի հապադումների օպտիմալացման միջոցով /Հայկ. պետ. ճատաբազկատ. համալս.: - Երևան, 1996: - 7 էջ, 5 նկ.: - Մատենագր. 2 ան.: - Ռուս.: - Ավանդ. է ՀայկԳՏԼԳՀԻ-ում 30.04.97, թիվ 120 - Ap97

Դիտարկվում է թվային սխեմաները կազմող տարրերի հապադումների թույլատրելի արժեքների բազմության մեջ նրանց արժեքների փոփոխման միջոցով սխեմայի գնի փոքրացման խնդիրը: Բերվում է այդ խնդրի լուծման մշակված ալգորիթմի նկարագրությունը, որը հնարավորություն է տալիս զգալիորեն կրճատել հնարավոր տարբերակների քանակը: Ալգորիթմը հիմնված է սխեմայի ելքերի յուրաքանչյուր փոխանջատման համար ազդանշանի անցման ճանապարհի առանձնացման եւ առանձին դիտարկման հիման վրա՝ հետազայում համաձայնեցնելով մնացած նմանատիպ ճանապարհների օպտիմալացման արդյունքների հետ: Բերված է մշակված ալգորիթմի հնարավորությունները ցուցադրող օրինակ:

ՄԴԿ 58

ՖԻԶԻԿԱ

20. Հովակիմյան Ա. Տ. Դոմենային կառուցվածքների վարքը որպես էներգիայի պահպանման օրենքի հետևանք /ՀՀ պաշտպանության նախ. գիտության եւ տեխնիկայի վարչ.: - Երևան, 1997: - 5 էջ, 2 նկ.: - Ռուս.: - Ավանդ. է ՀայկԳՏԼԳՀԻ-ում 30.04.97, թիվ 133 - Ap97

Ապացուցվում է, որ համաձայն էներգիայի պահպանման օրենքի մագնիսական դոմենների ամբողջությունը դոմեններում հանդիսանում է ինքնակազմավորվող համակարգ: Այդ համակարգի դիսկոնյուն մոմենտի համագործի կիրառման կետը չի փոխում իր կոորդինատները մագնիսականության ցանկացած փոփոխման դեպքում և համասեռ ֆերրոմագնետիկ համար համընկնում է իր զանգվածի կենտրոնի հետ: Երկաթի բյուրեղի դոմենների շրջադարձի համար, որը ներկայացված է որպես նրբ գուգահեռ վեկտորների համակարգ, դուրս են բերվել բանաձևեր, որոնցից հետևում է Բարկահուզենի էֆեկտը և մագնիսատրիկցիան: Բացատրվում է հաստատուն մագնիսի բաժանման ֆենոմենը փոքր մասերի: Եզրակացությունները տարածվում են մագնետիկների բոլոր տեսակների վրա, որոնք ունեն դոմենային կառուցվածքներ, ինչպես նաև սեզնետաէլեկտրիկների վրա:

ՄԸԿ 55

ԵՐԿՐԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

21. Բոյնագրյան Վ. Ռ. Սևանա լճի ափագանի առափնյա գոտում ծանր միներալների կուտակման երկրաբանագեոմորֆոլոգիական պայմանները /Եր. պետ. համալս. - Երևան, 1997: - 34 էջ, 7 նկ., 7 աղ.: - Մատենագր. 45 ան.: - Ռուս.: - Ավանդ. է ՀայկԳՏԼԳՀ-ում 02.04.97, թիվ 83 - Ap97

Խոշոր ջրամբարների մասին գիտության տեսանկյունից առաջին անգամ փորձ է արվում գնահատել Սևանա լճի առափնյա գոտում ծանրմետալների կուտակման ձևավորման հնարավորությունները: Դիտվում են նրանց կուտակմանը նպաստող գործոնները, աղբյուրները, լճի առափնյա գոտում ժամանակակից դինամիկան և ծանր միներալների կուտակման ձևավորման առանձնահատկությունները: Եզրակացություն է արվում, որ ծանր միներալների կուտակման գոտում հիմնական դերը պատկանում է բերվածքների լայնակի տեղաշարժմանը: Նշվում է նրանց զգալի կուտակումները հարավային լողափում: Հաշվարկված է կգ/մ³ բերվածքներում ծանր միներալների պարունակությունը:

ՄԸԿ 61

ԲԺՇԿԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

22. Մկրտչյան Ս. Ա. Օրգանիզմի վրա համակարգչային տեխնիկայի թողած ազդեցության ուսումնասիրման նախնական արդյունքները /Եր. պետ. թժշկ. համալս.: - Երևան, 1997: - 4 էջ, 1 նկ.: - Մատենագր. 3 ան.: - Հայկ. - Ավանդ. է ՀայկԳՏԼԳՀ-ում 19.02.97. թիվ 70 - Ap 97

Ուսումնասիրվել է համակարգիչների հետ աշխատողների առողջական վիճակը, ելնելով հանրապետության սոցիալ-տնտեսական, բնակլիմայական պայմանների առանձնահատկություններից և մասնագիտական վնասակար գործոնների հնարավոր զուգակցված ազդեցությունից: Անցկացված հարցախույզի արդյունքները վկայում են, որ համակարգչային տեխնիկան բավականին հաճախ ունենում է ոչ բարենպաստ ազդեցություն նրա հետ աշխատողների առողջական և նյարդա-հուզական վիճակի վրա: Անհրաժեշտ է տալ նման մասնագետների աշխատանքային պայմանների ազդեցության համալիր գնահատական և մշակել համապատասխան հիգիենիկ միջոցառումներ:

23. Նազարեյան Է. Ե. Հակոբյան Գ. Վ. Ատամների կարիեսի և պարոդոնտի բորբոքման հետ պարբերական հիվանդության զուգակցման ռոռ իմունաբանական հայեցակետերի մասին /Եր. պետ. թժշկ. համալս.: - Երևան, 1997: - 5 էջ, 2 աղ.: - Մատենագր. 16 ան.: - Ռուս.; - Ավանդ. է ՀայկԳՏԼԳՀ-ում 30.04.97, թիվ 127 - Ap97

Պարբերական հիվանդությամբ (ՊՏ), ատամների կարիեսով և պարոդոնտիտով տառապող անձանց մոտ ուսումնասիրվել է նեյտրոֆիլների ֆագոցրոտային ակտիվությունը և շիճուկի կոմպլեմենտային ակտիվությունը: Հայտնաբերվել է հիվանդների օրգանիզմի ոչ յուրահատուկ պաշտպանունակության անբավարարությունը ի հետևանք նշված ցուցանիշների ակտիվության անկման: Այս խանգարումներն ավելի արտահայտված էին պարոդոնտիտի հետ զուգակցված ՊՏ ժամանակ: ՊՀ նոպայի

գարգացման պայմաններում նշված տեղաշարժերը էլ ավելի էին խորանում եւ հասնում գազաթնակնտի կարիքի եւ պարողոնտիտի հետ գուակցված ՊՏ դնաքում: Ստացված տվյալները վկայում են նշված հիվանդների հետագա իմունաբանական հետազոտությունների նպատակահարմարության եւ ՊՏ ժամանակ կարիքի ու պարողոնտիտի իմունակարգավորող բուժման մեթոդների հայթայթման մասին:

24. Նուգարեթյան Է. Ե. Հակոբյան Գ. Վ. Հումորալ պաշտպանունակության վիճակը պարողոնտի բորբոքային փոփոխությունների եւ կարիքի ժամանակ պարբերական հիվանդությամբ տառապողների մոտ /Եր. պետ. բժշկ. համալս.: - Երևան, 1997: - 5 էջ, 2 աղ. - Մատենագր. 12 ան.: - Ռուս.: - Ավանդ. է ՀայկԳՏԼԳՏՀԻ-ում 30.04.97, թիվ 128 - Ap 97

Ճառագայթման իմունադիֆուզիայի եղանակով ուցումնասիրվել է IgA, IgG, IgM դասերի իմունագլոբուլինների պարունակությունը արյան շիճուկում եւ թրուր պարբերական հիվանդությամբ (ՊՏ), կարիքնտվ եւ պարողոնտիտով տառապողների մոտ: Հետազոտությունները ցույց են ավել, որ իմունագլոբուլինների պարունակության, հատկապես Ա դասի, արտադրուկային իմունագլոբուլինի (SIgA), եւ հիմնական հիվանդության ակտիվության, կարիքի, պարողոնտիտի եւ ամիլոիդոզի առկայության միջնի գոյություն ունի կապ: Ստացված տվյալները թույլ են տալիս գալ այն եզրակացության, որ SIgA-ի որոշումը ՊՏ տառապող անձանց թրուր կարող է ունենալ կարևոր ախտորոշիչ եւ բուժման արդյունավետությունը գնահատող նշանակություն: Այն պարզ եւ մատչելի հետազոտության մեթոդ է:

YDK 620©9
ԷՆԵՐԳԵՏԻԿԱ

25. Շամալյան Ռ. Ե., Վարդանյան Ղ. Մ. Ջերմաֆիկացիոն համակարգում ջուր-ջերմակրի օպտիմալ ջերմաստիճանի որոշումը /Էներգետիկայի ՀԳՀ ին-տ: - Երևան, 1997: - 7 էջ.; -

Մատենագր. 2 ան. - Հայ. - Ավանդ. է ՀայկԳՏԼԳՏՀԻ-ում 27.02.97, թիվ 75 - Ap97

Առաջարկվում է մեթոդ ջերմաֆիկացիոն համակարգում օպտիմալ հաշվարկային ջերմաստիճանի որոշման համար: Հաշվարկը կատարվում է ջերմամատակարարման համակարգի նվազագույն տարեկան բերված ծախսերի որոշման հիման վրա: Հաշվի են առնվում ջերմամատակարարվող շրջանի կլիմայական պայմանները, ջերմային բեռնվածության բացարձակ մեծությունը եւ կառուցվածքը:

26. Շամալյան Ռ. Ե., Պապիկյան Ս. Ռ. Գազատուրբինային ջերմաէլեկտրակենտրոնների արդյունավետության որոշումը /Էներգետիկայի ՀԳՀ ին-տ: - Երևան, 1997: - 5 էջ, 1 նկ.: - Մատենագր. 2 ան.: - Հայ. - Ավանդ. է ՀայկԳՏԼԳՏՀԻ-ում - 30.04.97, թիվ 121 - Ap97

Գազատուրբինային ջերմաէլեկտրակենտրոնի արդյունավետությունը որոշվել է Հայաստանի մի քանի քաղաքների համար (Գյումրի, Երևան, Մեղրի), որոնք բնութագրվում են տարբեր կլիմայական պայմաններով, ջնուցման սեզոնի տարբեր տևողությամբ: Որոշվել է տարեկան բերված ծախսերի տեսակարար մեծությունները: Կատարված են հաշվարկներ քաղաքների տարբեր բեռնվածությունների համար՝ Q-1020, 300, 48Գկալ/ժ, ջնուցման սեզոնի տարբեր տևողությունների համար՝ ՈՅ=4704, 2736, 2112ժ:

YDK 621
ՄԵԲԵՆԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ

27. Խաչատրյան Մ. Ն. Արագրնթաց մեքենաների առանցքակալների նրկարակնցությունը /Մեխանիկայի ին-տ: - Երևան, 1997: - 8 էջ, 2 աղ., 2 նկ.: - Մատենագր. 7 ան.: - Ռուս. - Ավանդ. է ՀայկԳՏԼԳՏՀԻ-ում 30.04.97, թիվ 122 - Ap97

Ունենդուսի թերմոդինամիկայի և հավասարակշռության հավասարումների համատեղ լուծման ու փորձարարական տվյալների հիման վրա ստացված են առանցքակայնորում յուրի նվազագույն հաստությունը և նրա երկարակեցությունը հաշվելու բանաձևեր, որոնցում հաշվի են առնվում թերյուղման և դինամիկ բեռնվածությունից յուրի ջերմային փոխակերպման պայմանները: Յույց է արված, որ աշխատանքի ամբողջ ընթացքում յուրի շերտի նվազագույն հաստությունը պահպանելու համար անհրաժեշտ է ապահովել շահագործման մի շարք հատուկ պայմաններ:

28. Խաչատրյան Մ. Ն. Ինդուկցիայի շառավղային գնդառանցքակալի կոշտության մոդելը /Մեխանիկայի ին-տ: - Երևան, 1997: - 7 էջ.: - Մատենագր. 6 ան.: - Ռուս.: - Ավանդ. է ՀայկԳՏԼԳՀ-ում 30.04.97, թիվ 123 - Ap97

Դիտարկված են ինդուկցիայի շառավղային գնդառանցքակալի կոշտության բնութագրերը կամայական ուղղությամբ բեռի ազդեցության դեպքում: Հավասարակշռության դիֆերենցիալ հավասարումների սխեմայի լուծումը, հիմնված պոտենցիալ էներգիայի ասիմպտոտիկ ներկայացման վրա, թույլ է տվել ստանալ շառավղային գնդառանցքակալի կոշտության մոդելը գլխավոր առանցքների ուղղությամբ: Յույց է տրված, որ կոշտության բնութագրերը առանցքների ուղղությամբ ունեն փոխադարձ կախվածության, և դրանց արժեքներն առանցքակալի պատման ժամանակ պարբերաբար փոխվում են:

УДК 6213

ԷԼԵԿՏՐՍԵՆՍԻԿԱ

29. Խաչատրյան Վ. Ս., Բաղայան Հ. Հ. Էլեկտրաէներգետիկական համակարգի կայունացված ռեժիմի ճշտումը տրոհման մեթոդով /Հայկ. պետ. ճարտարագիտ. համալս.: -Երևան, 1997: - 26 էջ: - Մատենագր. 9 ան.: - Ռուս.: - Ավանդ. է ՀայկԳՏԼԳՀ-ում 21.02.97, թիվ 71 - Ap97

Ինչպես հայտնի է, էլեկտրա էներգետիկական համակարգի կայունացված ռեժիմի հաշվարկը մաթեմատիկական տեսանկյունից հանգում է ոչ գծային հանրահաշվական հավասարումների համակարգի լուծմանը, որը պահանջում է մեծ ծավալի հաշվողական աշխատանք: Յուրաքանչյուր էլեկտրա հաղորդման գծի մեծության փոփոխությունը նույնպես պահանջում է հաշվել նոր կայունացված ռեժիմ, այսինքն լուծել նշված ոչ գծային հավասարումների համակարգը: Մեծ քանակությամբ փոփոխությունների դեպքում խնդրի լուծումը դառնում է անհնար:

Այդ պատճառով առաջարկվում է նոր մեթոդ, որը հիմնված է էլեկտրական շղթաների էներգետիկական տեսության՝ Թեյլորի թերմի և տրոհման սկզբունքի համատեղման վրա, որի դեպքում խնդիրը լուծվում է իրական ժամանակում և ստանում գործնական լայն կիրառություն:

30. Հակոբյան Ռ. Ե., Բայբության Մ. Վ., Հովհաննիսյան Ժ. Թ. Կարճ միացված ոչ սիմետրիկ ռոտորով ասինքրոն շարժիչների մոմենտների բնութագրերի դեֆորմացման անալիզը /Հայկ. պետ. ճարտարագիտ. համալս.: - Երևան, 1997: - 13 էջ, 6 նկ., 1 աղ.: - Մատենագր. 8 ան.: - Ռուս.: - Ավանդ. է ՀայկԳՏԼԳՀ-ում 21.02.97, թիվ 72 - Ap97

Ոչ սիմետրիկ փաթույթով կարճ միացված ռոտորով ասինքրոն շարժիչների մոմենտների բնութագրերի ճարտարագիտական հաշվարկներում առաջին անգամ ասիմետրիայի գործակիցների կիրառմամբ հաշվարկվել և կառուցվել են նշված բնութագրերը, հաշվի առնելով գործնականորեն բոլոր հնարավոր տեխնոլոգիական դեֆեկտները, պայմանավորված ռոտորի ոչ սիմետրիկությամբ, որոշելով նաև մեծագույն ոչ բարենպաստ դեպքերը էլեկտրական սիմետրիայի խախտման դեպքում:

Ստացված հանձնարարականները կարող են կիրառվել կարճ միացված ռոտորով ասինքրոն շարժիչների աշխատանքի հուսալիության հետազոտման դեպքում, տալով դրանց կիրառման գնահատականը համապատասխան էլեկտրաբանցումներում:

31. Հակոբյան Ռ. Ե., Բայբության Մ. Վ., Հովհաննիսյան Ժ. Թ. Կարճ միացված ոչ սիմետրիկ ռոտորով ասինքրոն շարժիչների

մումնասիրի բնութագրերի վրա թուոթրի կոնտուրների էլեկտրական կապի ազդեցության անալիզը /Հայկ. պետ. ճարտարագիտ. համալս.: - Երևան, 1997: - 8 էջ, 3 նկ.: - Մատենագր. 4 ան.: - Ռուս - Ավանդ. է ՀայկԳՏԼԳՀ-ում 21.02.97, թիվ 73 - Ap97

Ոչ սիմետրիկ կարճ միացված թուոթրով ասինքրոն շարժիչների մումնասիրի բնութագրերի համեմատական որակական անալիզի հիման վրա առաջին անգամ որոշվել է թուոթրի կոնտուրների էլեկտրական կապի ազդեցությունը նշված բնութագրերի դեֆորմացման աստիճանի վրա թուոթրի փաթույթի էլեկտրական սիմետրիայի տարբեր խախտումների դեպքում: Աշխատանքում ստացված ասիմետրիայի գործակիցների համար բավականին պարզ բանաձևերը կարող են կիրառվել շարժիչների բնութագրերի հաշվարկների եւ որակի գնահատման համար:

32. Կարդաշյան Գ, Ս. Ունիվերսալ մագնիսական չափիչ սարք /Հայկ. պետ. ճարտարագիտ. համալս.: - Երևան, 1997: - 12 էջ, 2 նկ.: - Մատենագր. 7 ան.: - Ռուս.: - Ավանդ. է 21.02.97, թիվ 74 - Ap97

Մշակված է ունիվերսալ մագնիսական չափիչ սարք, որը հնարավորություն է տալիս էլեկտրատեխնիկական պողպատների լոկալ տեղամասերում բարձր ճշտությամբ որոշել մագնիսական ինդուկցիայի եւ դաշտի լարվածության ամպլիտուդային արժեքները, տեսակարար կորուստները, կոերցիտիվ ուժը եւ մնացորդային մագնիսական ինդուկցիան, ապահովելով ինդուկցիայի կորի սինուսաիդայնությունը մինչեւ ինդուկցիայի 2.1 Տլ. արժեքը: Նկարագրված է, շերտավոր եւ թերթավոր նմուշների լոկալ տեղամասերում, վերամագնիսացման ժամանակ ինդուկցիայի պահանջվող կորի ձևի ապահովման պայմանը, տեսակարար կորուստների ճշգրիտ չափման հնարավորությունը, կոերցիտիվ ուժի ու մնացորդային մագնիսական ինդուկցիայի որոշումը վերամագնիսացման դինամիկ ռեժիմում: Ծահագործման հարմարությունը, չափվող մեծության անմիջական գնահատումը թվային տեսքով, էլեկտրատեխնիկական պողպատների անհամասեռության գնահատման հնարավորությունը, փորձանմուշների պատրաստման պարզությունը եւ չափումների արագությունը

հնարավորություն են տալիս մշակված սարքը երաշխավորել ներդրման ինչպես էլեկտրատեխնիկական արդյունաբերության, այնպես էլ էլեկտրատեխնիկական պողպատների արտադրության մեջ:

33. Ղուլդագարյան Կ. Ա. Միկտալիքային տրիոդային գեներատոր՝ ծավալային ռեզոնատորի ազատ ունակային բացակով /Հայկ. պետ. ճարտարագիտ. համալս.: - Երևան, 1997: - 4 էջ, 1 նկ.: - Մատենագր. 2 ան.: - Ռուս.: - Ավանդ. է ՀայկԳՏԼԳՀ-ում 11.04.97, թիվ 89 - Ap 97

Հոդվածում դիտվում է գերբարձր հաճախականությունների (գբի) տրիոդային գեներատոր: Ծավալային ռեզոնատորում տեղադրվում է տրիոդ, որի էլեկտրոդները այնպես են միացվում ռեզոնատորի պատերին, որ իրականացվում է գեներացիայի պայմանները:

Ի տարբերություն հանրահայտ գբի տրիոդային գեներատորների, որոնք պարունակում են երկու ռեզոնատոր, այս գեներատորը պարունակում է ընդամենը մեկը, ընդ որում նրա ունակային բացակը ազատ է. Դա ընդլայնում է գեներատորի ֆունկցիոնալ հնարավորությունները, որը հնարավորություն է տալիս սարքը օգտագործել տարբեր խնդիրներ լուծելիս:

34. Ղուլդագարյան Կ. Ա., Ղուլդագարյան Տ. Կ. Արտաքին էլեկտրոդով ֆոտոբազմապատկիչը ռեզոնատորում /Հայկ. պետ. ճարտարագիտ. համալս.: - Երևան, 1997: - 7 էջ, 3 նկ. - Մատենագր. 2 ան.: - Ռուս.; - Ավանդ. է ՀայկԳՏԼԳՀ-ում 11.04.97, թիվ 90 - Ap97

Հոդվածում դիտվում է ֆոտոնդուինիչ, որի օգնությամբ ընդունվում է գերբարձր հաճախականություններով մոդուլացված լուսային ազդանշաններ: Ընդունիչը կառուցված է մասսայական արտադրվող ֆոտոբազմապատկչի օգտագործմամբ, որն ըստ էության ցածր հաճախականային սարք է: Ֆոտոբազմապատկչի ճակատային մասին դրվում է մետաղյա թիթեղ եւ այդպիսի սարքը տեղադրվում է ռեզոնատորում: Ստացվում է հետերոդինային ընդունիչ, որը հայտնի «ֆոտոբազմապատկիչը ռեզոնատորում» սարքից տարբերվում է ռեզոնատորի բարձրարժեքությամբ եւ ֆազային բնութագրերի

համասնությունը: Դիտված է սարք, որն աշխատում է հեռերոգիկ հաճախականության բազմապատկման ռեժիմում:

35. Հարությունյան Ա. Ս., Աստվածատրյան Ա. Ե., Դանիելյան Վ. Հ. Քարշի թիրխտորային ազրեգատի փորձնական հետազոտումը իրական բեռի պայմաններում /Հայկ. պետ. ճարտարագիտ. համալս.: - Երևան, 1996: - 9 էջ, 9 նկ.: - Մատենագր. 4 ան.: - Հայ.: - Ավանդ. է ՀայկԳՏԼԳՀ-ում 23.04.97, թիվ 113 - Ap97

Բերված են Երևանի վերգետնյա էլեկտրատրանսպորտի (տրամվայ, տրոլեյբուս) առավել ծանրաբեռնված ուղեհատվածի աշխատանքային օրվա պիկ ժամերի իրական բանվորական հոսանքների հետազոտման արդյունքները տարվա ամենաբարենպաստ եղանակին: Դրանց հիման վրա ընտրված ուժային թիրխտորներով լրակազմված ուղղիչ ազրեգատոր փորձարկվել է թիվ վեց ենթակայանում ամենատարբեր արհեստական կարճ միացումների ժամանակ: Փորձարկումների երկրորդ փուլում նույն ազրեգատոր հետազոտվել է մայրաքաղաքի տրոլեյբուսի թիվ երկու հավաքակայանի նորոգման արտադրամասի իրական բեռնվածքի տակ: Ուսումնասիրվել են վթարային ռեժիմներ պատկերող ավելի քան 150 տատանագրեր: Փորձնական ու տեսական արդյունքների համադրման միջոցով առաջարկվել է իրական բեռնվածքի պայմաններում աշխատելու համար նախատեսվող թիրխտորային ուղղիչ տարբերակ, որը պիտանի է աշխատելու քաղաքի էլեկտրատրանսպորտի համակարգում՝ ամենաժամանակաշատ աշխատանքային պայմաններում անգամ:

36. Հարությունյան Ա. Ս., Աստվածատրյան Ա. Ե. Բաշխիչ ուժային սարքերի անկոնտակտ պաշտպանություն էլեկտրատրանսպորտի համակարգում /Հայկ. պետ. ճարտարագիտ. համալս.: - Երևան, 1996: - 13 էջ, 2 նկ.: - Մատենագր. 3 ան. -Հայ.: - Ավանդ. է ՀայկԳՏԼԳՀ-ում 23.04.97, թիվ 115 - Ap97

Համակողմանիորեն հետազոտված է հաստատուն հոսանքի համակարգում վթարային հոսանքների անկոնտակտ առաջանցիկ անջատման խնդիրը, որն իրագործվում է քարշային ազրեգատի ուժային

դիողային ուղղիչը կառավարելի կերպափոխիչով փոխարինելով: Նոր տիպի ուժային կերպափոխիչի միջոցով հաջողվում է կտրուկ կրճատել շահագործման ծախսերը, բարձրացնել ուժային բաշխիչ սարքերի հուսալիությունն ու երկարակենցությունը, էլեկտրամատակարարման անվտանգությունը, նվազեցնել էլեկտրաէներգիայի ծախսը: Տեսական ու գործնական ուսումնասիրությունը հնարավորություն է ստեղծում կատարել կիսահաղորդչային ուժային բանալիների անսխալ ընտրություն: Նախատեսվում է կիրառել քաղաքային վերգետնյա էլեկտրատրանսպորտի քարշային ենթակայանների համար: Կարող է կիրառվել նաև հաստատուն հոսանքի այլ համակարգերում (երկաթուղային տրանսպորտ, մետրոպոլիտեն):

ՄԻԿ 629.1

ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐ

37. Բուդաղյան Ա. Ս., Ժամկոչյան Վ. Վ. Կոնկրետ երթուղով ավտոգնացքի շարժման մաթեմատիկական մոդելը /Հայկ. պետ. ճարտարագիտ. համալս.: - Երևան, 1997: - Մատենագր. 3 ան.: - Հայ.: - Ավանդ. է ՀայկԳՏԼԳՀ-ում 23.04.97, թիվ 109 - Ap97

Հետազոտված են մեծ բեռնունակությամբ մայրուղային ավտոգնացքները: Մշակված է այդ ԱՏՄ-ների կոնկրետ ուղեգծով շարժման մոտարկումային մաթեմատիկական մոդել եւ մեթոդաբանություն, որը հնարավորություն է տալիս շահագործման կոնկրետ ճանապարհային պայմաններից կախված իրականացնել միջոցառումներ եւ հանձնարարականներ դրանց վառելիքային խնայողականության եւ օգտագործման արդյունավետության լավացման համար:

38. Բուդաղյան Ա. Ս., Ժամկոչյան Վ. Վ. Ավտոգնացքի հարմարվածության բարձրացումը նրա տեխնիկական պարամետրերի լավարկման միջոցով /Հայկ. պետ.

ճարտարագիտ. համալս.: - Երևան, 1997: - 6 էջ: - Մատենագր. 2 ան.: - Հայ.: - Ավանդ. է ՀայկԳՏԼԳՀ-ում 23.04.97, թիվ 110 - Ap97

Որպես հետազոտության արդյունքներ ներկայացվում են ավտոգնացքների ընդհանուր տեխնիկական պարամետրերի և կազմի, շարժիչի տեսակարար հզորության, ինչպես նաև տրանսմիսիայի պարամետրերի ընտրության ու լավարկման արդյունքները Հայաստանի Հանրապետության մայրուղային ճանապարհների համար: Դա հնարավորություն է տալիս ճանապարհային պայմաններին հարմարվածության մեծացման օգնությամբ առավել լրիվ օգտագործել ԱՏՄ-ի պոտենցիալ հնարավորությունները, ապահովելով հիմնական շահագործական հատկանիշների բարձր մակարդակ՝ առավելագույն արտադրողականություն վառելիքային նվազագույն ծախսի ապահովումով:

УДК 63

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

39. Սահակյան Ս. Լ., Սահակյան Լ. Ա. Հատիկի էնդոսպերմայի զանգվածի և գծային չափերի միջև կախվածության որոշման հաշվարկա-անալիտիկ մեթոդը /Հայկ. գյուղ. ակադեմիա: - Երևան, 1997: - 5 էջ, 2 նկ., 1 աղ.: -Մատենագր. 5 ան.: - Ռուս.: - Ավանդ. է ՀայկԳՏԼԳՀ-ում 29.04.97. թիվ 117 - Ap97

Թեփհանիչների ռացիոնալ կոնստրուկցիաների մշակման և որակով պատրաստ ի արտադրանքի ստացման օպտիմալ ռեժիմների հիմնավորման նպատակով տեսականորեն որոշվել է հատիկների երկրաչափական և տեխնոլոգիական պարամետրերը: Հիմք ընդունելով էլիպսի և կորդիոդի կորերի հավասարումները, տեսականորեն որոշվել է հատիկի համար կարևոր երկրաչափական պարամետր համարվող կենտրոնական երկայնական և լայնական հատույթների պարագծերը և մակերեսները, հատիկի ծավալը: Որոշվել է թեփհանման գործընթացի համար վճարող նշանակություն ունեցող հատիկի մակերեսային մակերեսը, ծավալը և էնդոսպերմայի զանգվածը: Աղյուսակի տեսքով

բերված են տեղական գործնական և հաճարի երկրաչափական պարամետրերը՝ ստացված արտածված բանաձևերով, որոնք համեմատվել են փորձնական չափումների հետ: Ծեղումը ստացվել է 0.5 տոկոս:

40. Սահակյան Ս. Լ., Սահակյան Լ.Ա. Հատիկի շարժման ուսումնասիրումը կենտրոնախույս ժոտորով թեփհանիչում /Հայկ. գյուղ. ակադեմիա: - Երևան, 1997: - 11 էջ, 3 նկ., 1 աղ.: - Մատենագր. 6 ան.: - Ռուս.: - Ավանդ. է 29.04.97, թիվ 118 - Ap97

Համառոտ շարադրված է կենտրոնախույս թեփհանիչի աշխատանքի սկզբունքը և համեմատումը աղացքարայինի հետ: Անալիտիկորեն ուսումնասիրվել է արագ պտտվող ժոտորով հատիկի շարժման օրինաչափությունը: Ռոտորի վրա տարածական բարդ շարժում կատարող մասնիկի շարժման դինամիկական սխեմայի օգնությամբ ընդհանուր տեսքով կազմվել է հատիկի տեղափոխման դիֆերենցիալ հավասարումը, որի լուծումով ստացվել է պտտվող մակերեսային շարժման արագությունը և պոլիվոլում դնպքում նյութական մասնիկի շարժման հետագծի հավասարումները պարամետրական տեսքով: Հետազոտման արդյունքները հնարավորություն են տալիս ընտրելու ժոտացիոն թեփհանիչների աշխատանքի օպտիմալ ռեժիմ:

41. Չատինյան Ռ. Ա., Եղիկյան Ա. Թ. Տավարաբուծության տնտեսական արդյունավետության գնահատման մի քանի հարցեր Լոռվա մարզի պայմաններում /Հայկ. գյուղ. ակադեմիա: - Երևան, 1997: - 6 էջ: - Մատենագր. 13 ան. - Հայ.: - Ավանդ. է ՀայկԳՏԼԳՀ-ում 30.04.97, թիվ 124 - 97

Էկոնոմիկայի՝ պլանայինից շուկայականին անցման պայմաններում փոխվում են արտադրության արդյունավետությանը ներկայացվող սոցիալ-տնտեսական պահանջները, գնահատման չափանիշները: Տնտեսագիտական կանոնական մտածելակերպին և գործելակերպին փոխարինում է իրականը, որտեղ արդյունավետության սոցիալ-բարոյական չափանիշների առաջնությանը փոխարինում են զուտ արդյունքային արդյունավետության չափանիշները: Լոռվա մարզի գյուղացիական տավարաբուծական տնտեսությունների ցուցանիշների վերլուծության հիման վրա ուսումնասիրվում են ներկա պայմաններում

արդյունավետության գնահատման հիմնահարցերը, ցուցանիշների լիարժեքության, մակարդակի, դինամիկայի, ինչպես նաև արդյունավետության հետագա բարձրացման գործում տնտեսավարող սուբյեկտների, միկրո- եւ մակրոտնտեսական գործոնների դերը:

42. Սողոմոնյան Վ. Ս., Մարգարյան Ա. Ս. Գումաղքի ֆերմենտացման արդյունաբերական տեխնոլոգիա /Հայկ. գյուղ. ակադեմիա: - Երևան, 1997: - 7 էջ, 3 նկ.: -Մատենագր. 2 ան.: - Հայ.: - Ավանդ. է ՀայկԳՏԼԳՀ-ում 30.04.97, թիվ 129 - Ap97

Նվիրված է գումաղքից կենսահումուս պատրաստելու արդյունաբերական նոր տեխնոլոգիայի եւ մեքենաների համակարգի մշակմանը: Նկարագրվում են տարբեր կենդանիների գումաղքի ֆերմենտացման պայմանները: Առաջարկվում է ֆերմենտացման տեղամասի նոր նախագիծ, որը հնարավորություն է տալիս միմյանցից մեկուսացված բնտոնե խրամատներում ֆերմենտացվող գումաղքի շերտերը հավասարաչափ դարսել եւ թույլ չտալ, որ հին ու նոր գումաղքն իրար խառնվեն: Անմիջապես խրամատներում կատարվում են մանրացված ծոցի խառնուրդ գումաղքի հետ, գումաղքի փխրեցումն ու խոնավացումը: Այդ գործողությունները կատարվում են հնդկականների մշակած մեքենա-սարքավորումներով: Տրվում է ֆերմենտացված տեղամասի նախագծման համար համապատասխան չափերը որոշելու հաշվարկի մեթոդը՝ կախված կենսահումուսի արտադրության ծավալներից:

43. Ղազարյան Ա. Ռ. Հարթ սկավառակային օրգանով կենսահումուս ցրելու գործընթացի ուսումնասիրության արդյունքները /Հայկ. գյուղ. ակադեմիա: - Երևան, 1997: - 13 էջ, 2 նկ.: - Մատենագր. 2 ան.: - Հայ.: - Ավանդ. է ՀայկԳՏԼԳՀ-ում 30.04.97, թիվ 130 - Ap97

Նվիրված է կենսահումուս ցրող մեքենայի կենտրոնախույս տնսակի հարթ սկավառակային աշխատանքային օրգանի կառուցվածքային եւ շահագործման պարամետրերի բարելավմանը: Դուրս են բերվել ինժեներական հաշվարկների պարզագույն բանաձևեր, հաշվի առնելով կենսահումուսի ֆիզիկամեխանիկական հատկությունները, թիակների ձևն ու դիրքը եւ սկավառակների պտուտաթվերը: Ստացված

բանաձևերը հնարավորություն են տալիս որոշել պատվող սկավառակներից մասնիկի թռիչքի արագությունները, հետևաբար նաև մինչև հողի մակերես հասնելը թռիչքի հեռավորությունը՝ կախված սկավառակների պատման հաճախականություններից: Այնուհետև կարելի է որոշել կենսահումուսի ցրման լայնությունը, այսինքն պարարտանյութացան մեքենայի ընդգրկման լայնությունը եւ արտադրողականությունը:

44. Չատինյան Ռ. Ա., Դանիելյան Մ. Ա., Սիմոնյան Ռ. Հ. ՀՀ-ում տավարաբուծության զարգացման հիմնահարցերը շուկայական հարաբերությունների պայմաններում /Հայկ. գյուղ. ակադեմիա: - Երևան, 1997: - 6 էջ: - Մատենագր. 5 ան.: -Հայ.: - Ավանդ. է ՀայկԳՏԼԳՀ-ում 30.04.97, թիվ 132 - Ap97

ՀՀ-ում հողի եւ արտադրության մյուս միջոցների սեփականաշնորհումից հետո խոշոր եղջերավոր անասունների գլխաբանակը կրճատվեց 33, կաթի արտադրությունը՝ 28, մսինը՝ 53 տոկոսով: Վերացվեցին խոշոր մասնագիտացված ֆերմաները, կաթի, մսի արտադրության համալիրները: Հանրապետությունում անասնաբուծությամբ զբաղվող շուրջ 250 հազար գյուղացիական տնտեսությունների մեծ մասն այսօր ապրանքային չեն, անընդունակ եւ անկենսունակ են շուկայում, ունեն ցածր տնտեսական արդյունավետություն: Հանրապետությունում ձեւավորված նոր վարչատարածքային կառուցվածքի պայմաններում յուրաքանչյուրն ինքնուրույն պետք է հոգա իր ռեսուրսային ներուժի բարձր արդյունավետությամբ օգտագործման հարցերը: Ելնելով այսօրվա պահանջներից, յուրաքանչյուր ագարակատեր ինքը պետք է որոշի՝ ի՞նչ անել, ընչպե՞ս արտադրել, ինչպիսի՞ ծախսումներով, ինչպիսի՞ն կլինի սեփական արտադրանքի մրցունակությունը շուկայում, կստացվի՞ բարձր եւ կայուն շահութաբերություն: Սրանք են այսօր այն առաջնային խնդիրները, որ մտահոգում են ագարակատերերին ու մտածված, խելացի լուծում պահանջում:

ՄԺԿ 681©5

ԱՎՏՈՄԱՏԻԿԱ ԵՎ ՀԵՌԱՄԵՌԱՆԻԿԱ

45. Մելիքյան Վ. Շ., Պիվազյան Տ. Գ. Տեխնիկական օբյեկտների մոդելների պարամետրական օպտիմալացման ծրագրային համալիր /Հայկ. պետ. ճարտարագիտ. համալս.- Երևան, 1997; - 6 էջ, 4 նկ.: - Մատենագր. 3 ան.: - Ռուս.: - Ավանդ. է ՀայկԳՏԼԳՀԻ-ում 11.04.97, թիվ 88 - Ap97

Նկարագրված են տեխնիկական օբյեկտների մոդելների պարամետրական օպտիմալացման մշակված ծրագրային համալիրի հնարավորությունները: Ծրագիրը ունիվերսալ է և, ի տարբերություն կոնկրետ մասնագիտացված բնագավառի համար նախատեսված համակարգերի, տեխնիկական օբյեկտի մոդելը ներկայացվում է որպես ներմուծվող տեղեկություն: Բերված են համակարգի և մոդելների նկարագրման մուտքային լեզվի հնարավորությունները ցուցադրող նյութեր:

46. Բաղդասարյան Մ. Զ. Ինֆորմացիոն օբյեկտների անալիզ /Հայկ. պետ. ճարտարագիտ. համալս.: - Երևան, 1997: - 6 էջ, 2 նկ.: - Մատենագր. 4 ան.: - Հայ.: Ավանդ. է ՀայկԳՏԼԳՀԻ-ում 23.04.97, թիվ 111 - Ap97

Ներկայացված է ինֆորմացիոն օբյեկտների անալիզը: Որպես հետազոտվող առարկայական տեղամասի ձևական ներկայացման միջոց օգտագործված է Պետրիի ցանցը: Դիտարկված է ինֆորմացիոն օբյեկտների ձևավորման հարցերը տրված դասի ցանցերով: Յուրյ է տրված մոդելի ստեղծման հիմնական էտապները, օբյեկտների տվյալների անալիզ; օբյեկտների վիճակի դինամիկայի փոփոխման անալիզ: Առաջարկվող մոդելը թույլ է տալիս կրճատել արդյունաբերական արտադրանքի առաքման ծախսերը:

47. Բաղդասարյան Մ. Զ. Տարածությունում անհամասեռ ջերմային գործընթացների ինֆորմացիոն բնութագրերի գնահատումը /Հայկ. պետ. ճարտարագիտ. համալս.: - Երևան,

1997: - 5 էջ: - Մատենագր. 2 ան.: - Ռուս.: - Ավանդ. է ՀայկԳՏԼԳՀԻ-ում 23.04.97, թիվ 112 - Ap97

Մշակված է տարածությունում առկա անհամասեռ ջերմային աղբյուրների ինֆորմացիոն անալիզի ապարատ: Այն հնարավորություն է տալիս իրականացնել անհամասեռ ջերմային օբյեկտների կառավարման համակարգի համակարգված անալիզ և մաթեմատիկական մոդելի ստեղծման նկարագրությունը: Ստացված արդյունքների գործնական արժեքն այն է, որ դրանք կարելի է կիրառել ջերմային գործընթացների կառավարման համակարգերը սինթեզելիս:

48. Մկրտչյան Ս. Հ., Նազարյան Կ. Մ. Դրական և բացասական կշիռներով ֆորմալ ներքոնի իրագործումը կոմպլեմենտար երկբևեռ տրանզիտորներով /Հայկ. պետ. ճարտարագիտ. համալս.: - Երևան, 1997: - 5 էջ, 2 նկ.: - Մատենագր. 3 ան.: - Հայ.: - Ավանդ. է ՀայկԳՏԼԳՀԻ-ում 30.04.97, թիվ 125 - Ap97

Նվիրված է սենտրված կշիռներով ֆորմալ ներքոնի (ՖՆ) տեխնիկական իրականացմանը: Առաջարկվող կոմպլեմենտար երկբևեռ (ԿԵ) տրանզիտորներով ՖՆ-ի սխեմայում հնարավոր է լինում իրականացնել դրական և բացասական կշիռներ միեւնույն մուտքի համար, ինչը չափազանց կարևոր է ադապտիվ ներքոն ստեղծելիս: Առաջարկվող սխեման հնարավորություն է տալիս նաև ավելացնելու ՖՆ-ի մուտքերի քանակը:

49. Հովակիմյան Ի. Ռ. Համալիր ավտոմատացված ռոտորային համակարգը էլեկտրոնային տեխնիկայի իրերի հավաքման գործընթացում /Մոսկվայի ձեռներեցների միջազգային ակադեմիայի Երևանի ուսումնակրթ. կենտրոն: - Երևան, 1997: - 3 էջ: - Մատենագր. 2 ան.: - Ռուս.: - Ավանդ. է ՀայկԳՏԼԳՀԻ-ում 30.04.97, թիվ 126 - Ap97

Համալիր ավտոմատացված ռոտորային համակարգը (ՀԱՌՀ) տեխնոլոգիական գործընթացների ավտոմատացման բարձրագույն ձևերից մեկն է: Այս աշխատանքը հիմնված է փոփոխական ռեզիստորների թերթիկների հավաքման դեպքում ՀԱՌՀ-ի

օգտագործման օրինակի վրա: Կիրառելով ֆունկցիոնալ տեխնիկա-տնտեսական վերլուծություն, աշխատանքի աշխատատարության հաշվարկը ՀԱՌՀ-ի նախագծման ժամանակ թույլ է տալիս զգալիորեն լավացնել արտադրության պլանավորումը, կոնստրուկտորների և նախագծողների աշխատանքի նորմավորումը, բարձրացնել կոնստրուկցիայի տնտեսական արդյունավետությունը և որակը:

УДК 69

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

50. Խաչիյան Է. Ե., Մարգարյան Ա. Հ. Շենքի և նրան կոշտ միացված կոնսոլային կառուցվածքի դինամիկական փոխազդեցության մասին /Սեյսմակայուն շինարարության ԳՀ: - Երևան, 1997: - 11 էջ, 4 նկ.- 2 աղ.: - Մատենագր. 7 ան.: -Ռուս.: - Ավանդ. է ՀայկԳՏԼԳՀ-ում 04.03.97, թիվ 77 - Ap97

Հոդվածը նվիրված է շահագործվող շենքի և նրան միացված կառուցվածքի դինամիկական փոխազդեցության հետազոտմանը: Ստացված են համակցված համակարգի դինամիկական բնութագրերի և սեյսմիկ ազդեցությունների մակարդակի փոփոխման օրինաչափությունները շենքի և միացված կառուցվածքի ազատ տատանումների պարբերությունների տարբեր հարաբերությունների դեպքում:

51. Մարգարյան Ա. Հ. Ճկուն վերին հարկով քարե շենքերի վրա սեյսմիկ ազդեցությունների հետազոտում /Եր. ճարտ. - շին. ին-տ: - Երևան, 1997: - 22 էջ, 9 նկ.: -Մատենագր. 2 ան.: - Հայ.: - Ավանդ. է ՀայկԳՏԼԳՀ-ում 19.03.97, թիվ 79 - Ap97

Հոդվածում բերված են և/ք ճկուն վերին հարկով (մարիչով) 1-450-2 սերիայի քարե շենքերի դինամիկական բնութագրերի հետազոտման արդյունքները և սեյսմիկ ազդեցությունների դեպքում այդպիսի շենքերում հակազդումների վերլուծությունը: 9 -բալանոց ուժեղ երկրաշարժերի (զետնի առավելագույն արագությունները 0.13g - 0.57g)

հիման վրա առանց ճկուն հարկի և ճկուն հարկի առկայության դեպքում 5 հարկանի քարե շենքերի հաշվարկումների օգնությամբ ցույց է տրված, որ ճկուն հարկի առկայությունը միջին հաշվով 1.6 անգամ նվազեցնում է սեյսմիկ ազդեցությունների մակարդակը:

52. Մելիքյան Գ. Ջ. Շենքերում միկրոկլիմայի ապահովման էներգահամակարգերի համակարգային վերլուծության մեթոդի մշակումը /Եր. ճարտ. - շին. ին-տ: - Երևան, 1997: - 11 էջ, 4 նկ.: - Մատենագր. 2 ան.: - Հայ.: - Ավանդ. է ՀայկԳՏԼԳՀ-ում 04.03.97, թիվ 86 - Ap97

Տրված է շենքերում միկրոկլիմայի ապահովման էներգահամակարգերի գաղափարը որպես շենքերի, ջնուցման և հովացման սարքերի, ինչպես նաև էներգիայի արտադրության և բաշխման համակարգերի մեկ միասնություն: Հիմնավորված է դրանց արդյունավետության ցուցանիշների համակարգային վերլուծության անհրաժեշտությունը: Մշակվել է ընդհանրացման մեթոդ և մաթեմատիկական մոդելներ էներգահամակարգերի էներգատնտեսական ցուցանիշների որոշման և օպտիմալացման համար: Կատարվել են մեքենայական հաշվարկներ տարածում գտած էներգահամակարգերի արդյունավետության և օպտիմալացման նպատակով: Արված են առաջարկներ շենքերի օպտիմալ կոնֆիգուրացիաների և ջերմամեկուսացման ընտրության վերաբերյալ: Մեթոդների կիրառությունն ապահովում է վառելիքա-էներգետիկ և նյութական միջոցների մեծ խնայողություն:

53. Մելիքյան Գ. Ջ. էներգատնտեսական բարձր արդյունավետության օդասառնցուցիչների մշակումը և հետազոտումը /Եր. ճարտ. - շին. ին-տ: - Երևան, 1997: - 16 էջ, 3 նկ.: - Մատենագր. 3 ան.: - Հայ.: - Ավանդ. է ՀայկԳՏԼԳՀ-ում 04.03.97, թիվ 87 - Ap97

Նկարագրված են շենքերի ամառային հովացման նոր տիպի օդասառնցուցիչների կառուցվածքային սխեմաները և աշխատանքի սկզբունքը: Մշակված են դրանց հաշվարկի մեթոդները և հաշվարկային արդյունքները: Բերված են էներգետիկական բնութագրերը և դրանց

համեմատությունը գոյություն ունեցող օդասառնցուցիչների հետ: Նշված է նոր օդասառնցուցիչների բարձր արդյունավետությունը եւ կիրառումից ստացվող էներգիայի եւ նյութական միջոցների խնայողությունը:

54. Ղուկասյան Ս. Ժ. Ձեռագիրսկի տուֆի փոշու հետազոտությունները վերածվող գազային խրոմատոգրաֆիայի մեթոդով /Եր. ճարտ. - շին. ին-տ: - Երևան, 1997: - 7 էջ, 3 նկ.: - Մատենագր.-

3 ան.: - Ռուս.: - Ավանդ. է ՀայկԳՏԼԳՏԻ-ում 21.04.97, թիվ 106 - Ար97

Վերածվող գազային խրոմատոգրաֆիայի մեթոդով հետազոտված է տուֆի ազդեցությունը պոլիմերի մասնիկների մակերևույթի վրա, որի հետևանքով փոխվում է պոլիմերի ֆիզիկական վիճակը: Յույց է տրված, որ տեղի է ունենում պոլիմերի ապակենման ջերմաստիճանի տեղաշարժ դեպի բարձր ջերմ աստիճանային տիրույթ: Դա վկայում է տուֆի մասնիկի մակերևույթի վրա պոլիմերի պատվաստումը:

55. Ղուկասյան Ս. Ժ. Տուֆի փոշու ձեռագիրսկու մեթոդով պոլիմերային լատեքսներով /Եր. ճարտ. - շին.

ին-տ: - Երևան, 1997: - 6 էջ, 1 նկ., 1 աղ.: - Մատենագր. 5 ան.: - Ռուս.: - Ավանդ. է ՀայկԳՏԼԳՏԻ-ում 21.04.97, թիվ 107 - Ար97

Ռստումնասիրված է տուֆի մասնիկի եւ պոլիմերային լատեքսների ձեռագիրսկու օրինաչափությունները: Որպես հետազոտվող նյութ վերցրել են տուֆ քարի մշակման արտադրական թափոնները (Արթիկի հանքավայր), կարբոքսիլ պարունակող ստիրոլի (ապակենման պոլիմեր) եւ քլորոպրենի (առածգական) համապոլիմերային լատեքսները: Յույց է տրված, որ տուֆի ձեռագիրսկու առավելագույն աստիճանը կախված է համապոլիմերներում կարբոքսիլ խմբերից, որքան մեծ է կարբոքսիլ խմբերի քանակությունը, այնքան առավելագույն ձեռագիրսկու աստիճանը ցածր է: Դա բացատրվում է նրանով, որ որքան շատ է կարբոքսիլ խմբերի պարունակությունը, այնքան փոքր են լատեքսի մասնիկների չափերը: Ծույց է տրված, որ ձեռագիրսկու հանքային լցանյութը ունի նշանակություն այն դեպքում, երբ հնարավոր է պոլիմերային լատեքսի խմբաբաժան հանքային նյութի մասնիկների վրա: Քննարկվում է ձեռագիրսկու հանքային լցանյութի մեխանիզմը լատեքսներով:

56. Դուկասյան Ս. Ժ. Ձեռագիրսկու տուֆի հիման վրա բարձր լցունավորված կոմպոզիցիոն նյութերի շահագործողական հատկությունների որոշումը /Եր. ճարտ. - շին. ին-տ: - Երևան, 1997: - 5 էջ, 1 նկ., 2 աղ. - Մատենագր. 4 ան.: - Ռուս.: - Ավանդ. է ՀայկԳՏԼԳՏԻ-ում 21.04.97, թիվ 108 - Ար97

Բարձր լցունավորված պոլիմերային կոմպոզիցիոն նյութերի ստեղծումը եւ ուսումնասիրությունը կարևոր ժողովրդաստնտեսական խնդիրներից է, քանի որ սկզբունքորեն հնարավորություն է ստեղծվում այնպիսի շինարարական իրերի արտադրության համար, որոնք օժտված են մի շարք բարելավված շահագործողական հատկություններով: Նշված հարցի լուծմանը շատ դեպքերում խոչընդոտում է անօրգանական մասի (լցանյութի) թերմոդինամիկական անհամատեղելիությունը օրգանական կապացողի հետ (պոլիմեր): Դրված խնդրի լուծման նպատակով մեր կողմից իրականացվել է տուֆի փոշու մակերևույթի ձեռագիրսկու կարբոքսիլ խմբեր պարունակող պոլիմերային լատեքսներով: Այդ ձեռագիրսկու աստիճանը է լցանյութի համասեռ բաշխումը կապակցողի մեջ: Ձեռագիրսկու տուֆի հիման վրա ստացված պոլիմերային կոմպոզիտների ֆիզիկա-մեխանիկական փորձարկումների արդյունքներով հաստատված է, որ առաջարկվող նյութերը օժտված են բարձր մեխանիկական ամրությամբ:

57. Դավենյան Ս. Ն. Հիմնատակի ընդգրկելիության ազդեցությունը հոծ եւ առանձին հիմքերով դիաֆրագմաների վրա /Հայկ. գյուղ. ակադեմիա: - Երևան, 1997: - 9 էջ, 2 նկ.: - Մատենագր. 2 ան.: - Ռուս.: - Ավանդ. է ՀայկԳՏԼԳՏԻ-ում 22.05.97, թիվ 138 - Ար97

Դիտարկված է առանձին հիմքեր ունեցող կրող պատերի հիմնատակի ընդգրկելիության մեծությունների ազդեցությունը կրող պատերի լարվածադեֆորմացիոն վիճակի վրա: Արտաքին ուժերի ազդեցության դեպքում ընդգրկելիության գործակցի որոշման համար ստացվել է թեքված պատի թեքման անկյան մեծությունը, կախված հիմնատակի ռեակտիվ ճնշումներից: Խնդիրը լուծված է ճշգրիտ եւ մոտավոր եղանակներով: Ընդգրկելիության գործակցի ստացված բանաձևերը կարելի է օգտագործել խոշորապանել շենքերի հաշվարկման

գօթծընթացում. շինարարական նորմեր եւ առաջարկություններ մշակելու համար:

ՄԺԿ 72

ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

58. Հակոբյան Ն. Կ. Բնակելի տների արդիականացումը բնապահպանության եւ արևային էներգիայի օգտագործման տեսանկյունից /Եր. ճարտ. - շին. ին-տ: - Երևան, 1997: - 9 էջ: - Մատենագր. 5 ան.: - Հայ. - Ավանդ. է ՀայկԳՏԼԳՀԻ-ում 10.03.97, թիվ 76 - Ap97

Դիտարկված են Երևանի բնակելի տների արդիականացման կիրառական առաջարկություններ բնապահպանության եւ արևային էներգիայի օգտագործման տեսանկյունից: Բնապահպան արդիականացման սկզբունքները ստորաբաժանված են 4 բաժինների, տարածություն, էներգիա, միջավայրի առողջություն եւ նյութեր: Առանձնահատուկ ուշադրություն է դարձված Երևանի պայմաններում արևային էներգիայի օգտագործման լայն հնարավորություններին: Ծնորհիվ Էներգիայի բնապահպան միջոցների օգտագործման ներկայացված առաջարկությունները թույլ են տալիս ավելի արդյունավետ կազմակերպել բնակելի տների ջերմամատակարարումը:

59. Կանայան Ա. Ա. Մարսելի գլխավոր առանցքը /Եր. ճարտ. - շին. ին-տ. Մարսել. - Լյուսինի ճարտ. դպրոց: - Մարսել, 1996: - 60 էջ, 42 նկ.: - Մատենագր. 17 ան.: - Ֆրանս.: - Ավանդ. է ՀայկԳՏԼԳՀԻ-ում 26.03.97, թիվ 80 - Ap97

Մենագրությունը նվիրված է Մարսել քաղաքի հյուսիս-հարավ ձգվող քաղաքային առանցքի վերլուծությանը: Ոռոտմնասիրության խնդիրն է ցույց տալ, թե ինչքանով է քաղաքային առանցքը կազմող փողոցների շղթայի ամեն մի հատվածի կառուցապատումը նպատակաուղղված առանցքի զարգացմանը, դիտարկված Մարսելի քաղաքային հյուսվածքի զարգացման տնտեսական, ինչպես նաև պարզել առանցքը կազմող

փողոցների ստեղծման քաղաքաշինական, պատմաքաղաքական նաև տնտեսական եւ օրենսդրական պայմանները: Աշխատանքի 3 գլուխները ըստ ժամանակագրության համապատասխանում են այն քաղաքաշինական խոշոր գործողություններին, որոնց շրջանակներում կազմավորվել է քաղաքային առանցքը, ինչպես նաև այն որակավորումներին, որ աշխատանքի ընթացքում ստացել է վերջինս, իր զարգացման տարբեր փուլերում.

- առանցքը քաղաքաձևավորիչ գործոն;
- առանցքը քաղաքի հորինվածքի զարգացման ուղղորդիչ;
- առանցքը քաղաքային կապի տարր;
- առանցքը ճարտարապետական տարատրոհման տարր:

60. Սարգսյան Դ. Ռ. Արուճի տաճարը եւ նրա վերականգնման խնդիրները /Եր. ճարտ. - շին. ին-տ: - Երևան, 1997: - 6 էջ, 5 նկ.: - Մատենագր. 4 ան.: - Հայ.: - Ավանդ. է ՀայկԳՏԼԳՀԻ-ում 27.03.97,

թիվ 82 - Ap97

Նոսրվածը վերաբերվում է վաղ միջնադարյան Հայաստանի առավել մեծ եկեղեցական կառույցներից մեկին: Ճարտարապետական հորինվածքների տիպագրական բազմազանության ֆոնի վրա ներկայացվում է «գմբեթավոր դահլիճ» տիպի առաջացումը, որին եւ պատկանում է հուշարձանը: Բննարկվում են նաև տաճարի վերակազմության եւ վերականգնման սկզբունքային հարցերը:

61. Միքայելյան Ա. Մ., Միքայելյան Մ. Գ. Ստորգետնյա քաղաքաշինությունը գլխավոր հատակագծերի համակարգում /Եր. ճարտ. - շին. ին-տ: - Երևան, 1997: - 5 էջ: - Հայ.: - Ավանդ. է ՀայկԳՏԼԳՀԻ-ում 08.04.97, թիվ 85 - Ap97

Յույց է տրված, որ քաղաքաշինության զարգացման նորագույն պատմությունը ստորգետնյա տարածությունների ակտիվ օգտագործման փուլ է: Այն նշանավորվել է ստորգետնյա մայրուղիների, բազմամակարդակ արտադրական, կոմունալ ու սպասարկող շինությունների միջոցով քաղաքների օրգանիզմը առողջացնելու, տարածքը խնայելու եւ կառուցապատված գոտիները բերնաթափելու

գործընթացով: Հայաստանի Հանրապետությունում եւս կատարվել են նման աշխատանքների ի դեմս Երևանի մետրոպոլիտենի, մի շարք ստորգետնյա անցումների, առևտրա-հասարակական համալիրների, ավտոմոբիլային մի քանի թունելների ու ջրատարների, որոնք կրել են լոկալ, միանշանակ բնույթ: Ստորգետնյա քաղաքաշինության զգալի ընձեռումները ճշմարիտ ու համակարգված ձեռով ներդնելու նպատակով առաջարկվում է քաղաքների գլխավոր հատակագծերի ու մանրամասն նախագծումների կազմում կատարել նաև ստորգետնյա տարածությունների գլխավոր հատակագծերը որպես հենանկարային շինարարության ծրագրային փաստաթուղթ:

62. Հակոբյան Հ. Կ. Գիտագործնական առաջարկություններ Երևանի բնակելի կազմավորումների արդիականացման վերաբերյալ /Եր. ճարտ. - շին. ին-տ: - Երևան, 1997: - 18 էջ, 5 նկ., 5 աղ.: - Մատենագր. 19 ան.: - Հայ.: - Ավանդ. է ՀայկԳՏԼԳՀ-ում 28.04.97, թիվ 116 - Ap97

Դիտարկված է Երևանի բնակելի կազմավորումների արդիականացման հիմնահարցը եւ ներկայացված են հեղինակի թեկնածուական ատենախոսության հիմնական արդյունքները: Երևանի բնակելի կազմավորումների վերլուծության հիման վրա կատարված է դասակարգում՝ ըստ արդիականացման պահանջների: Կազմավորումների զարգացման գիտական կանխատեսման արդյունքում ներկայացված են արդիականացման հիմնական ելակետային սկզբունքները: Յուրաքանչյուր տիպաբանական խմբի համար տրված են գիտագործնական առաջարկություններ՝ ներքին եւ արտաքին բնակելի միջավայրի արդիականացման համար: Առաջարկությունները թույլ են տալիս ստեղծելու Երևանի բնակելի կազմավորումների վերակառուցման համալիր ծրագրի մի մասը հանդիսացող արդիականացման հայեցակարգը:

63. Մարգարյան Ռ. X., Ասատրյան Վ. Ժ. Բնակարանների արևահարման նորմերի կատարելագործման վերաբերյալ /Եր. ճարտ. - շին. ին-տ: - Երևան, 1997: - 3 էջ, 1 նկ.: -Մատենագր. 6 ան.: - Հայ.: - Ավանդ. է ՀայկԳՏԼԳՀ-ում 30.04.97, թիվ 131 - Ap97

Բնակարանների արևահարման նորմերի վերլուծությունը ցույց է տալիս, որ արևի ճառագայթների մանրէասպան ազդեցության վրա հիմնված գործող նորմերը գործնականում չեն կարող իրագործվել: Այդ չափանիշի վրա հիմնված բնակարանի եւ բնակելի կառուցապատման նախագծային նորմերը սահմանափակում են բնակարանի հատակագծային լուծումները եւ բերում հողային ռեսուրսների վատնման: Բնակարանների արևահարման նորմերի մշակման ժամանակ անհրաժեշտ է ելնել ոչ թե արևի մանրէասպան հատկությունից, այլ մարդու վրա արևի համալիր պսիխոֆիզիոլոգիական ազդեցությունից: Անհրաժեշտ է նաև հաշվի առնել արևի ճառագայթման ինտենսիվության տարբերությունը ոչ միայն տարբեր լայնությունների, այլև ծովի մակերևույթից տարբեր բարձրությունների վրա:

ՄԸԿ 800

ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

64. Նոնեզյան Է. Գ. Բնագիր եւ թարգմանված դարձվածաբանական տեքստի համեմատելիության չափանիշները եւ դրանց ուսումնասիրության մեթոդները /Եր. օտար լեզուների ին-տ: - Երևան, 1997: - 10 էջ, 3 աղ. - Մատենագր. 7 ան.: - Ռուս: - Ավանդ. է ՀայկԳՏԼԳՀ-ում 29.04.97, թիվ 119 - Ap97

Դարձվածաբանական բնագիր տեքստը եւ այդ տեքստի թարգմանությունը համեմատելի են, եթե դրանք միանշանակ վերաբերում են կամ բազմաբնույթ, իրադրական, կամ միկոթեմայի ասույթին: Հենց այս պայմանն է ընկած դարձվածքային եւ ոչ դարձվածքային բնագիր եւ թարգմանված տեքստերի իմաստային հարաբերությունների անփոփոխակի հիմքում: Օրինաչափ է համարվում այդ տեքստերի ուսումնասիրությունը երկու չափանիշներով՝ իմաստային ինֆորմացիա, որն ընդգրկում է իրադրական տարրերը, եւ ձևական՝ կառուցվածքային տարրերը, դիտելով յուրաքանչյուր ինֆորմացիոն համակարգ տարրերի հաջորդական ընդգրկումով:

ՄԺԿ 93

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

65. Գյոզարյան Վ. Ա. Հայաստանյայց եկեղեցու համառոտ պատմությունը /Եր. օտար լեզուների ին-տ: - Երևան, 1997: - 175 էջ: - Մատենագր. 25 ան.: - Հայ.: - Ավանդ. է ՀայկԳՏԼԳՀ-ում 17.04.97, թիվ 105 - Ap97

Աշխատության մեջ հետազոտված է հայ եկեղեցու ամբողջական պատմությունը, որը ներառում է՝

1-ին դարում նրա ծագման և կազմավորման շրջանը, 301թ. քրիստոնեությունը Հայաստանում պաշտոնական կրոն դառնալը և նրա զարգացման հետագա առանցքային փուլերը՝ ընդհուպ մինչև մեր օրերը: Հիմնական խնդիրը՝ հայ ժողովրդի և եկեղեցու պատմության միասնական նկարագրի օգնությամբ ընդհանրական պատկերացում տալ նրանց ամբողջ անցյալ կյանքի վերաբերյալ: Հայ եկեղեցու պատմության նկատմամբ կիրառված է առհասարակ եկեղեցական պատմության ամբողջ ընթացքի միասնական պատկերացման չափանիշը, որով և այն միահյուսվում է եվրոպական դասական եկեղեցական պատմության ընդհանուր հենքին: Հատկապես քննության է առնված հայ եկեղեցու պայքարը ընդդեմ բյուզանդական կեսարապապականության, որն էլ ունի լատինական պապականության դեմ 16-րդ դարի բողոքական ռեֆորմացիայի մղած պայքարի նախակերպարը լինելու նշանակություն: Աշխատությունը իրենից ներկայացնում է գիտական հետազոտություն, ինչպես նաև եկեղեցական պատմության ուսումնական ձեռնարկ:

ՄԺԿ 33

ԷԿՆՆՈՄԻԿԱ

1. Թադևոսյան Ա Ս., Համակարգային մոտեցում Հայաստանի Հանրապետության տնտեսական քաղաքականության

ձևավորմանը /Հայ. պետ. ճարտարագիտ. համալս: - Երևան, 1997: - 7 էջ, 2 նկ.: - Հայ.: - Ավանդ. է ՀայկԳՏԼԳՀ-ում 30.07.97, թիվ 198 - Ap97

Վարչաիրամայական տնտեսության համալիր վերափոխումը շուկայական տնտեսության բավականին բարդ խնդիր է՝ իր մեջ պարունակելով քաղաքականության և տնտեսության բազմաթիվ ու տարաբնույթ խնդիրների փոխկապակցված և համակարգված մոդելներ: Հայաստանի Հանրապետության համար առավել նախընտրելի տնտեսական քաղաքականության ընտրությունն անհնար է առանց հաշվի առնելու տարբեր գործոններ, սուբյեկտիվ և օբյեկտիվ հակասություններ, անցումային շրջանին հատուկ առանձնահատկություններ, պատմական, սոցիալ-տնտեսական և հոգեբանական պայմանները, նպատակները և մեկնարկային հնարավորությունները: Այս բոլոր հարցերի լուծումը և ՀՀ տնտեսության հետագա զարգացումը հնարավոր է միայն, եթե դրանց մոտենանք համակարգային ձևով, որը կարավարման գործընթացում պահանջում է նպատակաուղղված և ծրագրանպատակային մեթոդների կիրառում:

2. Բեկնազարյան Ն. Ա., Մուսայելյան Հ. Ջ. Կանխատեսում հիմնված սուբյեկտիվ անորոշության վրա /Հայ. պետ. ճարտարագիտ. համարս. - Երևան, 1997: - 7 էջ, 1 նկ, 3 աղ: - Մատենագր. 19 ան.: - Ավանդ է ՀայկԳՏԼԳՀ-ում 30.07.97, թիվ 199 - Ap97

Կառավարման արդի հիմնահարցերի մշակման և հատկապես կանխատեսման ժամանակ առավել լայն ձևով են օգտագործվում փորձագիտական մեթոդները, որոնց տակ հասկանում ենք տրամաբանական և մաթեմատիկա-վիճակագրական մեթոդների և ընթացակարգերի համալիր՝ մասնագետներից ինֆորմացիա ստանալու՝ անհրաժեշտ բացիռնալ որոշման ընտրության համար: Բարդ հիմնահարցերի լուծման գլխավոր առանձնահատկություններից մեկն էլ այն է, որ հաշվարկների կիրառումը միաձուլվում է ղեկավարների, գիտնականների, մասնագետների դատողությունների օգտագործման հետ, որոնք թույլատրում են մասամբ փոխհատուցել ինֆորմացիայի պակասը և ամբողջությամբ հաշվի առնել մասնագետների ենթադրումները հետազոտվող օբյեկտի վիճակի մասին: Օգտագործման

միտումը պարզեցված մաթեմատիկական մեթոդների՝ համակցված նախափորձնական ինֆորմացիայի հետ, մասնագետների և գիտնականների կողմից տրված անորոշության պայմաններում որոշումների կայացման ժամանակ, վերջին տարիներին առավել լայն ճանաչում է ստանում եվրոպական տնտեսագետների կողմից՝ հաջողության սկզբունք՝ անվանմամբ: Առաջարկվում է այս մեթոդի կիրառումը բնական գազի պահանջարկի մարկետինգային իրավիճակի կանխատեսման և ապագայում Իրան-Հայաստան գազատարի կողմնորոշիչ արժեքի գնահատման գործում:

ՄԴԿ 37

ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ

3. Մանուկյան Ի. Ցու. Ընթերցանության ժամանակ ածանցյալ բառերի, ըմբռնման ունակությունների ձևավորման հոգեբանական նախադրյալները / Հայկ. պետ. մանկավարժ. ին-տ: - Երևան, 1997: - 9 էջ: - Ռուս.: - Ավանդ. է ՀայկԳՏԼԳՀ-ում 29.07.97, թիվ 186 - Ap97

Անձանոթ ածանցյալ բառային միավորների ճանաչման ընթացքը հիմնվում է ընկալման առարկայի տարբերակիչ առանձնահատկությունների յուրացման վրա: Մտքում ծագող պատկերի և անմիջապես ընկալվող ազդակի (բառի) համադրման և նույնացման հնարավորություն է ստեղծվում, եթե տեսողական երկարատև հիշողության մեջ ձևավորված են սովորած բառերի բառակազմ մտնող ոչ լրիվ (մորֆեմ) ուրվագծված պատկերները, իսկ խոսքաշարժողական անալիզատորին վերագրվում են մորֆեմների համակցությունների կանոնները: Հիշողության մեջ բավական չէ մորֆեմների միայն չափանիշային լրակազմը պահպանելը: Դրանցից կազմված բառերի իմաստների որոշման համար հիշողության մեջ պետք է պահպանվեն և՛ »համադրման հանգույց« աներկայացվեն նաև համապատասխան գույակցված սխեմաները, քանի որ ածանցյալ բառը մեր կողմից ընկալվում է ոչ թե որպես մորֆեմների պարզ հաջորդականություն, այլ որպես որոշակի ընդհանրություն: Նկատի ունենալով այս հանգամանքը՝

անհրաժեշտ է սովորողների երկարատև հիշողության մեջ մտցնել ածանցյալ բառերի բաղադրիչների ընդհանրական պատկերները:

ՄԴԿ 502

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ

4. Էկոլոգիայի և շրջակա միջավայրի պահպանության հարցը: Էկոլոգանոսֆերային հետազոտությունների կենտրոնի գիտական աշխատությունների ժողովածու, հատ. 3 /Էկոլոգանոսֆերային հետազոտ. կենտրոն: - Երևան, 1997: - 96 էջ, 4 նկ., 31 աղ: - Մատենագր. 82 ան. - Ռուս.: - Ավանդ. է ՀայկԳՏԼԳՀ-ում 09.07.97, թիվ 151 - Ap97

Սույն հատորում ներկայացված են գիտական հոդվածներ՝ նվիրված շրջակա միջավայրի պահպանության հիմնարար պրոբլեմներին, քիմիական տարրերի միգրացիոն հոսքերի, տեխնոսֆերային լանդշաֆտներում նրանց ձևավորմանը, քաղաքային էկոհամակարգերի պղնձով և այլ ծանր մետաղներով աղտոտվածության մակարդակի գնահատմանը, ինչպես նաև շրջակա միջավայրի աղտոտվածության մոնիթորինգի տարբեր հարցերին:

Լուսաբանված են լեռնա-մարգագետնային ֆիտոցենոզների կենսաէներգետիկայի խնդիրներին վերաբերող հարցեր՝ կապված բնական խոտհարքների և արոտների իրավիճակի էկոլոգիական գնահատման, նրանց կենսաարդյունավետության, ինչպես նաև բույսերի կենսազանգվածի կուտակման սեզոնային դինամիկայի և վերգետնյա օրգանների ու արմատների զանգվածի հարաբերության ուսումնասիրման հետ:

Ժողովածուի մեջ հատուկ տեղ ունի Հայաստանում օզոնային շերտի ուսումնասիրություններին նվիրված հոդվածը, որտեղ հեղինակը, 1990 թ. սկսած, Հայաստանի տարածքի վրա կատարում է օզոնային շերտի վիճակի հսկողություն: Հատորում արտացոլված են նաև հարցեր՝ նվիրված գետաբազեն (երկրաալյուտալ) գոտիներին, որպես հիվանդությունների առաջացման վտանգի էկոլոգիական գործոն, և նրանց բազահայտման կենսալոկացիոն եղանակին:

5. Մաղաթնյան Ս. Կ., Առաքնյան Ս. Ա., Կյուրեղյան Տ. Ն. Երևան քաղաքի տարածքի աղտոտումը պղնձով (Ժողովածու հ. 3, էջ 4-7): - Մատենագր. 4 ան.: - Ռուս.: - Ավանդ. է ՀայկԳՏԼԳՀԻ-ում 09.07.97, թիվ 152 - Ap97

Ուսումնասիրված է Երևան քաղաքի տարածքի պղնձով աղտոտման առանձնահատկությունները: Հաստատված են հողերում ֆոնային պարունակությունները, որոնք հավասար են 0,006 տոկոսի եւ 2,6 անգամ գերազանցում են ՍԹՆ:

Քաղաքի տարածքի մոտավորապես կեսը զբաղեցված է պղնձի 0,018 տոկոս միջին պարունակությամբ կարգաշեղումներով: Այդ պարունակությունները գերազանցում են ՍԹՆ 8 անգամ: Հետազոտված է կապարի շրջակա միջավայր ներթափանցման դինամիկան, հաշվարկված է, որ 1989 թ. Երևան քաղաքի տարածքի վրա թափվել է 8,5 տոննա, իսկ 1996 թ.՝ 0,4 տոննա պղնձ: Հաստատված է պղնձով աղտոտման մակարդակի կապը արդյունաբերական արտանետումների ծավալի հետ: Պարզվել է պղնձով շրջակա միջավայրի աղտոտման աստիճանի կախվածությունը լանդշաֆտա-ճարտարապետական առանձնահատկություններից:

6. Ռեւազյան Ռ. Հ., Անանյան Վ. Լ., Արարատյան Լ. Ա., Մեծունց Բ. Խ., Սաֆրազբեկյան Է. Ա. Տեխնաէկոհամակարգում մակրոտարրերի տրանսֆորմացիայի մասին /Ժողովածու հ. 3, էջ 8-13/: - Մատենագր. 3 ան.: - Ռուս.: - Ավանդ. է ՀայկԳՏԼԳՀԻ-ում 09.07.97, թիվ 153 - Ap97

Բնարկվել են հարցեր, որոնք վերաբերվում են նյութերի ջրա-միգրացիոն հոսքերում միկրոտարրերի ձեւափոխմանը: Ոսկու կորզման ֆաբրիկայի թափոնների մթնոլորտային տեղումների հետ տարրերի մուտքի եւ էկոհամակարգից հոսքաջրերի հետ նրանց ելքի մոդուլների համեմատությունը թույլ է տվել գնա հատել նյութերի ջրա-միգրացիոն հոսքերի տեխնաձեւին ձեւափոխման աստիճանը եւ տարրերի հաշվեկշիռի փոփոխությունները: Տարրերի հաշվեկշիռի վերլուծությունը ցույց է տվել, որ HCO^3 , Cl^- , SO_4^{2-} -իոնների դիսբալանսը, որը ծագում է տեխնաձեւ լանդշաֆտներում նրա գործունեության պրոցեսում, հանդիսանում է տեխնաձեւ ազդեցության արդյունք եւ որ տարրերի ջրա-միգրացիոն հոսքի ձեւափոխումը տեղի է ունենում իոնների հող մտնելուց մինչեւ հողի

պրոֆիլի սահմաններից ինֆիլտրացվող ջրերի հետ նրանց դուրս գալը: Տեխնաձեւ լանդշաֆտներում ջրի քիմիական կազմի փոփոխությունը վկայում է նրա իոնային կազմի տրանսֆորմացիայի մասին, իսկ սուլֆատ, քլոր եւ նիտրատ իոնների դուրս բերումը հետագայում բացասական ազդեցություն կարող է ունենալ մի շարք կայուն հատկանիշների, ստորգետնյա ջրերի եւ ամբողջությամբ վերցրած էկոհամակարգի վրա:

7. Ռեւազյան Ռ. Հ., Անանյան Վ. Լ., Արարատյան Լ. Ա., Մեծունց Բ. Խ., Սաֆրազբեկյան Է. Ա. Տեխնաէկոհամակարգում լանդշաֆտներում ծանր մետաղների միգրացիոն հոսքի գնահատման շուրջ /Ժողովածու հ. 3, էջ 14-21/: - Մատենագր. 6 ան.: - Ռուս.: - Ավանդ. է ՀայկԳՏԼԳՀԻ-ում 09.07.97, թիվ 154 - Ap97

Տարվել են ծանր մետաղների ջրա-միգրացիոն հոսքի ուսումնասիրություններ Արարատյան դաշտավայրի տեխնաձեւ լանդշաֆտում, որտեղ տեղի է ունենում ոչ միայն տարրերի միգրացիայի եւ տրանսֆորմացիայի բնական ընթացքի խախտումներ, այլ տվյալ համակարգի առանձին բաղադրիչների աղտոտումը առաջ է բերում կլարկյան խտությունները բազմապատիկ անգամ գերազանցող մակարդակներ: Լանդշաֆտներում ծանր մետաղների ջրա-միգրացիոն հոսքերի ձեւավորման գնահատումը թույլ է տվել ներկայացնելու, որ տեխնաձեւ գործոնի ազդեցությունը /ոսկու կորզման ֆաբրիկայի պոչանքներ/ հիմնականում պայմանավորում է ջրերի հանքայնացման մակարդակը եւ ծանր մետաղների հոսքի ձեւափոխման օրինաչափությունները նրանց ձեւավորման բոլոր էտապներում սկսած մթնոլորտային տեղումներից մինչեւ գրունտային ջրերը: Տեխնաձեւ տրանսֆորմացիայի գործակիցները առավել բարձր են մոլիբդենի, պղնձի եւ նիկելի համար, ինչ վերաբերվում է երկաթին, տիտանին եւ մանգանին, ապա նրանց պարունակությունը քիչ է կապված տեխնաձեւ աղտոտման հետ եւ պայմանավորված է հիմնականում ռեզիդուալ գործոններով: Ընդհանուր առմամբ, էկոհամակարգի վրա տեխնաձեւ գործոնի ազդեցությունը առաջ է բերում ծանր մետաղների միգրացիայի բնական ցիկլերի էական փոփոխություն:

8. Անանյան Վ. Լ., Ստեփանյան Է. Կ. Կարտոֆիլի բույսերում ռադիոնուկլիդների պարունակության և բաշխման մասին (Ժողովածու, հ. 3, էջ 22-29): - Մատենագր. 5 ան.: - Ռուս.: - Ավանդ. է ՀայկԳՏԼԳՀ-ում 09.07.97, թիվ 155 - Ap97

⁹⁰Sr-ի պարունակությունը կարտոֆիլի պալատներում 1983- 1984 թթ. որոշ չափով բարձր է եղել, քան 1973-74 թթ.: 1991 թ. կարտոֆիլի նմուշներում գումարային բետա-ակտիվության մակարդակը մոտավորապես համապատասխանել է 1983 թ. նմուշներին: ⁹⁰Sr և ¹³⁷Cs պարունակությամբ փրերը 4-7 անգամ գերազանցել են պալարներին: Կուտակման գործակիցները տատանվել են 0,3-0,9 սահմաններում: Կարտոֆիլի պարարտացման վերաբերյալ փորձը ցույց է տվել, որ պալարների բերքի բարձրացմանը գուցա հեն ⁹⁰Sr և ¹³⁷Cs պարունակությունը նվազել է 30-42 տոկոսով: Դիտվել է բացասական կոռելյացիոն կապ՝ բերքի քանակության և ռադիոնուկլիդների պարունակության միջև:

9. Մելքոնյան Դ. Օ. Հայաստանում օզոնային շերտի ուսումնասիրությունների մասին (Ժողովածու, հ. 3, էջ 30-34): - Մատենագր. 1 ան.: - Ռուս.: - Ավանդ. է ՀայկԳՏԼԳՀ-ում 09.07.97, թիվ 156 - Ap97

Հայաստանի տարածքում 1990 թվականից կատարվել է օզոնի ընդհանուր պարունակության սիստեմատիկ հետազոտություն. որը հետապնդում է հետևյալ նպատակները.

- օզոնային շերտի և ՌԻՄՃ մակարդակի փոփոխությունների կանխագուշակման եղանակների մշակումը.

- երկրի կենսահամակարգերի (մասնավորապես բնակչության առողջության) վրա ՌԻՄՃ, հատկապես դրա ամենակտիվ Բ-բաղադրիչի (ՌԻՄՃ-Բ), ազդեցության մասնագիտացված հետազոտությունների համար համապատասխան նյութերի նախապատրաստումը:

- Հայիդրոմետի համակարգում ՕԸՊ և ՌԻՄՃ-Բ մոնիթորինգի կազմակերպման աջակցությունը:

Այդ նպատակներին հասնելու համար ձեռնարկված է.

- Երեք օզոնաչափական դիտակետի ստեղծումը, որոնք տեղադրված են ծովի մակերևույթից տարբեր բարձրության վրա՝ Երևանում (1000

մ), Սևանա լճի ափագանում (1910 մ) և Արագած լեռան լանջին (3200 մ);

- ՕԸՊ և 1000-3200 մ բարձրությունների միջակայքում տրոպոսֆերային օզոնի ուղղաձիգ բաշխման պարբերական չափումները;

- Երկրի մակերևույթին ՌԻՄՃ ֆոնային մակարդակի վրա մթնոլորտի թափանցիկության ազդեցության հետազոտությունը:

Ստացված արդյունքները վկայում են, մասնավորապես, Հայաստանի տարածքում ՕԸՊ տարեկան 4-4,5 տոկոս նվազման և ներկայումս 1992 թ. նկատմամբ բնակչության մաշկային քաղցկեղով հիվանդանալու ռիսկի 50-60 տոկոս աճի մասին, ինչը հաստատվում է համապատասխան վիճակագրական տվյալներով:

10. Մեծունց Բ. Խ., Ռեւազյան Ռ. Հ. Խոտային ֆիտոցենոզների կենսաէներգետիկայի ուսումնասիրման մի շարք ասպեկտները (Ժողովածու, հ. 3, էջ 35-43): - Մատենագր. 10 ան.: - Ռուս.: - Ավանդ. է ՀայկԳՏԼԳՀ-ում 09.07.97, թիվ 157 - Ap97

Շարադրված են լեռնամարգագետնային ֆիտոցենոզների կենսաէներգետիկայի ուսումնասիրման հիմնական խնդիրները: Առաջարկվում է ֆիտոցենոզների կենսաէներգետիկ պարամետրերը (բուսազանգվածի տեսակարար կալորիականությունը և էներգատարողությունը) օգտագործել բնական արոտների և խոտհարքների արդյունավետության և էկոլոգիական իրավիճակի գնահատման համար:

11. Հովհաննիսյան Հ. Ա., Մուրադյան Ա. Հ., Արևշատյան Ս. Հ. Բանջարանոցային մշակաբույսերի ծանր մետաղներով աղտոտման աստիճանի գնահատականը Երևան քաղաքի պայմաններում (Ժողովածու հ. 3, էջ 44-48): - Մատենագր. 10 ան. - Ռուս.: - Ավանդ. է ՀայկԳՏԼԳՀ-ում 09.07.97, թիվ 158 - Ap97

Տրվում է Երևան քաղաքի ազլոմերացիայում աճեցվող բանջարանոցային մշակաբույսերի ծանր մետաղներով (ՄՄ) աղտոտման որակական գնահատականը: Բացահայտվել են ՄՄ, հատկապես Ni, Mn, Fe, Pb, Cu բարձր պարունակություններ, որոնք բանջարանոցային մշակաբույսերի մեջ նշանակալի չափով

գերազանցում են սահմանա-թույլատրելի խտությունները (ՄԹԽ): Ուսումնասիրված բանջարանոցային մշակաբույսերից կլանման լայն սպեկտրով առանձնանում են լոլիկը և յոթին: Բոլոր տեսակի բույսերի համար կազմված են տարրերի նվազող շարքեր ըստ ՄԹԽ գերազանցման աստիճանի: Առանձին բանջարանոցային բույսերի կողմից ԾՄ ընտրողաբար կուտակման հատկության հիման վրա հնարավոր է դառնում տանել նպատակապես աշխատանքներ որոշակի գյուղատնտեսական մշակաբույսերի ընտրության ուղղությամբ առավել ադոտոված քաղաքային տարածքներում մշակելու համար:

12. Մեծունց Բ. Խ., Ռեւազյան Ռ. Հ., Հայրապետյան Է. Հ. Չոր տափաստանային զոտու բույսերի վերգետնյա և ստորգետնյա օրգանների փոխհարաբերության մասին (Ժողովածու, հ. 3, էջ 49-55): - Մատենագր. 11 ան.: - Ռուս.: - Ավանդ. է ՀայկԳՏԱԳՀԻ-ում 09.07.97, թիվ 159 - Ap97

Ամփոփված են բուսազանգվածի կուտակման և ըստ բեռնային դրսևորում ունեցող մետամեր օրգանների բաշխման վերաբերյալ հետազոտությունների արդյունքները: Բույսերի կենսազանգվածի տարածման ուղղաձիգ գրադիենտի ուսումնասիրությունը ցույց է տվել, որ չոր -տափաստանային զոտու Գարու թավամազ տնտակի գերակշռությամբ ասոցիացիայում արմատային զանգվածի մոտ 77 տոկոսը կենտրոնացված է հողի 0-10 սմ շերտում, իսկ վերգետնյա զանգվածի 88 տոկոսը՝ մթնոլորտի 30 սմ շերտում: Բացահայտվել է տեղանքի միկրոմակերևույթի և խոտան դաշտի ոռոգման ազդեցության բնույթը կենսազանգվածի կուտակման և ըստ վերգետնյա ու ստորգետնյա օրգանների բաշխման վրա:

13. Հովհաննիսյան Հ. Ա. Ֆոսֆորօրգանական ինսնկտիցիդների ազդեցությամբ նիշակիր ազոտի թափանցումը և բաշխումը խաղողի բույսի օրգաններում (Ժողովածու, հ. 3, էջ 56-58): - Մատենագր. 9 ան.: - Ռուս.: Ավանդ. է ՀայկԳՏԱԳՀԻ-ում 09.07.97, թիվ 160 - Ap97

Ուսումնասիրվել է մի քանի ֆոսֆորօրգանական ինսնկտիցիդների ազդեցությունը նիշակիր ազոտի թափանցման և բաշխման վրա խաղողի տնկիներում: Բացահայտվել է, որ խաղողի բույսերի մեջ

ինսնկտիցիդներով մշակելուց և նշված ազոտով սնուցելուց 24 ժամ հետո մեծանում է նրա թափանցումը բույսի օրգաններում: Արմատներում ազոտի թափանցումը կատարվում է ավելի ուժեղ 3 ժամ ինսնկտիցիդներով մշակելուց հետո, քան տերեւներում: Կախված պրեպարատի տնտակից ազոտը թափանցում է տարբեր ձևով: Սակայն, ամբողջությամբ վերցրած, ուսումնասիրված պրեպարատները ոչ միայն չեն կանգնեցնում, այլև որոշ չափով նպաստում են ազոտի ասիմիլյացիային խաղողի բույսերում, որը դրականորեն է արտահայտվում բերքի տարրերի ձևավորման և թփի ընդհանուր արդյունավետության վրա:

14. Արարատյան Լ. Ա., Անանյան Վ. Լ., Չաքարյան Ս. Ա. Պարարտանյութերի և ցողման ազդեցությունը առվույտի մեջ միկրոտարրերի կուտակման վրա (Ժողովածու հ. 3, էջ 59-66): - Մատենագր. 4 ան. - Ռուս.: Ավանդ. է ՀայկԳՏԱԳՀԻ-ում 09.07.97, թիվ 161 - Ap97

Բերվում են տվյալներ էջմիածնի շրջանի գորշ ոչ կարբոնային հողերի պայմաններում առվույտի բույսերի մեջ միկրոտարրերի պարունակության վրա պարարտանյութերի և հերբիցիդներով ցողման ազդեցության մասին: Պարարտանյութերի տարբեր դոզաների և զուգակցման ազդեցությունը թույլ

է արտահայտվել առվույտի բերքատվության վրա: Ցողումը հերբիցիդներով, մի փոքր բարձրացնելով առվույտի բերքը, նպաստել է նաև է, Mn, Ti, Mo, Cu, As և Cd-ի խտության բարձրացմանը: Pb-ի և Sn-ի պարունակությունները գործնականում չեն փոփոխվել:

15. Մեծունց Բ. Խ., Ռեւազյան Ռ. Հ., Հայրապետյան Է. Հ. Մարգագետնատափաստանային զոտու խտաբույսերի կենսազանգվածի կուտակման սեզոնային դինամիկայի մասին (Ժողովածու հ. 3, էջ 67-73): - Մատենագր. 5 ան.: - Ռուս.: - Ավանդ. է ՀայկԳՏԱԳՀԻ-ում 09.07.97, թիվ 162 - Ap97

Հետազոտությունները ցույց են տվել, որ բարձր լեռնային խտաբույսերի կենսազանգվածի կուտակման սեզոնային շիթմիկան ոչ միշտ է համապատասխանում շրջակա միջավայրի ջրաջերմային ռեժիմի փոփոխմանը: Խոտհարքերի արդյունավետությունը մեծապես

պայմանավորված է ֆիտոցենոզի կառուցվածքով, նրա առանձին բաղադրիչների միջև ստեղծված ցենոտիկ փոխազդեցության բնույթով և բույսերի գերիշխող տեսակների մորֆոգենետիկական առանձնահատկություններով: Բացահայտվել է, որ կենսազանգվածի կուտակման դինամիկայում նկատվող ամառային դեպրեսիան պայմանավորված է նաև բույսերի տերևային մակերեսի կրճատմամբ և ֆոտոսինթեզի մաքուր արդյունավետության անկմամբ:

16. Ռևուզյան Ռ. Հ., Մեծունց Բ. Խ., Արարատյան Լ. Ա. Նոր դանդաղ գործող համալիր պարարտանյութ (Ժողովածու հ. 3, էջ 74-77): - Մատենագր. 4 ան.: - Ռուս. - Ավանդ. է ՀայկԳՏԼԳՀԻ-ում 09.07.97, թիվ 163 - Ap97

Բնական սորբենտների հիման վրա մշակվել է դանդաղ գործող համալիր պարարտանյութ, որը պարունակում է ազոտ, ֆոսֆոր, կալիում և մի շարք միկրո տարրեր (Cu, Mo, Ca, Ni, Fe, Ti, Zn և այլն): Ազոտի, ֆոսֆորի և կալիումի աղբյուրներ են հանդիսացել համապատասխանաբար ամոնիակային ջուրը (NH₄OH), օրթոֆոսֆորական թթուն և բնական սորբենտները: Նոր պարարտանյութի բնորոշ առանձնահատկությունները կայանում են նրանում, որ ազոտի և այլ տարրերի մի մասը որոշակի ժամանակով ֆիքսվում է սորբենտների գրանուլաների կողմից և պահպանվում լվացումից: Այն օգտագործվում է բույսերի կողմից աստիճանաբար՝ ամբողջ վեգետացիայի ընթացքում: Ընդ որում ազոտի կորուստը ամբողջովին բացառվում է կորոստի բացառումը կանխում է ազոտական միացությունների և այլ տարրերի մուտքը ստորգետնյա ջրեր և նպաստում բույսերի կողմից սննդատարրերի օպտիմալ օգտագործմանը:

17. Արարատյան Լ. Ա. Բիոլոկացիան որպես գնոպաթոզեն գոտիների հայտնաբերման մեթոդ (Ժողովածու, հ. 3, էջ 78-84):- Մատենագր. 2 ան.: - Ռուս.- Ավանդ. է ՀայկԳՏԼԳՀԻ- ում 09.07.97, թիվ 164 - Ap97

Բիոլոկացիան (կենսատեղորոշումը) հատուկ շրջանակների օգնությամբ տարբեր օբյեկտների՝ հանքավայրերի, ջրի, կորած մարդկանց և այլն և էներգետիկ դաշտերի որոնման ոչ տրիվիալ մեթոդ

է: Այն ունի անսահման հնարավորություններ և կարող է բարձր արդյունավետությամբ օգտագործվել շատ ասպարեզներում՝ ռազմական գործում, երկրաբանության, բժշկության, գյուղատնտեսության մեջ, առողջության համար մեծ նշանակություն ունեցող գնոպաթոզեն գոտիների որոնման և պրոֆիլակտիկ ու բուժական նպատակով մարդու վեցսադաշտի չափման և ուղղման մեջ և շատ այլ ասպարեզներում: Հեղինակի և նրա գործընկերների յոթամյա փորձը դրա լավ ասպացույցն է:

18. Արարատյան Լ. Ա. Գնոպաթոզեն գոտիները որպես առողջությանը սպառնացող էկոլոգիական գործոն (Ժողովածու, հ. 3, էջ 85-95): - Մատենագր. 4 ան.: - Ռուս.: - Ավանդ. է ՀայկԳՏԼԳՀԻ-ում 09.07.97, թիվ 165 - Ap97

Վաղուց ի վեր հայտնի է, որ Երկրի վրա գոյություն ունեն գոնաներ, որոնք բացասական են ազդում մարդու առողջության և առհասարակ բոլոր կենդանի և նույնիսկ անկենդան օբյեկտների վրա: Բազմաթիվ հետազոտություններով հաստատված է, որ այդ գնոպաթոզեն գոտիները (ԳՊԳ) առաջացնում են 90-100% քաղցկեղային և 50-70% սրտանոթային և նյարդային հիվանդություններ: Աշխատանքում քննարկվում են ԳՊԳ-ների տիպերը, բերվում են Երևանի բնակարաններում և պետական ձեռնարկություններում նրանց ուսումնասիրման մի քանի օրինակներ՝ կատարված հեղինակի և իր գործընկերների կողմից, ինչպես նաև Հայաստանի առողջապահության նախարարության Ուռուցքաբանական գիտական կենտրոնում: Բերվում են նաև հիվանդությունների պրոֆիլակտիկային և նրանց վերացմանը նպաստող առաջարկություններ:

ՄԺԿ 51

ՄԱԹԵՄԱՏԻԿԱ

19. Յավրյան Ա. Վ. Աստիճանային շարքի շառավղային եզակիությունների բաշխման մասին /Մաթեմատիկայի ին-տ: -

Երևան, 1997: - 11 էջ: - Մատենագր. 7 ան.: - Ռուս.: - Ավանդ. է ՀայկԳՏԼԳՀ-ում 09.07.97, թիվ 147 - Ap97

Հետազոտվում է աստիճանային շարքի եզակիությունների առկայության հարցը գուգամիտության շրջանի եզրի վրա կամ դրանից դուրս: Աստիճանային շարքի գործակիցների (նրանց բացարձակ արժեքների եւ արգումենտների) վրա ստացված են բավարար պայմաններ տված՝ անկյունային տիրույթում շառավղային եզակիության առկայության համար:

20. Ստեփանյան Մ. Ն. Կենտրոնացված ուժը, որը գտնվում է ճկուն հարթության կամայական կետում, թուլացված կամայական ձևի անցքով /Մեխանիկայի ինստիտուտ: - Երևան, 1997: - Մատենագր. 3 ան.: - Ռուս.: - Ավանդ. է ՀայկԳՏԼԳՀ-ում 14.07.97. թիվ 166 - Ap97

Ստացված են համալիր պոտենցիալների անալիտիկ արտահայտությունները, որոնք բնորոշում են անցքով անվերջ հարթության լարված-դեֆորմացված վիճակը, ելնելով կենտրոնացված ուժի ազդեցությունից՝ հարթության ցանկացած կետի վրա: Ստացված են լարման ինտենսիվության գործակիցները էլիպտիկ բացվածքի ծայրահեղ դեպքի՝ ուղիղ ճեղքի համար: Սուրացված են նույնպես լարման ինտենսիվության գործակիցները կենտրոնացված մոմենտի ազդեցության ժամանակ ճկուն հարթության կամայական կետում:

21. Գրիգորյան Ա. Ժ. Կոշտ դրոշմի անհամաչափ ճնշումն եզր դուրս եկող ուղղաձիգ ճեղքով թուլացված օրթոտրոպ կիսա հարթությանը /Եր. ճարտարա-շին. ին-տ: - Երևան, 1997: - 6 էջ: - Մատենագր. 8 ան.: - Հայ.: - Ավանդ. է 14.07.97, թիվ 168 - Ap97

Դիտարկվում է եզր դուրս եկող ուղղաձիգ ճեղքով թուլացված առաձգական, օրթոտրոպ կիսահարթության ոչ համաչափ հարթ կոնտակտային խնդիրը՝ ճեղքի առանցքից որոշ հեռավորության վրա կիրառված վերջավոր երկարությամբ կամայական ողորկ հիմքով կոշտ դրոշմի ճնշումից: Ենթադրվում է, որ շփումը դրոշմի եւ կիսահարթության միջև բացակայում է, իսկ հորիզոնական եզրում՝ դրոշմից դուրս, եւ ճեղքի եզրերում գործում են կամայական նորմալ լարումներ: Օգտվելով

ինտեգրալ ձևափոխության մեթոդից՝ խնդրի լուծումը բերված է Ֆրեդհոլմի տիպի երկրորդ սննի ինտեգրալ հավասարումների համակարգի լուծման: Յուրյ է տրված այդ համակարգի լուծելիությունը, ստացված են ճեղքից դուրս լարումների որոշման բանաձևերը:

22. Գրիգորյան Գ. Ա. Վիներ-Հոպֆի դիսկրետ հավասարումը կոնսերվատիվ եւ գերկրիտիկական դեպքերում /Բյուրականի աստղաֆիզ. աստղադիտարան: - Բյուրական, 1997: - 18 էջ: - Մատենագր. 7 ան.: - Ռուս.: - Ավանդ. է ՀայկԳՏԼԳՀ-ում 23.07.97. թիվ 172 - Ap97

Հետազոտվում է Վիներ-Հոպֆի դիսկրետ հավասարումը

$$x_n = f_n + C \sum_{k=0}^{n-1} a_n^k x_k, \quad n = 0, 1, 2, \dots \quad (1),$$

երբ $a_n \geq 0$, $a_n = 1$, կոնսերվատիվ ($C=1$) եւ գերկրիտիկական ($C > 1$) դեպքերում:

$$(1) \text{ հավասարման } A(z) = 1 - C \sum_{n=0}^{\infty} a_n z^n$$

հատկությունների ուսումնասիրման հիման վրա ապացուցվում են ոչ միայն որոշ հայտնի արդյունքներ, որոնք վերաբերվում են կոնսերվատիվ դեպքին, այլ նաեւ դրանց որոշ ընդհանրացումներ:

Ստացված արդյունքների հիման վրա դուրս է բերվել ընդհանուր բանաձեւ հետեւյալ վերականգնման հավասարման համար

$$x_n = f_n + \sum_{k=n}^{\infty} b_n^k x_k \quad n = 0, 1, 2, \dots$$

$$\text{որտեղ } b_n \geq 0, \quad n = 0, -1, -2, \dots, \quad \sum_{k=0}^{\infty} b_n^k = 1,$$

$$\{f_n\}_{n=0}^{\infty} \in l_p^+(1 - p + \dots)$$

Գերկրիտիկական դնաքի համար ցույց է արվել, որ եթե երկրորդ կարգի մոմենտը

$$V_2 = \sum_{n=1}^{\infty} n^2 a_n$$

վերջավոր է, ապա (1) հավասարման $A(Z)$ սիմվոլը

ունի հետևյալ հատկությունները.

կամ $A(Z)$ -ը չի վերասերվում, երբ $C-1 \ll 1$ եւ

$\text{ind } A(Z) = \pm 1$ կամ թույլ է տալիս հետևյալ ներկայացումը.

$$|z| = 1$$

$$A(z) = (Z - \beta_C)(Z - \bar{\beta}_C)B_C(Z), \quad |\beta| = 1, \quad B_C(Z) \in W$$

$B_C(Z) \neq 0$, $|Z|=1$, $\text{ind } B_C(Z) = -1$, որտեղ W -ն

$$|Z|=1$$

վիճակի հանրահաշիվն է: Այդ արդյունքի հիման վրա հատուկ ֆակտորիզացիայի մեթոդի միջոցով ստացվել են (1) հավասարման լուծելիության որոշ պայմաններ:

23. Նագարյան Վ. Ռ. Վերականգնման ինտեգրալ հավասարումների համակարգի մասին /Բյուրականի աստղաֆիզ. աստղադիտարան: - Բյուրական, 1997: - 7 էջ: - Մատենագր. 6 ան.: - Ռուս.: - Ավանդ. է ՀայկԳՏԼԳՀ-ում 24.07.97, թիվ 173 - Ap97

Դիտարկվում է վերականգնման տիպի ինտեգրալ հավասարումների հետևյալ համակարգը.

$$\varphi_i(x) = g_i(x) + \sum_{j=1}^n \int_0^x V_{ij}(x-t)\varphi_j(t)dt, \quad i = 1, \dots, n, \quad (1)$$

որտեղ $V = (V_{ij})$ կորիզը կոնսերվատիվության պայմաններին բավարարող մատրից-ֆունկցիա է, բացի այդ

$$V \begin{pmatrix} L_1^{n \times n} & L_p^{n \times n} \\ & p > 1, \end{pmatrix} V(+\infty) = 0$$

(1) համակարգը կարելի է հատկություններ ունի ճառագայթման տեղափոխման տեսության մեջ եւ մաթեմատիկական ֆիզիկայի այլ բաժիններում: Ապացուցվում է, որ եթե $g = (g_i) \in L_1^n, g(+\infty) = 0$

ապա (1), համակարգի լուծումը $+$ - ում ունի վերջավոր սահման, եւ հաշվվում է այդ սահմանի արժեքը:

24. Սահակյան Ղ. Ա. Բաղադրյալ ֆերմագնիսական սնայի անկյունային կետի շրջակայքում մագնիսաառաձգական մեծությունների վարքի թվային-անալիտիկ հետազոտումը /Եր. պետ. համալս.: - Երևան, 1997: - 14 էջ, 4 նկ., 3 աղ.: - Մատենագր. 12 ան.: - Ռուս.: - Ավանդ. է ՀայկԳՏԼԳՀ-ում 24.07.97, թիվ 174 - Ap97

Մագնիսապես փափուկ ֆերմագնիսական մարմնի մագնիսաառաձգականության տեսության գծային հավասարումների եւ մակերևույթային պայմանների հիման վրա ուսումնասիրված է մագնիսաառաձգական լարումների եւ մագնիսական դաշտի վարքագիծը ընդլայնական կտրվածքով, կտոր առ կտոր համասեռ սնայի տեսքով բաղադրյալ պրիզմաձև մարմնի անկյունային կետի շրջակայքում: Ցույց է տրված, որ մագնիսական դաշտի առկայությունը եւ մեխանիկական ու մագնիսական դաշտերի փոխազդեցությունը կարող են էապես փոփոխել գրոյական լարվածության վիճակի միջակայքերի չափերը եւ հնարավորություն են տալիս կարգավորելու մագնիսաառաձգական մեծությունների վարքագիծը բաղադրյալ մարմնի միացման մակերևույթի եզրի շուրջը: Հետազոտված է մագնիսաառաձգական մեծությունների եզակիությունների վարքը սնայի գազայում կախված բաղադրյալ սնայի նյութերի մագնիսաառաձգական հատկությունները եւ արտաքին մագնիսական դաշտի լարումը բնութագրող պարամետրերից: Թվային արդյունքները ցույց են տալիս, որ մագնիսական դաշտի առկայությունը կարող է եւ լարումների եզակիությունը առաջացնել եւ կենտրոնացման մակարդակը թուլացնել (եթե մագնիսական դաշտի բացակայության դեպքում լարումների կենտրոնացում գոյություն ուներ):

25. Հովասաթյան Գ. Ա. Ֆերմայի մեծ թեորեմի ապացույցը՝ իռացիոնալության տեղաշարժի մեթոդով /Ինֆորմատիկայի եւ ավտոմատացված պրոբլեմների ին-տ: - Երևան, 1997: - 5 էջ: - Ռուս.: - Ավանդ. է ՀայկԳՏԼԳՀ-ում 31.07.97, թիվ 202 - Ap 97

Ֆերմայի մեծ թերթերը կամ ավելի ճիշտ Ֆերմայի պնդումը հաստատում է, որ եթե P ամբողջ թիվը մեծ է 2-ից, ապա $cp=mp+ap$ հավասարումը բնական թվերի տիրույթում լուծում չունի: Տեղաշարժի մեթոդով ապացուցվում է Ֆերմայի թերթերն ցանկացած P թվի համար: Տեղաշարժի մեթոդի առավելությունն այն է, որ դա համոզիչ է նաև խիստ: Թվերի տեսության մեջ այս մեթոդի կիրառությունը կարող է բերել հետաքրքիր արդյունքների: Ֆերմայի թերթերի ապացույցը նպաստում է մաթեմատիկական պրոբլեմների՝ Հոլդբախի նաև այլ խնդիրների լուծմանը:

26. Ասյան Ա. Ռ. Ընդհանուր տեսքի անդրադարձ հավասարումների միջոցով ներկայացվող տեսա-թվաբանական պրեդիկատների մասին /Ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ին-տ: - Երևան, 1997: - 14 էջ: -Մատենագր. 14 ան.: - Անգլ.: - Ավանդ. է ՀայկԳՏԼԳՀ-ում 31.07.97, թիվ 205 - Ap97

Ճշգրտվում է տեսա-թվաբանական (S-Թ) պրեդիկատների դասը, որոնք կարելի է ներկայացնել ընդհանուր տեսքի անդրադարձ հավասարումների միջոցով (ԼՏՍՀ): S-Թ պրեդիկատի ներկայացումով ընդհանուր տեսքի անդրադարձ հավասարումների միջոցով հասկացվում է ԼՏՍՀ համակարգի գոյությունը, որը ունի միակ լուծում (S-Թ ֆունկցիաների համակարգ), որի լուծումներից մեկը հանդիսանում է տրված պրեդիկատի բնութագրիչ ֆունկցիան: Յուրաքանչյուր կամայական հիպերթվաբանական պրեդիկատ կարելի է ներկայացնել ԼՏՍՀ միջոցով: Մյուս կողմից ցույց է տրված, որ հիպերթվաբանական պրեդիկատների դասը ամենալայն դասն է, որը կարելի է ներկայացնել ԼՏՍՀ միջոցով: Սա հանդիսանում է հիպերթվաբանական պրեդիկատների դասի մի նոր բնութագրիչ «դրսից», որտեղ պրեդիկատի բնութագրիչ ֆունկցիան հանդիսանում է հավասարումների համակարգի լուծում: Մի աշխատությունում Մայխիլը ներմուծել է վերջավոր ներկայացվող ֆունկցիաների դասը որպես, այսպես կոչված, վերջավոր բանաձևերի արքիոմատիկ համակարգերի միակ ստանդարտ մոդել: Հոդվածում ԼՏՍՀ գաղափարը օգտագործվում է այս դասի նոր բնութագրիչ ստանալու համար:

27. Հարությունյան Ա. Ն. Աղբյուրի եռակի նկարագրման հասանելի արագությունների կախվածությունը շեղման և հուսալիության մակարդակներից /Ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ին-տ: - Երևան, 1997: - 7 էջ, 1 նկ.: - Մատենագր. 9 ան.: - Անգլ.: - Ավանդ. է 31.07.97, թիվ 206 - Ap97

Նվիրված է ինֆորմատիկայի տեսության մեջ հայտնի աղբյուրի բազմակի նկարագրման մի խնդրի լուծմանը: Դիտարկվում է ինֆորմացիայի հաղորդման հետևյալ համակարգը: Աղբյուրի հաղորդագրությունները նկարագրվում են երեք կոդավորիչներով: Երեք ապակոդավորիչներից առաջինին հայտնի է նկարագրություններից միայն մեկը, երկրորդին հայտնի է երկու նկարագրություն, իսկ երրորդը տեղյակ է բոլոր երեք նկարագրություններին: Յուրաքանչյուր ապակոդավորիչ՝ աղբյուրի հաղորդագրությունները պետք է վերականգնի շեղման տված մակարդակը գերազանցելու պակաս հավանականությամբ, քան հուսալիության տված ցուցիչը: Բերված է որակի և հուսալիության տված մակարդակներից կախված հասանելի արագությունների տիրույթի ներքին գնահատականը:

ՎԺԿ 53

ՖԻԶԻԿԱ

28. Բեժանյան Վ. Ա, Չթյան Ա. Բ. Երկու միատեսակ կոշտ դրոշմների համաչափ ճնշումն առածգական պիեզոկերամիկական կիսահարթությանը /Եր. ճարտարա-շին. ին-տ: - Երևան, 1997: - 4 էջ: - Մատենագր. 4 ան.: - Ռուս.: -Ավանդ. է ՀայկԳՏԼԳՀ-ում 19.07.97, թիվ 169 - Ap97

Տրված է էլեկտրաառածգականության տեսության համաչափ կոնտակտային խնդրի ճշգրիտ փակ լուծումը պիեզոկերամիկական կիսահարթության համար, երբ նրա եզրում ճնշում են ցանկացած ողորկ հիմքով երկու միատեսակ կոշտ դրոշմներ: Պիեզոկերամիկայի նախնական բեռնազման ուղղությունը ընդունվում է ուղղահայաց

կիսահարթության եզրին: Ենթադրվում է, որ կիսահարթության եւ դրոշմների միջեւ շփումը բացակայում է: Դիտարկվում է կիսահարթության եզրում էլեկտրոդային ծածկույթի առկայության եւ բացակայության դեպքերը: Օգտվելով ինտեգրալ ձեւափոխության մեթոդից, խնդրի լուծումը արված է ճշգրիտ, փակ տեսքով:

29. Բաբերգյան Ռ, Պ., Բաղայան Է. Ս., Եղիազարյան Գ. Ա., Տեր-Գևորգյան Է. Ի. Պեննինգյան իոնային աղբյուրի էլեկտրական բնութագրերի վրա ներկաչափական պարամետրի ազդեցության մեխանիզմը /Եր. պետ. համալս.: - Երևան, 1997: - 10 էջ, 2 նկ.: - Մատենագր. 9 ան.: - Ռուս.: - Ավանդ. է ՀայկԳՏԼԳՀ-ում 28.07.97, թիվ 177 - Ap97

Հետազոտված է ներկաչափական պարամետրի ազդեցությունը իոնային աղբյուրի պարպումայրն հոսանքի, իոնային փնջի եւ նրա առանցքային բաղադրիչի վրա: Իոնային աղբյուրում իոնային փունջը ձեւավորվում է առանց դուրս քաշող եւ արագացնող դաշտերի կիրառման: Յույց է տրված, որ 10^{-4} Թոր ճնշման պայմաններում նշված հոսանքների համար, կախված $1/d$ ներկաչափական պարամետրից, դիտվում են երկու մաքսիմումներ: Առաջին մաքսիմումը համապատասխանում է

$1/d=1$ -ից 1.5 տիրույթին՝ խիստ տարամիտվող իոնային փնջի ձեւով, իսկ երկրորդը՝ $1/d=4$ -ից 5 տիրույթին՝ լավ կոլիմացված իոնային փնջի ձեւով: 10^{-5} Թոր ճնշումներում նշված հոսանքների կախվածություններում երկրորդ մաքսիմում չի ձեւավորվում:

YDK 55

ԵՐԿՐԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

30. Մեթանջյան Վ. Ա. Քարտեզների նախագծման եւ կազմման գիտական սկզբունքները /Եր. պետ. համալս.: -Երևան, 1997: - 8 էջ: - Մատենագր. 9 ան.: - Ռուս.: - Ավանդ. է ՀայկԳՏԼԳՀ-ում 26.06.97, թիվ 144 - Ap97

Հայաստանում, ներկա եւ առավել մոտակա հեռանկարում, քարտեզագրական արտադրության գործում խիստ կարևոր է քարտեզագրական գիտության սինթեզը այնպիսի գիտությունների հետ, ինչպիսին են ինժեներական հոգեբանությունը, սեմիոտիկան, գծագրական եւ տարածական երկրաչափությունը, տոպոլոգիան, մոդելավորումը եւ այլն: Քարտեզների նախագծման եւ կազմման աշխատանքներում առավել կարևոր է ինժեներահոգեբանական նախագծումը, որի էությունը հետևյալն է. տեղեկությունների ընդունումը եւ դրանց վերաշակումը մարդը կատարում է ընկալման, պատկերացման ու մտածողության գործընթացի ձևով, եւ այդ բարդ հիմնահարցն էլ ուսումնասիրում է հենց ինժեներական հոգեբանությունը:

YDK 54/57

ԿԵՆՍԱԲԱՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

31. Միրզոյան Ա. Վ. կաղնու (QUERCUS L., FAGACEAE A. B. 2) կենսաքիմիական կազմությունը եւ բուժական նշանակությունը /Բույսերի պաշտպանության ԳՀԻ: - Մերձավան, 1997: - 5 էջ, 3 աղ.: - Մատենագր. 16 ան.: - Ավանդ. է 29.07.97, թիվ 183 - Ap97

Կաղնու բողբոջները, տերեւները եւ կեղևը ունեն բուժական կարևոր նշանակություն: Ուսումնասիրված է կաղնու արևելյան, վրացական եւ ամառային տեսակների բողբոջների եւ տերեւների կենսաքիմիական կազմությունը տերեւների բացման շրջանում եւ դրանից I եւ 2 ամիս անց: Նշված ժամկետներում չոր նյութերի քանակը կազմել է 41-48.4% (արևելյան կաղնի), 45.9-47.4% (վրացական կաղնի) եւ 38.8-53.6% (ամառային կաղնի): Ջրի քանակը համապատասխանորեն կազմել է 58.4-50.6; 54.1-52.4 եւ 61.2-46.4%; Ծաքարների քանակը (ըստ չոր նյութի) համապատասխանորեն կազմել է՝ մենոշաքարներինը 2.4-3.0; 2.5-4.4 եւ 1.7-2.8%, սախարոզինը

2.4-3.0; 2.0-3.1 եւ 1.7-2.5%, լուծվող շաքարներինը 5.0-5.4; 5.3-7.1 եւ 3.5-5.4%; Սպիտակուցային նյութերի քանակը համապատասխանորեն կազմել է՝ ջրալուծ սպիտակուցներ 0.67-0.78; 0.42-0.96 եւ 0.68-0.90% (ըստ

կանաչ զանգվածի), սպիրտալուծ սպիտակուցներ 0,34-0,38; 0,24-0,38 և 0,16-0,30%, հիմնալուծ սպիտակուցներ 0,82-1,10; 0,39-0,41 և 0,35-0,56%: Սպիտակուցների ընդհանուր գումարը եղել է 1,98- 2,18; 1,54-1,5 և 1,19-1,70 տոկոս: Կաղնու կեղևը պարունակում է դաբադանյութեր, պենտոզան, պեկտին, կվարցնտին, կվերցիտ, օսլա, ֆլոբաֆին, օրգանական թթուներ և այլն: Տերևներում հայտնաբերվել են C վիտամին, կարոտին, ալկալոիդներ և այլն: Դրանց քանակը տարբեր է լինում տարբեր ժամկետներում, կախված կաղնու տեսակից: Կաղնու տերևների և կեղևի պատրաստուկները ունեն կարևոր բուժիչ նշանակություն:

32. Միրգոյան Ա. Վ Բարդին (POPULUS L. SALICACEAE), նրա կենսաքիմիական կազմությունը և բուժական նշանակությունն /Բույսերի պաշտպանության ԳՀԻ: - Մերձավան, 1997: - 6 էջ, 1 աղ.: - Մատենագր. 10 ան.: Հայ.: - Ավանդ. է ՀայկԳՏԼԳՀԻ-ում 29.07.97, թիվ 184 - Ap97

Անտառային շատ ծառատեսակներ ունեն նաև բուժական նշանակություն: Բարդու բողբոջները, տերևները և կեղևը պարունակում են մի շարք միացություններ, որոնք օժտված են բուժիչ հատկությամբ: Մեր կողմից ուսումնասիրվել են սև և հիբրիդային բարդու բողբոջները և տերևները բացման շրջանում և դրանից 1 և 2 ամիս անց: Պարզվել է, որ չոր նյութերի պարունակությունը, նշված ժամկետներում, կազմել է 35,6-39% (սև բարդի 38,4-40% (հիբրիդային): Ջրի քանակը համապատասխանորեն եղել է 61,0-64,4% և 52,6-63,0%: Ծաքարների պարունակությունը (ըստ չոր քաշի) համապատասխանորեն կազմել է՝ մոնոշաքարներինը 3,9-6,0 և 2,3-3,3%, սախարոզինը՝

6,1-13,0 և 2,5-3,9%, լուծվող շաքարներինը՝ 7,1-12,4 և 5,6-7,6%: Սպիտակուցային նյութերը ըստ թարմ կշռվածքի համապատասխանորեն կազմել են. ջրալուծներ՝ 0,31-0,62 և 0,62-0,78%, սպիտալուծներ՝ 0,20-0,36 և 0,25-0,33%, հիմնալուծներ՝ 1,0-1,9 և 0,34-0,49 %: Բողբոջները և տերևները պարունակում են նաև պոլիֆին, դաբադանյութեր՝, ծաղիկներ՝ կարոտին, կարոտինոիդներ, C վիտամին, կեղևը՝ դաբադանյութեր: Դրանց քանակը տարբեր է լինում տարբեր ժամկետներում և կախված է բարդու տեսակից:

33. Վաերամյան Ջ. Ա. Ֆիզիոլոգիական կալնյոդակա սկզբունքի մասին /Ֆիզիկայի կիրառական արոքընմանների ին-տ: - Երևան, 1997: - 5 էջ: - Մատենագր. 9 ան.: - Ռուս.: Ավանդ. է ՀայկԳՏԼԳՀԻ-ում 31.07.97, թիվ 208 - Ap97

Փորձ է կատարված ձմեռակերպել բանածու ֆիզիոլոգիական կալնյոդակա սկզբունքի մասին, որը բացահայտում է ֆունկցիոնալ սխտեմների փոխադարձ դինամիկ էությունը և մեծացնում է ֆունկցիոնալ մեխանիզմների հուսալիությունը: Կալնյոդակա սկզբունքը իրականացնում է ֆունկցիոնալ կապերի խնայողական հատկությունը ուղեղի ինտեգրատիվ աշխատանքում և հանդիսանում է կենսաբանորեն նպատակահարմար սկզբունք:

ՄԺԿ 61

ԲԺՇԿԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

34. Ղազարյան Ա. Ա., Ղազարյան Ա. Ա, Գևորգյան Ի. Յ. Անզգայացման տարբեր մեթոդների ազդեցությունը գազափոխանակության և ֆոսֆոլիպիդների նյութափոխանակության վրա /Եր. պետ. բժշկ. համալս.: - Երևան, 1997: - Մատենագր. 6 ան. - Հայ.: - Ավանդ. է ՀայկԳՏԼԳՀԻ-ում 30.07.97, թիվ 187 - Ap97

Հետազոտվել են մեխանիկական դեղնուկով 64 հիվանդ: Սկզբնական խումբը բաժանվել է 2 ենթախմբի ըստ անզգայացման մեթոդի՝ ընդհանուր կամ պերիդուրալ: Ֆոսֆոլիպիդները որոշելու համար 8-րդ, 13-14-րդ օրերը վերցվել է արյուն: Հետազոտվել է էրիտրոցիտների բջջաթաղանթը

Ֆոլշ-կարագոյանի մեթոդով: Ծնչառական գազերի լրացուցիչ պարամետրերի փոփոխությունները հետազոտվել են նախա- և հետփորահատական շրջաններում: Հետազոտության արդյունքում պարզվել է, որ և շնչառական գազերի, և ֆոսֆոլիպիդների փոխանակության տեղաշարժերն ավելի արագ վերականգնվում են պերիդուրալ անզգայացման ենթարկված խմբի մոտ:

35. Ավայան Գ. Ի. Այրվածքային հիվանդության ախտաձևային ասպեկտները /Եր. պետ. բժշկ. համալս.: - Երևան, 1997: - 2 էջ: - Մատենագր. 3 ան.: - Ռուս.: - Ավանդ. է ՀայկԳՏԼԳՀԻ-ում 30.07.97, թիվ 188 - Ap97

Ուսումնասիրվել են այրվածքների ախտաձևային ասպեկտները համակարգային (ախտամորֆոլոգիական, բջջաբանական, մանրէաբանական) տեսակետներից: Առաջին անգամ սահմանվել է պայմանականորեն ախտաձևային անանոթ միկրոօրգանիզմների կարևոր դերը այրվածքային թարալսա-բորբոքային զարգացման գործընթացում, որը ստեղծում է օբյեկտիվ նախապայմաններ այրվածքային հիվանդության ավելի նպատակաուղղված հակաբակտերիալ թերապիայի հետազոտության համար:

036. Իշխանով Ս. Լ., Գևորգյան Ա. Պ. Հիպերվենտիլյացիոն համախտանիշ էլ վեգետատիվ դիսֆունկցիա պարբերական հիվանդության ժամանակ /Եր. պետ. բժշկ. համալս.: - Երևան, 1997: - 15 էջ, 1 նկ., 2 աղ.: - Մատենագր. 68 ան.; - Ռուս.: -Ավանդ. է ՀայկԳՏԼԳՀԻ-ում 30.07.97, թիվ 189 - Ap97

Պարբերական հիվանդությամբ 74 հիվանդների հարցման վերլուծությունը եւ 38 հիվանդների կլինիկա-ֆիզիոլոգիական հետազոտությունները հայտնաբերել են հիպերվենտիլյացիոն համախտանիշի արտահայտման բարձր հաճախականություն, որի հետևանքով այդ հիվանդների մոտ շնչառական կենտրոնը գործում է անսթաբիլ ցածր լարվածության պայմաններում, իջնում է նրա գոգրունակության շեմը: Չարգանում է «արատավոր օղակ», Երբ անգամ աննշան հոգեբանահոգական կամ ռեֆլեկտոր լարումները բերում են շնչառության հաճախականության եւ խորացման, ինչն, իր հերթին, խորացնում է հիպոկապնիան եւ կլինիկական համախտանիշը:

37. Թումանյան Մ. Հ. Բենզաֆլավինի օգտագործումը յարդի առաջնային բիլիար ցիռոզով հիվանդների բուժման համար /Եր. պետ. բժշկ. համալս.: - Երևան, 1997: - 3 էջ, 1 աղ.: - Մատենագր. 4 ան. - Ռուս.: - Ավանդ. է ՀայկԳՏԼԳՀԻ-ում 30.07.97, թիվ 190 - Ap97

Առաջնային բիլիար ցիռոզով հիվանդների բուժման հարցերը խիստ բարդ են: Մեր հետազոտությունները ցույց տվեցին, որ բենզաֆլավինի օգտագործումը նպատակահարմար է

յարդի այն հիվանդությունների ժամանակ, որոնք ընթանում են ներյարդային լեղականգով: Ամենաարտահայտված կլինիկական արդյունքը ստացվում է առաջնային բիլիար ցիռոզի սկզբնական փուլերում, քանի որ դեղամիջոցը նպաստում է լիպիդային փոխանակության լավացմանը, իսկ որոշ դեպքերում՝ նույնիսկ կարգավորմանը: Բենզաֆլավինը անարդյունք է հիվանդության ուշ շրջաններում:

38. Սաֆարյան Մ. Դ., Նիկոլայան Լ. Թ. Տուբերկուլյոզով հիվանդացության համեմատական բնութագիրը Հայաստանում 1994-95 թթ. /Եր. պետ. բժշկ. համալս.: - Երևան, 1997: - 3 էջ: - Մատենագր. 3 ան.: - Ռուս.: - Ավանդ. է ՀայկԳՏԼԳՀԻ-ում 30.07.97, թիվ 192 - Ap97

Հայաստանում տուբերկուլյոզով հիվանդացությունը 1995 թ. կազմել է 21,4 (100000 ազգաբնակչության հաշվով), որը 8,4% -ով ավելի է, քան 1994 թ.: Հիվանդ նրեխաները կազմել են բոլոր հիվանդների 10%-ը: 1995 թ. տուբերկուլյոզից մահացությունը եղել է 3,5 (100000 ազգաբնակչությունից), իսկ 1994 թ.՝ 3,1: Ըստ տարիքի գերակշռում են 20-39 տ. հիվանդները: Նոր հայտնաբերված մանրէազատողները 1995 թ. կազմել են 9,9 (100000 ազգաբնակչության հաշվով)՝ 1994 թ. 8,2-ի դիմաց: 1995 թ. հայտնաբերված հիվանդների շրջանում ավելի շատ է արձանագրվել թոքերի ինֆիլտրատիվ տուբերկուլյոզը՝ 52%: Նշված ցուցանիշները վկայում են տուբերկուլյոզի առումով իրավիճակի վատացման մասին, որը պահանջում է վերակառուցել հակատուբերկուլյոզային ծառայությանը:

39. Սաֆարյան Մ. Դ., Նիկոլայան Լ. Թ. Տուբերկուլյոզի տարածվածությունը հայաստանաբնակ փախստականների շրջանում /Եր. պետ. բժշկ. համալս.: - Երևան, 1997: - 3 էջ: - Մատենագր. 4 ան. - Ռուս.: - Ավանդ. է ՀայկԳՏԼԳՀԻ-ում 30.07.97, թիվ 193 - Ap97

Ուսումնասիրված է տուբերկուլյոզի տարածվածությունը Բարվից եւ ԼՂԻՄ-ից ներգաղթած 77 փախստականների շրջանում: Պարզվել է, որ հաճախ հիվանդանում են 25-44 տ. (414%) տղամարդիկ: Գերակշռում են թոքերի հնֆիլարատիվ (45%) եւ ֆիբրոզ-կավեռնոզ (27%) տուբերկուլյոզով հիվանդները: Հիվանդների 60%-ը մանրէագատողներ են, կենսից ավելին տառապում են տուբերկուլյոզի զանազան բարդություններով, 30%-ը ունեն ուղեկցող հիվանդություններ (շաքարախտ, խոցային հիվանդություն, շնչուղիների քրոնիկական բորբոքային հիվանդություններ): Հիվանդները հիմնականում հայտնաբերվել են բժշկի դիմելիս:

40. Ղազարյան Ա. Վ. ՀՀ ՋՈւ շարքերը գորակոչվող հատուկ խմբի անձանց տեղաբաշխման հեռանկարային տակտիկան /Եր. պետ. բժշկ. համալս.: - Երևան, 1997: - 5 էջ: -Ռուս.: - Ավանդ. է ՀայկԳՏԼԳՀԻ-ում 30.07.97, թիվ 194 - Ap97

Համակարգային տեսակետից (հոգեբանահոգական կարգավիճակ, պարակլինիկական հետազոտություն) ուսումնասիրվել է մեծաքանակ գորակոչային տարիքի կոնտինգենտ: Հոսպիտալացումը եւ հիվանդների բաշխումը ըստ բաժանմունքների իրականացվել է մեր առաջարկած պլանով, որը համապատասխանում է բոլոր պահանջներին եւ հաստատված է ՀՀ ՊՆ կողմից: Մեր հաստատած սոցիալ-էկոլոգիական, հոգեբանահոգական եւ գենետիկ գործոնների համակարգը գորակոչային տարիքի մարդկանց մոտ հիմք է համարվում ռազմա-բժշկական փորձաքննության անցկացման համար:

41. Ղազարյան Ա. Վ. Ռազմա-բժշկական փորձաքննություն եւ բժշկական հետազոտություն անցնող զինակոչիկների առողջական վիճակի բժշկական բնութագիրը / Եր. պետ. բժշկ. համալս.: - Երևան, 1997: - 4 էջ: - Ռուս.: - Ավանդ. է ՀայկԳՏԼԳՀԻ-ում 30.07.97, թիվ 195 - Ap97

ՀՀ զինված ուժերում գորակոչի բժշկական ասպեկտները ունեն իրենց առանձնահատկությունները, որոնք կապված են մի կողմից, տարածաշրջանի ռազմաքաղաքական իրավիճակի հետ եւ, մյուս կողմից, գորակոչիկների օրենսդրական կարգավիճակի առանձնահատկությունների հետ (տարբեր սոցիալական ծագում

ունեցող մարդկանց զարգացման կառուցվածքային, մորֆո-ֆունկցիոնալ եւ հոգեբանահոգական առանձնահատկությունները):

42. Ղազարյան Ա. Վ. ՀՀ գյուղական եւ քաղաքային բնակչության զինակոչային տարիքի անձանց առողջական վիճակի համեմատական գնահատականը /Եր. պետ. բժշկ. համալս.: - Երևան, 1997: - 6 էջ: - Ռուս.: - Ավանդ. է ՀայկԳՏԼԳՀԻ-ում 30.07.97, թիվ 196 - Ap97

Հաշվի առնելով ռազմաքաղաքական իրավիճակը Անդրկովկասյան տարածաշրջանում եւ մասնավորապես Դարաքաղյան հակամարտության մեջ, ընդհանուր եւ մասնագիտացված ռազմական գորամիավորումների ձևավորումը առանձնապես հրատապ է մեր հանրապետության համար: Բերվում են վերլուծական տվյալներ ՀՀ տարբեր գոտիներում կոնտինգենտի մորֆո-ֆունկցիոնալ վիճակի մասին:

ՄԺԿ 20.9

ԸՆԵՐԳԵՏԻԿԱ

43. Մկրտչյան Վ. Ս., Եղոյան Ռ. Կ. Ջերմատան, որպես էներգետիկական օբյեկտիվ մաթեմատիկական մոդելավորում /Էներգետիկայի Հայկ. ԳՀԻ: - Երևան, 1997: - 8 էջ: -Մատենագր. 4 ան.: - Ռուս.: - Ավանդ. է ՀայկԳՏԼԳՀԻ-ում 31.07.97, թիվ 200 - Ap97

Պաշտպանված գետնի ջերմաստիճանի ավտոմատ կառավարման աշխատունակ համակարգ ստեղծելիս, որն ապահովում է ագրոտեխնիկական պահանջներ ջերմաստիճանային

դաշտի հավասարաչափ բաշխվածության արմատաբնակ շերտում եւ օդում, անհրաժեշտ է ունենալ մաթեմատիկական կախվածություններ հողի եւ օդի ջերմաստիճանների միջեւ փոխանցման ֆունկցիաների տեսքով: Տրված են տեխնիկական լուծման հիմնական սկզբունքները եւ դրված են խնդիրներ հետագա հետազոտման համար:

ՄԺԿ 621.3

ԷԼԵԿՏՐԱՏԵԽՆԻԿԱ

44. Հարությունով Մ. Ռ. Հայաստանի գազատրանսպորտային ազատ հզորությունների արդյունավետ օգտագործման մասին /Էներգետիկայի Հայկ. ԳՀԻ: - Երևան, 1997: - 7 էջ; - Մատենագր. 3 ան.: - Ռուս.: - Ավանդ. է ՀայկԳՏԼԳՀԻ-ում 31.07.97, թիվ 201 - Ap97

Վառելիքա-էներգետիկ համալիրի կայունացման տարբերակներից մեկն է թերբեռնված գազամուղի վերապրոֆիլավորումը նավթագազամուղի. որը մեծ կարևորություն է ներկայացնում ճգնաժամի մեջ գտնվող Հայաստանի համար, որովհետև նա գրկված է սեփական հումքի պաշարներից: Ներկայացված են Հայաստանի գազատրանսպորտային համալիրի բնութագիրը և նավթամթերքամուղի հաշվարկի արդյունքները:

45. Բեջանյան Գ. Դ. Հարավային ուղղությամբ ռուսական գազը տրանզիտով փոխադրելու հարցի վերաբերյալ /ՀԳՀԻ-ԳԱՁ-ի Եր. տարածաշրջան, կենտրոն: - Երևան, 1997: 4 էջ: - Մատենագր. 3 ան.: - Ռուս.: - Ավանդ. է ՀայկԳՏԼԳՀԻ-ում 31.07.97, թիվ 207 - Ap97

Ռուսական բնական գազի մուտքը Անդրկովկասի հանրապետությունների և հնաավոր արտասահմանի շուկաներ կովկասյան ուղղությամբ ծառայում է ԱՊՀ երկրների ինտեգրացման և շուկայական պայմաններում փոխադրվելու ընկերակցությանը: Հաշվի առնելով Անդրկովկասի հանրապետությունների և Ռուսաստանի գազատրանսպորտային համակարգերի կապերը, հատուկ նշանակություն են ձեռք բերում տրանզիտով փոխադրման հնարավորության և Անդրկովկասի հիմնական մայրուղիների գազամուղների ուղեգծով բնական գազի սպառողների վճարունակ պահանջարկի մարկետինգային հետազոտումների հետ կապված հարցերը:

46. Կարդաշյան Գ. Ա., Կարդաշյան Ա. Գ. Էլեկտրատեխնիկական պողպատների լոկալ տեղամասերում մագնիսական դաշտի լարվածության ճշգրիտ չափման սահմանների ընդլայնումը /Հայ. պետ. ճարտարագիտ. համալս.: - Երևան, 1997: - 8 էջ, 1 նկ.: - Մատենագր. 5 ան.: - Հայ.: - Ավանդ. է ՀայկԳՏԼԳՀԻ-ում 30.05.97, թիվ 139 - Ap97

Էլեկտրատեխնիկական պողպատների լոկալ տեղամասերում, լայն դինամիկական սահմաններում, մագնիսական դաշտի լարվածության "H" -ի չափման ճշտությունը բարձրացնելու նպատակով մշակված է եղանակ և սարք, ուր թույլ մագնիսական դաշտերի դեպքում "H"-ը գնահատվում է մագնիսական հոսանքով, իսկ բարձր հարմոնիկաների առաջացմանը զուգընթաց՝ Հողի երևույթով: Նպատակին հասնում ենք նրանով, որ սարքը համարվել է արգելափակող գոտիով, ուժեղարանով, ղեկավարման բլոկով և երկու համաձայնեցնող բլոկներով, ընդ որում արգելափակող գոտիը իր մուտքով միացված է մագնիսացնող փայտյաթին, ելքով ուժեղարարի միջոցով, միացված է ղեկավարման բլոկին, որի առաջին մուտքը առաջին համաձայնեցնող բլոկի միջոցով միացված է մագնիսացնող փայտյաթին և արգելափակող գոտիի մուտքին, իսկ երկրորդ մուտքը երկրորդ համաձայնեցնող բլոկի միջոցով միացված է մագնիսական դաշտի լարվածության առաջնային կերպափոխիչի ելքին, ղեկավարման բլոկի ելքը միացված է մագնիսական դաշտի լարվածության արձանագրիչ բլոկին: Նման եղանակով "H"-ի չափման սխալը չի գերազանցում 2% ից: Մշակումը կարող է օգտագործվել մագնիսական մեծությունների ճշգրիտ չափիչ սարքերի ստեղծման և ֆերո- մագնիսական նյութերի մագնիսական պարամետրերի չափման սահմանների ընդլայնման համար:

47. Հակոբյան Ռ. Ե., Մախյան Ա. Լ., Հովսեփյան Ս. Մ., Ծախինյան Գ. Ա. Հիդրոգեններատորի ստատորի ատամի փաթեթի ճառագայթման ընդունակության որոշման մեթոդը /Հայ. պետ.

ճարտարագիտ. համալս.: - Երևան, 1997: - 11 էջ, 4 նկ.: -
Մատենագր. 6 ան.: - Ռուս.: - Ավանդ. է ՀայկԳՏԼԳՀԻ-ում
09.07.97, թիվ 148 - Ap97

Քննարկվում է հիդրոգեններատորի ստատորի ատամի փաթեթի ճառագայթման ընդունակության որոշման փորձնական մեթոդը, բերվում են չափիչ սարքերի մշակված սխեման և նրա օգնությամբ պիրոէլեկտրական ընդունիչների գծային բնութագրերը: Բերվում են չափման սխալի փոքրացման եղանակները: Քննարկվում է ստատորի ատամի փաթեթի ճառագայթման ընդունակության հետազոտման ֆիզիկական մոդելը, բերվում են չափման արդյունքները:

48. Ավագյան Ռ. Մ. Էլեկտրաբարձիչի կառավարման համակարգի արատորոշումը /Հայ. պետ. ճարտարագիտ. համալս.: -Երևան, 1997: - 12 էջ, 3 նկ. - Մատենագր. - 3 ան.: - Ռուս.: - Ավանդ. է ՀայկԳՏԼԳՀԻ-ում 14.07.97, թիվ 167 - Ap97

Նկարագրված է ստուգող-արատորոշող ընթացակարգերի համալիր, որը հնարավորություն է տալիս աննշան ապարատային և ժամանակային ավելցուկի դեպքում մեծացնել միկրոպրոցեսորային հաշվողական համակարգի հանգուցային պրոցեսորի ճշտությունը և կրճատել սկզբնական արատորոշման ժամանակը օպերացիաների համատեղման հաշվին:

49. Առաքելյան Վ. Պ., Խաչատրյան Կ. Վ. Կորուստների կառավարումը էլեկտրական ցանցերում /Հայ. պետ. ճարտարագիտ. համալս.: - Երևան, 1997: - 14 էջ: - Մատենագր. 7 ան.: - Ավանդ. է ՀայկԳՏԼԳՀԻ-ում 28.07.97, թիվ 182 - Ap97

Նվիրված է էլեկտրական էներգիայի կորուստների կառավարմանը, որը հնարավորություն է տալիս լուծել մեծ նշանակություն ունեցող գործնական հարց՝ կորուստների նվազեցումը էլեկտրական ցանցերում: Խնդրի լուծման համար առաջարկվում է կառուցել համապատասխան մաթեմատիկական մոդել, ինչպես նաև բերվում է իրացման ալգորիթմը:

50. Բոզոյան Շ. Ե., Բոզոյան Ե. Շ. Սխեմայի թեստավորումը դինամիկ ռեժիմում ըստ նրա առավել "ակտիվ" տարրերի /Հայ.

պետ, ճարտարագիտ. համալս.: - Երևան, 1997: - 6 էջ, 2 նկ.: - Մատենագր. 1 ան.: - Ռուս.: - Ավանդ. է ՀայկԳՏԼԳՀԻ-ում 31.07.97, թիվ 203 - Ap97

Դիտարկված է մեծ ու բարդ սխեմաների արդյունավետ թեստավորման մի եղանակ՝ հիմնված այդ սխեմաների տարրերի ակտիվությունների գաղափարի վրա: Առավել ակտիվ տարրերի թիվը, սխեմայի բոլոր տարրերի թվի հետ համեմատած, պրակտիկայում հաճախ հանդիպող սխեմաներում չնչին է: Քանի որ սխեմայի առավել ակտիվ տարրերի անխափան աշխատանքը բավարար չափով նրաշխատվորում է ամբողջ սխեմայի անխափան աշխատանքը, ուստի այդ տարրերի անխափան աշխատանքի թեստային ստուգումը նույն չափով նրաշխատվորում է ամբողջ սխեմայի

անխափան աշխատանքի թեստավորման որակն ու լրիվությունը՝ միաժամանակ բեռնաթափելով նրա բոլոր տարրերի թեստավորման հսկայաձևավալ աշխատանքը:

УДК 621.39

ԿԱՊ

51. Մամյան Ա. Կ. Հեռախոսային կապի թվային ցանցերի կենսունակության ապահովման պլանավորում /Հայ. պետ. ճարտարագիտ. համալս.: -Երևան, 1997: - 8 էջ, 1 նկ., 1 աղ.: - Մատենագր. 4 ան.: - Հայ.: - Ավանդ. է ՀայկԳՏԼԳՀԻ- ում 26.06.97, թիվ 137 - Ap97

Նվիրված է օպտիկական ցանցերի կենսունակության հարցին: Ցանցային կառուցվածքներից քննարկման է ենթարկված օղակաձև տոպոլոգիան: Ներկայացված և վերլուծված են օպտիկական կապի ցանցերի հիմնական վերականգնողական սկզբունքները և ինքնավերականգնողական օղակների հետ նրանց համեմատական վերլուծությունը: Նշված են նաև Երևան քաղաքի SDH տրանսմիսիոն համակարգի և ցանցի օղակաձև կառուցվածքի հիման վրա ստեղծված

օպտիկական հեռախոսային կապի ցանցի որոշակի տվյալներ եւ նրանում գործող վերականգնողական սկզբունքները:

ՎԺԿ 621.7

ՄԵԶԵՆԱԾԻՆՈՒԹՅԱՆ ՏԵՆՆՈՒՈՒԳԻԱ

52. Պետրոսյան Գ. Լ., Համբարձումյան Ա. Ֆ. Ծակոտկեն բարակապատ խողովակների միջաձգման պրոցեսի հետազոտման տեսական առնչությունները /Հայ. պետ. ճարտարագիտ. համալս.: - Երևան, 1997: - 11 էջ, 2 նկ.: - Մատենագր. 4 ան.յ - Հայ.: - Ավանդ. է ՀայկԳՏԼԳՀ-ում 09.07.97, թիվ 149 - Ap97

Նվիրված է խողովակների սառը պլաստիկ դեֆորմացման՝ կոնական կալակներով միջաձգման պրոցեսի հետազոտման համար անհրաժեշտ տեսական առնչությունների դուրս բերմանը: Խնդրի լուծման համար օգտագործվում են ծակոտկեն նյութերի հասունության տեսության բանաձևերը, խողովակի էլեմենտի հավասարակշռության հավասարումները եւ դեֆորմացիաների անխզելիության պայմանը: Արդյունքում ստացված է հավասարումների համակարգ, որի լուծումը թույլ է տալիս խողովակի նյութի հատկություններից, խողովակի չափերից եւ դեֆորմացման պրոցեսի տեխնոլոգիական պարամետրերից կախված ուսումնասիրել դեֆորմացվող խողովակների ցանկացած կետի լարվածադեֆորմացիոն վիճակը:

53. Պետրոսյան Գ. Լ., Համբարձումյան Ա. Ֆ. Ծակոտկենության ազդեցությունը խողովակների լարվածադեֆորմացիոն վիճակի վրա նրանց միջաձգման դեպքում /Հայ. պետ. ճարտարագիտ. համալս.: - Երևան, 1997: - 21 էջ, 7 նկ.: - Մատենագր. 2 ան.: - Հայ.: - Ավանդ. է ՀայկԳՏԼԳՀ-ում 09.07.97, թիվ 150 - Ap97

Նվիրված է խողովակների կոնական կալակներով միջաձգման պրոցեսում խողովակների լարվածա-դեֆորմացիոն վիճակը բնութագրող

դիֆերենցիալ հավասարումների թվային ինտեգրման մեթոդի մշակմանը, տարբեր սկզբնական ծակոտկենությամբ խողովակների դեֆորմացման դեպքում ուժային եւ դեֆորմացիոն բնութագրերի որոշմանը եւ ստացված արդյունքների վերլուծմանը: Պարզաբանված են միջաձգման ընթացքում նպատակային մեծությունների փոփոխման օրինաչափությունները, ինչը նպաստում է կատարելու տեխնոլոգիական բնույթի հետևություններ: Բացահայտված է միջաձգմանը ենթարկվող խողովակների նյութի ծակոտկենության էական ազդեցությունը արտադրանքի մեխանիկական բնութագրերի վրա:

ՎԺԿ 38

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

54. Արիստակեսյան Ա. Վ. Ժամանակակից ագրարային քաղաքականության հիմնահարցեր /Հայկ. գյուղ. ակադեմիա: - Երևան, 1997: - 8 էջ, 1 գրաֆ.: - Մատենագր. 7 ան.: - Հայ.: - Ավանդ. է ՀայկԳՏԼԳՀ-ում 23.06.97, թիվ 136 - Ap97

Ագրարային քաղաքականության ժամանակակից հիմնահարցերի քննարկման ժամանակ պարզորոշ է դառնում, որ դրանց միաժամանակյա Լուծումը գրեթե անհնար է: Ագրարային քաղաքականության արդի հիմնահարցերից ներկայումս կարևորվում են.

-բնակչությանը՝ առողջական տեսակետից անվնաս սննդամթերքի անընդմեջ ապահովումը;

-էկոլոգիական ապահովվածությունը;

-գյուղատնտեսական եւ հողի շուկայի էլ արվելի ազատականացմանն ու պետական հովանավորության հետզհետեւ վերացմանն ուղղված միջոցառումները:

Հանրապետության գյուղատնտեսության զարգացումը խթանող քաղաքականության մեջ, շուկայական գյուղատնտեսություն ստեղծելու ճանապարհին, որպես վճռորոշ քայլ, պետությունը պետք է ապահովի շուկայի վրա հիմնված գյուղատնտեսության մակրոտնտեսական բարենպաստ կառուցվածք:

55. Զիվանշիրյան Ա. Լ. Կաղամբի վնասատուների տեսակային կազմը ԼՂՀ-ում /Բույսերի պաշտպանության ԳՀԻ: -Մերձավան. 1997: - 4 էջ: - Ռուս.: - Ավանդ. է ՀայկԳՏԼԳՀԻ- ում 12.06.97, թիվ 142 - Ap97

Առաջին անգամ ամփոփվում են ԼՂՀ-ում կաղամբի վնասատուների տեսակային կազմի ուսումնասիրման աշխատանքները: Ըստ այդ հետազոտությունների կաղամբի վրա հայտնաբերված է 52 տեսակի վնասատու, որոնք պատկանում են 26 ընտանիքի, 9 կարգի և 3 դասի: Պարզվել է, որ ամենավնասակար տեսակները երևին են՝ կաղամբի ճերմակաթիթեռը, ցեցը և լվիճը:

56. Զիվանշիրյան Ա. Լ. Կաղամբի հիմնական վնասատուների կենսաբանական առանձնահատկությունները և պայքարը նրանց դեմ Լեռնային Ղարաբաղի պայմաններում /Բույսերի պաշտպանության ԳՀԻ: - Մերձավան, 1997: - 3 էջ: - Ռուս.: - Ավանդ. է ՀայկԳՏԼԳՀԻ-ում 12.06.97, թիվ 143 - Ap97

Ուսումնասիրված է կաղամբի հիմնական վնասատուների (կաղամբի ճերմակաթիթեռ, կաղամբի ցեց և կաղամբի լվիճ) կենսաբանական առանձնահատկությունները, որոնց դեմ փորձարկվել են տարբեր լսմբերին պատկանող քիմիական և միկրոկենսաբանական պատրաստուկներ: Հայտնաբերված է, որ տերեւակեր վնասատուների դեմ փորձարկված միկրոկենսաբանական պատրաստուկներից առավել արդյունավետ են եղել լեպիդոցիդի, գոմելինի 0,17%-անոց բիաօքսիբացիլինի 0,25%-անոց խտությունները, իսկ քիմիական պատրաստուկներից կաղամբի համալիր վնասատուների դեմ ռովիկուրտը, կարատեն (0,05%), տալստարը (0,06%), սումիցիդինը (0,1%):

57. Մադոյան Ռ. Ռ., Բեկնազարյան Լ. Գ. Բծավոր քլորոզ գործնի մոտ /Հայկ. գյուղ. ակադեմիա: - Երևան, 1997: - 33 էջ, 4 նկ., 6 աղ.: - Մատենագր. 32 ան.: - Հայ.: - Ավանդ. է ՀայկԳՏԼԳՀԻ-ում 28.07.97, թիվ 179 - Ap97

Ամփոփված են բծավոր քլորոզի ուղղությամբ տարված երկարամյա հետազոտությունների արդյունքները: Յորենի տարբեր տեսակների 287 նմուշների ուսումնասիրությունները,

ցույց են տվել, որ 119-ը կրում են բծավոր քլորոզի դոմինանտ գեները: Դրանք ավելի շատ են գարնանացան սորտերում (մոտ 50%) քան աշնանացաններում (30%): Պարզվել է, որ դոմինանտ գեների կոմպլեքսներում հանգեցնում է քլորոֆիլի շարժուն հաշվեկշռի մասնակի խաթարման: Օնթոգենեզի տարբեր փուլերում (թփակալում, հասկակալում, ծաղկում, հատիկալիցք) »Ա« քլորոֆիլի պարունակությունն ավելի շատ է, քան »Բ«-ինը: Էական տեղաշարժ դրանց հարաբերության մեջ չի նկատվում: Հավելվածում տրված է ուսումնասիրված սորտերի և տեսակների ցուցակը:

58. Մադոյան Ռ. Ռ. Յորենի հիբրիդային կարմիր քլորոզ /Հայկ. գյուղ. ակադեմիա: - Երևան, 1997: - 26 էջ, 3 նկ., 6 աղ.: - Մատենագր. 52 ան.: - Հայ.: - Ավանդ. է ՀայկԳՏԼԳՀԻ- ում 28.07.97, թիվ 180 - Ap97

Ամփոփված են համաշխարհային գրականության տվյալները հիբրիդային կարմիր քլորոզի առաջացման գենետիկական մեխանիզմի և այդ երևույթը պայմանավորող գեների տեսակային լուսալիզացիայի վերաբերյալ Triticum L և Aegilops L ցեղերում: Պարզվել է, որ T. Erebuni Gandil քլորոտիկ հիբրիդում պլաստիդային պիզմենտների քանակական փոփոխությունները տեղի են ունենում օրինաչափորեն՝ բույսի ֆիզիոլոգիական զարգացմանը համընթաց: Կարմիր քլորոզի և հիբրիդային ճնշվածության այլ ձևերի համատեղ դրսևորման խնդրում որոշիչ նշանակություն ունի յուրաքանչյուր տիպը պայմանավորող լետալ գեների ալելների ուժը: Հավելվածում ներկայացված են (T. aestivum) 3 տարբեր տիպի դոմինանտ լետալ գեներ կրող սորտերի ցուցակը և կարմիր քլորոզի դոմինանտ գեներ չպարունակող սորտերի թվարկումը: Ստացված նյութերը կարևոր նշանակություն ունեն սելեկցիայում, հատկապես միջտեսակային հիբրիդների ստացման գործում:

59. Հարությունյան Հ. Մ. Ծաղկատման խորության ազդեցությունը ծխախոտի բերքատվության և հումքի որակի վրա Արարատի մարզի հողակլիմայական պայմաններում /Հայկ. գյուղ. ակադեմիա: - Երևան, 1997: - 3 էջ, 1 աղ.: - Ավանդ. է ՀայկԳՏԼԳՀԻ-ում 29.07.97, թիվ 185 - Ap97

Լուսաբանված է ծաղկատման խորության ազդեցությունը ծխախոտի Մամսուն-36 սորտի բերքատվության և հումքի որակի վրա: Ծխախոտի բույսերը ծաղկատվել են ծաղկման փուլի սկզբին: Ուսումնասիրության տվյալները հաստատում են, որ ծաղկատման խորությունը դրականորեն է ազդել ծխախոտի բերքատվության և հումքի որակի վրա: Հաշվի առնելով այս բոլորը, կարող ենք եզրակացնել, որ Արարատի մարզի հողակլիմայական պայմաններում պարարտացման N₆₀ P₆₀ K₇₅ ֆոնի դեպքում ծխախոտը պետք է ծաղկատել խորը, իսկ N₁₂₀ P₁₂₀ K₇₅ ֆոնում՝ սաղր:

60. Մարգարյան Ա. Ս., Սողոմոնյան Վ. Մ. Կենսաօրոշումի արտադրության առաջավոր տեխնոլոգիան և տեխնիկական միջոցները /Հայկ. գյուղ. ակադեմիա: - Երևան, 1997: - 19 էջ, 6 նկ.: - Մատենագր. 4 ան.: - Հայ.: - Ավանդ. է 31.07.97, թիվ 204 - Ap97

Ներկայացվում են հումուսացման տեղամասի տարբերակները, կառուցվածքն ու հաշվարկը: Առաջարկվում են. ֆերմենտացված գոմաղբը հումուսացման տեղամաս փոխադրելու և հավասարաչափ դարսելու, ծղոտը մանրացնելու և ֆերմենտացված գոմաղբի շերտի վրա փռելու և խառնելու նոր տեխնոլոգիաներ և մեքենայական միջոցներ, կենսաօրոշումի պատրաստման ավարտված թմբերի վրա որդերի տեղափոխման, հումուսացվող սուբստրատը փխրեցնելու, սուբստրատը պատրաստելու և գործող թմբերի վրա փռելու, պատրաստի կենսաօրոշումը հավաքելու և փոխադրելու, կախված կենսաօրոշումի պահեստավորման, օգտագործման և իրացնելու նպատակից կենսաօրոշումը տեսակավորելու նոր տեխնոլոգիաներ և մեքենաներ:

ՄԴԿ 665.93

ՍՈՍՆՁՈՂ ՆՅՈՒԹԵՐ

61. Պետրոսյան Վ. Ա., Գրիգորյան Է. Ա. Գլանվածքներ սունձային կոմպոզիցիաների համար /Եր. պետ. թժշկ. համալս.: - Երևան, 1997: - 5 էջ, 2 աղ.: - Մատենագր. 5 ան.: -Ռուս.: - Ավանդ. է ՀայկԳՏԼԳՏԻ-ում 30.07.97, թիվ 191 - Ap97

Մշակված է դիենային կաուչուկների մասնակի մոդիֆիկացման յուրօրինակ եղանակ, որն իրականացվում է չհագեցած կաուչուկների և ամիդ. բրոմ կոմպլեքսների համատեղ գլանմամբ: Յուրք է տրված, որ հետերոգեն տեղի ունեցող պոլիմեր-անալոգ փոխարկումների հետևանքով դիենային կաուչուկները մասնակիորեն մոդիֆիկացվում են՝ ձևք բերելով աթենզիոն ակտիվություն ունեցող լամբեր: Տարբեր էլաստոմերների հիման վրա ստացված գլանվածքների օգտագործումով ստեղծված են մի շարք նոր սունձային կոմպոզիցիաներ, որոնք ունեն բարձր ամրություն և կայունություն տարբեր քիմիական միջավայրերում: Մշակված սունձային կոմպոզիցիաները հաջողությամբ փոխարինում են լայն կիրառություն գտած ԳԻՊԿ-135 ու ԳԻՊԿ-137 ստինձներին:

ՄԴԿ 681.5

ԱՎՏՈՄԱՏԻԿԱ ԵՎ ՀԵՌՈՒՍԱՄԵՆԱՆԻԿԱ

62. Հարությունով Ի. Լ. Փոխանցումով ցիկլային պլանավորման կիրառումը ATM ցանցերի մուլտիպլեկսող հանգույցներում /Ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ին-տ: - Երևան, 1997: - 18 էջ, 3 նկ.: - Մատենագր. 10 ան. -Ռուս.: - Ավանդ. է ՀայկԳՏԼԳՏԻ-ում 15.05.97, թիվ 134 - Ap97

Ներկայացված է ցիկլիկ պլանավորման մեխանիզմը (Carry Over Round Robin: CORR), որն ապահովում է ATM ցանցերի միացումների արտադրողականության երաշխիքները:

CORR-ը իրենից ներկայացնում է ցիկլիկ մեխանիզմի ընդլայնումը: Այն բավականաչափ հեշտ է կիրառման մեջ, ի տարբերություն առաջնահերթ դիսցիպլինների: Բարդության տեսակետից համեմատելի է ֆրեյմային մեխանիզմների հետ, սակայն չունի ֆրեյմային պլանավորմանը բնորոշ թերություններ: CORR-ը վերաբերվում է »աշխատանքը պահպանող« ցիկլային սպասարկման դիսցիպլիններին և հետևաբար, հնարավորություն ունի լիովին օգտագործել ATM-ի մուլտիպլեկսավորման առավելությունները: Ի հակադրություն ֆրեյմային մեխանիզմների, CORR-ը չունի անցանկալի կախվածություն

հապաղման եւ բացթողման գոտու գրանույլացիայի միջեւ: Բերված է առաջարկված CORR մեխանիզմի ընթացակարգի մանրամասն նկարագրությունը, նրա կիրառման սկզբունքները ATM փոխարկիչներում եւ քննարկված է նրա հիմնական հատկությունները:

63. Մելիքյան Վ. Շ., Վիրաբյան Լ. Ն., Հոյնթեմ Ա. Ա. Իրադարձային տարանջատումը ՄԻՍ-երի խառը մոդելավորման ժամանակ /Հայ. պետ. ճարտարագիտ. համալս.: -Երևան, 1997: - 8 էջ, 5 նկ.: - Մատենագր. 5 ան.: - Ռուս.: - Ավանդ. է ՀայկԳՏԼԳՆ-ում 10.06.97, թիվ 140 - Ap97

Բերվում է մեծ ինտեգրային սխեմաների խառը էլեկտրատրամաբանական մոդելավորման համար նախատեսված իրադարձային տարանջատման մշակված մեթոդի նկարագրությունը: Մշակված ալգորիթմը հիմնված է սխեմայի ընդհանուր հաշվարկից նրա առանձին այն հատվածների անջատման վրա, որոնք չեն վախում իրենց վիճակը կամ փոխում են չափագանց դանդաղ: Դրանով փոքրացվում է խնդրի չափադասությունը: Բերվում է մշակված ալգորիթմի կիրառման օրինակ:

64. Մելիքյան Վ. Շ., Վիրաբյան Լ. Ն., Հովհաննես Պ. Շ. Կառուցվածքային տարանջատումը ՄԻՍ-երի խառը մոդելավորման ժամանակ /Հայ. պետ. ճարտարագիտ. համալս.: -Երևան, 1997: - 7 էջ, 3 նկ.: - Մատենագր. 5 ան.: - Ռուս.: - Ավանդ. է ՀայկԳՏԼԳՆ-ում 10.06.97, թիվ 141 - Ap97

Բերվում է մեծ ինտեգրային սխեմաների խառը էլեկտրատրամաբանական մոդելավորման համար նախատեսված կառուցվածքային տարանջատման մշակված մեթոդի նկարագրությունը: Այդ մեթոդը ապահովում է մեծ էլեկտրոնային սխեմաների ընդհանուր հաշվարկի ժամանակի զգալի կրճատում: Նկարագրվում են սխեմայի ինֆորմացիոն գրաֆի գազաթների հաշվարկի հերթականության պլանավորման մշակված երկու ալգորիթմները՝ նախօրոք եւ օպերատիվ պլանավորման: Բերված են նաև մշակված ալգորիթմների իրականացման համար անհրաժեշտ մեքենայական ժամանակի եւ հիշողության ծախսերի գնահատականները:

65. Աբգարյան Ս. Վ. Տեխնոլոգիական գործընթացների մոդելավորման ժամանակ փոփոխականների լավագույն ենթաբազմության ընտրման մի մեթոդի մասին /Հայ. պետ. ճարտարագիտ. համալս. - Երևան, 1997: - 5 էջ, 2 աղ.: - Մատենագր. 5 ան.: - Ռուս.: - Ավանդ. է ՀայկԳՏԼԳՆ-ում 23.07.97, թիվ 170 - Ap97

Կատեգորիզացված տվյալների մեթոդների կիրառման հիման վրա առաջարկվում է փոփոխականների լավագույն ենթաբազմության ընտրման եղանակ ռեգրեսիոն վերլուծության մոդելներում: Վիճակագրական տվյալները ներկայացվում են rxc աղյուսակների տեսքով ըստ որոշակի հատկանիշների: Փոփոխականների յուրաքանչյուր ընտրված ենթաբազմության համար հաշվվում է կապի X^2 ընդհանրացված գործակիցը: Հավասարման մեջ մտցվում է փոփոխականների այն ենթախումբը, որոնց համար այդ գործակիցը առավելագույնն է, քանի որ դրանք ամենաինֆորմատիվն են ելքի հետ կորելացվածության առումով: Մեթոդի կիրառությունը ցույց է տրված մոլիբդենային հարստացման գործընթացի մոդելավորման օրինակի վրա:

66. Սահակյան Ն. Է. Էական ոչ գծայնություններով հետևող համակարգի մշակումը եւ հետազոտումը /Հայ. պետ. ճարտարագիտ. համալս.: - Երևան, 1997: - 7 էջ, 1 նկ.: - Մատենագր. 5 ան.: - Ռուս.: - Ավանդ. է ՀայկԳՏԼԳՆ-ում 28.07.97, թիվ 178 - Ap97

Ներկայացված է կառավարման ոչ գծային համակարգի վերլուծման եւ սինթեզի մեթոդիկա, հիմնված անալոգային եւ հաշվիչ տեխնիկաների համատեղ օգտագործման վրա: Բերվում է հետևող համակարգի մաթեմատիկական մոդելը որի իրականացումը այս մեթոդիկայով թույլ է տալիս որոշել համակարգի անհրաժեշտ պարամետրերը, որոնք ապահովում են համակարգի կայուն աշխատանքը եւ հետեւելու պահանջվող որակը:

67. Աբգարյան Ս. Վ., Մնացականյան Մ. Ն., Կյուրեղյան Ս. Գ. Տպասալիկների արտադրության գավառական պղնձապատման

գործընթացի մաթեմատիկական մոդելավորում: /Հայ. պետ. ճարտարագիտ. համալս.: - Երևան, 1997: - 8 էջ, 1 նկ., 3 աղ.: - Մատենագր. 5 ան.: - Ռուս.: - Ավանդ. է ՀայկԳՏԼԳՀԻ-ում 30.07.97, թիվ 197 - Ap97

Տպասալիկների արտադրության գալվանական պղնձապատման գործընթացի տեխնոլոգիական վերլուծության հիման վրա ընտրված են կարելուրագույն գործոնները, որոնց շեղումները նորմայից՝ բերում են վերջնական արտադրանքի խտտանի: Գործընթացի հսկման ն կարգավորման համար

առաջարկվում են միաշափ և բազմաշափ մաթեմատիկական մոդելներ: Ստացված առնչությունները հնարավորություն են տալիս տեխնոլոգիական գործընթացի մոդելից անհրաժեշտության դեպքում արտաքսել նլքային փոփոխականներից Y₁-ը կամ Y₂-ը, փոքրացնել նոր չափադականությունը, որն առանձնապես կարևոր է մեքենայական ղեկավարման ժամանակ:

УДК 69

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

68. Կարապետյան Ա. Բ. Վճարման հետաձգումով կարգավորվող իպոտեկային վարկավորման կիրառումը Հայաստանի հանրապետության բնակելի շինարարությունում /Եր. ճարտ.-շին. ին-տ:- Երևան, 1997: - 6 էջ, 1 աղ.: -Մատենագր. 3 ան.: - Ռուս.: - Ավանդ. է ՀայկԳՏԼԳՀԻ-ում 18.06.97, թիվ 135 - Ap97

Բերված է ԱՄՆ-ում և Արեւմտյան Եվրոպայի զարգացած երկրներում տարածում գտած վճարման հետաձգումով կարգավորվող իպոտեկային վարկավորման Եղանակի էությունը, որը հետևյալն է. օգտագործվում են երկու տոկոսային դրույք, որից մեկը պարտադիր յուրաքանչյուր ամսվա պարտքերի հաշվարկը կատարելու համար է, իսկ մյուսը, որը ավել ցածր է, նրա յուրաքանչյուր ամսվա պարտքերը փակելու համար: Այդ եղանակի կիրառման դեպքում հնարավորություն է

ստեղծվում, որ միջին եկամուտ ունեցող ընտանիքը, առանց որևիցև դժվարության, կարողանա ձեռք բերել բնակարան, իսկ վարկատերն ունենա անհրաժեշտ շահույթ: Օգտագործելով վճարման հետաձգումով կարգավորվող իպոտեկային վարկավորման եղանակը, կոնկրետ օրինակի դեպքում ցույց է տրված դրա օգտագործման հնարավորությունը Հայաստանի Հանրապետության բնակելի շինարարության համար:

69. Կարապետյան Ա. Բ. Էտապային վարկավորման բնակելի շինարարություն կատարելու առաջարկվող Եղանակ /Եր. ճարտ.-շին. ին-տ:- Երևան, 1997: - 16 էջ: - Մատենագր. 1 ան.: - Ռուս.: - Ավանդ. է ՀայկԳՏԼԳՀԻ-ում 28.07.97, թիվ 181 - Ap97

Դիտարկվում է էտապային վարկավորման բնակելի շինարարություն կատարելու առաջարկված եղանակը: Ըստ որում ֆինանսավորումը կատարվում է էտապերով՝ վարկավորման միջոցով, գրավ դնելով իրականացվող բնակելի շենքը և հողամասը, որի վրա կառուցվում է շենքը: Աշխատանքը բաղկացած է երկու մասից: Առաջին մասում արված են եղանակի էությունը և հիմնական սկզբունքները: Երկրորդ մասում բերված են »Խաչ« տիպի ծածկերի բարձրացման մեթոդով Երևան քաղաքում կառուցվող 16 հարկանի 120 բնակարանանոց շենքերի համար մշակված եղանակի կիրառման արդյունքները: Պարզ է, որ բնակարանային շինարարության համար առաջարկված եղանակը բավականին արդյունավետ է բոլոր մասնակիցների՝ շինարարական կազմակերպության, որն անմիջապես կատարում է շինարարությունը, բանկի, որը վարկավորում է շինարարությունը, և բնակիչների համար:

70. Մինայան Ս. Ռ. Սեյսմիկ ուժերի ազդեցության ներքո գրունտային պատվարների լարվածային դեֆորմացիոն վիճակի հարցի վերաբերյալ /Հայկ. գյուղ. ակադեմիա: -Երևան, 1997: - 6 էջ, 1 նկ.: - Մատենագր. 7 ան.: - Ռուս.: - Ավանդ. է ՀայկԳՏԼԳՀԻ-ում 03.07.97, թիվ 146 - Ap97

Դիտարկված է սեյսմիկ ակտիվ շրջաններում շինարարական նախագծային գլխավոր խնդիրներից մեկի՝ գրունտային պատվարների լարվածային դեֆորմացիոն վիճակի (ԼԴՎ) հաշվարկի հարցը: Խնդիրը

լուծված է անալիտիկ եղանակով մատրիցաների տևաքով եւ ստացված են արտահայտություններ, որոնք թույլ են տալիս հաշվարկելու լարումների եւ դեֆորմացիաների առանձին բաղադրիչների մեծությունները: Հաշվարկված եւ կազմված են պատվարներում տեղափոխումների գրաֆիկներ ուղղահայաց եւ հորիզոնական սեյսմիկ ուժերի ազդեցության ներքո: Յույց է տրված, որ ուժեղ սեյսմիկ ազդեցությունների (9 եւ ավելի բայ) ժամանակ պատվարներում առաջացած սահմանային վիճակի տեղամասերը հետագայում սկսում են զարգանալ նաեւ թույլ երկրաշարժերի դեպքում, որը պայմանավորված է կառուցվածքի գրունտների հատկություններով: Առաջարկվում է կատարել պատվարների ԼԴՎ-ի հաշվարկ ոչ միայն սահմանային թույլատրելի միանգամայն սեյսմիկ ազդեցությունների, այլ նաեւ բազմակի դինամիկ բեռնավորվածությունների համար:

71. Մակարյան Ա. Մ. Շինարարական ֆիրմաների տարածքային ղեկավարման կազմակերպում /Եր. ճարտ. շին. ին-տ: - Երևան, 1997: - 4 էջ: - Մատենագր. 3 ան.: - Ավանդ. է ՀայկԳՏԼԳՀ-ում 24.07.97, թիվ 175 - Ap97

Շինարարական ֆիրմայի արդյունավետ գործունեությունը խթանման հիմնական գործոններից մեկն է ռացիոնալ կազմակերպված տարածքային կառավարման սխեմայում: Հայաստանի Հանրապետությունում շինարարական բնագավառը հիմնականում ներկայացված է խոշոր շինարարական տրեստներով, որոնք եւ կատարում են շինմոնտաժային աշխատանքների հիմնական ծավալը: Սակայն ժամանակակից պայմաններում նկատվում է շինարարական կազմակերպությունների Փոքրացման միտում: Հետազոտությունների արդյունքում պարզվեց, որ այդ փոքր կազմակերպությունները շահում են անցկացվող մրցակցությունների գերիշխող մասը: Առկա պայմաններում, տիրող իրավիճակից դուրս գալու համար, խոշոր կազմակերպությունների համար հնարավոր լուծումներից մեկն է իրենց բազայի վրա փոքր կազմակերպություններից բաղկացած տարածքային ցանցի ստեղծումը: Ուսումնասիրվում են այդ տարածքային սխեմայի ստեղծման տարբեր ուղիները:

72. Մակարյան Ա. Մ. Շինարարական կազմակերպությունների կառավարման կառուցվածքների կատարելագործումը /Եր. ճարտ.-շին. ին-տ: - Երևան, 1997: - 4 էջ, 2 աղ.: -Մատենագր. 4 ան.: - Ռուս.: - Ավանդ. է ՀայկԳՏԼԳՀ-ում 24.07.97. թիվ 176 - Ap97

Շինարարական կազմակերպությունների գործունեության արդյունավետությունը բարձրացնելու ուղղություններից մեկն է իրենց կազմակերպչական կառուցվածքների կատարելագործումը: Տնտեսությունում, շուկայական պայմաններին անցնելուց հետո, մեծ թվով շինարարական կազմակերպություններ Հայաստանում հայտնվեցին կազմակերպչական կառուցվածքների, վերափոխման անհրաժեշտության առջև: Նախագծաշինարարական կազմակերպչական կառուցվածքների կիրառումը կարող է ժամանակակից պայմաններում շինկազմակերպության մրցակցության պահպանման հնարավոր ուղիներից մեկը լինել: Հիմնվելով կատարված ուսումնասիրությունների վրա վերլուծվում են այդ կառուցվածքների առավելությունները եւ թերությունները, ինչպես նաեւ ՀՀ-ում կիրառելու հնարավորությունները:

73. Չիլինգարյան Ն. Ա. Մորլետ թաղամասը Մարսելում. 60-ական թթ. բնակելի համալիրի մի փորձ /Եր. ճարտ. շին. ին-տ: - Երևան, 1994; - 56 էջ, 29 նկ.: - Մատենագր. 17 ան. - Ֆրանս.: - Ավանդ. է ՀայկԳՏԼԳՀ-ում 31.07.97, թիվ 209 - Ap97

Լուսաբանում է Մարսելի 60-ական թվականներին կառուցված բնակելի համալիրներից մեկի՝ Մորլետի հատակագծային եւ ծավալա-տարածական հորինվածքի առանձնահատկությունները: Վերլուծելով թաղամասի կառուցվածքի ձեւավորման բազմազան ասպեկտները՝ գլխավոր հատակագիծը, լանդշաֆտի կազմակերպումը եւ օգտագործումը, ճարտարապետական լուծումների ընտրությունը եւ այլն, բացահայտվում է այս համալիրի առանձնահատուկ տեղը հետպատերազմյան ժամանակաշրջանի բնակելիների միապաղաղ գանգվածում:

ՄԴԿ 800

ԼԵՋԱԼԱՆՈՒԹՅՈՒՆ

74. Նոնեզյան Է. Գ. Անգլերեն դարձվածքներ. Ինչպես օգտագործել /Եր. օտար լեզուների պետ. ին-տ: - Երևան, 1994: - 61 էջ: - Անգլ.: - Ավանդ. է ՀայկԳՏԼԳՀ-ում 02.07.97, թիվ 145 - Ap97

Այս ձեռնարկը նախատեսվում է օգտագործել անգլերեն լեզու ուսումնասիրող ուսանողների համար, որոնց բառապաշարը կազմում է մի քանի հազար բառ: Այն ընդգրկում է 270 անգլերեն դարձվածքներ, որոնք ներկայացնում են մարմնի տարբեր մասերի բաղադրիչներ: Դարձվածքները արվում են խմբային կարգով: Տրված է յուրաքանչյուր դարձվածքի նշանակությունը և ներկայացված է օրինակով (նախադասություն, իրավիճակ) բացահայտվող դարձվածքների նշանակությունը: Յուրաքանչյուր բաժին ունի երկու տեսակի վարժություններ: Վերջիններիս պատասխանների ցանկը տրված է:

ՄԴԿ 82

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

75. Եղիազարյան Վ. Ա. Հովհաննես Թյուրանցու ժամանակի և անձնավորության հարցը /Գրականության ին-տ: -Երևան, 1997: - 8 էջ: - Մատենագր. 12 ան.: - Հայ.: - Ավանդ. է ՀայկԳՏԼԳՀ-ում 23.07.97, թիվ 171 - Ap97

Թյուրանցու ժամանակի հարցը բանասիրության մեջ շփոթումների ու տարակարծությունների տեղիք է տվել: Երկար ժամանակ տաղերգուին շփոթում էին համանուն Ստ կաթողիկոսի հետ, որն ապրել է 15-16-րդ դդ.: Բանասերներ Ն.Ակինյանի, Աս. Մնացականյանի, Էմ. Պիվազյանի և Ծովակյանի ջանքերով այս թյուրիմացությունը ճշտվել է: Սակայն և Ծովակյանը, և Է. Պիվազյանը առանձնացնում են Հովհաննես Թյուրանցի տաղասացին նույնանուն գանձասացից: Ձեռագրերում

պահպանված գանձերի ընդօրինակման ժամանակը համընկնում է տաղերգուի ապրած ժամանակաշրջանի հետ), և միանգամայն բնական և հավանական է կարծել, որ միջնադարի այս բանաստեղծը ևս ևս տաղերի, և գանձերի հեղինակ է, ինչպես Նարեկացին, Ծորհալին և ուրիշներ: Եզրակացությունն այն է, որ տաղասաց Հովհաննես Թյուրանցին և գանձասաց Հովհաննես Թյուրանցին նույն անձն են: Այսպիսով, եթե ընդունենք, որ տաղերգու Հովհաննես Թյուրանցու գանձերը մեզ հայտնի են 1371 թ. ձեռագրերից, և նա եղել է Սսի ավերման ակնատեսը, բնականաբար, պիտի ենթադրենք, որ նա ապրել և ստեղծագործել է 14-րդ դարում:

ՄԴԿ 007

ԿԻՔԵՆՆԵՏԻԿԱ

1. Հովակիմյան Ա.Ս., Բերբերյան Վ.Է. Անա լոգայիան ազդանշանների նախնական բուֆերիզացում և ներմուծում միկրոարոցեստրոյին տեխնիկայի հիման վրա տեղեկատվական րափիև համակարգ / Հայ. պետ. ճարտարագիտ. համալս.: - Երևան, 1997: - 4 էջ, 1 նկ.: - Մատենագր. 2 ան.: - Անգլ.: - Ավանդ. է ՀայԳՏԼԳՀ-ում 28.11.97, թիվ 13 -Ap98

Առաջարկված է վերահսկող-չափիչ համակարգ, որը թույլ է տալիս ոչ միայն փոխակերպել և հաղորդել անալոգային ազդանշաններ, այլև, ի տարբերություն հայտնի համակարգերի, կատարել նրանց նախնական մշակում, ֆիլտրացում և բուֆերացում՝ բազային էլեկտրոնային հաշվիչ մեքենային (ԷՀՄ) հետագա փոխանցման համար: Ընտրված էլեմենտային բազան հարաբերական էժան է և միևնույն ժամանակ ապահովում է ներմուծվող տեղեկատվության բավականին բարձր ճշգրտություն, մշակման արագություն, ինչպես նաև բազային ԷՀՄ-ի հիմնական ռեսուրսների էական ազատում: Նկարագրված համակարգն օգտագործված է սրտաբանությունում էլեկտրակարդիոազդանշանների ներմուծման և մշակման համար: Ներկայացված համակարգի վերոհիշյալ առավելությունները հնարավորություն են տվել մեծագույն սիրտ-անոթային հիվանդությունների ախտորոշման ճշգրտությունը:

Առաջարկված համակարգը կարող է օգտագործվել նաև կապի բնագավառում:

ՄԴԿ 301

ՍՈՅԻՈՒՈՒԳԻՍ

2. Կյուրնդյան Է.Ա., Հակոբյան Ս.Գ., Ավագյան Ա.Ս. Գերդաստանը և հայ կինը / Հայ. պետ. ճարտարագիտ. համալս.: - Երևան, 1997: - 9 էջ, - Հայ.: - Ավանդ է հայԳՏԼԳՀԻ-ում 28.11.97, թիվ 13 -Վր98

Բացահայտված է գերդաստանի դերը աղգի ձևավորման զարգացման մեջ: Յույց է տրված, որ գերդաստանը եղել է հարաբերական ինքնուրույնություն ունեցող տնտեսա-բարոյական միավոր: Կատարված է նաև սոցիոլոգիական հետազոտություն գերդաստանի դերը և նշանակությունը հասարակական կայնքի ներկա փուլում բացահայտելու նպատակով: Դիտարկված է գերդաստան-կին կապը:

ՄԴԿ 33

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

3. Հովակիմյան Ի.Ռ. Ավտոմացված ժտորա-կոնվեյերային գծի (ԱՌ-ԿԳ) ֆունկցիոնալ տեխնիկա-տնտեսական վերլուծության արդյունավետությունը /Մոսկվայի ձեռնարկների միջազգային ակադեմիայի Երջանի ուսումնական լեզնտրոն: - Երևան, 1997: - 4 էջ, - Մատենագր. 3 ան.: - Ռուս.: - Ավանդ է ՀայԳՏԼԳՀԻ-ում 26.11.97, թիվ 12 -Վր98

Կիրառելով ֆունկցիոնալ տեխնիկա-տնտեսական վերլուծությունը, որպես տեխնիկական համակարգերի, մասնավորապես ԱՌ-ԿԳ-ի դեպքում, նախագծման և կարուցվածքատեղծման առաջադիմական

մեթոդ, այն նշանակալից բարձրանում է տնտեսական արդյունավետությունը (34%)՝ հիմնականում ծախսերի իջեցման գերձակցի հաշվին, որը հնարավորություն է տալիս իջեցնելու իրի ինքնարժեքը և լավացնելու տեխնիկա-տնտեսական ցուցանիշները:

ՄԴԿ 51

ՄԱԹԵՄԱՏԻԿԱ

4. Գրիգորյան Մ.Գ., Ղազարյան Ս.Ս. $L^p(S)$ ($1 \leq p \leq 2$) կշռային տարածություններում Ֆուրիե-Լապլասի շարքերի զուգամիտության մասին /Եր. պետ. համալս.: -Երևան, 1997: - 11 էջ, Մատենագր 6 ան.: - Ռուս.: - Ավանդ է հայԳՏԼԳՀԻ-ում 2.12.97, թիվ 14 -Վր98

Կառուցված է $\mu(x)$ կշռային ֆունկցիա այնպես, որ $L^p(S)$ ($1 \leq p \leq 2$) կշռային տարածության ֆունկցիաները փոքր չափի, ֆունկցիայից անկախ, բազմության վրա փոխելով, նոր ստացված ֆունկցիայի ֆուրիեի շարքը ըստ սֆերիկ հարմոնիկների զուգամիտում է $L^p(S)$ կշռային նորմով:

ՄԴԿ 531/534

ՄԵՄԱՆԻԿԱ

5. Մանուկյան Վ.Ֆ. Ներքին պտույտների ազդեցությունը Լյավի ալիքների տարածման խնդրում /Մեխանիկայի ին-տ: - Երևան, 1997: - 6 էջ, 3 նկ., 1 աղ.: Մատենագր. 2 ան.: - Ռուս.: - Ավանդ է հայԳՏԼԳՀԻ-ում 19.11.97, թիվ 6 -Վր98

Ուսումնասիրվում է շերտ-կիսատարածության համակարգում Լյավի ալիքների տարածման խնդիրը, երբ ենթարկվում է Ուզոդչիկովի

մումենտային դինամիկայի հավասարումներին [1], իսկ կիսատարածությունը համասեռ առձգական միջավայր է (դասական իմաստով):

Լյավի ալիքների համար ստացված են դիսպենսիոն հավասարումը և կորները, որոնք էապես տարբերվում են դասական տեսությամբ ստացված դիսպենսիոն կորերից: Միջավայրի պարամետրի կոնկրետ արժեքների դեպքում արված են թվային հաշվարկներ, որոնք բերված են աղյուսակում և գրաֆիկներում:

6. Ծնկյան Հ.Ն., Բելլույան Ս.Ջ., Բելլույան Ջ.Ա. Էլեկտրաքարշերի քարշային էլեկտրաշարժիչների առանցքակալների հուսալիության հաշվարկման մեթոդիկա /Մեխանիկայի ին-տ: -Երևան, 1997: - 10 էջ, 1 աղ.: Մատենագր. 6 ան.: - Ռուս.: - Ավանդ է հայԳՏԼԳՀ-ում 25.11.97, թիվ 8 - AP98

Երկաթուղային տրանսպորտում կիրառվող գնացքաքարշերի շտորային էլեկտրական մեքենաների (սինխրոն գեներատորների), քարշային և օժանդակ մեքենաների հուսալիության ուսումնասիրումը ցույց է տվել, որ հիմնական խաթանվող հանգույցներն են ստատորի, շտորի և խարիսխի փայտյունները, առանցքակալային հանգույցները, հպումախոզանակային հանգույցը և ապարատուրայի բլոկը: Ստացված են երկաթուղային տրանսպորտում կիրառվող սինխրոն գեներատորների, քարշային օժանդակ էլեկտրաշարժիչների առանցքակալային հանգույցի հուսալիության (անխափան աշխատանքի հավակնության) հաշվարկի մաթեմատիկական մոդելները: Այստեղ հաշվի են առնվում տեխնոլոգիական, կոնստրուկտիվ և շահագործական գործոնները, մասնավորապես՝ առանցքակալի հոգնածային քայքայումով և քսուկի հատկությունների կորուստով պայմանավորված գործոնները, ինչպես նաև բացակի ու շեղածովածքների չափի շեղումով պարմանավորված գործոններ: Մեթոդիկայի առաջարկությունների հիման վրա կատարված է ՎԼ-8 ՎԼ-10 էլեկտրաշարքերի՝ ՆԲ-406Բ և ՏԿՎ-ՋԿ1 525 և 650 կվտ հզորությամբ, 5400 և 4760 կգ մասսայով, 765 և 775 պտ. ր պտտման հաճախությամբ քարշային էլեկտրաշարժիչների առանցքակալային հանգույցների հուսալիության հաշվարկը:

7. Խաչատրյան Գ.Մ. Թեք մագնիսական դաշտում գտնվող իդեալական հաղորդիչ սալորմ առաձգական ալիքների ոչ գծային

փոխազդեցությունը /Մեխանիկայի ին-տ: -Երևան, 1997: - 8 էջ, Մատենագր. 9 ան.: - Ռուս.: - Ավանդ է հայԳՏԼԳՀ-ում 19.11.97, թիվ 6 - AP98

Ստացված է թեք մագնիսական դաշտում իդեալական հաղորդիչ, առաձգամածուցիկ սալի ընդլայնական տատանումների հավասարումը (ոչ գծային): Տեսականորեն դիտարկված է առաձգամածուցիկ, իդեալական հաղորդիչ սալում երեք առաձգական ալիքների ոչ գծային, կոլինեար փոխազդեցությունը: Փոխազդող ալիքների ամպլիտուդների և ֆազերի համար ստացված է դիֆերենցիալ հավասարումների համակարգ: Գտնվել է այդ համակարգի լուծումը ստացիոնար ռեժիմի դեպքում: Ցույց է տրված, որ որոշակի պայմաններում սալում գրգռված երկու ալիքներ առաջացնում են տարբեր հաճախականությամբ տատանումներ, ընդ որում հնարավոր է առաձգական ալիքների պարամետրական ուժեղացում:

ՄԻԿ 55

ԵՐԿՐԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

8. Բոյնագրյան Վ. Ռ. Հարավ-արևելյան Բալթիկայի ափային գոնայի ապարների լիթոլոգիայի ազդեցությունը ծովային մերձափնյա ցրոնների ձևավորման վրա / Եր. պետ. համալս.: - Երևան, 1997: -10 էջ: -մատենագր. 8 ան.: - Ռուս.: Ավանդ է հայԳՏԼԳՀ-ում 18.11.97, թիվ 3 - AP98

Հարավ-արևելյան Բալթիկայի հատակում եւ ափերում լվացող ապարների հատիկաչափական եւ միներոլոգիական կազմի ուսումնասիրման հիման վրա դիտարկվում է միներալային հատիկների մասնակցության չափը ծովային առափնյա ցրոնների ձևավորման մեջ: Տոկոսներով եւ կգ/մ³-ով հաշվարկված է բերվածքներում ծանր միներալների եւ դրանից առավել արժեքավորների ընդհանուր

պարունակությունը: Եզրակացություն է արվում առափնյա ծովային ցրոններում արժեքավոր միներալների կուտակման աղբյուրների մասին:

9. Բոյնագրյան Վ. Ռ. Հայկական բարձրավանդակի նորագույն տեկտոնիկան և նրա ազդեցությունը լեռնային կառույցների լանջերի ձևի վրա/ Եր. պետ. համալս.: - Երևան, 1997: -10 էջ, 1 նկ.: -մատենագր. 11 ան.: - Ռուս.: Ավանդ է հայԳՏԼԳՀԻ-ում 18.11.97, թիվ4 - AP98

Լանջերի ձևի մորֆոկառուցվածքների քարտեզի, ինչպես նաև մի շարք երկայնակի և լայնակի գեոմորֆոլոգիական կտրվածքների վերլուծման հիման վրա դիտարկվում Հայկական բարձրավանդակի նորագույն տեկտոնիկան և նրա ազդեցությունը լանջերի ձևի վրա: Տրվում եզրակացություն,որ բարձրավանդակի տեկտոնական մորֆոկառուցվածքները ստորաբաժանվում են տարբեր չափի բլոկների, որոնց տարբերակված շարժումները արտացոլվում են լանջերի ձևում: Բլոկների ակտիվ բարձրացումներն առաջացնում են ուռուցիկ, իսկ անհավասար շարժումները՝ աստիճանաձև լանջեր: Այս երկու ձևերն էլ առավել լայնորեն տարածված են Հայկական բարձրավանդակում: Նշվում է մորֆոկառուցվածքների լայնակի ձգվածությունը՝ կամարների կենտրոնական մասերի նստեցումով, որն կարող է նպաստել դրանց գազաթային ջրբաժային մակերևույթների հարթեցմանը:

10. Բոյնագրյան Վ.Ռ. Հարավ-արևելյան Բալթիկայի ափային զոնայում ծանր միներալների բաշխումը / Եր. պետ. համալս.: - Երևան, 1997: -10 էջ: -մատենագր. 8 ան.: - Ռուս.: Ավանդ է հայԳՏԼԳՀԻ-ում 18.11.97, թիվ 3 - AP98

Հարավ-արևելյան Բալթիկայի ափային և հատակային նստվածքների մանրամասն ուսումնասությունների հիման վրա բացահայտված են ավիամերձ գոտում ծանր միներալների տուտակման օրինաչափությունները, ստորջրյա լանջի ռելիեֆի տարրերի և նրա կտրվածքի միներալոգիական տարբերակման

առանձնահատկությունները: Բացահայտվել են տեղամասեր, որոնք խոստումնալից են մի շարք օգտակար միներալների արդյունաբերական արդյունահանման համա: Առաջարկվում է բերվածքների հաստույքում ծանր միներալների պարունակության գնահատման նոր մոտեցում: Եզրակացվում է, որ Հարավ-արևելյան Բալթիկայի ափամերձ գոտում ծանր միներալների կուտակումը իրենից ներկայացնում է ժամանակակից մերձափյա ծովային ցրոնների ձևավորման գործընթաց~ Ընդ որում ցրոնները արդյունահանման ընթացքում կվերականգվեն:

ՄԻԿ 61

ԲԺՇԿԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

11. Ավանյան Ն.Ա. Դիլիտացիոն կարդիոմիոպաթիայի ժամանակ շիճուկային գործոնի կարդիոտրոպ ազդեցության հնարավոր մեխանիզմների մասին /Մրտաբանության ԳՀԻ: - Երևան, 1997: -7 էջ, 1 նկ., 2 աղ.: -մատենագր. 7 ան.: - Ռուս.: Ավանդ է ՀայԳՏԼԳՀԻ-ում 5.11.97, թիվ 1 - AP98

Դիլիտացիոն կարդիոմիոպաթոլոգիայի հիվանդների արյան շրճումում հայտնվող կարդիոտրոպ գործոնի ազդեցության բջջային մեխանիզմները հասկանալու համար կատարվել է սաղմնային սրտային ֆրագմենտացիայի կրճատման ֆունկցիաի մանրամասն անալիզ: Հետազոտությունների արդյունքները ցույց են տվել, որ կրճատումների եմծությունների իջեցման և արիթմիայի առաջացման հետ մեկտեղ ուսումնասիրվող հիվանդների արյան սիճուկը առաջացնում է կրճատման առավելագույն արագության վիճակագրորեն հաստատուն անկում ելակետային մեծության գրեթե 40Ռ-ով: Այդ էֆեկտը, մի կողմից, կարելի է բացատրել սրտամկանի բջիջներում ՉՋԸ իոնների մուտքի նվազումով, մյուս կողմից՝ բջջային մեմբրանի փոփոխություններով, որոնք բերում են Մ-համակարգից ՉՋԸ իոնների ազատման խանգարումների: Ըստ երևույթին, այդ գործոնի ազդեցությունը չի

տարածվում կրճատման ապարատի վրա, սահմափակելով ՉԶԲԷ իրենների տեղափոխման մեմբրանային համակարգերով:

ՄԴԿ 621.3

ԷԼԵԿՏՐՈՍԵՆՆԵԿԱ

12. Շնկյան Հ.Հ., Բելլոյան Ա.Ջ., Բելլոյան Ջ.Ա. Մինչև 1000 կվտ հզորությամբ էլեկտրական մեքենաների պատրաստման և վերանորոգման որակի ուսումնասիրում /Մեխանիկայի ին-տ.: - Երևան, 1997: -6 էջ, 2 նկ., 2 աղ.: -Մատենագր. 1 ան.- Ռուս.: Ավանդ է հայԳՏԼԳՀԻ-ում 25.11.97, թիվ 7 - AP98

20 տարվա ընթացքում ՀՀ և ԱՊՀ գործարաններում կատարված ստուգողական փորձարկումների արդյունքներով կազմվող ամենօրյա տեղեկագրերի, ինչպես նաև էլեկտրաքարշերում կիրառվող գեներատորների և էլեկտրաշարժիչների խափանումների և վերանորոգման վիճակագրական տվյալների հիման վրա վերլուծական և հայտնաբերված են այն հիմնական գործոնները, որոնք առավելապես ինտենսիվորեն են ազդում դրանց պատրաստման և հավաքման որակի վրա: Ստացված են հուսալիության ու թերությունների երևան գալու հաշվարկման մաթեմատիկական մոդելները: Յուր և տրավժ, որ ընդունման փորձարկումների ժամանակ չհայտնաբերված թերությունների երևան գալու հավակաՆությունը կազմում է գեներատորների համար՝ 0,0486, իսկ էլեկտրաշարժիչների համար՝ 0,0582:

ՄԴԿ 621.38

ԷԼԵԿՏՐՈՆԵԿԱ

13. Մանուկյան Ա.Ն., Ծաղնազյան Ա.Ս. Ժապավեններում մեխանիկական լարվածությունների երկչափանի ձևափոխման մի եղենակի մասին /Հայ. պետ. ճերտարագիտ համալս.: -Երևան, 1997: -6 էջ, 4 նկ., -Մատենագր. 5 ան.- Հայ.: Ավանդ է հայԳՏԼԳՀԻ-ում 26.11.97, թիվ 10 - AP98

Մետաղյա և այլ նյութերից ժապավենների և լարերի պատրաստման և դրանց կիրառման ժամանակ առաջացած մեխանիկական լարվածությունների չափման եղենակների և մագնիսական ձևափոխիչների վերլուծության միջոցով բացահայտված է մեխանիկական լարվածությունների մեկչափանի ձևափոխիչների թերությունները: Դիտարկված են նոր մագնիսաճկուն երկչափանի ձևափոխիչի կառուցվածքային և մագնիսական շղթայի փոխարինման սխեմաները: Այդ ձևափոխիչը հնարավորություն է տալիս մեն ձևափոխիչի միջոցով ինֆորմացիա ստանալ ժապավենում առաջացած մեխանիկական լարվածության վեկտորի երկու բաղադրիչների մասին միաժամանակ: Բերվում են լարվածության վեկտորի մոդուլի և բաղադրիչներից մեկի հետ կազմած անկյան հաշվման հավասարումները:

14. Ծախմանյան Ա.Ս., Մանուկյան Ա.Ն. Թվային ջերմաչափ ջերմաէլեկտրական կերպափոխիչով /Հայ. պետ. ճերտարագիտ համալս.: -Երևան, 1997: -4 էջ, 2 նկ., -Մատենագր. 3 ան.- Հայ.: Ավանդ է հայԳՏԼԳՀԻ-ում 26.11.97, թիվ 11 - AP98

Լայն տարածում են ստացել ջերմաէլեկտրական կերպափոխիչները, որոնց ինֆորմատիվ ազդանշանը Բջերմա-էլշուՄ ցածր մակարդակի է և ոչ գծային օրենքով է կախված չափվող ջերմաստիճանից: Ջերմաստիճանի չափման համակարգերի ցափման շղթաներում առկա են բարձր մակարդակի նորմալ և ըդհանուր բնույթի սինուսոդային

աղմուկներ, որոնք ստեղծվում են ուժային էլեկտրասարքավորումներից ու էլեկտրավառարաններից: Դիտարկվում է եղանակ, որի միջոցով ջերմաէլեկտրական կերպավորվածների ստեղծիչական բնութագրի գծայնաչումը ռականացվում է անալոգաթվային կերպավորվածի օգնությամբ: Բերվում է թվային ջերմաչափի բլոկ-սխեման և գծայնացման հանգույցի պարամետրերի հաշման բանաձևերը և տարրերի ընտրման վերաբերյալ հանձնարարականները:

УДК 681.123

ՉԱՓԻՉ ՍԱՐՔԵՐ

15. Ծառուրյան Ա.Ա. Սորուն նյութի ճեղկավոր էլեկտրոնային սնիչի հիմնական բնութագրերը /Հայ. պետ. ճերտարագիտ համալս.: -Երևան, 1997: -8 էջ, 2 նկ., -Մատենագր. 3 ան.- Ռուս.: Ավանդ է հայԳՏԼԳՀ-ում 26.11.97, թիվ 9 - Ջթթ

Քննարկված են էլեկտրոդային սնիչի հիմնական բնութագրերը՝ ծախսային, վոլտամպերային և սահմանային: հիմնավորված է դրանց փորձնական ուսումնասիրության նպատակահարմարությամբ: Բերված է այդ բնութագրերի քննարկումը +0,5... -1,0 մմ չափերով և 3,9Ո- խոնավության գետի ավազի համար սնիչի ճեղքի 1,3 մմ-ից 3,9 մմ լայնության փոփոխության դեպքում: Ի հայտ են գալիս բերված հետևյալ առանձնահատկությունները.ծախսային բնութագրերը հաստատում և փոփոխական հոսանքի դեպքում զգալիորեն տարբերվում են փոքր ծախսերի համար, էլեկտրոդային սնիչը հանդիսանում է ակտիվունակային ոչ գծային տարր, որի վոլտամպերային բնութագրերը բաղկացած են իրար հետ սահուն լծորդված երկու գծային մասերից: Ճեղքի օպտիմալ չափը 1,5... 2,0 անգամ մեծ թաղազոյացման կրիտիկական չափից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՌԵՎՏՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԼՐԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՎ ՏԵԽՆԻԿԱՏՆԵՄԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ (ՀայԳՏԼԳՀ)

ԱՎԱՆԴԱԴՐՎԱԾ ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

ԵՌԱՄՍՅԱ ՍԵՂՄԱԳՐԱՅԻՆ ԺՈՂՈՎԱԾՈՒ

թիվ 1

ԵՐԵՎԱՆ 1998

YDK 159.9

ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ

**1. Մատոյան Ջ.Ս. »Անորոշության հարաբերակցությունը«
անձի մոտիվացիայի հասակարգում / Հայ. պետ. մանկ. ին-տ: -
Երևան 1998: - 7 էջ: - Մատենագր. 7 ան.: - Ռուս.: - Ավանդ է
ՀայԳՏԼԳՀ-ում 13.02.98, թիվ 26 - AP98**

Ոչ էքսպերիմենտալ ճանատարիով հետազոտվել են մոտիվացիայի օրինաչափությունները հոգեկանի ցածր /ինդիվիդի/ եւ բարձր / անձային մակարդակներում: Ուսումնասիրությունը բացահայտել է, »անորոշությունների հարաբերակցության սկզբունքի«

կիրառելիությունը հոգեկանում՝ անձի մակարդակով /մոտիվացիայի անորոշության եւ գործունեության ժամանակի անորոշության միջև/: Այս օրինաչափության առկայությունը հաստատավել է ուսանողի ուսումնական գործունեության մոտիվացիայի էքսպերիմենտալ ուսումնասիրության ժամանակ: Այս սկզբունքի առկայությունը մոտիվացիայի համակարգում վկայում է.

1. հասարակ /ինդիվիդի/ եւ բարդ /անձի/ համակարգերի միջև գոյություն ունեցող սկզբունքային տարբերությունը:

2. Անորոշության գործոնի կարևորությունը մարդու վարքի եւ անըմտեղ հավասարակշռված գործունեության համար:

2. Մատոյան Ջ.Ս., Մալոյան Ջ.Ա. Մանկավարժական բուհի տարբեր ֆակուլտետների առաջին կուրսեցիների մասնագիտական ուղղվածության մասին/ Հայ. պետ. մանկ. ին-տ: - Երևան 1998: - 18 էջ, 1 աղ.: - Մատենագր. 9 ան.: - Ռուս.: - Ավանդ է ՀայԳՏԼԳՀ-ում 13.02.98, թիվ 27 - AP98

Համեմատական հետազոտության է ենթարկվում մասնագիտական ուղղվածության ձևավորվածության աստիճանը յոթ ֆակուլտետների առաջին կուրսեցիների խմբերում: Ճիշտ ախտորոշման համար գնահատվել են ինչպես մասնագիտական ուղղվածության միջին մակարդակը, այնպես էլ անորոշության աստիճանը: նկարագրված է անորոշության աստիճանի որոշման մեթոդը: մասնագիտական ուղղվածության բավանակաչափ բարձր մակարդակը հետնգոտության մեջ բացահայտվում է միայն այն ֆակուլտետներում, որտեղ առանձնակի անհամասնություն չկա մանկավարժի մասնագիտության եւ նրա մասնագիտացման միջև: Գործնականորեն սույն աշխատանքը մեր կարծիքով օգտակար կարող են լինել բուհում հոգեբանական ծառայության կազմակերպման տեսանկյունից:

3. Մալոյան Ջ.Ա., Մատոյան Ջ.Ս. Մանկավարժական բուհի շրջանավարտների մասնագիտական ուղղվածության ձևավորման մակարդակների մասին / Հայ. պետ. մանկ. ին-տ: - Երևան 1998: - 7 էջ, 2 աղ.: - Մատենագր. 7 ան.: - Ռուս.: - Ավանդ է ՀայԳՏԼԳՀ-ում 13.02.98, թիվ 28 - AP98

Կատարված է 7 ֆակուլտետների շրջանավարտների մասնագիտական ուղղվածության մակարդակների համեմատական ուսումնասիրություն. օգտագործված է Ն.Վ. Կուզմինայի մշակված չորս հիմնական՝ բավարարվածության, ընդունակության, գիտակցվածության եւ մասնագիտությանը պատրաստ լինելու չափանիշների հիման վրա մասնագիտական ուղղվածության որոշման մեթոդիկան: Ստացված տվյալները վկայում են, որ կենսաբանական, ինդուստրիալ-մանկավարժական եւ գեղարվեստի ֆակուլտետների շրջանավարտները բուհ ավարտելուց հետո տրամադրված են ընտրելու ոչ թե մանկավարժությունը, այլ գործունեության որևէ ուրիշ բնագավառ: ավելի լավ վիճակը բանասիրական, նախադպրոցական եւ, նամանավանդ, ֆիզմատ եւ դպրոցական ֆակուլտետներում: Ենթադրվում է, որ այդ ֆակուլտետներում սովորելու տարիներին քիչ է ուշադրություն դարձվել ուսանողների մասնագիտական մղղվածության վրա եւ հավանաբար դիմորդների ընտրությունը կատարվել է առանց

ուսուցչի մասնագիտության նկատմամբ նրանց ունեցած հակավածության հաշվառման:

4. Մատոյան Ջ.Ս. Փիլոսոփայության Մ.Մ. Թվային նշանների վիզուալ ընթացիկ տարբերակման մասին / Հայ. պետ. մանկ. ին-տ: - Երևան 1998: - 7 էջ, 1 նկ., 2 աղ.: - Մատենագր. 8 ան.: - Ռուս.: - Ավանդ է ՀայԳՏԼԳՀԻ-ում 13.02.98, թիվ 29 - AP98

Ուսումնասիրվել է թվային նշանների /0-9/ ընթացիկ արագությունը, ճշտությունը կախված նրանց ձևից, գույնից, կոնտրաստ ռեժիմով էքսպոզիցիայի ժամանակից /սև թվերը սպիտակ ֆոնի վրա: Ուսումնասիրությունից պարզվել է.

1. Գոյություն ունի որոշակի կախվածություն ընթացիկ արագության արագության և նշանի ձևի միջև: 2. թվերի ընթացիկ արագությունը կախված է պատկերի էքսպոզիցիայի ժամանակից: 3. Բոլոր խորձարկվողների մոտ, անկախ իրենց անհատական առանձնահատկություններից, մույթ տարածքում օպտիմալ է հակառակ կոնտրաստի ռեժիմը, լուսավորվածում՝ կոնտրաստի ռեժիմը: Սյս տվյալների օգտագործումը, կողային համակարգեր կազմելիս, կարող է բարելավել ազդեցություն ունենալ օպերատորական գործունեության էֆեկտիվության վրա և անպայման է տրանսպորտի համակարգում՝ ճանապարհային պատահարներից խուսափելու համար:

5. Բալանթարյան Է.Ս. Մանկավարժների հոգեկան առողջության մասին / Հայ. պետ. մանկ. ին-տ: - Երևան 1998: - 7 էջ: - Մատենագր. 7 ան.: - Ռուս.: - Ավանդ է ՀայԳՏԼԳՀԻ-ում 13.02.98, թիվ 30 - AP98

Հայաստանի բնակչությունը սկսված 1988թ-ից գտնվում է գոյության համար բարդ պայմաններում. հասարակարգի փոփոխություն, պատերազմ, կենսամակարդակի աննախադեպ անկում, երկրաշարժ՝ Փորձ է արվել պարզելու, թե ինչպիսին է ժողովրդի /մասնավորապես մանկավարժի/ հոգեկան առողջության վիճակը այդ պայմանների

հետևանքով: կիրառվել է հայտնի ""ԹԿ թեստի Լ.Ն. Սոբչիկի տեղեկացված տարբերակը և Լյուշերի ութ գունային թեստը: Ուսումնասիրվել են Երևան քաղաքի տարբեր դպրոցների շուրջ 130 մանկավարժներ: Ըստ ստացված տվյալների նախնական վերլուծության մանկավարժների մեծ մասը երկարատև էմոցիոնալ լարվածության հետևանքով ունեն սոցիալական ադապտացման դժվարություններ: Մյուս կողմից անհրաժեշտ է նշել, իրական պատկերի և ստեղծված հասարակական կարծիքի միջև կա ընդգրկված տարբերություն: Դպրոցներում հոգեբանների աշխատանքը հնարավորություն կտա փոխհատուցել առկա բոլոր բացթողումները, նպաստել ուսուցիչների աշխատանքին՝ երեխաների անձնավորության ձևավորման գործընթացում:

6. Փիլոսոփայության Մ.Մ. կանխատեսման գործընթացի արդյունավետության որոշ մեխանիզմների մասին / Հայ. պետ. մանկ. ին: - Երևան 1998: - 11 էջ: - Մատենագր. 10 ան.: - Ռուս.: - Ավանդ է ՀայԳՏԼԳՀԻ-ում 13.02.98, թիվ 31 - AP98

կանխատեսումը դեռևս գոյություն չունեցող երևույթի իդեալական պատկերի ստեղծումն է: Բացահայտված են կանխատեսման գործընթացի բարդություն, խանգարիչներ, դրդապատճառներ, հոգեկան լարվածություն: Ուսումնասիրված է նաև կանխատեսման հմուտությունների մշաման պայմանները:

ՄԴԿ 33

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

7. Եղիազարյան Ա.Ա., Գաբրիելյան Հ.Ս., Արշակյան Ն.Ա. Օտարներկրյա ներդրումները և նրանց հարկումը /ը. պետ. ժող. տնտ.ին-տ: - Երևան 1997: - 8 էջ: - Մատենագր. 4 ան.: - Հայ.: - Ավանդ է ՀայԳՏԼԳՀԻ-ում 23.02.98, թիվ 37 - AP98

ՄԴԿ 53

ՖԻԶԻԿԱ

9. Բաբերգյան Ռ.Պ., Բաղայան Է.Ս., Եղիազարյան Գ.Ա., Տեր-Գևորգյան Է.Ի. Ցածր ճնշման պեննինգյան պարպման կատողի վրա ընկնող էլեկտրոնային հոսքերի առաջացման պայմանների միսին /Եր. պետ. համալս.: -Երևան 1998: - 8 էջ3 նկ.: - Մատենագր. 11 ան.: - Ռուս.: - Ավանդ է ՀայԳՏԼԳՀԻ-ում 13.02.98, թիվ 32 - AP98

Աշխատանքը նվիրված է ցածր ճնշման պեննինգյան պարպման կատողի վրա ընկնող էլեկտրոնային հոսքերի առաջացման պայմանների ուսումնասիրությանը: Պարզված է, որ առաջին ռեժիմում կատողի վրա 30-40 ԷՎ էնարգիայով էլեկտրոնների անկումը պայմանավորված է էլեկտրոնային ամպի մերձկատողային տեղամասերից նրանց մշտական հոսքով: Երկրորդ ռեժիմում էլեկտրոնների մշտական հոսքին գուգահեռ պարպերաբար տեղի է ունենում էլեկտրոնների իմպուլսիվ շարտում էլեկտրոնային շերտի ներքին մակերևույթից: Այդպիսի էլեկտրոնների առավելագույն էներգիան հասնում է 120-150 ԷՎ եւ ավելին: Էլեկտրոնային հոսանքը առավելագույն արժեքներ ընդունում էլեկտրոնային շերտի դիոկոտրոնային անկայունության ժամանակ: Փոփոխելով նրկրաչափական պարամետրը, հնարավոր է օպտիմալացնել էլեկտրոնային փնջի բնութագրերը:

ՄԴԿ 531/534

ՄԵՆԱՆԻԿԱ

10. Սադաթնյան Ալ.Ն. Ձգողության պայմաններում բնական անշրջելի գործընթացների ուղղվածությունը թերմոդինամիկայի նոր կանխադրույթի լույսի ներքո /ՀայԳՏԼԳՀԻ: -Երևան 1998: - 8

Քննարկվում է Հայաստանի Հանրապետության տնտեսության զարգացման տեսանկյունից կարևոր եւ արդիական նշանակություն ունեցող օտարերկրյա ներդրումների եւ դրանց խթանումն ափահովող հարկային համապատասխան ռեժիմի սահմանման որոշ հարցեր: Առաջարկված է օտարերկրյա ներդրումների կրկնարի հարկումը կանխող, բայց հանրապետության տնտեսական շահերից ելնող հարկման մեխանիզմ եւ դրույքաչափեր:

ՄԴԿ 51

ՄԱԹԵՄԱՏԻԿԱ

8. Պողոսյան Ա.Վ. Որոշ պարամետրական վերլուծության թվային անալիզ /Մաթեմատիկայի ին-տ: - Երևան 1998: - 25 էջ, 10 նկ., 13 աղ.: - Մատենագր. 2 ան.: - Ռուս.: - Ավանդ է ՀայԳՏԼԳՀԻ-ում 2.02.98, թիվ 19 - AP98

Ռատումնասիրված է Հիբսի երևույթը, մի պարամետրական ինտերպոլյացիոն բանաձեւ (կախված[ճլ] իրական հաջորդականությունից) եւ նրան ուղեկցող օրթոգոնալ վերլուծության համար, պարամետրից կախված [ճլ] իրական հաջորդականության կոնկրետ ընտրության դեպքում: Հիբսի երևույթը ուսումնասիրված է հիմնականում թվային եղանակով, [Ֆ] ֆունկցիայի խզման տարբեր կետերում: Տեսական նյութը եւ թվային հաշվարկները ուղեկցվում են օրինակներով եւ աղյուսակներով, որոնց հիման վրա կառուցված են գրաֆիկներ: Արդյունքները ցույց են տալիս Հիբսի արժեքի փոփոխման վարքը, կախված պարամետրից, խզման կատի տեղադրությունից, եւ տալիս են հանցածր ճնշմամետատական գնահատական ինտերպոլյացիայի եւ օրթոգոնալ վերլուծության համար:

էջ, 1 նկ: - Մատենագր. 6 ան.: - Ռուս.: - Ավանդ է ՀայԳՏԼԳՀԻ-ում 2.02.98, թիվ 23 - AP98

Թերմոդինամիկայի երկրորդ ւանխադրույթի »Ձերմությունը անցնում է տաք մարմնից սառը մարմնին« փոխարինումը »Էնտրոպիայի աճի« օրենքով դարձել է երկրորդ սկզբունքի եւ բնական անշրջելի գործըթացների անհամապատասխանելիության պատճառ: Առաջարկվում է էնտրոպիա վերացական (այսինքն հաշվարկվող, այլ ոչ թե չափվող) մեծությունը թողնել մեխանիկայում եւ բացառել բնական գիտություններից ու փիլիսոփայությունից, քանի որ էնտրոպիային վերագրվող հատկությունները իրական միայն »դատարկության մեջ ընդարձակվելով« աշխատանք կատարող »իդեալական գազի« համար: Էնտրոպիայի աճի օրենքը չի կարող լինել Բնության համըդհանուր օրենք, քանի որ այն սահմանափակված է եւ՞ ներքեկց (անընդունելի եւ միկրոհամակարգերի համար), եւ՞ վերեկից (տիեզերական չափերի ըրամակարգերի համար): Բնական անշրջելի գործըթացների (որոնք իրականում մարդու գիտակցական գործունեությունից անկախ) այդ թվում սառելիս ջրի ընդարձակման անոմալ գործընթացի, վերլուծության հիման վրա կատարվել է հատելյալ եզրակացությունը՝ գրավիտացիայի պայմաններում սնական անշրջելի գործընթացների ժամանակ տեղի է ունենում առավելագույն հնարավոր ա)էներգիայի արտադրում, բ) զանգվածների մոտեցում եւ գ)միավոր զանգվածում կապի էներգիայի ավելացում:

ՄԺԿ 61

ԲԺՇԿԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

11. Ստամբուլյան Ռ.Պ., Բերբերյան Վ.Է. Հեռուստաէլեկտրասրտագրման նորագույն ձևերի օգտագործմամբ սրտախտորոշման համակարգ /հայ. պետ. ճարտարագիտ համալս.: - Երևան 1998: - 8 էջ, 3 նկ.: -

Մատենագր. 9 ան.: - Հայ.: - Ավանդ է ՀայԳՏԼԳՀԻ-ում 13.02.98, թիվ 25 - AP98

Նկարագրված է էլեկտրասրտագրական ախտորոշման համակարգ, որը հիմնված է ժամանակակից միկրոպրոցեսորային բազայի, հեռուստաէլեկտրասրտագրման նորագույն ձևերի վրա եւ թույլ է տալիս բարձրացնել սիրտանոթային հիվանդություններով տարապող հիվանդների բուժման արդյունավետությունը: Առաջարկված համակարգի կազմակերպումը եւ հեռուստաէլեկտրասրտագրման ձևերը կարող են օգտագործվել մարզական եւ տիեզերական բժշկության մեջ, ինչպես նաեւ ախտորոշման հեռուստաչափիչ այլ համակարգերում:

12. Ազիզյան Ս.Ի. նորածինների առողջարկան վիճակի համեմատական գնահատականը կրկնակի կեսարյան հատումով եւ արգանդի վրա սպի ունեցող կանանցից բնական ճանապարհով ծնվելու դեպքում /Եր. պետ. բժշկ. համալս.: -Երևան 1998: - 5 էջ: - Մատենագր. 8 ան.: - Ռուս.: - Ավանդ է ՀայԳՏԼԳՀԻ-ում 23.02.98, թիվ 35 - AP98

Պարզվել է, որ հետննոյան մահածության դեպքերն ավելի մեծ են արգանդի սպի ունեցող կանանցից սնական ճանապարհով ծնվելու դեպքում /3,2%/, քան կրկնակի կեսարյան հատումից ծնվելու դեպքում /0,7%/: Միաժամանակ, նորածինների առողջական վիճատը բնական ճանապարհով ծնվելու դեպքում ավելի լավ է, քան այն երեխաների, որոնք ծնվել են կրկնակի կեսարյան վիրահատման ճանապարհով: Հետևաբար, ծննդաբերության մարտավարության ընտրելու դեպքում պետք է հաշվի առնել արգանդի սպիի վիճակը, գերադասելով սնական ճանապարհով ծննդաբերություն ի օգուտ ինչպես մոր, այնպես էլ նորածնի առողջության:

13. Ազիզյան Ս.Ի. կեսարյան հատումից հետո ուլտրաձայնային հետազոտությունների տվյալների դիագնոստիկ

կարևորությունը արգանդի սպիհ գնահատման գործում /Եր. պետ. բժշկ. համալս.: -Երևան 1998: - 7 էջ: - Մատենագր. 7 ան.: - Ռուս.: - Ավանդ է ՀայԳՏԼԳՀ-ում 23.02.98, թիվ 36 - AP98

Համեմատելով կլինիկական, մորֆոլոգիական և ուլտրաձայնային հետազոտությունները արգանդի սպիհ վրա, կարելի ենթադրել, որ արգանդի սպիհ անբավարար վիճակը պետք է գիտել ոչ որպես տևողյուն գործընթաց, այլ որպես անատոմաֆունկցիոնալ ոչ լիարժեքությանտևողային դրսևորում, որն իր հերթին զգալի ազդեցություն է գործում հղիության կանխագուշակման վրա:

ՄԺԿ 620.9

ԷՆԵՐԳԵՏԻԿԱ

14. Գամբուրյան Կ.Ա., Գամբուրյան Ա.Ի. Էլեկտրաէներգետիկական համակարգի ստատիկ կայունության վերլուծության ինտեգրալային չաբանիշի կիրառումը /Էներգետիկայի Հայկ. ԳՀԻ: -Երևան 1997: - 7 էջ: - Մատենագր. 4 ան.: - Ռուս.: - Ավանդ է ՀայԳՏԼԳՀ-ում 2.02.98, թիվ 17 - AP98

Նկարագրված է բնութագրիչ հավասարման արգումենտի անհանգստացի վրա հիմնված ինտեգրալային չափանիշի կիրառումով էլեկտրաէներգետիկական համակարգի (ԷԷՏ) ստատիկ կայունության վերլուծության համար մաթեմատիկական մոդելը և հաշվարկի ալգորիթմը, որը հնարավորություն է տալիս գնահատելու կայունության անհրաժեշտ ու բավարար պայմանը և անցումային գործընթացի որակը: Կոնկրետ օրինակների վերլուծությամբ հիմնավորված է ինտագրալային չափանիշի ԷԷՏ ստատիկ կայունության հաշվարկնարում կիրառման արդյունավետությունն ու նպատակահարմարությունը:

15. Գամբուրյան Կ.Ա., Գամբուրյան Ա.Կ. Էլեկտրաէներգետիկական համակարգի ուժեղ գործողության գրգռման ավտոմատ կարգավորիչների պաժամետրարի համալրման մի ալգորիթմի մասին /Էներգետիկայի Հայկ. ԳՀԻ: - Երևան 1997: - 6 էջ: - Մատենագր. 4 ան.: - Ռուս.: - Ավանդ է ՀայԳՏԼԳՀ-ում 2.02.98, թիվ 18 - AP98

Սինքրոն գեներատորների ուժեղ գործողության (ՌԻԳ) գրգռման ավտոմատ կարգավորիչների (ԳԱԿ) կայունացման ուղիների պարամետրարի համալրման համար օգտագործվում է էլեկտրաէներգետիկական համակարգի (ԷԷՏ) դինամիկ կայունության ծրագիր, որը համալրված է համակարգի բոլոր սինքրոն գեներատորների և ԳԱԿ-ի համապատասխան մոդելներով: Այս դեպքում անցումային գործընթացի որակի հատկանիշի կանխավաժայությունը ՌԻԳ ԳԱԿ-ի կայունացման ուղիների պարամետրերից որոշվում է էքսպերիմենտի պլանավորման տեսությունով, ԷԷՏ փոխարինման սխեմայով ստեղծելով ռեժիմի փոքր խանգարում:

ՄԺԿ 621.3

ԷԼԵԿՏՐՈՍԱՆՆԻԿԱ

16. Կարդաշյան Գ.Ա. Մագնիսափափուկ նյութերի և նրանից պատրաստված նմուշների մագնիսական հատկությունների հսկման մագնիսականտակտային կերպափոխիչների աշխատանքի վերլուծությունը /Հայ. պետ. ճարտարագիտ. համալս.: -Երևան 1998: - 13 էջ: - Մատենագր. 5 ան.: - Ռուս.: - Ավանդ է ՀայԳՏԼԳՀ-ում 2.02.98, թիվ 20 - AP98

Կատարված է մագնիսական հատկությունների որոշման պարամետրիկ և տրանսֆորմատորային մագնիսականտակտային կերպափոխիչների աշխատանքի վերլուծություն: Տեսականորեն որոշված

է մագնիսական պարամետրերի չափման ճշտություն վրա կերպարվողիչի եւ փորձանմուշի միջեւ օդային բացակի ազդեցությունը: Հաստատված է, որ, խորձանմուշի մագնիսական պարամետրերը չափելիս, մագնիսացնող հոսանքի սնման աղբյուրի, հաճախականության, օդային բացակի եւ այլնի անփափախության դեպքում չափիչ փայթույթում առաջացած էլեկտրաշարժ ուժը որոշվում է փորձանմուշի հատկություններով: Համտատված է, որ տրանսֆորմատորային կերպարվողիչում սնման շղթայի եւ ելքային փայթույթների միջեւ գործում է միայն մագնիսական կապ: Ուստի չափիչ փայթույթի գալարների թվի ընտրությամբ կարելի է ստանալ ինչպես անհրաժեշտ մեծության ելքային լարում, այնպես էլ մի քանի ելքային լարումներ: Այս հատկությունը մագնիսակոտակտային կերպարվողիչների հիմնական առավելությունն է հատկապես մագնիսական պարամետրերի չափումների ավտոմատացման դեպքում:

17. Գրիգորյան Վ.Ա., Միմոնյան Վ.Ս. Հաստատուն էլեկտրական դաշտի բաշխումը ոչ կատարյալ մեկուսիչով երկշեշտ սֆերիկ կոնդենսատորում /Հայ. պետ. ճարտարագիտ. համալս.: -Երևան 1998: - 5 էջ, 2 նկ.: - Մատենագր. 2 ան.: - Հայ.: - Ավանդ է ՀայԳՏԼԳՀ-ում 2.02.98, թիվ 21 - AP98

Որոշված են շերտերի սահմանաբաժնում դաշտի լարվածությունների ԲՕԼՄՏ, Բք ԲՄՏ ազատ եւ կապված լիցքերի մակերևույթային խտությունների վազԼՄՏ, վկապ(մ) արտահայտությունները: Հաշվարկված են նաև կոնդենսատորում անցումային հոսանքը կԼՄՏ եւ կոնկրետ տվյալների դեպքում կառուցված է ԲքԼՄՏ, կԼՄՏ բնութագրերը: Ստացված արտահայտությունները կարող են օգտագործվել այնպիսի սարքերում ընթացող ֆիզիկական գործընթացների հետազոտություններում, երբ այն մոդալավորվում է երկշերտ սֆերիկ կոնդենսատորով կամ այդպիսի մակրոկոնդենսատորների համախմբով:

18. Բերբերյան Գ.Վ., Հակոբյան Ռ.Ե., Հարությունյան Ա.Ա. Հիդրոզեննրատորի ստատորի ատամնային գոտու ջերմային հսկման մասին ստացած ինֆորմացիայի հաղորդման առանձնահատկությունները / Հայ. պետ. ճարտարագիտ. համալս.: -Երևան 1998: - 11 էջ, 6 նկ.: - Մատենագր. 2 ան.: - Ռու.: - Ավանդ է ՀայԳՏԼԳՀ-ում 2.02.98, թիվ 22 - AP98

Ծարադրված են հիդրոզեննրատորների ստատորի ատամնային գոտու ջերմային հսկման մասին ստացած ինֆորմացիայի հաղորդման առանձնահատկությունները, որի հիմնական խնդիրն է ատամնային գոտու որոշակի կետերի գերտաքացման բացահայտումը եւ այդ կետերի տեղադրման ճանաչումը /հսկվող ատամի համար ճշգրիտ որոշումը/: Նշված խնդիրը կապված է տեղեկետվական ունակության, այսինքն հսկվող կետերի քանակի կտրուկ աճի հետ: Այնուհետև վերլուծվում են ճառագայթման փոխակերպիչների օգնությամբ ստեղծած ինֆորմացիայի հաղորդման ուղիներին ներկայացվող պահանջները, որը կատարվում է ռոտորի կողմից սկանման եղանակի ու ռադիո եւ օպտիկական ուղիների օգնագործման շնորհիվ: Կատարած վերլուծության արդյունքում հնարավորություն է առաջացել ինֆորմացիայի հաղորդման երկու այլընտրանքների բնութագրերը ճշգրիտ ձեւավորելու համար: Միեւնույն ժամանակ շարադրվել են այն առավելությունների ամբողջ շարքը, որը բնորոշ է ինֆորմացիայի նախնական մշակման, դրա արդյունքների հիշման եւ հետագա հաղորդման այլընտրանքին:

19. Բելլոյան Ա.Ջ. Մինչեւ 200 կվտ հզորությամբ զեննրատորների եւ էլեկտրաշարժիչների պահեստամասերի համալիրի հաշվարկը եւ նրանց վերականգման հիմնավորումը /Եր. Լոկոմոտիվային դեպո: -Երևան 1998: - 11 էջ, 4 նկ., 2 աղ.: - Մատենագր. 6 ան.: - Ռու.: - Ավանդ է ՀայԳՏԼԳՀ-ում 9.02.98, թիվ 24 - AP98

Տրված է մինչեւ 100 կվտ սինքրոն զեննրատորների սերիական արտադրվող եւ մինչեւ 200 կվտ էլեկտրաշարժիչների պահեստամասերի

համալիրի վերլուծությունը: Մշակված է գեներատորների եւ շարժիչների պահեստամասերի քանակության հաշվարկի եւ սահմանման մեթոդիկան: Բերված է 30 կվտ հզորության գեներատորի եւ 22 կվտ հզորության էլեկտրաշարժիչների պահեստամասերի հաշվարկման օրիկան եւ տրված է նրանց համեմատությունը, ինչպես նաեւ ցույց է տրված մեթոդիկայի կիրառման տեխնիկա-տնտեսական նպատակահարմարությունը: Ընդհանուր տնտեսական էֆեկտը, որը ստացվում է հաշվարկի կոր մեթոդիկայի կիրառումից պահեստամասերի անհատական եւ խմբային համալիրի համար, մեկ գեներատորի համար նրա արժեքի 2,3%-ն է, իսկ մեկ էլեկտրաշարժիչի համար՝ 1,8--ը: հիմնավորված է այդ մեքենաների ցերանորոգումը, ելնելով աշխատաժամանակից եւ տեխնիկական վիճակից: Բերված են նաեւ երկու ստրատեգիայի տիպերը եւ նրանց տիպային տեխնոլոգիական գործընթացի կառուցման սխեմաները: ԱՊՀ տարբեր երկրներում 35 տարվա ընթացքում՝ 1960-1993 թթ., սինքրոն գեներատորների շահագործման հուսալիության վիճագրական տվյալների հիման վրա է մշակված վերնի հաշվարկը: Ուսումնասիրվող գեներատորների ընդհանուր թիվը կազմում է մոտավորապես 8000 հատ, որը հաստատում է խափանումների էքսպոնենցիալ բաշխման օրենքը 40000 ժամվա ընթացքում, երբ խափանման ինտենսիվությունը կազմում է 0,13*10⁻³ ժամ⁻¹, իսկ ցնդումը՝ 4000 ժամ:

ՄԺԿ 63

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

20. Օգնանյան Ֆ.Ն. առվույտի աճի ու զարգացման առանձնահատկությունները կախված հնձի ժամկետից /Հայկ. այուդ. ակադեմիա: -Երևան 1997: - 6 էջ, 1 աղ.: - Հայ.: - Ավանդ է ՀայԳՏԼԳՀ-ում 7.01.98, թիվ 16 - AP98

մեր հետազոտությունները, որոնք նվիրված էին առվույտի աճի ու զարգացման առանձնահատկություններին, ցույց են տալիս, որ

առվույտի հնձի ժամկետները զգալի ազդեցություն են թողնում բույսերի աճի ու զարգացման տեմպերի վրա: Բույսերի բարձրությունը նճում մինչև լրիվ ծաղկման փուլը, իսկ վերգետնյա զանգվածի եւ արմատային համակարգի աճն ընթանում է մինչև ծաղկման սկիզբը, որից հետո այդ գործընթացը դանդաղում է: Նկատվում է ըստ հողի հորիցոնների արմատային համակարգի տարածվածության եւ հնձի ժամկետի ուշացմանը համընթաց ավելի խորն է թափանցում արմատային համակարգը: Անկախ հնձի ժամկետից արմատները ավելի շատ են կազմակերպվում հողի 15-30 սմ խորությունում, քան 0-15 սմ շերտում: Առվույտի աճի ու զարգացման տեմպերը աղեկվատ հատագրեցություն են թողել բույսերի կուտակման վրա: Բերքի կուտակումն ընթացել է ավելի արագ տեմպով մինչև ծաղկման սկիզբը, որից հետո այդ գործընթացը դանդաղել է:

ՄԺԿ 681.5

ԱՎՏՈՄԱՏԻԿԱ

21. Նիկողոսյան Ա.Ն. էլեկտրամագնիսական ռելեի փաստացի վիճակի գնահատման ալգորիթմ դեֆինենցիալ հավասարման՝ ռելեի արատորոշման մոդելի, միջոցով /Հայ. պետ. ճարտարագիտ. համալս.: -Երևան 1998: - 12 էջ, 6 նկ.: - Մատենագր. 9 ան.: - Ռուս.: - Ավանդ է ՀայԳՏԼԳՀ-ում 13.02.98, թիվ 33 - AP98

Դիտված է էլեկտրամագնիսական ռելեի որակի գնահատման հնարավորությունը հպումային համակարգի (<<) շարժման հետնգծի միջոցով: Արտադրատեսակի փաստացի վիճակի գնահատման գործընթացն անց է կացվում իրական ռելեի << շարժման հետագծի շեղումով նրա կոնստրուկտիվ պարամետրերի նոմինալ արժեքներից: Որպես ածատորոշման մոդել օգտագործվում է դիֆերենցիալ ոգ գծային հավասարում: Առաջարկվում է հավասարման գործակիցների փորձարարական եւ հաշվարկային որոշման մեթոդիկան ու սխեման: Մշակված է էլեկտրամագնիսական ռելեի դինամիկական բնութագրերի

համալիր գնահատման արժույթով: Իրագործվում է էլեկտրամագնիսական ռելի փաստագրի ֆունկցիոնալ վիճակի փոփոխության կանխատեսումը շահագործման շրջանում:

22. Դանիելյան Գ.Լ., Նիկողոսյան Ա.Հ., Նիկողոսյան Հ.Ն. Էլեկտրամագնիսական ռելի դինամիկական բնութագրերի վերահսկման սարք /Հայ. պետ. ճարտարագիտ. համալս.: - Երևան 1998: - 11 էջ, 6 նկ.: - Մատենագր. 6 ան.: - Ռուս.: - Ավանդ է ՀայԳՏԼԳՀ-ում 23.02.98, թիվ 34 - AP98

Դիտված են էլեկտրամագնիսական ռելի դինամիկական բնութագրերի որոշման մեթոդներ և միջոցներ առավելապես վերահսկման կողմնակի մեթոդներով: Նշված է, որ որոշ ինտերվալներ ռելի ժամանակային կախվածության տրամագրի վրա մնում են անորոշ: Առաջարկվում է շարժունակ համակարգի գծային և անկյունային տեղափոխությունների դինամիկայի, հպումային խմբերի աշխատանքի հուսալիության և ռելի մագնիսական համակարգի հոսանքային բնութագրման արագ վերահսկման սարք՝ մանրաթել-օպտիկական լարան-կոլեկտորի օգտագործմամբ:

YDK 002

ԻՆՖԱՐՄԱՏԻԿԱ

1. Մարտիկյան Զ.Գ., Հովհաննիսյան Ա.Հ. Էլեկտրոնային փաստաթղթերի շրջանառության համակարգի ինտեգրացումը կորպորատիվ ինֆորմացիոն համակարգի կառուցման դեպքում /ՀայԳՏԼԳՀ: - Երևան, 1998: - 5 էջ: - Ռուս.: - Ավանդ է ՀայԳՏԼԳՀ-ում 28.04.98, թիվ 59 - AP98

Ավելի բարդ խնդիրների ավտոմատացումը, մեծ ծավալի տվյալների մշակումը այսօր կորպորատիվ ինֆորմացիոն համակարգերի (ԿԻՀ) կառուցման համար ամենաարդիական հիմնահարցն է: Այդպիսի խնդիրների լուծման համար սովորաբար կիրառվում են տվյալների բազաների կառավարման համակարգեր (ՏԲՀԿ): ԿԻՀ-ի կառուցման համար կարևորագույն հիմնահարց է համարվում նաև ՏԲՀԿ-ի հետ փաստաթղթերի շրջանառության ինտեգրացումը: Բերվում է փաստաթղթերի շրջանառության և օպերատիվ հաշվառման համակարգը ԿԻՀ-ի կառուցման դեպքում:

2. Մարտիրոսյան Զ.Գ., Հովհաննիսյան Ա.Հ. Ձևնարկությամբ դեկավարվող կորպորատիվ ինֆորմացիոն համակարգեր / ՀայԳՏԼԳՀ: - Երևան, 1998: - 7 էջ: - Ռուս.: - Ավանդ է ՀայԳՏԳՀ-ում 28.04.98, թիվ 60 - AP98

Ուսումնասիրվում են կորպորատիվ ինֆորմացիոն համակարգերի (ԿԻՀ) ստեղծման հարցերը Կլմբայլբմ կորպորատիվ ինֆորմացիոն ցանցերի բազայի վրա: Կորպորատիվ ինֆորմացիոն համակարգը ուսումնասիրվում է որպես մարդ-ծրագրավորում-տեխնիկական համալիր՝ ժամանակակից ինֆորմացիոն տեխնոլոգիաների հիման վրա: Բերված են ԿԻՀ-ին ներկայացվող պահանջներ, նպատակները և այդպիսի համակարգերի աշխատանքի սկզբունքները: Բերված են նաև ՂԻՀ-ի աշխատանքի մակարդակները, իսկ ԿԻՀ-ը դիտվում է որպես կորպորատիվ ցանցի մի մասը:

3. Էդիլյան Մ.Բ., Մարտիրոսյան Զ.Գ., Աղամյան Հ.Ե. ՏԲ-ում գրանցումների օպտիմալ որոնման կազմակերպման հետազոտությունը /ՀայԳՏԼԳՀ: - Երևան, 1998: - 4 էջ: - Ռուս.: - Ավանդ է ՀայԳՏԼԳՀ-ում 28.04.98, թիվ 60 - AP98

Ոկտումնասիրվում են ՏԲ-ում գրանցումների (տվյալների) ըստ ժամանակի օպտիմալ որոնման կազմակերպման հարցերը: այրտեղ

որոնման ժամանակը դիտարկվում է որպես գումարային ժամանակամիջոց՝ կախված հարցումների քանակից, ինչպես նաև փաստաթղթերի որոնման ցիկլի կազմակերպումից: Բերվում է մի փաստաթղթի որոնման ժամանակամիջոցի հաշվարկի մոդելը, որտեղ օգտագործվում է Պուասոնի բանաձևը մեծ քանակությամբ փաստաթղթերի համար: Բերվում է նաև հաշվարկվող փաստաթղթերի քանակը որոշող բանաձևեր, որտեղ օգտագործվում են մաթեմատիկական սպասարկման տարրերը:

YDK 33

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

4. Նալչաջյան Թ.Ա., Բոլիբենյան Լ.Ռ. Բանկային (վարկային) ռիսկի որոշումը հավանականային մեթոդով /Հայ. պետ. ճարտարագիտ. համալս.: -Երևան 1998: - 5 էջ, 2 նկ.: - Մատենագր. 10 ան.: - Ռուս.: - Ավանդ է ՀայԳՏԼԳՀ-ում 29.04.98, թիվ 61 - AP98

Հետազոտվում է բանկային (վարկային) ռիսկը, որն առաջանում է առևտրային բանկի կողմից վարկ տրամադրելու դեպքում: Երկայումս գոյություն ունեն վարկային ռիսկի միջինի գազման բազմաթիվ մեթոդներ, սակայն լուծված չէր նրա քանարարան գնահատման հարցը: Նկարագրված է բանկային (վարկային) ռիսկի քանակական գնահատման ունիվերսալ հավանականային մեթոդ, որը կախված չէ սկզբնաղան տվյալների բաշխման օրենքից հնարավորություն է տալիս հաշվի առնել այն բոլոր արտաքին գործոնները, որոնց ազդեցության տակ տևող է ունենում բանկի գործունեությունը: Բանկի կողմից տրված վարկերի վերաբերյալ հավաքված վիճակագրական տվյալների հիման վրա որոշվում է վարկերի ծավալի բաշխման օրենքը եւ շահույթի ֆունկցիայի տեսքը: Ելնելով վարկերի ծավալի բաշխման օրենքից՝ որոշվում է վարկերի տրամադրումից ստացված շահույթի բաշխման խտության ֆունկցիան: վարկային ռիսկի մեծությունը գնահատվում է

որպես այն բանի հավանականություն, որ բանկը կստանա թույլատրելի նվազագույն արժեքից փոքր շահույթ:

YDK 37

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՖԻՐԺՈՍՈՒԹՅՈՒՆ

5.Աղաբենյան Ռ.Ջ. Մանկավարժական փորձուսուցումը ապագա ուսուցչի պատրաստման ահմակարգում /Հայ. պատ. ճարտարագիտ. համալս.: - Երևան, 1998: - 6էջ: - Հայ.: - Ավանդ է ՀայԳՏԼԳՀ-ում 4.03.98, թիվ 38 - AP98

Մանկավարժական կրթությունը ԲՈՒՀ-ում անհրաժեշտաբար ենթադրում է տևության եւ պրակտիկայի կապի մեթոդաբանական սկզբունքների իրագործում ապագա ուսուցչի լինելիության բոլոր փուլերում՝ մինչբուհական, բուհական, ետբուհական: այդ սկզբունքը ներառում է մանկավարժական փորձուսուցումը որպես ապագա ուսուցչ - դաստիարակի արհաստավարժ պատրաստման կարևորագույն բաղադրիչ: Մանկավարժական փորձուսուցման ընթացքում պրակտիկանտ-ուսանողների դժվարությունների, թույլ տված սխալների, թերությունների համակողմանի վերլուծությունը հնարավորություն է ընձեռնել բացահայտելու մանրավարժական փորձուսուցման օպտիմալացման ուսուցման ուղիներն ու միջոցները համալսարանական կրթության պայմաններում:

ՎԴԿ 51

ՄԱԹԵՄԱՏԻԿԱ

6. ներսնայան Հ.Բ., Պողոսյան Ա.Վ. Որոշ պարամետրական վերլուծությունների ցուցամիտությունը /Մաթեմատիկայի ին-տ: - Երևան, 1998: - 39 էջ: - Մատենագր 2 ան.: - Ռուս.: - Ավանդ է ՀայԳՏԼԳՀԻ-ում 30.04.98, թիվ 62 - AP98

Ուսումնասիրված է մի ինտերպոլյացիոն բանաձև, որը կախված է հաջորդականության տեսք ունեցող պարամետրից: Յույց է տրված, որ այդ հաջորդականության որոշակի ընկրության դեպքում բանաձև (հանգուցային կետերի մեծ քանակության դեպքում) քիչ է տարբերվում լավագույն մոտավորության բացման դեպքից: Ուսումնասիրված է նաև ուղեկցող օրթոգոնալ վերլուծության ցուցամիտության բնույթը առաջացնող վերլուծությունների վրա, քանի որ նրանցում իրական դեր է խաղում Ֆուրիեի համալուծ շարքը: ներկայացված գրաֆիկներն ու աղյուսակները հաստատում են շարադրված տեսական նյութը եւ ցույց են տալիս, որ առաջարկվող վերլուծությունները կարող են տարբեր արդյունավետ կիրառություններ գտնել:

7.Մահակյան Կ.Պ. Պարամետրական պատիկ ինտերպոլյացիա /Մաթեմատիկայի ին-տ: - Երևան, 1998: - 39 էջ: - Մատենագր 6 ան.: - Ռուս.: - Ավանդ է ՀայԳՏԼԳՀԻ-ում 30.04.98, թիվ 63 - AP98

Ստացվել է ըդհանուր ինտարպոլյացիոն բանաձև, որում ցանցի կետերը հավասարաչափ բաշխված են եւ հաշվի են առնված մինչև թերորդ կարգի ածանցյալները: Բանաձևեր պարունակում է պարամետր՝ հաջորդականության տեսքով: Մանրամասն ուսումնասիրված է պարամետրի որոշակի ընտրության դեպքում ստացած բանաձևեր: Յույց է տրված, որ մասնավոր դեպքում ստացվում են որոշ դասական բանաձևեր (այդ թվում նաև Ջեկսոնի հայտնի բանաձևեր): Գտնված է ֆունկցիաների համակարգ, որոնց համար տրված բանաձևեր ճշգրիտ է:

Ապացուցված է այդ համակարգի գծային անկախությունը եւ (ինչ-որ իմաստով) գրեթե օրթոգոնալությունը: Ուսումնասիրված է նաև ըստ այդ համակարգի վերլուծությունը Հք տարածությունում:

ՎԴԿ 531/534

ՄԵՆԱՆԻԿԱ

8. Ենցիբարյան Ի.Ա. անիզոտրոպ սալի եզրով տարածվող ալիքի խնդրի մասին /Մեխանիկայի ին-տ: - Երևան, 1997: - 6 էջ: - 2 աղ.: - Մատենագր 1 ան.: - Ռուս.: - Ավանդ է ՀայԳՏԼԳՀԻ-ում 31.03.98, թիվ 43 - AP98

Ուսումնասիրվում են հաստատուն հաստությամբ անիզոտրոպ սալի եզրով տարածվող տեղայնացված ծռման ալիքներ եւ Ռ-ելի տիպի ալիքներ: Սալի նյութը պատրաստված է այնպիսի բյուրեղներից, որոնք օժտված են խորանարդային համաչափությամբ: Սալը սահմանափակող հարթությունները չեն համընկնում խորանարդային համաչափության հարթությունների հետ: Ստացված, որ տեղայնագրված ծռման ալիք գոյություն ունի ազատ եզրի դեպքում: Յույց է տրված, որ սահող կոնտակտի, Նավիեի եւ կոշտ ամրացված պայմանների դեպքում տեղայնացված ծռման ալիք գոյություն չունի: Ստացվել են նաև Ռ-ելի տիպի ալիքների գոյության պայմանների միայն ազատ եզրի դեպքում: Իսկ մյուս եզրային պայմանների դեպքում Ռ-ելի տիպի ալիքներ գոյություն չունեն:

ՄԴԿ 61

ԲԺՇԿԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

9. Ասրիյան Ջ.Յ. "Ա" վիրուսային հեպատիտով հիվանդության որոշ համաճարակաբանական օրինաչափությունները Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում /1987-1991/ /Եր. պետ. բժշկ. համալս.: - Երևան, 1998: - 5 էջ, 2 աղ.: - Մատենագր 7 ան.: - Ռուս.: - Ավանդ է ՀայԳՏԼԳՀ-ում 8.04.98, թիվ 46 - AP98

Աղիքային վարակիչ հիվանդությունների համաճարակաբանական օրինաչափությունների ուսումնասիրությունը արտակարգ իրավիճակներում շատ հրատապ հիմնախնդիր է: Պատերազմներն իրենց հետևանքներով չեն տարբերվում բնության համադրություններից: Հետազոտությունները ցույց են տալիս, որ նախապատերազմարան տարիներին հիվանդության ցուցանիշը ռազմում էր 38.9%` 100 հազար բնակչի համար: Պատերազմի տարիներին (1990-1994) ցուցանիշը իջավ մինչև 37.1, իսկ հետպատերազմյան տարիներին` մինչև 14.5%: Հիվանդությունների թվի նվազումը 1992-1993 թթ. կարելի է բացատրել պատարագմական գործողությունների թեթևությամբ, բնակչության, մանավանդ երեխաների, ուժեղ տարաշարժով և հիվանդությունների գրանցման բացակայությամբ: Նկատվում է նաև "Ա" վիրուսային հեպատիտով հիվանդանալու սեզոնային բնույթ: Հունվար-հուլիս ամիսներին այն կազմում է 6.0%, հուլիս-դեկտեմբերին` մինչև 10.7%:

Ամենամեծ թիվը կազմում է 40% հոկտեմբեր-դեկտեմբեր ամիսներին:

10. Ասիրյան Ջ.Յա. Տեղային ռազմական բախումների պայմաններում հակահամաճարակաբանական միջոցառումների որոշ առանձնահատկությունները /նր. պետ. բժշկ. համալս.: - Երևան, 1998: - 3 էջ: - Մատենագր 4 ան.: - Ռուս.: - Ավանդ է ՀայԳՏԼԳՀ-ում 8.04.98, թիվ 47 - AP98

ԸՂՀ երկարատև պատերազմը ցույց տվեց ռազմական գործողությունների հետևանքների վերլուծության և համալիր համաճարակաբանական գնահատականի անհրաժեշտությունը: Գնահատականը հաշվի առնվում վարակիչ հիվանդացությունը, որը հատուկ է տվյալ տարածաշրջանին: Այս ամենը նպատակ է հետապնդում մշակել հակահամաճարակաբանական միջոցառումներ, գնահատել դրանց արդյունավետությունը, անցկացման փուլերը: Հակահամաճարակաբանական ապահովման համալիր համակարգում կան 3 հիմնական տարրեր.

- 1) Հիմնական բովանդակությունը (հակահամաճարակաբանական հիմնարկների, առանձին մասնագետների և բուժապահովման այլ համակարգերի գործունեությունը),
- 2) գլխավոր յուրահատկությունը (վարակիչ հիվանդությունների որոշակի նոզոլոգիական ձևերի կանխումը և վերացումը),
- 3) բոլոր եղած ուժերի և միջոցների իրենց գործունեության արագ և մանուրային վերակողմնորոշման ընդունակությունը բոլոր օղակներում:

11. Նազիկյան Ա.Հ. Տրանսկրանիալ դոպլերոգրաֆիայի դերը կարոտիդ իշեմիկ ինսուլտների նյքի գուշակման համար /Աղետների նյարդաբանության ԳՀԻ: - Երևան, 1998: - 10 էջ: - Մատենագր 11 ան.: - Ռուս.: - Ավանդ է ՀայԳՏԼԳՀ-ում 8.04.98, թիվ 48 - AP98

Ռեսուրսակազմ են տրանսկրանիալ դոպլերոգրաֆիայի այստորոշիչ հնարավորությունները ստենոզացնող ընթացքի բացակայությամբ, կարոտիդ իշեմիկ ինսուլտով /ԻԻ/ հիվանդների մոտ ուղեղային արյունահոսքի դինամիկ փոփոխությունների արձանագրման տեսակետից: դոպլերոգրաֆիան անց է կացվել շաբաթը մեկ` հիվանդության առաջին երեք շաբաթների ընթացքում, այսինքն ԻԻ-ից 1-2 օր անց, ու այնուհետև 2-րդ և 3-րդ շաբաթներին, ընդ որում գնահատվել են արյունահոսքի գծային արագությունը /ԱԳԱ/ և արյունահոսքի հիմնական չափանիշները, միջկիսագնդային ասիմետրիկայի ցուցանիշը: Հայտնաբերված է միջին ուղեղային ցարկերակի ԱԳԱ բացարձակ նշանակության կախվածության պատկերը հիվանդության ընթացքի դինամիկայից:

12. Նազիկյան Ա.Ն. Տրանսկրանիալ դոպլերոգրաֆիայի նոր հնարավորությունները կիսագնդային իշեմիկ ինսուլտի դեպքում /Աղետների նյարդաբանության ԳՀԻ: - Երևան, 1998: - 11 էջ: - Մատենագր 10 ան.: - Ռուս.: - Ավանդ է ՀայԳՏԼԳՀԻ-ում 8.04.98, թիվ 49 - AP98

Ուսումնասիրված են տրանսկրանիալ դոպլերոգրաֆիայի այստորոշիչ հնարավորությունները ստենոզացնող ընթացքի բացակայությամբ, կարոտիդ իշեմիկ ինսուլտով /ԻԻ/ հիվանդների մոտ ուղեղային արյունահոսքի դինամիկ փոփոխությունների արձանագրման տեսակետից: Դոպլերոգրաֆիան անց է նացվել շաբաթը մեկ հիվանդության առաջին երեք շաբաթների ընթացքում, այսինքն ԻԻ-ից 1-2 օր անց, ու այնուհետև 2-րդ և 3-րդ շաբաթներին, ընդ որում գնահատվել են արյունահոսքի գծային արագությունը /ԱԳԱ/ և արյունահոսքի հիմնական չափանիշները, միջկիսագնդային ասիմետրիայի ցուցանիշը: Հտմնվելով կատարված հետազոտությունների վրա, կարելի է եզրակացնել, որ տրանսկրանիալ դոպլերոգրաֆիայի ցուցանիշներն անուղղակիորեն վկայում են ուղեղի հյուսվածքի իշեմիացման տևողության և չափերի մասին:

УДК 620.9

ԷՆԵՐԳԵՏԻԿԱ

13. ԳՆՈՒՆԻ S.U. Հայաստանի էլեկտրաէներգետիկ բնագավառում մասնավոր ձեռներեցների կողմից ծառայությունների տրամադրման փորձի վերլուծությունը /էներգետիկայի հայկԳՀԻ - Երևան, 1998: - 8 էջ: - Մատենագր 3 ան.: - Ռուս.: - Ավանդ է ՀայԳՏԼԳՀԻ-ում 18.03.98, թիվ 39 - AP98

Նկարագրված են փորձարարական էլեկտրասպասարկող սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների (ԷՍՊԸ) կացման կարողությունները և գործունեության արդյունքները: ԷՍՊԸ-ների գործունեության վերլուծության հիման վրա բերված են առաջարկություններ բնակարանային սպառիչների կողմից սպառված էլեկտրաէներգիայի հաշվառման և վճարումների գանձման գործընթացի կազմակերպման վերաբերյալ:

14. Գնունի S.U., Մուրադյան Ռ.Դ. Հայաստանի էլեկտրաէներգետիկ բնագավառի 1996 թ. սակագնի մակրոտնտեսական վերլուծությունը /էներգետիկայի հայկԳՀԻ: - Երևան, 1998: - 10 էջ, 14 աղ.: - Մատենագր 3 ան.: - Ռուս.: - Ավանդ է ՀայԳՏԼԳՀԻ-ում 18.03.98, թիվ 40 - AP98

Նկարագրված Հայաստանի էլեկտրաէներգետիկ համակարգի 1996 թ. սակագնի հաշվարկման մեթոդը: Բերված է մեթոդի կիրառման նդանակ՝ հիմնված էներգահամակարգի ցուցանիշների կարճակետ կանխատեսման և ճշտման վրա: Բերված են նաև հաշվարկի օրինակներ և ֆինանսաւան ճեղկվածքի մակրոտնտեսական վերլուծության արդյունքները:

15. հովսեփյան Ա.Ա., Մարգարյան Վ.Վ., Հովսեփյան Հ.Ա. ՏՎԳ-8 տիպի ջրատաքացուցիչ կաթսայի՝ հեղուկ վառելիքի անցման կոնստրուկտիվ լուծումներ /Հայ. պետ. ճարտարագիտ. համալս.: - Երևան, 1998: - 4 էջ, 1 աղ.: - Մատենագր 1 ան.: - Հայ.: - Ավանդ է ՀայԳՏԼԳՀԻ-ում 30.04.98, թիվ 68 - AP98

Դիտարկվում է ՏՎԳ-8 տիպի գազային վառելիքով աշխատող ջրատաքացուցիչ կաթսայի վերակառուցման մի տարբերակ, որի լոնստրուկտիվ լուծումները թույլ են տալիս այն շահագործել նաև հեղուկ վառելիքով: Բերված են ագրեգատի ջերմային համեմատական հաշվարկների արդյունքները: Որոշված է հեղուկ վառելիքի

օգտագործման դեպքում կաթսայի ջերմային հցորոյթան շահագործման տիրույթը:

16. Հայրապետյան Ա.Գ., Գալուստյան Կ.Մ., Մուրադյան Ռ.Զ., Սարգսյան Վ.Տ. ԶԶԷՌ-440 տիպի ռեակտիվով ԱԷԿ-ի մաթեմատիկական մոդելի պարամետրերի նույնականացում /Էներգետիկայի հայկԳՀԻ: - Երևան, 1998: - 9 էջ, 2 նկ.: - Մատենագր 6 ան.: - Անգլ.: - Ավանդ է ՀայԳՏԼԳՀԻ-ում 30.04.98, թիվ 72 - AP98

Համաչափելի ԱԷԿ ունեցող էներգահամակարգերի կայուն եւ հուսալի աշխատանքն ապահովելու համարառաձեռնահատուկ նշանակություն է ստանում ռելեական պաշտպանության ցանցային եւ հակավթարային ավտոմատիկայի համակարգերի ճշգրիտ կարգավորումը:

Ռելեական պաշտպանության, ցանցային հակավթարային համակարգերի նախադարձքներն ընտրվում են էներգահամակարգերի դինամիկայի մեծաքանակ հաշվարկների հիման վրա, որոնք կատարվում են գոյություն ունեցող համակարգչային ծրագրերով: Քանի որ ԱԷԿ-ի տեխնոլոգիական պարամետրերը մեծ ազդեցություն ունեն նշված էներգահամակարգերի դինամիկական գործընթացների վրա, խնդիր է առաջանում ԱԷԿ-ի մաթեմատիկական մոդելի պարամետրերը նույնականացնել ռեալ պարամետրերի հետ, որոնք շահագործման ընթացքում կարող են ունենալ որոշ շեղումներ: Այս աշխատանքում, հիմնված մաթեմատիկական մոդելավորման, փորձի պլանավորման եւ վիճակագրական վերլուծության տեսությունների վրա, ներկայացված մեթոդիկա, որը թույլ է տալիս կատարել ԶԶԷՌ-440 իսկ ռեակտիվով ԱԷԿ-ի մաթեմատիկական մոդելի պարամետրերի նույնականացում: Վերջինիս որակը սապացուցված է գրանցված եւ հաշվարկային կորերի համադրական վերլուծության միջոցով, որոնք արտացոլում են Հայկական էներգահամակարգի մի վթարային գործընթացի դինամիկան:

17. պապիկյան Ա.Ռ., Մինասյան Յու.Խ., Թոխունց Յու.Ա., Զեյան Է.Տ. Երևանի ջեռուցման համակարգերի հաշվարկային ցուցանիշների ճշգրտման հարցի շուրջը /Էներգետիկայի հայկԳՀԻ: - Երևան, 1998: - 10 էջ: -Հայ.: - Ավանդ է ՀայԳՏԼԳՀԻ-ում 30.04.98, թիվ 73 - AP98

Նվիրված է Երևանի ջեռուցման համակարգերի հաշվարկային ցուցանիշների ճշգրտմանը: Երևանը, ջերմաէներգետիկական հաշվարկների հետ կապված, բաժանվել է երկու կլիմայաւան գոտու՝ հարավային եւ հյուսիսային: Յուրաքանչյուր գոտու համար առանձին որոշվել են շեռուցման շրջանի միջին ջերմաստաճանները եւ տնտղականությունները, ինչպես նաեւ ջերմային բեռի օգտագործման առավելագույն ժամերի թիվը: Ուսումնասիրության արդյունքները ցույց են տալիս, որ նույն ջերմային բեռի պայմաններում Երևանի հյուսիսային մասում շենքերի ջեռուցման համար ավելի շատ ջերմային էներգիա է հարկավոր, քան՝ հարավային:

18. Մկրտչյան Վ.Ս., Եղոյան Ռ.Կ. Միկրոկլիմայի կառավարման միկրոպրոցեստրային համակարգ՝ ըստ մաթեմատիկական մոդելների /Էներգետիկայի հայկԳՀԻ: - Երևան, 1998: - 6 էջ: - Մատենագր 3 ան.: - Ռուս.: - Ավանդ է ՀայԳՏԼԳՀԻ-ում 30.04.98, թիվ 74 - AP98

Քանի որ ջերմոցը պատված է բարակ նրութերով, որոնք պետք է ունենան բարձր լուսանցողություն, նրա կլիմայի վրա շատ արագ ազդում են արտաքին եղանակի պայմանների փոփոխությունները: Այդ դժվարացում է ջերմոցի կլիմայի հսկումը: Քանի որ միկրոկլիմայի տներն օգտագործում են թաղրվում է հնարավորություն օգտագործել վերահսկման լավագույն ալգորիթմները, առաջարկվեց ադապտիվ վերահսկում: Հետազոտումները ցույց են տվել, որ ադապտիվ վերահսկման ալգորիթմների կառուցումը չի կարող բարելավել լավ կանոնավորված կարգավորիչի վերահսկման ճշտությունը: Այդ պատճառով պետք է զարգացնել վերահսկման ռազմավարությունը, որը կբարելավի գալարային վերահսկման ճշտությունը եւ կայունությունը,

թույլ տալով վերահսկվող համակարգին արագ արձագանքել արտաքին բնակլիմայական պայմանների փոփոխություններին: Բերված են տեխնիկական լուծման հիմնական սկզբունքները և դրված են խնդիրներ հետագա հետազոտման համար:

ՄԺԿ 621.3

ԷԼԵԿՏՐՍԵՆՆԻԿԱ

19. Խամո Ա.Մ. Անալոգա-թվային փոխակերպման ճշգրտությունը բարձրացնելու հնարավորության ուսումնասիրությունը անալոգային ազդանշանի թվային հաղորդման ժամանակ /Հայ. պետ. ճարտարագիտ. համալս.: - Երևան, 1998: - 19 էջ, 13 նկ.: - Մատենագր 4 ան.: - Ռուս.: - Ավանդ է ՀայԳՏԼԳՀԻ-ում 15.04.98, թիվ 52 - AP98

Դիտարկված է անալոգիական ազդանշանի թվային հաղորդման ժամանակ անալոգա-թվային փոխակերպման ճշգրտությունը բարձրացնելու հնարավորությունը, հաշվի առնելով հակառակ փոխակերպման առանձնահատկությունները և խմբակազմման գործոնները: Ձևավորված է մի շարք հանձնարարականներ փոխակերպիչի կարգայնության, կոմպանչների տարատեսակության և սրանց կառուցվածքների ընտրության համար:

20. Գրիգորյան Ն.Զ. Վերարտադրվող և ունիվերսալ մագնիսական գլխիկների նրկրաչափական չափերի հաշվարկի մասին /Հայ. պետ. ճարտարագիտ. համալս.: - Երևան, 1998: - 9 էջ, 3 նկ.: - Մատենագր 4 ան.: - Հայ.: - Ավանդ է ՀայԳՏԼԳՀԻ-ում 15.04.98, թիվ 53 - AP98

Վերարտադրվող և ունիվերսալ մագնիսալ գլխիկների նրկրաչափական չափերի գնահատման համար առաջարկված է

հաշվարկի մոտեցման տարբերակ, որը հնարավորություն է տալիս պարզ արտահայտությունների օգնությամբ վերարտադրվող և ունիվերսալ մագնիսական գլխիկների նկատմամբ իրականացնել օպտիմալացում: Բերված կոնկրետ օրինակ:

ՄԺԿ 621.38

ԷԼԵԿՏՐՈՆԻԿԱ

21. Բերբերյան Վ.Է. Ախտորոշման վերահսկվող և չափվող համակարգերում վերափոխիչների հարցման հաճախականության օպտիմալացումը և չափումների ճշգրտության ապահովումը /Հայ. պետ. ճարտարագիտ. համալս.: - Երևան, 1998: - 11 էջ, 2 նկ.: - Մատենագր 11 ան.: - Ռուս.: - Ավանդ է ՀայԳՏԼԳՀԻ-ում 15.04.98, թիվ 51 - AP98

Դիտարկված են տեխնիկական տարբեր բնագավառներում, էներգետիկայում, բժշկությունում և կապում լայնորեն օգտագործվող վեժնահսկող, չափող և ախտորոշող համակարգերում վերափոխիչների հարցման հաճախականության օպտիմալացման և առավելագույն ճշգրտության ապահովման հարցերը: Բերված է տեղեկատվության հավաքման ու մշակման ենթահամակարգի կառուցվածքային ընդհանուր սխեման նկարագրված դրա աշխատանքը: Որոշումների ընդունման մաթեմատիկական մեթոդների հիման վրա ստացված են հավասարումներ, որոնցից կարելի է ստանալ չափիչ կապուղիների հարցման օպտիմալ հաճախականությունը՝ ատահովելով չափվող պարամետրի առավելագույն ճշգրտությունը: Նկարագրված են համեմատաբար էժան կիսատադրոչային փոխակերպիչների որոշ տիպեր, որոնք հնարավորություն են տալիս վերահսկող, չափող և ախտորոշող համակարգերի իրականացման ժամանակ ապահովել անհրաժեշտ ճշգրտություն և արագագործություն:

22. Ղուլղագարյան Կ.Ա., Փափագյան Ա.Վ., Ղուլղագարյան Դ.Կ. Ռեզոնատորի ներքին հաղորդալարի էքսցենտրիկ դասավորածությամբ ԳԲՀ ֆոտոընդունիչը /Հայ. պետ. ճարտարագիտ. համալս.: - Երևան, 1998: - 8 էջ, 5 նկ.: - Մատենագր 4 ան.: - Ռուս.: - Ավանդ է ՀայԳՏԼԳՀ-ում 30.04.98, թիվ 70 - AP98

Գերբարձր հաճախականություններով (ԳԲՀ) մոդուլված լույսի հետներողինային հայտնի ընդունիչը պարունակում է ֆոտոէլեկտրոնային սարք՝ տեղադրված ռեզոնատորում: Ինքը հետներողինը՝ տեղական գեներատորը, եւս պարունակում է ռեզոնատոր: Այս հանգամանքը բերում է երկու ռեզոնատորները մեկով փոխարինելու գաղափարին, որը ներկայացված է աշխատանքում: Բերվար են ԳԲՀ-ով մոդուլված լույսի մի շարք ընդունիչների կառուցվածքները, ուժեղացուցչային միատակտ եւ երկտակտ ընդունիչներ, որոնցից յուրաքանչյուրը կարող են լինել կամ միակնալ, երկու մոդուլված լուսային հոսքերի ընդունման համար: Բերված են նաեւ գեներատորային միակնալ եւ երկնալ ընդունիչներ ԳԲՀ-ով մոդուլված լույսի ընդունման համար:

23. Ղուլղագարյան Կ.Ա., Փափագյան Ա.Վ., Ղուլղագարյան Տ.Կ. Մեկ ընհանուր բազմապատկման համակարգով երկնալ ֆոտոընդունիչի մշակումը եւ օգտագործումը /Հայ. պետ. ճարտարագիտ. համալս.: - Երևան, 1998: - 13 էջ, 9 նկ.: - Մատենագր 3 ան.: - Ռուս.: - Ավանդ է ՀայԳՏԼԳՀ-ում 30.04.98, թիվ 71 - AP98

Դիտվում է ֆոտոընդունիչ, որի օգնությամբ իրականացվում է երկու լուսային հոսքերի ընդունումը միաժամանակ: Ըստ կառուցվածքի սարքը չնչին չափով տարբերվում է զանգվածային արտադրվող ֆոտոբազմապատկիչներից: տարբերությունն այն է, որ կիսաթափանց ֆոտոկատոդի տակ ճակատային ապակու վրա նստեցված են երեք հաղորդիչ շերտեր: կենտրոնական շերտն իր երկու հանդիպակաց կողմերով միացված է մուտքային խցիկի գլանաձեւ էլեկտրոդին: Նրանց

վերնում ոչ վակուումային կողմից ճակատային ապակու վրա տեղադրված են երկու արտաքին /ունակային/ էլեկտրոդներ, որոնց տրվում են ղեկավարող լարումներ: Որպես օրինակ դիտվում է երկնալ ֆոտոընդունիչի օգտագործմամբ օբյեկտի ուղղությունը որոշող սարքում: Բերված են այդ սարքի պնդագիտական բնութագրերը:

УДК 63

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

24. Գրիգորյան Գ.Պ. Մրգաջրերի արտադրության ելքային տույնի ջերմաֆիզիկական բնութագրերը /Հայ. գյուղ. արտդնմիա: - Երևան, 1998: - 9 էջ, 1 նկ., 1 աղ.: - Մատենագր 4 ան.: - Ռուս.: - Ավանդ է ՀայԳՏԼԳՀ-ում 28.04.98, թիվ 56 - AP98

Բերված են մրգաջրերի արտադրության համար որպես հումք հանդիսացող մրգերի՝ ծիրան, դեղձ, սալոր, տանձ եւ խնձոր, ջերմաֆիզիկական բնութագրերը, այդ թվում տեսակարար ջերմունակությունը, ջերմահաղորդականության եւ ջերմաստիճանահաղորդականության գործակիցները: Տրված է նշված բնութագրերի կանխումը հումքը խոնավությունից եւ ջերմաստիճանից:

25. Գրիգորյան Գ.Պ. կծկումը որպես մրգերի չորացման գործընթացի ավարտը բնութագրող օբյեկտիվ ցուցանիշ /Հայ. գյուղ ակադեմիա: - Երևան, 1998: - 9 էջ, 2 նկ., 1 աղ.: - Մատենագր 3 ան.: - Ռուս.: - Ավանդ է ՀայԳՏԼԳՀ-ում 28.04.98, թիվ 57 - AP98

Առաջարկված է մրգերի չորացման գործընթացի օբյեկտիվ հսկման մեթոդ, որի հիմքում ընկած է նյութի խոնավությունից կախված գծային կծկման մեծությունը: Որոշված են ՀՀ-ում մշակվող մրգերի հիմնական

տնտեսական կրթության և մշակութային կոմպլեքսային մեծությունների բաղադրիչները: Ստաչված են նոմոգրամներ առաջարկված մեթոդի գոնական կիրառման համար:

26. Խաչատրյան Ա.Յ., Գրիգորյան Գ.Պ. ՀՀ պայմաններում աճեցվող մրգերի արհեստական չորացման տախնիկոլոգիական ռեժիմների փորձարարական հիմնավորման արդյունքների մասին /Հայ. գյուղ. ակադեմիա: - Երևան, 1998: - 9 էջ, 3 նկ., 1 աղ.: - Մատենագր 5 ան.: - Ռուս.: - Ավանդ է ՀայԳՏԼԳՀԻ-ում 28.04.98, թիվ 58 - AP98

Ներկայացված են մրգերի արհեստական /կոնվեկտիվ/ չորացման այնպիսի ռեժիմային պարամետրերի փորձարարական արդյունքները, ինչպիսիք են ջերմակրի ջերմաստիճանն ու խոնավությունը: Բերված են տվյալներ, որոնք բնութագրում են մշակված ռեժիմների ազդեցությունը ստացվող չրերի որակական ցուցանիշների վրա:

ՄԺԿ 66

ՔԻՄԻԱԿԱՆ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ:

ՔԻՄԻԱԿԱՆ ՏԵՆՆՈԼՈԳԻԱ

27. Խաչատրյան Հ.Ռ. Ռադիկալային պոլիմերացման գործընթացների լավագույն ղեկավարման և մաթեմատիկական մոդելավորման մի քանի հարցեր /Հայ. պետ. ճարտարագիտ. համալս.: - Երևան, 1998: - 10 էջ, 2 նկ.: - Մատենագր 6 ան.: - Ռուս.: - Ավանդ է ՀայԳՏԼԳՀԻ-ում 30.04.98, թիվ 69 - AP98

Քննարկված են մեթիլ-մետակրիլատի ռադիկալ պոլիմերացմամբ մեծաչափ պոլիմերային իրերի ստացման գործընթացների օպտիմալ

ղեկավարման և մաթեմատիկական մոդելավորման առանձնահատկությունները: Նշված է, որ գործընթացի իկքնական ընթացքի դեպքում դիտվում են մեծ ջերմաստիճանային անկումներ՝ որոնք առաջացնում են անհամասեռ ջերմաստիճանային և կոնվեկտիոն դաշտեր, և, որպես հետևանք, ստացված իրերի ֆիզիկա - մեխանիկական հատկությունների վատացում: Կազմված է գործընթացի մաթեմատիկական մոդել և կինետիկական հավասարումների համակարգի հետ մեկտեղ ջերմային հաշվեկշիռի հավասարումների լուծման հաշվային մեթոդներով ձևակերպել են պոլիմերացման գործընթացի օպտիմալ ջերմային ռեժիմները: բացմաթիվ հաշվարկման փորձարկումների հիման վրա ցույց է տրված, որ ջերմաստիճանային ղեկավարումը հանգեցնում է լծակի կանոնին:

ՄԺԿ 681.3

ՀԱՇՎՈՂԱԿԱՆ ՏԵԽՆԻԿԱ

28. Բալագյուրյան Ա.Լ., Մելիքյան Վ.Ծ. ՄՄՀ տարրերի հաջորդական շղթայի մակրոմոդել /Հայ. պետ. ճարտարագիտ. համալս.: - Երևան, 1998: - 7 էջ, 10 նկ.: - Մատենագր 6 ան.: - Ռուս.: - Ավանդ է ՀայԳՏԼԳՀԻ-ում 15.04.98, թիվ 50 - AP98

Դիտարկված են թվային մեծ ինտեգրալային սխեմաների ստանդարտ հատվածների մշակված տրամաբանական մակրոմոդելները: Մոդելները ստացվել են սխեմայում ազդանշանների պարամետրերի սխեմայի տոպոլոգիական բնութագրերից փորձարարական կախվածությունների մոտարկման օգնությամբ, որոնք ձևավորվել են սխեմատիկական մակարդարով մոդելավորման միջոցով: Բերված է մոդելների արդյունավետության գնահատականը:

ՎԴԿ 685.5

ԱՎՏՈՄԱՏԻԿԱ

29. Միմոնյան Ա.Ն., Աղաջանյան Կ.Ս. Ամրակայված եզրային պայմաններով օպտիմալ արագագործության գծային խնդիրների լուծման ավտոմատացումը որոշիչային հավասարումների մեթոդի հիման վրա /Հայ. պետ. ճարտարագիտ. համալս.: - Երևան, 1998: - 13 էջ, 2 նկ.: - Մատենագր 3 ան.: - Հայ.: - Ավանդ է ՀայԳՏԼԳՀ-ում 15.04.98, թիվ 54 - AP98

Քննարկվում են ամրակայված եզրային պայմաններով գծային ավտոմատ օպտիմալ արագագործության խնդիրների լուծման ավտոմատացման հիմնահարցերը: Որոշիչային հավասարումների օգնությամբ առաջարկված է ֆորմալաչված մաթեմատիկական մոդել, որի հիման վրա էլ մշակված է ""ՁՄՀՁՁ" ծրագրային համալիրի միջավայրում աշխատող մեթոնայական ծրագիր: Վերջինս նշանակալիորեն մեծացնում է նշված խնդիրների լուծումների ստացման օպերատիվությունը, ինչն առանձնահատուկ նշանակություն ունի ժամանակի իրական մասշտաբում աշխատող դինամիկ համակարգերի օպտիմալ կառավարման տեսանկյունից:

30. Միմոնյան Ա.Ն., Աղաջանյան Կ.Ս. Որոշիչային հավասարումների մեթոդի տարածումը կոմպլեքս սեփական թվերով մատրիցներով գծային ավտոմատ համակարգերի վրա /Հայ. պետ. ճարտարագիտ. համալս.: - Երևան, 1998: - 8 էջ: - Մատենագր 3 ան.: - Հայ.: - Ավանդ է ՀայԳՏԼԳՀ-ում 15.04.98, թիվ 55 - AP98

Առաջարկված է կոմպլեքս սեփական թվերով մատրիցներով գծային ավտոմատ համակարգերի ըստ արագագործության օպտիմալացման եղանակ՝ հիմնական որոշիչային հավասարումների մեթոդի վրա: Սյն հնարավորություն է տալիս հաղթահարել օպտիմալ կառավարման

ֆունկցիայի փոխանջատումների անտայտ թվով պայմանավորված հայտնի բարդությունները: Բերված են գործնական նշանակություն ունացող մի եռաչափ խնդրի լուծման արդյունքները:

31. Ավագյան Ա.Ս. Արտաքիա ազդեցությունների հաշվի առմամբ թվային ՄԻՍ-երի անգողիկ գործընթացների մոդելավորում /Հայ. պետ. ճարտարագիտ. համալս.: - Երևան, 1998: - 13 էջ, 12 նկ., 1 աղ.: - Մատենագր 17 ան.: - Ռուս.: - Ավանդ է ՀայԳՏԼԳՀ-ում 30.04.98, թիվ 75 - AP98

Առաջարկված է որոշակի փոփոխություններից հետո ոչ հստակ բազմությունների տեսության տարրերի կիրառմամբ թվային սխեմաների անցողիկ գործընթացների մոդելավորման մեթոդիկա: Դա թույլ է տվել զգալիորեն մեծացնել սխեմաների հանգույցներում ազդանշանների տեսքի վերարտադրման ճշտությունը, պահպանելով ավանդական տրամաբանական մոդելավորման արագությունը: Դիտարկված են սխեմաների վերլուծության մշակված մեթոդիկայի կիրառության հարցերը արտաքին ապակայունացնող գործոնների առկայության դեպքում: Բերված է առաջարկված մեթոդիկայի էությունը և նրա արդյունավետությունը բազահայտող հաշվարկի օրինակ:

ՎԴԿ 69

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

32. Ներսիսյան Մ.Գ. Քարե շենքի մշակվաց կառուցվածքային համակարգի ամրության և դեֆորմատիվ հատրությունների հաշվարկա-թնորնտիկ հնտացուտությունը /Եր. ճարտարաշին. ին-տ: - Երևան, 1998: - 22 էջ: - Մատենագր 6 ան.: - Ռուս.: - Ավանդ է ՀայԳՏԼԳՀ-ում 8.04.98, թիվ 44 - AP98

Նվիրված է այն շենքի հաշվարկա-թնորենտիկ հետազոտությունը, որի պատերը կառուցված են հեղինարի կողմից մշակված պատի նոր համակարգով կառուցված թեթև լծանյութերից՝ մամլումով: Կատարվել է շենքի տարածական հաշվարկ 9.0*9.0 մ չափեր ունեցող հատակագծում: Ընտրված է հաշվարկային սխեմա, որն ունի շերտավոր թիթեղների տեսք, համապատասխանում է հաշվարկի օբյեկտին և թույլ է տալիս հաշվի առնել փորձնական առանձնահատկությունները կոնստրուկցիայի տարբեր ծանրաբեռնվածության ու ազդեցության դեպքում: այդ նպատակով կացվել են տարբեր, իսկ վերջիններս կազմում են ընհանուր տարածքային սխեմա: Ծննդը ընդունված է երկհարկանի նկուղային հարկում:

33. ներսիայան Մ.Գ. Մշակված շենքի շարվածքի ամրության հատկությունների փորձարարական հետազոտությունը /Եր. ճարտարաշին. ին-տ: - Երևան, 1998: - 12 էջ: - Մատենագր 10 ան.: - Ռուս.: - Ավանդ է ՀայԳՏԼԳՀ-ում 8.04.98, թիվ 45 - AP98

նվիրված է պատրաստված արհեստական տիպի քարերի փորձնական հետազոտությանը, նրանց կաշտողականության աստիճանին՝ լուծույթի հետ, ինչպես նաև կենտրոնական սեղման հիման վրա քարերի փորձնական նմուշների արդյունքներին: Քարերի արտաքին ամրության համար պատրաստվել են 100*300*65 մմ չափերի ութ նմուշներ, որոնցից պատրաստվել են օգտագործելով "կարմրաշենի" քարհանքի շլակ: Մյուս չորս նմուշները պատրաստված են գետի ավազից: Ծաղալսային լուծույթի և քարի կաշտողականության աստիճանի որոշման համար օգտագործել են նմուշներ, որոնք բաղկացած են 300*300*160 մմ երկու քարե սալիկներից՝ միացած 40 մմ հաստությամբ լուծույթով: ՀՆՓԿՏԻ-ի () կենտրոնական լաբորատորիայում կատարվել է պատերի նմուշների դիմացկության հետազոտություն: Այդ նպատակով պատրաստվել և փորձարկվել են պատերի 6 նմուշներ, որտեղ շարվածքի արտաքին շարքը շեղված է ներքինի հեմմաստ կեն քարով:

ՄԴԿ 72

ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

34. Վարդանյան Ռ.Օ. Քաղաքաշինության գործունեության իրավական կարգավորման համակարգը (ուրբանաիցմ) /Եր. ճարտարաշին. ին-տ: - Երևան, 1998: - 38 էջ: - Մատենագր 58 ան.: - Ռուս.: - Ավանդ է ՀայԳՏԼԳՀ-ում 18.03.98, թիվ 41 - AP98

Ուսումնասիրվում են քաղաքաշինական գործունեության իրավական կարգավորման հարցերը: Մատնանշվում է քաղաքաշինարան իրավունքի զարգացման անհրաժեշտությունը որպես իրավունքի առանձին ճյուղ: ներկայացված են քաղաքաշինական իրավունքի հիմնական բաղադրամասերը, ինչպես նաև նրա կառուցման համակարգը և ազդեցության բնագավառը ճարտարապետական գործունեության վրա: ներկայացված է նաև "Քաղաքաշինության մասին" օրենքի ստեղծման համակարգը: Առկա փորձից ելնելով ընդարձակվում են տվյալ օրենքում օգտագործվող հասկածությունները, ներկայացվում են Հայաստանի Հանրապետությունում քաղաքաշինական գործունեության իրականացման օրենսդրական ամկապնդման կարգը տվյալ օրենքի միջոցով, նրա սուբյեկտների փոխհարաբերությունների ոլորտները, ինչպես նաև տրվում է օրենքի ընդունման անհրաժեշտության իրավաբանարան հիմնավորումը:

35. Վարդանյան Ռ.Օ. Հայաստանում ճարտարապետական գործունեությունը կարգավորող օրենսդրական ակտի հիմքերի մշակում (Հայաստանի հանրապետության "ճարտարապետի գործունեության մասին" օրենքը) /Եր. ճարտարաշին. ին-տ: - Երևան, 1998: - 50 էջ: - Մատենագր 20 ան.: - Ռուս.: - Ավանդ է ՀայԳՏԼԳՀ-ում 8.03.98, թիվ 42 - AP98

Նվիրված է Հայաստանի Հանրապետությունում ճարտարապետաշինարարական գործունեությունը կարգավորող իրավական

համակարգի մշակման հարցերին: Ներկայացված է "Ճարտարապետի գործունեության մասին" օրենքի ստեղծման համակարգը, տրված են ճարտարապետական գործունեության մուբյեկտի եւ օբյեկտի ընդարձակ հասկացությունները, սուբյեկտների միջեւ փոխհարաբերությունների համակարգը, նրանց իրավունքներն ու պարտականությունները, ինչպես նաեւ շինարարական փաստաթղթերի հիմնական տեսակների որոկավորումը իրավական կարգավորման տեսակետից: Ներկայացված են ճարտարապետի գործունեության արտոնագրման անցուցման միջազգային փորձը, ինչպես նաեւ ճարտարապետի իրավակային իրավունքի պաշտպանման տրավակական հիմքը:

YDK 796

ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒՆՏՐՈՒՐԱ ԵՎ ՍՊԱԲՏ

36. Սանույան Խ.Ա., Առաքելյան Ա.Ս. Ցիկլիկ մարզածելուում հատուկ ֆիզիկական պատրաստվածության /ՀՖՊ/ գործունեների կառուցվածքի որոշման մանկավարժարան վերահսկողության մեթոդիան մկանային գործունեության էներգետիկ յուրահատկությունների հիման վրա /Հայ. պետ. ճարտարագիտ. համալս.: - Երևան, 1998: - 7 էջ, 2 նկ.: - Մատենագր 13 ան.: - Ռուս.: - Ավանդ է ՀայԳՏԼԳՀ-ում 30.04.98, թիվ 64 - AP98

Հատուկ ֆիզիկական պատրաստվածության /ՀՖՊ/ մանկավարժական վերահսկողության մեթոդիկան ցիկլիկ մարզածներում կատարելագործելու նպատակով առաջարկվում է ավանդական էլեկտրամատակարարման մեխանիզմները մասնատել եւ ՀՖՊ-ն գնահատել ոչ ավանդական մեթոդով՝ ըստ հիմքերի: Առաջին դեպքում գնահատվում է 6 դիրք /3 մեխանիզմի Լ եւ Բ/, ըստ հիմքերի՝ 13 աղբյուրից /7 հիմնաան եւ 6 միջանկյալ/ գնահատում ենք 8 հիմքի Լ եւ Բ, այսինքն 16 դիրք, ինչը մարզական գործընթացը դարձնում է հնարավոր չափ կառավարելի:

37. Սանույան Խ.Ա. Մարդու էներգետիկան ցիկլիկ գործընթացում /Հայ. պետ. ճարտարագիտ. համալս.: - Երևան, 1998: - 7 էջ, 3 նկ.: - Մատենագր 6 ան.: - Ռուս.: - Ավանդ է ՀայԳՏԼԳՀ-ում 30.04.98, թիվ 65 - AP98

Ընհանրացվել եւ լրացվել են բոշ տեղեկետու նյութեր, որոնք հնարավորություն են ընձեռում հաշվարկել Ե-ն /միջավայրի դիմադրությունը/ տարբեր մարզածելուում եւ կատարված մեխանիկական աշխատաիրը այդ մարզածելուում: Օժանդակ վարժություններ օգտագործելիս առաջարկվեմ էհաշվառվման մեխանիզմ, որը թույլ է տալիս ընտրել վարժություններ, նկատի ունենալով մրցումային վարժության էներգածախսը: Առաջարկված է հիմնական եւ օժանդակ վարժությունների Ց,Ի, Լ, Հ,մ հաշվառման մեթոդիկա տարբեր հցորության աստիճանների դեպքում, որը մոդելավորում է մրցումային վարժության էներգածախսը:

38. Ղոչիկյան Ա.Ա. Ծանրամարտով զբաղվող ուսանողների ֆիզիկական հատկությունների աճի գնահատման մեթոդիկան /Հայ. պետ. ճարտարագիտ. համալս.: - Երևան, 1998: - 7 էջ, 2 նկ.: - Մատենագր 13 ան.: - Ռուս.: - Ավանդ է ՀայԳՏԼԳՀ-ում 30.04.98, թիվ 64 - AP98

Նախատեսված է ֆիզիկական դաստիարակության դասատուների եւ ֆիզկուլտուրայով ինքնուրույն զբաղվող ուսանողների համար: Ոխանողների ֆիզիկական որակների եւ ֆիզիկական զարգացման մանկավարժական հսկողությունը թույլ է տալիս օբյեկտիվ գնահատելու ուսումնա-մարզական գործընթացի արդյունավետությունը, օպերատիվ ձեւով կանոնավորել մարզումների մեթոդիկան, օգտագործելով մարզման համապատասխան միջոցներ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ
ԵՎ ԱՌԵՎՏՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԼՐԱՏՎՈՒԹՅԱՆ
ԵՎ ՏԵԽՆԻԿԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ
(ՀայԳՏԼԳՀԻ)

ԱՎԱՆԴԱԴՐՎԱԾ ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

ԵՌԱՄՍՅԱ ՍԵՂՄԱԳՐԱՅԻՆ ԺՈՂՈՎԱԾՈՒ

թիվ 4

ԵՐԵՎԱՆ 1998

УДК 002

ԻՆՖՁԲՄՄՏԻԿԱ

1. Էդիլյան Մ. Բ., Մարտիրոսյան Ջ. Գ., Ադամյան Հ. Ե. Տվյալների փոխանակման համակարգի (ՏՓՀ) գործունեության գնահատման մեթոդիկա / ՀայԳՏԼԳՀԻ: - Երևան, 1998: - 7 էջ:

- Ռուս.: - Ավանդ. է ՀայԳՏԼԳՀԻ-ում 01.07.98, թիվ 88 - Ap98

Նվիրված է տվյալների փոխանակման համակարգի գործունեության, ինչպես նաև համակարգի տարբեր պարամետրերի եւ չափանիշների գնահատման ու մեթոդիկայի մշակման հարցերին: ՏՓՀ-ն ուսումնասիրվում է որպես բարդ դինամիկ հիերարխիկ տիպի համակարգ: Բերվում են երեք արտագույման մոդելներ ՏՓՀ-ի գործունեության գնահատման համար՝ որպես ՏԲ-ում փաստաթղթերի ընտրության գործընթաց: Բերված են նաև ՏԲ-ի օգտագործման, դրական ինֆորմացիայի, ՏԲ-ի լրացման որակի ընդհանրացված ցուցանիշը եւ այլ գործակիցներ: Մշակված են ՏԲ-ի ոչ ռիթմիկ եւ անժամանակ ներկայացնելու ցուցանիշներ:

2. Էդիլյան Մ. Բ., Մարտիրոսյան Ջ. Գ., Ադամյան Հ. Ե. Գիտատեխնիկական ինֆորմացիայի տվյալների բազաների հնչակապի կազմակերպումը համակարգչային ցանցերում / ՀայԳՏԼԳՀԻ: - Երևան, 1998: - 5 էջ: - Հայ.: - Ավանդ. է ՀայԳՏԼԳՀԻ-ում 01.07.98, թիվ 89 - Ap98

Նվիրված է համակարգչային ցանցերի ընդլայնմանը, այնտեղից ինֆորմացիայի օգտագործմանը, ինֆորմացիայի գաղտնիության ապահովմանը եւ այլն: Ուսումնասիրվում է ցանցերում տվյալների փոդանակման հարցը, որը հանդիսանում է բազմաֆունկցիոնալ համակարգերի ստեղծման պայմաններից մեկը: Այդպիսի համակարգերում առանձնանում են ինֆորմա-

ցիոն հոսքերի որոշակի հատկանիշները եւ ինֆորմացիայի փոխանակման համար հիմնական մասնակիցները: Վերջին տարիներին ինֆորմացիոն գործունեության մեջ կատարվում են

արմատական փոփոխություններ, առանձնացվում են նոր ինֆորմացիոն տեխնոլոգիաներ, ստեղծվում են ազգային եւ միջազգային ՏԲ-եր, որոնք մշտապես լրացվում են նոր տվյալներով: Փորձ է արվում լուծելու այն հարցերը, որոնք կապված են նոր արդյունավետ ինֆորմացիոն տեխնոլոգիաների ներդրման եւ իրացման հետ:

3. Մանուկյան Ա. Է. Փորձագիտական համակարգի հետ երկխոսության վարման միջոցների աշխատանքի կազմակերպման մասին / Հայ. պետ. ճարտարագիտ. համալս.: - Երևան, 1998: - 21 էջ.: - Մատենագր. 2 ան.: - Ռուս.: - Ավանդ. է ՀայԳՏԼԳՀ-ում 05.08.98, թիվ 111 - Ար98

Առաջարկվում են փորձագիտական համակարգերի երկխոսության վարման միջոցների կազմակերպման մեթոդներ: Առաջարկվում է վարել երկխոսության սցենարների եւ մուտքա-յին թույլատրելի տեքստերի քերականական կառուցվածքների նկարագրելի գրադարաններ: Նման դեպքում մուտքային տեքստի ճանաչումը վեր է ածվում այդ տեքստի քերականական կառուցվածքի եւ գրադարանում պահված կառուցվածքների համեմատմանը: Առաջարկվում է նաեւ նշված նկարագրերը կազմելու մետալեզու, ինչպես նաեւ օպերատորների ցանկ, որոնցով ներկայացվում են նշված նկարագրերն իրենց ներմեքենայական մշակումից հետո (գրադարանում պահման պահին): Առաջարկվում են մուտքային տեքստերի ճանաչման գործընթացների արագացման մեթոդներ, որոնք հիմնված են մուտքային տեքստերի հավանականային ճանաչման փուլի եւ տեքստի շարահյուսական վերլուծության գրաֆի դինամիկ վերակազմավորման կիրառման վրա:

4. Մանուկյան Ա. Է. Փորձագիտական համակարգի մուտքային տեքստերի հավանականային ճանաչման ադապտիվ ծրագրային միջոցների աշխատանքի կազմակերպման մասին

/ Հայ. պետ. ճարտարագիտ. համալս.: - Երևան, 1998: - 15 էջ: - Մատենագր. 1 ան.: - Ռուս. - Ավանդ. է ՀայԳՏԼԳՀ-ում 05.08.98, թիվ 112 - Ար98

Ժամանակակից փորձագիտական համակարգերում երկխոսության կազմակերպման ենթահամակարգի հիմքում հաճախ դրվում են հատուկ գրադարաններ, որտեղ պահվում են երկխոսության սցենարների եւ մուտքային թույլատրելի տեքստերի շարահյուսական կառուցվածքների նկարագրերը: Առաջարկվում է նշված ենթահամակարգերում կիրառել մուտքային տեքստերի մակերեսային վերլուծություն: Սա թույլ է տալիս որոշել գրադարանում պահված այն նկարագրերը, որն առավելագույն հավանականությամբ կիրականացնի մուտքային տեքստի վերջնական ճանաչումը: Առաջարկվում են նաեւ մուտքային տեքստի հավանականային վերլուծության միջոցների ադապտացիան իրականացնող մեթոդներ եւ ալգորիթմներ, որոնք թույլ են տալիս ապահովել երկխոսությունը ռեալ ժամանակի ռեժիմում մուտքային հայցերի հոսքերի մեծ դինամիկության պայմաններում:

5. Մանուկյան Ա. Է. Սեմանտիկ ցանցերի երկու հանգույցների միջև ամենակարճ ճանապարհի որոշման մեթոդ / Հայ. պետ. ճարտարագիտ. համալս.: - Երևան, 1998: - 9 էջ: - Մատենագր. 1 ան.: - Ռուս.: - Ավանդ. է ՀայԳՏԼԳՀ-ում 05.08.98, թիվ 113 - Ար98

Փորձագիտական համակարգերի մուտքային տեքստերի իմաստալից վերլուծությունը բերում է գիտելիքների բազայի սեմանտիկ ցանցի տեքստի բառերին համապատասխանող հանգույցների միջև հարաբերությունների որոնմանը: Առա-

ջարկվում է սեմանտիկ ցանցի երկու հանգույցների միջև ամենակարճ ճանապարհի որոնման մեթոդ: Մեթոդի էությունը հետևյալն է . ցանցի յուրաքանչյուր գագաթին վերագրվում է հաստատունների հատուկ ցուցակ, որոնք թույլ են տալիս որոնման ընթացիկ քայլում որոշել նրա լավագույն ուղղությունը: Մեթոդի մշակումը հասցված է մինչև մեքենայական ալգորիթմի աստիճան: Կատարված է առաջարկված ալգորիթմների ժամանակային ծախսերի գնահատում և նրա համեմատումն առաջադրված խնդրի լուծման հայտնի այլ մեթոդների հետ:

6. Աբրահամյան Ա. Հ. Ռեզերվուարներից վթարային արտանետումների հաշվարկի ավտոմատացման մասին / Հայ. պետ. ճարտարագիտ. համալս.: - 1998. - 9 էջ, 4 նկ.: - Մատենագր. 4 ան.: - Ռուս.: - Ավանդ. է ՀայԳՏԼԳՀԻ-ում 05.08.98, թիվ 114 - Ap98

Դիտարկված են տեխնածին աղետների հետևանքների ավտոմատացված կանխագուշակման համակարգերի ստեղծման ընդհանուր հարցերը փորձագիտական համակարգերի և որոշումների ընդունմանն օժանդակող համակարգերի կառուցման սկզբունքների օգտագործման միջոցով: Բնարկված են երկխոսության սցենարի և սխալների հսկման ներառված համակարգի ստեղծման հարցերը կոնկրետ օրինակի վրա: Առաջարկված է թունավոր քիմիական նյութեր պարունակող ռեզերվուարներում վթարների հետևանքով տեղի ունեցող գործընթացների հաշվարկի ալգորիթմացման մոտեցում:

УДК 159.9

ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ

7. Մալոյան Ջ. Ա. Հայկական մանկավարժական բուհի դպրոցական և բանասիրական ֆակուլտետների ուսանողների

մասնագիտական ուղղվածության մակարդակների մասին / Հայկ. պետ. մանկ. ին-տ: - Երևան, 1998: - 9 էջ, 3 աղ.: - Մատենագր. 16 ան.: - Ռուս.: - Ավանդ. է ՀայԳՏԼԳՀԻ-ում 31.07.98, թիվ 108 - Ap98

Ուսումնասիրվել է երկու ֆակուլտետների՝ դպրոցական և բանասիրական, ուսանողների պրոֆուդվածությունը ուսուցման սկզբնական և վերջնական էտապներում: Ստացված տվյալների վերլուծությունը ցույց է տվել, որ դպրոցական ֆակուլտետի ուսանողների պրոֆուդվածությունն ավելի բարձր է, քան բանասիրականինը: Ավարտական կուրսերում պատկերն այլ է, երկու ֆակուլտետում էլ պրոֆուդվածության մակարդակը միանման է, միջինից փոքր ինչ ավելի: Պրոֆուդվածության մակարդակի մեծացումը պայմանավորված է մասնագիտության նկատմամբ բավարարվածության և պատրաստակամության դասիչի ցածրացմամբ դպրոցական ֆակուլտետի թույլ ուսանողների մոտ և, ընդհակառակը, այդ ցուցանիշների բարձրացմամբ բանասիրականում /բացի գերա-գանցիկներից/: Կատարված ուսումնասիրությունները հնարավորություն են ընձեռում ընդունել, որ բանասիրական ֆակուլտետում ամենաթույլը համարվում է մասնագիտության ընտրության բլոկը, իսկ դպրոցականում՝ շրջանավարտների մանկավարժական պրակտիկայի և աշխատանքի տեղավորման բլոկը: Այդ կապակցությամբ առաջարկվում է ուժեղացնել անհատական մոտեցումը երկու ֆակուլտետներում՝ բարձրացնելու մանկավարժական կադրերի պատրաստման մակարդակը այդ ֆակուլտետներում: Նկատի ունենալով ուսման և մասնագիտական մոտիվացիայի անորոշության դիագնոստիկ և պրոգնոստիկ նշանակությունը /Մատոյան Ջ. Ս., 1998թ./ հետազոտությունը կատարվել է, օգտագործելով մասնագիտական ուղղվածության մակարդակը և նրա անորոշության աստիճանը:

8. Մանթրոսյան Կ. Հ., Հարությունյան Լ. Գ., Պետրոսյան Հ. Գ., Սալախիյան Ս. Ա., Զոչարյան Ն. Ս., Ասլանյան Մ. Վ., Միքայելյան Ֆ. Բ. 6,5-10 տարեկան երեխաների ինտելեկտուալ զարգացման գործակցի տարիքային առանձնահատկություն-ները ՀՀ-ում (ըստ Ջ.Ս.Ռավենի „Բարդացող առաջադրանք-ները, թևատի) / Հայկ. պետ. մանկ. ին-տ: - Երևան, 1998: - 8 էջ, 3 աղ.: - Մատենագր. 12 ան.: - Ռուս.: - Ավանդ. է ՀայԳՏԼԳՀԻ-ում 31.07.98, թիվ 109-Ձ98

Խորհրդային հոգեբանության մեթոդաբանական դիրքերից ելնելով եւ փորձարարական նյութերի հիման վրա քննարկվում են երեխաների մտավոր կարողությունների ձեւավորման առանձնահատկությունները կենսազենետիկական եւ սոցիո-զենետիկական գործոնների միաժամանակյա ներգործման պայմաններում: Տրվում են մտավոր զարգացման մակարդակի տարիքային փոփոխությունները եւ զարգացման բնույթը՝ հոգեկանի զարգացման անհամապատասխանությունը կենսաբանականին, եւ զարգացման անհամաչափությունը՝ ընթացքը կանգնելով եւ թռիչքներով: Ըստ զարգացման տեմպի առանձնագ-վում է 3 փուլ՝ դանդաղ զարգացման /6,5-8 տարեկաններ/, սննդիտիվ շրջան /8 եւ 9 տարեկաններ/ եւ զարգացման կումուլյացիայի փուլ /9,5-10 տարեկաններ/: Զարգացումը հետերոխորոն է, պայմանավորված երեխաների գենետիկական եւ անհատական տարբերություններով: Տարբեր երեխաներ զարգացման նույն մակարդակին հասնում են տարբեր տարիքում, որը եւ պայմանավորում է տարիքային ընդգծված սահմանների բացակայությունը: Բերվում է ձԳ -ի տեղայնացված տարիքային սանդղակը:

9. Մանթրոսյան Կ. Հ., Հարությունյան Լ. Գ., Պետրոսյան Հ. Գ., Սալախիյան Ս. Ա., Զոչարյան Ն. Ս., Ասլանյան Մ. Վ., Միքայելյան Ֆ. Բ. ՀՀ տարրական դասարանների երեխաների մտավոր կարողությունների ախտորոշման մի քանի հարցերի մասին / Հայկ. պետ. մանկ. ին-տ: - Երևան, 1998: 14 էջ, 3 աղ.: -

Մատենագր. 11 ան.: - Ռուս.: - Ավանդ. է ՀայԳՏԼԳՀԻ-ում 31.07.98, թիվ 110 - Ձ98

Հասարակության զարգացմանը զուգընթաց դպրոցական կրթությանը ներկայացվող հիմնական պահանջներից մեկը մարդու կարողությունների զարգացման եւ հաղորդվող ինֆորմացիայի համապատասխանության ապահովումն է: Այս խնդրում ելակետային է մտավոր կարողությունների, դրանց զարգացման օրինաչափությունների եւ դրանք պայմանավորող գործոնների պարզաբանումը: Շարադրված են տարրական դպրոցի տարբեր դասարանների /1-4-րդ/ երեխաների մտավոր զարգացման /ՄԶ/ օրինաչափությունների փորձարարական ուսումնասիրությունների արդյունքները, տարրական դպրոցի երեխաների ՄԶ մակարդակը եւ ուսումնական գործընթացին զուգընթաց նրա որակական եւ քանակական փոփոխությունները, ՄԶ մակարդակի կախվածությունը դասարան-ների տարիքային համարումից եւ այլն: Քննարկվում են նաեւ գենետիկական եւ սոցիալ-միջավայրային գործոնների /տարիք, էթնոս, դեմոգրաֆիա, կրթական ցենզ, սոցիալական դրություն, ուսուցում/ դերը ՄԶ մակարդակի փոփոխություններում:

УДК 33

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

10. Մամիկոնյան Ս. Ս. Քաղաքային տնտեսության եւ ինքնակառավարման հիմնախնդիրներ վախճան Տոտոյանցի աշխատություններում / ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի գիտական տեղեկատվության կենտրոն: - Երևան, 1998: - 7 էջ.: - Մատենագր. 2 ան.: - Հայ.: - Ավանդ. է ՀայԳՏԼԳՀԻ-ում 24.07.98, թիվ 98 - Ձ98

Ներկայացվում է դարասկզբին քաղաքային տնտեսության, տրանսպորտի, լուսավորության հիմնախնդիրների լուսաբանումը XX դարի առաջին կեսի հայտնի տնտեսագետ Վահան Տոտոյանցի (1875-1951) աշխատություններում: Տնտեսագետը Արևմտյան Եվրոպայի երկրների, Հյուսիսային Ամերիկայի, Ավստրալիայի և Ռուսաստանի մի շարք քաղաքների ու բնակավայրերի քաղաքային տնտեսությունների և մունիցիպալ արդյունաբերական ձեռնարկությունների մանրամասն նկարագրության հիման վրա ցույց է տալիս, թե ինչպես հանրային

տնտեսության հմուտ կազմակերպման շնորհիվ կարելի է ապահովել քաղաքների և բնակավայրերի հարստության արագ աճը և բարեկարգումը:

11. Մամիկոնյան Մ. Մ. Քաղաքատնտեսության մի շարք կատեգորիաների լուսաբանումը Վահան Տոտոյանցի աշխատություններում / ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի գիտական տեղեկատվության կենտրոն: - Երևան, 1998: - 11 էջ.: - Մատենագր. 4 ան.: - Հայ.: - Ավանդ. է ՀայԳՏԼԳՀ-ում 24.07.98, թիվ 99 - Ap98

Ներկայացվում են ականավոր տնտեսագետ Վահան Տոտոյանցի տեսակետները աշխատանք, աշխատակցություն, արտադրություն, կապիտալ, շահույթ, սնփականություն, սպառում, արժեք, գին և այլ քաղաքատնտեսական կատեգորիաների մասին: Առանձնապես ուշագրավ է տնտեսագետի կողմից աշխատանքի և կապիտալի հաշտեցման, ինչպես նաև արտադրության և սպառման փոխհարաբերությունների մեկնաբանությունը:

12. Միսկարյան Մ. Գ. Հանրակրթական դպրոցների աշակերտների ուսումնական ծանրաբեռնվածության հիմնահարցերը և դրանց հաղթահարման ուղիները / Եր. օտար լեզուների պետ. ին-տ: - Երևան, 1998: - 4 էջ: - Ռուս.: Ավանդ. է ՀայԳՏԼԳՀ-ում 31.07.98, թիվ 107 - Ap98

Բացահայտվում են Երևան քաղաքի հանրակրթական դպրոցների աշակերտների ուսումնական ծանրաբեռնվածության հիմնական պատճառները: Այդ խնդրի լուծման ուղի- ները երևում են ուսուցման կազմակերպիչների ունակու- թյան մեջ՝ օպտիմալ կերպով բաշխելու ուսումնական ժամանա-

$$\left\{ \frac{s!}{2\pi i} \cdot \frac{1}{(z - \lambda_k)^{s+1}} \right\}$$

ակը յուրաքանչյուր առարկայի թեմաների և առարկաների շաբաթական ծանրաբեռնվածության միջև: Տարբեր երկրների ուսուցիչ-ների բազմաթիվ հետազոտությունները վկայում են ծանրաբեռնվածության վնասակար ազդեցությունը աշակերտ-ների առողջության և մտավոր կարողությունների վրա: Բերվում է նրանց փորձը ամբողջ ուսումնական գործընթացում աշակերտների բարձր աշխատունակությունն ապահովելու ուղղու-թյամբ: Որպեսզի դպրոցը դառնա ոչ միայն գիտելիքների, այլ նաև առողջության դարբնոց, առաջարկվում է փոխել ուսուցչի և աշակերտի փոխհարաբերությունները, ուժեղացնել ժողովրդա- վարական գործընթացների արմատավորումը դպրոցում:

YDK 51

ՄԱԹԵՄԱՏԻԿԱ

13 . Այվազյան Կ. Բ. Հարթ գծերի զույգերով մոդելավորվող մակերևույթներ / Հայ. պետ. ճարտարագիտ. համալս.: - Երևան, 1998: - 12 էջ, 6 նկ.: - Մատենագր. 2 ան.: - Ռուս.: - Ավանդ. է ՀայԳՏԼԳՀ-ում 05.06.98, թիվ 83 - Ap98

Առաջարկվում է եռաչափ տարածության մակերևույթների երկրաչափական մոդելավորման մեթոդ: Մոդելավորումն իրականացվում է հարթության հատուկ՝ "երեք" կոորդինատների համակարգի օգնությամբ: Մակերևույթների մոդելների կառուցման ալգորիթմը հեշտությամբ փոխակերպվում է ծրագրերի՝ նրանց մեքենայական վերարտադրման համար: "Երեք" կոորդինատների համակարգի սեյմոված տարրերի դեպքում հարթության կետերի երկչափ բազմությունը արտապատկերում է եռաչափ տարածության մակերևույթները որպես կետերի երկչափ բազմություններ: Մակերևույթի մոդելը երկու հարթ գծեր են:

14. Մարտիրոսյան Մ. Ս. Երկօրթոգոնալ վերլուծություն- ների հավասարաչափ գումարում ըստ էքսպոնենտների եւ շաղիռնալ ֆունկցիաների ոչ լրիվ համակարգի / Եր. պետ. համալս.: - Երևան, 1998: - 23 էջ: - Մատենագր. 15 ան.: - Ավանդ. է ՀայԳՏԼԳՀ-ում 15.07.98, թիվ 93 - Ap98

Դիտարկվում են ֆունկցիաների

$$\left\{ \frac{s!}{2\pi i} \cdot \frac{z^s}{(1 - \alpha_k z)^{s+1}} \right\}$$

եւ $\{x^s e^{-\lambda x}\}$ ոչ լրիվ համակարգեր համապատասխանաբար $H_{p+}^{p+} (1 < p < \infty)$, $H^p (1 < p < \infty) \in L^p (0, \infty)$, $1 < p \leq 2$

տարածություններում: Ապացուցվում է, որ այդ համակարգերի ֆունկցիաների վերջավոր գծային կոմբինացիաներով մոտարկվող ֆունկցիաները հավասարաչափ մոտարկելի են իրենց երկօրթոգոնալ վերլուծությունների գումարմամբ $C \setminus \{\lambda_k\}$, $C \setminus \{\alpha_k^{-1}\}$ եւ C բազմությունների ներսում:

YDK 53

ՖԻԶԻԿԱ

15. Սարգսյան Ա. Յ. , Վարդանյան Կ. Կ. , Բաղդասարյան Զ. Վ., Բեժանովա Լ. Ս., Աբրահամյան Է. Բ., Յայլոյան Ս. Մ. Սնգնետեղելատրիկ բինար համակարգերի բաղադրիչների կոնցենտրացիայի եւ մոլեկուլյար կառուցվածքի ազդեցությունը սպոնտան բենեռացման մեծության վրա / ֆիզիկայի կիրառական պրոբլեմների ին-տ, Հայ. պետ. ճարտարագիտ. համալս.: - Երևան 1998 : - 6 էջ, 4 նկ., 1 աղ.: - Մատենագր. 5 ան.: - Ռուս. - Ավանդ. է ՀայԳՏԼԳՀ-ում 27.08.98, թիվ 118 - Ap98

Կատարված է սնգնետեղելատրիկ բինար համակարգում բաղադրիչների մոլեկուլյար կառուցվածքի եւ խիրալային ավելցուկների կոնցենտրացիայի սպոնտան բենեռացման մեծության վրա ազդեցության հետազոտություն: Բացահայտված է սմեկ-տիկ C-մատրիցներում խիրալային ավելցուկների կողմից մա-կածված սպոնտան բենեռացման մեծության խիրալային ավելցուկների կոնցենտրացիայից ունեցած կախվածությունը : Առա-ջարկված է այս կախվածությունը բացատրող մոդել: Յույց է տրը- ված, որ բինար համակարգերում սպոնտան բենեռացման առա-ջացման համար տեսության կողմից խիրալային ավելցուկի մոլեկուլյար կառուցվածքի վրա դրված անհրաժեշտ պայման-ները միշտ չէ, որ իրագործվում են:

16. **Մարգարյան Ա. Յ.**, Վարդանյան Կ. Կ. Սեզնետեղևկտրիկ բինար համակարգում դոմենային պատկերի հետազոտությունը / ֆիզիկայի կիրառական պրոբլեմների ին-տ, Հայ. պետ. ճարտարագիտ. համալս.: - Երևան, 1998 : - 4 էջ, 5 նկ.: - Մատենագր. 2 ան.: - Ռուս.: - Ավանդ. է ՀայԳՏԼԳՀ-ում 27.08.98, թիվ 119 - Ap98

Կատարված է ստաստիկ եւ դինամիկ բնույթների սեզնետեղևկտրիկ դոմենային կառուցվածքների առաջացման հետազոտություն խիրալային ավելցուկներով հեղուկ բյուրեղային բի-նար համակարգերում: Հաստատված է դոմենների պար-բերության կախվածությունը սպոնտան բեռնազանցման մեծու-թյունից: Հաստատված է նաև, որ սեզնետեղևկտրիկ փուլում ստաստիկ դոմենները լավ պահպանվում են՝ իրականանում է օպտիկական հիշողություն, իսկ դինամիկ դոմենների պարբերության փոփոխական դաշտի լայնույթի արժեքներից ունեցած կախվածությունը նման է այս կախվածությանը խոլեստերիկներում: Առաջարկված են դոմենային կառուցվածքների կազմավորման մոդելներ:

17. **Մարգարյան Ա. Յ.**, **Բաղդասարյան Ջ. Վ.** Որոշ ուժեղ եւ թույլ բեռնազանցումով նեմատիկ հեղուկ բյուրեղային միացություն-ներում եւ նրանց խառնուրդներում մոլեկուլյար կառուցվածքի ազդեցությունը դիէլեկտրիկ հատկությունների եւ ջերմակայունության վրա / ֆիզիկայի կիրառական պրոբլեմների ին-տ, Հայ. պետ. ճարտարագիտ. համալս.: - Երևան, 1998.: - 6 էջ, 4 նկ.: - Մատենագր. 5 ան.: - Ռուս.: - Ավանդ. է ՀայԳՏԼԳՀ-ում 27.08.98, թիվ 120 - Ap98

Կատարված է ուժեղ եւ թույլ բեռնազանցումով նեմատիկ միացություններում դիէլեկտրիկ հատկությունների վրա մոլեկուլ-յար կառուցվածքի ազդեցության հետազոտություն: Յույց է տրր-ված, որ նեմատիկների մոլեկուլների կառուցվածքային առանձնահատկությունները էապես ազդում են դիէլեկտրիկ հատկու-

թյունների վրա: Յույց է տրված նաև նեմատիկ հեղուկ բյուրեղային խառնուրդներում սմեկտիկ փուլերի առաջացման վրա մոլեկուլյար կառուցվածքի եւ բաղադրիչների կոնցենտրացիայի ազդեցությունը: Առաջարկված է ինդուկցված փուլերի առաջացումը բացատրող մոդել:

18. **Մարգարյան Ա. Յ.**, **Բաղդասարյան Ջ. Վ.**, **Վարդանյան Կ. Կ.** **Բեժանովա Լ. Ս.**, **Յայլոյան Ս. Մ.** Հեղուկ բյուրեղային բինար համակարգում սեզնետեղևկտրական փուլային անցման որոշ առանձնահատկությունների հետազոտությունը / ֆիզիկայի կիրառական պրոբլեմների ին-տ, Հայ. պետ. ճարտարագիտ. համալս.: - Երևան, 1998.: - 4 էջ, 4 նկ.: - Մատենագր. 2 ան.: - Ռուս.: - Ավանդ. է ՀայԳՏԼԳՀ-ում 27.08.98, թիվ 121 - Ap98

Կատարված է հեղուկ բյուրեղային բինար համակարգում սեզնետեղևկտրական փուլային անցման որոշ առանձնահատկությունների հետազոտություն: Յույց է տրված, որ փուլային անցման ընթացքում ցածր հաճախականությունների տիրույթում տեղի են ունենում ռելակսացիոն գործընթացներ, ինչը կապված է արտաքին էլեկտրական դաշտի հետ մոլեկուլների հաստատուն դիպոլային մոմենտների փոխազդեցությամբ պայմանավորված մոլեկուլների մեծ խմբերի տեղաշարժման հետ: Յույց է տրված նաև, որ հետազոտվող համակարգում սպոնտան բեռնազանցման առաջացման համար, հիմնականում, պատասխանատու են ֆլեքսուէլեկտրիկ էֆեկտները:

УДК 54/57

ԿԵՆՍԱԲԱՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

19. **Վարդանյան Վ. Ա.** Խխունջի առանձնացված սրտի ազնեիլխոլինային զգայունությունը կախված է սրտամկանի

երկարությունից / ՀՀ ԳԱԱ կենսաֆիզիկայի կենտրոն: - Երևան, 1998: - 15 էջ, 6 նկ.: - Մատենագր. 10 ան.: - Հայ.: - Ավանդ. է ՀայԳՏԼԳՀ-ում 17.06.98, թիվ 95 - Ap98

Սրտի վերջնական դիաստոլիկ ծավալից կախված նրա ֆունկցիոնալ և ֆիզիոլոգիական հատկությունները դեռևս վատ են ուսումնասիրված: Խլսունջի առանձնացված, իզոտոնիկ ինքնաբերաբար կծկվող սրտի վրա ուսումնասիրվել է նրա քնննողայունությունը սրտամկանի երկարության տարբեր արժեքների պայմաններում՝ այն արհեստականորեն ձգելու միջոցով: Յուրյ է տրվել, որ իզոտոնիկ կծկվող սրտի վրա ազնտիլլոսիինի կարճատև կիրառամբ (ապլիկացիա) պայմանավորված բացասական ինոտրոպ երևույթը փոքրանում է սրտամկանի երկարությունը փոքրացնելիս, իսկ մեծացնելիս՝ մեծանում: Ենթադրվում է, որ այն պայմանավորված է կարդիոմիոցիտների մակերևույթի մակերեսի փոփոխություններով:

20. Հունանյան Ա. Շ. Մորելի թույնի ազդեցությունը (ՄԹ) խաղողի խլսունջի (Helix pomatia) սրտամկանի կծկողականության վրա / ՀՀ ԳԱԱ կենսաֆիզիկայի կենտրոն.: - Երևան, 1998: - 13 էջ, 5 նկ.: - Մատենագր. 3 ան.: - Անգլ.: - Ավանդ. է ՀայԳՏԼԳՀ-ում 12.08.98, թիվ 115 - Ap98

Ուսումնասիրվել է մորելի թույնի ազդեցությունը (ՄԹ) խաղողի խլսունջի (Helix pomatia) սրտամկանի կծկողականության և Na-K պոմպի վրա: ՄԹ-ի 1 մգ/մլ կոնցենտրացիան բերում է սրտամկանի աշխատանքի կանգնեցմանը կծկման փուլում: Երեք ժամվա ընթացքում սիրտը մնում է կծկված վիճակում: ՄԹ-ի 0,5 մգ/մլ կոնցենտրացիան բերում է սրտամկանի կծկման ամպլիտուդայի նվազմանը $28,6 \pm 9,4\%$, որից հետո կծկման ամպլիտուդան անընդհատ աճում է, հասնելով $167,1 \pm 12,6\%$: Երեք ժամից հետո ամպլիտուդան հավասարվում է $141,4 \pm 12,6\%$: ՄԹ-ի 0,1 մգ/մլ կոնցենտրացիան ունի նմանատիպ ազդեցություն, բայց ամպլիտուդան լրիվ վերականգնվում է:

կանգնվում է: 0,01 մգ/մլ և ցածր կոնցենտրացիաները չունեն ազդեցություն: Կալիումազուրկ լուծույթում, երբ Na-K պոմպը ճնշված է, ՄԹ-ի 0,1 մգ/մլ կոնցենտրացիան նվազեցնում է սրտի կծկման ամպլիտուդան առանց հետագա փոփոխության, Ռ-ինգերի նորմալ լուծույթում: ՄԹ-ի N1 կոմպոնենտը փոքրացնում է, իսկ N2 և N3 մեծացնում է սրտի կծկման ամպլիտուդան: N8 և N10 կոմպոնենտները Ռ-ինգերի լուծույթում չեն լուծվում: Մնացած կոմպոնենտները ազդեցություն չունեն:

21. Ստեփանյան Ռ. Ս. Ֆիզիոլոգիական լուծույթի մեխանիկական տատանումների ազդեցությունը խլսունջի սրտի կծկողականության վրա / ՀՀ ԳԱԱ կենսաֆիզիկայի կենտրոն.: - Երևան, 1998: - 15 էջ, 5 նկ.: - Մատենագր. 9 ան.: - Ռուս.: - Ավանդ. է ՀայԳՏԼԳՀ-ում 12.08.98, թիվ 116 - Ap98

Ներկայացված են տվյալներ Helix pomatia խլսունջի մեկուսացված, ներսից պերֆուզացված սրտի կծկողականության վրա պերֆուզատի հոսքի ազդեցության վերաբերյալ: Սրտի ակտիվության կախվածությունը պերֆուզատի հոսքից առավել էֆեկտիվ է կալիումազուրկ լուծույթում, երբ Na,K-պոմպը ինակտիվացված է: Որոշվել է ազնտիլլոսիինով (5×10^{-9} M) Helix pomatia-ի սրտի կծկումների ամպլիտուդի ճնշման կախվածությունը մեխանիկական տատանումներով (ՄՏ) (4,10,20, և 50 Հց; 90 դԲ) պերֆուզատի մշակումից: 4 Հց հաճախակա-նությամբ ՄՏ-ով մշակված լուծույթի օգտագործման ժամանակ ազնտիլլոսիինով ամպլիտուդայի նվազումը ավելի քիչ է արտահայտված: Նմանօրինակ արդյունք է ստացվում նաև օաբաինով (10^{-4} M) Na^+ , K^+ - պոմպի ինակտիվացված դեպքում: Ստացված տվյալները թույլ են տալիս հաստատել, որ բջջի ջրային միջավայրը կարող է հանդես գալ որպես թիրախ, որի միջոցով ՄՏ կարող են հաղորդվել բջջի մետաբոլիկ պրոցեսների կասկադին:

УДК 55

ԵՐԿՐԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

22. Մխիթարյան Գ. Մ., Մինասյան Ռ. Ս. Ստորերկրյա ջրահոսքերից ջրառման ազդեցության գնահատումը Արարատյան արտեզյան ջրավազանի գնտնաջրերի և ճնշումային ջրերի ռեժիմների վրա մաթեմատիկական մոդելավորման մեթոդով / ՀՀ Ջրային հիմնահարցերի և հիդրոտեխնիկայի ԳԱՄ: - Երևան, 1998: - 11 էջ, 2 նկ.: - Մատենագր. 2 ան.: - Ռուս.: - Ավանդ. է ՀայԳՏԼԳՀ-ում 29.05.98, թիվ 82 - Ap98

Դիտարկված են, մաթեմատիկական մոդելավորման արդյունքները գնահատելու համար, լեռնային և նախալեռնային շրջաններում ստորերկրյա ջրահոսքերից կենտրոնացված ջրառումների ազդեցությունը Արմավիրի, Արտաշատի և Արաքսավանի իջվածքների ստորերկրյա ջրերի ռեժիմների վրա: Խնդիրը լուծված է IBM հաշվիչ մեքենայի վրա, օգտագործելով „Topas,, ծրագիրը: Պարզվել է, որ ճնշումային ջրերի իջնումների մեծությունները / 30-40 մ / անգամ առավելագույն ջրառումների ժամանակ / 20մ³/ վրկ՝ Արմավիրի, 6,5մ³/վրկ՝ Արտաշատի և Արաքսավանի իջվածքներից/ գտնվում են թույլատրելի սահմաններում, ընդ որում գնտնաջրերի մակարդակի իջնումը կազմում է մոտ 1մ:

УДК 581. 5

ԷԿՈԼՈԳԻԱ

23. Կասյան Վ. Լ. Ներքին այրման շարժիչների արտա-նետած գազերի թունավորության նվազեցումը և վառելիքային բնութագրերի բարձրացումը / Հայ. պետ. ճարտարապետ.

համալս.: - Երևան, 1998: - 6 էջ, - Մատենագր. 3 ան.: - Ռուս.: - Ավանդ. է ՀայԳՏԼԳՀ-ում 01.05.98, թիվ 77 - Ap98

Քննարկվել են ներքին այրման շարժիչների արտանետած գազերի կողմից օդային տարածության (շրջակա միջավայրի) աղտոտման հիմնախնդրի որոշ հարցեր: Հիմնվելով ներքին այրման շարժիչների գազերում թունավոր բաղադրիչների՝ որպես թերի այրման արգասիքների, առաջացման ֆիզիկա-քիմիական վերլուծության վրա, առաջարկված է սարքավորում, որում կիրառվում է օդոնի ազդեցությունը բանած գազերի վրա: Նախնական փորձերի արդյունքները վկայում են, որ ՎԱՁ 2106 և ՎԱՁ 2105 մակնիշների մեքենաների արտանետած գազերում CO-ի պարունակությունը համապատասխանորեն նվազել է 4...5% -ից մինչև 0,8...1,2%:

УДК 620.9

ԷՆԵՐԳԵՏԻԿԱ

24. Առաքելյան Ա. Մ., Եղիազարյան Լ. Վ., Սաֆարյան Վ. Ս. Էլեկտրաէներգիայի կորուստների հաշվարկում բեռի անհավասարաչափության գրաֆիկի կիրառումը / "Էներգետիկայի ինստիտուտ" ՊՓԲԸ: - Երևան, 1998: - 13 էջ, 6 նկ.: - Մատենագր. 4 ան.: - Ռուս.: - Ավանդ. է ՀայԳՏԼԳՀ-ում 03.07.98, թիվ 90 - Ap98

Դուրս են բերված բեռների անհավասարաչափության գործակիցների գրաֆիկների հաշվարկի բանաձևերը, որոնք օգտագործվում են արդյունաբերական հաճախության նռաֆազ էլեկտրացանցերում էլեկտրաէներգիայի կորուստները հաշվելիս՝ հաշվարկային ժամանակամիջոցում էլեկտրաէներգիայի տրված ծախսի դեպքում: Անհավասարաչափության գործակիցները որոշվում են խիստ հաշվարկով, բնորոշ 24 ժամվա համար, ըստ

ռեժիմի լրիվ պարամետրերի: Ոչ լրիվ ռեժիմային պարամետրերի դեպքում տրված են նշված գործակիցների մոտավոր հաշվարկի բանաձևերը:

25. Ծովյան Ռ. Վ., Ղուսալյան Հ. Ա., Էլեկտրաէներգիայի հեռանկարային միջինացված սակագների որոշումը էներգահամակարգի զարգացման ծրագրի հիման վրա / "Էներգետիկայի ինստիտուտ" ՊՓԲԸ: - Երևան, 1998:- 6 էջ, 1 նկ., 2 աղ.: - Մատենագր. 1 ան.: - Հայ.: - Ավանդ. է ՀայԳՏԼԳՀ-ում 03.07.98, թիվ 91 - Ap98

Նվիրված է էլեկտրաէներգետիկայի հեռանկարային սակագների որոշման մեթոդին էներգահամակարգի զարգացման որոշակի ծրագրի իրականացման դեպքում: Սակագների որոշման հիմքում դրված է առաջվադրված նորմայով շահույթ ստանալու պայմանը՝ իրականացվող ներդրումների դիմաց: Բերված են միասնական սակագնի հաշվման բանաձևերը ամբողջ հաշվարկային ժամանակահատվածի համար եւ սակագնի որոշման օրինաչափ աճումը՝ ունենալով ելակետ սկզբնական ժամանակահատվածի համար: Բերված է նաեւ թվային օրինակ առաջարկվող մեթոդի համար եւ սակագների փոփոխման գրաֆիկը՝ կախված ժամանակահատվածից:

26. Արսենյան Ռ. Փ. Հայաստանի Հանրապետության բնակավայրերի ջերմամատակարարման զարգացման ուղիները / "Էներգետիկայի ին-տ" ՊՓԲԸ: - Երևան, 1998: - 15 էջ, 2 աղ.: - Հայ.: - Ավանդ. է ՀայԳՏԼԳՀ-ում 28.07.98, թիվ 103 - Ap98

Նվիրված է ՀՀ բնակավայրերի ջերմամատակարարման հետագա զարգացման ուղիներին: Բերված են ՀՀ բնակավայրերի կլիմայական պայմանները (ջեռուցման տեսանկյունից) եւ նշվում են ջերմամատակարարման համակարգերի տարբեր օղակների արմատական վերակառուցման ուղիները:

27. Արշակյան Ա. Շ., Հովսեփյան Ա. Մ., Մաթևոսյան Վ. Ռ. Էլեկտրական եւ ջերմային էներգիաների ինքնարժեքի հաշվարկման յուրահատկությունները ՋԷԿ-երում / "Էներգետիկայի ին-տ" ՊՓԲԸ: - Երևան, 1998: - 5 էջ, 4 աղ.: Մատենագր. 6 ան.: - Ռուս.: - Ավանդ. է ՀայԳՏԼԳՀ-ում 28.07.98, թիվ 104 - Ap 98

Առաջարկված է ջերմային եւ էլեկտրական էներգիաների ինքնարժեքի հաշվարկման մեթոդ, որը հիմնված է էլեկտրականի արտադրամասերի միջեւ ըստ հողվածների ծախսերի բաշխման վրա: Երևանի եւ Հրազդանի ՋԷԿ-երի օրինակով առաջարկված մեթոդով կատարված են ջերմային եւ էլեկտրական էներգիաների ինքնարժեքի հաշվարկման աշխատանքները: Հաշվարկի արդյունքները ներկայացված են աղյուսակի ձևով: Յույց է տրված, որ հաշվարկային ծախսերի բաշխման ավանդական մեթոդի համեմատությամբ, ջերմային էներգիայի ինքնարժեքի էական իջեցման պարագայում, էլեկտրական էներգիայի ինքնարժեքն աննշան է բարձրացել:

28. Բոյախյան Ա. Ֆ., Մուրադյան Ռ. Ջ . Էլեկտրաէներգետիկական համակարգի (ԷԷՀ) զարգացման պլանավորման որոշ հարցեր / "Էներգետիկայի ին-տ" ՊՓԲԸ: - Երևան, 1998: - 5 էջ: - Ռուս.: - Ավանդ. է ՀայԳՏԼԳՀ-ում 28.07.98, թիվ 105 - Ap98

Նվիրված է ԷԷՀ-ի զարգացման պլանավորման մեթոդների արդիականացման հարցերին: Բերված են բազային կոմպյուտերային մոդելներ, որոնք նախատեսված են էլեկտրասպասման կանխագուշակման եւ ԷԷՀ-ի զարգացման պլանավորման համար: Որոշված են ԷԷՀ-ի զարգացման չափանիշները : Ներկայացված է մեթոդիկա, որը, հիմնվելով ռեգրեսիոն վերլուծության եւ գրադիենտային մեթոդների վրա, կազմակերպում է ԷԷՀ-ի զարգացման օպտիմալ պլանի որոնման ավտոմատ եւ հաջորդական գործընթացը:

29. Առաքելյան Ա. Մ., Եղիազարյան Լ. Վ., Սաֆարյան Վ. Ս. Էլեկտրագանցի ճյուղերում ցանցի յուրաքանչյուր բեռնվածքով կամ հավասարիչ հոսանքով պայմանավորված էլեկտրական

հզորության եւ էներգիայի կորստի հաշվարկային մասնաբաժնի որոշում / "Էներգետիկայի ին-տ" ՊՓԲԸ: - Երևան, 1998: - 7 էջ, 3 նկ.: - Ռուս.: - Ավանդ. է ՀայԳՏԼԳՀԻ-ում 28.07.98, թիվ 106 - Ap98

Ստացված են էլեկտրագանցի ցանկացած ճյուղում ցանցի յուրաքանչյուր բեռնվածքով կամ այդ ճյուղով անցնող հավասարիչ հոսանքով պայմանավորված էլեկտրական հզորության եւ էներգիայի կորստի հաշվարկային մասնաբաժնի որոշման բանաձևեր: Բերված են այդ կորուստների հաշվարկի օրինակներ:

УДК 621

ՄԵՔԵՆԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ

30. Կարոյան Վ. Ռ. Մնացորդային լարումների որոշումը "Al-Zn" համաձուլվածքի մշակման ժամանակ / Հայ. պետ. ճարտարագիտ. համալս.: - Երևան, 1998: - 6 էջ, 4 նկ.: - Մատենագր. 7 ան.: - Ռուս.: - Ավանդ. է ՀայԳՏԼԳՀԻ-ում 27.07.98, թիվ 100 - Ap98

Դիտարկվում է կտրման պայմանների ազդեցությունը "Al-Zn" համաձուլվածքի մշակման հետևանքով առաջացած մնացորդային տեխնոլոգիական լարումների վրա: Միայն կտրման ուժից առաջացած մնացորդային լարումների ուսումնասիրության համար հեղինակներն օգտագործել են ԲՀՀ եւ կիրառել օղակների մեթոդը: Փորձերը կատարվել են 2^3 տիպի փորձերի պլանավորման մաթեմատիկական մեթոդի օգնությամբ: Հետազայում, որոշելով այդ մնացորդային լարումները,

հեղինակներն առաջարկել են $\sigma_{0,2} = (v,s,t)$ կախվածության նոր մաթեմատիկական մոդելը եւ կառուցել գրաֆիկներ: Ինչպես ցույց են տալիս գրաֆիկները, փոքր կտրման ռեժիմների դեպքում մշակվող նյութի մակերևութային շերտերում առաջանում են ձգող մնացորդային լարումներ, որոնք կտրման ռեժիմների մեծացման ժամանակ վերափոխվում են սեղմող լարումների: Ընդհանրացնելով վերոնշյալը, հանգում ենք այն եզրակացության, որ "Al-Zn" համաձուլվածքը մշակելիս ավելի նպատակահարմար է ստանալ սեղմող մնացորդային լարումներ, քան թե ձգող:

31. Բաղդասարյան Հ. Բ., Կարոյան Վ. Ռ., Կարոյան Ա. Ռ. Մնացորդային լարումների տարածման խորության որոշումը "Al-Zn" համաձուլվածքի մշակման ժամանակ / Հայ. պետ. ճարտարագիտ. համալս.: - Երևան, 1998: - 4 էջ, 2 նկ.: - Մատենագր. 5 ան.: - Ռուս.: - Ավանդ. է ՀայԳՏԼԳՀԻ-ում 27.07.98, թիվ 101 - Ap98

Դիտարկվում է մնացորդային տեխնոլոգիական լարումների տարածման հարցը "Al-Zn" համաձուլվածքի մշակման ժամանակ, որը ՀԼԳ 32/54-2,6 անտենայի մեծ հայելու հիմնական նյութն է: Այդ հարցի ուսումնասիրության համար երկու նմուշների վրա կատարված են փորձեր, օգտագործելով օղակների եւ նմուշների խաժատման մեթոդները: Առաջին նմուշի համար ընդունվել են փոքր կտրման ռեժիմներ, իսկ երկրորդի համար՝ ավելի մեծ: Որոշվել են միաժամանակ կտրման ուժից եւ ջերմաստիճանից առաջացած մնացորդային տեխնոլոգիական լարումները եւ կառուցվել է $\sigma_{0,2}$ կախվածության գրաֆիկը "a" խաժատման շերտի մեծությունից: Ինչպես ցույց է տալիս գրաֆիկը, փոքր կտրման ռեժիմների դեպքում մշակվող նյութի մակերևութային շերտերում առաջանում են ձգող մնացորդային լարումներ, որոնք տարածման խորության մեծացմամբ վերափոխվում են սեղմող լարումների, իսկ մեծ կտրման ռեժիմների դեպքում մակերեսային առաջանում են սեղմող

լարումներ, որոնք տարածման խորության մեծացմամբ վերափոխվում են ձգող լարումների:

32. Բաղդասարյան Ն. Բ., Կարոյան Վ. Ռ., Կարոյան Ա. Ռ. Տեխնոլոգիական մնացորդային լարումների առաջացման վրա կտրման պայմանների ազդեցության ուսումնասիրությունը շրջատաշման ժամանակ / Տայ. պետ. ճարտարագիտ. համալս.: - Երևան, 1998: - 7 էջ, 3 նկ.: - Մատենագր. 8 ան.: - Ռուս.: - Ավանդ. է ՀայԳՏԼԳՀ-ում 27.07.98, թիվ 102 - Ap98

Դիտարկում է տեխնոլոգիական մնացորդային լարումների առաջացման վրա կտրման պայմանների ազդեցության հարցը շրջատաշմիս: Տարբեր գրական աղբյուրներից պարզվում է, որ տեխնոլոգիական մնացորդային լարումները կարող են առաջանալ ինչպես կտրման ուժի ազդեցությունից, այնպես էլ կտրման գոտում անջատված ջերմաստիճանից: Այդ իմաստով ընդհանուր մնացորդային տեխնոլոգիական լարումները հանդիսանում են նրկու տեսակի աղբյուրներից առաջացած լարումների գումար: Կիրառելով 2^3 աստիճանի գործոնային փորձերի պլանը, հեղինակներն առաջարկում են կտրման ընթացքում գրանցել կտրման ուժերի բաղադրիչների եւ ջերմաստիճանի արդյունքները եւ նրանցով, առաջարկված նոր մեթոդով, հաշվել ընդհանուր տեխնոլոգիական մնացորդային լարումները: Հետագայում առան-ձին-առանձին որոշված լարումներից կառուցվում են այդ լարումների եւ կտրման ռեժիմների գրաֆիկները: Ինչպես ցույց են տալիս գրաֆիկները, նրկրող տեսակի մնացորդային լարումներն ունեն սեղմող բնույթ եւ կտրման ռեժիմների մեծացմամբ նրանք նույնպես մեծանում են: Առաջին տեսակի լարումներն ունեն ձգող բնույթ եւ, հեղինակների կարծիքով, այդ լարումները առավել վտանգավոր են շահագործման ժամանակ: Ընդհան-րացնելով շարադրվածը, հեղինակները կատարում են հետևյալ եզրակացությունը, որ շրջատաշման ժամանակ ավելի նպատակահարմար է աշխատել

այնպիսի ռեժիմներով, որոնք առաջաց-նում են սեղմող տեխնոլոգիական մնացորդային լարումներ:

УДК 621.3

ԷԼԵԿՏՐԱՏԵԽՆԻԿԱ

33. Բոզոյան Շ. Ե., Սիմոնյան Ս. Հ., Բոզոյան Ե. Շ. Տրամաբանական սխեմաների տարրերի ֆունկցիոնալ ակտիվությունների հաշվման մասին / Տայ. պետ. ճարտարագիտ. համալս.: - Երևան, 1998: - 5 էջ, 1 նկ.: - Մատենագր. 4 ան.: - Ավանդ. է ՀայԳՏԼԳՀ-ում 21.05.98, թիվ 78 -Ap 98

Տրամաբանական սխեմաների տարրերի ֆունկցիոնալ ակտիվության հասկացությունը այդ սխեմաների հուսալիության ու թեստավորման ուսումնասիրության հարցերում հիմնարար դեր է խաղում: Այդ ակտիվությունը հանդիսանում է տվյալ տարրի ելքի վիճակի փոփոխության նկատմամբ սխեմայի ելքի զգայու-նության չափը: Այդ պատճառով չափազանց արդիական է սխեմայի տարրերի ֆունկցիոնալ ակտիվության հաշվման (կամ գնահատման) խնդիրը: Աշխատանքը նվիրված է այդ ակտիվությունների հաշվման դժվարությունների հաղթահարմանը:

34. Կարապետյան Ա. Ա. Չուգահեռ փոխված եւ մետաղական պատյանում ոլորված ֆազերով կաբելների լարվածության համեմատական հաշվարկը / Տայ. պետ. ճարտարագիտ. համալս.: - Երևան, 1998: - 14 էջ, 4 նկ.: - Մատենագր. 4 ան.: - Ռուս.: - Ավանդ. է ՀայԳՏԼԳՀ-ում 26.05.98, թիվ 79 - Ap 98

Բերված է զուգահեռ փոխված եւ ոլորված ֆազերով կաբելների լարվածությունների համեմատական հաշվարկը: Վերլուծական հաշվարկների եւ փորձարկումների հիման վրա կարելի է

եզրակացնել, որ ֆազերի զուգահեռ փոսան դեպքում կարելի է ապես փոքրացնել լարվածությունները:

35. Կարապետյան Ա. Ա., Միրզաբեկյան Գ. Մ. Մետաղական պատյանով եւ առանց պատյանի եռաֆազ կաբելների էլեկտրական դաշտի լարվածության հաշվարկը / Հայ. պետ. ճարտարագիտ. համալս.: - Երևան, 1998: - 7 էջ, 2 նկ.: - Մատենագր. 4 ան.: - Ռուս.: - Ավանդ. է ՀայԳՏԼԳՀ-ում 03.07.98, թիվ 92 - Ap 98

Բերված է մետաղական պատյանով եւ առանց պատյանի եռաֆազ կաբելների լարվածությունների համեմատական հաշվարկը: Վերլուծական հաշվարկների եւ փորձարկումների հիման վրա կարելի է եզրակացնել, որ առանց մետաղյա պատյանի ֆազերի զուգահեռ փոսան դեպքում կարելի է էապես փոքրացնել լարվածությունները:

УДК 621.38

ԷԼԵԿՏՐՈՆԻԿԱ

36. Ղամբարյան Ա. Ա., Մանուկյան Ս. Հ., Ղամբարյան Ա. Ա. Ոլորման մոմենտի կերպափոխման մի սկզբունքի մասին / Հայ. պետ. ճարտարագիտ. համալս.: - Երևան, 1998: -10 էջ, 5 նկ.: - Մատենագր. 5 ան.: - Հայ.: - Ավանդ. է ՀայԳՏԼԳՀ-ում 04.06.98, թիվ 76 - Ap 98

Պտտվող լիսեռներում առաջացած ոլորման մոմենտների կերպափոխման եղանակների վերլուծության միջոցով բացահայտված է ներկայումս գոյություն ունեցող ոլորման մոմենտի կերպափոխիչների թերությունները: Դիտարկված է մագնիսա-առաձգական կամրջակային մագնիսական շղթայով ոլորման մոմենտի կերպափոխիչի կառուցվածքը, որը տարբերվում է

պարզությամբ, մեծ զգայությամբ եւ ճշտությամբ: Բերված են կերպափոխիչի հիմնական տեսական առնչությունները: Կազմված են կերպափոխիչի մեխանիկական, մագնիսական եւ էլեկտրական փոխարինման սխեմաները: Տրված են ոլորման մոմենտի կերպափոխիչի էլեկտրամեխանիկական հաշվարկի հիմնական հավասարումները:

37. Փափազյան Ա. Վ., Ղուլդազարյան Կ. Ա. Փոքր լուսազգայնություն ունեցող կոորդինատային ֆոտոդնոմիչներ / Հայ. պետ. ճարտարագիտ. համալս.: - Երևան, 1998: - 12 էջ, 7 նկ.: - Մատենագր. 6 ան.: - Ռուս.: - Ավանդ. է ՀայԳՏԼԳՀ-ում 26.05 98, թիվ 81 - Ap 98

Օպտոէլեկտրոնային այն սարքերում, որոնց օգնությամբ որոշում ենք տվյալ օբյեկտի ուղղությունը, օգտագործում են կոորդինատային ֆոտոէլեկտրոնային սարքեր: Պայծառ լուսային կետերի դիրքի որոշման համար բարձր լուսազգայնություն ունեցող սարքերի օգտագործման կարիք չկա պատրաստման բարդ տեխնոլոգիա եւ կառուցվածք ունենալու պատճառով: Այդ դեպքում փոքր լուսազգայնություն ունեցող ֆոտոդնոմիչների օգտագործումը նպատակահարմար է իրենց պարզ կառուցվածով եւ պատրաստման տեխնոլոգիայով: Դիտված են մի շարք այդպիսի սարքեր՝ կոնաձեւ հայելային անոդ պարու-նակող ֆոտոէլեմենտը, կվադրանտային ֆոտոկատոդային հան-գույցով սարքը, կվադրանտային տեսքի երկրորդային էլեկտրոն-ների էմիտտերով սարքը եւ գրգռված հաղորդականությամբ աշ-լսատող կոորդինատային հանգույցներ պարունակող սարքը:

38. Գրիգորյան Գ. Է. NiSi-n-Si-TiSi₂ կառուցվածքների շահագործողական բնութագրերի հետազոտումը / Հայ. պետ. ճարտարագիտ. համալս.: - Երևան, 1998: - 13 էջ, 4 նկ.: - Մատենագր. 9 ան.: - Ռուս.: - Ավանդ. է ՀայԳՏԼԳՀ-ում 05.06.98, թիվ 84 - Ap 98

Նվիրված է NiSi-n-Si-TiSi₂ կառուցվածքների ֆոտոէլեկտրական բնութագրերի ուսումնասիրմանը կլանման սպեկտրի 0,2÷1 մկմ տիրույթում: Յույց է տրված, որ առաջարկվող կառուցվածքներն ունեն ցածր աղմուկներ, բարձր ֆոտոզայնություն, հասկապես կարճ ալիքների միջակայքում, քանի որ բազան նեղ է (~1 մկմ), եւ երկար ալիքների կլանման արդյունավետությունը համեմատաբար ցածր է: Արագագործությունը որոշվում է RC շղթայի հաստատունով եւ 10⁻¹² վրկ կարգի է: Բերված է առաջարկվող կառուցվածքների եւ գոյություն ունեցող ֆոտոռեզոնանսների պարամետրերի համեմատության աղյուսակ, որից երևում է, որ NiSi -n-Si- TiSi₂ կառուցվածքներն ունեն զգալի առավելության արագագործության, զգայության շեմերի եւ ֆոտոզայնության մեջ:

39. Բարեղամյան Գ. Վ., Մարգարյան Վ. Վ., Սիմոնյան Հ. Ռ. ԼԻՄ - ինվերտորի ելքային LC - ֆիլտրի հաշվարկը / Հայ. պետ. ճարտարագիտ. համալս.: - Երևան, 1998:- 13 էջ, 3 նկ.: - Մատենագր. 7 ան.: - Ռուս.: - Ավանդ. է ՀայԳՏԼԳՀԻ-ում 08.06.98, թիվ 85 - Ap 98

Դիտարկվում է սինիստիդալ ելքային լարմամբ եւ լայնախիւս աուլսային մոդուլյացիայով (ԼԻՄ) ինվերտորի ելքային հարթնեցնող LC - ֆիլտրի պարամետրերի մոտավոր ընտրության եղանակ: Որպես ընտրության չափանիշներ առաջարկվում է ելնել ելքային լարման տրված ոչ սինուսիդալության գործակցից եւ սպառվող հոսանքի նվազագույն լինելու պայմանից, հաշվի առնելով ֆիլտրի մուտքային հոսանքի բաբախման մակարդակը: Բերված են ֆիլտրի տարրերի լարումների եւ հոսանքների հաշվարկման արտահայտությունները:

40. Բերբերյան Վ. Է. Տեղեկատվության ստատիկ եւ դինա-միկ ձեւերի պաշտպանությունը / Հայ. պետ. ճարտարագիտ. համալս.: - Երևան, 1998: - 25 էջ, 4 նկ.: Մատենագր. 8 ան.: -Ռուս.: - Ավանդ. է ՀայԳՏԼԳՀԻ-ում 17.06.98, թիվ 86 - Ap98

Բերվում են այն հիմնական տեղեկատվական պարամետրերը, որոնք անհրաժեշտ է հաշվի առնել դեկրիպտորային միջոցների եւ կառուցվածքների, ինչպես նաեւ ծածկագրող եւ ապածածկագրող ծրագրերի, արխիվավորիչների նախագծման ժամանակ: Դիտարկված են որոնման կազմակերպման, տերմինների կշռման ու ինդեքսավորման կառուցվածքային եւ մաթեմատիկական մեթոդներ, ինչպես նաեւ մատչելիության, ծածկագրի այնպիսի կազմակերպումներ, որոնք թույլ են տալիս փոքրացնել տվյալների բազաների միմյանց նման դիրեկտորիաների անցանկալի հասանելիության հավանականությունը ու բարձրացնել ինչպես լոկալ, այնպես էլ գլոբալ տեղեկատվական-հաշվողական համակարգերի տեղեկատվական պաշտպանվածությունը: Արդյունքները կարող են օգտագործվել ոչ միայն տվյալների բազաների կառավարման համակարգերի ստեղծման գործընթացում, այլ նաեւ տեղեկատվական - որոնող համակարգերում՝ արեւմտյան կրիպտոգրաֆիկական եւ ստեղծանոգրաֆիկական ստանդարտների կիրառումով տեղեկատվության ստատիկ եւ դինամիկ ձեւերի պաշտպանության համար:

41. Փափազյան Ա. Վ., Ղուղազարյան Դ. Կ., Ղուղազարյան Կ. Ա. Մեկ կոորդինատային ֆոտոբազմապատկիչներ / Հայ. պետ. ճարտարագիտ. համալս.: - Երևան, 1998: - 10 էջ, 10 նկ.: - Մատենագր. 4 ան.: - Ռուս.: - Ավանդ. է ՀայԳՏԼԳՀԻ-ում 01.07.98, թիվ 87- Ap98

Օպտիկական ճառագայթման սպեկտրի տեսանելի եւ մոտակա ինֆրակարմիր տիրույթում ամենագալստուն ընդունիչը համարվում է ֆոտոբազմապատկիչը: Սակայն գոյություն ունեցող ֆոտոբազմապատկիչները "չեն զգում" լուսային կետի կոորդինատները: Աշխատանքում դիտված է նոր կոորդինատագայուն ֆոտոբազմապատկիչներ ստեղծելու սկզբունքը: Նրա պլենագացիոն բնութագրի տեսքը կախված է ինչպես կոորդինատային էլեկտրոդները սնող լարումների ֆազերից, այնպես էլ ֆոտոկատոդի ձեւից: Վերջինիս դիմադրության անհամասնաչափությունը

փորրացնում է չափման ճշտությունը: Այդ նրևույթի վերացման համար ֆոտոկատոդի տակ նստեցված են նեղ հաղորդիչ շերտեր: Ներկայացված է կոորդինատագայուն ֆոտոբազմապատ-կիչի նրկու տարբերակ:

42. Միմոնյան Ա. Հ., Գյուգայան Ն. Հ. Օպտիմալ կառավարման համակարգերի սուբգրադիենտային մոդելներ / Հայ. պետ. ճարտարագիտ. համալս.: - Երևան, 1998: - 28 էջ, 13 նկ.: - Մատենագր. 21 ան.: - Հայ.: - Ավանդ. է ՀայԳՏԼԳՀ-ում 16.07.98, թիվ 94 - Ap98

Քննարկվում են դինամիկ համակարգերի ժամանակի իրական եւ արագացված մաշտաբներում օպտիմալ կառավարման մաթեմատիկական մոդելներ: Ներկայացված են սուբգրադիենտային անընդհատ եւ քվադրատային մաթեմատիկական մոդելներ, էքստրեմալ մոդելների հաշվողական ցանցերի կա-ռուցվածքային սխեմաներ:

YDK 63

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

43. Ղազարյան Ա. Ռ. Կենսահումուսի մերենայական ցր-ման եւ փորձարարական հետազոտությունների արդյունքները / Հայկ. գյուղ. ակադեմիա: - Երևան, 1998 : - 11 էջ, 3 նկ.: - Մատենագր. 3 ան.: - Հայ.: - Ավանդ. է ՀայԳՏԼԳՀ-ում 24.08.98, թիվ 117 - Ap98

Ներկայացվում են տարբեր խոնավությամբ եւ տարբեր հատիկաչափական կազմ ունեցող կենսահումուսի ցրման տեսական եւ փորձարարական հետազոտությունների արդյունքները: Ստացված տվյալների հիման վրա ճշտված են ցրող մեքենայի աշխատանքային օրգանների վերակառուցման որոշ պարամետրեր եւ աշխատանքային ռեժիմներ:

YDK 669

ՄԵՏԱԼՈՒՐԳԻԱ

44. Ֆրանգուլյան Ա. Ա. Քաջարանի հարստացուցիչ ֆաբրիկայի թափոններից նրկաթափոշու ստացման տեխնոլոգիան / Հայ. պետ. ճարտարագիտ. համալս.: - Երևան, 1998: - 6 էջ, 4 աղ.: - Մատենագր. 3 ան.: - Հայ.: - Ավանդ. է ՀայԳՏԼԳՀ-ում 26.05.98, թիվ 80 - Ap98

Մշակված է Քաջարանի հարստացուցիչ ֆաբրիկայի թափոնային պոչերից մագնետիտային խտանյութի ստացման տեխնոլոգիան, որի դեպքում մագնետիտային խտանյութի ելքը կազմում է 0,67 %, նրկաթի պարունակությունը խտանյութում՝ 62,8 %, մագնետիտից նրկաթի կորզման աստիճանը՝ 72,1 %: Ուսումնասիրվել է սողայի գոտիչ հատկությունը բովախառնուրդի

վերականգման գործընթացում: Մշակված է Քաջարանի հարստացուցիչ ֆաբրիկայի թափոնային պոչերից ստացված մագնետիտային խտանյութից մաքուր նրկաթափոշու կորզման տեխնոլոգիան եւ ուսումնասիրված են նրկաթափոշու քիմիական ու ֆիզիկա-տեխնոլոգիական հատկությունները:

YDK 800

ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

45. Կարապետյան Ն. Ա. Գործիքային բայերով կազմված նախադասությունների իմաստային եւ շարահյուսական կադապարները (Բայեր, որոնց համար գործիք արժույթականությունը պարտադիր է) / Եր. օտար. լեզուների ին-տ: - Երևան, 1998: - 12 էջ: - Մատենագր. 12 ան.: - Հայ. : Ավանդ. է ՀայԳՏԼԳՀ-ում 20.07.98, թիվ 96 - Ap98

Ոսումնասիրվում են այն պայմանները, որոնց առկայության դեպքում միայն նշյալ խմբի բայերն իրականացնում են իրենց "գործիքային" արժույթականությունը: Կոնկրետ խնդիրներ լուծելու նպատակով կիրառվում են լեզվաբանական վերլուծության տարբեր միջոցներ և եղանակներ: Տվյալ խմբին պատկանող բայերով կազմված նախադասությունների վերլուծությունը հնարավորություն ընձեռնեց բացահայտելու նախադասության ձևի և բովանդակության միջև առկա որոշ անհամաձայնություններ, ինչպես նաև սահմանելու նախադասության շարահյուսական կառուցվածքում գործիքային արժույթականության դրսևորման պայմանները և օրինաչափությունները:

46. Կարապետյան Ն. Ա. Գործիքային հարաբերությունների դասակարգումը ժամանակակից լեզվաբանության մեջ (Գործիք և Միջոց) / Եր. օտար լեզուների ին-տ: - Երևան, 1998: - 16 էջ: - Մատենագր. 20 ան.: - Հայ.: - Ավանդ. է ՀայԳՏԼԳՀ-ում 20.07.98, թիվ 97 - Ap98

Գործիքային հարաբերությունները նյութական աշխարհի իրերի և առարկաների միջև առկա հարաբերություններն արտացոլող համընդհանուր հասկացություններից են: Սակայն, մինչ այժմ, լեզվաբանների շրջանում չկա մեկ միասնական կարծիք այն մասին, թե ինչ պետք է ներառվի "գործիք" հասկացության մեջ: Սահմանված չեն նաև տվյալ բնագավառներին պատկանող հասկացությունները: Նշյալ աշխատության մեջ գործիքային հարաբերությունների դասակարգումը մասամբ հիմնված է Յու. Դ. Ապրեսյանի առարկած դասակարգման վրա, բայց մեր կողմից ընտրվել է փոքր ինչ այլ ուղի: Վերլուծությունը հեշտացնելու նպատակով բոլոր ուսումնասիր-վող բայերը բաժանվել են երկու խմբի՝ կախված այն հանգամանքից, թե "գործիք" արժույթականությունը նրանց համար պարտադիր է, թե երկրորդային:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ
ԵՎ ԱՌԵՎՏՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԼՐԱՏՎՈՒԹՅԱՆ
ԵՎ ՏԵԽՆԻԿԱՏՆԵՄԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ
(ՀայԳՏԼԳՀ)**

**ԱՎԱՆԴԱԴՐՎԱԾ ԳԻՏԱԿԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ**

ԵՌԱՄՍՅԱ ՍԵՂՄԱԳՐԱՅԻՆ ԺՈՂՈՎԱԾՈՒ

թիվ 1

ԵՐԵՎԱՆ 1999

УДК 37

ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ

1. Մկրտչյան Ս. Ե. Կերպարվեստի ուսուցումը համակարգչի կիրառությամբ / Հայ. պետ. մանկավարժ. ին-տ: - Երևան, 1998: - 11 էջ: - Հայ.: - Ավանդ. է ՀայԳՏԼԳՀ-ում 20.11.98, թիվ 17 - Ap99

Գնահատելով մարդկության դարավոր փորձն ու ձեռքբերումները կերպարվեստի ուսուցման բնագավառում՝ փորձ է արվում ժամանակակից գիտական նվաճումների մակարդակին համապատասխան ընթացք տալ այս աշխատանքներին՝ դարձնելով այն առավել արդյունավետ, նպատակաուղղված եւ ավելի մատչելի տարբեր հնարավորությունների տեր երեխա-ների համար: Այս նպատակով առաջարկվում է կերպարվեստի ուսուցման նոր մեթոդիկա: Նախընտրվել ու առանձնացվել են կերպարվեստի համակարգչային աշխատանքների տեսակները, սահմանվել են այն բնագավառները, ըստ որոնց նախատեսվել է տանել ուսումնասիրությունները: Ներկայացվել է նաև ՄՀՅ-ի /INTERNET/ կիրառման հրատապությունը առավել արդյունավետ ուսուցման գործում:

УДК 53

ՖԻԶԻԿԱ

2. Հակոբյան Մ. Գ. Պինդ առաձգական-իզոտրոպ կիսատարածության դեֆորմացիան գնդային ինդենտորով լոկալ ճնշելիս / Ֆիզիկայի կիրառական պրոբլ. ին-տ: - Երևան, 1998 : - 10 էջ, 7 նկ.: - Մատենագր. 10 ան.: - Ռուս.: - Ավանդ. է ՀայԳՏԼԳՀ-ում 12.11.98, թիվ 7 - Ap99

Կատարվել է պինդ առաձգական -իզոտրոպ կիսատարածության դեֆորմացված վիճակի տեսական ուսումնասիրություն, երբ նրա ազատ մակերևույթը լոկալ ճնշվում է պինդ գնդային ինդենտորով: Ստացվել են անալիտիկ արտահայտություններ մեխանիկական լարումների, դեֆորմացիայի թենզորի եւ տեղափոխության վեկտորի բաղադրիչների համար պինդ առաձգա-կան - իզոտրոպ կիսատարածությունում, երբ այն լոկալ ճնշում ենք գնդային ինդենտորով: Կատարվել է ստացված տեսական արդյունքների թվային հաշվարկ: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ պինդ առաձգական - իզոտրոպ կիսատարածությունը գնդային ինդենտորով ճնշելիս.

-դեֆորմացիայի թենզորի նորմալ ($\epsilon_{xx}, \epsilon_{yy}, \epsilon_{zz}$) եւ սահքի ($\epsilon_{xz}, \epsilon_{zx}, \epsilon_{yz}, \epsilon_{zy}$) բաղադրիչները մաքսիմալ են (բացարձակ արժեքով) պինդ մարմնի ներսում, իսկ սահքի ϵ_{xy} եւ ϵ_{yx} բաղադրիչները՝ պինդ մարմնի մակերևույթի վրա, հպման շրջանագծի կետերում, - զգալի դեֆորմացիաների (նորմալ եւ սահքի) տիրույթը լոկալիզացված է պինդ մարմնի շատ փոքր ծավալում: Մաքսիմալ դեֆորմացիոն իրավիճակ (սահքի) ստացվում է պինդ մարմնի ներսում, սիմետրիայի առանցքի վրա: Այս տեսական ուսումնասիրությունը կիրառելի է ռեալ խնդիրների քննարկման դեպքում, երբ գնդային ինդենտորով ճնշում ենք վերջավոր չափեր ունեցող առաձգական-իզոտրոպ պինդ մարմինը պայմանով, որ $R < l_i$ (այստեղ R - ինդենտորի շառավիղն է, l_i - պինդ մարմնի զծային չափերը):

3. Հակոբյան Մ. Գ. Խորանարդային կիսահաղորդիչների զոնային կառուցվածքի փոփոխությունը գլանային ինդենտորով լոկալ ճնշելիս / Ֆիզիկայի կիրառական պրոբլ. ին-տ: - Երևան, 1998 : - 5 էջ, 2 նկ.: - Մատենագր. 7 ան.: - Ռուս.: - Ավանդ. է ՀայԳՏԼԳՀ-ում 12.11.98, թիվ 8 - Ap99

Կատարվել է խորանարդային կիսահաղորդիչների (Ge, Si) էներգետիկ զոնային կառուցվածքի փոփոխության տեսական

ուսումնասիրություն, երբ դրանք ճնշվում են գլանային ինդենտորով: Ուսումնասիրությունը կատարվել է դեֆորմացիոն պոտենցիալի տեսության սահմաններում: Ուսումնասիրվել է գլանային ինդենտորով լոկալ-անհամասեռ ճնշման ազդեցությունը խորանարդային կիսահաղորդիչների էներգետիկ զոնային կառուցվածքի բոլոր (հաղորդական գոտու L_1 ; X_1 ; Δ_1 ; θ_2 ; θ_{15} եւ վալենտական գոտու θ_{25}) կետերի վրա: Կատարվել է ստացված տեսական արդյունքների թվային հաշվարկ գերմանիումի համար: Տարվել է համեմատական անալիզ գերմանիումի էներգետիկ զոնային կառուցվածքի համար, երբ այն ճնշվում է գնդային (նռաչափ անհամասեռություն) եւ գլանային (երկչափ համասեռություն) ինդենտորներով: Յույց է տրվել, որ գերմանիումի միաբյուրեղը գնդային եւ գլանային ինդենտորներով ճնշելիս նրա էներգետիկ զոնային կառուցվածքում առաջանում է նոր տիպի վարիզոնություն՝ կուսույատիվ վարիզոնություն:

4. Հակոբյան Մ. Գ. Պինդ առածգական - իզոտրոպ միջավայրերի դեֆորմացիան անվերջ գլանային ինդենտորով ճնշելիս / Ֆիզիկայի կիրառական պրոբլ. ին-տ: - Երևան, 1998 : - 7 էջ, 2 նկ.: - Մատենագր. 10 ան.: - Ռուս.: - Ավանդ. է ՀայԳՏԼԳՀԻ-ում 12.11.98, թիվ 9 - Ap99

Կատարվել է պինդ առածգական-իզոտրոպ միջավայրի դեֆորմացված վիճակի տեսական ուսումնասիրություն, երբ նրա ազատ մակերևույթը լոկալ ճնշվում է պինդ անվերջ գլանային ինդենտորով: Ստացվել են անալիտիկ արտահայտություններ մեխանիկական լարումների, դեֆորմացիայի թենզորների եւ տեղափոխության վեկտորի բաղադրիչների համար պինդ առածգական-իզոտրոպ միջավայրում, երբ այն լոկալ ճնշում ենք անվերջ գլանային ինդենտորով: Իրականացվել է ստացված տեսական արդյունքների թվային հաշվարկ: Կատարվել է պինդ միջավայրի դեֆորմացիոն իրավիճակների համեմատական անալիզ, երբ այն լոկալ ճնշվում է գնդային եւ գլանային ինդենտորներով: Յույց է

տրվել, որ այս տեսական ուսումնասիրման արդյունքները կիրառելի են ռեալ խնդիրներ դիտարկելիս, երբ վերջավոր չափեր ունեցող պինդ մարմինը ճնշվում է գլանային ինդենտորով:

5. Ղորխմազյան Ն. Ա. Նեյտրիկայի զանգվածի մասին / Հայ. պետ. մանկավարժ. ին-տ: - Երևան, 1998 : - 5 էջ: - Մատենագր. 13 ան.: - Ռուս.: - Ավանդ. է ՀայԳՏԼԳՀԻ-ում 25.11.98, թիվ 19 - Ap99

Բվարկներին վերագրված է մի նոր σ - լիցք: Դրա հիման վրա ստացված է ադրոնների, լեպտոնների եւ γ - քվանտի σ -լիցքը: Յույց է տրված, որ գոյություն ունի σ - լիցքի պահպանության օրենք: Այդ օրենքից ստացված է Ջորջիի եւ Գլենշուի բարիոնային եւ լեպտոնային լիցքերի տարբերության պահպանության օրենքը /1974/: Դրանով իսկ բերված է լրացուցիչ փաստարկ այն բանի օգտին, որ արգելված է առանց նեյտրիկայի կրկնակի β - տրոհումը, եւ այդ պատճառով, առնվազն, էլեկտրոնային նեյտրիկայի զանգվածը ճշգրիտ զրո է:

УДК 61

ԲԺՇԿԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

6. Դանիելյան Ա. Ա., Գրիգորյան Գ. Ե., Նազարեթյան Է. Ե., Հայրապետյան Ս. Ն. Առնետի հյուսվածքի հիդրատացիոն փոփոխությունները հաստատուն մագնիսական դաշտի, կետամինի եւ սովածության ազդեցությամբ / Կենսաֆիզիկայի կենտրոն: - Երևան, 1998: - 6 էջ , 4 նկ.: - Մատենագր. 11 ան.: - Հայ.: - Ավանդ. է ՀայԳՏԼԳՀԻ-ում 20.10.98, թիվ 3 - Ap99

Բջիջների հիդրատացիան նրանց ֆունկցիոնալ ակտիվության կարևոր չափանիշ է եւ նաեւ բջջի կենսագործունեության վրա արտաքին ազդակների ազդեցության իրականացման միջոտրը:

Առնետների վրա կատարված փորձերով ցույց է տրվել, որ հաստատուն մագնիսական դաշտը, կետամիներ է սովածությունը հյուսվածքների վրա որոշ պայմաններում միատեսակ դեհիդրատացիոն ազդեցություն ունեն: Ներկա հետազոտության նպատակն էր ցույց տալ որոշակի հյուսվածքների դերը օրգանիզմի հիդրատացիոն փոփոխությունների ժամանակ: Հետազոտությունները կատարվել են դեհիդրատացիայի մեթոդով, երբ ջրի պարունակությունն արտահայտվել է գ/գ չոր մնացորդի

նկատմամբ էլ ռադիոակտիվ օուաբայինի կապվածության փոփոխության միջոցով որպես ծավալային փոփոխությունների արդյունքում բջջաթաղանթի մակերևույթի փոփոխության հետևանք: Ցույց է տրվել հյուսվածքի հիդրատացիոն կայունությունն ու փայծաղի և երիկամի հյուսվածքների ակտիվությունը հիդրատացիոն փոփոխությունների պայմաններում օրգանիզմի ջրային միջավայրի կայունությունն ապահովելու ուղղությամբ:

YDK 620.9

ԷՆԵՐԳԵՏԻԿԱ

7. Սահակով Վ. Ի., Ծովյան Ռ. Վ., Ղուսալմյան Հ. Ա. Ներդրումային ծրագրերի ֆինանսավորման պայմանների ազդեցությունը էլեկտրաէներգիայի հեռանկարային սակագների վրա / «Էներգետիկայի ՀԳՀ ինստիտուտ» ՊՓԲԸ: - Երևան, 1998: - 8 էջ, 1 նկ., 3 աղ.: - Մատենագր. 1 ան.: - Հայ.: - Ավանդ. է ՀայԳՏԼԳՀ-ում 20.10.09, թիվ 1 - Ap99

Նվիրված է էլեկտրաէներգիայի հեռանկարային սակագների որոշմանը ներդրումային ծրագրերի ֆինանսավորման տարբեր պայմանների դեպքում: Հաշվարկի հիմքում դրված է սեփական ներդրումների դիմաց առաջադրված նորմայով շահույթ ստանալու պայմանը: Բերված են սակագնի հաշվման բանաձևեր, ինչպես նաև թվային օրինակ առաջարկվող մեթոդի համար էլ

սակագնի գրաֆիկը՝ ներդրումների տարբեր կշռային հարաբերությունների և վարկի տարբեր տոկոսադրույքների դեպքում:

YDK 621.3

ԷԼԵԿՏՐԱՏԵԽՆԻԿԱ

8. Հակոբյան Ռ. Ե., Հովսեփյան Ս. Մ. Կտրվածքներով հոծ բևեռներով սինքրոն շարժիչի ասինքրոն թողարկման հարցի մասին / Հայ. պետ. ճարտարագիտ. համալս.: - Երևան, 1998: - 7 էջ, 3 նկ., 1 աղ.: - Մատենագր. 2 ան.: - Ռուս.: - Ավանդ. է ՀայԳՏԼԳՀ-ում 20.10.98, թիվ 2 - Ap 99

Առաջարկված է հոծ բևեռներով սինքրոն մեքենայի կառուցվածքը, որը թույլ է տալիս իրագործել ուղիղ ասինքրոն թողարկումը փոքրացված թողարկման հոսանքների դեպքում: Մշակված է կտրվածքներով հոծ բևեռներով սինքրոն մեքենայի փոխարինման սխեմայի պարամետրերի հաշվարկի մեթոդականը ասինքրոն ռեժիմում: Հաշվարկների արդյունքները մոտ են փորձնական տվյալներին:

YDK 621.38 / 39

ԷԼԵԿՏՐՈՆԻԿԱ: ՌԱԴԻՈՏԵԽՆԻԿԱ: ԿԱՊ

9. Մարգարյան Ա. Ա. Կապի ցանցերը և վերականգման մեթոդները վթարների արդյունքում / Հայ. պետ. ճարտարագիտ. համալս.: - Երևան, 1998: -10 էջ, 8 նկ.: - Մատենագր. 3 ան.: - Ռուս.: - Ավանդ. է ՀայԳՏԼԳՀ-ում 25.11.98, թիվ 18 - Ap 99

Աշխատանքի հիմնական նպատակը «օղակ» տիպի կապի կառուցվածքով ցանցերի ինքնավերականգման ուղիների հայտնա-

բերումն է՝ տարատեսակ վթարների արդյունքում: Յույց է տրված կապի ցանցերի հիերարխիայի աճի դինամիկան, որը թույլ է տալիս ժամանակակից փուլում լայնորեն օգտագործել սինքրոն թվային հիերարխիայի թվային խտացման նորագույն սարքավորումները: Կատարված վերլուծության հիման վրա կարելի է նգրակացություն անել անվիճելի առավելությունների մասին կապի ցանցերի կառուցման ժամանակ՝ օգտագործելով վերոնշյալ կառուցվածքը ինչպես հուսալիության, քանի որ մեծանում է ցանցի ճկունությունը և նրա կենսունակությունը վթարների արդյունքում, այնպես էլ՝ տնտեսական տեսանկյունից:

УДК 664

ՄՆԴԻ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ

10. Նազարյան Ա. Ի., Մալխասյան Ա. Յ., Կարապետյան Ս. Ե. Խմորի նախապատրաստվածքների գնդման ազդեցությունը " Հրազդանյան " և " Մատնաքաշ " հացի որակի և հասունացման տևողության վրա / Հայկ. գյուղ. ակադեմիա: - Երևան, 1998: - 5 էջ, 1 նկ.: - Հայ.: - Ավանդ. է ՀայԳՏԼԳՀ-ում 17.11.98, թիվ 10 - Ap99

Ուսումնասիրված է խմորային նախապատրաստվածքների գնդման գործողության ազդեցությունը դրանց վերջնական հասունացման և հացի որակի վրա: Հետազոտվել է խմորի նախապատրաստվածքների գնդման տևողության և S-1-ԽՏՆ խմոր գնդող մեքենայի կրող սկավառակի պտտման հաճախականության ազդեցությունը խմորի նախապատրաստվածքների հասունացման տևողության և առաջին տեսակի ցորենի ալյուրից "Հրազդանյան" և "Մատնաքաշ" հացի որակի վրա: Հետազոտությունների արդյունքները ցույց տվեցին, որ նախապատրաստվածքների գնդման տևողությունը ազդում է հացի որակի գալստորոշման ցուցանիշների՝ արտաքին տեսքի և միջուկի

ծակոտկենության կառուցվածքի վրա: Պարզաբանվել են նախապատրաստվածքների գնդման օպտիմալ պայմանները: Արդյունքները կիրառվում են հացաթխման ձեռնարկություններում:

11. Նազարյան Ա. Ի., Մալխասյան Ա. Յ., Կարապետյան Ս. Ե. Հացի որակի վրա խմորի շաղախման ռեժիմի ազդեցության հետազոտությունը / Հայկ. գյուղ. ակադեմիա: - Երևան, 1998: - 4 էջ, 1 նկ.: - Հայ.: - Ավանդ. է ՀայԳՏԼԳՀ-ում 17.11.98, թիվ 11 - Ap99

Ուսումնասիրված է ցորենի ալյուրից "Հրազդանյան" հացի խմորի պատրաստականության ակնթարթին համապատասխանող շաղախման ինտենսիվության առավելագույն արժեքի ակնթարթի ժամանակամիջոցը: Անց է կացվել խմորի շաղախման ռեժիմի ազդեցության ուսումնասիրությունը խմորային պատրաստվածքների հասունացման տևողության վրա: Ստացված արդյունքները ցույց տվեցին, որ հացի ամենալավ որակը ունեն այն նմուշները, որոնք պատրաստված են խառնիչ մարմնի պտտման հաճախականության և տևողության որոշակի պայմաններում: Առաջարկված է շաղախման ռեժիմի օպտիմալ պայմաններ հացի տեսակարար ծավալի, ծակոտկենության, սեղմման և առաձգականության ձեռնարկման առավելագույն արժեքները ստանալու համար: Հետազոտության արդյունքները օգտագործվում են Երևանի հացի թիվ 7 գործարանում:

12. Նազարյան Ա. Ի. Խմորային նախապատրաստվածքների պատրաստականության որոշման մեթոդի մշակում / Հայկ. գյուղ. ակադեմիա: - Երևան, 1998: - 5 էջ, 1 նկ.: - Հայ.: - Ավանդ. է ՀայԳՏԼԳՀ-ում 17.11.98, թիվ 12 - Ap99

Դիտարկված է խմորային նախապատրաստվածքի պատրաստականության որոշման մեթոդի մշակումը ըստ բնութագրող մեծության փոփոխության, որն արտացոլում է ներքին ընթացքների և հասունացման պահարանի միջավայրի արտաքին

պայմանների փոխադարձ կապը: Անց է կացվել գործնի ալյուրից պատրաստված "Հրագդանյան" հացի խմորային նախապատրաստվածքների մակերեսային շերտի ջերմաստիճանի չափումը "Էլեկտրոնիկա" մուլտիմետրի օգնությամբ: Ստացված արդյունքները ցույց տվեցին, որ խմորային նախապատրաստվածքների հասունացման տևողությունը, կապված դրանց մակերեսային շերտի ջերմաստիճանի փոփոխման արագության հետ, մեծ ազդեցություն է գործում հացի որակի վրա: Առաջարկված են խմորային նախապատրաստվածքների օպտիմալ տևողության տվյալները "Հրագդանյան" հացի որակը բարելավելու ուղղությամբ: Ներդրված է արտադրության մեջ Երևանի հացի թիվ 7 գործարանում:

13. Նազարյան Ա. Ի. Խմորի հասունացման տևողությունը եւ "Հրագդանյան" հացի որակը / Հայկ. գյուղ. ակադեմիա: - Երևան, 1998. - 4 էջ, 1 նկ.: - Հայ.: - Ավանդ. է ՀայԳՏԼԳՀ-ում 17.11.98, թիվ 13 - Ap99

Ներկայացված է առաջին տեսակի գործնի ալյուրից խմորի հասունացման տևողության ազդեցությունը հացի որակի եւ խմորային նախապատրաստվածքների վերջնական հասունացման ընթացքի վրա: Կատարված հետազոտության արդյունքները ցույց են տվել, որ խմորային նախապատրաստվածքների վերջնական հասունացման տևողությունը կախման մեջ է խմորի հասունացման տևողությունից, ինչը արդյունքում ազդում է հացի որակի վրա: Համեմատվում են խմորի պատրասման երկու տարբերակներ, եւ հայտնաբերված է, որ խմորի հասունացման մինչեւ "պատրաստ լինելը" եղա- նակով պատրաստված հացի նմուշները ունեցել են առա-վելագույն տեսակարար ծավալ, ծակոտկենություն, միջուկի լավ կառուցվածքամեխանիկական բնութագրեր եւ ավելի բարձր որակի բալային գնահատական:

14. Նազարյան Ա. Ի., Մալխայան Ա. Յ., Կարապետյան Ս. Ե. Խմորային նախապատրաստվածքների գազառաջացման եւ

թթվակուտակման վրա խմորի շաղախման ռեժիմի ազդեցության հետազոտությունը / Հայկ. գյուղ. ակադեմիա: - Երևան, 1998: - 7 էջ, 3 նկ.: - Հայ.: - Ավանդ. է ՀայԳՏԼԳՀ-ում 17.11.98, թիվ 14 - Ap99

Դիտարկված է հասունացման ժամանակ գործնի ալյուրից "Հրագդանյան" հացի խմորային նախապատրաստվածքներում խմորման ընթացքի ինտենսիվությունը բնորոշող հիմնական ցուցանիշների ուսումնասիրությունը: Կատարվել է գազագոյացման եւ թթվակուտակման արագության վրա ազդող խմորի շաղախման ռեժիմների ուսումնասիրությունը: Ստացված տվյալները վկայեցին, որ խմորից մեքենայի խառնիչ մարմնի պտտման հաճախականությունը եւ խմորի շաղախման տևողությունը ազդում են գազագոյացման ինտենսիվության, ակտիվ թթվայնության եւ օքսիդա-վերականգման պոտենցիալի վրա: Պարզաբանվել են շաղախման ռեժիմի օպտիմալ պայմանների ազդեցությունը խմորի հասունացման վրա եւ նրա մեջ կենսագործունեության արդյունքների ու ֆերմենտատիվ գործընթացների վրա:

УДК 681.5

ԱՎՏՈՍՏԻԿԱ

15. Սիմոնյան Ս.Հ., Մարկոսյան Գ.Գ. Սնաբարբելի հարաբերակցություններով ոչ գծային բազմաչափ բազմափուլ գործընթացների օպտիմալացման ժամանակ կիրառվող խտացման մեթոդի մասին / Հայ. պետ. ճարտարագիտ. համալս.: - Երևան, 1998: - 6 էջ, 6 նկ.: - Մատենագր. 6 ան.: - Ռուս.: - Ավանդ. է ՀայԳՏԼԳՀ-ում 04.11.98, թիվ 4 - Ap99

Ներկայացված է սնաբարբելի հարաբերակցություններով ոչ գծային բազմաչափ բազմափուլ գործընթացի օպտիմալացման խնդրի դրվածքը: Բերված են նշված գործընթացների խտացման

հիմնադրույթները եւ խտացման թերմոմի ապա-ցույցի մեկ այլ մոտեցում: Դիտարկված են բազմափուլ գործընթացների խտացման ժամանակ հաշվարկների զուգահեռա-կանացման հարցերը, որոնք հանգեցնում են հաշվողական պրոցեսորաների ծավալի եւ ժամանակի նշանակալի կրճատ-ման: Բերված է նաեւ հաշվողական համակարգի ընդհանրաց-ված կառուցվածքային սխեման:

16. Մարկոսյան Գ.Գ. Բազմաչափ գործընթացների տարբեր դասերի խտացման մասին / Հայ. պետ. ճարտարագիտ. հա-մալս.: - Երևան, 1998: - 3 էջ, 4 նկ.: - Մատենագր. 4 ամ.: Ռուս.: - Ավանդ. է ՀայԳՏԼԳՀ-ում 04.11.98, թիվ 5 - Ap99

Նվիրված է խտացման տեսության զարգացմանը: Մասնա-վորապես, ներկայացված է գծային բազմաչափ գործընթաց-ների, կառավարման գծային բազմաչափ գործընթացների, ոչ գծային բաղմաչափ գործընթացների եւ սնպարաբեւ հարաբե-րակցություններով նկարագրվող կառավարմամբ ոչ գծային բազմաչափ գործընթացների խտացումը: Վերջին դեպքում ան-հավասարակշռության մեծությունը ներկայացված է երկու բաղադրիչների գումարի տեսքով, պայմանավորված կառավար-մամբ եւ ոչ գծայնությամբ, ինչը հնարավոր է դարձնում հեղի-նակի մշակված երկմակարդակ օպտիմալացման մեթոդի կիրա-ռումը նշված դասի գործընթացների օպտիմալացման համար:

17. Մարկոսյան Գ. Գ. "DOPNEMP-SP" կիրառական ծրագրերի փաթեթ ոչ գծային բազմափուլ բազմաչափ գործընթացների օպտիմալ կառավարման համար / Հայ. պետ. ճարտարագիտ. համալս.: - Երևան, 1998: - 5 էջ, 2 նկ.: - Մատենագր. 1 ամ.: - Ռուս.: - Ավանդ. է ՀայԳՏԼԳՀ-ում 04.11.98, թիվ 6 - Ap99

Բերված է "DOPNEMP-SP" ԿՕՓ-ի նկարագրությունը, որը իրականացնում է հեղինակի մշակված սնպարաբեւ հարաբե-րակցություններով նկարագրվող ոչ գծային բազմափուլ բազ-

մաչափ գործընթացների օպտիմալացման համար նախատես-ված երկմակարդակ օպտիմալացման մեթոդը: Ներկայացվում են փաթեթի նշանակումը, հիմնական բնութագրերը եւ ֆունկ-ցիաները: Բերված է փաթեթի մոդուլային-հիերարխիկ կառուց-վածքը եւ յուրաքանչյուր ծրագրային մոդուլի նշանակումը: "TRANS" մոդուլը գործում է երկխոսական ռեժիմում, իսկ "OPTIM" մոդուլը՝ փաթեթային: Ներկայացված է "DOPHEMP-SP"-ի ֆունկցիոնալ-տեխնոլոգիական սխեման:

УДК 624.19

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

18. Դավթյան Ն. Գ. Մետրոպոլիտենի նոր տիպի կայարա-նային համալիրի նախագիծ - առաջարկություն / Եր. ճարտ. - շին. ին - տ: - Երևան, 1998: - 35 էջ, 1 նկ.: - Ռուս.: - Ավանդ. է ՀայԳՏԼԳՀ-ում 20.10.98, թիվ 20 - Ap99

Դիտարկվում են մետրոպոլիտենի կայարանային համալիրի եւ ընթացքային թունելների նոր տիպի կոնստրուկտիվ եւ տեխ-նոլոգիական լուծումներ, որոնք հնարավորություն են տալիս տնտեսել շինարարական նյութերը, աշխատուժը եւ կրճատել շինարարության ժամկետները՝ համեմատած մինչեւ այժմ կիրառվող եւ գոյություն ունեցող տիպային նախագծերի հետ: Առաջադրված նախագիծ - առաջարկությունը մշակված է Երևանի մետրոպոլիտենի "Բարեկամություն" կայարանից դե-պի "Աջափնյակ" թաղամաս կառուցվելիք տնդամասի "Ա" կայարանային համալիրի համար:

ՄԴԿ 7

ԱՐՎԵՍ

19. Ծառվերյան Ռ. Ս. Դպրոցում կերպարվեստի ուսուց-ման գեղարվեստական և հոգեբանամանկավարժական օրինա-չափությունները / Հայկ. պետ. մանկավարժ. ին-տ: - Երևան, 1998: - 11 էջ: - Հայ.: - Ավանդ. է ՀայԳՏԼԳՀ-ում 30.11.98, թիվ 21 - Ap99

Զարգացնող ուսուցման դիրքերից քննարկվում են կերպար-վեստի դասավանդման գիտատեսական հիմքերի ամրապնդ-ման, դրանք երեխաների հոգևոր-զգացմունքային զարգացման հետ արդյունավետորեն համակցելու սկզբունքներն ու խնդիր-ները: Ընդգծվում է, ըստ դասարանների և երեխաների տարի-քային առանձնահատկությունների, ուսուցանվող նյութի ընտրու-թյան անհրաժեշտությունը: Առաջարկվում են դիդակտիկ նյութը օգտագործելու, երեխաների գիտաճանաչողական գիտելիքները նրանց ներքին ստեղծագործական ոլորտ տեղափոխելու մեթո-դական սկզբունքները:

ՄԴԿ 82

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

20. Հերունի - Սարգսյան Մ. Մ. Պարույր Մնակի ստեղծա-գործությունների ժողովածուները / Գրականու-թյան ին-տ: - Երևան, 1998: - 15 էջ: - Ռուս.: - Ավանդ. է ՀայԳՏԼԳՀ-ում 20.11.98, թիվ 15 - Ap99

Պ. Մնակի "Անլուրի Զանգակատուն" պոեմը ժողովածուներում ներկայացվում է Հ. Ռեզիստանը: Թարգմանչին հաջողվել է հաղթա-հարել դժվարին մի խնդիր՝ ժողովածուներում արտահայտել պոեմի ազգային

կոլորիտն ու ոգին, ինչպես նաև հեղինակի անհա-տականությունը: Պ. Մնակի բանաստեղծությունների և Օ. Չու-խոնցեի, Օ. Չուգայի, Ռ. Ռոժդեստովնսկու, Վ. Տոպորովի, Յ. Մորիցի, Վ. Բալասանի և այլոց ժողովածուներում ներկայացված համեմատական վերլուծությունն ի հայտ բերեց թարգմանիչների օգտագործած գրականագիտական և լեզվա-բանական միջոցները՝ Պ. Մնակի ստեղծագործության գեղար-վեստական առանձնահատկությունները ժողովածուներում վերարտադ-րելու համար:

21. Հերունի - Սարգսյան Մ. Մ. Թարգմանությունը թախծով ու առնչվածով լի երգի պես է հնչում / Գրականության ին-տ: - Երևան, 1998: - 9 էջ: - Ռուս.: - Ավանդ. է ՀայԳՏԼԳՀ-ում 20.11.98, թիվ 16 - Ap 99

Բազմաթիվ բանաստեղծներ են թարգմանել Ավ. Իսահակյա-նին ժողովածուներում, սկսած Ա. Բլոկից, որը շատ բարձր գնահատա-կանի է արժանացրել շնորհաշատ բանաստեղծի ստեղծագոր-ծությունները: Բանաստեղծի պայծառ անհատականությունը, նրա գեղարվեստական միջոցների գերադասական գծերը, բեկ-վելով ավելի քան քառասուն թարգմանիչների ստեղծագործու-թյուններում, իրենց արտակարգ գույները չեն կորցրել թարգման-վելիս: Ռուսերեն նա ճանաչելի է, իսկ Ա. Ալամատովայի թարգ-մանությունները զարմացնում ու հիացնում են իրենց մերձեց-մամբ Վարպետի տեքստերին, ինչպես իմաստով, այնպես էլ ՝ չափով ու մեղեդայնությամբ:

22. Հակոբյան Ռ. Ե. Հիդրոգեներատորի ջերմային հսկման համակարգի տեխնիկական ախտորոշման արժեքի գնահա-տումը / Հայ. պետ. ճարտարագիտ. համալս. - Երևան, 1997: - 7 էջ, 2 նկ.: - Մատենագր. 3 ան.: - Ռուս.: - Ավանդ. է ՀայԳՏԼԳՀ-ում

Դիտարկված է ջերմային հսկման համակարգը (ՁՀՀ), որը իրականացնում է հիդրոգեներատորի ստատորի ակտիվ մասերի ջերմության հսկումը, ինչպես նաև այդ համակարգին հատուկ

թերությունները: Անց է կացվել փորուկի հատակին տեղադրված թերմադիմադրության ջերմային զգայնության գնահատումը: Խնդիրը լուծվել է կոնվեկտիվ ջերմափոխանակման պայման-ների համար երկշափանի դրվածքով օդային բացակի եւ ստատորի իրանի կողմից: Ստացված հաշվարկների արդյունք-ները ցույց տվեցին, որ ՋՀՀ-ը չի տալիս գերտաքացման տեղի որոշման հնարավորությունը, այսինքն այն կարգավորում է միայն գեներատորի ընդհանուր ջերմաստիճանի մակարդակը: Առաջարկված է գոյություն ունեցող ՋՀՀ-ի փոխարեն օգտա-գործել ավելի առաջավոր անկոնտակտ մեթոդ՝ ընդունիչների կիրառմամբ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՌԵՎՏՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԼՐԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՎ ՏԵԽՆԻԿԱՏՆԵՍԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ (ՀայԳՏԻԳՀԻ)

**ԱՎԱՆԴԱԴՐՎԱԾ ԳԻՏԱԿԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ**

ԵՈՒՄՍՅԱ ՄԵՂՄԱԳՐԱՅԻՆ ԺՈՂՈՎԱԾՈՒ

թիվ 2

ԵՐԵՎԱՆ 1999

УДК 32

ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ռամազյան Ռ. Ա. Քաղաքացիական հասարակության զարգացման ժամանակակից մի-տումները / Եր. օտար լեզուների պետ. ին-տ: - Երևան, 1999: - 9 էջ: - Ռուս.: Ավանդ. է ՀայԳՏԼԳՀ-ում 01.02.99, թիվ 27 - Ap99

Արևելյան Եվրոպայի եւ նախկին ԽՍՀՄ հետտոտալիտար երկրներում ժողովրդավարական վերափոխությունների ընթացքում վճռական դեր է խաղում քաղաքացիական հասարակությունը: Այսօր այդ հիմնախնդրի արդիական լինելը ակնհայտ է եւ որոշվում է նրանով, որ հենց քաղաքացիական հասարակությանը բնորոշ խմբերի, կազմակերպությունների եւ ընկերությունների բազմազանությունն է ապահովում փոխադարձ կապերի եւ հակադրումների վատահեղի համակարգը՝ ուղղված իշխանության բռնատիրման ցանկացած փորձի դեմ: Քաղաքացիական հասարակության ձեւավորումն այդ երկրներում ունի մի շարք առանձնահատկություններ եւ բախվում է լուրջ դժվարությունների հետ: Քննվում է քաղաքացիական հասարակության ձեւավորման եւ զարգացման միտումների առկայությունը տարան-ցիկ երկրներում:

2. Ռամազյան Ռ. Ա. Ժողովրդավարական անցման հիմնախնդիրները / Եր. օտար լե-զուների պետ. ին-տ: - Երևան, 1999: - 9 էջ: - Ռուս.: Ավանդ. է ՀայԳՏԼԳՀ-ում 01.02.99, թիվ 28 - Ap99

Ուսումնասիրվում են սոցիալ - քաղաքական տրանսֆորմացիայի առանձնահատկությունները Հայաստանում, ժողովրդավարացման դժվարընթացը, որը պայմանավորված է Հայաս-

տանում անցման շրջանի յուրահատուկ պայմաններով, Ղարաբաղյան հակամարտության բարդացմամբ, 1988 թ. ավերիչ երկրաշարժով: Տրանսֆորմացիոն գործընթացների բազմաձրավորումն ու դժվարությունները պայմանավորված են մասշտաբային փոփոխություններով ինչպես քաղաքական, այնպես էլ տնտեսական համակարգում, որոնք, իրենց հերթին, փոխգործակցում են սոցիալական կառույցում առկա փոփոխությունների հետ: Ինստիտուտների կազմավորման, ժողովրդավարական արժեքների եւ նորմերի միջազգայնացման խնդիրները պետության ներքաղաքական կյանքում ձեռք են բերում առանձնահատուկ արդիականություն՝ շատ բաներում պայմանավորելով նրա արտաքին քաղաքականության արդյունավետությունը:

3. Ռամազյան Ռ. Ա. Ժամանակակից տրանս-ֆորմացիաներ՝ միտումներ եւ հակասություններ / Եր. օտար լեզուների պետ. ին-տ: - Երևան, 1999: - 8 էջ: - Ռուս.: Ավանդ. է ՀայԳՏԼԳՀ-ում 01.02.99, թիվ 29 - Ap99

Արևելյան Եվրոպայի եւ հետխորհրդային երկրների 80 - 90 - ական թվականների "երրորդ ալիքի" ժողովրդավարության եւ "նոր ժողովրդավարության" զարգացման միտումները վկայում են ինչ որ մի նոր մոդելի առկայության մասին, որը տարբերվում է գոյություն ունեցող ժողովրդավարական ռեժիմներից: Այդ ամենի հաստատման հիմք են ծառայում հողվածում քննարկվող անցողիկ գործընթացների առանձնահատկությունները, որոնք բնորոշում են տրանսֆորմացիայի տվյալ փուլը: Քննարկվում է "կրկնակի անցման" ֆենոմենը՝ ուղղված միաժամանակ եւ՝ ժողովրդավարությանը, եւ՝ շուկային , որի միջոցով, չնայած արտակարգ բարդությանն ու ներքին հակասությանը, փորձ է արվում փոխել նշված ոլորտների միջեւ ավանդաբար ձեւավորվող փոխադարձ կապերի մոդելը: Եզակի գիտափորձ. կհաջողվի՞, արդյոք, այդ գիտափորձը, կունենա՞ն ժողովրդավարացման այդ ազդակները երկարատեւ հեռանկար, ցույց կտա ժամանակը:

УДК 33

ԷԿՈՆՈՄԻԿԱ

4. Ղանթարջյան Ի. Գ. Օդային ավազանի ադ-տոտման տնտեսական կարգավորման մեթոդ-ները / Եր. պետ. համալս.: Երևան, 1999: - 11 էջ: - Մատենագր. 27 ան.: - Ռուս.: - Ավանդ. է ՀայԳՏԼԳՀ-ում 26.02.99, թիվ 35 - Ap99

Դիտարկվում են այն տնտեսական գործոնները, որոնք հանգեցնում են օդային ավազանի ադտոտմանը: Համոզված լինելով, որ հնարավոր չէ բազմագործոնային վնասի չափը հաշվարկել ճշգրիտ, առաջարկվում է հետևյալ սխեման: Եթե արտա-նետման չափը չի գերազանցել վնասակար նյութի սահմանային թույլատրելի չափերը, ապա ձեռնարկությունը վճարում է միայն օդային ավազանը որպես ադտոտում ընդունող միջավայր օգտագործելու համար: Սահմանային թույլատրելի արտանետման չափն անցնող ձեռնարկությունը պետք է տուգանվի: Տուգանքը նախատեսվում է որոշակի ժամանակահատվածի համար: Լիցենզավորումը դիտարկվում է որպես բնապահպանական քաղաքականության անբաժանելի մաս: Այն ունի մի շարք առավելություններ, որոնք նշվում են: Օբյեկտիվ են գործող տուգանային համակարգի ստեղծումը եւս տնտեսական խթան է միջավայրն ադտոտող ձեռնարկության համար: Տուգանքի նպատակն է ձեռնարկության համար ստեղծել այնպիսի տնտեսական պայմաններ, երբ ադտոտման նվազեցումն ավելի շահավետ է դառնում տուգանք վճարելուց:

УДК 51

ՄԱԹԵՄԱՏԻԿԱ

5. Հակոբյան Ա. Մ. Անալիտիկ ֆունկցիա-ներ, որոնց դեֆինիտային ֆունկցիաների բազմությունն անվերջ է / Եր. պետ. համալս.: Երևան, 1999: 10 էջ: - Մատենագր. 10 ան.: - Ավանդ. է ՀայԳՏԼԳՀ-ում 09.03.99, թիվ 38 - Ap99

Դիտարկվում է միավոր շրջանում անալիտիկ եւ սահմանափակ ֆունկցիաների B դասը եւ այդ դասի կամայական հաշվելի թվով ֆունկցիաների բազմություն $\{W_k\}_{k=1}^{\infty} \subset B$: Նախօրոք տրված $\gamma > 0$ թվի համար կառուցվում է միավոր շրջանում անալիտիկ, γ կարգ ու նորմալ տիպ ունեցող f ֆունկցիա, որի համար W_k ֆունկցիաները դեֆինիտային են: Դեֆինիտների մեծությունների համար ապահովվում են նաեւ $\delta(W_k, f) > e^{-ck}$

անհավասարությունները ($k \in \mathbb{N}$; $c > 0$ հաստ. է): Կամայական $\gamma \geq 0$ թվի համար կառուցվում է նաեւ γ կարգի "1-ունիվերսալ" ֆունկցիա, որը $\gamma > 0$ դեպքում ունի նորմալ տիպ, իսկ $\gamma = 0$ դեպքում սահմանափակ տեսք:

УДК 53

ՖԻԶԻԿԱ

6. Հակոբյան Մ. Գ. Գնդային ինդենտորով լուկա դեֆորմացիայի ազդեցությունը գերմա-նիումային $p - n$ անցումների ծավալային լից-քի տիրույթի վրա / Ֆիզիկայի կիրառական պրոբլեմ. ին-տ: - Երևան, 1998 : - 3 էջ.: - Մատենագր. 4 ան.: - Ռուս.: - Ավանդ. է ՀայԳՏԼԳՀ-ում 14.01.99, թիվ 22 - Ap99

Տեսականորեն ուսումնասիրվել է գնդային ինդենտորով լուկա դեֆորմացված գերմանիումային $p - n$ անցումների ծավալային

լիցքի տիրույթը: Նախորդ մեր աշխատանքներում ցույց է տրվել, որ գնդային ինդենտորով լուկալ դեֆորմացված գերմա-նիումի էներգետիկ զոնային կառուցվածքում առաջանում է կու-մուլյատիվ վարիզոնություն: Այս աշխատանքում ուսումնա-սիրվում է կումուլյատիվ վարիզոնության առկայության ազդեցու-թյունը գերմանիումային p - n անցումների ծավալային լիցքի տիրույթի վրա: Ստացվել են անալիտիկ արտահայտություններ ծավալային լիցքի տիրույթում էլեկտրաստատիկ պոտենցիալի բաշխման և արգելակող շերտի լայնության համար: Յուրջ է տրվել, որ ծավալային լիցքի տիրույթը կումուլյատիվ վարիզոնության առկայության դեպքում մեծանում է արտաքին լար-ման բացակայության պայմաններում:

7. Հակոբյան Մ. Գ. Գնդային ինդենտորով լուկալ դեֆորմացիայի ազդեցությունը գերմա-նիումային Շոտկիի դիոդների ծավալային լիցքի տիրույթի վրա / Ֆիզիկայի կիրառական պրոբլեմ. ին-տ: - Երևան, 1998 : - 3 էջ.: - Մատենագր. 4 ան.: - Ռուս.: - Ավանդ. է ՀայԳՏԼԳՀ-ում 14.01.99, թիվ 23 - Ap99

Տեսականորեն ուսումնասիրվել է գնդային ինդենտորով լուկալ դեֆորմացված գերմանիումային Շոտկիի դիոդների ծավալային լիցքի տիրույթը: Մեր նախորդ աշխատանքներում ցույց է տրվել, որ գնդային ինդենտորով լուկալ ճնշման դեպքում գերմա-նիումի էներգետիկ զոնային կառուցվածքում առաջանում է կու-մուլյատիվ վարիզոնություն: Այս աշխատանքում ուսումնասիր-վում է կումուլյատիվ վարիզոնության առկայության ազդեցու-թյունը գերմանիումային Շոտկիի դիոդների ծավալային լիցքի տիրույթի վրա: Ստացվել են անալիտիկ արտահայտություններ ծավալային լիցքի տիրույթում էլեկտրաստատիկ պոտենցիալի և ծավալային լիցքի տիրույթի հաստության համար:

8. Հակոբյան Մ. Գ. Գնդային ինդենտորով լուկալ դեֆորմացիայի ազդեցությունը գերմա-նիումային p - n անցումների և Շոտկիի դիոդների վոլտ - ֆարադային բնութագրերի վրա / Ֆիզիկայի կիրառական պրոբլեմ. ին-տ: - Երևան, 1998 : - 3 էջ.: - Մատենագր. 4 ան.: - Ռուս.: - Ավանդ. է ՀայԳՏԼԳՀ-ում 14.01.99, թիվ 24 - Ap99

Տեսականորեն ուսումնասիրվել է գնդային ինդենտորով լուկալ դեֆորմացիայի ազդեցությունը գերմանիումային p - n անցում-ների և Շոտկիի դիոդների վոլտ - ֆարադային բնութագրերի (ՎՖԲ) վրա: Հաշվի են առնվել լուկալ դեֆորմացված գերմանիում-ային p - n անցման և Շոտկիի դիոդի էլեկտրատրանսպորտային դիֆուզիոն և բարիերային բաղադրիչները: Յուրջ է տրվել, որ լուկալ դեֆորմացված գերմանիումային p - n անցման և Շոտկիի դիոդի վրա որոշակի պայմանների առկայության դեպքում ձեռ-վորվում է դիոդի էլեկտրատրանսպորտային կտրուկ աճի և նվազման տիրույթ: Այս երևույթը փորձնականորեն ստացվել է գնդային ինդենտորով լուկալ դեֆորմացված Շոտկիի դիոդներում:

9. Կազարով Ի. Ն. Լուսնի առաջացման հա-վանականությունը Երկրի միջուկից / Կոռալն-բատիվ » Հույս « . - Մասիսի շրջ., 1999: 8 էջ, 1 նկ.: - Մատենագր. 8 ան.: - Ռուս.: - Ավանդ. է ՀայԳՏԼԳՀ-ում 18.02.99, թիվ 31 - Ap99

Հետազոտված են հրաբխային ժայթքումները նստվածքային շերտի հիմքից, ասթենոսֆերայից և Երկրի հնդուկ միջուկից: Հաշվարկներով ապացուցված է, որ հնդուկ միջուկից միայն գա-զամագմային խառնուրդի արտանետումն ապահովում է նրա ազատ շիթի զանգվածի զգալի մասի արագության հասնելը առաջին տիեզերական արագությանը և Երկրի արբանյակային ուղեծրին: Մնացած մասն ընկնում է Երկրի վրա, լրացնելով նրա ասթենոսֆերայի շերտը:

ՄԴԿ 54

ՔԻՄԻԱ

10. Գրիգորյան Զ. Ա. Նախնական կողմնորոշ-ված բյուրեղացման ազդեցությունը ամորֆ - բյուրեղային պոլիմերի միառանգրային դեֆորմացիայի վրա / ՀՊՃՀ - ի Գորիսի կրթահամալիր: - Գորիս, 1999: - 7 էջ, 2 նկ.: - Մա-տեմազր. 6 ան.: - Ռուս.: - Ավանդ. է ՀայԳՏԼԳՀ-ում 20.01.99, թիվ 26 - Ap99

Ուսումնասիրվել են պոլիպրոպիլենի մեխանիկական հատկությունները՝ կախված դեֆորմացիայի եղանակից եւ բյուրեղացումից: Հաստատված է, ուր պոլիպրոպիլենի ամրության մեծացումն ապահովվում է նրա նախնական կողմնորոշված բյուրեղացման միջոցով: Դրա համար սկզբում ժապավենը ձգում են եւ բյուրեղացնում: Այնուհետեւ այն ենթարկում են կրկնակի դեֆորմացիայի: Պոլիմերային ժապավենի վրա այսպիսի ներգործությունն ապահովում է բյուրեղների կողմնորոշվածության մեծացումը, որն էլ իր հերթին բերում է ամրության մեծացմանը:

ՄԴԿ 57/59

ԼԵՆՄԱՔԱՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

11. Սադաթեյան Ալ. Ն. Լյանքի ֆիզիկա -քիմիական էությունը ռեդուկցիոնիզմի դիրքե-րից / Հայ. գիտատեխն. լրատվ. գիտահետա-գոտ. ին-տ: - Երևան, 1999: - 6 էջ: - Մատե-նազր. 6 ան.: - Ռուս.: - Ավանդ. է ՀայԳՏԼԳՀ-ում 04.02.99, թիվ 30 - Ap99

Լյանքի ֆիզիկա - քիմիական էությունը ճանաչելու համար հաշվի են առնվել կենսագործունեության միայն սկզբնա- եւ վերջնանյութերը, միջանկյալ նյութերը չեն դիտարկվել: Կենսա- լորտում ամբողջությամբ Լյանքը սկսվում է բույսերի ֆոտոսին- թեզով եւ մանրէների ազոտի ֆիքսումով: Ֆոտոսինթեզի ժա-

մանակ ջրի մոլեկուլի ջրածնի ատոմներն անցնում են ած- լաթթու գազի ածխածնի ատոմներին, իսկ ազոտի ֆիքսման ժամանակ այդ ջրածնի ատոմների որոշ մասն անցնում է մթնոլորտային ազոտի ատոմներին: Այդ երկու հիմնական գործընթացների արդյունքում մանրէները, բույսերը եւ կենդանի- ները համատեղ արտադրում են ամոնիակ, մեթան եւ ջրածին, որոնք, բարձրանալով մթնոլորտի վերին շերտերը, ջրածինը ցրում (դիսիպացնում) են մոտակա տիեզերական տարածք:

ՄԴԿ 620.9

ԷՆԵՐԳԵՏԻԿԱ

12. Հարությունով Մ. Ռ. Շուկայական պայ-մաններում գործող տարածաշրջանային գազա-փոխադրող համակարգի օպտիմալացման էկո-նոմիկա - մաթեմատիկական մոդելի կառու- ցումը / ԷՏԲ »ՆԻԻԳազէկոնոմիկա«: - Երևան, 1999: - 7 էջ: - Մատեմազր. 4 ան.: - Ռուս.: - Ավանդ. է ՀայԳՏԼԳՀ-ում 22.02.99, թիվ 32 -Ap99

Բնական գազի վճարունակ պահանջարկի մեծության իջե- ցումը տարածաշրջանային գազափոխադրող համակարգերի մակարդակին պահանջում է այնպիսի հարցերի հետազոտում, որոնք կապված են գոյություն ունեցող հզորությունների օգտա- գործման արդյունավետության բարձրացման հետ: Տրված է օպ- տիմալացման մոդելի նկարագրությունը, որը կապում է գործող տարածաշրջանային գազափոխադրող համակարգի կառուց- վածքը եւ պարամետրերը գազի հոսքերի մեծությունների հետ:

УДК 621.3

ԷԼԵԿՏՐՈՍՏԵԽՆԻԿԱ

13. Վարպետյան Վ. Ս. Կապարային ակումուլյատորի փոխանցման ֆունկցիան եւ փոխա-րինման էլեկտրական սխեման / Հայ. պետ. ճարտարագիտ. համալս.: - Երևան, 1999: - 6 էջ: - Մատենագր. 1 ան.: - Ռուս.: - Ավանդ. է ՀայԳՏԼԳՀ-ում 23.02.99, թիվ 34 - Ap99

Մշակված եւ ստացված են կապարային ակումուլյատորի փոխանցման ֆունկցիան եւ փոխարինման էլեկտրական սխեման, կախված ակումուլյատորի լիցքային վիճակից, հաշվի առնելով ակումուլյատորի էլեկտրոդներում ակտիվ զանգվածի քանակության եւ էլեկտրոլիտի խտության փոփոխությունները՝ պայմանավորված ակումուլյատորի տված /կամ նրան հաղորդած/ ունակության չափով եւ էլեկտրոլիտի դիֆուզիայով: Ստացված է, որ կապարային ակումուլյատորը սարուկտուր սխեմաներում կարելի է պատկերել երեք՝ անիներցիոն, ինտեգրող եւ առաջին կարգի իներցիոն, դինամիկ օղակների գուգահեռ միացմամբ: Ստացված արդյունքները կարելի է օգտագործել կապարային ակումուլյատորային մարտկոցներից սնվող էլեկտրական տեղակայանքների եւ դրանց ավտոմատ կառավարման համակարգերի նախագծման համար:

УДК 63

ԳՅՈՒՂԱՏԵԽՆԵՄՈՒԹՅՈՒՆ

14. Կազումյան Ն. Կ. Տարրեր բուսական հումքից ստացված էթիլ սպիրտի բնութագիրը / Գինեգործության, խաղողագործության եւ պտղաբուծության գիտահետազոտ. ին-տ:

- Մերձավան, 1998: - 5 էջ: - Մատենագր. 2 ան.: Հայ.: - Ավանդ. է ՀայԳՏԼԳՀ-ում 15.01.99, թիվ 25 - Ap99

Մանդային հումքից ստացված էթիլ սպիրտը կիրառվում է գինեգործության, հյութերի պահածոյացման, ոչ ոգելից լամիչքների պատրաստման, հրուշակագործության, պարֆյուններիայի, դեղագործության եւ այլ բնագավառներում: Դեռնուս ուսումնասիրված չէ տարբեր հումքերից ստացվող ռեկտիֆիկացված սպիրտի քիմիական կազմը, ինչը հիմք է հանդիսանում սպիրտերի գնահատման ժամանակ: Սպիրտ-ռեկտիֆիկատի քիմիական միացությունների կազմը որոշվել է գազահեղուկային քրոմատագրության մեթոդով: Սպիրտ-ռեկտիֆիկատը, ստացված լաղողի գինեյութից, թունդ, անապակ գինիներից (պորտ-վյեն տիպի), խնձորի սպիրտ-հումքից, արատավոր դեղձի պյուրեից, մշակվեց ակտիվացված ածխով: Մշակումից հետո սպիրտն ուներ խայթող հոտ եւ համ, թույլ մրգային բուրմունք: Կախված սպիրտի արտադրության ուղղությունից եւ յուրա-հատկությունից՝ այն կարող է օգտագործվել ժողտնտեսության տարբեր ճյուղերում:

15. Գրիգորյան Շ. Մ., Յավրույան Վ. Ն., Տեր-Հարությունյան Ա. Ս. Մրգերի անմնացորդ վե-րամշակման համալիրի տեխնիկական բնութագիրը եւ տնտեսական արդյունավետությունը / Հայ. գյուղ. ակադեմիա: - Երևան, 1999: - 11 էջ, 9 աղ.: - Ռուս.: - Ավանդ. ՀայԳՏԼԳՀ-ում 26.02.99, թիվ 36 - Ap99

Բերված է ՀՀ Արագածոտնի մարզի Ղազարավան գյուղում կառուցված ու շահագործման հանձնված մրգերի անմնացորդ վերամշակման տեխնոլոգիական համալիրի տեխնիկական բնութագիրը եւ կատարված է նրա տնտեսական արդյունավետության հաշվարկների վերլուծությունը: Հաստատված է, որ 55,0 տ չրի, 1100 կգ ծիրանի եւ 200 կգ դեղձի կորիզների յուղի եւ շուրջ 11,0 տ հղկավիշու սեզոնային արտադրողականությամբ այս համալիրը, սկսած շահագործման 3-րդ տարվանից, ապա-հովում

է մինչեւ 50,0 մլն դրամի հասնող տնտեսական արդյունավետություն:

16. Գրիգորյան Շ. Մ., Յավրույան Վ. Ն., Տեր-Հարությունյան Ա. Ս. Հայաստանի Հանրապետությունում աճող մրգերի քննադատությունը որպես չորացման օբյեկտ / Հայ. գյուղ. ակադեմիա: - Երևան, 1999: - 8 էջ, 2 նկ., 3 աղ.: - Հայ.: - Ավանդ. է ՀայԳՏԼԳՀ-ում 26.02.99, թիվ 37 - Ap99

Դիտարկված են Հայաստանի Հանրապետությունում աճող մրգերի ֆիզիկական եւ ջերմաֆիզիկական հատկությունների ուսումնասիրությանը նվիրված փորձարարական հետազոտությունների արդյունքները: Բերված են մրգերի հինգ հիմնական տարատեսակների՝ ծիրանի (Շալախ եւ Սաթենի), տանձի, դեղ-ձի, խնձորի եւ սալորի, այնպիսի ֆիզիկական հատկությունների թվային արժեքները, ինչպիսիք են ելակետային խոնավությունը, պտուղների միջին եւ առավելագույն կշիռը, պտղում կորիզի պարունակությունը, կորիզում միջուկի պարունակությունը. պտղի խտությունը եւ զանգվածի ծավալային խտությունը: Ստացված են չորացման գործընթացում մրգերի ջերմաֆիզիկական երեք հիմնական պարամետրերի՝ տեսակարար ջերմունակության, ջերմահաղորդականության գործակիցների փոփոխման օրինաչափությունները եւ այդ մեծությունների բա-ցարժակ թվային արժեքները: Ապացուցված է կատարված հետազոտությունների հավաստիությունը, որի հիման վրա ստացված արդյունքները երաշխավորվել են գործնական կիրառության համար որպես ելակետային տվյալներ՝ չորացման տեղակայանքների հաշվարկման ու նախագծման գործընթացներում:

УДК 681.51

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԻՔԵՌՆԵՏԻԿԱ

17. Մանուկյան Ա. Մ. Աստղադիտակի կայունացման եռառանցք համակարգում ինքնատա-տանումների հատկությունների ուսումնասիրությունը սինգուլյար թվերի զգայնության ֆունկցիայի հիման վրա / Հայ. պետ. ճարտարագիտ. համալս.: - Երևան, 1999: - 8 էջ, 13 նկ.: - Մատենագր. 4 ան.: - Ռուս.: - Ավանդ. է ՀայԳՏԼԳՀ-ում 23.02.99, թիվ 33 - Ap99

Գործնականում հաճախ կառավարման համակարգերը բաղկացած են լինում տարրերից կամ պարամետրերից, որոնք հայտնի են ոչ ճշգրտորեն կամ ենթակա են փոփոխությունների: Հետազոտված են աստղադիտակի կայունացման եռառանցք համակարգի ինքնատատանումների հատկությունները սինգուլյար թվերի զգայնության ֆունկցիայի հիման վրա: Բերված են այդ հետազոտությունների արդյունքները՝ ուժեղացման գործակիցներից եւ ժամանակի հաստատություններից սինգուլյար թվի անսահմանության գրաֆիկների տեսքով: Որոշված են նաեւ ինքնատատանումների պարամետրերը՝ հաճախությունը եւ ամպլիտուդների վեկտորը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՌԵՎՏՐԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԼՐԱՏՎՈՒԹՅԱՆ
ԵՎ ՏԵԽՆԻԿԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ
(ՀայԳՏԼԳՀԻ)

ԱՎԱՆԴԱԴՐՎԱԾ ԳԻՏԱԿԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

ԵՌԱՄՍՅԱ ՍԵՂՄԱԳՐԱՅԻՆ ԺՈՂՈՎԱԾՈՒ
թիվ 3

ԵՐԵՎԱՆ 1999

УДК 33

ԷԿՈՆՈՄԻԿԱ

1. Եղիազարյան Ա. Ա. Հարկային քաղաքականությունը տնտեսության պետական կարգավորման լծակների համակարգում / Երևանի պետ. ժող. տնտեսության ին-տ: - Երևան, 1999: - 15 էջ: - Մատենագր. 4 ան.: - Հայ.: - Ավանդ է ՀայԳՏԼԳՀԻ-ում 14.06.99, թիվ 52 - Ap99

Տրված է տնտեսության պետական կարգավորման հայտնի հայեցակարգերի ընդհանուր բնութագիրը և Հայաստանում դրանց կիրառման առանձնահատկությունները: Ընդհանրացված ձևով տրված են ներկա փուլին բնորոշ պետության հիմնա-կան գործառնությունն ու խնդիրները: Այս առումով հատկապես կարևորվում է հարկերի կարգավորվող գործառնությունը, որն իրականացվում է հարկման համակարգի սահմանման և փոփոխության, հարկային դրույքաչափերի որոշման, դրանց տարբերակման, իրականացվող տնտեսական քաղաքականությանը համապատասխան հարկային արտոնությունների /շահույթի և կապիտալի մի մասի ազատումը հարկերից/ տրամադրման միջոցով: Տնտեսության պետական կարգավորման տեսանկյունից քննադատության են ենթարկվել հանրապետության տնտեսական քաղաքականության հիմքում դրված տնտեսության կարգավորման մոնետարիստական հայեցակարգի հիմնական պահանջները:

2. Եղիազարյան Ա. Ա. Ազգային շուկայի ձևավորումը և մանր ձեռնարկատիրության խթանումը / Երևանի պետ. ժող. տնտեսության ին-տ: - Երևան, 1999: - 12 էջ: - Մատենագր. - 2 ան.: - Հայ.: - Ավանդ է ՀայԳՏԼԳՀԻ-ում 14.06.99, թիվ 53 - Ap99

Ազգային շուկայի ձեռավորման և մանր ձեռնարկատիրությունների լայնամասն նպատակով ձեռակերպում է շատ կարևոր խնդիր՝ ազգային շուկայի պաշտպանությունը և ձեռնարկատիրական գործունեության խրախուսման համար անհրաժեշտ պայմանների ստեղծումը: Որպես ազգային շուկայի պաշտպանության կարևոր պայման է առաջարկվում տնտեսությանը պետության կողմից միջամտելու այնպիսի մեխանիզմի կիրառումը, ինչպիսին է, օրինակ, հովանավորության քաղաքականությունը: Ներքին /ազգային/ շուկայի ձեռավորման առաջնահերթ խնդիր է միջին և հատկապես փոքր ձեռնարկատիրական գործունեության խրախուսման համար անհրաժեշտ պայմանների ստեղծումը: Այս առումով հարկերի իջեցումը և հարկման հա-մակարգի պարզեցումը պետք է լինի առաջին և առավել նշանակալից քայլը մանր ձեռնարկատիրության ոլորտում պետական քաղաքականության իրականացման ճանապարհին:

ՄԴԿ 51

ՄԱԹԵՄԱՏԻԿԱ

3. Պետրոսյան Վ. Ծ. Եզրային խնդիրներ երկրորդ կարգի էլիպտիկ հավասարման համար կիսահարթությունում միջին գուգամիտության իմաստով / Հայ. պետ. ճարտարագիտ. համալս.: - Երևան, 1999: - 16 էջ: - Մատենագր. 4 ան.: - Ռուս.: - Ավանդ. է ՀայԳՏԼԳՀ - ում 14.04.99, թիվ 43 - Ap99

Քննարկված են երկրորդ կարգի հաստատուն գործակիցներով էլիպտիկ հավասարումների համար եզրային խնդիրները, երբ եզրային պայմանները հասկացվում են L^1 - գուգամիտության իմաստով: Այն դեպքում, երբ բնութագրիչ հավասարման արմատները գտնվում են վերին և ստորին կիսահարթություններում, ուսումնասիրվում է Դիրիլյեի խնդիրը: Յույց է տրվում, որ

համասեռ խնդիրն ունի տրիվիալ լուծում, և բացահայտ տեսքով գրվում է ոչ համասեռ խնդրի միակ լուծումը: Երբ բնութագրիչ հավասարման արմատները գտնվում են վերին կիսահարթությունում, ուսումնասիրվում է Ռիման-Հիլբերտի խնդիրը: Դիտարկվում են համասեռ և ոչ համասեռ խնդիրները և բացահայտ տեսքով գրվում է այդ խնդրի ընդհանուր լուծումը:

ՄԴԿ 53

ՖԻԶԻԿԱ

4. Կազարով Ի. Ն. Կազարով Է. Գ. Չանգվածների տեղաշարժման մասին Երկրագնդի հեղուկ միջուկում / Կոռպորատիվ "Հույս". - Մասիսի շրջ., 1999: - 9 էջ, 1 նկ.: - Մատենագր. 9 ան.: - Ռուս.: - Ավանդ. է ՀայԳՏԼԳՀ-ում 21.04.99, թիվ 44 - Ap99

Նետազոտված են Երկրագնդի հեղուկ միջուկում հիդրոմագնիսական դինամոյի մեխանիզմի առաջացման պատճառները: Որպես հիմք ընդունված է պտտման առանցքի նկատմամբ ներքին միջուկի տեղաշարժը և մանթայի համեմատ նրա բավականին մեծ անկյունային արագությունը: Քննարկելով այդ պայմանները, հեղինակները հանգում են այն եզրակացության, որ ուղեծրի նկատմամբ ներսից պինդ միջուկի նյութի վրա ազդող ճնշումն ավելի փոքր է, քան արտաքինից: Դա բերում է պինդ միջուկի մի մասի վերախտացմանն ու հեղուկացմանը և ավելի խիտ ու տաք շիթի շարժմանը հեղուկ միջուկի մեջ: Հաշվի առնելով պինդ միջուկի մեծ անկյունային արագությունը հեղուկ միջուկի և մանթայի համեմատ, ներսուզված տաք շիթը հասնում մանթային և հարկադրված սպիրալաձև թեքվում ու պտտվում էլիպտիկայի հարթության մեջ: Բնութագման պատճառով ներքին միջուկի նյութը դրական է լիցքավորվում: Դրա հետևանքով սպիրալաձև շիթն ստեղծում է շրջանային էլեկտրական հոսանք, որի շուրջն առաջանում է Երկրի մագնիսական դաշտը: Պարզվում

է, որ փոքրամասշտաբ նմանատիպ գործընթացներն են առաջացրել Լուսնի վրայի մասկոնները:

5. Ալեքսանյան Ալ. Գ. Բացասական թունելային հաղորդականությունը գերցանց-արգելակ-գերցանց (ԳՅ-Ա-ԳՅ) տիպի կառուցվածքներում / Ֆիզիկայի կիրառական պրոբլեմների ին-տ: - Երևան, 1999: - 3 էջ, 1 նկ.: - Մատենագր. 2 ան.: - Ռուս.: - Ավանդ. է ՀայԳՏԼԳՏԻ-ում 06.04.99, թիվ 40 - Ap99

Առաջարկվում է ԳՅ-Ա-ԳՅ տիպի կառուցվածք: Յույց է տրված, որ առաջարկված կառուցվածքի ՎԱԲ-ի վրա կարելի է դիտել բացասական հաղորդականության էֆեկտ: Սարքերի արագագործությունը, հիմնված այդ կառուցվածքի վրա, կսահմանափակվի թունելավորման ժամանակով: Նախնական հաշվարկները ցույց են տալիս, որ ԲԴՆ-ի մեծությունը ՎԱԲ-ի վրա զգալուն է կառուցվածքի պարամետրերի նկատմամբ, ներառյալ արգելակի բարձրությունը, լայնությունը, լնգիրացման կոնցենտրացիան և ԳՅ-ի մինիգոտային պարամետրերը:

6. Ալեքսանյան Ալ. Գ. Չ Զ Ե լազերի գեներացիայի գերցածր շեմի մասին / Ֆիզիկայի կիրառական պրոբլեմների ին-տ: - Երևան, 1999: - 6 էջ: - Մատենագր. 9 ան.: - Ռուս.: - Ավանդ. է ՀայԳՏԼԳՏԻ-ում 06.04.99, թիվ 41 - Ap99

Առաջարկված է մեխանիզմ, որը թույլ է տալիս բացահայտելու Չ Զ Ե լազերի գերցածր շեմային գեներացիայի պատճառներին մեկը: Դրա էությունն այն է, որ գոտիներում քվանթացման հաշվի առնումը քվանթային շերտի 100 ժ -ից պակաս հաստությունում դնպքում հանգեցնում է բեկման գործակցի զգալի աճի: Ընդ որում, հասնելով իր առավելագույն արժեքին ուժեղացման մաքսիմումի հաճախականության վրա, այն ապահովում է ան-հրաժեշտ օպտիկական սահմանափակում համապատասխան շեմային պայմանների բավարարման համար:

7. Ալեքսանյան Ալ. Գ. Քվանթային կետերի ոչ գծային սպեկտրոսկոպիայի մասին / Ֆիզիկայի կիրառական պրոբլեմների ին-տ: - Երևան, 1999: - 3 էջ: - Մատենագր. 3 ան.: - Ռուս.: - Ավանդ. է ՀայԳՏԼԳՏԻ-ում 06.04.99, թիվ 42 - Ap99

Յույց է տրված, որ հազեցման էֆեկտի շնորհիվ քվանթային կետերի ոչ համասեռ ընդլայնված կլանման սպեկտրում հնարավոր է դիտարկել խոռչի այրում: Որոշված են խոռչի հնարավոր չափսերը: Բերված է էլեկտրական դաշտի գնահատումը, որի դնպքում հնարավոր է դիտել խոռչի այրումը:

УДК 620.9

ԷՆԵՐԳԵՏԻԿԱ

8. Ղազարյան Յու. Հ., Բեջանյան Գ. Դ., Հարությունով Մ. Ռ. Էներգառեսուրսների մայրուղային փոխադրման տնտեսական հայեցակետերը շուկայական պայմաններում / ՏՀԲ «ՆԻԻԳազէկոնոմիկա »: - Երևան, 1999: - 8 էջ, 4 աղ.: - Մատենագր. 7 ան.: - Ռուս.: - Ավանդ. է ՀայԳՏԼԳՏԻ-ում 18.05.99, թիվ 47 - Ap99

Անցումը շուկայական հարաբերություններին պահանջում է էներգառեսուրսների տեղափոխման և սպառման նոր մոտեցումների մշակում: Լուսաբանված են հնդուկ և գազային ածխաջրածինների տեղափոխման խողովակաշարային համակարգերի նախագծման, կառուցման և շահագործման որոշ տնտեսական հայեցակետեր:

9. Ծովյան Ռ. Վ., Ղոսալյան Հ. Ա. Էլեկտրաէներգիայի հեռանկարային սակագնի ազդեցությունը էներգահամակարգի օբյեկտների շուկայական արժեքների վրա / «Էներգետիկայի ՀԳՀ ինստիտուտ » ՊՓԲԸ: - Երևան, 1999: - 7 էջ, 1 նկ., 1 աղ. : -

Մատենագր. 2 ան.: - Հայ.: - Ավանդ. է ՀայԳՏԼԳՏԻ-ում 30.04.99, թիվ 45 - Ap99

Նվիրված է էներգաօբյեկտների շուկայական արժեքների որոշմանը էլեկտրաէներգիայի հեռանկարային սակագնի տար-բեր մեծությունների դեպքում: Հաշվարկի հիմքում դրված է գնման արժեքի և էներգաօբյեկտին անհրաժեշտ ներդրվող կա-պիտալի դիմաց առաջադրված նորմայով շահույթ ստանալու պայմանը: Բերված են թվային օրինակ և էներգաօբյեկտի շու-կայական գնի կախվածության գրաֆիկը էլեկտրաէներգիայի հե-ռանկարային սակագնից տարբեր շահույթի նորմաների դեպ-քում:

УДК 621

ՄԵՔԵՆԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ

10. Իսա Ահմեդ. Անդրաձայնային տատանումների կիրա-ռումը դեղամիջոցների հաբերի մամլման ժամանակ / Հայ. պետ. ճարտարագիտ. համալս.: - Երևան, 1999: - 12 էջ, 5 նկ.: - Մատենագր. 10 ան.: - Ռուս.: - Ավանդ. է ՀայԳՏԼԳՏԻ-ում 15.03.99, թիվ 39 - Ap99

Հետազոտված է բրիոնիի (լոշտակ) փոշեհատիկներից հաբե-րի անդրաձայնային մամլման գործընթացը: Փորձերի մաթեմա-տիկական պլանավորման եղանակով ստացվել են մամլմայրի մեջ շփման ուժի և հաբերի բարձրության ֆունկցիոնալ կախվա-ծությունները անդրաձայնային տատանումների ամպլիտուդից, փոշեհատիկների զանգվածից և մամլման ուժից: Ստացված արդյունքները ցույց են տալիս, որ անդրաձայնի կիրառումը թույլ է տալիս ստանալ բրիոնիի որակյալ հաբեր առանց կապակցող տարրերի այն դեպքում, երբ սովորական հաբավորման եղա-նակով հաբերը չեն ձևավորվում նույնիսկ մամլման ուժը հինգ անգամ մեծացնելիս:

УДК 621.38/39

ԷԼԵԿՏՐՈՆԻԿԱ: ՌԱԴԻՈՏԵԽՆԻԿԱ: ԿԱՊ

11. Փափազյան Ա. Վ. Ֆոտոբազմապատկիչի մուտքային խցիկի աշխատանքը գերբարձրահաճախական ռադիոհեռու-դինացման ռեժիմում / Հայաստանի Հանրապետության Զինված Ուժերի Գլխավոր Շտաբ: - Երևան, 1999: - 7 էջ, 1 նկ.: - Մատե-նագր. 3 ան.: - Հայ.: - Ավանդ. է ՀայԳՏԼԳՏԻ-ում 13.05.99, թիվ 46 - Ap99

"Ֆոտոբազմապատկիչը ռեզոնատորում" հանրահայտ սարքը, որի օգնությամբ իրականացվում է գերբարձրահաճախականու-թյուններով մոդուլված լույսի ընդունումը, որոշ դեպքերում իրեն չի արդարացնում հետերոդինի մեծ հզորության պատճառով: Հոդվածում դիտարկվում է մեկ այլ սարք, որտեղ չկա առանձին հետերոդին: Այն կառուցված է սարքի ռեզոնատորի բազայի հիման վրա, որում լրացուցիչ տեղադրված է տրանզիստոր: Վերջինիս ելուստներն այնպես են միացված ռեզոնատորի պա-տերին, որ նրանում գեներացվում են որոշակի հաճախականու-թյան տատանումներ: Ֆոտոկատոդից դուրս թափված էլեկտրոնների մոդուլված հոսքը, շարժվելով ռեզոնատորի էլեկտրական դաշտի տիրույթով, նրանում առաջացնում է մեկ այլ հաճախականու-թյան լարում: Ռեզոնատորի գումարային լարման դետեկտումից հետո սարքի ելքում ստանում ենք միջանկյալ հաճախականու-թյան օգտակար ազդանշան: Կատարված է ռեզոնատորում առաջացած լարման հաշվարկ և համեմատական անալիզ, որից բխում է, որ սարքի հիմնական առավելություններն են հե-տերոդինի փոքր հզորությունը և նրա պարզությունը:

УДК 681.3

ՀԱՇՎՈՂԱԿԱՆ ՏԵԽՆԻԿԱ

12. Մնացականյան Ջ. Ռ., Մնացականյան Վ.Ռ. Լուծման աղյուսակների ինտերպրետատորը և ինֆորմացիոն տեխնոլոգիաներ հԸԾ-համակարգերի պոստպրոցեսորների գեներատորի հիմքում / Հայ. պետ. ճարտարագիտ. համալս.: - Երևան, 1999: - 5 էջ, 1 նկ.: - Մատենագր.1 ան.: - Ռուս.: - Ավանդ. է ՀայԳՏԼԳՀ-ում 14.05.99, թիվ 54 - Ap99

Ինտերպրետատորը, ընդհանուր առմամբ, մեքենայական լեզվով գրված ծրագիր է, որը կարող է մշակել բացույտ պարունակող սահմանափակ մուտքով լուծման աղյուսակներ: Հակառակ այլ մշակման մեթոդների այլ դեպքում լուծման աղյուսակները միանգամից մեկնաբանվում են, թարգմանվելու փոխարեն: Նման գործողությունները կատարելու համար անհրաժեշտ է ալգորիթմ, որը, օպերատիվ հիշող սարքում մատրիցայի տեսքով լուծման աղյուսակների առկայության դեպքում, տրված իրավիճակի հիման վրա գտնում է համապատասխան օրենքը և կատարում անհրաժեշտ գործողությունը: Ծրագրի հիմքում դրված է կիրկի մեթոդը: Մշակման ժամանակ, բացի ինտերպրետատոր ծրագրից, որը օգտագործվում է հիմնական ծրագրում միայն մեկ անգամ, օպերատիվ հիշողությունում պետք է գրանցվի նաև լուծման աղյուսակը: INTER լուծման աղյուսակների ինտերպրետատորը նախագծված է VCL գրադարանի դասերի կիրառությանը, Delphi լեզվի հիման վրա: Ինտերպրետատորը համա-դրում է լուծման աղյուսակներ օգտագործողի ներկայացումը Ttable օբյեկտի նկատմամբ:

УДК 681.51

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԻՔԵՌՆԵՏԻԿԱ

13. Մաթևոսյան Պ. Ա., Մնացականյան Մ. Հ. Մթնոլորտի ազոտի ներկայության ընդհանուր քանակության չափիչ / Հայ. պետ. ճարտարագիտ. համալս.: - Երևան, 1999: - 11 էջ, 1 նկ.: - Մատենագր. 8 ան.: - Ռուս.: - Ավանդ. է ՀայԳՏԼԳՀ-ում 20.05.99, թիվ 48 - Ap99

Բերված են մթնոլորտում ազոտի ներկայության ընդհանուր քանակության չափման ոչ դիֆրակցիոն մեթոդի վրա հիմնված չափիչի մշակման արդյունքները: Չափիչը նախատեսված ինչպես ստացիոնար, այնպես էլ ոչ ստացիոնար պայմաններում շահագործման համար, մասնավորապես վերգետնյա, ծովային և օդային տեղափոխման միջոցների վրա տեղադրելու համար: Բերված են չափիչի ֆունկցիոնալ սխեման, չափման ընտրված սկզբունքի հիմնավորման հիմնական բանաձևերը, ինչպես նաև չափիչի սարքաստուգման մեթոդիկան:

УДК 69

ՇԵՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

14. Ավանեսյան Վ. Գ., Դալլաքյան Ֆ. Ա. Մնյամիկության մի քանի խնդիրների և ԼՂՀ սահմաններում ներկառարժ հարուցող պատճառների մասին / "Արցախի միջազգային" Դ/Ձ: - Ստեփանակերտ, 1999: - 4 էջ: - Մատենագր. 10 ան.: - Ռուս.: - Ավանդ. է ՀայԳՏԼԳՀ-ում 04.06.99, թիվ 49 - Ap99

Բերվում է հաղորդագրություն ներկառարժերի ծագման պատճառներին վերաբերող գոյություն ունեցող գրականության վերլուծության արդյունքների մասին, և շոշափվում են հարցեր

սեյսմիկության մի քանի խնդիրների վերաբերյալ: Նշվում է, որ Լեռնային Դարաբաղի տարածքը հանդիսանում է երկրակեղևի քիչ ուսումնասիրված տարածաշրջաններից մեկը, եւ սեյսմիկ

վտանգի հարցերի լուծումը հանդիսանում է այդ տարածաշրջանի հրատապ խնդիրը: Սեյսմիկ գործընթացների ուսումնասիրման աստիճանի վերլուծության հիման վրա առաջարկվում է ԼՂՀ տարածաշրջանի հետագա ուսումնասիրումը շարունակել յոթ ուղղությամբ, որոնք ընդգրկում են. ժամանակակից ներծին ռեժիմի ուսումնասիրումը, կառուցվածքային-երկրադինամիկ հետազոտություններին ուղղված նորագույն տարբերակների մշակումը, կառուցվածքների առաջացման պատճառների բացահայտմանն ուղղված նոր երկրադինամիկ մոդելի մշակումը, երկրադինամիկ գործընթացների զարգացման վրա գրավիտացիոն դաշտի ազդեցության բացահայտմանն ուղղված հետազոտությունները, երկրակեղևի լարվածության վիճակի աստիճանին ուղղված հետազոտությունները, սեյսմիկ գործընթացների օրինաչափությունների բացահայտման նպատակով լավագույն հիդրոերկրադինամիկ տարբերակների ընտրությունը, մարդկանց կյանքին սպառնացող վտանգի բացահայտմանն ուղղված հետազոտությունները:

15. Ավանեսյան Վ. Գ., Դալլաքյան Ֆ. Ա. Սեյսմիկ վտանգի մակարդակի գնահատումը ԼՂՀ սեյսմածին գոտիների դինամիկ ազդեցության սահմաններում / "Արցախի ժնախագիծ" Դ/Ձ: - Ստեփանակերտ, 1999: - 6 էջ: - Մատենագր. 10 ան.: - Ռուս.: - Ավանդ . է ՀայԳՏԼԳՀ-ում 04.06.99, թիվ 50 - Ap99

Բերվում է հաղորդագրություն սեյսմածին գոտիների սեյսմիկ վտանգի ժամկետին բացահայտմանն ուղղված խնդիրների ուսումնասիրության ժամանակակից վիճակի վերլուծության արդյունքների, եւ սեյսմածին գոտիների ժամկետին կանխագուշակման ու տվյալ շրջանի սեյսմիկ վտանգի մակարդակի որոշման նպատակով լայնածավալ հետազոտությունների կատարման անհրաժեշտության մասին: Նշվում է, որ Լեռնային Դարաբաղի

տարածքում սեյսմիկ վտանգի որոշման համար առաջնահերթ խնդիր է հանդիսացել սեյսմածին գոտիների գնահատումը՝ համաշխարհային պրակտիկայում ճանաչում գտած տարբերակների օգտագործմամբ: Սեյսմիկ վտանգի մակարդակը սահմանվել է գրունտների հորիզոնական արագացումների /a/ հաշվարկներով, որոնց վարման համար ընտրվել են դիտարկվող տեղամաս-սին առավել համապատասխանող բանաձևեր: Կատարված հաշվարկների արդյունքները օգտագործվել են ԼՂՀ տարածքի մանրագին սեյսմաշրջանացման քարտեզի կազմման համար:

YDK 78

ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ

16. Անանյան Կ. Ա. 1950-70 թթ. հայ դաշնամուրային պրելյուդիայի երաժշտական լեզվի, ֆակտուրայի եւ ձևակառուցման առանձնահատկությունները / Եր. պետ. կոնսերվատորիա. - Երևան, 1999: - 37 էջ, 3 աղ: - Մատենագր. 9 ան.: - Ռուս.: - Ավանդ . է ՀայԳՏԼԳՀ-ում 09.06.99, թիվ 51 - Ap99

Նշված ժամանակաշրջանի դաշնամուրային պրելյուդներում երաժշտական լեզվի, լադահարմոնիայի, ֆակտուրայի, ձևակազմական սկզբունքների ոճական հատկանիշների ուսումնասիրությունը ի հայտ է բերում մի շարք էական միտումներ՝ հայ կոմպոզիտորական արվեստի այդ կարևոր բնագավառի զարգացման համար: Է. Բաղդասարյանի, Է. Աբրահամյանի, Է. Հովհաննիսյանի, Գ. Հովունցի եւ Լ. Չաուշյանի ստեղծագործությունները այդ ժանրում կարևոր ավանդ են ազգային դաշնամուրային կամերային երաժշտություն եւ մեծապես հստակեցնում են նրա բովանդակային ու կառուցողական բնորոշ եզրերը: Հիշյալ կոմպոզիտորների պրելյուդները, իրենցում խտացնելով լեզվական, դրամատուրգիական, կոմպոզիցիոն տիպա-կան եւ անհատական հատկանիշների լայն գունապնակ, հետա-

գոտողի առջևի դնում են այնպիսի ուշագրավ հիմնահարցեր, որոնց տեսական բացահայտումը հայ արդի նրաժշտագիտության ժամանակամետ խնդիրներից է: Բացահայտված ար-դյունքների գործնական ուղղվածությունը կարող է օգտագործ-վել կոմպոզիտորական ու կատարողական արվեստում, մանկա-վարժության և քննադատության բնագավառում:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՌԵՎՏՐԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԼՐԱՏՎՈՒԹՅԱՆ
ԵՎ ՏԵԽՆԻԿԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ
(ՀայԳՏԼԳՀ)**

**ԱՎԱՆԴԱԴՐՎԱԾ ԳԻՏԱԿԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ**

ԵՌԱՄՍՅԱ ՍԵՂՄԱԳՐԱՅԻՆ ԺՈՂՈՎԱԾՈՒ

թիվ 4

Երևան 2004

УДК 502

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Էկոլոգիայի և շրջակա միջավայրի պահպանության հարցեր:** Էկոլոգանոսֆերային հետազոտությունների կենտրոնի գիտական աշխատությունների ժողովածու, **հ. 4 /Էկոլոգանոսֆերային հետազոտ. կենտրոն: - Երևան, 1999: - 76 էջ, 11 աղ.: - Մատենագր. 146 ան.: - Ռուս.: - Ավանդ. է ՀայԳՏԼԳՀԻ-ում 10.08.99, թիվ 58 - Ap99**

Գիտական աշխատությունների սույն ժողովածուի մեջ հիմնականում ամփոփված են շրջակա միջավայրի պահպանության հիմնախնդիրների հետ անմիջականորեն առնչություն ունեցող հարցեր. նյութերի ջրամիզարկում հոսքի ձևավորման գնահատում՝ կապված էկոհամակարգի վրա տնայնամասին ծանրաբեռնվածության հետ, լեռնամարգագետնային բույսերում ուրանի, իսկ պտղա-բանջարանոցային մշակաբույսերում ծանր մետաղների կուտակման, ինչպես նաև տարբեր բնակլիմայական գոտիներում արոտների և խոտհարքների կենսաէներգիայի առանձնահատկություններին վերաբերող հարցեր: Ժողովածուի մեջ հատուկ տեղ է զբաղեցնում բնական և մարդածին երկրադինամիկ համակարգերի ուսումնասիրմանը և քարտեզագրմանը վերաբերող հոդվածը, որտեղ ամփոփված են բազմամյա տարիների արդյունքները: Ներկայացված է կենսաինդիկացիոն հետազոտությունների պատմա-մեթոդական ակնարկ, որտեղ վերլուծված է հանրապետությունում տարվող ինդիկացիոն աշխատանքների ամբողջ սպեկտրը:

2. **Գետրոգյան Ֆ. Ա., Գազիյան Ռ. Խ. Հայաստանի հյուսիսարևելյան մասի (Շիրակ) բնական և մարդածին երկրադինամիկական համակարգերի ուսումնասիրումն ու քարտեզագրումը և դրանց զարգացման կանխատեսումը /Ժողովածու, հ. 4,**

էջ 2 - 11: - Մատենագր. 3 ան.: - Ռուս.: - Ավանդ. է ՀայԳՏԼԳՀԻ-ում 10.08.99, թիվ 59 - Ap99

Տրվում են բնական և մարդածին երկրահամակարգերի քարտեզագրման սկզբունքները և չափանիշները: Առանձնաց-

վում են ռելիեֆի, նորագույն տեկտոնական շարժումների տարրերը և ձևերը: Կազմվել է խոշոր մասշտաբի լանդշաֆտային գեոմորֆոլոգիական քարտեզ: Առանձնացված տարածքային միավորների (տաքսոնների) համար որոշվել են բնության պահպանության ու արդյունավետ օգտագործման ուղիները և բնական ու մարդածին նեգատիվ գործընթացների, երևույթների դեմ պայքարի միջոցառումները: Աղյուսակի ձևով տրված է արտածին գործընթացների գերակշռությամբ տնտեսական օգտագործման և հողային ռեսուրսների պաշտպանության նպատակով կազմված գեոմորֆոլոգիական շրջանացման սխեման:

3. **Անանյան Վ. Լ. Ուրանի կուտակումը լեռնային խոտաբույսերում պարարտանյութերի կիրառման դեպքում /Ժողովածու, հ. 4, էջ 12-18: - Մատենագր. 10 ան.: - Ռուս.: - Ավանդ. է ՀայԳՏԼԳՀԻ-ում 10.08.99. թիվ 60 - Ap99**

Բուսական մթերքը մարդու օրգանիզմում պարունակվող ռադիոնուկլիդների հիմնական աղբյուրներից մեկն է: Այդ իսկ պատճառով կարևոր նշանակություն է ստանում դրանց՝ հողից բույսի մեջ ներմուծման օրինաչափությունների ուսումնասիրությունը: Հայաստանի տարբեր բնական գոտիներում (ալպիա-կան, մարգագետնա-տափաստանային, անտառային) փոքրա-ծավալ դաշտային փորձերի օգնությամբ ուսումնասիրել ենք պարարտանյութերի ազդեցությունը խոտաբույսերի մեջ ուրանի կուտակման վրա: Պարարտանյութերի կիրառումը գգալի չափով բարձրացրել է խոտաբույսերի բերքատվությունը: Սուպերֆոսֆատի (որը պարունակում է ուրանի խառնուրդ) տարբերակ-ներում խոտաբույսերում ուրանի խտությունը ավելացել է 25-314%-ով:

Ազոտական պարարտանյութի ներմուծումը նպաստել է հողում եղած ուրանի մատչելիությանը, որի հետևանքով նրա պարունակությունը բույսում որոշ չափով բարձրացել է: Այսպիսիական գոտու թթու հողերում կրի օգտագործումը կտրուկ նվազեցրել է ուրանի մուտքը բույսի մեջ: Ուրանի կուտակման գործակիցը տատանվել է միավորի հարյուրերորդական սահմաններում:

4. Մուրադյան Ա. Հ., Հովհաննիսյան Հ. Ա., Ավետիսյան Մ. Հ., Ամիրխանյան Մ. Վ., Խաչիյան Դ. Ն. Որոշ բանջարանոցային մշակաբույսերում Ni-ի և Mn-ի պարունակությունների շուրջ /Ժողովածու, հ. 4, էջ 19-22: - Մատենագր. 8 ան.: - Ռուս.: - Ավանդ. է ՀայԳՏԼԳՀ-ում 10.08.99, թիվ 61 - Ap99

Ուսումնասիրվել է Երևան քաղաքի ազլումերացիայում աճեցվող որոշ բանջարանոցային մշակաբույսերում (լոլիկ, սմբուկ, բիբար, լոբի) Ni-ի և Mn-ի կուտակման առանձնահատկությունները: Բաղաքի մի շարք կետերում հայտնաբերվել են այդ տարրերի բարձր պարունակություններ, որոնք նշանակալիորեն գերազանցում են գյուղատնտեսական մշակաբույսերում դրանց սահմանաթույլատրելի խտությունները: Ուսումնասիրված մշակաբույսերից ամենից շատ նիկել իր մեջ կուտակում է լոբին՝ հատկապես հրազդան գետի կիրճում, Ավան-Առինջում և Նորքի գանգվածում, իսկ ամենից քիչը՝ սմբուկը: Մանգանի բարձր պարունակություններ հայտնաբերվել են լոբու, բիբարի և լոլիկի մեջ: Հետազոտության արդյունքները պահանջում են տեխնածին աղտոտման տարածքներում աճեցվող գյուղատնտեսական մշակաբույսերի ծանր մետաղներով (ՄՄ) աղտոտման մշտական մոնիթորինգի անցկացում:

5. Եսայան Դ. Լ., Ռևազյան Ռ. Հ., Սաֆրազբենյան Է. Ա. Նյութերի ջրամիզրացիոն հոսքերի ձեռնարկման գնահատա-կանը Արարատի ոսկու կորզման ֆաբրիկայի պոչանքապահեստարանների պայմաններում /Ժողովածու, հ. 4, էջ 23-27: -

Մատենագր. 3 ան.: - Ռուս.: - Ավանդ. է ՀայԳՏԼԳՀ-ում 10.08.99, թիվ 62 - Ap99

Հետազոտություններ են տարվել Արարատի ոսկու կորզման ֆաբրիկայի պոչանքապահեստարանների շրջանում էկոհամակարգերի վրա տեխնածին ծանրաբեռնվածության գնահատման վերաբերյալ: Հետազոտությունների արդյունքները ցույց են տվել, որ հոսքային ջրերի և մթնոլորտային տեղումների հետ մակրոբաղադրիչների ու ծանր մետաղների մուտքը ինֆիլտրացվող ջրեր և դրանց հետագա վարքը կապված են մշտապես տեղի ունեցող ձեռնարկումների հետ: Բացահայտված է գրունտային ջրերի մեջ դրանց անմիջական ներթափանցման վտանգը:

6. Մեծունց Բ. Խ., Հայրապետյան Է. Հ. Բնական արտոնների և խտհարքների կենսաէներգիայի ուսումնասիրությունը Գեղամա լեռնազանգվածի պայմաններում /Ժողովածու, հ. 4, էջ 28-32: - Մատենագր. 12 ան.: - Ռուս.: - Ավանդ. է ՀայԳՏԼԳՀ-ում 10.08.99, թիվ 63 -Ap99

Ամփոփված են բույսերի տեսակարար կալորիականության (ՏԿ) և էներգատարողության տվյալները Գեղամա լեռնաշղթայի չոր-տափաստանային, մարգագետնա-տափաստանային և ալպիական գոտու պայմաններում: Հետազոտությունների օբյեկտ են ծառայել խատուտիկի բույսերը, ինչպես նաև հացազգիների, ընդեղենների և տարախտերի նմուշները: Բույսերի ՏԿ-ն որոշվել է կալորիմետրիկ ռումբերում նմուշների անմիջական այրման միջոցով: Բացահայտվել են էական տարբերություններ ՏԿ-ի և էներգատարողության ցուցանիշներում՝ կապված բարձունքային գոտիների փոփոխման հետ: Բույսերի ՏԿ-ն տատանվել է 2,9-5,2 կկալ/գ սահմաններում, վերգետնյա օրգանների էներգատարողությունը՝ 0,7-4,0, իսկ ստորգետնյա օրգաններինը՝ 5,0-11,0 հազ. կկալ/մ² սահմաններում:

7. Հովհաննիսյան Հ. Ա. Կապարը եւ պղինձը Երևան քաղաքի բանջարանոցային մշակաբույսերում /Ժողովածու, հ. 4, էջ 33-35: - Մատենագր. 7 ան.: - Ռուս.: - Ավանդ. է ՀայԳՏԼԳՀԻ-ում 10.08.99, թիվ 64 - Ap99

Ուսումնասիրվել է կապարի եւ պղինձի խտությունները Երևան քաղաքի տարածքում աճեցվող որոշ բանջարանոցային մշակաբույսերում (լոլիկ, բիբար, լոբի, սմբուկ): Բացահայտվել է, որ քաղաքի մի քանի շրջաններում (Նոր-Արեշ, Նորքի գանգված, Սարի թաղ) այդ տարրերի պարունակությունը երկու անգամ գերազանցում է սահմանաթույլատրելի խտությունները: Ուսումնասիրված բանջարանոցային մշակաբույսերից ամենից շատ կապար կուտակում են լոբին եւ լոլիկը, իսկ պղինձ՝ նաեւ բիբարը: Հաշվի առնելով այդ տարրերի տոքսիկ հատկությունները եւ մարդկանց օրգանիզմ թափանցելու դրանց բարձր խտությունների վտանգավորությունը, անհրաժեշտ է Երևան քաղաքի տարածքում աճեցվող բանջարանոցային մշակաբույսերի մշտական մոնիթորինգի անցկացում:

8. Չուխարյան Օ. Ա., Արևշատյան Ս. Հ., Ավետիսյան Ս. Ժ., Ամիրյան Ա. Լ., Սողոմոնյան Ա. Ս. Կենսափնդիկացիոն հետազոտությունների պատմամեթոդաբանական ակնարկ /Ժողովածու, հ. 4, էջ 36-70: - Մատենագր. 97 ան.: - Ռուս.: - Ավանդ. է ՀայԳՏԼԳՀԻ-ում 10.08.99, թիվ 65 - Ap99

Ակնարկում վերլուծված է հայրենական եւ արտասահմանյան գրականություններում կենսափնդիկացիայի տարբեր ուղղությունների լայն սպեկտրը, քննարկված են կենսափնդիկացիոն հետազոտությունների պատմությունը, հայեցակարգը եւ մեթոդաբանությունը: Անց է կացվել մանրակրկիտ վերլուծություն կենսույթի ինդիկացիոն օգտագործման տեսության սկզբունքների ու խնդիրների գնահատման ու էկոհամակարգերի արդյունաբերական թափոններով բնական եւ մարդածին աղտոտման գործընթացների, ինչպես նաեւ հանքավայրերի որոնման եւ

հետախուզման համար: Հիմնական ուշադրությունը հատկացվել է միջավայրի ծանր մետաղներով աղտոտման ինդիկացիային՝ շեշտը դնելով բուսա- եւ կենդանափնդիկացիայի վրա, որպես արագընթացային եւ համարժեք մեթոդներ: Վերլուծված է Հայաստանում տարվող ինդիկացիոն աշխատանքների սպեկտրը, եւ առաջին անգամ բերված են Երևան քաղաքի մթնոլորտի երկրամերձ շերտերի տեխնածին աղտոտման համար փորձարկված լիսենոինդիկացիայի մեթոդի արդյունքները: Հիմնը վելով համաշխարհային եւ սեփական հետազոտությունների արդյունքների վրա, արված են մի շարք սկզբունքային եզրահանգումներ կենսափնդիկացիայի օգտագործման հնարավորության վերաբերյալ աղտոտիչների տարածաժամանակային բաշխման բնույթի գնահատման եւ դրանց վերլուծության ուղղությամբ կենսույթի բաղադրիչներում, որպես ավանդադրող հիմնանյութում, չնայած որ, անբավարար է ուսումնասիրված առանձին տեսակների եւ դրանց համակեցությունների աուտէկոլոգիան:

9. Նալբանդյան Ա. Գ. Երևան քաղաքի հողերի ռադիոակտիվության հարցի մասին /Ժողովածու, հ. 4, էջ 71-76: - Մատենագր. 6 ան.: - Ռուս.: - Ավանդ. է ՀայԳՏԼԳՀԻ-ում 10.08.99, թիվ 66 - Ap99

Ամփոփված են Երևան քաղաքի հողերի ռադիոակտիվության հետազոտման արդյունքները, հատկապես, հյուսիս-արևելյան եւ հարավային հատվածներում: Գումարային β-ակտիվությունը դիտարկվում է որպես հողերի ռադիոակտիվ նյութերով աղտոտման ցուցիչ: Իբրեւ բնական մակարդակ ընդունված է չափանիշների հետևյալ սահմանը. 600 Բկ/կգ: Երևան քաղաքի երկու շրջանների չափումների արդյունքները ցույց են տվել, որ նմուշների մեծ մասի մոտ ռադիոակտիվությունը տատանվում է 700-750 Բկ/կգ (Քանաքեռ-Ավան՝ 35 %, Նորագյուղ՝ 34 %): Երկու շրջաններում էլ գոյություն ունեն առանձին՝ բարձր ռադիոակտիվությամբ հատվածներ, որտեղ անհրաժեշտ է կատարել ման-

րագնին հետազոտություններ են երկարատև մոնիթորինգ՝ բարձր ռադիոակտիվության պատճառները պարզաբանելու համար:

УДК 51

ՄԱԹԵՄԱՏԻԿԱ

10. Ղազարյան Ն. Լ. Ցիկլային մակերևույթի ստացման արժեքի / Վայ. պետ. ճարտարագիտ. համալս. - Երևան, 1999: - 8 էջ, 10 նկ.: - Մատենագր. 5 ան.: - Վայ.: - Ավանդ. է ՀայԳՏԼԳՀ-ում 07.07.99, թիվ 55 - Ap99

Նկարագրված է զուգահեռ հարթությունների բազմությանը հատող երեք ուղիղներով առաջացած երեք կետերով անցնող շրջանագծերի բազմություն: Շրջանագծերի հավասարումները փոխարինվում են դրանց պրոյեկցիաների հավասարումներով, որը եւ թույլ է տալիս տրանսցենդենտ հավասարումները բերել գծային հավասարումների համակարգին:

11. Ղազարյան Ն. Լ., Ստեփանյան Ա. Ն., Արամյան Լ. Մ. Տարածության ոչ գծային ձևափոխությունը որպես միապարամետրական ինվերսիաների բազմություն / Վայ. պետ. ճարտարագիտ. համալս.: - Երևան, 1999: - 9 էջ, 6 նկ.: - Մատենագր. 6 ան.: - Վայ.: - Ավանդ. է ՀայԳՏԼԳՀ-ում 07.09.99, թիվ 68 - Ap99

Ուսումնասիրվում է ուղիղ գծի նորմալ հարթությունների մեջ ինվերսիոն ձևափոխությունների ∞^1 բազմությունով առաջադրվող 3-D ձևափոխությունը: Դիտարկվում են ձևափոխության առանցքի նկատմամբ տարբեր դիրքի ուղիղների կերպարների ստացման եւ դրանց հատկությունների ուսումնասիրության արժեքներ: Տվյալ արժեքների հիման վրա ստեղծված է ծրագրային ապահովում:

УДК 53

ՖԻԶԻԿԱ

12. Կազարով Ի. Ն., Կազարով Է. Գ. Արևի եւ արևաբծերի մագնիսական բևեռայնության հիմնական պատճառները / Կոռպն-րատիվ <<Հույս>>: - Մասիսի շրջ., 1999: - 12 էջ, 3 նկ.: - Մատենագր. 7 ան.: - Ռուս.: - Ավանդ. է ՀայԳՏԼԳՀ-ում 19.07.99, թիվ 57 - Ap99

Որոշված է Արևի գրգռված զանգվածը, որը տեղաբաշխված է միջուկի մակերևույթային վրա՝ $/0.2 \div 0.3/ R_0$ հեռավորությամբ, եւ կազմում է միջուկի զանգվածի 0.4%-ը: Մեծացման ժա-մանակ այն պայթյունով վերախտանում է: Այն, որպես միջուկի մի մաս, դրական լիցքերի կրող է եւ այդ պատճառով առաջաց-նում է էլեկտրական էներգիայի հոսք, որը ձևավորում է էլեկտրամագնիսական դաշտ եւ ունի հիմնական մաս՝ բծի տեսքով մի բևեռայնությամբ եւ փոքր մաս՝ հակառակ բևեռայնությամբ:

Փորձով ապացուցված է, որ Արևի արագացումը, կախված Յուպիտերի, Սատուռնի եւ Գալակտիկայի միջուկի ձգողականությունից, կազմում է 1000:89:1.34: Դրանով ապացուցվում է, որ Յուպիտերը Արևի վրա էլեկտրամագնիսական դաշտերի եւ բծերի ձևավորման հիմնական պատճառն է:

13. Կազարով Ի. Ն., Կազարով Է. Գ. Երկրի եւ մոլորակների առաջացման հարցի շուրջը / Կոռպն-րատիվ <<Հույս>>: - Մասիսի շրջ., 1999: - 8 էջ, 3 նկ.: - Մատենագր. 9 ան.: - Ռուս.: - Ավանդ. է ՀայԳՏԼԳՀ-ում 03.09.99, թիվ 67 - Ap99

Հետազոտված է Արեգակի միջուկից նյութի բաժնավորված արտանետումների հնարավորությունը մատերիայի այդ թանձրուկներից տասնյակ եւ հարյուրավոր խոշոր ամպերի հետագա գոյացությամբ, համարյա ընդհանուր ուղեծրերի եւ դրանց մոտոկա հատվածների վրա: Այդ դեպքում շարժման

քանակի մոմենտը չի խանգարում Արեգակից մոլորակների առաջացմանը: Հնդիանկները նույնացնում են Արեգակի վրա բծերի առաջացման ընթացքը անցյալում մոլորակների առաջացման գործընթացի հետ: Ընդ որում յուրաքանչյուր մոլորակի առաջացման դարաշրջանը համընկնում է Արեգակի ապելիա-յում գտնվելու դարաշրջաններից մեկի հետ՝ 200 մլն տարում ամենաքիչը մեկ գալակտիկական տարվա պարբերությամբ: Յույց է տրված, որ բծերի պարուրածնի էլեկտրամագնիսական դաշտը, ինչպես նաև դրանից խտացված ամպերը հարկադրում են ամպերի առանձին կառուցվածքների տեղափոխվել մագնիսական ուժային գծերի երկայնքով ամպի աստիճանական տեղափոխմամբ, պտտման առանցքից խավարածրի հարթության մեջ: Հետագայում յուրաքանչյուր ամպի էլեկտրամագնիսական դաշտը սահմանում է իր առանցքը՝ հնարավորին չափ երկրագնդի առանցքին զուգահեռ: Հենց այդ ժամանակ ձգողականության եւ էլեկտրամագնիսական ուժերը մոտեցնում եւ միախառնում են ամպերը միասնական մոլորակի:

УДК 620.9

ԷՆԵՐԳԵՏԻԿԱ

14. Բերբերյան Վ. Է. <<Հագարամյակի փոփոխման հիմնահարցի>> ազդեցությունը Հայկական ԱԷԿ-ի անվտանգ շահագործման, ՀՀ կարգավորող մարմնի աշխատանքի վրա. ՀՀ Պետատոմհսկողության հիմնական առաջարկները այդ հիմնահարցի հետ կապված, վթարային իրավիճակների կանխարգելման եւ դրանց վերացման վերաբերյալ / Հայ. պետ. ճարտարագիտ. համալս.: - Երևան, 1999: - 7 էջ, 2 նկ.: - Մատենագր. 7 ան.: - Անգլ.: - Ավանդ. է ՀայԳՏԼԳՀԻ-ում 07.07.99, թիվ 56 - Ap99

Ներկայացվում է "Հագարամյակի փոփոխման հիմնահարցի" /Հ2Թ/ համառոտ նկարագրությունը եւ դրա ազդեցությունը ԱԷԿ-ների անվտանգ շահագործման վրա: Բերված է անվտանգության համակարգերի վերլուծությունը եւ կառուցված է ըստ անվտանգության մակարդակների դրանց հիստոգրաման: Ներկայացված են Հայկական ԱԷԿ-ում /ՀԱԷԿ-ում/ գալիք Հ2Թ իրադարձության ընդօրինակման արդյունքները եւ ՀՀ կարգավորող մարմնի /ՀՀ Պետատոմհսկողություն/ առաջարկությունները՝ հաշվի առնելով այլ երկրների ունեցած փորձը:

УДК 621.3

ԷԼԵԿՏՐԱՏԵԽՆԻԿԱ

15. Հովսեփյան Ս. Ս., Հարությունյան Ա. Ա., Հովսեփյան Վ. Ս. Բացահայտ բաղկացուցիչ շտտորով սինքրոն մեքենայի փոխարինման սխեմաների պարամետրերի հաշվարկի առանձնահատկությունները /Հայ. պետ. ճարտարագիտ. համալս.: - Երևան, 1999: - 4 էջ, 2 նկ.: - Մատենագր. 2 ան.: - Ռուս.: - Ավանդ. է ՀայԳՏԼԳՀԻ-ում 07.09.99, թիվ 70 - Ap99

Բննարկված են հատուկ տիպի շտտորով սինքրոն մեքենայի փոխարինման սխեմաների պարամետրերի հաշվարկի առանձնահատկությունները: Հաշվի առնելով շտտորի կառուցվածքը, ստացված են համապատասխան տեղամասերի կոմպլեքսային մագնիսական դիմադրությունների գործակիցների բանաձևերը:

16. Ներսիսյան Վ. Բ. Փոփոխական կառուցվածքով ֆունկցիոնալ ձևափոխիչների մագնիսական շղթաները /Հայ. պետ. ճարտարագիտ. համալս.: - Երևան, 1999: - 6 էջ, 7 նկ.: - Մատենագր. 3 ան.: - Ռուս.: - Ավանդ. է ՀայԳՏԼԳՀԻ-ում 07.09.99, թիվ 71 - Ap99

Քննարկվում են փոփոխական կառուցվածքով ֆունկցիոնալ ձեռագրիչների մագնիսական շղթաների որոշ կոնստրուկցիաներ՝ դրանց ֆունկցիոնալ հնարավորությունների անալիզով: Համեմատելով մագնիսառեզիստորային, հոլի տվիչով, շարժական մագնիսներով, շարժական ֆեռոմագնիսական շունտերով եւ շարժական կոնտուրներով ֆունկցիոնալ ձեռագրիչները միմյանց հետ, պարզվում է, որ առավել ֆունկցիոնալ հնարավորություններով օժտված են տրանսֆորմատորային ֆունկցիոնալ ձեռագրիչները:

УДК 621.38

ՌԱԴԻՈՏԵԽՆԻԿԱ

17. Խամո Մազխար. Մինքրոնացման համակարգի կազմակերպման համար տրված իմպուլսի առանձնացման սարքի հնտազոտումը եւ մշակումը /Հայ. պետ. ճարտարագիտ. համալս.: - Երևան, 1999: - 6 էջ, 3 նկ.: - Մատենագր. 3 ան.: - Ռուս.: - Ավանդ. է ՀայԳՏԼԳՀ-ում 07.09.99, թիվ 69 - Ap99

Դիտարկվում է տակտավորող իմպուլսների շարքից տրված (առաջին կամ ցանկացած) իմպուլսը առանձնացնելու հարցը: Կառուցված է այդ գործընթացը իրականացնող սխեմա:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՌԵՎՏՐԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԼՐԱՏՎՈՒԹՅԱՆ
ԵՎ ՏԵԽՆԻԿԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ
(ՀայԳՏԼԳՀ)**

**ԱՎԱՆԴԱԴՐՎԱԾ ԳԻՏԱԿԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ**

ԵՌԱՄՅԱ ՍԵՂՄԱԳՐԱՅԻՆ ԺՈՂՈՎԱԾՈՒ

թիվ 1

ԵՐԵՎԱՆ 2000

УДК 51

ՄԱԹԵՄԱՏԻԿԱ

1. Ներսիսյան Ա. Բ., Հայրապետյան Ա. Խ. Ինտեգրա-դիֆերենցիալ հավասարման թվային լուծման եղանակ / Հայ. պետ. մանկավարժ. ին-տ : - Երևան, 1999: - 10 էջ : - Մատենագր. 4 ան.: - Ռուս.: - Ավանդ. է ՀայԳՏԼԳՀ-ում 04.10. 99, թիվ 1 – Ap00

Ստացված է փաթեթային տիպի ինտեգրա-դիֆերենցիալ հավասարումների թվային լուծման եղանակ՝ որոշակի ֆունկցիոնալի պայմանական էքստրեմումի մեթոդով: Մանրամասնորեն ուսումնասիրվել է մի մասնավոր դեպք և իրականացվել է թվա-յին փորձարկում: Թվային արդյունքները վկայում են կիրառվող մեթոդի արդյունավետության մասին: Հենց վերոհիշյալ մասնավոր դեպքում զուգամիտության արագությունը նույնն է, ինչպես և հեղինակներից մեկի նախկինում հրատարակված աշխատությունում: Սակայն սխալի մեծությունը բավականին փոքր է, նրբեմն մի քանի կարգով: Հաշվարկները իրականացվել են MATHEMATICA 3.0 համակարգի միջոցով: Կառուցված ալգորիթմը պատրաստ է օգտագործման համապատասխան կիրառական խնդիրների լուծման համար, որոնք հանգում են, օրի-նակ, պարամետրերից կախված հաստատուն գործակիցներով հավասարումներին:

2. Դալլաքյան Գ. Վ. R''-ում տրված քվադրատային կիսա-էլիպտիկ հավասարումների լուծումների մոտարկման մասին / Եր. պետ. համալս.: - Երևան, 1999.: - 9 էջ: - Մատենագր. 8 ան.: - Ռուս.: - Ավանդ. է ՀայԳՏԼԳՀ-ում 15.11. 99, թիվ 6 – Ap00

Անվերջությունում հաստատուն գործակիցներով գծային մասով և 0 դառնող ոչ գծային մասով R'' -ում տրված $Au+g(x,u,\dots,D^\beta u,\dots) = f$, $(\mu, \beta) < 2$ տեսքի հավասարման R'' -ում նվազող լուծումների համար ապացուցված են գոյության, ինչպես նաև մեծ

ընդհանրացված գնդերի վրա տրված եզրային խնդիրների լուծումներով մոտարկման թեորեմներ:

3. Ղազարյան Ն. Լ. Ցիկլային մակերևույթի ստացման ալգորիթմ / Հայ. պետ. ճարտարագիտ. համալս.: - Երևան, 1999.: - 16 էջ, 15 նկ.: - Մատենագր. 6 ան.: - Ռուս.: - Ավանդ. է ՀայԳՏԼԳՀ-ում 15.12.99, թիվ 13 – Ap00

Նկարագրվում են պտտման գլանային մակերևույթի շրջանագծերի նկատմամբ վերցրված միապարամետրական հարթ ինվերսիաների բազմության միջոցով ցիկլային մակերևույթների կառուցման գործընթացը և ստացված արդյունքները: Որպես մակերևույթի նախապատկեր վերցրված է հարթությունը: Այդ դեպքում կառուցվող մակերևույթի հիմնականալսի գծեր են դառնում հարթության ուղիղները: Բերված են հարթության ուղիղների և առաջացող մակերևույթների պարամետրերի փոխադարձ կապն ու դրանց կառավարման ալգորիթմները:

УДК 620.9

ԷՆԵՐԳԵՏԻԿԱ

4. Հայրապետյան Գ. Ա., Մուրադյան Ռ. Ջ., Մաֆարյան Վ. Ս., Սարգսյան Վ. Հ. Մատրիցաների հանրահաշվի, Բուլյան հանրահաշվի և հավանականության տևսության կիրառմամբ էլեկրաէներգետիկական համակարգի հարատևության որոշման մեթոդակարգ / «Էներգետիկայի ինստիտուտ» ՊՓԲԸ: - Երևան, 1999: - 10 էջ: - Մատենագր. 5 ան.: - Ռուս.: - Ավանդ. է ՀայԳՏԼԳՀ-ում 04. 10. 99, թիվ 2 – Ap00

Էլեկտրաէներգետիկական համակարգի (ԷԷՀ) գործառնումը վթարային ռեժիմներում բնութագրվում է ռեժիմային և տեխնոլոգիական մի շարք պարամետրերի կտրուկ փոփոխմամբ, որոնց

արժեքների պահպանումը թույլատրելի սահմաններում ապահովում է էներգահամակարգի անվտանգությունը, հուսալիությունը և հարատևությունը (այն է՝ արտաքին ուժերի ազդեցությանը դիմակայման և այդ վիճակի երկարատև պահպանման ընդունակությունը): Առաջարկվում է ԷԼՏ-ի հարատևության վրա անցողիկ գործընթացների ազդեցության գնահատման մեթոդակարգը, որը թույլ է տալիս ալգորիթմացնել էներգահամակարգում անհրաժեշտ հակավթարային կառավարման ներգործության իրականացման ուղղության վեկտորի որոնումը: Առաջարկված մեթոդակարգը հնարավորություն է ընձեռում գնահատել տվյալ հանգույցի վթարայնության ազդեցությունը ԷԼՏ-ի հարատևության վրա, ինչպես նաև ի հայտ բերել այն վթարային խանգարումները, որոնք առավել անբարենպաստորեն են ազդում էլեկտրաէներգետիկական համակարգի դինամիկական ռեժիմների վրա: ԷԼՄ-ի համար մշակված և իրականացված է համակարգչային այնպիսի ծրագրերի համալիր, որոնց փորձափակումները ցույց է տվել դրանց աշխատունակությունը:

5. Եղոյան Ռ. Կ. Արեգակնային ջրատաքացուցիչ համակարգի պարամետրերի լավարկման մոդել / «Էներգետիկայի ինստիտուտ» ՊՓԲԸ: - Երևան, 1999: - 9 էջ, 3 գր.: - Մատենագր. 10 ան.: - Ռուս.: - Ավանդ. է ՀայԳՏԼԳՀ-ում 15. 11. 99, թիվ 5 - Ap00

Բարձր արդյունավետությամբ արեգակնային կոլեկտորի նախագծման համար անհրաժեշտ է լավարկել նրա պարամետրերը: Արեգակնային ջրամատակարարման համակարգերի պարամետրերը կախված են ոչ միայն ռեժիմային և կառուցվածքային գործոններից, այլ նաև մեծամասամբ որոշվում են կլիմայական պայմաններով՝ արեգակնային ճառագայթման ինտենսիվությամբ, շրջակա միջավայրի ջերմաստիճանով, քամու արագությամբ: Առաջարկվող լավարկման մոդելը հնարավորություն կընձեռնի պարզ անալիտիկ տեսքով ներկայացնել լավարկման Փ գործոնի կախվածությունը տարբեր գործոններից՝ ռեժիմային, կառուցվածքային և կլիմայական: Տրված են տեխնի-

կական լուծման հիմնական սկզբունքները և առաջադրված են խնդիրներ հետագա հետազոտման համար:

6. Ալի Յունիս. Տեչչրինի Ջէկ-ի կոնդենսացիոն հովացնող տեղակայանքով 200 Մվտ հզորությամբ էներգաբլոկի համար հովացնող ջրի ծախսի օպտիմալացումը և շրջանառու պոմպերի օպտիմալ քանակի ընտրությունը/ Հայ. պետ. ճարտարագիտ. համալս.: - Երևան, 1999: - 8 էջ, 5 նկ.: - Մատենագր. 5 ան.: - Ռուս.: - Ավանդ. է ՀայԳՏԼԳՀ-ում 02.12.99, թիվ 10 - Ap00

Քննարկվում են Սիրիայի Արաբական Հանրապետության Տեչչրինի Ջէկ-ի էներգաբլոկի համար օպտիմալացման եւ հովացնող ջրի ծախսի շրջանառու պոմպերի օպտիմալ ընտրության հարցեր: Կազմված են մի քանի դիագրամներ, որոնք ցույց են տալիս պոմպային ռեժիմի ազդեցությունը տվյալ էներգաբլոկի աշխատանքի արդյունավետության, մասնավորաբար ջերմության տեսակարար ծախսի վրա II հաշվի առնելով Սիրիայի Արաբական Հանրապետության կլիմայական պայմանները:

7. Գնունի Տ. Ս., Մուրադյան Ռ. Ջ., Չաքարյան Ռ. Ն. Հայաստանի էլեկտրաէներգետիկ համակարգի կառավարման կառուցվածքային բարեփոխումները ռազմավարական կառավարման տեսության հայեցակետից / «Էներգետիկայի ինստիտուտ» ՊՓԲԸ: - Երևան, 1999: - 12 էջ, 5 նկ., 3 աղ.: - Մատենագր. 3 ան.: - Ռուս.: - Ավանդ. է ՀայԳՏԼԳՀ-ում 10.12.99, թիվ 11 - Ap00

Հայաստանի էլեկտրաէներգետիկական համակարգի կառուցվածքային փոփոխությունները ճգնաժամային և հետճգնաժամային պայմաններում ԷԼՏ-ի ռազմավարական կառավարման մեթոդների ձևավորման և իրականացման բնութագրական օրինակ են: Ներկա իրավիճակի հիման վրա բերված են առաջարկներ աճի ռազմավարության իրականացման անցնելու համար: Տրված է լայնածավալ վերլուծություն Հայաստանի ԷԼՏ-ի

ճգնաժամային և հետճգնաժամային ժամանակահատվածների համար ռազմավարական կառավարման տեսության դասական մեթոդների կիրառման հիման վրա, որը ներառում է՝

- ներկա իրավիճակի և ռազմավարական նպատակների նույնականացում;
- մրցակցության վերլուծություն;
- ռազմավարության ձևակերպում;
- ռազմավարության իրականացում:

8. Հայրապետյան Գ. Ա., Գամբուրյան Կ. Ա., Մուրադյան Ռ. Ջ., Մարգարյան Վ. Հ. Համալիր բեռի մոդելավորումը՝ իր բաղադրամասերի հաճախության և լարման բնութագրերը հաշվի առնելու նպատակով / «Էներգետիկայի ինստիտուտ» ՊՓԲԸ: - Երևան, 1999: - 6 էջ: - Մատենագր. 4 ան.: - Ռուս.: - Ավանդ. է ՀայԳՏԼԳՀԻ-ում 10.12.99, թիվ 12 - Ap00

Յուրահատուկ էլեկտրաէներգետիկական համակարգերի (ԷԷՏ), որոնցում կտրուկ կենտրոնացված են սպառիչների հզորությունները հանգույցներում, դինամիկական գործընթացներն ուսումնասիրելիս ի հայտ է գալիս համալիր բեռի ավելի մանրամասն մոդելավորման անհրաժեշտությունը ԷԷՏ-ի անցողիկ գործընթացների վրա II իրենց պարամետրերի ազդեցությունը հաշվի առնելու նպատակով: Առաջարկված է հանգույցի համալիր բեռի ակտիվ և ռեակտիվ հաղորդականությունների հաշվարկի ալգորիթմ, որը թույլ է տալիս ներկայացնել բեռը դինամիկական և ստրատիկական բնութագրերով ըստ հաճախության և լարման, ինչպես նաև հաստատուն դիմադրություններով և հզորություններով: Այս մոդելում բեռը ներկայացվում է կազմված երկու բաղադրամասերից՝ մանրամասն մոդելավորված շարժիչային /ասինքրոն/ և այլ: Առաջարկված ալգորիթմով կազմված է բեռի պարամետրերի հաշվարկի համակարգչային ծրագիր, որի փորձահավանությունը ցույց է տվել իր աշխատունակությունը:

9. Ծարաբխանյան Ի. Ի., Սաֆարյան Վ. Ս., Սողիլովսկի Օ. Յու. Հայկական էներգահամակարգի 220/110 կՎ ցանցերի աշղատանքի ռեժիմների լավարկումը կապի տրանսֆորմատորների ճյուղավորումների փոխանջատումով / «Էներգետիկայի ինստիտուտ» ՊՓԲԸ: - Երևան, 1999: - 4 էջ: - Մատենագր. 11 ան.: - Ռուս.: - Ավանդ. է ՀայԳՏԼԳՀԻ-ում 15.12.99, թիվ 14 - Ap 00

Հետազոտված է Հայկական էներգահամակարգի 220/110 կՎ ցանցերում էլեկտրաէներգիայի կորուստների նվազեցման հնարավորությունը կապի տրանսֆորմատորների տրանսֆորմացիայի գործակիցների /ՏՏԳ-ների/ կառավարմամբ: ՏՏԳ-ները որոշվում են լրիվ ընտրման եղանակով, սահմանափակումներ ցնելով կարգավորող կապի տրանսֆորմատորների քանակի և դրանց ճյուղավորումների փոփոխման տիրույթի մեջ:

ՄԴԿ 621.3

ԷԼԵԿՏՐԱՏԵԽՆԻԿԱ

10. Վարպետյան Վ. Ս. Թվային-ծրագրային կառավարումով շարժիչների բեռնավորման համակարգ / Հայ. պետ. ճարտարագիտ. համալս.: - Երևան, 1999: - 5 էջ, 2 նկ.: - Մատենագր. 2 ան.: - Ռուս.: - Ավանդ. է ՀայԳՏԼԳՀԻ-ում 04. 11. 99, թիվ 3 – Ap00

Դիտարկված են միկրո-քոմպիյութերով կառավարվող բեռնավորման համակարգի մշակման հարցեր և բերված են արդյունքներ: Մշակված են ընտրված բեռնավորման բնութագրի դիալոգային ռեժիմում կազմակերպման, արտապատկերման և անընդհատ հսկման ծրագրային միջոցներ: Առաջարկված է միկրո-քոմպիյութերի հետ համակցված և նրանով կառավարվող բեռնավորման համակարգ՝ գեներատոր-ինվերտոր կառուցվածքով: Մշակված են բեռնավորման մոմենտի կառավարման ծրագրային միջոցները, համակարգի ինֆորմացիոն և համակ-

ցման միջոցները: Առաջարկվող համակարգի և նրա ծրագրային կառավարման միջոցների արդյունավետությունը հիմնավորված է իրագործված համակարգի փորձարկման արդյունքներով:

11. Վարպետյան Վ. Ս., Մոնջյան Հ. Հ. Ավտոմատ հաճախականային կառավարումով ասինքրոն էլեկտրաբանեցում / Հայ. պետ. ճարտարագիտ. համալս.: - Երևան, 1999: - 5 էջ, 3 նկ.: - Մատենագր. 4 ան.: - Հայ.: - Ավանդ. է ՀայԳՏԼԳՀ-ում 04. 11. 99, թիվ 4 – Ap00

Ժամանակակից հաճախականային կառավարման ասինքրոն էլեկտրաբանեցման համակարգի անալիզի հիման վրա վերծանված է դրանց մի կարևոր համակարգային ընդհանրություն, որը բերում է համակարգի դինամիկ ցուցանիշների լրացուցիչ վատացման: Առաջարկված են կիսահաղորդչային ուղղիչ-ինվերտոր պարունակող ասինքրոն էլեկտրաբանեցման համակարգի

կառավարման նոր եղանակ և դրա իրագործման համակարգի կառուցվածքային սխեմա: Առաջարկության արդյունավետությունը հաստատված է մշակված էլեկտրաբանեցման համակարգի փորձնական արդյունքներով: Կառավարման նոր եղա-

նակը ունիվերսալ է և կիրառելի է նաև ենթակա ու թվածրագրային կառավարման ասինքրոն էլեկտրաբանեցումների տեխնիկական իրագործումներում և կառավարման ծրագրերում:

УДК 61

ԲԺՇԿՈՒԹՅՈՒՆ

12. Գաբրիելյան Ա. Ռ. Տեսողական օրգանի թնջև և միջին ծանրությամբ թափանցող վնասվածքներով հիվանդների մոնիտորինգ: ՀՀ ԱԱԻ – ի, Երևան, 1999, - 8 էջ, 3 նկ., - Բիբլիոգր. 4 անվ. – Ռուս. - Դեպ. ՀայԳՏԻԳՀ – ում

Առաջարկվում է տեսողական օրգանի թափանցող վնասվածքների բարդությունների ժամանակին կանխարգելման

համար մոնիտորինգի մեթոդ, որը հիմնված է էրիտրոցիտների զգայնությունը (ԷԶ) դեպի գերբարձրհաճախականությամբ ալիքների (ԳԲՀ) որոշման եղանակի վրա: Մեթոդը կիրառվել է թնջև և միջին ծանրությամբ թափանցող վնասվածքներով 44 հիվանդների մոտ: Որոշված են ԷԶ-ի դեպի ԳԲՀ ցուցանիշները հիվանդների ընդունման ($0,04 \pm 0,009$ ՀՄ) և կլինիկական առողջացման ($0,33 \pm 0,07$ ՀՄ) ժամանակ: Որոշված է, որ տվյալ ցուցանիշի բարձրացման աստիճանը բուժման ընթացքում պայմանավորված է ինչպես տրավմատիկ պրոցեսի ծանրությամբ, այնպես էլ կատարվող բուժման էֆֆեկտիվությամբ: Առաջարկվում է բիոմոնիտորինգի մեթոդ տրավմատիկ պրոցեսի և օրգանիզմի ադապտացիոն համակարգի միջև հարաբե-րությունը գնահատելու համար:

УДК 63

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

12. Մինասյան Ռ. Ս., Մարգարյան Ա. Ս., Իշխանյան Տ. Ս. Ձևքի հաղորդակով պոմպ-սրսկիչի մեմբրանի լարվածա - դեֆորմացիոն վիճակը և աշխատանքի հուսալիությունը / Հայկ. գյուղ. ակադեմիա: - Երևան, 1999: - 10 էջ, 2 նկ.: - Հայ.: - Ավանդ. է ՀայԳՏԼԳՀ-ում 02.12. 99, թիվ 8 - Ap 00

Գյուղացիական և ֆերմերական տնտեսությունների համար մշակվել է ձևքի ուժով աշխատող փոքրաչափ պոմպ-սրսկիչ, որը կատարում է երկու տեսակի աշխատանք՝ ջուր մղելու համար որպես պոմպ և թունաքիմիկատներ ու այլ հեղուկ նյութեր սրսկելու համար՝ որպես սրսկիչ: Հետազոտվել են այդ մեքենայի մեմբրանի լարվածադեֆորմացիոն վիճակն ու աշխատանքի հուսալիությունը և դուրս բերված բանաձևերի օգնությամբ հաշվարկվել է մեմբրանի ընդհանուր դիմագկունության գործակիցը: Հա-

վարկները ցույց են տվել, որ մեմբրանի % հոգնածության ամրության սահմանը մեծ է թույլատրելիից:

13. Թարվերդյան Ա. Պ., Մինասյան Ռ. Ս., Մարգարյան Ա. Ս., Սարգսյան Ա. Ա. Հատիկամանրիչի տնտեսական հետազոտություններ / Հայկ. գյուղ. ակադեմիա: - Երևան, 1999: - 34 էջ, 5 նկ.: - Հայ.: - Ավանդ. է ՀայԳՏԼԳՀ-ում 02.12. 99, թիվ 9 – Ap 00

Խնդիր է դրվել մշակել այնպիսի էներգախնայողական փոքրաչափ ունիվերսալ մեքենա, որը կկարողանա մանրացնել մինչև 18 % / ինչը հաջողությամբ իրականացնում են գոյություն ունեցող ջարդիչները / և միաժամանակ մինչև 35% խոնավությամբ ֆուրաժային հատիկը: Առաջարկված հատիկամանրիչն իր աշխատանքային սկզբունքով գոյություն ունեցողներից տարբերվում է նրանով, որ հարթ մուրճիկների հետ միասին աշխատում են նաև ատամնավոր դանակներ: Որոշվել են մշակված հատիկամանրիչի կառուցվածքային լավագույն պարամետրերը, որոնց շնորհիվ բարձրացել են շահագործական հուսալիությունն ու արտադրողականությունը և միաժամանակ իջել է էներգատարությունը: Առաջարկված հատիկամանրիչը հաջողությամբ անցել է արտադրական փորձարկումները և ներդրվել գյուղատնտեսական արտադրությունում:

ՄԺԿ 78

ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ

14. Անանյան Կ. Ա. Ավանդականի և արդիականի հարաբերակցությունը 20-րդ դ. հայ դաշնամուրային մանրանվագում / Եր. պետ. կոնսերվատորիա: - Երևան, 1999: - 20 էջ: - Մատենագր. 10 ան.: - Ռուս.: - Ավանդ. է ՀայԳՏԼԳՀ-ում 02. 12. 99, թիվ 7 – Ap 00

20-րդ դարի երաժշտական արվեստի հրատապ հիմնախնդիրներից է կոմպոզիցիոն տրամաբանության ավանդական, կայունացած օրինաչափությունների և հնչյունային կազմակերպման նոր սկզբունքների ու արտահայտչամիջոցների բարդ փոխներգործության հետազոտումը: Ավանդականի և նորարականի գույզորդման առանձնահատկությունների դիտարկումը, որոնցով պայմանավորվում է երաժշտական երկի ստեղծումը, ենթադրում է նրա կոնկրետացումը որոշակի ժանրային ոլորտում: Այդ իմաստով մեծ հետաքրքրություն է ներկայացնում հայ կոմպոզիտորների դաշնամուրային ստեղծագործությունը և, հատկապես, մանրանվագի ժանրը, որտեղ ի հայտ են գալիս ուշագրավ երևույթներ իրենց ցայտուն, խտացված տեսքով /Կոմիտաս, Ս. Բարխուդարյան, Ա. Խաչատրյան, Ն. Ստեփանյան, Ա. Բաբաջանյան, Գ. Չեքոտարյան, Է. Բաղդասարյան, Գ. Հովոնց, Տ. Մանսուրյան, Ռ. Սարգսյան, Գ. Չթյան, Ղ. Սարյան/ : Հայ դաշնամուրային մանրանվագի զարգացման տարբեր ժամանակաշրջաններում ստեղծագործական ազատությունը, կառուցվածքային և արտահայտչական միջոցների անհատական ընտրությունը վերահսկվում են երաժշտական ձևակայուն, հաստատուն գործոնների ազդեցությամբ, որոնք վերջին հաշվով պայմանավորված են տվյալ ժամանակահատվածի իշխող ոճական միտումներով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՌԵՎՏՐԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԼՐԱՏՎՈՒԹՅԱՆ
ԵՎ ՏԵԽՆԻԿԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ
(ՀայԳՏԼԳՀԻ)

ԱՎԱՆԴԱԴՐՎԱԾ ԳԻՏԱԿԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

ԵՌԱՄՍՅԱ ՍԵՂՄԱԳՐԱՅԻՆ ԺՈՂՈՎԱԾՈՒ

թիվ 2

ԵՐԵՎԱՆ 2000

YDK 33

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

1. Ասրյան Կ. Ն. Հայաստանի Հանրապետությունում էլեկտրոնային վճարային համակարգի ձևավորման հիմնական սկզբունքները / Եր. պետ. տնտ. ին-տ: - Երևան, 2000: - 6 էջ: - Մատենագր. 2 ան.: - Ռուս.: - Ավանդ. է ՀայԳՏԼԳՀԻ-ում 22.03.00, թիվ 25 - Ap00

Հայաստանի Հանրապետությունում շուկայական հարաբերությունների զարգացման պայմաններում խիստ կարևոր նշանակություն ունի ֆինանսական համակարգի գործունեության առավել արդյունավետ կազմակերպման խնդրի լուծումը: Այդ տեսանկյունից արդիական է սույն հոդվածը, որտեղ հանգամանորեն լուսաբանվել են Հայաստանի Հանրապետության ֆինանսական հոսքերի շրջանառության արագության, անվտանգության և հարմարավետության բարձրացման, ինչպես նաև դրանց սպասարկման հետ կապված ծախսերի կրճատման հիմնահարցերը: Հիմնավորվել է որակապես նոր վճարային տեխնոլոգիաների կիրառման անհրաժեշտությունը և դրանց իրացման առավել արդյունավետ տարբերակը՝ ազգային էլեկտրոնային վճարային համակարգի ստեղծման հիման վրա:

YDK 37

ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ

2. Բաղդասարյան Զ. Է. Մոդելային սանդղակներ գեղարվեստական մարմնամարզուհիների ընտրության համար / ՀՀ մարմնամարզության ֆեդերացիա: - Երևան, 2000: - 27 էջ: -

Մատենագր. 20 ան.: -Հայ.: - Ավանդ. է ՀայԳՏԼԳՀ-ում 23.02.00, թիվ 17 – Ap00

Առաջին անգամ Հայաստանի Հանրապետության գեղարվեստական մարմնամարզության պրակտիկայում մեծ փաստացի նյութի հիման վրա մշակվել են մոդելային սանդղակներ պատանի մարզուհիների ընտրության համար: Գնահատման սանդղակները, որոնց մշակման հիմքում ընկած են յուրաքանչյուր ցուցանիշի սիգմալ տատանումները, տալիս են օբյեկտիվ և հուսալի տեղեկատվություն մանկապատանեկան մարզադպրոցների դիմորդների ստատիկ ցուցանիշների, ընդհանուր և հատուկ շարժողական պատրաստականության մասին: 5-6 տարեկան երեխաների համար առաջարկվող 6 մոդելային սանդղակները նեցուկ են սպորտում մանկավարժական հսկողության համակարգին և հասցնագրված են գեղարվեստական մարմնամարզության մարզիչներին: Դրանք կարող են օգտագործվել ոչ միայն պատանի մարզուհիների ընտրության և կողմորոշման գործում, այլ նաև շարժողական հնարավորությունների նպատակաուղղված կատարելագործման համար առավել զգայուն պարբերաշրջանները գնահատելու դեպքում:

3. Տիգրանյան Ա. Ս. Ֆուտբոլիստների բարոյական դաստիարակության մի քանի հարցեր / Ֆիզիկական կուլտուրայի հայ. պետ. ինս-տ: - Երևան, 2000: - 10 էջ: - Մատենագր. 14 ան.: - Ավանդ. է ՀայԳՏԼԳՀ-ում 03.03.00, թիվ 18 - Ap00

Վերլուծության է ենթարկվում այն գործոնների ազդեցությունը, որոնք իրենց էական դերն են կատարում ֆուտբոլիստների բարոյական վարքագծի ձևավորման հարցում: Այդ գործոնները հեղինակները դասակարգել են՝ ըստ կարևորության և ըստ հաջորդականության: Մասնավորաբար ընդգծվում է ֆուտբոլ լսողի յուրահատկությունը, մարզիչի դերը, ընտանիքի, միջավայրի և այլ գործոնների ազդեցությունը: Դրանց կարևորության և ազդեցության բացահայտումը էականորեն կնպաստի պատանի

ֆուտբոլիստների բարոյական դաստիարակության գործընթացի արդյունավետության բարձրացմանը:

УДК 51

ՄԱԹԵՄԱՏԻԿԱ

4. Առաքելյան Ա. Ջ., Դանիելյան Է. Ա. Պատահական թվով անկախ պատահական մեծությունների գումարների մաքսիմումի մասին / Եր. պետ. համալս.: -Երևան, 2000: - 12 էջ: -Մատենագր. 8 ան.: - Ռուս.: - Ավանդ է ՀայԳՏԼԳՀ-ում 07.03.00, թիվ 19 – Ap00

Դիցուք $\{ \xi_n \}$ - ը անկախ պատահական մեծությունների հաջորդականություն է,

$$S_n = \xi_1 + \dots + \xi_n, \quad \overline{S}_n = \max_{1 \leq k \leq n} |S_k|:$$

$$N_n(t) = \sum_{k=1}^n P(|\xi_k| \geq t)$$

Յույց է տրված, որ Φ ֆունկցիայի կանոնավոր փոփոխումը, որտեղ P-ն հավանականության նշանն է, հանգեցնում է հետևյալ սահմանային առնչությունների՝

$$\lim_{t \rightarrow +\infty} \frac{P(\overline{S}_n \geq t)}{N_n(t)} = \lim_{t \rightarrow +\infty} \frac{P(|S_n| \geq t)}{N_n(t)} = 1:$$

Դիցուք $v > 0$ -ն $\{ \xi_n \}$ - ից անկախ ամբողջ արժեքներով պատահական մեծություն է, որի մաթեմատիկական սպասումը վերջավոր է .

$$S_v = \xi_1 + \dots + \xi_v, \quad \overline{S}_v = \max_{1 \leq n \leq v} |S_n|:$$

Դիտարկենք հետևյալ մոդելը: Դիցուք $\{ \delta_n \}$ -ը դրական թվերի հաջորդականություն է, $\alpha \geq 0$, $L(t)$ - ն դանդաղ է փոփոխվում և

$\lim_{t \rightarrow +\infty} (P(|\xi_n| \geq t / t^{-\alpha} L(t))) = \delta_n$ հավասարաչափ ըստ $n \geq 1$ -ի:

$$A_n = \sum_{k=1}^n \delta_k, \quad A = \sum_{n \geq 1} c_n \cdot A_n$$

Նշանակենք $c_n = (v = n)$,
 Մոդելի շրջանակներում ապացուցված է, որ

$$\lim_{t \rightarrow +\infty} \frac{P(\overline{S}_v \geq t)}{t^{-\alpha} L(t)} = \lim_{t \rightarrow +\infty} \frac{P(|S_v| \geq t)}{t^{-\alpha} L(t)} = A$$

Վերոհիշյալ պայմանների դեպքում և $P(\xi_n < x)$, $n \geq 1$ -ի ասիմետրիաների առկայության ժամանակ գտնված է $P(Sv < x)$ -ի ասիմետրիան:

5. Ներսիսյան Ն. Բ., Պողոսյան Ա.Վ. Բեռնուլիի մեթոդը բազմաչափ դեպքում / ՀՀ ԳԱԱ մաթեմատիկայի ին-տ: - Երևան, 2000: - 40 էջ: - Մատենագր. 7 ան: - Ռուս.: Ավանդ. է ՀայԳՏԼԳՀ-ում 09.03.00, թիվ 20 – Ap00

Դիտարկվում է քառակուսու վրա ողորկ երկու փոփոխականների ֆունկցիայի մոտարկման խնդիրը Բեռնուլիի մեթոդով, որն օգտագործում է ֆունկցիայի մասնակի ածանցյալների արժեքները քառակուսու եզրի վրա և նախկինում արդյունավետ կիրառվել է մեկ փոփոխականի ողորկ ֆունկցիայի մոտարկման համար: Ֆուրիեի գործակիցների ասիմպտոտիկայի մանրամասն հետազոտումը և հիմնական հավասարումների համակարգի տրոհումը երկու ինքնուրույն համակարգերի՝ հնարավորություն է տվել կառուցել երկու փոփոխականների քառակուսու վրա ողորկ ֆունկցիայի մոտարկման բավական արդյունավետ ալգորիթմ: Թվային տվյալները, որոնք կատարված են Mathematica 3.0 համակարգի օգնությամբ, հաստատում են մեթոդի արդյունավետությունը: Նկատենք, որ նախկինում այս մեթոդը հանդիպել է որոշ կասկածամտության: Առաջարկված մեթոդը կարող է հաջողությամբ օգտագործվել նաև ավելի մեծ չափողականությունների դեպքում:

6. Ներսիսյան Ն. Բ. Օրթոգոնալ համակարգերի պարբերական վերլուծություններ / ՀՀ ԳԱԱ մաթեմատիկայի ին-տ: - Երևան, 2000: - 28 էջ: - Մատենագր. 19 ան.: Ռուս.: - Ավանդ. է ՀայԳՏԼԳՀ-ում 09.03.00, թիվ 21 – Ap00

Իրականացվում է հեղինակի՝ նախկինում առաջարկված վերացական սխեման: Յուրյե է տրված, որ յուրաքանչյուր ծնորդ ֆունկցիայի համապատասխանում է որոշակի վերլուծություն: Դիտարկված են օրինակներ, որոնք կապված են դասական օրթոգոնալ բազմանդամների, Բեսելի և այլ ֆունկցիաների ծնորդների հետ: Թվային արդյունքները վկայում են, որ առաջարկված համակարգերի օգնությամբ կարելի է կառուցել վերլուծությունների արագ ալգորիթմներ, որոնք համապատասխանում են մի շարք դասական օրթոգոնալ համակարգերի:

7. Հայրապետյան Ա. Խ., Ներսիսյան Ն. Բ. Փաթեթի տիպի ինտեգրա-դիֆերենցիալ հավասարման թվային լուծման մեթոդ / Հայկ. պետ. մանկ. ին-տ: - Երևան, 2000: - 22 էջ: - Մատենագր. 4 ան.: - Ռուս.: - Ավանդ. է ՀայԳՏԼԳՀ-ում 09.03.00, թիվ 22 – Ap00

Ստացված է փաթեթի տիպի ինտեգրա-դիֆերենցիալ հավասարումների թվային լուծման եղանակ որոշակի ֆունկցիոնալի մինիմիզացման մեթոդով, որն ընդհանրացնում է նախկինում առաջարկված մեթոդը, օգտագործելով հավասարման աջ մասի ածանցյալների արժեքները հատվածի ծայրակետերում: Մանրամասնորեն ուսումնասիրվել է այն դեպքը, երբ ածանցյալների արժեքները վերականգնվում են Բեռնուլիի մեթոդով: Թվային արդյունքները ազդարարում են կիրառվող մեթոդի ճկունությունը: Մեթոդը դառնում է առավել արդյունավետ, երբ ստացված մոտավոր լուծումը վերլուծվում է ըստ Հեյզենբաուերի բազմանդամների: Հաշվարկները իրականացվել են Mathematica 3.0 փաթեթի օգնությամբ: Կառուցված ալգորիթմները պատրաստ են օգտագործվելու համապատասխան խնդիրներ լուծելու համար:

8. Սահակյան Ռ. Շ. Անվերջ կապանի տիրույթներում շոշափումային մոտավորությունների մասին: /Երևանի պետ. համալս. - Երևան, 2000:- 7 էջ:- Մատենագր. 11 ան.: - Ռուս.: - Ավանդ. է ՀայԳՏԼԳՀ-ում 15.01.00, թիվ 23 – Ap00

Հետազոտվում է անվերջ կապանի տիրույթների փակ ենթաբազմությունների վրա անալիտիկ ֆունկցիաներով շոշափումային մոտավորության հնարավորությունը: Մասնավորաբար բերված է ոչ միակության հատկությամբ օժտված L տիպի անվերջ կապանի տիրույթի օրինակ, որի նկատմամբ փակ ենթաբազմությունների վրա հնարավոր է իրագործել շոշափումային մոտավորություն:

9. Դավթյան Ա. Ա. R_n –ում ապիրորի գնահատականներ փոփոխական գործակիցներով սեմիէլիպտիկ օպերատորների համար / Եր. պետ. համալս.: - Երևան, 2000: - 13 էջ. : - Մատենագր. 8 ան. : Ռուս. : -Ավանդ. է ՀայԳՏԼԳՀ-ում 15.03.00, թիվ 24 – Ap00

Ստացված են ապիրորի գնահատականներ R_n –ում փոփոխական գործակիցներով սեմիէլիպտիկ, մասնավորաբար էլիպտիկ, գծային դիֆերենցիալ օպերատորների համար: Այդ գնահատականների օգնությամբ ստացվում են թեորեմներ համապատասխան հավասարման լուծման ողորկության մասին այն դեպքում, երբ աջ մասը պատկանում է Սոբոլևի անիզոտրոպ տարածությանը: Ընդհանրացված լուծումների դիֆերենցիալ հատկությունների լիակատար նկարագրման համար «տարբեր անիզոտրոպիաների» դեպքում, երբ օպերատորի անիզոտրոպությունը համաձայնեցված չէ աջ մասերի տարածության անիզոտրոպության հետ, անհրաժեշտ է դուրս գալ Սոբոլևի դասական անիզոտրոպ տարածությունների շրջանակներից և դիտարկել վեկտորների համախմբությամբ ծնվող տարածությունները:

УДК 620.9

ԷՆԵՐԳԵՏԻԿԱ

10. Մարուխյան Վ. Զ., Ալի Յունիս. Տեչչրինի Ջեյ-ի 200 Մվտ հզորությամբ էներգաբլոկների աշխատանքային ցուցանիշների վրա ռեժիմների և բնակլիմայական գործոնների ազդեցության հետազոտումը / Հայ. պետ. ճարտարագիտ. համալս.: - Երևան, 2000: - 8 էջ, 7 նկ.: - Մատենագր. 3 ան.: - Ռուս.: - Ավանդ. է ՀայԳՏԼԳՀ-ում 22.03.00, թիվ 26 - Ap00

Հետազոտված է ռեժիմների և բնակլիմայական գործոնների ազդեցությունը Տեչչրինի (Սիրիայի Արաբական Հանրապետություն) ՋԷԿ-ի կոնդենսացիոն հովացնող տեղակայանքներով 200 Մվտ հզորությամբ էներգաբլոկների աշխատանքի ցուցանիշների վրա: Մասնավորաբար ուսումնասիրված է օդի ջերմաստիճանի և քամու արագության ներգործությունը հովացման բազմապատիկության վրա: Կառուցված են դիագրամներ, որոնք ցուցադրում են վերը նշված գործոնների ազդեցությունը հովացման բազմապատիկության վրա: Հետոնյազգ վերլուծության մեթոդով տվյալների մշակման արդյունքում ստացվել են՝ $m=f(T_B, W_B)$, $m=f(P_K, N)$

11. Ծարախբանյան Ի. Ի., Աբրահամյան Ա. Գ. Հայկական 220/110 կՎ էլեկտրական համակարգի հանգուցային բեռնվածքների բնութագրիչ ռեժիմների որոշումը /Էներգետիկայի ՀայԳՀ:- Երևան, 2000:- 5 էջ:- Մատենագր. 4 ան.: - Ռուս.: -Ավանդ. է ՀայԳՏԼԳՀ-ում 28.03.00, թիվ 30-Ap00

Էլեկտրական համակարգի հանգուցային բեռնվածքների բնութագրիչ ռեժիմների որոշման մշակված ալգորիթմը և ծրագիրը հնարավորություն են ընձեռում լուծելու զանազան էլեկտրաէներգետիկական խնդիրներ, որոնց հիմքում դրված է կայունացված ռեժիմի բազմատարբերակ հաշվարկը: Գոյություն

ունենցող մեթոդների օգտագործումը, համակարգի հանգուցային ակտիվ և տարրերի պասսիվ պարամետրերի մանրակրկիտ նկարագրմամբ, գործնականորեն բացառում է նման խնդիրների լուծումը ընդունելի ժամանակում:

YDK 621

ՄԵՔԵՆԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ

12. Քարամյան Մ. Ս. Ճակատային ֆրեզների դանակներ մետաղակերամիկական նյութերից / Հայ. պետ. ճարտարագիտ. համալս.: - Երևան, 2000: - 10 էջ, 6 նկ.: - Մատենագր. 6 ան.: - Ռուս.: - Ավանդ. է ՀայԳՏԼԳՀ-ում 28.03.00, թիվ 31 - Ap00

Դիտարկվում է ճակատային ֆրեզների չափորոշիչ դանակները մետաղակերամիկականով փոխարինելու հնարավորությունը, որը թույլ է տալիս բովախառնուրդի տարրերի և ծակոտկենության կարգավորման հաշվին ստանալ անհրաժեշտ հատկություններով նյութեր: Ծակոտկենության առկայությունը բերում է տատանումների մարմանը և ջերմափոխանակության հաշվեկշիռի փոփոխությանը կտրման ընթացքում: Ընտրված են բովախառնուրդի լավարկված բաղադրությունը, մամլման և նշակալման ռեժիմները: Հետազոտված են ստացված նյութերի ֆիզիկա-մեխանիկական հատկությունները:

YDK 63

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

13. Մինասյան Ռ. Ս., Մարգարյան Ա. Ս., Իշխանյան Տ. Ս. Սրսկիչի ճնշումային ճկափողի տատանման և կայունության

հետազոտումը բաբախող բնույթի հեղուկի շարժման ժամանակ /Հայկ. գյուղ. ակադեմիա: - Երևան, 2000: - 16 էջ, 4 նկ.: - Մատենագր. 3 ան.: - Հայ.: - Ավանդ. է ՀայԳՏԼԳՀ-ում 23.03. 00, թիվ 28 - Ap 00

Գյուղացիական և ֆերմերական տնտեսությունների համար հեղինակների մշակած փոքրաչափ ձեռքի հաղորդակով պոմպ-սրսկիչի կարևոր մասերից մեկը ճնշումային ճկափողն է, որի աշխատանքային կայունությունից է կախված սրսկիչի աշխատանքի որակը: Պոմպ-սրսկիչի ճնշումային ճկափողում շարժվող հեղուկն ունի բաբախող բնույթ, որը կապված է մղող պոմպի աշխատանքի հետ և հեղուկի մղման ժամանակ կարող է առաջացնել տատանումներ ու բերել ճկափողի ընդհանուր կայունության կորստի: Մյուս կողմից, ճկափողի որոշակի երկրաչափական մեծությունների դեպքում, մղվող հեղուկը առաջացնում է նաև անցանկալի տատանումներ ինչպես ճկափողում, այնպես էլ ամբողջ սրսկիչում, ինչը կարող է ազդել ազրեգատի աշխատանքի որակի վրա: Դուրս են բերվել հաշվարկային բանաձևեր, որոնց օգնությամբ կառուցված գրաֆիկների վերլուծության հիման վրա որոշվել են բոլոր անհրաժեշտ լավարկված պարամետրերը ճկափողի աշխատանքային կայունությունն ապահովելու համար:

14. Թարվերդյան Ա. Պ., Մարգարյան Ա. Ս., Մարգարյան Ա. Ա., Հատիկամանրիչի գիտափորձերի արդյունքները / Հայկ. գյուղ. ակադեմիա: - Երևան, 2000: - 35 էջ, 22 նկ.: - Հայ.: - Ավանդ. է ՀայԳՏԼԳՀ-ում 23.03. 00, թիվ 29 – Ap 00

Գիտափորձերով ճշտվել են հեղինակների մշակած փոքրաչափ ունիվերսալ հատիկամանրիչի կառուցվածքային և շահագործական պարամետրերը: Դրա համար մշակվել են լաբորատոր և արտադրական գիտափորձերի ծրագիրն ու մեթոդները և որոշվել բանող օրգանների / հարթ մուրճիկներ ու ատամնավոր դանակներ, փականներ, հակաջարդիչ ակոսիկներ, մաղեր և այլն/ ձևը, նյութը չափսերը: Ընտրվել են էլեկտրաշարժիչն ու

աշխատանքային էլեկտրասխմանները: Որոշվել է ֆուրաժային հատիկների / եգիպտացորեն, գարի, ցորեն/ մանրվածքի հատիկաչափական կազմը՝ կախված խոնավությունից և մաղերի անցքերի տրամագծից: Որոշվել են նաև հատիկամանրիչի արտադրողականությունը և էլեկտրաէներգիայի ծախսը աշխատանքի տարբեր ռեժիմների ժամանակ: Գիտափորձերի արդյունքների հիման վրա մշակվել են հատիկամանրիչի արտադրության բանվորական գծագրերը և ներկայացվել «Էլեկտրոն» փակ բաժնետիրական ընկերությանը, որը և կազմակերպել է այդ մեքենայի զանգվածային արտադրությունը:

УДК 72

ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

15. Սարգսյան Դ.Ռ. ԴՎինի քաղաքաշինական զարգացման ընթացքի վերականգնման փորձ /Եր. ճարտարապետ.-շին. ին-տ.: - Երևան, 2000: -7 էջ:- Մատենագր. 12 ան.: - Հայ.: - Ավանդ. է ՀայԳՏԼԳՀԻ-ում 23.03.00, թիվ 27 – Ap00

Ներկայացվում է ԴՎինի աշխարհագրական դիրքը, ընդհանուր քաղաքաշինական պատկերը, որը հիմնված է պարբերական ու հետախուզական պեղումների արդյունքների, միջնադարյան պատմիչների և 19-րդ դարի ճանապարհորդների ու հետազոտողների նկարագրությունների, քաղաքի տարածքի տեղագրական ուսում-նասիրությունների արդյունքների վրա և այլն: Առաջին անգամ փորձ է կատարվում ճշգրիտ տեղագրական հիմքի վրա վերարտադրել Հայաստանի միջնադարյան մայրաքաղաք ԴՎինի քաղաքաշինական զարգացման փուլերը՝ սկսած մ.թ.ա. 3-րդ հազարամյակից մինչև մ.թ. 12-13-րդ դարերը: Ելնելով վերը նշվածից, փորձ է արվել բավարար հավանականությամբ ուրվագծել քաղաքի տարածման սահմանները: Բերված են նաև

ԴՎինի հիմնադրման և զարգացման պատմագրական որոշ տվյալներ:

УДК 800

ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

16. Աարնայան Ա.Ռ. Գովազդային տեքստի արտալեզվական գործոններն ու կառուցվածքային օրինաչափությունները (անգլիալեզու մամուլում) / Եր. օտար լեզուների պետ. ին-տ.: - Երևան, 2000: - 15 էջ: - Մատենագր. 14 ան.: - Հայ.: - Ավանդ. է ՀայԳՏԼԳՀԻ-ում 16.02.00, թիվ 16 – Ap00

Հնտագոտված են անգլիալեզու մամուլի գովազդային ժանրին պատկանող տեքստերի արտալեզվական և բուն լեզվական յուրահատկությունները: Փորձ է կատարվել ցույց տալ, որ այս ժանրում տեքստակազմիչ և ոճակազմիչ միավորները բխում են հասցեատիրոջ մի շարք հոգեբանական գործոններից, որտեղ շարադրանքի լեզվական հայեցակերպը պայմանավորվում է արտալեզվականով: Ցույց են տրված նաև տեքստի մասերի (վերնագիր, նախաբան, հիմնամաս, վերջաբան) կապակցման, տեքստային միավորների թեմա-ռեմատիկ հարաբերությունների և տեքստի խոսքաշարային-տարբերակային տրոհման եղանակները, ուր կարևորվում են տեղեկատվության և ինտեգրացման տեքստային կարգերը: Ուսումնասիրությունը ցույց տվեց, որ նմանօրինակ տեքստերը հիմնականում ծառայում են հասցեատիրոջն անմիջականորեն ընկալելու, ապակողավորելու և վերջինիս վրա ներգործելու ու համոզելու պրագմատիկ նպատակներին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՌԵՎՏՐԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԼՐԱՏՎՈՒԹՅԱՆ
ԵՎ ՏԵԽՆԻԿԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ
(ՀայԳՏԼԳՀԻ)

ԱՎԱՆԴԱԴՐՎԱԾ ԳԻՏԱԿԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

ԵՌԱՄՍՅԱ ՍԵՂՄԱԳՐԱՅԻՆ ԺՈՂՈՎԱԾՈՒ

թիվ 3

ԵՐԵՎԱՆ 2000

УДК 33

ՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

1. Մելիքյան Ս. Գ. ՀՀ գյուղատնտեսության զարգացման ապրանքայնության արդի մակարդակը / ՀՀ ԳԱԱ Էկոնոմիկայի ին-տ: - Երևան, 2000: - 4 էջ, 1 աղ.: - Հայ.: - Ավանդ. է ՀայԳՏԼԳՀԻ-ում 26.05.00, թիվ 35-Ձ00

Հայաստանի Հանրապետության տնտեսական ամրապնդման, նրա սոցիալ-տնտեսական առաջընթացի գործում հսկայական են գյուղատնտեսության զարգացման դերն ու նշանակությունը: Պետք է նշել, որ մինչև ագրարային արմատական վերակառուցումները, առանձին տարիներին գյուղատնտեսությանը բաժին էր ընկնում հանրապետության համախառն հանրային արդյունքի մինչև 12,7%-ը, ագրային եկամտի՝ մինչև 18,5%-ը: Հանրապետության հիմնական արտադրական ֆոնդերի 18,8%-ը 1991թ. բաժին էր ընկնում գյուղատնտեսության հիմնական արտադրական ֆոնդերին: Գյուղատնտեսությունը քնակչությանը մատակարարում էր պարեն, իսկ վերամշակող արդյունաբերությանը՝ անհրաժեշտ հումք: Բերված են համեմատական տեղեկություններ հանրապետությունում կարևոր գյուղատնտեսական արտադրանքի տարեկան միջին արտադրության մասին: Եթե հաճախատիկային մշակաբույսերի արտադրության մակարդակը գործնականորեն չի փոխվել վերջին 15 տարիների ընթացքում, իսկ կարտոֆիլի արտադրությունը աճել է 1,5 անգամ, ապա բանջարեղենի, մրգերի, խաղողի և կաթի արտադրությունը նվազել է 15-20%-ով, իսկ մսինը և հավկիթինը՝ մինչև 1,5-6%-ով: Բացահայտված է պետական կազմակերպությունների դերը գյուղատնտեսական արտադրության զարգացման գործում և նրկրի պարենային անվտանգության ապահովման հիմնահարցը:

2. Չիլինգարյան Ա. Ե. ՀՀ փոքր և միջին ձեռնարկությունների արտաքին և ներքին միջավայրերի վերլուծությունը / Եր. պետ. համալս.: - Երևան, 2000: - 18 էջ: - Մատենագր. 7 ան.: - Ռուս.: - Ավանդ. է ՀայԳՏԼԳՀԻ-ում 26.06.00, թիվ 41-Ձ00

Վերլուծվում են ՀՀ փոքր և միջին ձեռնարկությունների արտաքին և ներքին միջավայրերը: Եզրակացություն է արվում, որ ներկա պահին ՀՀ փոքր և միջին ձեռնարկությունների արտաքին միջավայրը բնորոշվում է առավել բացասական ազդեցությամբ: Արտաքին գործոնները, բացասաբար ազդելով ներքին միջավայրի վրա, սրում են վերջինիս հիմնահարցերը, որոնք, ի վերջո, բերում են բիզնեսի փոքր և միջին ձևերի կենսունակության իջեցմանը: Այդ առումով ենթադրություն է արվում ՀՀ փոքր և միջին ձեռնարկությունների պետական աջակցման համակարգի, որպես արտաքին միջավայրի բացասական ազդեցության մեղմացման միջոցի, սկզբունքային նշանակության մասին, ինչպես նաև ներքին միջավայրի գործոնների ակտիվացման, դրանց արդյունավետ օգտագործման խնդրի առավել արդիականացման վերաբերյալ:

УДК 51

ՄԱԹԵՄԱՏԻԿԱ

3. Խաչոյան Լ. Օ. Տրամաբանական ծրագրերի Δ - համար- ժեռության խնդրի լուծելի դեպքերը / Եր. պետ. համալս.: - Երևան, 2000: - 11 էջ: - Մատենագր. 3 ան.: - Ռուս.: - Ավանդ. է ՀայԳՏԼԳՀԻ-ում 02.05.00, թիվ 33-Ձ00

Ուսումնասիրվում է այնպիսի տրամաբանական ծրագրերի Δ - համարժեռության խնդիր, որոնց նախադասությունները Հոռնի դիզյունկտներ են: Երկու տրամաբանական ծրագրեր կոչվում են Δ - համարժեք, եթե այն հարցումների բազմությունները, որոնք այդ ծրագրերից յուրաքանչյուրի տրամաբանական հետևանքներն են,

ապա համընկնում են: Հայտնի է, որ տրամաբանական ծրագրերի Δ -համարժեռության խնդիրը անլուծելի է: Օգտագործելով այսպես կոչված տրամաբանական ծրագրերի ամենափոքր մոդելների շաբ- լոնների մեթոդիկան, ապացուցվում է տրամաբանական ծրագրերի որոշ դասերի Δ -համարժեռության խնդրի լուծելիությունը:

4. Արաբաջյան Լ. Գ., Խաչատրյան Ս. Ա., Արաբաջյան Ա. Գ., Համերշտեյնի տիպի ոչ գծային հավասարումների մի համակարգի լուծումների մեկ պարամետրանոց ընտանիքի գոյության պայմանները / Հայ. պետ. մանկավարժ. համալս.: - Երևան, 2000: - 19 էջ: - Մատենագր. 13 ան.: - Ռուս.: - Ավանդ. է ՀայԳՏԼԳՀԻ-ում 06.07.00, թիվ 42-Ձ00

Ուսումնասիրվում է որոնելի W_1, \dots, W_n ֆունկցիաների նկատմամբ հետևյալ տեսքի ոչ գծային համակարգը՝

$$W_i(x) = \sum_{j=1}^n \int_0^{\infty} K_{ij}(x-t) Y_{ij}(W_j(t)) dt, \quad x \in R^+ \equiv [0, +\infty), \quad (1)$$

$$i = 1, 2, \dots, n,$$

Ենթադրվում է, որ $K(x) = (K_{ij}(x))_1^n$ մատրից-ֆունկցիան և նրա բաղադրիչները բավարարում են՝

$$(a) \quad 0 \leq K_{ij} \in L_1(R_1), \quad i, j = 1, 2, \dots, n \quad (b) \quad r \left(\int_{-\infty}^{+\infty} K(t) dt \right) = 1,$$

$$(c) \quad \exists \int_0^{\infty} tK(\pm t) dt, \quad \int_0^{\infty} t^2 K(\pm t) dt(b), \quad \text{և} \quad \int_{-\infty}^{\infty} tK(t) dt = 0,$$

(այստեղ r -ը մատրիցի սպեկտրալ շառավիղն է, իսկ 0 -ն՝ գրոյական մատրից է) պայմաններին: $Y_{ij}(i, j=1, 2, \dots, n)$ ֆունկցիաների նկատմամբ ենթադրվում է, որ դրանք որոշված են $R_{\tau} \equiv [\tau, +\infty)$ միջակայքում մի որոշ $\tau \geq 0$ համար և ունեն (d) $Y_{ij}(x) = x - \omega_{ij}(x)$ տեսքը, որտեղ ω_{ij} ֆունկցիաները բավարարում են (e) $0 \leq \omega_{ij} R_{\tau}$ վրա և $\omega_{ij} \in L_1(R_{\tau}) \cap R_{\tau}$ պայմաններին: Ապացուցվում

է, որ (a)-(e) պայմանների դեպքում գոյություն ունի (1) համակարգի լուծումների մեկ պարամետրանոց ընտանիք: Հետազոտված է այդ լուծումների ասիմպտոտիկ վարքը x -ը անվերջի ձգտելիս: Ապացուցվում է նույնպես Վիներ-Հոպֆի ինտեգրալ հավասարումների համակարգի լուծելիությունը: Այդ համակարգերը կարևոր դեր են խաղում (1) տիպի ոչ գծային համակարգերի ուսումնասիրության հարցում:

5. Ներսիսյան Ն. Բ., Պողոսյան Ա.Վ. Մի նախնականաչափական-բազմանդամային ինտերպոլյացիայի արագ գույճամիտության մասին / ՀՀ ԳԱԱ Մաթեմատիկայի ին-տ: - Երևան, 2000: - 12 էջ: - Մատենագր. 7 ան.: - Ռուս.: - Ավանդ. է ՀայԳՏԼԳՀԻ-ում 07. 07.00, թիվ 45-ՁԲ00

Նվիրված է մի երևույթի ուսումնասիրմանը, որի էությունը ինտերպոլյացիայի տիրույթի ներսում արագ գույճամիտությունն է, նրբ հատվածի վրա ողորկ ֆունկցիայի մոտարկման համար կիրառվում է այսպես կոչված Բեննուլիի մեթոդը, որն օգտագործում է հատվածի ծայրակետերում ֆունկցիայի անսահմանորոշ արժեքները: Չնայած երևույթի տեսական բավարար հիմնավորումը դեռ գտնված չէ, սակայն նրա արդյունավետ օգտագործման հնարավորություններն ակնհայտ են: Նշված երևույթը, որը հեղինակները անվանել են Ֆուրիե-Բեննուլիի երևույթ (ՖԲ-երևույթ), ենթարկվել է փորձնական մանրակրկիտ ուսումնասիրման: Նկարագրվել է նաև այն օգտագործելու եղանակներից մեկը: Փորձնական արդյունքները, որոնք ստացվել են MATHEMATICA 3.0 փաթեթի օգնությամբ, վկայում են ՖԲ - երևույթի օգտագործման արդյունավետությունը ողորկ ֆունկցիաների մոտարկման համար:

УДК 53

ՖԻԶԻԿԱ

6. Պողոսյան Ա.Ա. Թռիչքաձև փոփոխությունների հետազոտությունը իոնատլորտի թնք զոնդավորման ժամանակ / Մեյսմիկ Պաշտպանության Ազգային Ծառայություն: - Երևան, 2000: - 3 էջ, 4 նկ.: - Մատենագր. 6 ան.: - Ռուս.: - Ավանդ. է ՀայԳՏԼԳՀԻ-ում 07. 07.00, թիվ 43-ՁԲ00

Իոնատլորտի թնք զոնդավորման ժամանակ վերահսկվում է գերերկար ռադիոալիքների տարածումը ռադիոտեղիներով, որոնք հատում են մոլորակի տարբեր սեյսմաակտիվ գոտիներ: Փորձի ժամանակ ՍՊԱԾ-ի դիտակայանում (Երևան) գրանցվում է ընդունվող ռադիոալիքի փուլի $\Delta\varphi$ շեղումը (ըստ ալիքի ճակատի) և ստանդարտ ազդանշանի միջև, որը սինքրոնացված է “Օմեգա”

փուլային ռադիոկոդմոդուլման համակարգի հաղորդիչների հետ: Հետազոտության ընթացքում անջատվում են կարճ պարբերությամբ թռիչքաձև գրգռումներ: Թռիչքների տևողությունը միջինում չի գերազանցում մեկ ժամից, որից հետո $\Delta\varphi$ -ն կայունանում է նոր մակարդակի վրա: Իոնատլորտի վիճակի այսպիսի կտրուկ փոփոխությունը բացատրվում է սեյսմիկ գոտիներում էներգիայի կարճաժամկետ տեղային արտանետումներով երկրաշարժի նախապատրաստման գործընթացում, երկրակեղևում լարումների վերաբաշխման ժամանակ: Թռիչքների մեծությունների հիստոգրամի վրա արտահայտված է մաքսիմումների շարք, այսինքն գոյություն ունի թռիչքների թույլատրելի արժեքների դիսկրետ շարք Երկիր-իոնատլորտ համակարգում ընթացող ոչ գծային գործընթացների հետևանքով: Փորձնականորեն որոշված է թռիչքների I_{max} արժեքների շարքի առաջին մի քանի անդամը. $I_1=8$ ՎՍր, $I_2=18$ ՎՍր, $I_3=25$ ՎՍր... Այսպիսով, կատարված հետազոտության արդյունքների հիման վրա կարելի է եզրակացնել, որ երկրաշարժի

նախապատրաստման ընթացքում երկրակեղևի ճառագայթումը բնորոշվում է էներգիայի դիսկրետ մակարդակներով:

7. Մուրադյան Ա. Ժ., Պողոսյան Ա. Ա., Բալասանյան Ս. Յու., Ադիբենկյան Մ. Վ. Իոնատորտի թեք զոնդավորման ընթացքում ԳԵՌ-Ա տարածման անումալիաների անջատման մեթոդիկա /Մեյսմիկ Պաշտպանության Ազգային Ծառայություն: - Երևան, 2000: - 10 էջ, 14 նկ.: - Մատենագր. 5 ան.: - Ռուս.: - Ավանդ. է ՀայԳՏԼԳՀ-ում 07.07.00, թիվ 44-ՅԲ00

Մեյսմիկ Պաշտպանության Ազգային Ծառայությունում կատարվում են մոլորակի սեյսմիկ գոտիներում իոնատորտի վիճակի պարբերական դիտարկումներ գերերկար ռադիոալիքներով թեք զոնդավորման միջոցով: Դիտարկման ընթացքում գրանցվում է “Օմեգա” փուլային ռադիոկոդմոդուլման համակարգի ճառագայթված ալիքի փուլի $\Delta\phi$ շեղումը: Իոնատորտային ազդանշանի թույլ գրգռումների բացահայտման նպատակով մշակված է մեթոդիկա, որը հիմնված է $\Delta\phi$ -ի ժամանակային շարքերի պերիոդոգրամներից օրական պարբերության անջատման վրա: Մեթոդիկայի ժամանակային զգայունությունը հնարավոր է դառնում շոշափելի կերպով ավելացնել մասնակիորեն վերադրված ժամանակահատվածներին համապատասխանող պերիոդոգրամների տարբերությունները օգտագործելու շնորհիվ: Մեթոդիկան փորձարկվել է Ալդրա (Նորվեգիա) - Երևան ռադիոուղու տվյալների վերլուծության ժամանակ: Ստացվել են կորելացիոն ֆունկցիաներ երկրաշարժերի ընտրության և առաջարկված մեթոդիկայով հաշվարկված անումալիաների միջև: Կորելացիոն ֆունկցիաների վերլուծությունը ցույց է տալիս, որ կորելացիայի ժամանակը հիմնականում տատանվում է 35-40 օր ժամանակահատվածում $M \geq 4.5$ մագնիտուդայով երկրաշարժերի համար: Ներկայացված օրինաչափությունը հնարավորություն է ընձեռում պնդել, որ իոնատորտի թեք զոնդավորումը՝ Երկիր-իոնատորտ

ալիքատարում ԳԵՌ-Ա տարածումը, ուժեղ երկրաշարժերի կանխանշան է:

YDK 620.9

ԵՐԿՐԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

8. Կազրամանով Յու. Ռ. Նավթի առաջացման հիմնահարցի մասին / ՀՀ ԳԱԱ Երկրբ. գիտ. ին-տ: - Երևան, 2000: - 15 էջ: - Մատենագր. 57 ան.: - Ռուս.: - Ավանդ. է ՀայԳՏԼԳՀ-ում 26.06.00, թիվ 40-ՅԲ00

Նավթի առաջացման մասին գոյություն ունեցող վարկածների, երկրակեղևում բիթումների և նավթերի բաշխման բնույթի, Երկրի կլիմայի պատմության և ամբողջ Տիեզերքում ածխաջրածինների լայն տարածման մասին աստղաբանական տվյալների վերլուծության հիման վրա առաջարկվում է նավթի տիեզերական առաջացման նոր վարկած: Նրա էությունը հետևյալն է: Արեգակնային համակարգը, պտտվելով Գալակտիկայի միջուկի շուրջը, ենթարկվել է բազմաթիվ բախումների միջաստղային ամպերի հետ, որոնք հագեցած են բավական բարձր խտություն ունեցող ածխաջրածիններով: Բախումների ընթացքում Երկրի մակերևույթին թափվել են իրենց բաղադրությամբ նավթին մոտիկ ածխաջրածիններ: Սրանով է բացատրվում նավթի և բիթումային կուտակումների հավաքությունը երկրաբանական որոշակի ժամանակաշրջաններին Երկրի բոլոր մայրցամաքներում միաժամանակ, այդ ածխաջրածինների հիմնական պաշարների կուտակումը գլխավորապես նստվածքային գոյացումների աններդաշնակ տեղադրման գոտիներում և երկրագնդի բոլոր նավթերի միատիպությունը ըստ իրենց հիմնական ֆիզիկա-քիմիական հատկությունների:

УДК 620.9

ԷՆԵՐԳԵՏԻԿԱ

9. Սարգսյան Վ. Հ. Հակավթարային ավտոմատիկայի միջոցների ընտրման նպատակահարմարության տնտեսագիտական տնտեսակետները / Էներգետիկայի ՀայԳՀԻ: - Երևան, 2000: - 4 էջ: - Մատենագր. 4 ան.: - Ռուս.: - Ավանդ. է ՀայԳՏԼԳՀԻ-ում 12.04.00, թիվ 32-Ձ00

Հակավթարային ավտոմատիկայի (ՀԱ) սարքերի ներդրման նպատակահարմարության տնտեսագիտական գնահատման հիմնական դժվարությունը էլեկտրատեխնիկական համակարգում (ԷԷՀ) վթարային ազդեցությունների դեպքում էլեկտրատեխնիկայի չմատակարարման կամ սպառողներին նրա անորակ մատակարարման վնասի մեծության որոշումն է: ՀԱ-ի այս կամ այն համակարգի ներդրումը պետք է հիմնավորվի ինչպես ԷԷՀ-ի անվտանգության ապահովմամբ, այնպես էլ սպասվող տնտեսական արդյունքով: Առաջարկված է ՀԱ-ի միջոցների ընտրության տնտեսապես խոշորացված գնահատման մեթոդակարգ, հիմնված երկրի տնտեսության զարգացման մակրոտնտեսական և ԷԷՀ-ի գործունեության ցուցանիշների վրա, ՀԱ-ի

գնման, տեղադրման ու տեխնիկական սպասարկման և չմատակարարված ու անորակ էլեկտրատեխնիկա մատակարարելուց ստացված վնասի համեմատության միջոցով: «Ներքին համախառն արդյունքի էներգաարդյունավետություն» ընդունված հասկացությունը հնարավորություն է ընձեռում գնահատել արտադրված էլեկտրատեխնիկայի յուրաքանչյուր կվտժ-ի «համազգային արժեքը»: Առաջարկված մեթոդակարգով կատարված են հաշվարկներ Հայկական ԷԷՀ-ի օբյեկտներում ՀԱ-ի մի շարք համակարգերի ներդրման համար:

УДК 621

ՄԵՔԵՆԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ

10. Զարամյան Մ.Ս. Ճակատային ֆրեզների դանակների պատրաստում փոշեմետալուրգիայի միջոցով, կոշտ իրանի տոգորմամբ / Հայ. պետ. ճարտարագիտ. համալս.: - Երևան, 2000: - 5 էջ, 2 նկ.: - Մատենագր. 2 ան.: - Ռուս.: - Ավանդ. է ՀայԳՏԼԳՀԻ-ում 22.06.00, թիվ 39-Ձ00

Դիտարկվում է ճակատային ֆրեզների դանակների իրանների պատրաստման հնարավորությունը փոշեմետալուրգիայի միջոցով: Բարձր ֆիզիկա-մեխանիկական հատկություններ ստանալու համար մշակված է եռակալված կոշտ իրանի տոգորման տեխնոլոգիան ավելի դյուրահալ նյութով: Բովալսառնուրդի բաղադրության մեջ տոգորվող նյութի առկայությունը ապահովում է ավելի լավ տոգորում: Որպես տոգորող նյութ առաջարկվում է Cu, որը լավացնում է ջերմահաղորդականության պայմանները և բարձրացնում ստացված փորձանմուշների ամրության բնութագրերը: Ընտրված են եռակալման և տոգորման լավարկված ռեժիմները: Հետազոտված են ստացված նյութերի ֆիզիկա-մեխանիկական հատկությունները:

УДК 681.5

ԻՆՖՈՐՄԱՏԻԿԱ: ՀԱՇՎՈՂԱԿԱՆ ՏԵԽՆԻԿԱ

11. Բոլիբեկյան Լ. Ռ. Ներդրումային նախագծերի գնահատման չափանիշները և դրանց դերը նախագծային շիսկերի վերլուծության մեջ / Հայ. պետ. ճարտարագիտ. համալս.: - Երևան, 2000: - 14 էջ, 2 նկ.: - Մատենագր. 14 ան.: - Ռուս.: - Ավանդ. է ՀայԳՏԼԳՀԻ-ում 01.06.00, թիվ 36-Ձ00

Նկարագրված են ներդրումային նախագծերի գնահատման հիմնական ցուցանիշները, որոնք ներկայումս կիրառվում են գործնականում: Դիտարկված են այն հիմնարար պահանջները, որոնց պետք է բավարարեն այդ ցուցանիշները: Հնտագոտման օբյեկտ են իրական ներդրումային գործընթացները: Բերված են արդյունավետության ցուցանիշների հաշվարկային բանաձևերը, որոնց մեջ հաշվի են առնված արժեզրկման գործընթացը և դիսկոնտավորման նորմի փոփոխությունը ժամանակի ընթացքում: Կատարված է ներդրումային նախագծերի արդյունավետության ցուցանիշների համեմատական վերլուծություն, նշված են դրանց առավելություններն ու թերությունները և տրված են հանձնարարականներ դրանց գործնական օգտագործման ու հաշվարկման համար: Դիտարկված են նաև հայտնի արդյունավետության ցուցանիշների որոշ ձևափոխություններ:

12. Հովհաննիսյան Թ.Ա. IP հեռախոսության ստանդարտներն ու ապարատային միջոցները /Եր. պետ. տնտեսագիտ. ին-տ.: - Երևան, 2000: - 10 էջ: - Մատենագր. 3 ան.: - Հայ.: - Ավանդ. է ՀայԳՏԼԳՀԻ- ում 09.06.00, թիվ 37- Ap00

Ժամանակակից կապի ամենաձայնակալուն հասկացությունը IP հեռախոսությունն է, որի մեջ օգտագործվում են ՄԷՄ էլեկտրակապի ստանդարտացման սեկտորի բաց ստանդարտները և Internet IETF օպերատիվ ճարտարագիտական խմբի բաց ստանդարտները: Յուրեք են տրված IP հեռախոսությունում բազմաթիվ նոր տեխնոլոգիաների օգտագործման հնարավորությունները, որոնք ապահովված են ինֆորմացիոն հաշվողական ցանցերի միջոցով մուլտիմեդիական հաղորդագրությունների հաղորդմամբ: Կատարված է համեմատական վերլուծություն ընդհանուր օգտագործման հեռախոսային ցանցերի նկատմամբ IP հեռախոսության առավելությունների առումով:

13. Վարպենյան Վ.Ս., Մունջյան Հ.Հ., Հովակիմյան Ա.Ս. Հաճախականային կառավարման ասինքրոն մեքենաների կար-

գավորման և բեռնավորման քոմպյուտերային համակարգ / Հայ. պետ. ճարտարագիտ. համալս.: - Երևան, 2000: - 4 էջ, 2 նկ.: - Ռուս.: - Ավանդ. է ՀայԳՏԼԳՀԻ -ում 12.06.00, թիվ 38 - Ap00

Առաջադրված է միջանկյալ հաստատուն հոսանքի օղակով (տիրիստորային ուղղիչ) և տրանզիստորային ինվերտոր պարունակող հաճախականության կերպափոխիչով ասինքրոն էլեկտրաբանեցման համակարգ՝ համակցված քոմպյուտերի հետ: Էլեկտրաբանեցման ավտոմատ բեռնավորման համար մշակված է նույն քոմպյուտերի հետ համակցված բեռնավորման համակարգ՝ դարձյալ հաճախականային կառավարման ասինքրոն մեքենայի կիրառմամբ: Համակարգը թույլ է տալիս փորձնական ճանապարհով սինթեզել ըստ էներգասպառման մինիմումի հաճախականային կառավարման լավարկված օրենքները բանեցման պահանջվող բնութագրերը ձևավորելիս:

УДК 800

ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

14. Վեյյան Կ. Ա. Ծարադասության տեսությունը անգլերեն բանասիրության մեջ նախադասության ակտուալ տրոհման լույսի ներքո / Եր. օտար լեզուների ին-տ.: - Երևան, 2000: - 17 էջ:- Մատենագր. 44 ան.: -Հայ.: -Ավանդ. է ՀայԳՏԼԳՀԻ-ում 26.05.00, թիվ 34- Ap00

Քննարկվում է անգլերեն նախադասության շարադասության գարգացման գործընթացը /էվոլյուցիան/ լեզվի պատմական դիալեկտներով գարգացման մեջ: Քննության է առնվում անգլերեն լեզվի շարադասության արմատական հարցերից մեկը՝ նախադասության հարդորակցական /ակտուալ/ տրոհման և շարադասության փոխհարաբերության ու փոխապայմանավորվածու-

թյան խնդիրը: Հետազոտվում և ընդհանրացվում են տարբեր տեսություններ ու մոտեցումներ տվյալ պրոբլեմատիկայի վերաբերյալ, որոնք իրենց արտագույումն են գտել սույն հոդվածում: Տրվում է ժամանակակից անգլերեն լեզվի ընդհանուր օրինաչափությունների մանրամասն նկարագրությունը, ընդ որում ուշադրություն է դարձվում այնպիսի գործոնների վրա, ինչպիսին են նշույթավորվածությունը և ոչ նշույթավորվածությունը, հուզական արտահայտչությունը, էքսպրեսիվությունը, որոնք պայմանավորված են այս կամ այն շարադասությամբ: Բերված տվյալները կարող են կիրառվել անգլերեն լեզվի տեսական քննականության դասախոսությունների ժամանակ:

Հավելված 1
ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ
ՆՄՈՒՇՈՂ

ՀՀ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՌԵՎՏՐԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Գիտատեխնիկական լրատվության և
տեխնիկատնտեսական հետազոտությունների
գիտահետազոտական ինստիտուտ

(ՀայԳՏԼԳՀԻ)

ԹՈՒՅԼԱՏՐՈՒՄ ԵՄ

ավանդադրման

ՀայԳՏԼԳՀԻ-ի տնօրեն

Մ.Բ. Էդիլյան 20 նոյեմբերի 1997թ. _____

YDK 25.4.036:658.011.46:681.3.015

Մարտիրոսյան Զ.Գ., Ճաղարյան Ա.Գ.
Երկխոսության ռեժիմը որպես ավտոմատացված ԼԱր-նրի
արդյունավետության բարձրացման միջոց:
Հնդինակներ -----

Հավելված 2

ԱՎԱՆԴԱՂՐՎԱԾ ՁԵՌԱԳՐԻ ՄԵՂՄԱԳՐԻ Ն ԵՐԿԱՅԱՅՎՈՂ ՊԱՀԱՆՁՆԵՐ

1. Սնդմագրի ծավալը չպետք է գերազանցի մեքենագրական 0,5 էջը եւ կազմի 500 նիշից ավելի:
2. Կախված կառուցվածքային մասերի առկայությունից սնդմագիրը պետք է ընդգրկի.
 - հնտագոտության օբյեկտը, աշխատանքի նպատակը,
 - հնտագոտության մեթոդը,
 - տեսական ու գործնական արդյունքները եւ նորությունը,
 - ներդրման աստիճանը եւ արդյունավետությունը,
 - կիրառման բնագավառը:
3. Սնդմագիրը կազմված է մատենագրական նկարագրությունից եւ տեքստից: Սնդմագրի մատենագրական նկարագրությունը կազմվում է 7.1 - 84 Պետստանդարտին համապատասխան եւ ընդգրկում է.

- *ՄԸԿ -ի դասիչը:*

- հնդինակի ազգանունը, անվան, հայրանվան սկզբնատառերը;
- աշխատանքի անվանումը;
- կազմակերպության անվանումը, որտեղ կատարվել է աշխատանքը;
- քաղաքը, ուր գտնվում է ձեռագիրը ներկայացնող կազմակերպությունը;
- աշխատանքը գրելու տարեթիվը;
- քանակական բնութագրերը (էջերի, նկարագարդումների քանակը, մատենագրությունը);
- լեզուն, որով գրված է աշխատանքը;
- ձեռագրի ավանդադրման վայրը;
- ընդունման ամսաթիվը եւ գրանցման թիվը (նշվում են ՀայԳՏԼԳՀԻ-ում): Երեւան 1997

4. Սնդմագիրը ներկայացվում է հայերեն, ռուսերեն եւ անգլերեն լեզուներով՝ մեկական օր.;

5. Սնդմագրի որակի համար պատասխանատու է ձեռագրի հնդինակը:

Հավելված 3

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՍԵՂՄԱԳՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՆՄՈՒՇՈՂ

Հակոբյան Ռ. Ե. Հիդրոգեներատորի ջերմային հսկման համակարգի տեխնիկական ախտորոշման արժևքի գնահատումը / Հայ. պետ. ճարտարագիտ. համալս.: - Երևան, 1997: - 7 էջ, 2 նկ.: - Մատենագր. 3 ան.: - Ռուս.: - Ավանդ. է ՀայԳՏԼԳՀ-ում

Դիտարկված է ջերմային հսկման համակարգը (ՁՀՀ), որը իրականացնում է հիդրոգեներատորի ստատորի ակտիվ մասերի ջերմության հսկումը, ինչպես նաև այդ համակարգին հատուկ թերությունները: Անց է կացվել փորուկի հատակին տեղադրված թերմադիմադրության ջերմային զգայնության գնահատումը: Խնդիրը լուծվել է կոնվեկտիվ ջերմափոխանակման պայման-ների համար երկչափանի դրվածքով օդային բացակի եւ ստատորի իրանի կողմից: Ստացված հաշվարկների արդյունք-ները ցույց տվեցին, որ ՁՀՀ-ը չի տալիս գերտաքացման տեղի որոշման հնարավորությունը, այսինքն այն կարգավորում է միայն գեներատորի ընդհանուր ջերմաստիճանի մակարդակը: Առաջարկված է գոյություն ունեցող ՁՀՀ-ի փոխարեն օգտագործել ավելի առաջավոր անկոնտակտ մեթոդ՝ ընդունիչների կիրառմամբ:

Հավելված 4

**ՁԵՌԱԳՐԻ ՀՈՒՎԱԾԻ ԱՌԱՆՁԻՆ ԹԵՐԹԻ
ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՆՄՈՒՇՈՂ**

Ավանդադրվում է ՀՊՃՀ-ի էլեկտրատեխնիկայի դեպարտամենտի գիտական խորհրդի 1997 թվականի հոկտեմբերի 7-ի նիստի որոշման համապատասխան, արձանագրություն թիվ 3:

Խմբագիր - սրբագրիչ՝ Է. Լ. Սարգսյան

Ծավալը՝ 1,2 հրատ. մամ.: Ֆորմատ՝ 60x84 1/16
Օֆսեթ տպագրության լաբորատորիա
375051, Երևան, Կոմիտասի պող. 49/3, ՀԳՏԼԳՀ